2

281(2)
Ա 78
V

ԼԻԱԿԱՏԱՐ ՎԱՐՔ
ԵՒ ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆ
ՍՐԲՈՑ.

Որք կան 'ի հին Տօնացուցի Եկեղեցւոյ
Հայաստանեայց:

Յօրինեալ հաւաքական բանիւք ճառընտրաց մերոց
և այլոց ազգաց, հանդերձ ծանօթութեամբք:

'Ի Հ. Մկրտիչ վարդապետէ Աւգերեան, յաշակեր-
տութենէ մեծին Մխիթարայ Աբբայհօր:

Հրամանաւ Տն̃ Տն̃ Ստեփաննոսի Ագոնց Աբբայի և
Արքեպիսկոպոսի:

Արդեամբք ածասէր Մանուկ Աղայի Կարնեց-
ւոյ մահտեսի Ածատուրեան:

ՀԱՏՈՐ. Բ:

Միջոց Առաջաւորաց և Աղուհացից:

'Ի սբ̃յն Սարգսէ ցգլխատումն Յովհ. Մկրտչի:

1811. 'Ի ՎԵՆԵՏԻԿ ռմկ̃:
'Ի Վանս Սբ̃յն Ղազարու:

ՀԱՅԿ. ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ
Ա / 1019



ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Սբ̄յն Սարգսի զօրավարի, և որդւոյ նր̄ Մարտիրոսի. և Չորեքտասան զինուորացն:

Հ. յունվար. 31: Յ. ծն. յունվար. 2: Լ. փետր. 24: (1) Ներսէս շնորհալի 'ի Թուղթս եւր. և յառանձինն վկայաբանն շնորհալւոյն, որ կայ 'ի հին օրինակին համառօտ մեկին. հանգուցելեայց. էջ. ձ̄երդ. և 'ի Ճառընտ. Ա. պծ̄է: Բ. յծ̄դ: Ե. յծ̄է: (2) միւս այլ հին վկայաբան 'ի Ճառընտ. Մ. շէ̄ = շլ̄է: (3)

ՔԱՋ ԶՕՐԱՎԱՐՆ քս̄ի և անյաղթ վկայն, դերագոյն հանդիսացեալ թագաւորաց և իշխանաց՝ և յաղթող իշխանի աշխ̄իս գլխովին սատանայի, սր̄ն Սարգիս, որ և կոչի մար սարգիս, կմ̄ տր̄ սերգիոս (4), էր ազգաւ յոյն 'ի կողմանցն դամրաց՝ և 'ի սահմանակցութ̄է հայոց, այս է յաշխ̄էն կեսարիոյ կապադովկացւոց՝ (որ և նահանգ ղայսէրիոյ,) յաւուրս ինքնակալութ̄ մեծին կոստանդիանոսի և տրդատայ: Յորում ժամանակի իբրև տարածեցաւ լոյս

հաւատոյ քրիստոնէութե՟ն ընդ ամ՟ տ՟րութե՟ն
հռովմայեցւոց, և պայծառացան եկեղեցիք
ընդ ամ՟ տիեզերս, ծագէր իբրև զաստղ
լուսապայծառ յերկրի անդ կապադովկացւոց
երանելին այս սարգիս բարեպաշտութե՟ն հաւատոյ՝
զարմանալի յաչս ամենեցուն, և
հռչակաւոր յոյժ ։ Քանզի ըստ ասից հին
վկայաբանին, * Էր սարգիս այր լի շնորհօք,
,, և եռայր հոգւովն ա՟յ․ և զամ՟ զոր
,, ինչ խնդրէր, տայր նմա ա՟ծ․ (և զպատճառն
՚ի վ՟ր բերէ զկատարեալ գովութե՟նն․
,, վ՟ր զի) այս սարգիս էր քրիստոնեայ, և
,, սիրէր զա՟ծ յամ՟ սրտէ իւրմէ և յամ՟ զօրութէ
,, իւրմէ․ և սա էր զօրացեալ ՚ի հոգւոյն
,, ս՟բյ, և էր սիրելի ա՟յ․ և զամ՟ զոր
,, ինչ առնէր, յաջողէր նմա ա՟ծ ՚ի բարութի ||։
Եւ այս որպիսի ոք արդեօք․ յերկրական կարգէ
և ՚ի զինուորականէն անգամ․ ո՟պ և ասէ․
* Եւ էր նա զօրական՝ զգեցեալ զէն
,, զինուորութե՟․ և էր կարգեալ ընդ ձեռամբ
,, զօրագլխի միոյ․ և էր այր իմաստուն
,, և համբերող, և ծանօթ ա՟մ դատաւորաց
,, և իշխանաց ||։ Այս է ասելն և
առաւել պանծալի վկայաբանի շնորհաւոյն,
թէ՝ * արքունական հրամանաւ էր
,, կարգեալ ՚ի զինուորութի ընդ զօրս թագաւորին՝
,, որք ՚ի կապադովկիա, գերագոյն
,, գոլով քան զյոքունս ՚ի համադասից
,, զինուորակցացն յարիական մրցմունս՝ որ
,, ՚ի պատերազմունս բարբարոսաց․ մինչ զի
,, և համբաւ քաջութե՟ ն՟ր՝ որովք զհակառա-

,, կացն մղէր մարտակցուն՟ , հասանէր միշտ
,, 'ի լսելիս թագաւորին‖ ։

Եւ եղև իբրև որ քան զոր յառաջադրեմ գտաւ այրն ը՟ օրինակիս ը՟ այսմիկ , յայնժամ ինքնակալն կոստանդիանոս՝ առաքեաց սարգսի ընդ պարգևաց մեծագունից և պատուի՟ ստրատելատութե՟ , ը՟ զօրավարութե՟ զօրաց՝ որ յայնոսիկ կողմանս , հրաման տուե՟լ նմա լինել պատուական 'ի մէջ իշխանաց և դատաւորաց սահմանացն այնոցիկ · որով և այնքան մեծապատիւ լինէր , մինչև հպատակել ընդ ձեռամբ նր՟ ամ՟ մերձակայ գաւառաց և դաւառապետաց՝ եթէ 'ի քրիստոնէից և եթէ 'ի հեթանոսաց · և ոչ ոք ընդդիմակաց գտանէր առ 'ի նմանէ եղելոցն և հրամայելոցն ։ (5)

Իսկ սքանչելի այրն այ՟ յայնպիսի պատուի՟ ձոխութե՟ կ իշխանութե՟ հասեալ, ոչ 'ի նիւթական շահս և 'ի սնոտի փառս 'ի կիր արկանէր զայն, այլ 'ի հոգևորս և յաստուածայինս · քանզի շրջէր ը՟ իշխանութե՟ն ը՟ քաղաքս և ը՟ գեօղս և ը՟ գաւառս այնր նահանգաց , և սրբէր զն՟ 'ի կռապաշտութե՟ · խափանէր զզօհս ուրուական դրօշելոց՝ որք դեռ կային 'ի բազում տեղիս , և բնաւայր ամենեցուն զճանապարհ ած՟գիտութե՟ · զոր և անձամբ քարոզէր անխափան՝ հոգւոյն իմաստութ՟ , հմուտ գոլով գիտութե՟ հին և նոր կտակարանաց՝ ուսեալ 'ի մանկութէ՟ ։ Եւ այնպէս զոմանս բանիւ ձգէր յուղղական աւետարանին քսի՟ · զայլս օրինակաւ բարեպաշտութե՟ և մարդասիրութե՟ ·

քանզի յաճախութեամբ տայր ողորմութիւն , և բաշխէր յընչից իւրոց առատապէս տուրս աղքատաց և կարօտելոց . և զոմանս սպառնալեօք՝ ըստ իշխանութեան զոր ունէր՝ տարագիր առնելոյ յ՟ծէն , ածէր ՚ի հաւանութիւն՝ գալ առ ճշմարտութիւն և թողուլ զմոլորութիւնս . և զայլս՝ որոց սիրելի էր խաւարն անգիտութեան , և ատելի՝ լոյս ճշմարտութեան , ՚ի բաց վարէր յօտարութիւն , զի մի՛ լիցին ՚ի գայթակղութիւն այլոց հաւատացելոցն ՚ի Քրիստոս :

Քակէր ՚ի հիմանց զմեհեանս , կործանեալ զբագինս . և փոխանակ նոցա շինէր եկեղեցիս Աստուծոյ և վկայարանս սրբոց . և բազմացուցանէր զդասս քահանայիցն և զպաշտօնէիցն Քրիստոսի . որով լինէր խնդութիւն ճշմարտապաշտիցն , և սուգ մեծ հեթանոսաց , որպէս և բանսարկուին գլխովին . իսկ ինքն երանելին ուրախ լինէր ընդ փառաւորութիւն Քրիստոսի , և ընդ կործանումն սատանայի : Եւ այսպիսի բարիանուն քաղաքավարութեամբ ըստ պատուիրանացն Աստուծոյ կալով ամս բազումս՝ սրբութեամբ և արդարութեամբ և բոլորանդակ առաքինութեանցն մասամբք՝ երևելի լինէր յայտ . և բարձրանայր օր ըստ օրէ արքունական մեծամեծ ձրիւք , և պայծառացեալ փառօք ՚ի փառս . այլ որ մեծն է՝ ամբածածուկ աջոյն Աստուծոյ պարապեալ լինէր , և յաջողէր յամենայն գործս բարութեան :

Իսկ բարիատեաց բանսարկուն նախանձաբեկ լինէր՝ տեսանելով զայնպիսի հանդէս բարեպաշտութեան երանելոյն սարգսի , և ջանայր խափանել զնա ՚ի հոգևոր յառաջադի-

մուծին 'ի ձեռն զանազան փորձութեանց. սակայն ոչ զօրէր, որչափ սիւնն հաւատոյ կայսրն կոստանդիանոս կենդանի էր յաշխարհի, ոչ և ոչ յաւուրս համանուն որդւոց նորա կոստանդեայ, կոստանդնի և կոստասայ. մինչև յետ նոցա յաջորդեաց յինքնակալութեան չարն յուլիանոս՝ կոչեցեալն բառավա՛դիս կամ աբոստա՛դիս, այն է ուրացող՝ կամ ուխտազանց և ապստամբ 'ի սուրբ հաւատոց. որ եղև աման չարութեան դիւին, և վրդովեաց զխաղաղութի եկեղեցւոյ, եղեալ 'ի մտի՝ կամ 'ի կռապաշտութիւն շրջել զամենայն հաւատացեալս 'ի Քրիստոսէ, և կամ ջնջել յաշխարհէ զամենեսին առհասարակ ։ Ընդ որ ուրախացեալ և մնացեալքն 'ի հեթանոսաց մոլելոցն 'ի կուռս, և տեղի գտեալ այնուհետև՝ յառնէին 'ի վերայ հաւատացելոց. աւարէին և աւերէին զեկեղեցիս, և հալածէին զպաշտօնեայս. շինէին դարձեալ զաւերեալ մեհեանս, և ստիպէին զամենեսին՝ զոհել դիւաց՝ հրամանաւ ուրացողին. որոյ վասն և բազումք 'ի քրիստոնէից՝ նահատակեցան պէսպէս տանջանօք՝ եկեղեցականք և զինուորք և ռամիկք. և բազումք ևս տարաշխարհիկ սատարութեամբ 'ի փախուստ դիմեալքն 'ի
հայրենի գաւառաց ։

Յայս ժամ իբրև տեսանէր քաջն սարգիս, մտախորհ լինէր յանձն իւր, եթէ զի՞նչ են կամքն Աստուծոյ՝ զի արասցէ. և զնոյն հայցէր 'ի տեառնէ աղաղատանօք ։ Եւ ահա երևեալ նմա յո՟ 'ի տեսլեանն՝ ասէ. ժամ է քեզ ո՛վ սարգիս ելանել յաշխարհէ քումմէ և յազգէ ը՟ նահապետին աբրահամու , և գնալ յե՟՛ զոր ցուցից քեզ . ուր պատրաստեալ է քեզ առնուլ զպսակ մարտիրոսութե՟ : Եւ այն ինչ խորհէր երանելին վ՟ն ելից տեսլեանն , 'ի նոյն աւուրս լուր եհաս՝ եթէ համդերձեալ է յուլիանոս բազում պատրաստութե՟ դիմել յարևելս , և գալ պատերազմիլ ը՟ արքային պարսից , ակն ունելով ը՟ սուտ պատգամաց դիցն իւրոց՝ մեծանալ համգոյն աղեքսանդրի մակեդոնացւոյ , և տիրել համգոյն նմա ընդհանուր Թագաւորութե՟ց աշ՟ի :

Յայնժամ ծանեաւ բարեյաղԹ զօրավարն սարգիս , Թէ այս է ժամանակն՝ որ ցուցաւ նմա 'ի տեսլեանն . և զի անհնար էր նմա գործակից լինել յուլիանոսի , կ՟մ տեսանել զչարիսն՝ որ լինէին , և որ այլ ևս անցանելոցն էին ընդ եկեղեցիս յարշաւանս անդ յուլիանոսի , համդերձեցաւ դիմել յայլ սահմանակից Թագաւորութ՟ի քրիստոնէից , ը՟ հայաստանեայց : Թողոյր ապա զհայրենի ժառանգութ՟ին՝ որ 'ի կապադովկիա . զիշխանական ճոխութ՟իւն , զերևելի զփառսն , զյոքնախումբ զօրացն զպետութ՟ի , և զա՟մ վայելչութ՟ի առօրեայ կենացս . և ըստ տիրաձայն հրամանին՝ որ առ մեծատունն , վաճառեալ զստացուածս իւր՝ բաշխէր կարօտելոց , և Թեթևանայր 'ի ծանրութ՟է հոգոց և 'ի յոքնավրդով հիւԹից . և փոխանակ այնր բարձեալ զխաչն ք՟սի՝ հետևէր փրկչին իւրում . առնոյր և ճանապարհորդակից իւքեան զորդի իւր՝ որբացեալ 'ի մօրէն . որ գործոցն ընկալաւ յետոյ զվկայական անունս Մարտիրոս, և կմ՟ իբրև նորընտիր զօրական՝ կոչիւր մարտիւոն, ք՟ս տ՟ր համբակ զինուորական. որ և ոչ էր նուաղ արգասիւք յազնուականութ՟է, և ոչ յետնեալ 'ի բարելաւութեց հօր իւրոյ՝ մարմնոյ արուք՟ և հոգւոյն առաքինութ՟ք ։

Եւ նախ երկոքին 'ի մի բերան աղօթիւք առ Ճանապարհն ճշմարտութ՟ե պաղատէին, և զայս յաղօթելն իւրեանց ասէին. Ա՟ծ բոլորից և տ՟ր ա՟մի, յորմէ գոյացան արարածքս նախախնամ ողորմութ՟բ քով. որ քաղցր ես առ ամենեսեան, և գթած առ երկիւղածս առ 'ի քէն. որ եղեր ողորմութ՟բ քով ընդ արդարսն առաջինս, և փրկեցեր յիւրաքանչիւր փորձութ՟եց դու տ՟ր 'ի սկզբանէ մինչև ցայժմ յա՟մի և յաւիտեանս. վ՟ն որոյ անկեալ առաջի քո հալածեալքս վ՟ն անուանդ քում ս՟բ՟յ՝ հայցեմք 'ի քէն, լեր կցորդ ճանապարհի մերում՝ յոր հանդերձեալ եմք ընթանալ. որպէս որոց նախ քան զմեզ ս՟բ՟ց քոց. մինչև հասուսցես զմեզ 'ի մի յօթևանաց հօր քո երկնաւորի. և քեզ փառք ընդ հօր և հոգւոյդ ս՟բ՟յ յաւիտեանս յաւիտենից. ամէն ։

Ապա այնուհետև յուղի անկեալ՝ դիմեցին յաշխ՟ն հայոց, և անկան առ տիրան արքայ որդի խոսրովու որդւոյ տրդատայ ։ Եւ տիրան ընկալեալ զքաջն սարգիս պատուասիրաբար՝ պահէր առ ինքն ժամանակս ինչ ։ Իսկ ուրացօղն յուլիանոս խաղաց անհամար զօրօք ընդդէմ պարսից. և հասեալ նախ յանտիոք՝ չարչարեաց անդ զքրիստոնեայս. և ՚ի տարածիլ համբաւոյ դառնութ͞են ընդ բազում տեղիս՝ տագնապ երկիւղի պաշարեաց զամենեսին. վ͞ն և բազումք փախստեայ գնային և թաքչէին ՚ի խորաձորս և ՚ի ծերպս վիմաց:

Լսելի եղև այս և աշխարհին հայոց. որով և ոչ սակաւ ինչ խռովէին յերկիւղէ ամպարշտին. և այնքան՝ մինչև զանգիտել արքային տիրանայ՝ զերջանիկն զայն զսարգիս առ ինքեան պահել. գուցէ ասէ (քանզի անուանի էր յոյժ այրն,) ծանուցեալ խնդրեսցէ յուլիանոս. և յոչ տալն՝ խռովութ͞ի լինի ընդ նա և ընդ աշխարհս: Խորհրդակից լինի ապա երանելւոյն սարգսի՝ խոյս տալ անտուստ, և դիմել առ շապուհ արքայն պարսից: Եւ այս ոչ վայրապար ինչ գործեալ լինէր, այլ՝ ձգէր զնա տնտեսութիւն այ͞ ՚ի տեղին նշանակեալ ՚ի տեսլեան, յորում հանդերձեալն էր պսակիլ վկայութ͞բ ՚ի ք͞ս. վ͞ն ելեալ սարգսի յծ͞էն հայոց՝ գնայ ՚ի պարս հանդերձ որդւովն իւրով. և լուեալ եթէ շապուհ արքայ ելեալ ՚ի տիսբոնայ՝ անցեալ է ՚ի խորասան, գայ յանդիման լինի անդ թագաւորին:

Որ տեսեալ շապհոյ՝ ուրախ եղև յոյժ. մանաւանդ իբրև լուաւ և յայլոց զհամբաւ քաջութ͞ե նր͞, և ՚ի բերանոյ նր͞՝ զելանելն իւր ՚ի հռոմոց հաստուածի պատճառաւ իբրև փախստեայ յերեսաց հարստահարութ͞եցն յու-

յուղղափառսն ։ Նա ընկալեալ զնա մեծապատիւ փառօք՝ ընդ առաջին զօրագլուխս իւր կարգէր զնա , և 'ի վ՟ր հասեալ արութեան ոգւոյն և հաւատարմութե՟ն՝ գունդս բազումս տայր 'ի ձեռս ն՟ր . և յա՟մ պատերազմունս բարբարոսաց՝ յորս առաքեալ լինէր , յաջողէր նմա ա՟ծ . որով և սիրեցեալ լինէր յաչս թագաւորին և մեծամեծաց ն՟ր ։

Իսկ երանելին ոչ անձին ինչ քաջութե՟ , այլ՝ ա՟յ զօրութե՟ն տայր զյաղթութե՟ կատարումն . և 'ի զբաղմանս անդ զինուորութե՟ ոչ երբէք նուաղեցուցանէր զհոգևորացն ընծայաբերութի , այլ յարաժամ մատուցանէր զաղօթս և զգոհութե՟ պատարագս առաջի ա՟յ , ը՟ տանելոյ տեղւոյն և ժամանակին 'ի մէջ հեթանոսաց . և առ խափանելոյ զզօրսն՝ որ ը՟ ձեռամբ իւրովն էին 'ի չզոհելոյ կռոց , ինքն տայր զենուլ զբազմութ՟ի անբանից կենդանեաց , և բաշխէր առատութ՟բ տուրս և նուէրս 'ի պէտս աղքատաց և կարօտելոց . և այս է՝ զոր ասէն ստատանօր վկայաբանքն շնորհալւոյն զս՟յն սարգսի , թէ մատուցանէր
* ոչ միայն զանձին իւրոյ մաքրութ՟ի բանա-
,, ւոր պատարագ , այլև զանբանից կենդա-
,, նեաց զենմունս՝ բաշխելով 'ի պէտս աղ-
,, քատաց և կարօտելոց ը՟ սովորութե՟ իւրում
,, 'ի նախնեաց անտի . զայն և ուսուցանէր
,, ամենեցուն (որոց ընդ նմ՟) աննուաղ կա-
,, տարել զենմունս անասնոց 'ի նուէրս ա՟յ
,, (Ճշմարտի) յաղագս կերակրելոյ ողորմու-
,, թե՟ զքաղցեալս և զկարօտեալս || ։

Յայնմ ժամանակի լուր եհաս, թէ գունդ մի մեծ 'ի զօրացն յուլիանոսի ասպատակեալ աւերեաց զերկ՟ն տաճկաց, որ էր ը՟ն սահմանաւ տրութ՟են շապհոյ 'ի սահմանակցութ՟ե երկրին հոռոմոց. և հաճոյ թուեցաւ արքային առաքել զսբ՟ն սարգիս 'ի պահպանութ՟ի կողմանցն տաճկաստանի, պահեալ առ իւր 'ի դրան զորդի ն՟ր : Եւ սբ՟յն առեալ զգունդս զօրաց իւրոց, հասանէր 'ի նախասացեալն տեղի. և անդանօր դադարեալ ամիս երիս (6), բանակէր ը՟դէմ զօրացն յուլիանոսի, պահելով 'ի թշնամեաց ասպատակէ զերկ՟ն զայն : Այս ը՟ շնորհալւոյն վկայագրի. իսկ ը՟ միւս ես վկայաբանի, եւ համբաւ՝ եթէ թագաւորն կամ մեծ նախարարն տաճկաստանի ընդվզեալ 'ի պարսից, և այլ բազում զօրք եկեալ հասեալ են 'ի սահմանս ն՟ց՝ մտանել գերել և աւերել զերկիրն և զերկ՟ն. վ՟յ գումարեցին զօր 'ի ձեռն սարգսի, և արձակեցին ընդդէմ ն՟ց :

Արդ՝ եթէ հոռոմոց, և եթէ այլոց ազգաց ասպատակք իցեն, (որք առ հասարակ կռապաշտ էին 'ի ժ՟մկին՝ որ՟պ և պարսիկք գլխովին,) իբրև լուեան զգալուստ քաջին սարգսի առանձին գնդաւ ը՟դէմ իւրեանց, եկին ժողովեցան և ինքեանք 'ի կողմանց կողմանց բազմութ՟ի յոյժ, և զետեղեալ հանդէպ սակաւաձեռն գնդի սբ՟յն սարգսի՝ խնդրէին օրինօք պատերազմել ը՟ միմեանս : Իսկ զօրքն՝ որ ը՟ սբ՟յն սարգսի, տեսեալ զայնքան ամբոխ բազմութ՟ե զօրու ծանու և զինու, զար-

հու

հուրեցան յոյժ, և սկսան ասել. արդ 'ի կորուստ մատնիմք 'ի ձեռաց դոցա. Ք՟զի անհնար է մեզ սակաւաւորացս պատերազմիլ ըն՟ այնքան բիւրուց բռնութ՟ե. մինչև ասել և ումանց, գնա՛ աստի սա՛րգիս, կորուսեր ըզքեզ և զմեզ:

Իսկ երանելւոյն տեսանելով այնքան զանգիտեալս յերկիւղէ նց՟ զիւրսն, տեղի եգիտ յայտնել նց՟ զիրսն՝ զհաւատոյն ճշմարտութ՟ի և զզօրութ՟ի, և զհեթանոսականացն մոլարստութ՟ի և զտկարութ՟ի. խօսել սկսաւ առաքինին՝ հաստատեալ 'ի հաւատս տն՟ մերոյ յս՟ի ք՟սի և 'ի սէրն ն՟ոյ, և բացեալ զշնորհալի բերանն իւր՝ ասէ ցնոսա. Եղբա՛րք իմ և զինուո՛րակիցք, եթէ հաւատայք բոլորով սրտի՛ ձերով յարարիչն երկնի և երկրի, ո՛չ երբէք զարհուրեսցին սիրտք ձեր 'ի Թշնամեացն մերոց բազմութ՟ե. այլ՝ յաղթութ՟ք ճշմարտին ա՟յ իմոյ մին 'ի ձէնջ զհազարսն հալածեսցէ, և երկուք զբիւրսն շարժեսցեն: Արդ հաւատացէ՛ք եղբա՛րք իմ յանուն տն՟ մերոյ յս՟ի ք՟սի, և մի՛ զարհուրիք. այլ հաւատացէ՛ք և կարդասցո՛ւք առ տ՟ր ա՟ծ մեր, և առաքեսցէ զհրեշտակ իւր, և հալածեսցէ զթշնամիս ձեր: Նաև զայս ասեմ ձեզ. եթէ հաւատայք բոլորովին սրտի՛ ձերով, ես երաշխաւոր մտանեմ 'ի ք՟ս, զի մի ոք 'ի ձէնջ ո՛չ պակասեսցէ. անկցի ահ ձեր 'ի վ՟ր նց՟, և փախիցեն ամենեքին 'ի ձէնջ: Ապա թէ ոչ՝ կրկնակի կորուստ կայ ձեր առաջի՝ որ ըստ մարմնոյ և որ ը՟ս հոգւոյ. քանզի անուանել աստուածքն ձեր ոչինչ՝ օգնեն ձեզ, որք ոչինչ ունին զօրութիւն․ ո՛չ լուսաւորքդ՝ զոր պաշտէք, և ո՛չ այլ տարերք․ և ո՛չ պատկերք կռոցդ՝ զոր պատուէք․ քանզի ականջս ունին, և ոչ լսեն․ աչս ունին, և ոչ տեսանեն․ ունչս ունին, և ոչ հոտոտին․ ձեռս ունին, և ոչ շօշափեն․ ոտս ունին, և ոչ գնան․ և ոչ գոյ շունչ 'ի բերանս նոցա․ նման նոցա եղիցին՝ որք արարին զնոսա, ամենեքեան՝ որք յուսացեալ են 'ի նոսա։

Յայնժամ պատասխանի ետուն զօրքն, և ասեն․ իսկ արդ ո՞ւր է աստուածն քո մա՛ր սարգիս․ և թէ դիք մեր չեն աստուածք, ցո՛յց մեզ զճշմարիտ աստուածն քո՝ զի տեսեալ հաւատասցուք 'ի նա։ Եւ ասէ երանելին․ իմ աստուածն՝ ամենեղելոց է աստուած՝ երևելեաց և աներևութից, բնակեալ 'ի լոյս անմատոյց։ Եւ սկսեալ 'ի բանից ասել՝ քարոզեաց նոցա զճշմարիտ հաւատս՝ որ յամենասուրբ երրորդութիւն և 'ի մի աստուածութիւն․ և պատմեաց նոցա կարգաւ զսքանչելի գործս արարչին, եթէ զիա՛րդ ստեղծ զմարդն 'ի պատկեր բարերարութեան իւրոյ, և զիա՛րդ խնամարկէ զամենայն արարածս․ զգուշակութիւն նախաքարոզ մարգարէից, և զփրկագործ մարդեղութիւն բանին աստուծոյ գալստեամբ յիսուսի, և զկենսաբեր անօրէնութիւնս նորա, և զսքանչելիսն՝ զորս գործեաց․ և զխաչն և զթաղումն և զյարութիւնն և զվերանալն փառօք յերկինս․ և թէ գալոց է միւսանգամ նովին մարմնով դատել զազգս մարդկան ըստ իւրաքանչիւր գործոց, բարեգործացն և ուղիղ հաւատացելոցն յա̃ծ՝ բարի հատուցանելով, իսկ չարագործացն և անհաւատիցն զտանջանսն յաւիտենականս : Արդ՝ այս է ասէ ճշմարիտ ա̃ծութի̃. որում եթէ հաւատայք բոլորով սըրտի՛ւ ձերով և 'ի բաց կայք 'ի խաւարային պաշտամանց ձերոց, ընդունիք և զյաւիտենից կենդանութի̃ն մարմնոյ ե̃ հոգւոյ, յորժամ գայ ք̃ն փառօք ա̃ծութե̃ իւրոյ, և ոչ տանջէ զձեզ ընդ անհաւատսն 'ի հուրն անվախճան :

Զայս և առաւել քան զսոյն խօսեցաւ 'ի բանակի անդ երանելին Սարգիս առաջի ա̃մ զօրաց իւրոց. և եմուտ շնորհ 'ի զօրն ամենայն 'ի վ̃դպուէ սբ̃յն Սարգսի. և աղաղակեցին իբրև 'ի միոջէ բերանոյ. Հաւատամք յա̃ծն Սարգսի : Լուան թշնամիքն, և անկաւ ահ 'ի վ̃ր նց. նոքա 'ի վ̃ր յարձակեցան, և խորտակեցին զբանակ նց. զոմանս սպանին, և զոմանս փախուցին :

Այլ առաւել բազմութի̃ զօրաց թշնամեաց յայլևայլ առաջս բաժանեալ՝ այնինչ կամէին գունդ գունդ յարձակիլ 'ի վ̃ր գաւառին, որ ընդ պահպանութե̃ Սարգսի, պաշարեալ առ հասարակ խաւարային օդով՝ մոլորէին 'ի ճանապարհէ ծ̃ին՝ յոր հանդերձեալ էին մտանել. և ցրուեալք՝ ոչ գտանէին զմիմեանս. և թէ ուրեք հանդիպէին, տեսիլ իմն պատմէին անմարմնական զօրաց. և ձայն լսելի եղեալ 'ի նոցանէ՝ թէ մի՛ յանդգնիք պատերազմիլ ընդ ծառային ա̃յ սբ̃յն Սարգսի. եթէ ոչ՝ ամենեքեան կորնչիք :

Զայս

Օ այս ա՟մ տեսեալ և լուեալ սբ՟յն՝ փառս վերառաքէր ամենազօրին ա՟յ, և ժողովեալ զիւրսն անդրէն 'ի բանակետղ՝ ասէր ցնոսա. տեսանէ՞ք զբազուկ բարձրելոյն. մե՛ծ է տ՟ր, և մեծ է զօրութ՟ի նորա. և ո՞վ պատմեսցէ զսքանչելիս նորա. Եկա՛յք եղբա՛րք իմ մատուսցուք փառս ք՟սի ա՟յ մերոյ, որ յայտնեաց զողորմութ՟ի իւր առ ծառայս իւր, և զզօրութ՟ի առ հակառակորդս մեր: Իսկ զօրքն հաստատեալ 'ի հաւատս ճշմարտութ՟ե՝ աղաղակէին, և ասէին. մեծ է ա՟ծն քրիստոնէից, և անհաս է նո՟ր զօրութ՟ին. հաւատամք այսուհետև յամենաս՟բ երրորդութ՟ին և 'ի մի ա՟ծութ՟ին՝ զոր քարոզեաց սարգիս: Յայնժամ մկրտեցան բազումք 'ի ձեռն քահանայիցն, որ ը՟ սբ՟յն. և մատուցանէին ամենեքեան երկրպագութ՟ի առաջի ա՟յ, և ուրախ լինէին 'ի վ՟կայուն սբ՟յն (7): Եւ զի կամէին ոմանք 'ի ն՟ցէ տանկաւին զոհս մատուցանել ը՟ հեթանոսական սովորութ՟ե՝ ո՟չ թէ յանուն ա՟յ, կամ 'ի պատի՛ւ ք՟սի՝ յոր հաւատացին, արգել զն՟ս սբ՟ն սարգիս, յայտ արարեալ ն՟ց զխափանումն զոհից անբանից՝ յետ պատարագելոյ կենդանի և կենդանարար ճշմարիտ զոհի գառինն ա՟յ. բայց միայն հրաման ետ զենուլ զկենդանիսն, և ճաշակել ուրախութ՟բ 'ի փառս ա՟յ՝ բաշխելով և որոց պէտս ունիցին աղքատաց՝ 'ի շէնս և 'ի մօտաւոր տեղիս: (8)

Իսկ բանսարկուն սատանայ դրդեաց զոմանս 'ի զօրաց անտի մնացելոց 'ի դենս մոլորութ՟ե պարսից՝ մատնել զք՟ն · վ՟յ գնացեալ առ Թագաւորն շապուհ՝ ասէին · Ապստամբեաց սարգիս յա՟ծոյն և ՚ի ձէնջ ա՛րքայ · և քարոզեալ զյ՟ս նազովրեցի՝ ապստամբեցոյց զզօրսն ա՟մ զկնի մոլորութե՟ իւրոյ · և միաբանեալ է սիրով ը՟ զօրսն հոռոմոց ։ Զայս լուեալ Թագաւորին՝ խռովեցաւ յոյժ · և խորհէր ընդ մեծամեծս աւագանւոյն՝ եթէ զի՛նչ արասցէ , զի մի՛ աղմուկ և երկպառակու՟ի ՚ի զօրուն լինիցի · և ը՟ խորհրդոյ ատենին դաւաճանու՟թբ առաքեաց սարգսի պարգևս մեծս, գրել և նամակ այսպիսի · Լուաք բարի համբաւ զքէն պատուականդ՝ ՚ի զօրագլուխս մեր սարգիս՝ յաղագս մտերիմ լինելոյ ՚ի Թագաւորութե՟ս մերում · և ուրախ եղաք յոյժ · վ՟ն որոյ և սէր մեր յաճախեաց ՚ի վ՟ր քո՝ որ՟պ առ հաւատարիմ ծառայ և իմաստուն. և ը՟ նմին առաքեաց քեզ Թագաւորութի՟ս մեր ձիրս արժանաւորս աւագու՟ե քում · ո՛ղջ լեր ։

Եւ իբրև անցին ՚ի վ՟ր աւուրք ինչ , յաւել առաքել Թագաւորն զորդի երանելւոյն ըզմարտիրոս՝ որ էր ՚ի դրան արքայի , հրաւիրակ նմին քանի մի արամբք պատուաւորօք՝ դարձ առնել ՚ի դուռն · որ՟պ զի առանց կարծեաց ինչ եկեսցէ վաղագոյն · գրելով դարձեալ նամակ այսու օրինակաւ · Եհաս առ մեզ ո՛վ վեհագոյն զօրագլխաց մերոց սարգիս՝ կորովամիտ քո իմաստութե՟ն համբաւ · զի ըստ օրինակի տրամախոհական իմաստասիրաց շահեցայք զխաղաղութի՟ն զի՝ նուա-

A 1019

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐՎԵՍՏԻ ԹԱՆԳԱՐԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ
БИБЛИОТЕКА
музея литературы

ջելով զթշնամիսն ։ Արդ վ՟ն զի զայդ բարւոք տնօրինեցեր, հրամայէ այսուհետեւ թագաւորութիւս մեր՝ կանխաւ ժամանել առ մեզ ը՟ որդւոյ քում. քանզի կարօտիմք ըղկատարեալ քո խոհեմութի՟դ խորհրդակից առնուլ յաղագս թգ՟րուե՟ն հռովմայեցւոց, որ ընդ հուպ հանդերձեալ է յառաջոյ մեր տալ պատերազմ. ո՛ղջ լեր ։

Եւ յորժամ յուղի անկեալ պատանին մարտիրոս, դայր հասանէր հանդերձ ուղեկցօք մերձ 'ի սահմանսն՝ յորում էր բանակ հօր նր՟, 'ի ճանապարհի անդ ընդ առաջ ելին գունդ թշնամեաց. և ըմբռնեալ զպատանին և զորս ընդ նմա՝ տարան 'ի բանակն իւրեանց ։ Եւ իբրև ազդ եղև սբ՟յն պատահումնս՝ որ յազդմանէ չարին, տրտմութի՟ ոչ սակաւ եղև նմ՟ և ա՟մ զօրացն ։ Ապա զմարդկայինն օգնականութ՟ն անփոյթ արարեալ՝ յա՟ծ ապաւինէր. և անկեալ առաջի ա՟յն՝ արտասուալից պաղատանս մատուցանէր, յիշելով յաղօթել անդ իւրում զկատարումն սքանչելեաց ա՟յն յիւրաքանչիւր դարս՝ առ Նոյ, և առ աբրահամ, առ իսահակ և առ յակոբ, և առ ա՟մ նահապետսն. և ասէր. Որպէս լուար դու տ՟ր աղօթից ն՟ց, լո՛ւր և ինձ մեղաւորիս. և ը՟ որում յակոբայ արդարոյ շնորհեցեր զյովսէփ տեսանել, տո՛ւր և ինձ զորդին իմ վերստին. զի մի՛ դայթակղէ՟ն կորիցեն նոր ժողովուրդս՝ որք դարձան առ քեզ քարոզութ՟բ ծառայի քո. այլ արա՛ տեսանել սոցա զողորմութի՟ քո՝ որ առ իս, և տո՛ւր փառս անուանն քում սրբ֟յ ։ (9)

Եւ զերիս աւուրս ոչ դադարէր յաղօթելոյ զցայգ և զցերեկ, հանդերձ պահօք պնդութբ֟ (10) ․ և ասէր առ ած֟ ․ ո՛չ կերայց, և ոչ արբից ․ ահաւասիկ ես առաջի քո եմ ծառայս քո ․ արդ ո՞ւր է որդին իմ ․ ընդէ՞ր մատնեցեր զիս ՚ի ձեռս թշնամեաց իմոց ՚ի նախատինս, և զորդին իմ ՚ի գերութե֟ անդ ՚ի նոյն ՚ի թշնամանս ․ ո՛չ ապաքէն դու տր֟ ասացեր ցհայր քո մծ֟ զաղարու՝ եթէ մծ֟ ժողովրդեանս առնեմ, զի հաւատասցեն յիս ․ ընդէ՞ր մատնեցեր զորդին իմ, և զիս նախատինս թշնամեաց իմոց արարեր ․ և բարձրաբանեն թշնամիք խաչին՝ և ասասցեն ․ ահա սարգիս պաշտէր զած֟, թո՛ղ արդ տացէ զորդի նր֟ ։ Այլ ես ասեմ ․ ած֟ իմ ես դու, և ո՛չ է տկարութ֟ի առաջի քո տր֟ իմ յս֟ քս֟ ․ կարող ես զիս փրկել ՚ի ձեռաց թշնամեաց իմոց, և տալ ցիս զորդին իմ ։ Եւ բազումք եկեղ

էին տեսանել զսարգիս ։

Նա իբրև՝ մեծ հաւատով խնդրէր յա֟յ, ոպ֟ որդի որ խնդրեսցէ ՚ի հօրէ իւրմէ սիրով և նազելով, մինչև ցերիս աւուրս ․ և ահա յանկարծակի ետես ՚ի չորրորդումն աւուր զերրորդ ժամու, այր հեծեալ եհաս ՚ի բանակէ թշնամեաց, ած կացոյց զմանուկն, և զորս ընդ նմա՝ առաջի բազմութե֟ զօրացն սարգսի, և ասէ ․ Զայս մանուկս եօթն այր ՚ի բանակէն մերմէ գերի ածին ․ և յորժամ ածին, յայնմ աւուր եօթանեքեան արքն սատակեցան ․ և ցասումն և հարուածք հասին 'ի բանակս · և ոչ դադարեաց խռովութիւն 'ի զօրաց անտի մերոց, մինչ զի զմիմեանս սատակել բազմաց · տեսիլս տեսանէր զօրավարն մեր, և ասէր ցզօրագլուխս իւր · այս ցասումն 'ի վերայ մեր վասն մանկանս այսորիկ է · վաղվաղակի գնացէք և տարէք · զի թէ ոչ դարձուցանէք զպատանեակդ առ հայր իւր, ամենայն զօրքս կորնչին: Եւ ես աւադիկ ածի այսր · և ոչ գիտեմ, ո՞յր է մանուկս այս · արդ ցուցէք ինձ զհայր դորա, և տաց զմանուկն · զի թերևս դադարեսցէ բարկութիւն Աստուծոյ 'ի բանակէն մերմէ:

Եւ իբրև լուան զայս բանակն Սարգսի, աղաղակէին և փառաւոր առնէին զԱստուած ասելով · արդարև մեծ է Աստուածն Սարգսի, և ո՛չ այլ Աստուած գոյ՝ որ առնէ զայսպիսի նշանս: Յայնժամ նախկին հաւատացեալքն հաստատէին 'ի հաւատս, և այլք եկեալ երկիրպագանէին Տեառն Աստուծոյ, և ասէին · Սա՛րգիս և մեք հաւատամք յԱստուածն քո, որպէս և դու · քանզի նա՛ է Աստուած: Եւ երանելին Սարգիս գոհանալով ասէր · ասա օրհնեցէք ամենայն ծառայք Տեառն զՏէր · և զօրքն ձայնակից լինէին սաղմոսերգութեան սրբոյն: Եւ կալեալ Սարգիս զձեռանէ որդւոյ իւրոյ՝ ետ փառս Աստուծոյ, և ասէ · գոհանամ զքէն հայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ ծածկեցեր զիս յիմաստնոց և 'ի գիտնոց, և յայտնեցեր տղայոց և մեղաւորաց: Եւ յաւել սուրբն առնել աղօթս վերայ բանակի թշնամեաց, զի դադարեսցէ բարկութիւն 'ի նոցանէ · մինչև զկնի այլ ևս երից աւուրց եհաս աւետաւոր 'ի բանակէ անտի օտարաց , եթէ արդարև մեծ է ածն՟ սարգսի · զի աղօթիւք նր՟ դադարեաց հարուած 'ի բանակէն մերմէ · և մեք հաւատամք յածն՟ սարգսի : Եւ ասէր երանելին · գոհանամ զքէն տր՟ իմ յս՟ քս՟ , քանզի գտար այնոցիկ՝ որ զքեզ ոչ ճանաչէին : Այլ զօր ազատութե՟ որդւոյ իւրոյ մարտիրոսի արար սարգիս ամ՟ բանակաւն տօն ուրախութե՟ · և ուրախ լինէին 'ի տր՟ հոգևոր և մարմնաւոր ուրախութբ՟ : Եւ ել համբաւս այս սքանչելի ը՟ ամ՟ աշխարհ , զոր արար տր՟ սարգսի ծառայի իւրոյ · և եհաս կանխաւ 'ի դուռն պարսից լուրն այն · ը՟ որ խեռայլին իշխանքն , և ասէին · մեք այսպէս կարծէաք , եթէ դաւանօք զսարգիս կորուսանեմք · արդ նա տակաւին կենդանի է , և զաշխարհս ամ՟ մոլորեցոյց , և ամենեքեան հաւատան կախարդութե՟ նորա :

Իսկ սրբն՟ սարգիս իբրև լուաւ յորդւոյն իւրմէ զհրամանս թագաւորին՝ զի կոչէր զնա ստիպով 'ի դուռն , ծանեաւ հոգւովն զչարութի՟ միտաց արքային և իշխանաց նր՟ · և կոչեցեալ առ ինքն զզօրս ամ՟՝ որք հաւատացին 'ի քս՟ , ասէ ցնս՟ · Ե՛ղբարք ահա ժամանակ ընդունելի , յորում պարտ է յայտնի առնել զբարեպաշտութի՟ հաւատոց մերոց , և խոստովանել զտր՟ մեր յս՟ քս՟ առաջի մարդկան · զի և նա խոստովանեսցի զմեզ առաջի հօր իւրոյ և հրեշտակաց սրց՟ : Իսկ զօրացն իբրև ընդ մի բերան պատասխանի տուեալ ասէին · ընդ քեզ եմք ո՛վ հայր պատուական 'ի կեալ և 'ի մեռանել։

Եւ սբն ասէ․ հրամայեալ է մեզ 'ի տնէ ոչ ծածկել զլոյս հաւատոց մերոց, այլ՝ դնել 'ի վր աշտանակի, և քարոզել 'ի վր տանեաց․ և մի՛ երկնչել յայնցանէ՝ որ զմարմինն սպանանեն, և զոգին ոչ։ Բայց ես անպիտանս յամի ստունգանօղ գտայ հրամանաց տն իմոյ․ քանզի ծածկեցի յանձին իմում մինչև ցարդ առաջի արքայի և աւագաց նր զլուսաւորութի հաւատոց իմոց՝ իբրև զճրագ ընդ գրուանաւ, ակն ածելով 'ի մարդկանէ։ Այլ այժմ ե՛ղբարք աղաչեցէ՛ք զտր, զի տացէ ինձ համարձակութի՝ աներկիւղ քարոզել զանուն նր առաջի թագաւորաց և իշխանաց․ և հաստատեսցէ զոտս իմ 'ի վր վիմին հաւատոյ, զի մի՛ սասանեսցայց 'ի մարդկանէ՝ որոց հանդերձեալ եմ կալ առաջի․ Քզի այնր աղագաւ է կոչումն այս։

Յայնժամ պատասխանի ետուն զօրքն, և ասեն ցսբն․ աղաչեմք տէ՛ր, լո՛ւր բանից ծառայից քոց․ զի խորհրդակից լինիմք տն մերում չերթալ 'ի կոչ արքային, և ոչ տեսանել զերեսս բռնաւորին․ և եթէ շարժեսցի սովաւ ցասումն նր, մի՛ ինչ զանգիտէք ելանել մեօք հանդերձ ընդէմ նր․ զի յամ պատերազմունս՝ որք պատրաստեալ են առաջի քո, պատրա՛ստ եմք մեռանել մեք ամենեքեան․ և այն զի՝ եթէ մարտիցէ նա ընդ մեզ, յաղթեմք նմա զօրութբ տն մերոյ՝ յոր հաւատացաք։

Պատասխանի ետ սբն, և ասէ ցնս․ ո՛չ հրամայէ մեզ տ՟րն մարմնով զօրանալ, այլ՝ հոգւով. և ոչ պատերազմական մեքենայիւք, այլ՝ համբերութ՟ մեր 'ի նեղութիւնս՝ յաղթել թշնամեաց մերոց. արդ մի՛ խափանէք զիս յաւաջնիկայ ընթացից կենաց ճանապարհին. այլ աղաչեցէ՛ք, զի արժանի արասցէ զիս տ՟ր մեռանել վ՟ն անուան իւրոյ սբ՟յ. և ձեզ հովանի՛ լիցի աջ ն՟ր, և հաստատեսցէ 'ի հաւատս Քրիստոսի՝ զոր ընկալայք 'ի շնորհաց սբ՟ հոգւոյն. և եթէ սիրէք զնա բոլորով սրտի՛ւ ձերով, նոյն ինքն եղիցի ձեզ փրկութ՟ի 'ի կեանս յայս, և յաւիտենից կենացն արժանի արասցէ ք՟ս տ՟մ սբ՟ս իւր ։ Արդ դուք նստարուք աստ, և հաւատարմութ՟ 'ի դրունս տարէք զգործ արքունի՝ ծառայելով իբրև տ՟ն, և մի՛ իբրև մարդկան. և ես երթայց 'ի կոչումն՝ յոր կոչեցայ 'ի տ՟նէ ։

Զայս ասացեալ և հաստատեալ զմիտս ն՟ց 'ի հաւատս, ապա բաժանեցան 'ի միմեանց բազում արտասուօք. և յուղի անկեալ սբ՟ զօրավարն սարգիս հանդերձ որդւովն և քանի մի զօրականօք՝ եկին 'ի դուռն արքայի ։ Իբրև ետես զնա շապուհ, ուրախ եղև յոյժ. և հայեցեալ առ խորհրդակից աւագանին՝ ասէ. կարծեմ անիրաւ գոլ զամբաստանութ՟ն՝ որ զսմանէ, և նախանձու շարժեալ ասեմ զչարախօսսն, այլ ոչ ուղղութ՟բ ։ Եւ դարձեալ առ սարգիս՝ ասէ. բարի՛ է գալուստ քո՝ հաւատարիմ և իմաստուն 'ի զօրագլուխս իմ. ընկալցիս պարգևս մեծամեծս առ 'ի մէնջ ըստ անբաստերիւր հաւատոց քոց՝ զոր ցուցեր առ մեզ. վ՟ն որոյ մեծացուսցէ զքեզ թագաւորութ՟իս մեր, և գլուխ ա՟մ զօրաց կացուսցէ յաղագս խոհեմագոյն քո իմաստուե՟դ։ Եւ անդէն շնորհէր նմա ձիրս բազումս։

Իսկ ս՟բն սարգիս ոչ ՚ի բանից անտի պատրեցաւ, և ոչ ՚ի ճշմարտուե՟ն այլափոխեցաւ յաղագս երևելի մեծուե՟ն. այլ տայ նմա պատասխանի իմաստախոհ բանիւ. Գոհանամ ասէ զա՟յ իմոյ՝ որ փրկեացն զիս ՚ի ձեռաց թշնամեաց իմոց. որք ոչ իմաստութ՟ք մերով և ոչ զօրութ՟ք յաղթահարեցան, այլ՝ ամենազօրին ա՟յ կարողութ՟ք. Նուաղ են և պարգևք քո շնորհեալ առ ՚ի ձէնջ. քանզի ես ձեզ իմաստուի՟՝ ճանաչել զճշմարիտն։ Եւ զայս ասելով ս՟բյն՝ ել յերեսաց արքայի. և ասէ թագաւորն ցմերձաւորս իւր. կատարեալ ՚ի ճշմարտուե՟ տեսանեմ զայրս զայս։ Իսկ չարախօսքն յառաջ մատուցեալ ասեն. արքա՛յ քաջ, զնազովրեցւոցն ունի զուսումն և զաղանդ. վ՟ն որոյ ա՟ծ ոչ զմերս ասէ, այլ՝ զյ՟ն նազովրեցին. ապա թէ ոչ՝ հարցանիցէ ցնա թագաւորութ՟իդ ձեր, և ծանիցէ զբանից մերոց զճշմարտուի՟։ Իբրև լուաւ զայս թագաւորն, տրտմեցաւ յոյժ. (զի ոչ կամէր զքրիստոնէուի՟ նր՟, և ոչ ևս յօժարէր կորուսանել զայնպիսի այր քաջ և հաւատարիմ.) և խորհէր ՚ի սիրտ իւր, թէ զիա՛րդ գտցէ ասացելոցն իրաւաբանուի՟։

Եւ ընդ աւուրսն ընդ այնոսիկ եկն տօն կռոցն. և ել հրաման յարքայէ ժողովել զբազմութ՟իսն յատրուշանսն կրակարանին՝ յորում զհուրն լուցանէին ըստ պարսկական օրինին․ յորս էին կանգնեալ և պատկերք կռոց երկոտասանից ։ Կոչեցե՟լ եղև և սարգիս ընդ պատուական զօրագլխացն՝ գալ հանդերձ որդւովն ՚ի հանդէսն յայն ։ Եւ երանելոյն ծանուցեալ զհասեալ ժամն՝ որ յաղագս ա՟յ պատերազմին, յարուցեալ կայր յաղօթս, և ասէր․ Տ՟ր ա՟ծ փրկիչ յուսացելոց ՚ի քեզ, որ խոստացար ծառայից քոց և ասացեր, թէ յորժամ տանիցեն զձեզ առաջի դատաւորաց, մի՛ հոգայցէք վասն տալոյ պատասխանի․ զի ես տաց ձեզ բան և իմաստութ՟ի, որում ոչ կարեն ընդդիմակաց լինել հակառակորդքն ձեր․ արդ տո՛ւր և ինձ ծ՟ր բան ՚ի բանալ բերանոյ իմոյ՝ յասպարիզի հանդիսիս, որ առաջի կայ․ և զօրացո՛ զիս համբերել չարչարանաց և մահու, որ գայ ՚ի վ՟ր իմ վ՟ն անուանդ քո ս՟բյ․ և քեզ փառք յաւիտեանս, ամէն ։ Զնոյն աղօթս առնէր և երջանիկ պատանին մարտիրոս՝ ձայնակից հօր իւրում յա՟մի․ և նովին հոգւով սպառազինէր՝ մտանել ՚ի հանդէս նահատակութե՟ ։ Եւ իբրև կատարեցին զաղօթսն, գնացին երկոքեան ՚ի կոչ արքային, ո՟պ թէ յանդիման լինել թագաւորի յապարանս նորա՝ արտաքոյ մեհենին ։

Եւ տեսեալ զնա թագաւորին՝ ասէ բարձր ձայնիւ․ սա՛րգիս պատուականդ ՚ի զօրագլուխս զօրաց իմոց, եկ մո՛ւտ ընդ մեզ ՚ի տաճարս, և յառաջ մատուցեալ զոհեա՛ հրոյ ըստ օրինի ամենեցուն մեր . և ո́րկ խունկս առաջի մեծամեծ ա̄ծոցն ո̄չ արդարև ա̄ծանէր . զի և չարախօսքն քո յամօթ եղեալ լռեսցեն , և դու առաւել ևս պայծառացիս փառօք ։ Պատասխանի ետ սբ̄ն սարգիս , և ասէ . ես ճշմարտին ա̄յ մատուցանեմ զոհ զանձն իմ գլխովին , և որդւոյ նր̄ յ̄ի ք̄ի՝ որ պատարագեցաւ վ̄ն սիրոյ իմոյ . զկուռս քո ես գիտեմ , և զհուրն՝ ա̄ծ ասել ես ոչ ուսայ , այլ ես պաշտեմ զարարիչն հրոյ և արեգական , և երկրպագութի̄ մատուցանեմ այնմ՝ որ արար զերկինս և զերկիր և որ 'ի նոսա արարածք իցեն . որ է կենդանի և յաւիտենական թագաւոր . որում պա́րտ էիր և դու ո́վ թագաւոր՝ եթէ ունէիր իմաստութի̄ , երկիր պագանել և փառաւորել . և ո́չ տարրեղէն արարածոց գոյացելոց 'ի նմանէ , և անշունչ պատկերաց 'ի մարդկանէ եղելոց ։

Զայս լուեալ արքայի՝ ասէ . ահա յայտնի եղև մոլորութի̄ քո ո́վ արբեալդ յիմարութ̄ե , և զրկող անձին քում ինքնակամ 'ի բիւրուց բարեացն՝ զորս հանդերձեալն էաք առնել քեզ . իսկ դու փոխեցեր զսէր քո առ ո̄մն հրէայ՝ որ վասն մեղաց իւրոց խաչեցաւ . և այլ ևս բազում բանիւք հայհոյէր զք̄ս և ասէր . մի́ բազմաբանիր , այլ երկի́ր , և զոհեա́ ա̄ծոցն ։ Իսկ երանելին իբրև լուա́ւ զայս ա̄մ , ոչ կարաց համբերել . այլ լցեալ զբերան իւր՝ եթուք ը̄դէմ ամպարշտին՝ 'ի նախատինս անօրէն կռապաշտութե̄ (11) . և ոյժ առեալ 'ի հոգւոյն սր՟բյ՝ ասէ․ ոչ երկեայց 'ի քէն և 'ի կռոց քոց, և ոչ պաշտեցից ըզգարշելիսդ․ այլ զսր՟բն ա՟ծ ճշմարիտ, յոր ոչն ուժեն շրթունք հայհոյչաց ։

Յայնժամ սրտմտեալ շապհոյ բարկութ՟բ հրամայեաց քարամբք տալ 'ի բերան նր՟, և կապել երկաթի կապանօք, և քարշել ընդ փողոցամէջսն և յանցս ճանապարհացն․ մինչև ել մորթն 'ի կողից սր՟յն ։ Եւ ասէին ցսր՟ն՝ որք քարշէինն․ սա՛րգիս արդարև թողե՟ր զա՟ծսն մեր և զպաշտօնս մեր, և պնդի՛ս պաշտել զա՟ծ ոմն զօտար՝ զանուանեալն յս՟ քս՟․ արդ զի՞նչ է 'ի մտի քում սա՛րգիս ։ Եւ ասէ ցն՟ս առաքինին նահատակն․ ա՛ղէ ցուցէք ինձ զկուռս ձեր, զի տեսից զզօրութի՟ նց՟, և ես ցուցից ձեզ զզօրութի՟ ա՟յ իմոյ ։ Եւ իբրև լուա՛ն զայս արքն, ուրախ եղեն յոյժ․ և ազդ արարին արքայի․ հրամայեա՛ ասեն, զի եկեալ երկիր պագցէ ա՟ծոցն ։ Եւ եկին ոմանք յաւագա՛ց 'ի հրամանէ թագաւորին, և զօրագլուխ մի հանդերձ զօրօքն․ և կացուցին զսարգիս և զմարտիրոս 'ի մեհենի առաջի երկոտասան կռոցն․ թո՛ղ զատրուշան կրակին՝ որ անդ ։ (12)

Յայնժամ սր՟ն սարգիս աղաղակեաց 'ի սրտի իւրում․ օգնեա՛ ինձ տ՟ր յս՟ քս՟, որ՟պ օգնեցեր ինձ 'ի պատերազմին․ և դարձեալ ցկռապաշտսն՝ ասէ․ ա՞յս իցեն երկոտասանեսին ա՟ծք ձեր․ չորից՝ վիշապաց բերանք են․ չորից՝ դիւա՛ց պատկերք են․ չորից՝ եզանց գլուխ են․ արդ որո՞ւմ երկիր պագից, կամ

առ ո՞ կարդացից ։ Ասեն ցնա իշխանք և մոգք ․ մի՛ անարգեր սա՛րգիս, զի զանմահ դիսն՝ զոմն օձ կոչես, և զոմն դև ։ Ասէ սուրբն սարգիս ․ արդարև ասեմ ձեզ, զի նմանութիւք են գարշելեաց՝ ձեռագործքդ մարդկան ․ քանզի 'ի ներքոյ կաւեղէնք են, և 'ի վերոյ պղնձեղէնք ․ այլ ես յառաջ իսկ ասացի ձեզ, թէ ցուցէ՛ք ինձ զկուռս ձեր՝ եթէ կենդանի աստուածք իցեն ․ ապա թէ ոչ՝ ես ցուցից զզօրութիւն Աստուծոյ իմոյ կենդանւոյ, որ խաչիւն իւրով լուսաւորեաց զերկինս և զերկիր ․ արդ ես տեսանեմ՝ զոր գիտեմս, զի դոքա՝ որ դի՛ւաց պատկերք են, ոչինչ խօսին ․ և որ վիշապաց բերանքդ են՝ ոչինչ ուտեն ․ և որ եզանց գլուխքդ են, ոչինչ բառբառին ։ Եւ ասեն կռապաշտքն ընդ միմեանս ․ վա՛յ մեզ, զի անարգեաց զաստուածսն, և
բարկանան 'ի վերայ մեր ։

Պատասխանի ետ սուրբն սարգիս, և ասէ ․ ո՞չ լուա՛րուք 'ի գրոց սրբոց՝ որ ասէ, նման նոցա եղիցին՝ որք արարին զնոսա, և որք պաշտեննն զնոսա ։ Յայնժամ ասեն քուրմքն ․ կարի՛ բարկացար թշնամանօք և անարգանօք ա՛յր դու 'ի վերայ մեր և աստուածոցն ։ Եւ ասէ սուրբն սարգիս ․ թողէ՛ք թողէ՛ք, թո՛ղ մերձեցայց յաստուածսն ձեր ։ Եւ կարծէին՝ թէ երկիր պագանիցէ նոցա ․ և արձակեցին զսարգիս ։ Իսկ նա կարդալով զտէր 'ի սրտէ յօգնականութիւն՝ կնքեաց զինքն նշանաւ խաչիւն, և հաստատեալ զսիրտն իւր ճշմարտութեամբ՝ կրկնեաց զշղթայսն որ 'ի ձեռսն և որ եդեալ էր 'ի վերայ պա-

պատանոյին , և եհար շղթայիւքն զոլոքս կուոյն . և ահա անդէն խորտակեցան , կործանեցան , և մանրեցան ոսկ՟ փոքր առաջի հողմոյ (13). և ասէր երանելին . ո՛վ անմիտք , ահա պաշտամունք ձեր փշրեցան . և հուրդ՝ որում երկիր պագանէք , մոխիր է ցնդելի ։ Եւ յորժամ լուա՛ն զայս և տեսին մոգքն և բազմութի՟ն հեթանոսացն որ անդ , շարժեցան բարկութ՟ե 'ի վ՟ր սր՟յն . և բուռն հարեալ զնմանէ՝ քարշէին յայսկոյս և յայնկոյս . և աղաղակէին սպանանել զնա ։ Եւ 'ի յանդուգն յարձակմանէ անօրինացն՝ սպանաւ 'ի մէջ ամբոխին երանելին Մարտիրոս որդի ն՟ր . գործովն ընկալաւ (ըստ ասելո՟յ վկայաբանի շնորհալւոյն) զվկայական անուն , պսակակից նախընթաց վկայիցն եղեալ 'ի ք՟ս ։

Այլ պահեցաւ սր՟ն սարգիս 'ի ժամուն . զի զարհուրե՟լ դողային 'ի նմանէ և զօրքն իսկ . միանգամայն և մ՟նայն հրամանի թագաւորին ։ Անդ էր տեսանել զսոսկում՟ն և զապշութի՟ և զկոծ կուապաշտիցն . ոմանք պատառէին զհանդերձս իւրեանց , այլք փետէին զհերս գլխոյ իւրեանց , և կոծելով երթային 'ի դուռն թագաւորին . և էր աղաղակ մեծ 'ի մէջ նոցա . և տարեալ զգէշ փշրանաց կռոցն՝ ցուցանէին աւագաց դրանն, և ասէին . վա՜յ մեզ , քանզի խիստ գործ հասաւ 'ի վ՟ր մեր և 'ի վ՟ր ծ՟իս մերոյ . արդ ո՞ւր գ՟ոյ այլ ա՟ծ իբրև զնոսա , և կեցուցանեն զաշխարհս մեր ։ Եւ իշխանքն մեղադրէին զօրականացն և ասէին. զձեզ առաքեցաք ընդ նմա, ընդէ՞ր ոչ կալայք զնա՝ չառնել ինչ չար ա՟ծոցն։ Եւ զօրքն ասեն. արդարև ասեմք, եթէ դուք էիք անդ դիպեալ, ոչ կարէիք ունել զնա։ Եւ մինչդեռ խօսէին նոքա զայս, ինքն երանելին սարգիս եհաս զկնի, և եկն եկաց ինքնին ՚ի մէջ ատենին. և ունէր ՚ի ձեռն իւր զշղթայսն. և յահի եղեալ իշխանացն՝ ասէին, մի՛ դուցէ և զմեզ սատակեսցէ։ Եւ ասեն ցնա. սա՛րգիս ընդէ՞ր փշրեցեր զա՟ծսն մեր։ Յայնժամ եցոյց սբ՟ն զշղթայսն՝ որ ՚ի ձեռն իւր, և ասէ. ա՛յս է՝ որ զկուռս ձեր փշրեաց. և ն՟ք ինձ ինչ ոչ կարացին յաղթել. և եթէ ոչ ունէի զպատուէրն ա՟յ, այժմ ջնջէի է՟ կուռսն և զկռապաշտս. արդ առաջի ձեր կամ որպէս զորոջ առաջի կորչի, զի՞նչ կամիք արարէք վ՟ն իմ։

Եւ մինչդեռ կամէին բազմու՟ին առ ետեղ կորուսանել զնա, թագաւորն արգել զն՟ն. քանզի սրտմտեալ իսկ էր և յաղագս որդւոյ ն՟ր մահու. զի առանց կամաց ն՟ր եղև։ Եւ կոչեաց զսարգիս առաջի իւր, և ասէ. անարգել անարգեցեր զա՟ծսն, և ներեցի քեզ. և զիա՞րդ իշխեցեր փշրել եւ զնոսա։ Պատասխանի ետ սբ՟ն. վ՟ն զի լուեալ է իմ ՚ի գրոց սբ՟ց, զի ասէ. հովուեսցես զն՟ն գաւազանաւ երկաթեաւ, ո՟պ զանօթս բրտի փշրեսցես զն՟ն։ Ասէ թագաւորն. չերկնչի՞ս դու յա՟ծոցն. զի սատակեն զքեզ. ապա թէ ոչ ինձ անկանի ոչ միայն կապել զքեզ ՚ի շղթայս, այլև բառնալ ՚ի կենաց։ Սբ՟ն ասէ.

ալ. ես պատրաստ եմ յա՟մ ժամ՚ի մահ վ՟ն տ՟ն իմոյ անմահի՝ որ տայ ինձ զանմահութ՟ի. Իսկ դիք քո ոչ կարեն առնել ինչ ինձ. զի ո՛չ հարի զն՟ա շղթայիւք, կարօղ էի խզել և զկապանս իմ գլխովին. զայս ասացեալ խոնարհեցոյց ս՟րբն սարգիս զգլուխ իւր, և ընկէց զշղթայսն առաջի ատենին. ո՛չ թէ ասել, ահա տամ զպարանոց իմ սրոյ ։

Յայնժամ ակնարկեաց թագաւորն դահճաց՝ տանել զնա զգուշութ՟բ ՚ի բանտ. և զօրականքն մատեան երկիւղի՛ւ, և եդին զշղթայսն ՚ի պարանոց նորա. և հրաման առեալ դահճապետին պահել զսարգիս ՚ի բանտին՝ փորձէր զնա ազգի ազգի խոշտանգանօք ։ Իսկ երանելին գոհանայր զ՟այ, զի արժանի եղև վ՟ն անուա՛ն ն՟ր կրել զչարչարանս և զկապանս. Նա և վ՟ն որդւոյն իւրոյ՝ զի վկայական արեամբ պսակեցաւ ՚ի ք՟նէ ։

Եւ պատմեաց դահճապետն սարգսի՝ որպէս ահ արկանելով նմա, եթէ եւ յարքայէ վճիռ կորուսանելոյ զքեզ յետ աւուրց. և սփռեցան հրովարտակք, եթէ վաղվաղակի եկա՛յք և տեսէք զսարգիս մահապարտ ։ Իսկ ս՟րբն լուեալ զհրամանսն՝ ուրախ եղև և սկսաւ աղօթել, և ասել. Ա՟ծ աբրահամու, ա՟ծ սահակայ, և ա՟ծ յակովբայ, ա՟ծ հարցն մերոց առաքելոց և մարգարէից, յիշեա՛ ըզծառայս քո և մի՛ անտես առներ, ո՛չ ցայժմ ոչ անտես արարեր զիս. դու ես ա՟ծ հայր տ՟ն մերոյ յ՟ի ք՟ի, արժանի՛ արա զծառայս քո առնուլ զպսակս ՚ի քէն ։ Տ՟ր յ՟ս ք՟ս դու-

խաւ

խառնեա՛մ զիս 'ի գունդս ս՟րբց քոց , որք նահատակեցան 'ի սէր քո ։ Եւ ս՟բ Հոգիդ կենդանարար մո՛յծ զիս 'ի նաւահանգիստ կենացն անվախճանից , ուր փառաւորի ամենաս՟բ երրորդութ՟իդ ։

Եւ մինչդեռ 'ի բանտի անդ կայր յաղօթս , 'ի մէջ գիշերի երևեալ բանսարկուն՝ եկն եկաց առաջի երեսաց ս՟բյն , և ասէ ․ սա՛րգիս զի՞նչ արարի քեզ , ընդէ՞ր փշրեցեր զհանգստարանն իմ , կամ զզոհարանն իմ ընդէ՞ր աւերեցեր ․ արդ զղջացի՞ր և հանդարտեա՛ ը՟դ սիրտ Թագաւորին ։ Սաստեաց 'ի նա ս՟բն սարգիս , և ասէ ․ յե՛տս երթ սա՛տանայ կորստականօք քո հանդերձ 'ի կորուստն յաւիտենից 'ի դժոխս ։ Ասէ դևն ․ դու արհամարհեցեր զիս , արդ երթայց մտից 'ի սիրտ թագաւորին , և տաց յուտել զմարմինն քո , և զարիւն քո յըմպել , և զոսկերս քո փշրել ․ որպէս դու արարեր ը՟դ բագինս իմ ։ Եւ ասէ ցնա ս՟բն սարգիս ․ մերժեա՛ յինէն անուամբն ք՟րի ։ Եւ գնաց սատանայ , և եմուտ 'ի սիրտ թագաւորին ․ և նա առաքեաց պատուէր՝ չարչարել զնա 'ի վաղիւն անդր ․ և դահիճքն տանջէին , և քերէին , և քարշէին զս՟բն սարգիս ․ իսկ նա սաղմոսէր գոհութ՟բ ․ տ՟ր յօգնել ինձ նայեա՛ , և տ՟ր յընկերել ինձ փութեա՛ ․ տ՟ր և հայր տ՟ն մերոյ յ՟սի ք՟սի տո՛ւր զօրութ՟ի հոգւոյ իմոյ , և համբերութ՟ի մարմնոյ իմոյ ․ զի յաղթեցից սատանայի ․ և մի՛ յաղթեսցեն ինձ մեքենայք ն՟ր ։

Եւ յաճախէին 'ի չարչարանս երանելւոյն

զօրն ողջոյն . և իբրև անց պահ մի գիշերոյն , եկն հրեշտակն տն՟ 'ի գիշերին յայնմիկ , և ասէ . զօրացի՛ր սա՛րգիս , զի ես ը՟ քեզ եմ . և զի՛նչ խնդրեցեր՝ ետու քեզ . և զոր ինչ խնդրես՝ տաց քեզ ։ Իբրև զայս ասաց հրեշտակ ա՟յ , զօրացաւ սիրտ սբ՟յն , և եղև մարմին նր՟ ոպ՟ երկաթի . և արհամարհեաց ըզտանջանսն և զկապանս նց՟ . և գոհութբ՟ փառաւորէր զա՟ծ . և ասէր ընդդէմ բանսարկուին՝ 'ի միւսանգամ լրբիլ երևիլ նմա . ըզգեցայ ես զք՟ն 'ի սրտի իմում . իբրև զհանդերձ . և եթէ ձգեսցես ինձ զնետս քո , ոչ կարէ վիրաւորել զնահատակս ք՟նի . քանզի տնկեաց զիս ք՟ն իբրև զծառ ձեռամբ իւրով . զոստս իմ փշրեսցես , այլ զարմատս իմ ոչ կարասցես խլել . անկիւն հատեր , այլ ըզգանձս իմ ոչ կարացեր գերել . զի տ՟ր ը՟ իս է , և հրեշտակ նր՟ զօրացոյց զիս . և ուրախ եղև անձն իմ և սիրտ իմ յա՟յ կենդանւոյ ։ Իսկ բանսարկուն սկսաւ յիշեցուցանել նմա զկարծեցեալ զօրութ՟իս իւր . իշխանութի՟ ունիմ ասէ քաղցրացուցանել զսիրտ բռնաւորին , և փրկեսցին 'ի տանջանաց մարմինք քո . ա՛յ թշուառական զոհեա՛ և պաշտեա՛ զիս . ապա թէ ո՛չ՝ ցուցանեմ քեզ զկար զօրութե՟ իմոյ . յիշեա՛ զի՛նչ արարի հօրն քո ադամայ , որպէս զնա 'ի դրախտէն կենաց հանի և 'ի փառացն . գիտես զի՛նչ արարի ես ը՟ յոբ . ես ետու կոտորել և զմարգարէսն . ես էի՛ որ և զառաքեալսն և զվկայսն ետու չարաչար սպանանել . ես մտի և 'ի սիրտ հրէիցն , և դիպեցուցի նոցա մոլորութ՟ի, զի չարչարեացեն զծնեալսն 'ի կուսէն 'ի տանջանս և 'ի սպանութ՟ի փայտի ։

Պատասխանի ետ սբ՟ն սարգիս . չա՛տ է քեզ սատանայ, մի՛ ձանձրացուցաներ զիս . գիտեմ զի չարիք քո 'ի գլուխ քո դարձան, իսկ սբ՟քն պսակեցան և զարքայութ՟ին ժառանգեցին . գիտեմ զի զհրէայսն կորուսեր, բայց զայս գիտեմ՝ զի 'ի կուսէ ծնեալն՝ որ յառաջ քան զյաւիտեանս առ հօր էր, ջախեաց զգլուխ քո, և զադամ փրկեաց 'ի ձեռաց դժոխոց . ա՛յ սատանայ խուլ և կոյր և յիմար՝ զիա՞րդ դու զայդ ոչ գիտացեր . և ոչ 'ի միտ առեր, եթէ ո՞ է ք՟սն . և թէ զորդին ա՟յ ոչ կարէիր 'ի խաչ հանել, եթէ ոչ էր կամեցեալ՝ որ նա ինքն է տ՟ր փառաց ամենակալ ը՟ն հօր և ս՟բ հոգւոյն . քանզի ինքնին է հայր, որդի 'ի հօրէ, և հոգին ս՟բ 'ի նոցին էութ՟է, երեք անձինք, մի ա՟ծութ՟ի, մի զօրութ՟ի . արդ ո՞ իշխէր զորդի ա՟յ 'ի խաչ հանել, եթէ ոչ էր կամեցեալ . բայց արդ կամաւ ետ զմարմին իւր՝ որ յադամայ՝ 'ի չարչարանս և 'ի մահ խաչի . և եկն հոգւոյն զօրութ՟բ և բազում հրեշտակօք և փշրեաց զդրունս պղնձիս, և զնիգս երկաթիս խորտակեաց . և ոչ զօրացին առաջի զօրութ՟եց ն՟ր դրունք անդամանդեայք, և եհան զադամ զհայրն մեր և զա՟մ ծնեալսն 'ի նմանէ զդասս արդարոց . և փառաւորէր ադամ ըզհայր և զորդի և զս՟բ հոգին ։

Եւ ասէ սատանայ . մա՛ր սարգիս կարծէի՞

եթէ դառնաս և պաշտես զիս. արդ դու կըրճիմն եղեր ինձ. և զի՛նչ շահեցար 'ի յամառխորհրդոց քոց. եկ հաւանեա՛ կամաց թագաւորին, և լե՛ր երևելի յծ՟ի. և մի՛ վ՟ն սնոտի յուսոյ լքաներ զկեանս քո. ապա թէ ոչ՝ 'ի վաղիւ՟ն դարձեալ յարուցից ամբոխ մեծ 'ի վ՟ր քո. և տաց զմարմինդ քո գազանաց երկրի, և զարիւնդ քո թռչնոց երկնից ։ Ասէ ցնա սբ՟ն սարգիս. հեռի՛ լեր յինէն անուամբն քո՝ տկա՛րդ և անարգեալդ և ժըպիրհդ. յե՛տս երթ յինէն, մի՛ ևս իշխեսցես մերձենալ յիս հակառակո՛րդ ճշմարտութե՟ և հայր ստու՟ե. զի խրատ քո ո՛չ է պատճառ կենաց, այլ մահուն յաւիտենից՝ ունողաց զնա, որ ընդ քեզ արկանին 'ի կորուստ՝ այնոքիկ, որ առնեն՝ զոր ասեսդ ։ Եւ այնուհետև գնաց և հեռացաւ 'ի նմանէ չարն՝ հալածական և ամօթապարտ խայտառ ։ Յայնժամ աղօթեաց սբ՟ն սարգիս 'ի լուսանալ հինգերորդ աւուրն, և ասէ. տ՟ր իմ յ՟ս ք՟ս, որ օգնականդ ես անօգնականաց, և մերձ ես յերկիւղածս քո, եկ յօգնել ինձ տ՟ր փրկիչ իմ, զօրացուցի՛չ տկարաց, անդորրութի՟ նեղելոց, սպարապե՛տ պատերազմի, ամրութի՟ մրրկեալ հողմոյ, լցուցի՛չ կարօտելոց՝ տ՟միւ առ ամենեսեան. եկ յօգնել ինձ տ՟ր իմ յ՟ս ք՟ս. ք՟ս փրկիչ, խորհուրդ իմ յ՟ս լո՛ւր ինձ ։

Եւ ահա յանկարծակի երևեցաւ նմա տ՟ր յ՟ս 'ի բանտի անդ երկնաւոր զօրօք. և տունն լի եղև գերապայծառ լուսով առաւել քան զարեգակն • և լուծան վաղվաղակի կապանք ձեռացն և ոտից երանելոյն ։ Եւ ձայն լսելի եղև 'ի լուսոյ անտի՝ որ ասէ • Քաջալերեա՛ բարի՛ և հաւատարիմ ծառայ իմ սարգիս • մի՛ երկնչիցի սիրտ քո 'ի սպանողաց զմահկանացու մարմինդ • զի մտանելոց ես 'ի տրտմականաց աստի և 'ի հողանիւթ յարկացդ յանվախճան ուրախութ̃ն լուսեղէն խորանաց տ̃ն քո ։ Եւ 'ի տեսիլ փառաց լուսոյն այնորիկ ծագման՝ ժողովեցան բազմութիւնք որ շուրջ կային զբանտին 'ի տուն անդ • զի տեսանէին զերանելին արձակեալ 'ի կապանացն • և կայր յաղօթս առ ա̃ծ ։ Եւ լցեալ զարմանալեօք՝ տային փառս ճշմարտին ա̃յ , զոր քարոզէր սարգիս ։

Եւ վաղվաղակի երթեալ պատմէին թագաւորին զաքանչելիսն՝ զոր տեսին • և հրամայէր առաջի ածել զերանելին իշխանական պատուոյն ։ Եւ իբրև տարան , ասէ ցնա շապուհ • ո՛վ անիմաստ և թշնամի անձին քում, զի՞նչ չար եբեր քեզ հակառակութ̃ի հրամանաց մերոց , բայց թէ զանարգանս և զչարչարանս • և զմահ որդւոյ քո • յորս եթէ յամառեալ մնաս , չարաչար մահուամբ ելցես 'ի կենաց • իսկ եթէ փոխեսցիս յանմիտ խորհրդոյ այտի՝ և գաս 'ի լաւութ̃ի՝ յիշելով զսէրն մեր զառաջին , քաղցրութ̃ի մեր ներէ , և ոչ համարի քեզ մեղս զսխալանսդ՝ որով յանցաւոր գտար • այլև գերադոյն պատուոց և փառաց արժանասցիս ։ Արդ յայսմ աւուր անսա՛ հրամանաց մերոց • և յետ այնր երթ առ նազովրեցին ։ Օ՜ այս աւեր թագաւորն , ք՟զի ոչ կամէր զմահ՝ սէյն ․ զի և յուլիանոսի կայսեր հասեղէր համբաւ գալստեան ։

Իսկ երանելոյն պատասխանեալ ասէ ․ զամօթ և զնախատինս ո̃ծոցն ձերոց ոչ զգացեր ․ քանզի խաւար և անլոյս ես ո̃ք զո̃ծան քո ․ զիա՞րդ տեսանելով զնոսա մանրեալ իբրև զփոշի՝ և ոչ ծանեար զտկարութի նց ։ Այլ իմ պարծանք և յոյս՝ ա̃ծն իմ է յո̃ ք̃ս ․ զի ո̃ք զորդին իմ ընկալաւ բարեպաշտութե հաւատով, և զիս ընկալցի 'ի նոյն հաւատս արմատացեալ և հաստատեալ ․ զորմէ գոհանամ և փառաւորեմ, զի ընկալաւ զպտուղ որովայնի իմոյ , և ոչ ետ խաբել մոլորութե քում ։ Իսկ արդ ասեմ յայտնապէս ․ զի կուրութի քո զիս ոչ խաւարեցուցանէ ․ բայց և այս յայտնի լիցի քեզ , զի եթէ թողացուցանես զիս 'ի կեանս , մահ քո 'ի ձեռաց իմոց լինիցի ․ քանզի ոչ ներեմ պիղծ բերանոյ քո խօսել հայհոյութի յա̃ծն իմ ճշմարիտ ։ Իբրև լուաւ զայս թագաւորն , լի եղև սրտմտութբ ․ և հրամայեաց մերկացուցանել 'ի նմանէ զզինուորական պատմուճանն , և ասէ ․ սարգիս՝ որ ոչ ծանեաւ զպատիւ , զանարգանս ծանիցէ , և 'ի մէջս իւր մեռցի ։ Իսկ հրաման ետ հանել զնա արտաքոյ քաղաքին և սպանանել ։ Արդ առեալ զնա դահճացն վարէին բռնութբ մինչև 'ի տեղի մահուն ․ երթային ընդ նմա և բազմութիք յոյժ՝ 'ի քրիստոնէից և 'ի հեթանոսաց ։ Ընդ ամբոխ կռապաշտից՝ որոց ոխացեալ էր ընդ նմ̃ վ̃ն կործանելոյ զբագինսն, ձգէին քարշէին և տանջէին զնա դառնապէս, և եղնգամբք խուրեանց քերէին զմարմինս նորա ։ Իսկ երանելին արհամարհէր զտանջանօքն՝ ստէպ զայս աղօթէր և ասէր. Հա՛յր մեր՝ որ յերկինսդ ես և 'ի յերկրի. մի՛ տար զմեզ 'ի 'ի փորձութի̃, այլ փրկեա՛ 'ի չարէ ։ Եւ այս աղօթք էին երանելոյն սարգսի ընդ ա̃մ ճանապարհն՝ յիշել զքանչելի զօրութի̃ն ա̃յ և զաջ նորա, որով փրկեաց զարդարսն ա̃մ և զա̃ծապաշտս յա̃մ փորձութե̃ և 'ի վտանգից երևելի և աներևոյթ թշնամեաց. և զօրացոյց զառաքեալսն և զվկայսն 'ի հանդէս ճշմարտութե̃. և զնոյն խնդրէր զօրութի̃ հզօրին վ̃ն անձին իւրոյ. մի՛ մերժիր ասէ 'ի ծառայէ քումմէ տ̃ր իմ յ̃ս ք̃ս, ամենակա՛լ, սո՛ւրբ, քա՛ղցր, բարերա՛ր. որ մե՛րձ ես 'ի յերկիւղածս քո, և գտանիս խնդրողաց քոց ։ Երբև հասին 'ի տեղին՝ որ անուանեալ կոչի սալք, դադարեաց անդ ս̃բն. քանզի անդանօր հանդերձեալ էր կատարիլ. և զձեռս տարածեալ և կացեալ յաղօթս բարձր ձայնիւ ասէր. Տ̃ր ա̃ծ յաւիտենական, որ արժանի արարեր զիս մեռանիլ վ̃ն անուանդ քում ս̃բյ, լո՛ւր աղաչանաց ծառայի քո. և ընկա՛լ զիս ընդ այնոսիկ՝ որք սիրեցին զօր երևելոյ գալստեան քո. և եղեն ճանապարհակից քեզ չարչարանօք խաչի և մահու ։ Եւ զոր միանգամ պատրանօք չարին մեղուցեալ եմ 'ի մանկութե̃ իմմէ առաջի քո մինչև ցայժմ կամայ և ակամայ՝ գիտութ՟բ և անգիտութ՟բ, լուա՛ և մաքրեա՛ ողորմութ՟բ քով ՚ի ձեռն հեղման արեան իմոյ ։ Շնորհեա՛ և հաւատացելոց քոյ՝ որք յիշեն զանուն իմ, զթողութն՟ մեղաց, և յիւրաքանչիւր վտանգից հոգւոց և մարմնոց զփրկութն՟, և զբուժումն ախտից · զդիւաց հալածումն, զհիւանդաց բժշկութն՟ · ՚ի պատերազմունս յաղթութն՟ · ՚ի բանտից և ՚ի կապանաց զարձակումն · ՚ի ծառայութէ՟ զազատութն՟, ՚ի խռովութէ՟ զխաղաղութն՟ · ՚ի նեղութեց անդորրութն՟ · ՚ի ճանապարհի զառաջնորդական պահպանութն՟ · ալեկոծելոց ՚ի ծովու զհանդարտութն՟ · յերաշտութէ՟ զհոսումն անձրևաց քաղցրութե՟՝ յառատապէս պտղաբերութն՟ · ՚ի կարկտաբեր և յեղեամնաբեկու օդոց բռնութէ՟՝ դադարումն երագապէս · մարախոյ և ա՟մ զեռնոց, որք շարժին ՚ի բարկութէ՟ քումմէ պատուհասել զմարդիկ վ՟ մեղաց՝ զհալածումն ։ Եւ որք նուիրական ընծայիւք և ողորմութ՟բ զյիշատակս մեր կատարեսցեն, ընկա՛լ ՚ի հոտ անուշից · և վարձատրեա՛ բիւրապատիկ բարութիս՟ աստ և ՚ի հանդերձեալսն ։ Եւ ըզհոգիս իմ ընկա՛լ յօթևանս արդարոց ՚ի հանգիստն յաւիտենական · և քեզ փառք յաւիտեանս յաւիտենից · ամէն ։

Եւ յետ կատարման աղօթիցն էջ առ նա հրեշտակ յերկնից՝ ունելով ՚ի ձեռս իւր պըսակ լուսապայծառ · և ասէր · զօրացի՛ր քաջ նահատակ ք՟ի · մի՛ երկնչիր ՚ի սպանողաց զմարմինդ . քանզի բացաւ քեզ դուռն արքայութեան երկնից . և զոր ինչ խնդրեցեր՝ տուաւ քեզ յա՟յ . և ա՟մ հաւատացելոց խնդրուածք յանուն քո շնորհեսցին ՚ի տ՟նէ ։ Եւ տեսեալ բազմութեան զհրեշտակն ա՟յ և զպսակն լուսոյ ՚ի ձեռին, աղաղակէին ասելով . մե՛ծ է ա՟ծն քրիստոնէից, և բա՛յց ՚ի նմանէ այլ ո՛չ գոյ ա՟ծ ։ Իսկ ս՟բյն դարձեալ առ դասս հաւատացեալ զօրացն՝ և ասէ . լուարո՛ւք ինձ այժմ հաւատացեալք ՚ի ք՟ս, որք մերձ եղեալ տեսանէք զնահատակութ՟իս իմ, մի՛ եղիցի ձեզ ՚ի տեսանել զմահ մահկանացու մարմնոյ իմոյ՝ կրել անյուսաբար տրտմութ՟ի . զի եթէ այսօր և եթէ վաղի՛ն՝ ընդունելոց է սա հարկաւորապէս զպարտիս նախահօրն . բայց յոյս իմ՝ որ է ՚ի ք՟ս, անվախճան է . որով ունիմ վերստին առնուլ զսա ՚ի գալստեան ն՟ր անմահ և անապական ։ Եւ ես ընծայեմ և ուրախ եմ այսօր, զի զփափագումն իմ որ ՚ի մանկութենէ՝ կատարեաց տ՟ր, չարչարանաց իւրոց՝ և վըկայիցն պսակաց լինել հաղորդ . և ո՟չ զօրացոյց զիս ՚ի պատերազմունս մարմնաւոր թշնամեաց, զօրացուցէ և այսօր ՚ի վերայ հոգւոց թշնամւոյն՝ և որք նովաւ պատերազմին ։ Եւ արդ իմ զընթացս կենցաղոյս ճանապարհիս կատարելով, և պահեալ ըզհաւատս հաստատուն, գնամ ուրախութ՟բ ՚ի ք՟ս . և խաղաղութիւն ա՟յ եղիցի ընդ ձեզ յաւիտեանս, ամէն ։

Եւ զայս ասացեալ՝ եդ ծունր ընդ արևելս .

տ͞նագրեաց զինքն նշանաւ խաչին . և խոնարհեցուցեալ զպարանոցն առաջի սրոյ՝ ասէ . տ͞ր յ͞ս ընկա՛լ զհոգի իմ . և եհատ դահիճն սուսերաւ զս͞բ գլուխ երանելւոյն ։ Եւ նոյնժամայն ծագեաց լոյս երկնային , և շրջապատէր զմարմնով երանելւոյն . և ցոլացեալ 'ի լուսոյ անտի բոց՝ այրէր զոմանս 'ի հեթանոսաց . և մնացեալքն 'ի նոցանէ փախստական լինէին . և ձայն 'ի յերկնից լսելի լինէր՝ որ ասէր . վայելչապէս կատարեցեր զճգնութիդ քո ո՛վ երանելիդ սարգիս . արդ ե՛կ և ժառանգեա՛ զհանդիստն յաւիտենից ընդ ա͞մ ս͞բս ։

Իսկ որք 'ի զօրաց անտի հաւատացեալք հանդիպեցան 'ի տեղւոջն , առեալ զմարմին երանելւոյն՝ պատեցին մաքուր զգեստուք ։ Եւ պատմեցաւ այս յականջս թագաւորին . և առաքեաց զդահիճսն , և կոտորեաց 'ի նոցանէ արս չորեքտասան , որք էին յազգէ անտի պարսից . և հրամայեաց գազանաց արկանել զմարմինս ն͞ց . յորս ոչ մերձեցան ըստ տեսչութ͞են ա͞յ ։ Ապա խորհուրդ առեալ՝ հրով այրել կամէր զմարմինս ս͞բցն . վ͞ն զի բազումք 'ի պարսիցն յաղագս սքանչելեացն եղելոց հաւատացին 'ի ք͞ս ։ Եւ մինչդեռ յայսմ խորհրդեան էր , եհաս 'ի լսելիս ամպարշտին շուշուկ երկիւղի գալստեանն յուլիանոսի . և մոռանայ զչարութ͞ե խորհուրդն որ յաղագս սրբոցն . և հանդերձեալ պատրաստէր զզօրսն , և ելանէր ընդդէմ ն͞ր 'ի պատերազմ ։ Յայնժամ

ժամ եկեալ ոմանք 'ի հաւատացելոցն 'ի գիշերի , և առեալ զմարմին սբ̃յն սարգսի , և զչորեքտասանեցունց արանցն , տարան և պահեցին զգուշութ̃բ 'ի պատուական տեղւոջ ընդ մարմնոյ սբ̃յն մարտիրոսի որդւոյ սարգսի : (14)

Կատարեցաւ սբ̃ն սարգիս և որք ը̃ նմա՝ 'ի վախճան ամի տ̃ն 362 , կմ̃ 'ի սկիզբն 363 ամին . և այն՝ ըստ վկայաբանի շնորհալւոյն՝ յամսեանն յունվարի 'ի կատարմանն . լ̃ն : 'Ի նոյն միտս է իմանալ և զասելն միւս վկայաբանի յաղագս սբ̃յն սարգսի , թէ հատին զգլուխ երանելին նահատակին քս̃ի , որ օր իե̃ էր մարերի ամսոյ . ը̃ որոյ և 'ի հին ձաշոցս ընթեռնումք զօր կատարման նորա 'ի մարերի , կմ̃ 'ի մարգաց . իգ̃ . քանզի յաւուրս շնորհալւոյն՝ հայերէն ամիսն մարերի անկանէր 'ի դեկտեմբեր և 'ի յունվար ամիսն հռովմայեցւոյ , որպէս և մարգացն 'ի յունվար և 'ի փետրվար : Եւ ըստ այսմ 'ի դէպ գայ և դնելն ժամագրոց յունաց զսբ̃ն սարգիս 'ի յունվարի . 2 . և հռովմէական վկայագրոց 'ի փետրվարի . 24 : Օ այս տ̃մ հաստատէ և միջոցն առաջաւորաց՝ յորում կատարեմք զտօն սբ̃յն սարգսի . որ է զի 'ի յունվարի , և է զի 'ի փետրվարի հանդիպի : Յայսմ վայրի՝ ուր զկայ առնուն վկայաբանութիք , յաւելուն գրել յայսմաւուրք . 'ի յունվարի . լ̃ն . * Կատարեցաւ սբ̃ն սարգիս
,, 'ի մաղընդարան 'ի վայելուչ վայրի՝ մօտ 'ի
,, քաղաքն , որ կոչի դաղման : Եւ առեալ
,, հա-

,, հաւաստացելոցն զմարմին սբ̃յն սարգսի ,
,, և տարեալ եդին պատուով 'ի քաղաքն
,, համիան : Իսկ յետոյ եկեալ մեծ վարդա-
,, պետն Մեսրոպ՝ եբարձ զմարմին սբ̃յն
,, սարգսի • և տարաւ 'ի կարբի • եդ պատ-
,, ուով 'ի յուշի • և արար զտեղին վանք
,, հռչակաւոր , որ է մինչև ցայսօր : Իսկ ա-
,, ռեալ ատամ մի յատամանց սբ̃յն սարգ-
,, սի • և տարեալ 'ի վրաց տուն 'ի դաշտն
,, գագայ՝ եդ 'ի մէջ փայտախաչի • և օ-
,, ծեալ զխաչն՝ կանգնեաց 'ի վր̃ գագա-
,, թան բլրին գագայ • որ կոչի մինչև ցայսօր
,, գագայ սբ̃ սարգիս • և առնէ մեծամեծ
,, նշանս և սքանչելիս 'ի դերեալս և 'ի բան-
,, դեալս և 'ի ցաւագնեալս || :

Զնոյն յիշատակէ և վարդան վարդապետ 'ի պատմագրութ̃ե իւրում • ո̃պ և պանծալի շարականն սբ̃յն սարգսի՝ յօրինեալ 'ի շնորհալւոյն 'ի յօրինողէ բուն վկայաբանութեանս : Ուր և յայտնաբանի գոլն սբ̃յն սարգսի նշանաւոր 'ի մէջ նշանագործ վկայից , և երագահաս օգնական ամ̃ցն՝ որ կարդան զանուն նր̃ : Իսկ այս ոչ միայն 'ի հայս էր հանդիսացեալ 'ի սկզբանէ հետէ , այլ և յա̃մ քրիստոնեայս արևելից • մինչ զի և նոքին իսկ անհաւատ պարսիկք կոչէին զնա անյաղթ վկայ պարսից , և կատարիչ ա̃մ խնդրուածոց • ո̃պ է տեսանել և առ հին մատենագիրս յունաց առ Թէոփիլակտոսի և Եւագրիոսի (15) : Տարածեալ էր անուն սբ̃յն սարգսի անդստին 'ի վաղ ժամանակաց նաև մինչև յարևմուտս՝ ՚ի հռոմ և ՚ի սպանիաս և ՚ի գերմանիա . մինչ զի միաբան գրեն հին վկայաբանք նց՟ ՚ի փետր . 24 . Ը՟հանրապէս այսպէս . * ՚ի կեսարիա կապադովկացւոց (յիշատակ) սբ՟յն սարգսի մարտիրոսին . որոյ են սքանչելի գործք ‖ . կամ * որոյ գործք մեծամեծք յիշատակին ‖ . կամ թէ * որոյ ոչ միայն նահատակութի՟ն վն՟ ք՟սի եղև սքանչելի , այլ նաև այլ գործք մծ՟ահրաշք պատմին ‖ ։ Թող զի վկայագիրն սպանիացւոց ունելով զմասն ՚ի նշխարաց սբ՟յն սարգսի , այլ չունելով ՚ի ձեռին զստոյգ պատմութե՟ սբ՟յն՝ ո՟չ կարի յարմարէ զվկայաբանութի՟ ինչ . ուր շփոթ իմանալով զանուանս մար սարգիս , որ անխտիր նշանակէ տր՟ սարգիս կամ հայր սարգիս , կարծէ զսբ՟ն յետ զինուորութեան միայնացեալ ՚ի վանս կեսարիոյ , և ապա արեամբ նահատակեալ . այլ զայսմանէ բանք լիցին ՚ի կարգի ծանօթութե՟ց ։ (16)

* * *

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ ։

(1) Զուարթագին սկիզբն առնեմ կարևոր բանիցս՝ որ զսբ՟յն սարգսէ երազահաս վկայէ , ՚ի սքանչելեաց անտի՝ որ եղև (ինձ մեծ յոյժ) յաւուր գրելոյ իմոյ ըղվերջին մաքուր օրինակ պանծալի վկայաբանութե՟ս ։ Քանզի յետ խնդրելոյ հաւատով ՚ի սբ՟յն առաջի նր՟ պատարագի զյաջողութի՟ գրութե՟ս յառաջիկայս օր , այն ինչ հոգայի՝ թէ զիա՟րդ ՚ի մուտս վկայաբանութե՟ս եդից լոկ զանուն Հ . և Լ . առանց Ց . ո՟չ թէ որպէս առանց վկայութե՟ յունաց՝ մարթացայց համօղել յունաց զյունազգի վկայն ՚ի հայս և ՚ի պարսս հանդիսացեալ , յանկար.

կարծակի ազդումն եղև յիս գոգցես՝ մի յուսահատ լինել, թէ չկայցէ անուն սրբոյս յիշատակեալ յեկեղեցական մատեանս յունաց: Հայեցայ կրկին 'ի բասիլեան յայսմաւուրս Յ. և ահա չէք. սկսայ հայել և 'ի ժամագիրս յունաց՝ արձակածաւալ լոկ յունարէն անգամն. այլ անյոյս ամենևին. և ահա գեղեցիկ դիպուածով յանկարծ գտի և տեսի, զի պայծառ և անժխտելի կայ անդանօր. 'ի յունվարի. 2. զկնի յիշատակի սրբոյն բասիլոսի անկիւրացւոյ, այսպէս. * Յայսմ աւուր սրբոյն Սար- ,, գիս սրով կատարի: (հանդերձ կցուրդիւն յոյն երգա- ,, րանի.) Չիք օրինակ յառել, և ոչ 'ի միտս բերել, ,, որպիսի ուրախութիւն էառ Սարգիս զգլուխն 'ի հատումն||:

Ուր ք͞ղի ճարտար տաղասացն յարմարէ ընդ միմեանս զնմանաձայն եղերս խարա (որ է ուրախութիւն,) և գարա (որ է գլուխ), թերևս զխաղալ իցէ և զստուգաբանութիւն անուանս սարգի, որ յունարէն ասի սէրգիոս, արևելեան առմամբ. քանզի որպէս 'ի մեզ սար՝ է գագաթն, նոյնպէս և պարսկել էն սէր՝ է գլուխ. որպէս և յայտ է:

Այլ ուրախութիւն իմ կատարեալ եղև, երբ այնու հետև ընթացեալ առ բոլլանդ յովհաննէս՝ նախահայր խուզարկուաց ամենայն վկայաբանութեանց, տեսի՝ զի դրէ և նա անդանօր 'ի յունվարի. 2. որ և ա. հատ. յունվր. երես. 79. այսպէս. * Սբ սարգիս մարտիրոս 'ի կեսարիա կապա- ,, դովկացւոյ, ըստ ժամագրքի (յունաց). զորմէ կայ ,, մեզ խօսել 'ի փետր. 24. ըստ հռովմէական վկայագրքի||: Հա՛տէ 'ի ժամուս այս վկայութիւն. իսկ զայլ բանս բոլլանդեանց՝ որ 'ի լատին գրոց, ունիմք դնել 'ի վախճան ծանօթութեանց:

Արդ հայեցեալ այժմ 'ի յունականս վկայութիւն՝ ձեռնարկելի է օրինակ զայս. այդ բան՝ որ կայ 'ի ժամագիրս Յ. յնվ. 2. յաղագս սրբոյն սարգսի, կամ գոյր և առ ժամանակօք շնորհալւոյն 'ի մէջ յունաց, և կամ ոչ գոյր: Եթէ գոյր, ապա պարտական էին 'ի բաց թողուլ զառասպելահնար թշնամանս իւրեանց 'ի վերայ հայոց՝ առ կամակար անգիտութիւն չփոթելոյ զսրբն սարգիս իրական ընդ անգոյ սուտ սարգսի, և առ ատելութիւն պախարակելոյ զսուրբ պահս առաջաւորաց անհեթեթ և յիմարական բաղբաջիւք: Միանգամայն և պարտական էին հետաքննել. թէ երբ և ուր և որպէս եղև կատարումն սորին սրբոյն սարգսի վկայելոյ գլխատմամբ. զոր ոչն կարէին և ոչ կարէին չփոթել ընդ այլ համանունն սրբոց՝ զորոց ունէին զյիշատակ յայլ աւուրս. զի են առ ն͞ս ո͞ք սարգիս

գիս և բազում վկայք. ’Ի հոկտ. 7: Սբ̃ սարգիս խոստովանող ’Ի մայիսի. 13. և սարգիս և ստեփաննոս խաղաղութբ̃ հանգուցեալք. յօգոստ. 12: Այս եթէ ոչ դոյր, ուրեմն ’ի շնորհալւոյն ուսան զճշմարտութ̃ սբ̃յն սարգսի, և անցուցին ’ի ժամագիրս իւրեանց. որ է մեզ պարծանք մեծ. Իցէ՞ թէ և զշնորհալւոյն անունն անցուցանէին. ո՞վ և երևի՝ թէ անցոյց առ իւրև կիւռ մանուէլ կայսր. այլ ոչ արմատացաւ յաւուրս յաջորդաց նորա. կամ թէ այն է, որ այժմ գտանի ’Ի ճաշոց. յն. ’Ի յունուարի. 15. * սբ̃ վկայն ներսէ ||:

(2) Եկեսցուք այժմ մեք շնորհ ունել շնորհալի հայրապետին մերում, սբ̃յն ներսէսի ասեմ կլայեցւոյ, որ աշխատասիրութեամբ իւրով աւանդեաց մեզ յաւուրս եպ̃սութե իւրոյ զլիակատար և զվաւերական վկայաբանութ̃ի սբ̃յն սարգսի. իսկ թէ զիարդ, դիցուք զյառաջաբան նորին՝ որ ’ի Ճառընտիրս, ’ի ձև նամակագրութե ըս̃ օրինակիս ըս̃ այսմիկ:

* Թուղթ առ ’ի Ներսէսէ Եպ̃կէ յեղբօրէ տն̃ Գրիգորիսի Կաթողիկոսի հայոց, Պահլաւունի թոռնոյն Գէորգեայ արքեպսեան Եպ̃ի Առաջնորդի սբ̃յ ուխտին հաղբատայ՝ յաղագս հետազօտելոյ առ ’ի ստուգութեան զպատմութեան երանելւոյ Նահատակին Սարգսի:

,, Որոց բաղձալի է ճշմարտութիւն յիրս և ’ի բանս, նոցունց և յաւէտ ըղձալի՝ խնդրելոյն զնա փոյթ, իբրև ական պատուականի և գեղեցիկ մարգարտի՝ ըստ իմաստնոյ վաճառականին. որոյ աղագաւ ոչինչ անխայեն յանհասանելեացն հասումն՝ կամ ’ի յանձին տաժանումն, կամ ’ի նիւթականաց գոյից ծախումն. այլ զոսկեհանացն բերելով զնմանութ̃ի՝ երկրորդ զբովանդակ աշխատութ̃իս առ սէր և յոյս վարկանին փարթամութ̃են:

,, Ըստ այսր աւրացուցի և զքոյդ տեսանեմք պարզականմաց լուսաւորութ̃ե խոհական մասին փափագող, և համասեռեից նորին, որով բանականիս զարդարին մասունք. որ և յոգնաբեղուն պտղոցն քաղցրագոունից առ բարւոյդ ծառոյդ ամբարումն՝ ’ի միոյ ասածանուցաւ պտղոյ ճաշակմանէ: Քանզի հոգևորական այս խնդիր բարեյաղթ վկային քի̃ սբ̃յն սարգսի, անճառ պատմութ̃են քննութիւն առ ’ի գիւտ ճշմարտութ̃ե, որ ’ի նախնեացն հարց անտես եղեալ մինչև ցմեզ, ’ի քէն միայնոյ շարժեցաւ զմերս զարթուցանել թմբրութ̃ի ’ի գիւտ այնր խնդրոյ:

,, Վս̃

„ Վ՟ որոյ և մեք ըստ նշանակութեան առ 'ի ձէնջ տուեցելոյ
„ գրով․ զոր և ծանուցաւ ձեզ երբեմն յաղօթական
„ եղբօրն զուցատրութէ , առաքեցաք առ եղբարս
„ գերահռչակ ուխտին (փ՟ վանացն ասորւոց , ուստի
եկեալ ոմն ուխտաւոր պատմեալ էր նմին գէորգեայ՝
թէ կան անդ մատեանք և վկայաբանութիւնք 'ի լեզու
ասորի․․․) որ յանուն մաւր պարսամոյի առ սահմանաւն
„ մելիտինոյ հայոց․ ո՟չ զի յարկեղս մատենից իւրեանց
„ հետաղօտեալ քննեսցեն․ և եթէ գտցի նշանակեալն
„ , թարգմանեալ տայցեն մեզ զխնդրելին ։
„ Որոցյօժարական սրտիւ զառ 'ի մէնջն ընկալեալ խնդրոյ
„ փոյթ , պխնեցին մերոցն զայս ինչ , եթէ վ՟ զի
„ առ մեզ համանուն վկայք՝ չորք են կոչեցեալք սարգիս․
„ ընկերն բագոսի՝ որ յուռհայ նահատակեալ․
„ և այլ ոմն որ յամիթ․ և միւս ևս 'ի տարայ՝ ուր հնոցն
„ է երից մանկանցն․ և զօրավարն սարգիս հանդերձ
„ որդւովն 'ի պարս վկայեաց ։ Արդ զորո՞յ արդեօք 'ի
„ չորեցունց յայսցանէ խնդրէք ստուգել զպատմութիւ ։
„ Եւ մեզ թէպէտև այլքն բա՛ց յընկերէն բագոսի անծանօթ
„ էին , սակայն իբրև մտօք ինչ տեսանելով՝ եթէ
„ զոր խնդրեմքն , ո՛չ այլ ոք է 'ի սոցունց , բայց զօրավարն
„ անուն , որոյ և որդին․ վ՟ որոյ գրեալ առ նմ՟
„ կրկին անգամ՝ զնորայն յանուանէ խնդրեցաք թարգմանել
„ զվկայութին ։ Եւ նոցա ընկալեալ զառ 'ի մէնջն
„ ցուցեալ անուն , և թարգմանեալ որքան էր կարողութին՝
„ ջերմեռանդն սիրով՝ 'ի ձեռն ուրումն իմաստնոյ
„ 'ի նոցանէ մեքայէլ անուն , աղօտաբար զմեր գիտողի
„ դպրութին , առաքեցին առ մեզ․ որ թէպէտև
„ 'ի յարմարութես բանից և 'ի շաղկապս բառից ոչ զուգիւր
„ ըստ մերումս լեզուոյ , սակայն զգնութին բանին
„ և զկարգ պատմութեան ամբողջ ունէր յինքեան ։
„ Զոր և մեր ընկալեալ , և ը՟ չափոյ զօրութէ յղկեալ
„ զդուրս բանիցն և զպատմողականն , առաքեցաք ձեզ
„ և հանուրց եկեղեցեաց հայաստանեայց՝ գանձ երկնային
„ և հոգևոր , որ ծածկեալ էր յայլալեզու ագարակի
„ ազանց․ և այժմ յայտնեցաւ շնորհօքն քի՟ 'ի
„ ձեռն քոյին խնդրոյ՝ պատուականդ 'ի գլուխս եկեղեցւոյ
„ Գէորգէոս ։ Զոր և քո առեալ սերմանեսցես
„ ո՟չ զբանն սերմանօղ բանին ը՟ ամ՟ տեղիս , որք կարդան
„ զանուն տ՟ն , և կատարեն հանդիսաւոր տօնախմբութէ
„ զյիշատակ սբ՟յ վկային ։ Որովք աղաչեցին
„ մեզ խնամուն լսողաց 'ի տարբերական կրից

„ թե_

,, Թերակատար այնր պատմութ̅ե՝ յորմէ ոչ ժամանակ
,, և ոչ տեղի և ոչ Թագաւոր, և ոչ Թէ յորմէ՞ ազգէ, և
,, կամ ուստի՞ և յի՞նչ պատճառէ յայսքան եկն յառա_
,, ջադիմութիւն. մինչ զի տարևոր պատուել զնա տօնիւք
,, և ժողովովք ծանուցեալ լինի: Նաև որք հակառա_
,, կաբարն բերին յոյնք և վիրք ընդ վկայիս ա̅յ և ընդ
,, մեզ՝ առասպելականս խառն յօդեալ վ̅ս սորին բաջա_
,, ղանս, 'ի ստուգելն զիրին ճշմարտութ̅ի՝ Թէ ո՛վ ար_
,, գեօք սա իցէ, զղջացին կամ ըմբերանեցին:
,, Եւ մեզ յաղագս յայտնութ̅ե ճշմարտագունի պատ_
,, մութ̅ես փութոյ և երկոց՝ վարձ փոխարինի 'ի ձէնջ
,, և յամենեցունց այս տացի. Թողութ̅ի մեղաց 'ի յիշա_
,, տակի երանեալ վկայիս հայցել վ̅ս մեր 'ի տ̅նէ, զնոյն
,, ինքն՝ վ̅ս որոյ բանս է բարեխօս ունել ընդ մերոյ
,, փրկութ̅ե: Եւ արդ սկսցուք 'ի կարգ պատմութ̅են,
,, զոր ընկալաք գրով 'ի նախասացեալ ա̅յ ուխտէն սպա_
,, սաւորաց. որ է այսպէս:
,, Վկայութ̅ի ս̅բյն Սարգսի զօրավարի, և որդւոյ նորա Մար_
,, տիրոսի կոչեցելոյ, և այլոց զինուորաց որք ընդ նոսա վկայե_
,, ցին՝ յաւուրս ամբարշտի Թագաւորացն յունաց և պարսից՝ յու_
,, լիանոսի և շապհոյ:
,, 'Ի ժամանակս Թագաւորութ̅ե հռոմայեցւոց մեծին կոստանդիա_
,, նոսի, որ ըստ բնաւորական բարեաց կամացն, և ըստ երկնային
,, կոչմանն 'ի վերուստ, այն եւս նորընծայ կոչեալ 'ի Թագաւորս
,, զբարեպաշտութ̅ի հաստատող .... Յայնմ ժամանակի ծագէր
,, իբրև զաստղ լուսապայծառ յաշխարհին կապադովկացւոց ....
,, սարգիս ||. և որ 'ի կարգին՝ ըս̅ եղելոցս 'ի վկայաբա_
նութ̅ե անդ:

Գնէ շնորհալին և 'ի վախճան պատմութ̅ես վերստին յիշատակարան այսպիսի. * Թարգմանեցաւ ճառս յա_
,, սորւոցն 'ի մերս 'ի ձեռն միխայլի ուրումն կրօնաւոր
,, քահանայի ասորւոյ, և յարմարեցաւ ըս̅ կարի մերումս
,, լեզուիս շարագրութ̅բ 'ի ներսիսէ եպ̅սէ. 'ի Թուի՞". ոէ.
,, (այն է յամի տ̅ն. 1158): Որով մաղթեմք զընթերցողսդ՝
,, յիշել զաշխատողքս 'ի սմս յաղօթս ձեր, մանաւանդ
,, յաւուր տօնի երանելոյն. և զբանս զայս յիշատակի
,, գրել հայցեմ զկնի ճառիս ||: Եւ ո՞ չ ասիցէ յիմաս_
տուն ընթերցողաց վասն այսպիսի և այլ ա̅մ հոգելից վաստակոց երիցս երանեալ ս̅բ հայրապետիս, եթէ յա_
ւիտենական յիշատակ արդարոց օրհնութ̅բ եղիցի: Եղի_
ցի եղիցի: Թողումք և զայլ բանս շնորհալւոյն որ վ̅ս սորին ստոյգ պատմութ̅ե ս̅բյն սարգսի 'ի Թուղթս

Գ իւր

խուր առ կիւռ մանուէլ կայսր յունաց, եւն ։

(3) 'Ի դնիլ այսր ամի՝ ոչ մնայր և ոչ մնոյ մեզ այլ աշխատութի 'ի վր վկայաբանութեանս, բայց 'ի բաղդատելոյ զզանազան օրինակս շնորհալւոյն՝ որ կան 'ի հին ձեռընտիրս գրեալս ոչ բազում ամօք յետ փոխման նորին որ հայրապետի, ոյք և 'ի վախճան քաղուածոյ մեկնութե կաթողիկեայց ընծայելոյ նմին կմ գրիգորի ապիրատի, և ըօրինակելոյ 'ի թուին հայոց․ ոխէ․ 'ի հռոմկլայ։ Եւ առկայն ակնոք եղեն մեզ առ առաւել յարգելոյ զվաստակս որ հօրս մերոյ, և ևս քան զևս հանդիսացուցանելոյ առ ամ ազինս զստուգութի վկայաբանութեանս, ոչ միայն հետազօտել զհետս ստանդից այլոց ևս ազգաց, այլ և կըրկին խուզարկել և զայլ մատեանս ազգիս՝ միաբան կմ անմիաբան գտեալս յայսմ մասին որ և է օրինակաւ ։ Եւ ահա մինչդեռ 'ի վարանս էաք, թէ ուստի՞ եգեալ իցեն 'ի յայսմաւուրս պարագայք ինչ՝ որք ոչ գտանին առ շնորհալւոյն, գտաք և զաղբիւր նր․ որ եղև մեզ հին վկայաբան երկրորդ՝ թէ ոչ զուգահաւասար վկայաբանութե շնորհալւոյն, բայց և ոչ յետադասելի բազմօք․ գուցէ և հնութբ հնագոյն․ նմանօրինակ գործ թարգմանեալ յասորի լեզուէ (ոյք գուշակի յոճոյն) հարթ շարագրութբ 'ի նախնեաց անտի (գուցէ 'ի հօրէն գագկայ առաջնորդէ ստոմայ վանաց, և կմ յայլոց յառաջագունից քան զնա․) այն է գրեալն 'ի վախճան երկաթագիր օրինակի ճառից մանդակունւոյն՝ ը թարգմանութիս ճառից ինչ ոսկեբերանի, և քանի մի վարուց սբց ը հին թարգմանութե․ զոր կոչեմք ճառընտիր Ժ․ և է վերնագիր այսր վկայաբանութե այսպիսի․ * Վկայաբանութի սբյն Սարգսի նահապետին մրի, որ անուանեալ կոչի Մայր Սարգիս, որ վկայեաց առաջի իշխանաց և թագաւորաց պարսից վկայութին յմի մրի ||։ և սկիզբն է այս․ * Էր սարգիս այր լի շնորհօք, և եռայր հոգւովն սբ ||․ զոր և յառաջ բերաք 'ի կարգի վկայաբանութե մերոյ․ ուր և բազում ինչ յընթացից պատմութեն քաղեցաք, ուր ուրէք միաբանեալ ը շնորհալւոյն, և կամ կարևոր գտանիցեն 'ի բանալ զնմաստս և 'ի պայծառացուցանել զհանգամանս գործոց՝ համեմատութբ երկուց վկայաբանութեց ը միմեանս․ տալով 'ի յետադայ ծանօթութիս և առանձին տեղեկութի վր իւրաքանչիւր հատուածոյ՝ յորս միաբանին կմ ոչ միաբանին ը իրերաց ։

Իսկ առ այժմ ունիմք ասել ընդհանրապէս․ երկրորդս այս վկայաբանութի (որ և ը այլում անսութե առաջին) թէև չիցէ անկեալ ՚ի ձեռս շնորհալւոյն, ոչ լինէր անգիտելի միխայէլի ասորւոյ ը̅ ասորի բնագրին. վ̅ս ը̅ իմումս առանձնական կարծեաց (զոր թողում յետնոց ստուգել կամ ուղղագրել.) միխայէլեան օրինակն ասորի ոչ այնպէս հեռի գտանէր յայսմ օրինակէ, (և գուցէ իրօք էր նոյն,) որչափ այժմու թարգմանութ̅ի ն̅ր որպիսի և իցէ՝ յղկեալ և պայծառակերպեալ ա̅մ իրօք ՚ի շնորհալւոյն՝ հեռի կարծի յայսմանէ: Ասացի՝ թարգմանութ̅ի ն̅ր որպիսի և իցէ, ոչ ը̅ նիւթական անհմտութ̅ե հայերէն լեզուի ասեմ, (զոր ՚ի վայելուչ և յընտիր հոյակապանուն վերածեաց շնորհալին), այլ և ը̅ կարծեցեալ չափաւոր հմտութ̅են՝ զոր ունէր ՚ի վ̅ր հնութ̅եց ազգին հայոց. ը̅ որոյ երևի՝ թէ ինչ ինչ պարագայս եդեալ իցէ ը̅ իւրոց վերաբերելոց առ հայս. ապա թէ ոչ՝ ասելի է, թէ շնորհալին՝ որ խոստովանի զանձնէ լինել ոչ լոկ հարթիչ շարագրութ̅ե, այլ և կարգաւորիչ պատմութ̅ե, ոչ է կապեալ ը̅ ասորի վկայաբանութ̅ե ևեթ, այլ և յազգային աւանդութ̅եց առեալ է իրս իրս: Այլ թէ զո՛ր իրս և զո՛րքան, չէ՛ մարթ մեզ ասել, ցորչափ չունիմք ՚ի ձեռին զբուն ասորի սկըզբնագիր՝ ոչ զայսր և ոչ զայնր վկայաբանութ̅ե:

Դարձեալ լինի ինձ գուշակել, թէ շնորհալին ընկալեալ էր ուստեք, և գուցէ ՚ի գէորգեայ առաջնորդէն հաղբատու կանխաւ գքաղուած ինչ վկայաբանու̅ե ս̅բ̅յն սարգսի (հանեալ յօրինակէս հին թարգմանութ̅ե), և կա̅մ գտեալ էր ուրեք եթէ գրաւոր և եթէ անգիր պատմութ̅ի ինչ նման սմին, ո̅պ զուրկ ՚ի պարագայից ժամանակի, տեղւոյ, և անձանց. և այն է՝ զոր կոչէ թերակատար պատմութ̅ի. վ̅ս յորժամ ՚ի ձեռս եբեր զօրինակն միխայէլեան՝ պարագայիւք յարմարեալ, ուրախ եղև, և ը̅ այնմ գեղեցկայարմար յօրինեաց ինքն զբովանդակն. մինչ զի իրաւամբք կոչէ զիւր օրինակն՝ ճըշմարտագոյն պատմու̅ե և ստուգագոյն վկայաբանու̅ե. զորոյ զյարգն ճանաչեն ա̅մ իմաստուն քննիչք. ո̅պ և առաւել ևս ծանիցի ՚ի կարգի յաջորդ ծանօթութ̅եց:

(4) Մա̅ր սարգիս (կա̅մ Մայր, և կա̅մ Մաւր) կոչի ս̅բ սարգիս զօրավար յերկոսին իսկ օրինակս վկայաբանութ̅ես. որ և է մին ՚ի գլխաւոր նշանաց՝ թէ երկաքանչիւրն իսկ յասորի սկզբնագրէ են առեալ: Արդ ո̅պ ՚ի մեզ Տէր ասի եթէ հոգևոր և եթէ մարմնաւոր իշխանն, նոյնպէս էր ՚ի սկզբանէ հետէ և կոչումս Մար առ ասորիս. թէպէտև յայժմուս առաւել ընծայի ՚ի ն̅ցէ հո-

գևոր իշխանաց և կամ սրբազան անձանց։ Ըստ որում եւոդիոս ասսեման եպս ապամիոյ, Հատն. Բ. 'ի վախճան վարուց սրբյն սիմէոնի սիւնակեցւոյ՝ ուր գրի * երանելին Մար սիմէոն ||, տես 'ի ծան". ծր. երես. 412. * Մար, որ է տր ՏՍ, է անուն պատուոյ ընծայեալ յա-
,, սրբոց մինչև ցայժմ արանց նշանաւորաց կամ սրբու-
,, թե, և կմ եկեղեցական արժանապատուութե ||։ Եւ զի վանականք զկրկին նշանակս յանձին բերեն՝ սրբակրօն կարգի, և եկեղեցական կարգի, նմին իրի Մար ասի և զնչէ՝ ոչինչ ընդհատ յայնմանէ, զոր մեք կոչեմք Հայր. և քանզի անխտիր ասի Հայր՝ եթէ հոգևոր և եթէ մարմնաւոր ծնօղ, և ըստ տեղւոյն նաև վերակացու ոք՝ յոր և է կարգի, նմին իրի գտանեմք 'ի վկայաբանութես՝ զի զօրք սրբյն սարգսի ոչ միայն Մար սարգիս կոչեն զնա,
այլև Հայր պապահական։

Զայս եդեալ՝ բերեմք յերկուս այլ մակաբերութիս. առաջինն՝ որ երևի մեզ ստոյգ, 'ի հոմաձայնութէ ասել Մար կոչման սրբյն սարգսի՝ ոմանք 'ի լատին վկայագրաց, և մանաւանդ սպանիացի վկայաբանն՝ համարեցան, թէ սրբն սարգիս յետ Ծական կարգի՝ նաև 'ի միակեցական կարգ վանականութե մտեալ իցէ. ոպ տեսցես զկնի՝ ծան". (16)։ Երկրորդն՝ զոր թողումք յանստուգութէ, գուցէ և անուն որդւոյ սրբյն սարգսի՝ վերծանելի իցէ Մար տիրոս կամ Մար տիրէոս, քան թէ պարզապէս
Մարտիրոս։

Այսմ մակաբերութե օգնէ նախ այն, զի շնորհալին յայտնի վկայէ՝ թէ չէր յատուկ անուն մանկանն Մարտիրոս կամ մարտիւրոս, (որ թարգմանի վկայ,) այլ 'ի վկայելոյն՝ որ 'ի մարտիրոսանալոյն ընկալաւ զայն կոչումն. * գործովն ընկալաւ զվկայական անունն ||, ասէ. զոր յայսմաւուրքն անպատճառ յեղափոխէ ընդ հկոկն՝ ասելով. * մարտիրոս պատանին . . . կատարեցաւ 'ի քս, գործով զանունն լցեալ ||։ Երկրորդ այն՝ զի վկայէ շնորհալին 'ի թուղթն առ գէորգ, թէ 'ի տալ ասորի վանականաց զծանօթութն վս սրբյն սարգսի զօրավարի՝ առանց անուան յիշեցին զորդի նր վկայեալ ը նմա. և ինքն ըստ նմին շատ համարեցաւ ունել զայն վկայաբանութն սարգսի, և որդւոյ նր (թէև չկայցէ անունն նր)։ Երրորդ այն՝ զի նաև յերկրորդ վկայաբանութե մերում միշտ առանց անուան յիշի որդին սարգսի. մինչ զի իրաւամբք կասկածեմք՝ թէ կամ միխայէլ ասորին 'ի թարգմանութե իւրում շփոթ գրեալ իցէ զանունդ Մար [illegible], և կմ՟ շնորհալին յաւանդութեն ազգիս նայելով եղեալ իցէ [illegible]: Չորրորդ այն՝ զի որդին սբ՟յն սարգսի ող՟ ոչ էր կարի մանկահասակ, այլ պատանի տիովք և ՚ի գործ արքունի անգամ մտեալ, այնպէս ևս էր ՚ի կարգի նորընծայ զօրականութեն · և ըստ այսմ առեալ էր զառավօրականն զայն անուն զինուորութեն՝ որ առ յոյնս և հռոմայեցիս ասի տիրոն, կմ՟ տիրո · և ՚ի մեզ [illegible] կամ [illegible] · (որպէս է տեսանել ՚ի վարս սբ՟յն թէոդորոսի զինուորի ·) և ըստ այսմ ՚ի դէպ է կարծել՝ թէ տարիք կոչէին զնա [illegible] · ուստի և ՚ի հայումն կոչեցաւ [illegible], և ապա (՚ի դէպ վկայական կատարմանն՝ տուապաքար) սովորութի եղև անել [illegible] կամ [illegible]: Բայց այսու ամն՟ ճշմարիտ է և այն, զի ող՟ յազգի մերում յաճախեալ է՝ յանուն համօրէն սբ՟ վկայից և յանուն որդին սբ՟ մարտիրոսի՝ դնել յատուկ անուն մարտիրոս, նոյն սովորութի գտանիւր և առ յոյնս · ող՟ յայտ է ՚ի միոյ անուանէ՝ զոր յանուանէ տօնեմք մեք և յոյնք · զի որ գրին ՚ի մեզ անուանք սբ՟ց նոտարաց՝ մարկիանոս և մարտիրոս, յունարէն հնչին

մարգիանոս և մարդիւրիոս :

Յաւելից և այլ մակաբերութի թերևս ստուգագոյն · զի դուցէ մն՟ այսպիսի համաձայն անուանակոչութե որդւոյ սբ՟յն սարգսի մարտիրոս, յոյն և լատին վկայաբանք՝ միացուցին զորդին ընդ հօրն, գրելով միշտ այսպէս ·
* կատարեցաւ սբ՟ սարգիս մարտիրոս || · կմ՟ յիշատակ
* սբ՟յն սարգսի մարտիրոսի || · և որ նման են սոցա :

(5) Առաջին և գլխաւոր տարբերութիւն վկայաբանի շնորհալւոյն և միւս վկայաբանին յիրերաց է այս, զի շնորհալին մի առ մի գրէ զգործ սբ՟յն սարգսի առ կոստանդիանոսիւ մինչև յաւուրս յուլիանոսի՝ ըստ գրելոցս, սկսեալ ՚ի կեսարիոյ՝ մինչև ՚ի հայս և ՚ի պարս, անուամբք թագաւորաց իւրաքանչիւր տեղեաց · և որոշակի ևս՝ թէ զառաջին ստրատելատութին առեալ էր ՚ի մեծէն կոստանդիանոսէ : Իսկ միւս վկայաբանն՝ որ կարի համառօտիւ գրէ զգործս սբ՟յն նախ քան զհանդէս նահատակութեն, ըստ նմին և ոչինչ նշանակէ՝ թէ ուր և երբ զինուորեցաւ զառաջինն · այլ միայն թէ փայլէր ՚ի զինուորութե ՚ի մէջ հեթանոսաց՝ որ ոչ գիտէին զքրիստոնէութի նր՟ · և անընդմիջապէս այսպէս հիմն արկանէ զօրավարութե նր՟ և հանդիսի նահատակութե, յասելն · * Եւ էր կարգեալ ը՟ ձեռամբ զօրագլխի միոջ ·
„ և էր այր իմաստուն և հանճարեղ · և ծանօթ էր ամ՟

„ դա֊

,, դաստաւորաց և իշխանաց : Լու եղև յանկարծօրէն յականջս
,, իշխանաց և դաստաւորաց, եթէ քրիստոնէից
,, անուանէ զինքն • յայնժամ դաստաւորքն մտեալ 'ի
,, մ̃ր ն̃ր՝ զայրանային և կրճտէին զատամունս իւրեանց ,
,, և կամէին չարաչար մահուամբ սպանանել զնա : Եւ
,, համբաւ առ իշխանն , եթէ Թագաւորն տաճկաց և
,, այլ բազում զօրք եկեալ հասեալ են 'ի սահմանս ն̃ց՝
,, մտանել գերել աւերել (կա՛մ աւարել) զերկիր և զՏ̃ն •
,, և զայս լուեալ զարհուրեալ դողային իշխանքն դատաւորօքն
,, հանդերձ • և խորհեցան զայս ասելով • եկա՛յք
,, արասցուք սպարապետ , որ կոչի զօրագլուխ ,
,, զսարգիս • և գումարեցին զօր 'ի ձեռն նորա • և արձակեցին
,, զնա ընդդէմ զօրուն || : Այլ այս բանք վերածելի
են 'ի միտս ստուգագոյն բանից շնորհալւոյն • և
'ի դնել զայս՝ յետագայ պատմութիւնք երկոցունց նոյնանան :

(6) Փոխանակ երից ամսոց՝ զորս դնէ շնորհալին կարի 'ի դէպ եկեալ ժամանակի պատերազմացն յուլիանոսի և շապհոյ , միւս վկայաբանն կրկին և կրկին դրէ՝ զամս երիս • զի անսպարագայ պատմութիւն իւր տանի և զայնչափ միջոցս , թէպէտև մեզ անհաւանելիս :

(7) Քարոզութիւն սրբոյն սարգսի , և դարձ զօրուն 'ի հաւատս , միօրինակ գեղեցիկ պատմի յերկոսին վկայաբանս • և մեք՝ որ միշտ պահեմք զամբողջ շարագրութիւն շնորհալւոյն , պահմամբ նորին՝ որ զինչ այլ վայելչապէս մարթ էր յաւելուլ 'ի միւսմէն , անխտիր յաւելումք և նորին շարագրութե̃ • զի տեսցի՝ թէ զիարդ քաջ միաբանի ճշմարիտն ը̃ ճշմարտի :

(8) Այնպէս միօրինակ յերկուս և յերիս տեղիս աւանդեն երկոքին վկայաբանք զայս գործ ողորմութե̃ (մատաղ կոչեցեալ ռամկօրէն) զենմամբ կենդանեաց • զոր և մեք՝ միացուցանելով զշարադրութի և զիմաստ երկոցունց՝ նշանակեցաք յերկուս տեղիս : Յոր եթէ անաչառ հայեսցին կրկին աչօք՝ գովելիք և պարսաւելիք մատաղին , ուսանին ը̃ միջինն բերել միակ տեսութի անվրէպ • զորմէ չէ տեղւոյս երկարել զբանս • որ ոք կամի՝ տեսցէ զգրութիւս մանդակունւոյն և շնորհալւոյն վ̃ա այսր հին սովորութե̃ ազգիս : Այլ ես ընդ այն եմ զարմացեալ , թէ զիարդ երկոքին վկայաբանութիւնքս առեալք յասորւոց՝ ճոխագոյն աւանդեն զիրսդ , որք չէին հաճոյ ասորւոց՝ որպէս և յունաց • և եթէ իշխէր ոք ասել՝ թէ շնորհալին զազգային աւանդութիւս որ զսրբոյն սարգսէ ,

յաւելեալ իցէ և ը այսմ մասին ՚ի վկայաբանութեն իւրում, ոչ կարէր կալ ՚ի վր մակաբերութեւս՝ տեսանելով, զի և միւս վկայաբանն՝ որ է զուտ ասորի, և չունի այլով մասամբ բան ինչ յաւանդից հայոց, յայսմ մասին գլխովին հայկաբանէ, և առաւել քան զշնորհալին ճոխաբանէ: Փափաքելի էր մեզ, զի կամ յովսէփ սիմոն ասեման, և կամ ստեփաննոս եւոդիոս ասեման, որք զզանազան վկայաբանութիւս յառաջ բերին և հետաքըննեն որպիսի և է օրինակաւ, գէթ զմի բան ՚ի մէջ առնուին և զվկայաբանութիւս սոյն սարգսի՝ յազգէ անտի նոցա ՚ի մեզ փոխանցելոյ. այլ լռութի է առ նոսա զիրացս. վայ և մեզ չէ հարկ յառաւել մակաբերութիւնս մխիլ:

(9) Վկայաբանն երկրորդ՝ այսպէս հիմն արկանէ գերութեն և ազատութեն որդւոյ սոյն սարգսի. * Եւ եմուտ
„ շնորհ ՚ի զօրն ած ՚ի վարդապետութէ սարգսի. և աղաղակեցին զօրքն ած, և ասեն. հաւատամք յածն
„ սարգսի: Եւ գնաց սարգիս և զօրքն ած յծն տաճկաց
„ ՚ի պատերազմ հզօր. և էր պատերազմ և մարտ զերիս
„ ամս. և յաղթեաց սարգիս և խորտակեաց զթշնամիսն
„ անուամբն քնի. և յամօթ արար զչարախօսս: Իսկ
„ պաշտօնն այ և պատարագ սրբութե նր, զոր մատուցանէր սարգիս առ տր ած, խափանեցան յայն ե-
„ րիս ամս պատերազմին: Եւ իբրև խորտակեաց սար-
„ գիս զթշնամիսն, զամենս սպանին, և զամենս փախու-
„ ցին, յայնժամ ասէ սարգիս ը զօրս իւր. եկայք մա-
„ տուսցուք պատարագս առ տր ած՝ որ ետ մեզ յաղ-
„ թութի, և փրկեաց զմեզ ՚ի ձեռաց թշնամեաց մերոց
„ խաչիւն իւրով: Եւ էր սարգսի որդի մի սիրելի, որ
„ ոչ էր ընդ նմա ՚ի պատերազմին. և առաքեաց կոչեաց
„ զորդին իւր. զի նովաւ հանդերձ փառաւոր առնիցէ
„ զած: Իսկ սատանայ չարահնար գարանակալ եղև նմա
„ ՚ի ճանապարհին. և յարուցեալ ՚ի վր նր սաստիկ՝
„ գերեցին զնա: Եւ եհաս ծառայ մի սարգսի, և եբեր
„ բօթ. ասէ ցնա. կալան զորդին քո և տարան զնա.
„ և զամ գանձս մեր գերեցին: Իսկ սբն սարգիս իբրև
„ լուաւ զայս, անկաւ առաջի սրբութեցն այ. և զձեռս
„ իւր համբարձեալ (յաղօթս) || ևն. Ուր տեսանես միաբանութի ը շնորհալւոյն ը գրչագրութեն, այլ ոչ ը ամ պատահմանց. այսպէս իմն և յայլ բանս հնօրէն:

Հ. փոքր մի այլազգ հանգամանօք ընթանայ ը մէջ երկուց վկայաբանութեցս՝ յասելն սատանայ. * Իսկ սբն
„ մար-

„ Մարտիրոս որդի Սարգսի էր անդ 'ի Խորասան առ շա-
„ պուհ արքայն. և կամեցաւ Մարտիրոս գնալ առ հայրն
„ իւր հրամանաւ արքային շապհոյ՝ առ 'ի տեսանել և
„ գիտել զողջունէ զօրացն: Եւ հասեալ մերձ Տիգրիս
„ գետոյն՝ եղև գերի Մարտիրոս 'ի զօրաց թշնամեացն||:
Բայց տր̅ լինել համաձայն շնորհալւոյն ուղիղ համառօտէ
զբանն. * դարձոյց զնմ̅ զօրս իւր 'ի քրիստոնէութիւն
„ (սբ̅ն Սարգիս). և լուեալ շապուհոյ՝ առաքեաց զօր-
ս գին նր̅ կոչնական||. ևն. Սեր ծանիր և զայն. զի ոչ
գիտեմ՝ առ համառօտութն՝ արդեօք, եթէ առ ձայրտա-
րութն զանց առնէ տր̅ լինել յիշել բնաւ և զզենմունս
կենդանեաց գոնէ միանգամ. զոր ոչ զանց առնէ Հ:

(10) Վկ. շնորհ. զաղօթմն յիշելով՝ զօրութբ̅ իմանայ
և զպահս. զոր միւս վկ՛՛ բացայայտ յիշէ. և այն յերկա-
րեալ ցերիս աւուրս. իսկ Հ. հայելով արդեօք 'ի շարա-
թապահս ազգիս՝ յարմարութբ̅ իմն դրէ և վն̅ սբ̅յն Սարգ-
սի. * պնդեցաւ 'ի պահս և յաղօթս. պահեաց Ե օր ան-
ճաշ||: և չեն ինչ զարմանք, զի բազումք յառաջնոց
զեօթնեակն 'ի գլուխ հանէին առանձնական ջերմեռան-
դութբ̅:

(11) Խորհրդով պահեցաք զոճ վկ՛՛. շնորհ՛՛. նաև յայս
պարագայ, որ փոքր մի դժուարալուր գտանի. ուր միւս
վկ՛՛ չունի զայն դժուարութի: Կամիմ ասել, թէ վկ՛՛
շնորհ՛՛ առ կարի համառօտելոյ զպատմութին և զատե-
նախօսութի, սակաւ բանիւք խստագոյն թշնամանս 'ի
մէջ բերէ 'ի բերանոյ շապհոյ ը̅դէմ քս̃ի, և ը̅ նմին խըս-
տագոյն պնի դնէ 'ի բերան սբ̅յն Սարգսի. մինչև ասել՝
թէ լցեալ զբերան իւր եթուք յերեսս թագաւորին.
զոր կարծեմ լինել ոճ ասորի՝ չասացից թէ գիտ մի-
խայէլի ասորւոյ: Յայսմանէ է և յետագայ համառօտա-
գրութի բանտարկութն և կատարման սբ̅յն. մինչև կար-
ծել ընթերցողին անդանօր՝ թէ առ օրին եղեալ իցէ
նմ ինչ. բայց հայելով յորոշ պատմութի միւս վկայա-
բանին՝ պայծառ է տալ միջոց և հինգօրեայ բանտարկու-
թն. զոր յիշէ նաև Հ. և ը̅ այսմ դիւրաւ միաբանին
այլ ևս բանք երկոցունց վկայաբանից, և կարգ պատ-
մութեն պահի անըստգիւտ:

(12) Վկ. շնորհ. զատրուշան կրակին և զերկոտասան
կուռս ը̅հանրապէս յիշատակէ. իսկ միւս վկ՛՛ առանց
յիշելոյ զկրակն՝ զերկոտասան կռոց ձոխագոյն ձայնէ:
Հ. միաբանէ զերկոցունց պատմութին, որպէս արա-
րաք և մեք: Միայն թէ ուր 'ի մերում հին օրինակի

վկայաբանն զանազանէ զպատկերս ժբ կուոց՝ յերիս տեղակս չորս չորս թուով, Հ. ըստ այլ օրինակի թերևս՝ զանազանէ 'ի չորս տեղակս երեք երեք թուով: Գտնեմք սոտ զբանս. Հ. առ խմանալ՝ թէ որպէս զնոյն վկայաբանն ընդ օրինակէ դոյզն այլափոխութբ. * Պինի ետ
,, սրբն սարգիս. և ասաց. որոց ածոց հրամայէք զոհել
,, արքայ. հրոյ, թէ արևու. և թէ բժան պատկերացդ.
,, յորոց գն օձի են, և երեքն առիւծի. երեքն եզին,
,, և երեքն մարդոյ. չամաչէ՞ս զդոսա ածս ասել: Ես 'ի
,, մի ածն հաւատացեալ եմ և հաւատամ յարարողն երկնի
,, և երկրի. և 'ի բանն իւր էակից, որով արար զամ.
,, և 'ի հոգին ամենազօր՝ փառակից հօր և որդւոյ, որ
,, գոյացուցանէ և զարդարէ զեղեալս ամ||: Իսկ բուն շարագրութն վկայաբանին այն է, զոր եգաք 'ի կարգի վկայաբանութեանս 'ի պատմութն բանտին. որ և է ձև դաւանութն պահեալ 'ի վարս սրբյն Թադէոսի և սանդխտոյ, և նբ լուսաւորչին մերոյ:

(13) Անորոշ են բանքս վկ". չորհ". * ձգեալ զձեռն՝
,, մանրեաց զպատկեր կուոցն||. ուր որ իջէլ ասէ. * և
,, սրբն եհար ոտիւքն զպատկեր կուոցն, և խորտակեաց||: Իսկ Հ. * արիաբար յարձակեցաւ 'ի վր կուոցն, և լախ-
,, տով խորտակեաց զամ պատկերսն||: Այլ մեք եգաք ը միւս վկ". չղթայիւք. որպ և կարգ պատմութեանս պահանջէ:

(14) Այժմ իրօք պահեցաք ը վկ". չորհ". որպ զեղանակ կատարման սրբյն մարտիրոսի, նոյնպէս և զօրինակ գըլխատման սրբյն սարգսի, և չորեքտասան թուով զինուորացն. և այն՝ որպ և գրեալն էր, փութացուցանելով զիրսն վն մօտալուտ պտրզմին ը յուլիանոսի: Ուր Հ. թէպէտև զայլ հանդամանս բանիցս պահէ, բայց ասէ՝ թէ այս ամ եղև յետ դարձի շապհոյ 'ի պտրզմէն յուլիանոսի. որ ոք կամի՝ տեսցէ անդ: Մնայ մեզ դնել սոտ զբանս միւս վկայաբանին, որ առանց յիշելոյ ըզպտրզմ յուլիանոսի, միանգամայն և լռելով զկատարած որդւոյն սարգսի, այսպէս ստորագրէ զգլխատումն սրբյն սարգսի, և յետ նր զինուորացն անորոշ թուով. Զկնի երկար աղօթից սրբյն 'ի բանտի (կմ 'ի Ճանապարհի մինչև 'ի տեղի կատարման), * առաքեցաւ (ասէ) առ նա
,, հրեշտակ ան, և ունէր 'ի ձեռին իւրում պսակ փա-
,, ռաց, և ասէ. սարգիս զօրացիր և քաջալերեա՛. զամ՝
,, զոր ինչ խնդրեցեր՝ ետու քեզ, և զոր հայցեցեր վն
,, մարդկան՝ պարգևեցի նց. և քեզ պատրաստեալ են

,, պսակք անթառամք , ընկալ անխափան ։ Եւ ասէին
,, բազմութի̃քն ․ տեսանէ՞ք , քանզի սարգիս արհամարհեաց
,, զտանջանսն , և խորհի ը̃ երկինս ։ Եւ ասէ մի
,, ոմն 'ի ժողովրդենէն ․ կախարդիւնս իմն առնէ ։ Պ̃խի
,, ետ սարգիս ․ ով կոյրք , ես խորհիմ ընդ հրեշտակին ,
,, զոր դուք ոչ էք արժանի տեսանել ․ որ ելից զիս հոգւով
,, իմաստութ̃ իւրով ։ Եւ հայեցեալ յերկինս բազմութ̃
,, զօրացն՝ տեսանէին զհրեշտակն՝ որ ունէր պսակ
,, 'ի ձեռին իւրում ․ և որք տեսին՝ հաւատացին , աղաղակէին ,
,, և ասէին ․ արդարև իսկ մեծ է ա̃ծն սարգսի ․
,, և չիք այլ ա̃ծ՝ որ առնէ այնպիսի սքանչելիս մեծամեծս ։
,, Եւ իբրև լուան զայս կռապաշտքն , ասեն ցդատաւորն
,, (զոր այլուր նաև բռնաւոր կոչէ) ․ ո՞չ ապաքէն
,, ասացաք քեզ , թէ բա՛րձ զդա ․ և արդ եթէ ոչ
,, վաղվաղակի կորուսանէք զդա , և այժմ յարուցեալ
,, են 'ի վ̃ր զօրքս , և կորուսանեն զքեզ ․ և խորհուրդ
,, արարե̃լ անօրինացն՝ զի ը̃ այգն վաղվաղակի սպանցեն
,, զերանելին սարգիս ։ Իսկ ս̃բն գիտաց հոգւովն ս̃բվ ․
,, սկսաւ փառաւորել զհայր և զորդի և զս̃բ զհոգին ․
,, և ասէ ․ փա՛ռք քեզ ա̃ծ ․ ընդ նմին և զօրքն ասէին ։
,, Եւ հրամայեցին գլխատել զերանելին սարգիս ․ և հատին
,, զգլուխ երանելի նահատակին ք̃սի , որ օր ի̃ե
,, մարերի ամսոյ ․ որ մարտեաւ ընդդէմ սատանայի , և
,, յաղթեաց չար և բռնաւոր դատաւորացն ։ Եւ այլ
,, ևս բազում 'ի զօրականացն , որ սուր եդեալ 'ի վերայ
,, կոտորեցին ․ որք հաւատացին սարգսի տեսլեամբ հրեշտակին՝
,, որ ունէր պսակ 'ի ձեռին իւրում ․ և խոստովանեցան
,, զտ̃ր մեր յ̃ս ք̃ս զորդին ա̃յ ․ և պսակեցան
,, յարքայութե̃ն երկնից ։ Եւ ընկեցին զմարմինս
,, ս̃ցն արտաքոյ քաղաքին ․ և հրաման տուեալ անօրինացն ,
,, զի մի՛ ոք 'ի քրիստոնէից մերձեսցի 'ի մարմինս
,, ն̃ց զերիս տիւ և զերիս գիշերս ․ և կամէին՝ զի թռչունք
,, երկնից և գազանք երկրի կերիցեն զմարմինս
,, նոցա ․ և ոչինչ 'ի կենդանեաց մերձեցաւ 'ի մարմինս
,, ն̃ց ։ Եւ ապա յետ երից աւուրն առեալ տարան յաշխարհն
,, հռոմոց ․ արարին տապանակ արկղագործ ․ և
,, եդին 'ի տեղի պատուականի ||։

Եւ անընդմիջապէս 'ի վ̃ր բերի անորոշ յիշատակարանս ․
* (Այս է) նահատակութ̃ի երանելւոյն սարգսի , որ
,, նահատակեցաւ , և սատանայի յաղթեաց (որպէս և 'ի
,, պատմութե̃ն յերկար Ճառի զմրցանաց նորա ընդդէմ
,, դիւ̃ին) , փառաւորելով զամենաս̃բ զերրորդութիւնն

,, յա

,, յաւիտեանս ամէն ։ Աղաչեմ զձեզ • որք կատարէք զօր
,, նահատակութ̄ն սր̄յն սարգսի, մեղաց իմոց թողութ̄ն
,, հայցեցէք ՚ի ձեռն երանելւոյն • զի գտայց ողորմութ̄ն
,, բարեխօսութ̄ք սր̄յն սարգսի • և փառաւորեցից զամե_
,, նասր̄ զերրորդութիւնն յաւիտեանս յաւիտենից •
,, ամէն || ։

Յայսմ տեղի իմանաս՝ թէ որպէս վկայաբանս այս յա̄մի ունի զնմանունի և զաննմանունի միանգամայն ը̄ վկայաբանի շնորհալւոյն • մինչ զի ոչ է թէ տկարացուցանէ վկայութիւն միոյն զմիւսն, այլ ևս քան զևս հաստատէ ։ Եւ երկոցունց միօրինակ հաստատիչ և քարոզիչ է շնորհալեաց շարական շնորհալւոյն ՚ի վր̄ սր̄յն սարգսի ։ Որ և կրկին ևս հաստատի գործնական վկայութ̄ն ազգիս համօրէն ՚ի կարգալ զսբ̄ն սարգիս յա̄մ նեղութ̄ս հոգւոյ և մարմնոյ իբրև երագահաս վկայ նշանագործ ։ Իսկ թէ և ՚ի պարսիկս քարոզեալ էր զօրութ̄ն սր̄յն սարգսի, քաջ ցուցանէ պատմութ̄ն անցից խոսրովու պարսից արքայի • որ̄ յիշատակեցաւ ՚ի կարգի պատմութ̄ն հայոց • այլ մեք դիցուք այժմ ՚ի վկայութ̄ն իրացդ զբուն բանս ՚ի պատմագրութ̄է անտի յունաց ։

(15) Թէոփիլակտոս սիմոկատտա երևելի պատմագիր յեօթներորդ դարու • Գիրք • Ե • Գլ • 1 • Երես • 219 • գրէ իբրև ժամանակակից սյ̄ խոսրովու երկրորդի պարսից արքայի առ մօրիկ կայսերաւ, թէ յորժամ նեղեալ կայր յերեսաց վարհամայ ապստամբին, * միւսանգամ առ
,, ա̄ծն ամենեցուն զմիտս ուղղեաց, և աղաչեաց խնդր_
,, ուածովք զմշտապատիւն (յն • այինդիմոն) ՚ի վկայս
,, զսարգիս, զոր սովոր էին պաշտել և ազգք խաշնարա_
,, ծաց (յն • նօմատիքա՝), հասանել ՚ի կարիս տառապա_
,, նաց իւրոց • և ուխտեաց նուիրել նմա զնշան տրու_
,, նեան խաչին՝ յոսկւոյ զօդ, մարգարտայեօք և ակա_
,, նակապ զարդարեալ ՚ի պատուական քարանց հնդկաց՝
,, ՚ի նշանակ նախընծայ յաղթութ̄ • զի տագնապ առա_
,, ջիկայ վտանգին հարկեցոյց զնա ջերմ աղօթիւք ՚ի պա_
,, ղատանս բերել || ։

Արդ ՚ի Գլ • 13 • Երես • 231 • պատմէ, թէ յետ յաղթելոյ ապստամբին՝ նիզակակցութ̄բ յունաց՝ իբրև հաստատեցաւ անդրէն ՚ի թ̄րութ̄ն իւրում, ՚ի միտ էառ զօգնականութիւնն՝ որ եղև նմա ՚ի վերուստ • և յիշեալ զուխտ իւր՝ զոր արար, նուիրեաց սարգսի երևելւոյն ՚ի վկայս զխաչն ոսկի ականակապ յօրինուածով, զայն՝ զոր առաջինն խոսրով որդի կաւատայ յանուն զքաղաքին կո_

կոչեցեալ 'ի յունաց սարգաւուպօլիս՝ (յանուն որ և է սրբոյն սարգսի), գտեալ էր յաւարի, և եդեալ էր յարքունիս պարսից՝ յաւուրս յուստինիանոսի կայսեր։ 'Ի գլուխ այսր խաչի եւ կազմել խոսրովս այս երկրորդ և այլ խաչ յոսկւոյ սրբոյ, յորում եւ քանդակել զյիշատակ նուիրաց իւրոց։ Եւ գրել և թուղթ յունարէն՝ հանդերձ ստորագրութբ̃ իւրով. և յղեաց ը̃ պատուական ընծայսն 'ի տեղին կոչեցեալ բարբարիկոն։ Եւ էր պատճէն գրոյն այսպիսի. * Զայս խաչ ես խոսրով արքայ
,, արքայից որդի որմզդի (ուխտեցի). 'ի ժամանակին՝
,, յորում հարկ եղև մեզ դիմել 'ի հռոմս յերեսաց սա_
,, տանայական հնարից և չարագրգիռ գործոց ապերա_
,, խին վարհամայ որդւոյ վարդուշնայ, և հեծելոց որ
,, ընդ նմա. և զի գայր անօրէն զադէսպրաս (կմ̃ զա_
,, տէսվլաւմ) 'ի զօրաց անտի մծբնայ, ոպ̃ զի գրգռե_
,, ցէ զայրուձին մծբնայ ընդդէմ կալ մեզ և նեղել,
,, մեք ևս արձակեցաք զայրուձին հանդերձ զօրավարաւ
,, 'ի քարքաչ։ Եւ ապաւինեալ 'ի ձեռնտուութիւն մեծա_
,, պատիւ և մեծանուն սրբոյն սարգսի, զորմէ կանխաւ
,, ևս լուեալ էր մեր լինել ընդունօղ հայցուածոց և
,, կատարիչ խնդրուածոց, յամի առաջնում թագաւո_
,, րութեան մերոյ՝ յաւուրն եօթներորդի ամսեանն յուն_
,, վարի ուխտ եդաք, զի թէ այրուձին մեր սպանցէ
,, զզադէսպրաս կմ̃ ձերբակալ արասցէ, խաչ ոսկի ա_
,, կանակուռ 'ի տաճար նր̃ առաքեսցուք 'ի պատիւ մե_
,, ծապատիւ անուան նր̃։ Եւ ահա յաւուր իններորդի
,, փետրվար ամսոյ զգլուխն զադէսպրատայ բերին առ
,, մեզ. սմին իրի 'ի լրումն ուխտիս մերոյ՝ առ յայտնի
,, լինելոյ իրացս առ ամենեսին, տուաք կազմել խաչ
,, 'ի մեծապատիւ (յն. է միշտ բանսէբգօն, ք̃ ամենա_
,, պաշտելի) անուան նր̃. և հանդերձ խաչիւն՝ զոր յուս_
,, տինիանոս արքայ հոռոմոց յղեալ էր 'ի տաճար նո_
,, րին, և 'ի լինել խռովութեանց և պատերազմաց 'ի մէջ
,, երկուց թագաւորութեանց՝ 'ի խոսրովայ յարքայից ար_
,, քայէ յորդւոյ կաւատայ բերեալ էր այսր, զոր և
,, մեք գտաք 'ի գանձս մեր, առաքեցաք 'ի տաճար ա_
,, մենապատիւն սարգսի||։

Եւ դարձեալ 'ի յաջորդ. գլ. 14. երես. 232. յաւելու գրել թէոփիլակտոս այսպէս. * Իսկ յերրորդ ամի (թա_
,, գաւորութեան իւրոյ՝ խոսրով) հայցեաց խնդրուածովք
,, 'ի սարգսէ ամենազօր (յն. տուսադիգօդադօն) վկայէն՝
,, որ 'ի պարսս, տալ նիքեան որդի 'ի շիրայէ (քրիստո_
,, նեայ

„ նեայ կնոջէ իւրմէ). և յետ ոչ բազմաց հասեալ իւ-
„ րումն խնդրոյ՝ մեծարեաց զնա արժանաւոր պատ-
„ րագօք, գրելով և նամակ յունարէն. որ ունէր օրի-
„ նակ զայս. Մեծի վկային սարգսի՝ խոսրով արքայ
„ արքայից : Ես խոսրով շահնշահ՝ զայսոսիկ ընծայս
„ նուիրեցի ||, և որ 'ի կարգին. ուր ձախաբար պատմէ զազգի ազգի երախտիս՝ զոր ընկալեալ էր 'ի սբ̃յն ինքն և կինն իւր. և անուանէ զնա կրկին և կրկին՝ տուիչ կամ կատարիչ խնդրուածոց. որ ոք կամի՝ ընթերցցի զընդարձակ զայն թուղթ առ թէոփիլակտոսի : Ընթերցցի նմանապէս և զնոյն պատմութիւն նմանօրինակ աւանդեալս 'ի միւս ևս ժամակից վկայէ, այն է եւագրիոս : ուր 'ի Զ. գիր. գլ. 21. յառաջ բերին երկոքին թուղթք խոսրովու, և սբ̃ն սարգիս կոչի քաջայաղթ վկայ. (յն. αθλοφόρου μάρτυς, այ̃ յաղթողազգեաց մարտիրոս):

(16) Մնայ ասել և զաւանդութ̃է արևմտեայց, մանաւանդ սպանիացւոց : Բոլլանդեանն հենսքենիոս գոգեփրիտ՝ գործակից և անմիջական յաջորդ յաշխատութիւն մեծին յովհաննու բոլլանդայ, 'ի Գ. հատ. փետր. որ և ին̃ փետրվարի, եդեալ վերնագիր՝ յերե. 461. * Յա-
„ ղագս սբ̃յն սարգսի մարտիրոսի՝ 'ի կեսարիա կապա-
„ դովկացւոց ||, նախ յա̃ջ բերէ զերկոսող բանս՝ (հանգոյն եդելոցս 'ի վախճան վկայաբանութե̃ մերոյ) 'ի տպագիր և 'ի ձեռագիր օրինակաց բեդայի, ուսուարդայ, ադոնի, բելլինի, մաւրոլիկոյ, և հռովմէական վկայագրի ը̃ր բարոնիոսի կի̃ հռոսուէդայ. և նշանակէ բանիւ գալեսինոսի, թէ * 'ի յայսմաւուրս (լատինաց-
„ ւոց) գրեալ կայ՝ թէ կան ն̃ր (այ̃ սբ̃յն սարգսի կե-
„ սարացւոյն կի̃ կապադովկացւոյ) գործք պայծառա-
„ փայլ. բայց սակայն մինչև ցայժմ ինչ ոչ ել յերևան || : Ապա գտնէ հենսքենիոս զբանս տամայոսի սալազարի՝ որ 'ի սպանիական յայսմաւուրս խօսի այսպէս. * 'Ի
„ կեսարիա կապադովկացւոց կատարումն սբ̃յն սարգ-
„ սի միայնակեցի և մարտիրոսի. որոյ ս̃բ նշխարքն բե-
„ րեալք 'ի սպանիա՝ պատուով ամփոփին 'ի կաթաղո-
„ նիա առ բետուղոնն լալետանիոյ... (և յաւելու ա-
„ սել սա 'ի ծանօթութիւս, թէ) 'ի հետաքննել զգծուա-
„ րին վկայաբանութիւն՝ զա̃մ կնճռուն գործոյն բարեյար-
„ մարեալ է իմ... իսկ զվկայաբանութիւն գտի 'ի կա-
„ րի հնագոյն մատենի գոթացի գրչութե̃, որ 'ի տա-
„ ռեաեան վանս՝ ռեառն սիւն կոչեցեալ՝ կարգի կէս-
„ տեր-

,, տերանց պահիւր ||: Եւ յարէ հենոքենիոս. * Ահա
,, և մեք զայս վկայաբանութիւն 'ի տաւմայոսէ 'ի լոյս ա_
,, ծեալ՝ ունիմք առաջի դնել. Թէպէտև երևի գրեալ
,, յանհմուտ առնէ: Զեղանակ վախճանի (սբյն սարգ_
,, սի) ոչ յուշ առնէին լատին յայսմաւուրք. զոր այս
,, վկայաբանութիւն մեկին ուսուցանէ՝ թէ եղև գլխատ_
,, մամբ. որով և հաստատէ զգատումն մեր, որով նշա_
,, նակեցաք 'ի Ե. յունվարի, թէ սարգիսս այս երևի
,, այն՝ զոր յոյնք 'ի ժամագիրս և առ կիւթեայ հուշա_
,, կեն 'ի նմին աւուր, և առեն՝ թէ գլխատմամբ կատա_
,, րեցաւ ||:

Ուր եթէ ունէր հենոքենիոս դէթ գուզնաքեայ տեղեկութիւն զյայսմաւուրաց և զվկայաբանութեց հայոց, ոչ միայն հաստատէր ըստ իրօք զգատումն իւր, այլև չկարօտէր այնուհետև անհաստատ վկայաբանութե տաւմայոսի, և ոչ տատանէր 'ի զանազան միտս, հայելով 'ի պէսպէս կարծիս լատին հեղինակաց՝ որք առհասարակ միամիտ գտանին յայսմ մասին. մինչև խրատամբք յերկբայս լինել հենոքենեայ, թէ ո՞ ոք իցէ սբ սարգիսս այս. արգեօք այն՝ որոյ նշխարք ասին բերեալ 'ի կեսարիոյ 'ի սպանիա, եթէ այլ ոք սբ սարգիս նահատակակից սբյն անաստասիոսի զինաւորի լեպրացւոյ հանդերձ հգ ընկերօք. կամ թէ եղբայրն սբյն եւգինեայ կուսի (զի եղբարք նորա կոչին սարգիս և աւիդաս, կամ որ նոյն է՝ սերգիոս և ապիտոս). եթէ այլ ոք սարգիս վկայ յիշատակեալ յոմանց յամի տն 400. յաւուրս արկադեայ և ոնորիոսի կայսերաց. և կամ այլ ոք անորոշակի յիշատակեալ 'ի գրիգորէ տուրոնեցւոյ. որոց ամի լուծումն է խնդրելի 'ի վկայաբանութեց հայոց:

Արդ թողեալ զակամայ և զտարապարտ յուզմունս անդէտ եղելոց ճշմարիտ պատմութեան, քաղեսցուք զնախանշանակեալ վկայաբանութն տաւմայոսի սպանիացւոյ. որով առաւել ծանիցի յարգ ճշմարտութե: * Յամի քսա_
,, ներորդի ինքնակալութե դիոկղետիանոսի և մաքսի_
,, միանոսի (ասէ վկայաբանն սպանիական), և յերկ_
,, րորդ հալածանութե նց (իմա յամի տն. 303, կամ
304. թէպէտև հալածանութիւն եօթներորդ պիտէր)
,, առաքեցան Ը. ըմ տիեզերս հրովարտակք ամպարշ_
,, տութե նց ընդդէմ քրիստոնէից .... և զի առաւել
,, յարևելեան կողմանս զօրանայր դառնութի հալածա_
,, նաց, Ը. ըմ գաւառս երկաքանչիւր ասիոյ՝ որ միան_
,, գամ քրիստոնեայ գտան, աղգի աղգի տանջանօք և
,, սրով

,, որով կատարեցան ։ ՚Ի հրաժարիլ մաքսիմիանոսի և
,, դիոկղետիանոսի ՚ի կայսերութենէ . . . փոքր մի անդորրութիւն
,, լինէր եկեղեցւոյ ։ Իսկ չարբիկիոս ոմն . . .
,, դատաւոր կարգեցաւ Տին հայոց և կապադովկացւոց
,, ։ Եւ Ճնապարհ արարեալ չարբիկիոսի դատաւորի
,, ՚ի հայս՝ յանցանելն ը կապադովկիա եկն ՚ի կեսարիա
,, . . . և զդորոթէա կոյսն , և զբարլաամ , և
,, զայլս ՚ի սուղ ժամանակի ծախեաց անագորոյն գազանութեն
,, դատաւորին . . . . և աճէր օր ը օրէ ժողովհաւատացելոց
,, , և բազմանային առ նյ պսակք արդարոց
,, ։ Եւ հանդիպէր յայն աւուրս տարեկան զոհ
,, պղծոյն դիոսի (կամ արամազդայ) . . . . և ՚ի կատարել
,, զայն հեթանոսաց , միայնակեաց ոմն սարգիս անուն
,, , ՚ի քնական հաւատս կրթեալ յիւրոց ծնողաց ,
,, և քնի ն հաւատարիմ ծառայ արդէն եղեալ , որ յառաջագոյն
,, աշխարհական պաշտօնատարութեամբ ծառայեալ
,, իսկ էր իշխանաց Տի , այլ խիթացեալ ՚ի մրրկաց
,, անս Տի , և զմդկային փառաց հնչմունս արհամարհելով՝
,, թողեալ զամ ինչ , և բաշխեալ աղքատաց , մենացեալ
,, էր ՚ի բացական խուղ մի լերին ․ ուր մերկ
,, զք մերկ խնդրէր ․ և տոճեալ զանձն պահոց և աղօթից
,, և խարազնազգեցութեան՝ խիստ վերարկուաւ
,, ծածկեալ՝ այսու օրինակաւ գուն գործէր զք շահել
,, ։ Սա ակնարկութեն նյ ՚ի քաղաք եկեալ , և յամբոխ
,, անօրինացն մտեալ՝ նայէր ընդ սնոտի հանդերձանս
,, զոհից ․ և ՚ի պահուն՝ յորում պիղծ քուրմն կռոց
,, մոգական բանիւք վ իւրոցն աղէրս առնէր ,
,, սարգիս ՚ի սրտի իւրում սկսաւ աղաչել զած՝ զի զսքանչելեաց
,, իւրոց ցուցցէ անհաւատից զմեծութին ,
,, մինչև ունայնացուցանել զարարուածս քրմին անօրէնութե
,, ․ և եղև այնպէս ․ զի այնուհետև թշուառական
,, պաշտօնեայն կռոց ոչինչ պինի մարթացաւ առնուլ
,, ՚ի կռոց անտի ․ վյ զայրացեալ զոհանուէքն՝ ըսկսաւ
,, պէսպէս մեքենայս սուտս յօդել ․ որով յայտ
,, առնէր՝ թէ բորբոքեալ է ցասումն դից վ թոյլտուութե
,, քրիստոնեայ անուանն ։ Յայնժամ ՚ի նախանձ
,, հաւատոց վառեալ սարգսի՝ եկաց ՚ի մէջ բազմութե ,
,, և աղաղակեաց մեծաձայն ․ զի՞ է քեզ պիղծ զոհագործիդ
,, զդից քոց զցասումն պատճառել սուտդ , ուր
,, տրն իմ յս քս՝ որ զլեզուս իմաստնոց յաջողակ գործէ
,, , վ փառաց անուան իւրոյ գիտէ ՚ի ժամուն կարկել
,, զբերանս դիւաց . . . . Յայնմ վայրի յիմարեցաւ
,, զը֊

,, զոհագործն, և արկեալ ձեռս 'ի սարգիս՝ ժողով արար
,, ամբոխին եկելոյ 'ի զոհն · որոց կալեալ զսր̃ միանակեացն՝
,, չարաչար քարշելով ածին առաջի դատաւորին
,, : Իսկ նր̃ լռեալ զբանս քրմաց՝ դարձաւ առ սարգիս,
,, և ասէ · ո՞վ ես դու, որ զա̃ծն մեր դեւս կոչես,
,, և զինքնակալս մեր պաշտօնեայս անուանես դիւաց
,, : Ասէ ցնա սարգիս · ես ծառայ եմ տն̃ իմոյ յս̃ի
,, քս̃ի, որ զօրութ̃ և կուռք քո իբրև ոչինչ առաջի իմ,
,, և դրօշեալք ինքնակալացդ պատկերք, թէպէտև բերանս
,, ունիցին, ոչ խօսեսցին : Դատաւորն ասէ · ա̃մ քրիստոնեայքդ
,, այդպիսի մոգական արհեստիւք պարծիք ·
,, այլ ոչ երբէք 'ի մահուանէ ապրեցուցանէ զձեզ ա̃ծն
,, ձեր : Պխի եւ մարտիրոսն (կմ̃ վկայն) · կայ մնայ
,, մարդկան միանգամ մեռանել · այլ վայ ձեզ, որ 'ի կենաց
,, աստի զրկեալ՝ յաւիտենականն, եթէ ոչ հաւատայք
,, 'ի քս̃ ա̃ծ իմ, ընդունիջիք զմահ · մեք զժամանակեանն
,, ը̃ սահմանելոյ ընդունիմք, այլ յետ այնորիկ
,, կեանք մեզ մնայ փառաւոր : Ժպտեցաւ շապրիկիոս,
,, և զկնի ասէ · արդարև անմտութ̃բ դանդաչես
,, · երդուեալ 'ի գլուխ ա̃մ, եթէ ոչ զոհեսցես, ոչ
,, յամեցուցից 'ի քէն զդատակնիք գլխապարտութեան,
,, այլ փութանակի կարճեցից զկեանս քո սրով, զի ըղփորձ
,, առնուցուս առ 'ի քէնդ յօդեալ փառաւորին
,, (կենաց) : Պխի եւ սարգիս, և ասէ · ես շնորհ ունիմ
,, տն̃ իմոյ յս̃ի քս̃ի, որ արժանի համարեցաւ աղատել
,, զիս զմեղաւորս 'ի յոլով աղտից և յիշխանութէ
,, դիւաց, զի մի ևս մոլորեցայց · և վ̃նկ զոր և կամիս
,, տանջանս ածել յիմ վր̃, պատրաստ եմ · զի կուռս ոչ
,, զոհեմ : Յայնժամ եհատ ը̃դէմ նորա վճիռ՝ ասելով ·
,, Զսարգիս անհնազանդ ա̃ծոց, և տ̃րանց մերոց ինքնակալաց
,, հայհոյիչ, սրով գլխատել վճռեցաք, և զա̃մ
,, գոյս նր̃ յարքունիս գրաւել : Իսկ զոյգ ընդ բանիցս՝
,, յափշտակեցին դահիճք զսարգիս, և հատեալ զգլուխն՝
,, թողին անդ զմարմինն · զոր գիշերայն բարձեալ քրիստոնէից՝
,, թաղեցին 'ի տան պարկեշտ տիկնոջ ուրումն ·
,, և եղև կատարումն նր̃ 'ի է̃ · կաղանդաց մարտի (այն
,, է 24 · փետրվարի) : Յետ անցանելոյ ժամանակաց՝
,, նշխարք սր̃ միայնակեցին փոխադրեցան 'ի սպանիա ·
,, և առ քաղաքին բետուլոնիայ (կմ̃ պէդուլոնի) թաղեալ
,, պատուով ամփոփեցան · թէպէտև յաւուր յայսմիկ
,, դիր հանգստեան նր̃ իսպառ անգիտացեալ է || :

Արդ եթէ կամք լիցին ումեք ասել աստանօր՝ թէ այս վկայաբանութեան թուի լինել այլոյ ուրումն սբ̃ սարգսի. չէ մեզ փոյթ. բայց ստուգագոյն երևի ասել, թէ նոյն սա է սբ̃ սարգիս զօրավար 'ի կեսարիոյ կապադովկացւոց, (ոպ̃ և քաղի 'ի պատմութ̃էս,) այլ հեւաւորք առ չունելոյ ստոյգ տեղեկութեան զնմ̃է՝ զհրաժարեալն 'ի պատուոյն և զկոչեցեալն մար սարգիս, համարեցան միայնակեաց լինել. և զշապուհ թագաւոր պարսից չփոթելով ը̃ շապրիկխոսի դատաւորի, որպէս և զմարտիրոս որդի սբ̃յն սարգսի ընդ նմին սբ̃ վկայի, այսպիսի ընդհանուր վկայաբանութեան յօրինեցին. թող զփոխադրութիւն նշխարացն, որ կարէր ըստ իրաց ինչ ստոյգ լինել. բայց մնացեալ է յանստուգութե:

Դարձեալ ասեմք. ոչ այլ ումեք 'ի դէպ գայ ասացեալն միաբան 'ի լատին վկայաբանից, թէ սբ̃յն սարգսի կամ̃ պատմին բզ̃մ սքանչելի գործք, բայց միայն մերումս սբ̃յ հռչակելոյ քան զայլ անուանակիցս իւր: Որպէս առաւել 'ի նա մարթին հայիլ բանք սբ̃յն գրիգորի տուրոնեցւոյ առ բոլանդեանս, թէ * Նաև սարգիս վըկայն բազմապատիկ նշանս առնէ 'ի ժողովուրդս, ,, բժշկելով զհիւանդս, և փարատելով զցաւս այնոցիկ՝ ,, որք հաւատով կարդան առ նա ||: Գրէ և ևս նա ինքն տուրոնեցին 'Ի պատմ. ֆռանկաց. գիրք. է̃. գլ. 31. եր. 355. 'ի վեցերորդ դարու, թէ * Էր յայնմ ժամանակի

,, գունդովալդոս 'ի քաղաքն բուրդեգալայ՝ յոյժ սիրե-
,, ցեալ 'ի բերտրաքմնոսէ եպ̃սէ. 'ի խնդրելն՝ թէ ո՞ր
,, պատճառք կարեն տալ նմա սփոփանս, պատմեաց նմ̃,
,, թէ թագաւոր ոք 'ի կողմանս արևելից բարձեալ զսբ̃յ
,, վկային սարգսի զբոյթն՝ կախեաց յաջոյ բազուկ մարմ-
,, նոյ իւրոյ. և 'ի լինել հարկի վանելոյ զթշնամիս, յայս
,, օգնականութե վստահացեալ, այն ինչ վերացոյց ըզ-
,, բազուկ իւր աջոյ, նոյն ժամայն բազմութիւն թշնա-
,, մեաց՝ ոպ̃ վկային զօրութ̃ նկուն եղեալ՝ 'ի փախուստ
,, աճապարէր: Զայս իբրև լուաւ գունդովալտոս, ըս-
,, կսաւ մեծաւ խնամով հետազօտել, թէ ո՞ կայցէ 'ի
,, տեղւոջն յայնմիկ, որոյ արժանացեալ իցէ առնուլ
,, զնշխարս սբ̃յն սարգսի մարտիրոսի: Յայնմ վայրի
,, մատնեաց եպ̃սն բերտրաքմնոս զեւփրոն վաճառա-
,, կանն... սա է ասէ ասորի՝ եւփրոն անուն, որ ըզ-
,, տուն իւր եկեղեցի չինեալ՝ զարբին սբ̃յ նշխարս ամ-
,, փոփեաց. և բազում նշանս ետես նոքիմբք յօգնակա-
,, կանութէ զօրութե վկային. զի 'ի ժամանակին՝ յո-
,, րում 'ի քաղաքն բուրդեգալայ անկաւ հրդեհ մեծ,

„ տունս այս շրջապատեալ 'ի բոցոյ՝ մնաց անկիզելի ։ „ Զայս իբրև տեսաց նա, վաղվաղակի մումմոլոս արագ „ ընթացեալ գնաց ընդ եպսին բերտրամնոսի 'ի տուն „ ասորւոյն • և պաշարեալ զմարդն՝ պատուիրեաց ցու„ցանել ինքեան զայն սրբ նշխարս ||: Ապա յերկար գրէ, թէ առին 'ի նմանէ բռնութբ ոսկր մի փոքրիկ, որ բաժանեցաւ յերիս • և զմի մասն էառ մումմոլոս ։ Արդ՝ թէպէտև անխտիր մարթի պատշաճիլ այս պատմութն այսմ և այնմ 'ի սբց սարգիս անուանելոց, ըստ որում յասորիս գտանէին նշխարք երկոցունց եւս, բայց բացարձակ անունս սարգիս՝ առանց անուան բագոսի, և յիշատակ արևելեան թագաւորին (ուր իմանամք ըզխոսրով արքայ պարսից), առաւել զզօրավարն սարգիս յայտ առնեն։ Եթէ կամ իցէ ումեք ասել, մասն ինչ պատմութն առ մին հայի, և մասն ինչ առ միւսն ։

'Ի վախճանի ծանիր, զի բաց ի նախագրեալ երկուց մեծանուն սբց սարգիս անուանելոց՝ յիշատակի յոմանց անորոշ պատմութբ և սարգիս ոմն նահատակեալ յայլազգեաց 'ի հինգերորդ դարու առ արկադեաւ կամ որդւովն նր թէոդոսիւ փոքու • զոր մատթէոս ուռհայեցի շփոթէ ը մեծին սարգսի՝ 'ի խօսելն 'ի բերանոյ գագկայ հայոց արքայի առաջի տուկին կայսեր յունաց, գըրելով վն տօնի սբյն սարգսի 'ի կատարման առաջաւորաց պահոց՝ այսպէս • * Բայց 'ի տօնի յաւուրն զըստ„րատելատն զսբն սարգիս յիշատակեմք և ճշմարիտ մար„տիրոսն, որ վկայեցաւ որդւովն հազարու յհն բագ„րևանդի յորդւոյ մահմէտի 'ի յաւուրս թէոդոսի թա„գաւորի • և ոչ ասի սա իշխանն սարգիս ծնուրացն „ այն՝ որ շանն տայր երկիր պագանել • իսկ մեք քրիստո„նեայքս զսբն սարգիս զճշմարիտ մարտիրոսն յիշատա„կեմք ||: Ուր կայ յայտնի շփոթութն խառն յաւանդից հայոց և յունաց • զի կամ վն յիշելոյ տաճկաց 'ի վարս մեծին սարգսի՝ կարծեալ է ուռհայեցին, թէ մահմետական էին նք, (ուր և յառաջ գոյր ազգ տաճկաց այլազգեաց •) և կմ իմանոյ զաւուրս թէոդոսի երրորդի՝ որ նստաւ յաւուրս սբյն գերմանոսի յամի 714 • յետ ելից մահմետականաց • ապա եթէ բանն է զայլմէ վկայէ՝ զոր համարին ոմանք լինել առ արկադեաւ և ոնորիոսիւ, վրիպակաւ մուծեալ են այն բառք * որդւոցն հազարու ||, եւս առաւել * յորդւոյ մահմետի ||• զի յայն ժամանակս չև էր ելեալ ամիրապետն ։

ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Սր՟ց Ատոմեանց՝ առաջնոց, և վերջնոց։ (1)

Առաջին ատոմեանք զօրավարք։

Հ. օգոստ. 19։ Դարըն. Ի. ԸԷ։ (2)

'Ի ԺԱՄԱՆԱԿՍ ՅԱԶկերտի կրակապաշտ արքային պարսից (3), մինչդեռ ծաղկէր հաւատ քրիստոնէից ը՟ ամենայն երկիր, յարեաւ հալածումն մեծ 'ի վ՟ր արևելեայց, այլ առաւել ևս 'ի վ՟ր ազգին Հայոց։ Զի 'ի յաճախել հաւատացելոց յե՟րին պարսից՝ գործակցութ՟ այլոց քրիստոնէից եղելոց ը՟ տ՟րութ՟ նց, և 'ի պաշտել յայտնի զսբ՟ հաւատս, խորհուրդ 'ի մէջ առեալ մոգպետացն և մոգուցն՝ խորհրդակից ունելով զբանսարկուն զվարդապետն չարեաց, մատեան միաբան առ թագաւորն, և ասեն. գիտութ՟ի լիցի տ՟րուեդ քում, զի դենիմազդէնդ կործանեցաւ, և դիցախառն նախնեաց ձերոց պաշտամունքն բարձան. զի ամենեքեան 'ի քրիստոնէութ՟ի խոտորեցան. և եթէ ոչ հրով և սրով և փայտիւ հրամայես կորուսանել զանուանեալ քրիստոնեայսն, մանաւանդ որք յե՟ն Հայոց այդր հասեալ են ազատք և ռամիկ հեծեալք, որք առաւել թշնամի են պաշ-

տա

տաման կրակի և մոգուէ, ոչ ևս զօրացեալ
եղիցին պաշտամունք ածոցն ։

Յայնժամ թագաւորն փութանակի հրամայեաց հրովարտակ առնել ը՟ ամ՟ կողմանս իւրոյ տ՟րուէն, եթէ մի ոք իշխեսցէ անուանել զանձն քրիստոնեայ ․ ապա թէ ոչ՝ սրով և հրով և փայտիւ դատեսցի (4) ․ իսկ որք կատարեն ասէ զմ՟ր հրամանս, և մեծարեն զկրակ և զմոգութի՟, բարձի և պատուի և մեծի իշխանուէ արժանի գտցին ։ Այնուհետև լինէր հալածումն մեծ քրիստոնէից ․ զի տանջէին անհնարին տանջանօք, և սպանանէին պէսպէս մահուամբք ․ այլ քաջքն պսակէին՝ առ ոչինչ համարելով զտանջանս և զմահ ․ և ասէին ըս՟ սբ՟յն պօղոսի, եթէ ոչ մահ և ոչ նեղութիւնք ոչ կարեն մեկնել զմեզ 'ի սիրոյն ք՟սի ․ զի անցաւոր մահուամբս և չարչարանօքս զանանց և զանճառ բարիսն ժառանգեսցուք ։ Իսկ վատասիրտք և տկարք՝ էր որ առ երկիւղի ժամանակեան մահուան, և էր որ 'ի սէր աղցաւոր կենացս թուլացեալ՝ խոնարհէին 'ի կամս
թագաւորին 'ի կորուստ անձանց ։

Եւ քանզի ազատագունդն հայոց՝ որք կային յարքունի պատերազմունս հրամանաւ յազկերտի ը՟ զօրավարուբ՟ երկուց քաջ նախարարաց, Ատոմայ գնունւոյ և Մանաճհրի ռշտունւոյ, տակաւին համարձակ պաշտէին զքրիստոնէուէ՟ 'ի բանակի, խորհեցաւ թագաւորն հնարիւք կոչել զնոսա առ ինքն, և հրապուրել 'ի պաշտօն արեգական և կրակի ․

կի • վասն որոյ արձակեաց առ նոսա զոմն 'ի նախարարաց իւրոց բանիւք խաղաղութեան և սիրոյ՝ գրելով հրովարտակ այսպիսի • Յազկերտէ յաստուածոց հաւատարմէ արքայից արքայէ առ սիրելի ծառայսդ, առ ազատսդ և առ ռամիկ հեծեալսդ Հայոց աշխարհիդ, որ 'ի մարզիդ էք, ողջոյն հասցէ 'ի մերմէ տէրութենէս ։ Յիշեցաք զվաստակս ձեր և զքաջութիւն, որ առ թշնամիս մեր • և կամիմք մեծաւ պատուով և ձօխութեամբ արձակել զձեզ յաշխարհս ձեր • զի տեսեալ եղբարցն ձերոց՝ առաւել փութասցին 'ի մեր ծառայութիւն • միայն զի փութով հասանիցէք 'ի դուռն արքունի ։

Արդ իբրև լուան ազատագունդն Հայոց զհրաման թագաւորին 'ի բանից անտի նամակին և 'ի պատգամաց նախարարին, գիտացին այնուհետև զգաղտնաձիգ նետս չարին, որ հանապազ մարտնչի ընդ ծառայից Աստուծոյ ։ Բայց ոչինչ ցուցեալ նշան՝ թէ 'ի միտ առին զդաւաճանութիւն թագաւորին, յարուցեալ միաբան յուղի անկան գնալ ոչ թէ 'ի դուռն արքունի • այլ ծփէին 'ի միտս իւրեանց՝ թէ զինչ արասցեն • և աղօթիւք առ Տէր կարդային յամենայն սրտէ ։

Եւ իբրև հասին 'ի կէս ճանապարհին՝ որ զատանէր յաշխարհէն Հայոց, 'ի դադարել նոցա անդէն առ վայր մի՝ խորհուրդ իմն 'ի մէջ անկանէր 'ի տուչութենէ աստուածային շնորհաց և 'ի տեսչութենէ վերին զօրութեան ։ Եւ ժողովեալք տէր Ատոմ Գնունի իւրովք ազատօքն, և տէր Մանաճիհր Ռշտունի իւրովք ազատօք, խորհուրդ

հուրդ կալան առ միմեանս , և սկսան ասել այսպէս ․ Մեք գիտեմք զպիղծ և զանօրէն թագաւորն զթշնամին հաւատոց մերոց , զի ոչ վասն այլ ինչ իրաց կոչէ զմեզ , այլ միայն՝ զի հանցէ զմեզ 'ի սր՟ հաւատոյս մերմէ , և դարձուսցէ 'ի մոգութի՟ ․ այս են կամք նր՟ , զի հնազանդեցուսցէ զմեզ իւր խաւարային խորհրդոցն , և արասցէ զմեզ խաւարափոխանակ լուսոյ ․ և զանցաւոր պատի՛ւս խոստանալով՝ 'ի յաւիտենական բարութե՟ցն զմեզ վրիպեցուսցէ , զոր խոստացաւ անսուտն ած՟ իւրոց ծառայից 'ի ձեռն սր՟ց իւրոց մարգարէից և առաքելոց ․ որք քաջութ՟ նահատակեցան 'ի ժամանակս իւրեանց վս՟ անու՛ան նր՟ ․ և բարի անուն յշ՟ի թողին , և զանձս բարութե՟ 'ի յերկինս համբարեցին անձանց , և որոց արժանաւոր գտանին նոցին լուսաւոր պսակացն ․ արդ թէպէտև մեք անարժան եմք , սակայն 'ի նոյն տր՟ ապաւինելով՝ արժանաւորք գտանիմք ․ զի միայն զյօժարութի՟ կամացն խնդրէ ած՟՝ առատաձեռնել յամենեսին զանսպառ զանձս իւրոց պարգևաց ։

Ապա միաբանեալք ամենեքեան՝ ընտրեցին մեռանել վասն անու՛ան տն՟ մերոյ յս՟ի քս՟ի , քան առ ժամանակ մի վայելել 'ի մեղս ․ սմին իրի հաստատեցին չերթալ 'ի կոչ արքայի , այլ խոյս տալ յշ՟ իւրեանց ․ և թէպէտ քաջ գիտէին՝ թէ ոչ զերծանին 'ի ցասմանէ թագաւորին , այլ ոչինչ զարհուրեցան յառժամանակեայ մահու՛անէս՝ խրախուխուսեալք ձայնիւ ս͞բյ աւետարանին, թէ մի՛ երկնչիք յայնցանէ՝ որ զմարմինն սպանանեն, և զոգին ոչ կարեն սպանանել ։ Այնուհետև յանձն արարեալ զինքեանս ս͞բյ երրորդութե͞ն՝ դէմ եդեալ գնացին յՅ͞ն Հայոց ։

Եւ եղև իբրև եհաս համբաւն 'ի դուռն թագաւորին, արձակեաց փութանակի գունդ բազում զկնի ն͞ց, հրաման տուեալ զամենեսեան սրով սպանանել, թէ ոչ դառնան կատարել զկամս արքային, այս է գնալ 'ի պարսս, և յանձն առնուլ զօրէնս մոգութ͞ե ։ Իսկ ս͞բց երանելեացն կանխագոյն հասեալ յերկիրն Հայոց 'ի գաւառն անձաւացեաց, զտեղի առին անդ 'ի վայելուչ վայրի ուրեք լերանց․ ուրանոր բնակէր 'ի քարանձաւի միոջ ոմն 'ի ս͞բ կրօնաւորաց հրեշտակակրօն միանձնական վարուք՝ պէսպէս և բազում ճգանց համբերեալ ։ Առ սա հասեալք ամենեքեան առհասարակ, և ծունր կրկնեալ՝ խնդրեցին զաղօթս ս͞բյն․ և օրհնեալք 'ի նմանէն՝ պատմեցին զանցս աղետիցն, և զնեղութ͞իս իւրեանց ճանապարհին ։

Իսկ ս͞բ այրն ա͞յ ազդում͞ն ընկալեալ 'ի հոգւոյն ս͞բյ՝ մարգարէացաւ զերջանիկ կատարում͞ն ն͞ց վկայական մահուամբ․ և ասէ․ երանելիք էք ո՛րք ք͞սասէրք, զի վաղվաղակի տեսանելոց էք՝ առ որ անձկացեալն էք․ զի զօգտակարն ձեր հոգացէ տ͞ր յ͞ս ք͞ս ։ Եւ նոցա ընկալեալ կրկին զօրհնութ͞իս 'ի նմանէ՝ իջին բանակեցան զայն գիշեր մօտ 'ի նա մե-

մեծաւ ուրախութ͞ե ո͞գ զբանակս հրեշտակաց , սաղմոսելով և օրհնելով զ͞ած :

Եւ ահա 'ի մէջ գիշերին տեսիլ սքանչելի երևէր ս͞բյն ատոմայ․ զի լոյս կամարաձև փայլեալ՝ խորան կազմեցաւ 'ի վերայ բոլոր գնդին․ և այր մի լուսաւոր զգեստուք և ահաւոր տեսլեամբ բաշխէր պսակս բոլորեալս 'ի կարմիր վարդէ․ և ասէր ցս͞բն ատոմ․ քաջալերեցարո՛ւք զինաւո՛րք ք͞րի : Իսկ ն͞ր զարհուրեալ 'ի տեսլենէն , և զարթուցեալ առ ժամայն , բազում աղաչանս և աղօթս մատուցանէր հանդերձ արտասուօ՛ք առ բարերարն ա͞ծ՝ այսպէս ասելով․ Տէ՛ր դու գիտես զսրտից մերոց զխորհուրդս․ զի վասն անուա՛նդ քում ս͞բյ եղաք զանձինս մեր 'ի կշիռ , և կամակար մատնեցաք զմեզ 'ի մահ , անարգելով զհրաման անօրէն թագաւորին , որ բանիւք սնոտեօք հրապուրէ զմեզ՝ տալ հրաժարել 'ի քոց բարութ͞եց , և վայելել 'ի մառախլապատ և 'ի մոխրապաշտ վայելչու͞թս մոլորելոցն 'ի ճշմարտու͞թէդ : Արդ ո͞ր բարերար մի՛ 'ի բացէ առնէր 'ի մէնջ զօգնականութ͞եդ քո վերակացու͞ի․ զի մի՛ ոտն հարցէ թշնամին , թէ յաղթեսցէ քոց ծառայից : Զի թէպէտև մեք անարժան եմք , այլ դու ո͞ր սովոր ես ցուցանել զողորմութ͞իս քո 'ի վ͞ր մեղաւորաց․ քանզի ոչ եկիր կոչել զարդարս , այլ զմեղաւորս 'ի մեղսաքաւիչ և 'ի կենդանատուր բղխումն արեանդ քո :

Եւ այսպէս կացեալ նորա յաղօթս մինչև

ցժամ առաւօտին՝ մնայր ծարաւեալ ոգւով ելից տեսլեանն ։ Եւ ը՟ այգն յարուցեալք ամենեքեան 'ի պաշտօն առաւօտուն՝ կատարեցին զսովորական աղօթսն. և ապա սկսաւ սբ՟ն ատոմ պատմել նց՟ զուրախալից տեսիլ գիշերոյն ։ Իսկ նոցա առ հասարակ լցեալ խնդութ՟ե՝ գոհանային զտ՟նէ. և արտասուալից հառաչմամբ ծունր կրկնեալ բարերարին այ՟՝ ո՟պ 'ի միոջէ բերանոյ աղաղակէին և ասէին. Տր՟ մեր և ած՟ յս՟ քս՟, եթէ արժանի համարիս զմեզ մեռանիլ վասն անուանդ քո սբ՟յ, մեք պատրաստ եմք յամ՟ ժամ ո՟պ զոչխար 'ի սպանումն. զի կատարեսցուք նշանաւ սբ՟ խաչի քո. և մի պարտեսցուք յանածից՝ 'ի մոխրապաշտ թագաւորէն և 'ի զօրաց նորա. զի ամօթալից կորիցեն ամենայն թշնամիք ճշմարտութ՟ե ։

Իսկ դիւապաշտ և սևագունդ զօրքն պարակաց հասեալ լինէին շտապաւ զկնի գնդին Հայոց. և իբրև եկին 'ի գաւառն անձաւացեաց, ը՟ գուշակելոյ լրտեսացն զգիշերն ամ՟ հետամուտ եղեալ՝ հասանէին մօտ 'ի լեառն, ուր բանակն էր սբ՟յն ատոմայ. և կալեալ զոմն 'ի բնակչաց տեղւոյն՝ հարցանէին, թէ ու՞ր իցեն բանակեալ. և մատնութ՟ նր՟ վաղվաղակի ժամանեցին բազում ամբոխիւ 'ի տեղին՝ ուր էին սբ՟քն ։ Եւ նախ պատգամաւորս առաքեալ՝ յայտ առնէին զհրաման դառնութ՟ե թագաւորին. կա՛մ գալ 'ի դուռն, և յանձն առնուլ զմոգութի՟ և դառնալ ուրացող, և կա՛մ մահու մեռանիլ առհասարակ ։ Եւ իբրև գիտացին , թէ առոչինչ դրեն նոքա զայնպիսի հրաման , զրոհ տուեալ դիմեցին 'ի լեառն կոյս ։

Իսկ քաջ նահատակացն տեսեալ զյարձակումն անօրինացն, ը՟ սովորակի իւրեանց արութե՟ն՝ միմեանց ձայն տուեալ ասէին ․ ձի՛ կալէք ․ (յորմէ և յետոյ անուն տեղւոյն ձիակալի վանք կոչեցաւ) ․ և անդէն հեծեալք յիւրաքանչիւր երիվարս՝ ժողովեցան 'ի բլուր մի ․ և կարգեցին ռազմ ։ Եւ կէս բանակին ը՟ Մանաճհրի ուշտունւոյ յառաջ անցեալ՝ խորհէին 'ի թիկանց պաշարել զթշնամիս , և կ՟մ այլ ինչ ելս հնարից գտանել ։ Իսկ նախախնամութի՟ն ա՟յ յայց ելեալ սիրելեացն իւրոց՝ յայտնապէս նշանակէր նոցա , թէ ժամ է այնուհետև ո՛չ զքաջութի՟ մարմնոյ ցուցանել , այլ զհոգւոյ ․ քանզի տեսիլ գիշերոյն յայտնապէս երևեցաւ միասանգամ 'ի տեղւոջն ակներև ամենեցուն , անանց լոյսն , և անթառամ պսակքն ։ Ո՛ր տեսեալ երանելեացն՝ նոյն ժամայն 'ի բաց թողին զերիվարսն , և ընկեցեալ զզէնս յանձանց՝ ցնծութ՟բ յառաջ մատեան 'ի կատարումն , և կամաւ ետուն զանձինս իւրեանց 'ի մահ վասն անուանն ք՟ի ։

Եւ նախ ս՟րբն Ատոմ զսքանչելատեսիլ որդեակն իւր վարոս անուն առաջի մատուցանէր , զանգիտեալ 'ի մանկական տիոցն ․ իսկ նորա ինքնանուէր յօժարութ՟բ յառաջեալ քան զամենեսեան՝ բարի խոստովանութ՟բ 'ի ք՟ս կատարէր և պսակէր (5) ։ Ապա ս՟րբն Ատոմ՝ և ս̃բ ընկերք նր̃ միաբան մատուցեալ զպարանոցս ՚ի բերան պարսկական սրոյն՝ սաղմոսէին և ասէին. օրհնեցաք զքեզ տ̃ր, լուիցես ձայնի աղօթից մերոց. ընկալցիս զկամաւոր պատարագս, և խառնեսցես զամենեսեան ՚ի գունդս սր̃ց քոց: Եւ այնպէս ա̃մ իսկ գնդին ատոմայ արժանի եղեալ կատարման սրով, բարի խոստովանութ̃բ ՚ի ք̃ս՝ աւանդեցին զհոգիս իւրեանց ՚ի նոյն տեղւոջ. որոց ս̃բ և վարդագոյն արիւնն զերկիր ոռոգանէր, և հոգիք նոցա ՚ի դասս վերին զօրաց խառնէին:

Յայնմ վայրի և շնորհալից պարսիկ մի յարքունի գնդէ անտի արժանի եղեալ նոյն տեսլեան, զոր երջանիկ վկայքն տեսին ՚ի ժամ կատարման, աղաղակ բարձեալ ասէր. և ես քրիստոնեայ եմ իբրև զսոսա. և առժամայն կատարի և նա յանօրինաց՝ մկրտեալ ՚ի վկայական արիւնն իւր, և կարգեալ ՚ի գունդ սր̃ցն ՚ի տեսչութենէն ա̃յ: Ո՝ի ո̃մն թշուառացեալ յերանելեացն գնդէ փախուտեայ անկանէր ՚ի ժամ կոտորածին առ հովիւ մի. և տուեալ նմա զզգեստս իւր՝ առնոյր զնորին տարազ և զհովուական մախաղն և զցուպն, կերպարանել զինքն ձևով հովուին և ապրիլ, փոխանակեալ զլուսեղէն պատմուճանն և զմշտնջենաւոր կեանսն ընդ զազրատեսիլ զգեստու և ը̃ աւուրեայ կենացս. ո̃վ ո̃մն՝ որ վտարեցաւ երբե̃մն ՚ի մէջ քառասնիցն գլխելով ՚ի բաղանիսն, և զտեղի կոչման նր̃ վիճակին ելից բաղանեպանն.

պանն. քանզի թոյլք և երկմիտք յոմն ժամ կորնչին ։ Իսկ հովիւն յօժարութբ՟ և բարի հաւատով դիմեալ 'ի տեղի կատարմանն՝ յինքն ընդունէր զվճիռ մարտիրոսուե՟ն փոխանակ նր՟, հանդիսակից լինելով և պսակակից ընդ սբ՟ գնդին յերկնաւոր հարսանիսն ։ (6)

Ապա յետ երկուց աւուրց տեսիլ երևեցաւ 'ի գիշերին սբ՟յ ձգնաւորին, զի 'ի վր՟ վըկայիցն առ հասարակ լոյս փայլէր հրաշալի և սքանչելի. որ և մեծաւ զարմացմամբ 'ի վաղիւն փութանակի ազդ առնէր եպիսկոպոսի տեղւոյն. և հրամանաւ նր՟ ժողովեալ քահանայից, ազատաց, և ժողովրդոց՝ փութով 'ի տեղի անդր հասանէին ։ Եւ ամփոփեալ զնշխարս սբ՟ցն 'ի սբ՟ կտաւսն՝ մատուցին 'ի տեղի հանգստեան իւրեանց՝ լապտերօք և բուրմամբ խնկոցն և սաղմոսիւք՝ հանդերձ հսկմամբ, տօնախմբելով յայնմհետէ զյիշատակս նց՟ մեծաւ ուրախութբ՟ 'ի նաւասարդի ամսոյ. Թ՟ ։

Արդ որք յայսմ տեղւոջ հանդիպեալք կատարեցան, են այսոքիկ. գլխաւորն սբ՟ն ատոմ՝ որդւովն իւրով վարոսիւ, յազգէն գնունեաց. սբ՟ն վարս յոստանիկ (կամ յոստանի) տանէ. սբ՟ն ներսէհ յերուանդունի (կմ՟ յարուանդունի) տանէ. սբ՟ն վարձաւոր, և այլ ևս բազմութի՟ սբ՟ ընկերացն, որք նահատակեցան ը՟ նոսա, և առին ըզպսակս անապականս. որոց անուանքն՝ որ ոչ գրեցան 'ի գիրս, գրեալ են 'ի դպրութի՟

կենացն յաւիտենից ։

Իսկ սբ՟ն Մանաձիհր ուշտունի նիզակակից երանելւոյն Ատովմայ՝ իւր սբ՟ ընկերօքն յառաջ անցեալ՝ հասեալ էր 'ի սահմանս ծ՟ին իւրոյ , ը՟ս գաւառին ուշտունեաց . և մնայր տեսանել զկատարած իւրացն , պատրաստելով զանձն և զիւրսն 'ի վկայութ՟ի վասն անուանն տ՟ն . և ահա հասին 'ի վ՟ր անագորոյն զօրքն պարսից . և ը՟ս օրինակի առաջնոյ մի առ մի կոտորեցին . և այնպէս կատարեցան երանելիքն բարի խոստովանութ՟բ 'ի տեղւոջն՝ որ կոչիւր ոչխարաց (կա՟մ ոչխարանց , և կա՟մ ոչխարանից) վանք . ուր և ամփոփեալ նշխարք ոսկերաց նց՟ 'ի հաւատացելոց՝ եղան պատուով յեկեղեցւոջն որ 'ի վ՟ր բլրին , ը՟ս յայտնութ՟են եղելոյ 'ի ձեռն ճգնազգեաց միայնակեցին ։ (7)

Այսպէս վկայեցին և պսակեցան արի և քաջ նահատակքն ատոմեան սբ՟ զօրավարք զօրօքն հանդերձ յամս յազկերտի պարսից թագաւորի (յամի տ՟ն 449) . որք արհամարհեցին զկեանս իւրեանց վասն անուան տ՟ն մերոյ յ՟սի ք՟սի . և զամբարտաւան թագաւորն հանդերձ խորհրդակցաւն իւրով սատանայիւ յամօթ արարին , զօրացեալք յաջոյ հզօրին , և 'ի նմանէ ընկալեալք զբրաբիոնն յաղթութ՟ե ։ Իսկ 'ի տապանէ սր՟ցն բազում նշանք եղեն 'ի վ՟ր այնոցիկ՝ որք հաւատով դիմէին 'ի բարեխօսութ՟ի նոցին ։

Իսկ

Երկրորդ ապստամբեանք չորրորդեանք :

Դ. Վարդ. 3 : Յովհ. կաթ : Թովմ. արծր : (8)

'Ի ժամանակս իշխանութեան հագարացւոց 'ի բաղտատ ,յամիրապետութեան մաքսամայ ջափր կ՟մ Ճաֆար կոչեցելոյ՝ առաքեցաւ 'ի նմանէ ոստիկան ոմն 'ի հայս՝ ընդդէմ նորին , բուղայ անուն (որ և բուխայ , կ՟մ բուհայ) ,յաւուրս կթ՟ղկսութեան տ՟ն յովհաննու ովայեցւոյ՝ որ 'ի կոտայից • որ էր ժամանակ անիշխան իշխանութեան • զի թէպէտև կային բազում մեծամեծ իշխանք նախարարազունք հայոց աշխ՟ին, այլ առանց իշխանապետի այր իւրաքանչիւր ինքնագլուխ տիրէր իւրում գաւառի : Արդ եկեալ բուղայի յաշխ՟ն հայոց անհամար զօրօք՝ յաւեր դարձոյց զամ՟ն տեղիս , և ոտնակոխ արար զընակիչս հարուածովք և գերութ՟բ զամս հինգ • զի զամ՟ն այր պատերազմող կ՟մ երիտասարդ առոյգ՝ զոր միանգամ գտանէր, ընտրանաւ զգեղեցիկս և զդիտակավայելուչս 'ի նոցանէ պահէր 'ի կապանս առ 'ի դարձուցանել 'ի կրօնս իւր • իսկ զայլսն առ հասարակ սրակոտոր կորուսանէր : Զբազումս եհան 'ի հաւատոց • այլ զևս բազմագոյնս նահատակեաց • որպէս թէ լինել աշխ՟իս հայոց յայնմ ժամանակի կենդանի վկայարան քաջ նահատակաց :

Եւ եղև յետ աւերելոյ ն՟ր այսպիսի օրինակաւ զաշխ՟ն տարօնոյ և վասպուրականի՝ դիմեաց յարարատեան ծ, ընդ իւր տանելով զբազմութի՟ գերեաց ընտրելոց՝ զորս ժողովեալ էր 'ի տեղեաց տեղեաց: Եւ դադարեալ առժամանակ մի 'ի դուռն քաղաքի՝ ձմերել անդ, արձակեաց զզօրս իւր յասպատակութի՝ գերել և գերփել զամ՟ շրջակայ տեղիս, հրաման տուեալ նց՟՝ ոչ՟ յառաջն, զանպիտանս 'ի սուր սուսերի մաշել, և զպիտանիս կենդանի պահել և բերել առ ինքն. և նք՟ գազանաբար յարձակեալ սփռեցան այսր և անդր. և զորս միանգամ 'ի զինուորական կարգէ սուսերամերկս և զինաշարժս գտանէին, զոմանս անյագ երկաթոյ տային կերակուր, և զայլս՝ տուեալս 'ի պարանոց արկեալ՝ այնպէս առ ոստիկանն քարշեալ ածէին: Որս իբրև ետես այրն անագորոյն, ետ 'ի մի վայր ածել ը՟ նս՟ և զառաջին գերեալսն. և կրկին նս անձամբ ընտրութի՟ արարեալ, զորս անպիտանս դատեցաւ՝ անողորմ սրոյ ետ ճարակ. իսկ զորս բարեհասակաչափ և յաջողաձեռն ետես, որոշեաց 'ի բաց, և արգել 'ի բանտ: Եւ սկսաւ այնուհետև ածել զառաջեաւ զոմանս յերանելի կապելոց, և խօսել ը՟ նոսա ողոքանօք և սպառնալեօք՝ ուրանալ զքս՟, և 'ի դենս պաշտաման իւրոյ դառնալ:

Իսկ նց՟ գեղեցիկ իմն մոլուե՟ զփոյթ պնդութե՟ յանձինս ընկալեալ, առ քն՟ երթալ վաղագոյն լաւ համարէին՝ քան առ ժամանակ մի վայելել 'ի մեղս, և զոգիս կորուսանել: Ցուցանէին և յայտ առնէին, թէ անհնար

է

է մեզ զլոյս ը̃ խաւարի փոխանակել, կմ̃ երկնչել յառժամանակեայ մահուանէս. զի չե՛ն արժանի չարչարանք ժմ̃կիս հանդերձելոց փառացն՝ որ յայտնելոց են ՚ի մեզ: Որոց զանվեհեր պնդինս լուեալ բռնաւորին՝ յուզէր ՚ի մախանս ՚ի վր̃ երանելեացն. և զչարեալ ը̃ անտրտում զուարթուն̃ի երեսաց նց̃՝ որ ը̃ օրէ խոշտանկէր զնս̃ ծանր կապանօք և անսուաղութ̃բք, գեղարանօք և հարուածովք. մինչ զի առ հասարակ կեղեքեալ լինէին մարմինք նց̃: Եւ ապա անդրէն յատեան կոչեալ՝ թախանձէր զնս̃ բանիւք և հարցուածովք. զի թերևս զարհուրեալ նց̃ ՚ի դառն կտտանացն և ՚ի սպառնալեացն՝ զիջանիցին ՚ի կամս իւր:

Իսկ նոցա ա̃մի՛ յա̃մի քաջապէս համբերեալ՝ առ ոչինչ գրէին զվիշտս, զոր կրէին. և խընդամիտ ՚ի մահ ևս յօժարէին. վասն զի զօրանային միշտ ՚ի բղխմանէ անտի ջրոյն կենդանուե̃՝ որ ելեալն էր ՚ի կողիցն ք̃սի, և ցօղէր ՚ի վր̃ նց̃ հոգևոր վտակօք: Այլ և ոչ ամենևին գոնէ փոքր մի տեղի ետուն բանից բռնաւորին. այլ ծաղր առնէին զխրոխտանօք նր̃, և այպանէին զխոստմունս նր̃. մինչև ինքն իսկ բուղա գիտաց յանձն իւր, թէ արհամարհ թուէր յաչս քաջ՚արանցն իբրև զմանուկ մի անպիտան, կմ̃ որպէս զծեր զառանցեալ՝ որ բանդագուշէ բանս մնոտեաց: Եւ տեսեալ այնուհետև զամենեսեան զնոսա պինդս և փոյթս ՚ի մեռանել վս̃ ՚ի ք̃ս̃ հաւատոցն, վառեցաւ բորբոքեցաւ յանհնարին

սրտ

սրտմտութի̄ իբրև դազան զայրագին. և հրաման ետ հանել զնոսա 'ի բանտէ, և սպանանել հրապարակաւ. էր զոր բազմութ̄ք, և էր զոր սակաւ թուով հետ զհետէ 'ի բազում աւուրս. զի թերևս յետինքն հայելով յառաջինսն՝ զղջացեալք ուրասցին:

Իսկ նց̃ յուսումն ա̃ծայնով խրախուսեալ՝ ոչ 'ի բարւոյն 'ի չարն, այլ 'ի չարէն 'ի բարին զղջացեալք լինէին. և երթային իբրև դառինս պարարտս 'ի զենումն՝ լինել պատարագ կենդանի ա̃յ՝ ինքնանուէր յօժարութբ̃ և մեծաւ խնդութբ̃, ասելով առ ա̃ծ. վ̃ն քո մեռանիմք զօրհանապազ, համարեցաք որպէս զոչխար 'ի զենումն: Եւ այնպէս զուարճացեալք փութային ելանել 'ի մարմնոյ և մտանել առ ա̃ծ. և այնպիսի հրճուանօք կայտռելով դիմէին 'ի տեղի սպանմանն, ոչ̃ թէ հանդէս հարսանեաց կայցէ նց̃ առաջի: Ա̃յ և 'ի մերկացուցանել զնս̃ դահճաց՝ նք̃ անձամբ փութային 'ի բաց ընկենուլ յանձանց զզգեստ ապականացու մարմնոյ, զի զգեցցին զն̃բ և զվարդագոյն կարմրատեսիլ արեանն իւրեանց 'ի վր̃ սբ̃ մարմնոյն՝ իբրև 'ի տեղի ծաղկեայ պատմուճանի փեսայացելոց. և փոխանակ ոսկեհուռ թագականաց զարդու պսակացն՝ զերկրպագութի̃ քն̃ի և զնշան փրկական խաչին 'ի վր̃ գլխոցն դրոշմէին. և փոխանակ մանեկաց զսուրն փայլեալ 'ի պարանոցսն ընդունէին: (9)

Այլ օրինակ գլխատմանն երանելեացն էր քստմնելի յոյժ և անքերելի տեսողաց. զի դահիճքն անողորմք , կմ՟ անվարժք 'ի գործ կառափելոյ , ծեծէին սրով զկառափունս և զպարանոցս նոցա՝ իբրև ոք զի հատանիցէ փայտս յանտառի հարել կացնաւ այսր անդր․ և այնպէս յանխնայ յօշէին զնս՟ անդամ անդամ ։ Իսկ մի ոմն յերանելեաց անտի գերոգանուն բողկացի՝ երիտասարդ ժիր և առոյգ, իբրև մատեաւ առաջի սրոյն , և զուարթագին սպասէր կատարման վն՟ անուանն տն՟ , ետես՝ զի դահիճն հեղգ և անպիտան ծեծէր զպարանոց նր՟ իբրև զանզգայ ինչ քարեղէն կմ՟ փայտեղէն․ մինչև և ոչ փոքր մի գիծ կարաց առնել 'ի մարմին նորա խոցուածս սրոյն ։ Յայնժամ դարձաւ նահատակն 'ի դահիճն կոյս զարմացմամբ , և խնդրեաց 'ի նմանէ՝ տեսանել , թէ ընդէ՞ր ոչ հատանիցէ սուսերն․ և առեալ 'ի ձեռանէ նր՟ ըզսուրն շողացուցեալ՝ հայեցաւ յայսկոյս յայնկոյս , և ասէ․ ո՛վ անարի վա՛տ արանց , և զինաւոր անպիտան տն՟ իւրոյ․ սուրս է հատու, և գլուխ իմ պատրաստական․ զի՞ է՝ զի ոչ կարես հատանել․ և թէ ոչ հաւատաս ինձ, ահա փորձի՛ տեսջես․ և անդէն հարեալ շեշտակի զպարանոց դահճին՝ իսկ և իսկ 'ի բաց ընկէց զգլուխ նորա ։ Ու մի՛ ոք 'ի տկարամտաց գայթակղեսցի ը՟ գործն․ զի յայտ իսկ է՝ թէ ո՛չ վարկպարազի 'ի սոյն բերեալ եղև առաքինի նահատակն , այլ զի մի՛ յայսպիսի դանդաղութ՟է դահճաց լինիցի նահատակակցաց իւրոց քստմնիլ ը՟ չարաչար կառափմանն , և թուլանալ 'ի հաստատութ՟է մտաց իւրեանց . այլ զի տեսցեն զանպիտանութիւն սպանողաց , և աներկիւղ լինիցին իբրև զինքն 'ի մահուանէ . և արդարև զարմանք կալաւ 'ի տեղւոջն զա̃մ բազմութիւն . և ըստ գրելոյ Թովմայի արծրունոյ՝ որ զայս պատմէ , գոհացեալ միաբան ետուն փառս ա̃յ , որ զօրացոյց զսբ̃ն , և արար յամօթ զսատանայ հանդերձ գործակցօքն իւրովք (10) ։ Ապա առեալ զնա այլոց 'ի դահճաց՝ չարաչար տանջանօք սպանին . նոյնպէս և զայլսն արագ արագ գլխատեցին . և նք̃ այնպէս ուրախութ̃ կատարեցան վասն անուանն քն̃ի ։ Արդ էին 'ի բազմութե̃ անդ նահատակացն այլ ևս արք եօթն՝ նշանաւորք վայելուչ ձրիւք հոգւոյ և մարմնոյ . յորս գլխաւորն էր երանելին Ատոմ անձևացի 'ի գաւառէն աղբակայ յորսխրանս աւանէ ։ Զսա հանդերձ վեցեքումբք ընկերօքն պահեաց ուրոյն բռնաւորն՝ վասն սքանչելի և հրաշատիպ կերպարանաց նց̃ . վս̃ զի զուարթագին երեսօք էին և գեղեցկադիտակք , կորովիք և յաջողակք 'ի զէն . նմին իրի և ոչ կամէր խառնել զնս̃ ընդ այլսն՝ որք սրով կատարեցան . այլ հնարէր , զի գէթ զոսա որսասցի 'ի կամս իւր . խոնարհէր առ նոսա սիրով , և ողոքանօք ջանայր ամոքել զմիտս նց̃ . բազում պարգևս բարեաց և գանձս ոսկւոյ և արծաթոյ առաջի արկանէր նց̃ . այլև գիւղս և դերդաստանս խոստանայր տալ նց̃ , և երևելիս և փառաւորս 'ի դրան արքունի առնել ։ Իսկ երանելիքն ամենեքին բնաւ իսկ չհայեցան

ցան 'ի խոստմունս նորա , և ոչ ի՛ւիք տուին յանձն պատրիլ 'ի սնոտի մեծութե՟ց աշխ. մեզ կեանք քս է ասեն , և մեռանել շահ. գիտեմք' զի ունայնութի՟ են կեանք աշխ , և երազ դիւրամոռաց , կ՟մ իբրև ստուե՛ր երագահոս. այլ յաւիտենական են և անսպառ և անվախճան կեանքն և պարգևքն' զոր պատրաստեաց ա՟ծ սիրելեաց իւրոց , որք կան համբերու՟բ 'ի հաւատս ճշմարտութե՟. Նոյնպէս և տանջանքն յաւիտենականք և մշտընջենաւորք յանսպառ յաւիտեանս անվախճան խոշտանգանօք , որոց օտարացեալ են 'ի ս՟բ կրօնից , և ուրացեալք 'ի ս՟բ և յանբիծ հաւատոց քրիստոնէութե՟ն ։ Հա՛պա մի՛ բանիւք զմեզ հարցանէր , այլ արա՛ զի՛նչ և կամք են քեզ. զի մեք փութամք տալ զանցաւոր կեանս , և գնել թեթևագին զանգին ճոխութի՟ անանց կենաց ։

Ապա այնուհետև զքաղցրութի՟ն 'ի դառնութի՟ փոխարկէր բռնաւորն , և դառն տանջանարանս զնոքօք հրամայէր հեղուլ , և արկանել զնոսա յա՟մ չարչարանս և 'ի բախմունս կտտանաց . զոր ո՛չ լեզու բաւական լինի պատմել , և ոչ գրով բովանդակել ։ Իսկ երանելիքն խնդամիտ տանէին զա՟մ տանջանս. զի յոյսն աւետեաց և սէրն քսի՟ և ուրախութի՟ վկայութե՟ն թեթևացուցանէր ն՟ց զանհնարին ծանրութի՟ բեռանցն ։ Այս ծանուցեալ բռնաւորին զանհրապոյր միտս ս՟բցն' հրամայէ զնոսա զփայտէ կախել ։ Եւ մինչդեռ ը՟ն կերպարանաց խաչի կախե՟լ կային, գոհանային նայելն երանելե՟ցն զանպատում պարգեւացն ք՟սի, որ արժանի արար զն՟ն խաչակից լինել նմին, և մեռանել վասն անուան ն՟ր. և ուժգին պաղատանօք միաբան ձայն բարձեալ ասէին. ա՟ծ յօգնել մեզ նայեաց, և տ՟ր յընկերել մեզ փութա՛ :

Ուր և ս՟բն ատոմ զուարթագին բարբառելով առ խաչակից ընկերս իւր՝ քաջալերումն մատուցանէր. մի՛ ասէ զարհուրիք եղբարք յաժամանակեայ մահուանէս. զի թէպէտև չարչարիմք վասն ք՟սի, հաղորդութ՟ի ունիմք ը՟ ա՟յ կենդանւոյ: Եւ զի ուխտեալ էր ս՟բն ատովմ նուիրել յաւուր տօնի ս՟բյն գէորգեայ (որ 'ի մեհեկի. ի՟գ.) նոխազ մի 'ի կերակուր աղքատաց, այլ 'ի նոյն աւուրս 'ի կապանս և 'ի տանջանս գոլով՝ անձեռնհաս էր կատարել զուխտն, վ՟ն յայնմ պահու զխորհուրդս իւր փոխանակ աչաց յերկինս համբարձեալ՝ ասէ: Ո՟ ք՟ն յոյս իմ, ուխտաւոր գոլով իմ յայսմիկ տօնի տարեկանի՝ մեծին նահատակին գէորգեայ նոխազ ընծայել 'ի պատի՛ւ ն՟ր և վասն փառաց անուան քո, և արդ այսուհետև զիս քեզ փոխանակ նոխազի մատուցանեմ. ընկա՛լ զողջակիզումն անձին իմոյ, որ ընդունիչդ ես պատարագաց. և խառնեա՛ զիս և որք ընդ իս են՝ 'ի թի՛ւ վկայից քոց ս՟բց, որք սիրեցին զօր երևելւոյ գալստեան քո: Եւ այսպէս առ հասարակ բազում երկայնմտութ՟բ համբերեալ երանելեացն մեծի պատերազմին, և յաղթե՟լ ա՟մի, աւանդեցին զհոգիս իւրեանց, և ընկալան

'ի

'ի քո՟է զպսակն անեղծութեան ։ (11)

Արդ յետ կատարման եօթանեցունց քաջ զօրականացս քո՟ի, և այլոց ևս յառաջընթաց վկայից՝ որք սրով առին զվախճան 'ի դուռն քաղաքի անդ, հրամայեաց ոստիկանն բուղայ քարշել զմարմինս սր՟ցն առ հասարակ արտաքոյ քաղաքին, և թողուլ 'ի բացի՝ լինել կերակուր շանց և թռչնոց երկնից ։ Եւ կացին մնացին այնպէս զաւուրս բազումս անթաղ. և ոչինչ ամենևին արատեցան մարմինք սր՟ցն, և ոչ գոյր ինչ ժահահոտութ՟ի 'ի վ՟ր ն՟ց. այլ գնացեալ գաղտ քրիստոնեայք՝ առին զպատուական մարմինս ն՟ց, և թաղեցին պատուով ։

Կատարումն սոցա եղև 'ի թուականութեան Հայոց. յբ՟, այն է յամի տ՟ն. 853. որ էին ը՟ ա՟մ աւելի քան զհարիւր և յիսուն այր (12). թող զայնոսիկ՝ որ յայլ գաւառս և 'ի քաղաքս եղեն վկայք յաւուրսն յայնոսիկ ։ Ապա մեծ հայրապետն յովհաննէս սահմանեաց որ յիշատակի ա՟մ սր՟ցս այսոցիկ 'ի մեհեկի ամսոյն. իե՟. որ յայնժամ պ՟ինէր. 18. աւուր նոյեմբերի. յորում աւուր թերևս լեալ իցէ վախճան սր՟յն ատոմայ հանդերձ ընկերօքն. և այնպէս տարևորական պատուով ա՟մ ը՟ ամէ տօնէին զսոցա կատարումն, և մանաւանդ զեօթանեցունցն ատոմեանց վերջնոց. զորս համարիմք յայժմուս տօնախմբել զոյգ ընդ առաջնոց ատովմեանց յայսմ միջոցի առաջաւորաց, 'ի փառս պսակողին բոլորեցունց ամենափրկչի ։

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ:

(1) 'Ի մի վայր բերաք զերկին վկայաբանութիւնս առաջին և վերջին ատոմեանց . նախ՝ որպ՟ զի քաջ ծանիցի որոշումն ժամանակի և պատմութ՟ե ն՟ց . և երկրորդ՝ զի 'ի հին տօնացոյցս յայսմ՝ միջոցի պարզապէս դրի տօն * Ատոմեանց ||, կ՟մ * ս՟բց ատովմանց ||, առանց որոշելոյ՝ թէ զորոց իցէ բանն . ուր յետին օրինակք որոշել կամելով արդեօք՝ եդեալ են, * ատովմանց զօրավարաց || . ը՟ որում՝ բանք շարականին առաւել առ զօրավարս հային . թէպէտև զօրականաց ևս անխտիր յարմարին . թող զի 'ի պատմութ՟ց բացայայտ ունիմք, թէ տօն սահմանեցաւ վ՟ն վերջին ատոմեանց . որպ՟ս ոչ ունիմք այնչափ բացայայտակի վ՟ն առաջնոց . վ՟ոյ եթէ զատանէաք զտօն երկուց դասուց յիրերաց, միումն ոչ մնայր տեղի 'ի տօնացուցի . այլ հարկ էր անցուցանել զայն 'ի կարգ ս՟բց լոկ յիշատակելեաց ը՟ յայսմաւուրաց . և այս որոշումն չէր մարթ մեզ առնել տիրապէս :

(2) Վկայաբանութիւն ատովմեանց զօրավարաց՝ ը՟ Ճառընտրին, որոյ համառօտութ՟ի գտանի և 'ի Հ . օգ . 19 . յօրինեալ է յումեմնէ յիմաստուն վ՟պաց ժմկին առ ժամանակօք աշակերտաց ս՟բց Թարգմանչաց, և խօսեցեալ իբրև Ճառ յաւուր յիշատակի ն՟ց, սկսանելով ը՟ օրինակիս ը՟ այսմիկ . * Արք եղբարք և հարք, ժողովուրդք

,, ածասէրք, որ երկիւղիւն ա՟յ ժողովեալ էք
,, 'ի կատարել զյիշատակ ս՟բց վկայիցս մեծաւ ցանկութեամբ, կամեցայ պատմել ձեզ զքաջութի արանցն,
,, և զնահատակութ՟ի ս՟բցն, որք վ՟ն սիրոյն ք՟ի նահատակեցան, և մեզ թողին օրինակ . զի լսելով զվարս
,, նոցա՝ առաւել հաստատեսցուք 'ի հաւատս : Արդ
,, շնորհեսցէ մարդասէրն ա՟ծ պարգևս, բան ինձ տուզիս,
,, և ձեզ լսողացդ մտադիւրութ՟ք ունկնդրութի,
,, քահանայից և ժողովրդոց, ծերոց և տղայոց, երիտասարդաց
,, և կուսանաց, և ա՟մ չափու հասակի :
,, Արդ մաքրեսջիք զմիտս և զխորհուրդս, զգուշութ՟բ
,, լսելով զմեծազօր մարտակցութիւն ս՟բց վկայիցն ընդդէմ
,, թշնամւոյն . որպ՟ս զի և մեք հետևեսցուք զկնի
,, հետոց նոցա, որք հորդեցին մեզ զանայթաք պողոտայն

,, տայն 'ի վերինն եէ̃մ || ։ Ապա 'ի վր̃ բերէ զպատմութին․ * 'ի ժամանակս յաղկերտի ամբարշտի պար_
,, սից թագաւորին ծաղկէր հաւատ քրիստոնէից ը̃ ամ̃
,, երկիր ։ Եւ տեսեալ մոգպետացն և մոգուցն || ․ են̃ ։
Ուստի սկսանի և պատմուն̃ յայսմաւ'' ․ * Թագաւորն
,, պարսից յաղկերտ չար խրատուն մոգուց յարոյց հա_
,, լածանս 'ի վր̃ քրիստոնէից || ․ են̃ ․ և ահա գրեալքն
մեր են բանք Ճառընտրին՝ համեմատեալք ը̃ Հ․ Իբ_
րև ը̃ այլ ձեռագիր օրինակի ։

(3) Որպ̃ տեսեր 'ի վեր անդր, ո́չ Δ․ և ո́չ Հ․ բացատրեն, թէ ո́ր յաղկերտ իցէ․ վ̃յ և մեք ոչ որոշեցաք, ե̃ արդեօք առաջին յաղկերտ որդի շապհոյ առ ժմկօք սր̃յն սահակայ պարթևի, եթէ երկրորդն որդի վռամայ յաւուրս սր̃ց վարդանանց ։ Գրիգոր խլաթեցի զառաջինն թերևս իմացաւ յասելն 'ի գանձն ատոմեանց․ * 'ի կոչն երթալն՝ շապհոյ յաղկերտին՝ չար բռնաւորին || ։ Բայց հաստատագոյն ասելի է, որպ̃ եղաւ և 'ի պատմութե̃ հայոց, թէ պա́րտ է դնել յաղկերտ վռամեան, որ է բուն հալածիչն․ զի ամ̃ հանգամանք վկայաբանութե̃ս յայտ առնեն զպարագայս ժմկի վարդանանց և ղևոնդեանց ։ Եւ մի՛ ոք ասիցէ, թէ զիա́րդ ապա չյիշեն զատոմեանս եղիշէ և փարպեցի պատմիչք ժմկին․ նախ՝ զի թէ յառաջն ևս դիցես, նոյնպէս ձեռնարկի, թէ զիա́րդ չյիշէ զսոսա խորենացին, որպ̃ և ոչ այլ ոք 'ի պատմագրաց, բայց 'ի Ճառընտրաց և 'ի յայսմաւուրաց ։ Երկրորդ՝ յայտ է 'ի պատմութե̃ց սր̃ց վարդանանց, զի յաղկերտ բազմամեայ ժմկօք փորձեաց զնախարարս և զզօրս հայոց՝ տանելով 'ի պատերազմ, և մերթ ը̃ մերթ փոփոխելով զգունդս եկեալս․ իսկ թէ զի́նչ գործեցաւ յայնչափ ժմկս, ոչի́նչ գրեն եղիշէ և փարպեցին, այլ անցանեն 'ի պատմութիս վարդանանց ։ Երրորդ՝ գրեալքն 'ի սր̃յն եղիշէէ և յայլոց պատմագրաց հային առ համՇական հալածանս, որք հասին 'ի վր̃ եկեղեցւոյ հայաստանեայց․ իսկ վկայաբանութի̃ն ատոմեանց է առանձին պատմութե̃ միոյ գաւառի․ ը̃ որում և այլ անբաւ յիշատակարանք գրեալ կային յիւրաքանչիւր նախարարութե̃ս՝ ը̃ վկայելոյ խորենացւոյն ․

(4) Փայտիճ, զոր յերկուս տեղիս նշանակէ Δ, ոչ միայն զբրածեծն լինել ունիմք իմանալ, այլև զելանելն 'ի կախաղան, և 'ի խաչ, որպ̃ և զանդիլն 'ի կոճեղս, և զայլ տանջանս հնարեալս 'ի բռնաւորաց, մանաւանդ

'ի պարսից:

(5) 'Ի Ծ. յիշի որդին ատովմայ առանց անուան, զոր Հ. վարոս կոչէ, յայտ է թէ առեալ յայլմէ օրինակէ. զի ոչ իշխեմք ասել, թէ շփոթեալ իցէ ը̄ անուանց վարսայ, և վարձաւորի, որք էին յընկերաց անտի ատովմայ:

(6) Եթէ կամիցիմք միաբանել զբանս Ծ. ը̄ Հ. հարկ է ասել, թէ 'ի միում կմ̄ յերկոսին իսկ կայցէ սխալագրութիւն գրչի. որպէս թէ կամ Ծ. փոխանակ գրելոյ հովիւ՝ եգեալ իցէ պարսիկ, և կամ Հ. փոխանակ գրելոյ պարսիկ՝ եդեր̄ իցէ հովիւ, 'ի խօսելն զայնմանէ՝ որ փոխանակ փախուցելոյն եմուտ 'ի թիւ նահատակաց. մեք քանզի չկարացաք միաբանել, զերկոցունց ևս բանս ուրոյն ուրոյն պահեցաք. և այնպէս լինին երկու անձինք վիճակեալք պսակի մարտիրոսութե̄՝ փոխանակ միոյն զրկելոյ:

(7) Զյայտնութիւն եղեալ առ ճգնաւորն՝ զոր Ծ. յիշեաց 'ի կատարման սր̄յն ատովմայ, Հ. յիշատակէ ընկնի կատարման սր̄յն մանաճհրի. և այն՝ որպէս թէ այլ ոք միայնակեաց իցէ սա. վս̄յ և մեք անորոշ եղելոք եդաք: Այնու̄ և զամփոփումն նշխարաց երկոցունց գնդից սր̄ցն 'ի մի վերածէ Հ. ոպ̄ թէ ամենեքին յոչխարանից վանս իցեն. մեք ը̄ Ծ. ուրոյն ուրոյն պատմեցաք. այլ իցէ՞ թէ ունէաք տեղեկութիւն գոնէ աւանդութե̄ և 'ի բնակչաց տեղւոյն, թէ ո՛ւր ասին այժմ լինել նշխարք սր̄ցս:

(8) Զերկրորդ ատովմեանց զվկայաբանութի̄ քաղեցաք 'ի յովհաննէ կաթուղիկոսէ և 'ի թովմայէ արծրունւոյ, յորոց առեալ են և բանք. Հ. 'ի մարտի. 3. ուր խառնիխուռն կուտակին պատմութիւք այնց ժամանակաց՝ ը̄ անուամբ վկայաբանութե̄ սմբատայ սպարապետի, որ յետ քանի մի ամաց վախճանեցաւ 'ի բաղտատ խոստովանողական անուամբ. ոպ̄ և ստեփաննոս կոնն՝ որ յիշի անդանօր, 'ի բաղտատ նահատակեցաւ 'ի թուին հայոց. յդ̄. իսկ ատովմ և այլք ը̄ նմա՝ 'ի դուին քաղաքի՝ 'ի թուականութե̄ մերում յբ̄. և տօն սց̄ սահմանեցաւ լինել 'ի մեհեկի. իե. որ ը̄ յայսմաւուրաց է մարտի. 3. բայց 'ի ժամանակին յայնոսիկ՝ մեհեկի. իե, պատասխանէր 18. աւուր նոյեմբերի:

(9) 'Ի խօսելն յովհ. կթղկսի զբաղմութէ̄ նահատակելոցն՝ թէպէտև յայտ առնէ, թէ սրով կատարեցան, բայց յօրինակի մերում ընթեռնումք ևս * հրոյ ճարակ տալ||.

տալ||• և զի Թովմա արծրունին սոսկապէս սրով նահատակեալ աւանդէ, վ՟յ չունիմք հաստատել զհուրն։

(10) Զայս գործ գեորգեայ Նահատակի (զոր մեք արդարացուցաք) մարթ է դասել 'ի կարգ դժուարաթարգմանելի անցից անցելոց ը՟ ս՟ս, զորոց ասէ օգոստինոս, թէ արարին ինչ ինչ առաւել զարմանալի՝ քան հետևելի։ Եւ գուցէ յայն սակս զանց առնէ յիշել զայն յովհ. կաթ. միայն թէ գրէ զայս ինչ, յորում գուցէ ը՟ քօղով զնոյն կամի ակնարկել։ * Իսկ Ժողովք ,, քրիստոնէից (ասէ) թէպէտև վշտանային սակս սաս- ,, տիկ սրոյ կոտորման ս՟ցն, սակայն գովեստ մեծ կա- ,, տարէր նց՟ քս՟ 'ի ձեռն վկայիցն ||։

(11) Թովմ. արծր. ոչ գրէ 'ի մասնաւորի զկատարմանէ ատովմայ և ընկերաց նորա 'ի խաչի. վ՟յ կարծէ ընթերցողն՝ թէ ոք ևս սրով կատարեցան. բայց քանզի որոշակի գրէ յովհ. կաթ, վ՟յ 'ի նոյն միտս պարտ է վերածել և զբանս Թովմայի։ Միայն թէ չէ ինչ ը՟դէմ ասել, թէ՝ և զմեռելոցն 'ի խաչի զգլուխս հատեալ իցեն, և գուցէ յայս հայի բանն յովհ. կաթ. (զոր եդաք 'ի նախընթաց ծան″.) վ՟ զի յետ աւանդման հոգւոյ ատովմանց 'ի խաչի՝ գրէ զայն բան. * Իսկ ,, ժողովք քրիստոնէից թէպէտ և վշտանային սակս սաստիկ սրոյ կոտորման ս՟ցն || են։

(12) Յովհ. կաթ. ոչ յիշէ զանուն ուրուք 'ի ս՟ցս բաց յատովմայ. այլ ասէ վ՟ վկայից ժամանակին առհասարակ. * որոց և անուանքն գրեալք են 'ի դպրութե՟ կենաց ||։ Իսկ Թովմա արծրունի զոմանս յիշէ յանուանէ՝ յասելն, * Սոցա անուանք ճանաչին. ատոմ ,, անձևացի, և մլեահ վարժնունի, և գեորգ բողկա- ,, ցի, և վասակ. և այլ բազումք. որոց անուանք գրել՟ ,, են յերկինս ||։ Արդ չէ մարթ որոշել, թէ այս երեքին անուանք՝ որք յիշին զկնի ս՟ցն ատոմայ, յեօթանեցունց անտի յատովմեա՛նց իցեն, եթէ 'ի թուոյ բազմութեան վկայիցն սրով կատարելոց. վ՟յ և մեք չկարացաք որոշակի անցուցանել 'ի կարգ վկայաբանութե՟ս։

ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Ս̃րց Սուքիասանց ։ (1)

Հ. օգոստ. 27 ։ Լտն և ապրիլ. 19. և հոկտ. 26 ։
[illegible]. Բ. Հեղ. և Ն. ձեռ ։ Յունիս. հաւր ։ (2)

Սոքա էին արք փառաւորք և երևելիք, Թագաւորազունք և գլխաւորք 'ի պալատական և 'ի զինուորական կարգէ 'ի դուռն արքային ալանաց, ազգականք սաթինկայ դստեր Թագաւորին ալանաց, որ հարսնացաւ արտաշէսի հայոց արքայի որդւոյ սանատրկոյ. և ընդ նմա եկեալք յշ̃խէն ալանաց 'ի հայս՝ մեծարեալ էին ա̃մբ 'ի Թագաւորէն և 'ի Թագուհւոյն ։

Նա եղև 'ի խնամոցն ո̃յ, զի ս̃բ ոսկեանք՝ որք աշակերտեալ էին Թադէոսի առաքելոյ, և միայնացեալ նստէին յշ̃խին հայոց 'ի մի 'ի լերանցն ծաղկեոյ 'ի ծմակ լերին, եկին 'ի դուռն արքունի, և խօսեցան զբանն կենաց ը̃ Թագաւորին և ը̃ Թագուհւոյն ։ Նաև արքայ արտաշէս՝ որ զբաղեալն էր 'ի հոգս պատերազմաց, անփոյթ արար զնոքօք. և յայլ ժամանակ պարապոյ եթող լսել զբանս նոցա. որով և զրկեցաւ 'ի լուսոյ կենարար մկրտութենէ ։ Այլ ոչ ը̃ունայն ինչ եղև

մասվաստակ սր՟ցն . զի արքն այն պատուեալք՝ ազգականք սաթինկան եկեալքն յալանաց՝ յօժարութ՟բ լուծին զքաղցրութ՟ի աւետարանին , և հաւատացին 'ի Ք՟ս ։ Եւ այնպէս աշակերտեալ սր՟ց ոսկեանց՝ գնացին զհետ ն՟ր յառանձնութ՟ի լերանց . և ճշմարտագոյն տեղեկացեալ 'ի նոցանէ ճանապարհին կենաց , և լուսաւորեալ՝ մկրտեցան 'ի նոցանէ 'ի ջրաբուղխ և 'ի ծաղկաւէտ տեղիս՝ յակունս եփրատ գետոյ ։

Գլխաւորն 'ի սոցա միջի՝ որ նախ կոչիւր բահադրաս կամ բարաքադա , 'ի մկրտութ՟ն անուանեցաւ Սուքիաս (որ յունարէն ասի իսիւքիոս , և թարգմանի հանդարտեալ կամ լռեալ) , ո՛չ թէ խաղաղական կեանս ստացեալ (ասեն վկայաբանք) ։ Որպէս և այլ ընկերք ն՟ր անուանեցան ղուկիանոս , պողոքտէս , կոդրատոս , իդիոքսիքիոս (կամ անտիոք , և ուքիրոն) , մէմաս , փոկաս , սերգիոս , դոմետիոս , ադրանիոս , կամ անդրիանոս, զոսիմէոս , բիկտոր , թաղկէսա կամ թաղղէսս , յորդանէս , անաստաթրկէոս , թէոդիտոս կամ թէոդոտիոս , յակոբ , և թէոդոսիոս ։ Ընդ ամ՟՝ ոգիք ութուտասան կամ իննևտասան ։ (3)

Եւ յորժամ մկրտէին մէն մի 'ի նոցանէ , առժամայն զՔ՟ս տեսանէին դէմ յանդիման երևեալ 'ի բլրին , որ կայր հանդէպ աղբերականն՝ որ կազմեցաւ նոցա աւազան ։ Ս՟ն որոյ և որք յառաջն մկրտեցան , խնդալից սրտիւ յորդոր տային և փութացուցանէին զընկերսն՝ տալով նոցա աւետիս , և ասելով . ահա տեսանեմք զք̅ս՝ է̅ առնուլ յանձինս մեր զկնիք նորա մկրտութ̅ե ս̅բ աւազանին : Այս այնուհետև կրօնաւորեալք առ ոտս հոգևոր վարդապետաց իւրեանց ս̅բց ոսկեանց՝ գոհանային զա̅յ վասն անպատում պարգևաց , որ շնորհեցաւ նոցա : Իսկ 'ի տեղին՝ ուր ք̅ս երևեցաւ նոցա , խաչ կանգնեցին . և անուանեցին աւետեաց խաչ՝ վասն աւետիս տալոյն միմեանց յաղագս զք̅ս տեսանելոյն :

Յետ այսորիկ յերթևեկս առնել ոսկեանց և սուքիասանց միանգամայն 'ի դուռն արքունի՝ քարոզել զք̅ն , յայտնի եղև դարձն սուքիասանց 'ի ք̅ն . վ̅յ Թագուհին ընդ ակամբ հայէր 'ի ն̅ս , քանզի երկնչէր յարքայէ և յարքայորդւոցն՝ թէ դուցէ և զինքն համարեսցին համամիտ լինել ազգականաց իւրոց . իսկ զվ̅դպս նոցա զոսկեանս չեթող այնուհետև երևիլ յարքունիս : Զայս իմացեալ սուքիասանց , միանգամայն տեսանելով զերեսս ազգականին իւրեանց սաթինկան ոչ լինել ը̅ իւրեանց որպէս յերէկն և յեռանդն , սկսան և ինքեանք խորշիլ 'ի նմանէ և 'ի դրանէն . ևս առաւել կասկածել զի մի 'ի վտանգս ինչ փորձուե̅ց անկցին ոչ միայն ինքեանք , այլև վ̅դպք իւրեանց , համակամ միմեանց լինելով 'ի բաց անջատեցան 'ի Թագուհւոյն , և զհետ գնացեալ վ̅դպաց իւրեանց՝ բնակեցան ը̅ ոսկեանս 'ի լերին անդ կրօնաւորութ̅բ . և ջերմ հաւա-

տով

տուլ պաշտէին զՔ՟ն ։

Նաեւ որդիք Թագուհւոյն մանկագոյնք եւ տղայամիտք վրոյն եւ մ՟նոյն՝ տեսեալ թէ ազգականք մօրն իւրեանց ոչ եւս երեւին 'ի դըրան, իբրեւ իմացան զպատճառս իրացն 'ի Թագուհւոյն, դրդուեցին զԱրտաւազդ զերէց եղբայր իւրեանց՝ որ էր երիտասարդ մոլեգին բարուք. եւ տեղեկացեալ վ՟ն բուհադրայ Սուքիասն կոչեցելոյ եւ ընկերաց ն՟ր, եթէ ուր իցեն, առին զօրականս արքունի ը՟ իւրեանս, եւ դիմեցին 'ի բնակութի՟ ն՟ց. եւ իբրեւ գտին զնոսա, սկսան նախ ողոքանօք աղաչել, զի դարձցին յարքունիս ։ Իսկ յոչ առնուլ նոցա յանձն՝ կոչեցին առանձինն ըզվ՟դպս ն՟ց զՈսկեանս, եւ ստիպէին զն՟ն յորդորել եւ խրատել զաշակերտսն՝ դառնալ առ Թագուհին ։ Իսկ նոքա ասեն. ինքեանք ընտրեսցեն զօգուտն իւրեանց ։ Ընդ որ բարկացեալ արքայորդւոյն՝ ետուն խողխողել զՈսկեանս. այլ Սուքիասեանց չիշխեցին ինչ առնել՝ ակնածել 'ի մօրէն իւրեանց վ՟ն ազգականութե՟ն. վ՟ոյ խնայեցին 'ի ն՟ն, եւ թողեալ գնացին ։

Իսկ երանելի աշակերտքն իբրեւ իմացան զկոտորած ը՟ վ՟դպաց իւրեանց, սուգ մեծ առին, եւ առեալ թաղեցին զմարմինս նոցա պատուով. եւ այնուհետեւ գիտացեալ՝ թէ չիք ն՟ց հանգիստ յերեսաց Թագուհւոյն եւ որդւոց ն՟ր, իսպառ օտարացան 'ի նոցանէ. եւ միակամ հաւանութե՟ թողեալ թաքուցե՟լ բնակեցան 'ի լերինս անդ՝ մօտ 'ի մեհենարանս

ու

ոսկեանց՝ նոցին վարուքն . և որ ք՟ զօր յաւելուին 'ի կարգն և 'ի կրօնս հրեշտակականս , որպ՟ս և ուսան 'ի սբ՟ վրդպաց իւրեանց ։ Եւ յայն ճգնութ՟ի հասին արքն փառաւորք և փափկասունք , մինչև խոստաբուտ ճարակ ծաղկաւէտ լերինն իբրև աւելորդ փափկու՟ի մարմնոյ թուէր նց՟ ։

Սմին իրի յետ ոչ բազում ժամանակաց ասէ երանելին սուքիաս ցընկերս իւր . եկա՛յք յայլ ոսին և անարգաւանդ տեղիս խնդրեսցուք մեզ բնակութ՟ի . զի այս խոտս պարարտ է , և պարարէ զմարմինս մեր , և առնէ ըզմարդ իբրև զձիս և զջորիս՝ յորս ոչ գոյ իմաստութ՟ի . և զի լաւ ևս է մեզ փոխիլ 'ի տեղւոջէ աստի , զի մի՛ եկեալ 'ի դրանէ թագուհւոյն՝ նեղեսցեն զմեզ դառնալ յարքունիս յառաջին պատիւ՟ն ճակաւն , և 'ի սնոտի հոգս կենցաղոյս ։ Եւ յարուցեալ միաբան գնացին 'ի լեառն ջրաբաշխ՝ որ 'ի բագրևանդ գաւառի յանդիման բագուան գեղջն՝ ընդդէմ նպատ լերինն . և բնակեցան 'ի լերին անդ , որ և յետոյ յանուն գլխաւորի սոցին ս՟ սուքիասայ՝ ասի սուկաւ կամ սուկաւէտ կոչեցեալ . և անդ հանդարտեցին զամս բզ՟մս՝ խոտաճարակ լինելով իբրև զոչխարս վայրի . մինչև՝ փտեցան և թափեցան ձորձք նոցա , և մորթ նոցին եղև իբրև զմամուռս քարի 'ի խստութ՟է օդոյն . և 'ի ցօղոյ երկնից բուսաւ մազ յանձնէ նց՟ 'ի վ՟ր մերկ մարմնոց . և խառն ը՟ հերս գլխոյ և մօրուաց ծածկեաց զամ՟ մարմինս նց՟ . մինչև երևիլ նոցա իբրև զքօշս վայրենիս ․ և 'ի պատահմանէ անտի՝ որ՟պ ասի , քօշք անուանեցան ։ Իսկ այնպէս մնացին անվնաս 'ի հիւանդու՟է և յայլ պատահարաց 'ի լերինն սուկաւ (որ ռամկօրէն քօսա տաղ կոչի) ամս խ՟ , խոտաբուտ կենօք , պահպանեալք 'ի տեսչութ՟էն ա՟յ , քաղաքավարեալք 'ի մարմնի ո՟պ զանմարմինս , և մշտամռունչ աղօթից և հոգևոր ձգանց պարապեալք ։ (4)

Իսկ եղև 'ի մեռանել արտաշէսի հայոց արքայի , յորում ժամանակի մեռաւ և արտաշէս արքայ պարսից , յորժամ թագաւորեաց 'ի հայս արտաւազդ , և 'ի պարս պերոզ , վրդովեցաւ խաղաղութ՟ի ծ՟ին հայոց ․ քանզի արտաւազդ այր անպիտան զերկեամ մի թագաւորեալ՝ վեր 'ի վայր արար զկարգ տ՟րութ՟են և զբարեշինութ՟իս հօր իւրոյ ․ իսկ տիրան եղբայր ն՟ր յաջորդեալ 'ի թագաւորութ՟ե՝ թէպէտև էր այր զգօն , այլ կեայր անհոգաբար՝ զհետ լեալ որսոց և զբօսանաց ․ որոյ վ՟ս և պերոզ արքայ պարսից այր սէգ և հզօր՝ խորհէր ելանել 'ի վ՟ր հայոց ծ՟ին , և արկանել ը՟ տ՟րու՟թ իւրով ։ Իսկ զի 'ի նոյն աւուրս կայսրն հռովմայ անտոնինոս պիոս յղեաց թագ արքայական և ծիրանիս առ տիրան արքայ հայոց՝ վ՟ս հաւատարիմ գոլոյ ն՟ր 'ի բարեկամութ՟ե հռովմայեցւոց , և տալոյ հարկս , ը՟ այս դժուարեալ պերոզի՝ կամէր կորուսանել զերկիրն հայոց ․ ասէր ․ անցեալ աւերեցից զերկիրն , և վրէժ առից ը՟ ստորութ՟ե հայրենեաց ։ Այնուհետև զօրս գումարեալ անբաւութ՟՝ փութայր հասանել 'ի սահմանս Հայոց , և խոտանացուցանել և յանպիտանութիւն դարձուցանել զՀայաստան աշխ՟ . և կայր 'ի տագնապի և 'ի տարակուսանս երկիրն Հայոց ։

Զայս ա՟մ յոյժ խռովութ՟ց իմացեալ երանելեացն սուքիասանց՝ կային և մտադիր լինէին իրացն , եթէ զիա՛րդ վրէժ խնդրիցէ Թագաւորն պարսից յաշխ՟էն Հայոց . և տեսեալ որ ը՟ օրէ զյաճախուն՟ նեղութ՟ց և տառապանաց երկրին՝ կարեկից լինէին իբրև 'ի վ՟ր բնիկ աշխ՟ի իւրեանց ։ Ապա ասէ երանելին կոդրատոս ցս՟ն սուքիաս և ցայլ ընկերս իւր . եկա՛յք աղօթեսցուք , զի արասցէ ա՟ծ խաղաղութ՟ աշխ՟իս այսմիկ . որովհետև զայսչափ ժամանակս բնակեցաք մեք յերկիրս յայս ։ Եւ կացեալ միաբան յաղօթս՝ ասէին . ողորմեա՛ ա՟ծ ը՟ մեծի ողորմութ՟ քում 'ի վերայ աշխ՟իս Հայոց . զի Թէպէտև է անօրէնութիւն 'ի նմ՟ , այլ դու տ՟ր և արարիչ ա՟մ արարածոց, ամենեցուն օգնականութ՟ի և ողորմութիւն 'ի քէն է , դարձո՛ զարտմտութ՟ն սուր 'ի սոցանէ մարդասէր և անոխակալ . և քեզ փառք յա՟մ ։ Եւ լուաւ տ՟ր աղօթից ն՟ց , և դարձոյց զարքայն պարսից անդրէն յերկիր իւր . քանզի եհաս առ նա պատգամ սպառնալեաց 'ի կայսերէ անտի հռովմայեցւոց՝ յոր ապաւինեալ էր արքայն Հայոց . վ՟յ և ոչ իշխեաց Թագաւորն պարսից զդէմ ունել Հայոց և հռովմայեցւոց միանգամայն . և այնպէս եղև խաղաղութ՟ աշխ՟ին . ընդ որ ուրախ եղեն սր՟քն՝ որ 'ի լերին անդ . և գոհանալով փառաւոր առնէին զա՟ծ :

Եւ եղև երբեմն խորհուրդ 'ի մէջ սր՟ցն՝ իջանել 'ի լեռնէ անտի , և քարոզել մերձաւոր բնակչաց ն՟ցին զլոյս ա՟ծգիտութե , քանդելով նախ զբագինս՝ որ 'ի բագուան մօտ 'ի լեառն բնակութ՟ե իւրեանց (5) : Իսկ սր՟բն սուքիաս՝ որ երիցագոյնն էր 'ի ն՟ս և ծերագոյն , ասէ . խնդրեսցուք 'ի տ՟նէ , զի եկեսցէ այլ մշակ զօրաւոր քան զմեզ , և նա կործանեսցէ զմեհեանս կռոց , և դարձուսցէ զն՟ս զայս ողջոյն 'ի մոլորութ՟է 'ի ճշմարտութ՟ի : Եւ զի ամենեցուն խորհուրդ և բան յառաջ դայր 'ի փափաքանաց վ՟ն վկայելոյ ճշմարտութ՟ե , ելից ա՟ծ զբարի տենչ սրտից նոցա : Քանզի տեսիլ երևեցաւ 'ի գիշերի միում 'ի սր՟ց անտի , որ կոչէր պողոքտէս , և յարուցեալ պատմեաց ընկերացն . տեսանէի ասէ յայսմ գիշերի , զի առիւծ մի ելանէր 'ի դրանէն մերմէ յարքունեացն ալանաց , և գայր հասանէր մինչև առ մեզ . և բազում մարտիւք մարտնչէր ը՟ մեզ :

Երբև լուան զայս երանելիքն , ծունր եդեալ կային յաղօթս՝ ասելով . տ՟ր ա՟ծ , որ գիտես զա՟մ, մի՛ զարհուրեցուսցէ զմեզ չար գազանն՝ որ յարձակեալ գայ 'ի վ՟ր ծառայից քոց . տ՟ր մի՛ թողուր զմեզ յօգնականութ՟է քումմէ և 'ի յուսոյդ , որ կարող ես յա՟մի , և մի՛ տար զօրութիւն քո չանց : Ա՟ծ որ ամենագէտդ ես , և ճանաչես զխորս որդւոց մարդկան . տ՟ր դու գիտես , զի քեզ տուաք զանձինս մեր 'ի ծառայութե՟, զի արժանաւորս լիցուք անսուտ խոստմանց քոց՝ որ յաւիտենից ։

Եւ ահա ոչ յետ բազմաց ինչ աւուրց 'ի գըլուխ ելանէր տեսիլն ․ Ք՟զի յորժամ մեռաւ Թագաւորն ալանաց շապուհ անուն, որ ծանօթն էր սրբ՟յն սուքիասայ և ընկերաց նորա, յաջորդեաց 'ի Թագաւորութե՟ ալանաց գիգիանոս կամ դատիանոս անուն ․ որոյ համար արարեալ զօրավարաց և զօրաց իւրոց առ 'ի գնել 'ի նոսա կարգ նոր, տեղեկացաւ յիւրոցն մ՟ն երանելեացն, թէ գլխաւորք ոմանք յարքունի գնդէն արք քաջք և անուանիք մեկնեալ են բազում ամօք յառաջ ընդ սաթինկան դշխոյի յ՟ն հայոց ․ և անդ մեծաւ տառապանօք և նեղութ՟բ բնակին 'ի ջրաբաշխ լերին յաղագս ք՟նի՝ որ յոյսն իւրեանց կոչի, ոչ հաւանեալք պաշտել զ՟ծս Թ՟րաց ալանաց կ՟մ հայոց ։ Եւ զայս պատմեցին արքայի ոմանք յալանաց, որք երթևեկս ունէին յ՟ն հայոց ․ և յետ մահուանն սաթինկան բարեկամացեալ էին ը՟ որդիս ն՟ր, և հարցափորձի՛ տեղեկացեալ էին յաղագս ս՟ց արանցն՝ որ 'ի լերին ․ և մանաւանդ ոմն 'ի նախարարաց սկուհեր կ՟մ օկոհեր անուն,

որ քաջ գիտակ էր իրացն ։

Յայնժամ ընտրեաց Թագաւորն 'ի զօրաց իւրոց զարս կորովիս սպառազէնս, և առաքեաց 'ի հայս հանդերձ լրտեսօքն, և զօրավարաւ՝ որում անուն էր բառլահա կ՟մ բառլախայէլ, տուեալ և գիր յանուանէ՝ խնդրել զեկեալսն անդր 'ի դրանէն ալանաց ․ և եթէ գտանիցէք ասէ , բազում պարգևօք հաւանեցուցէք գալ այսր · ապա եթէ ոչ հաւանին գալ , 'ի սուր սուսերի մաշեսջիք առ հասարակ ։ Եւ եկեալ արանցն յերկիրն հայոց (6) , և առաջնորդութբ՟ տեղեկագունից ոմանց հասեալ 'ի լեառն Ջրաբաշխ , որ և սուկաւէտ , ուր բնակութիւն սբ՟ցն էր , տեսին 'ի հեռաստանէ զերանելիսն , և զարմացան · զի որպ՟ զոչխարս՝ խոտով կերակրեին , և անձինք նց՟ իբրև քօշս գիսաւորս երևէին , կմ՟ որպ՟ քարինս՝ յորոց վր՟ բուսեալ իցէ մամուռ ։

Ապա յառաջ մատուցեալ՝ խօսել սկսաւ զօրավարն հիացմամբ , և ասէ · զի՞նչ էք դուք , և զի՞նչ գործ է ձեր · զի պատկերք ձեր իբրև զմարդոյ են , և խոտաճարակ տեսանեմ զձեզ իբրև զոչխարս ։ Պատասխանի ետ սբ՟ն սուքիաս , և ասէ · բնութբ՟ մարդիկ եմք · և ազգաւ յալանաց յարքունի դրանէ · և փախուցեալք յամպարշտու՟է և յանա՟ծու՟է մեկուսացաք 'ի լերինս · և 'ի վերին զօրու՟է զօրացեալ կամք այսպէս՝ յաղագս յուսոյն յաւիտենից , զոր խոստացաւ տ՟րն մեր և ա՟ծն ։ Իսկ բառլահա ասէ · տեղիքս ձմակային են , և ձիւն բազում 'ի լերինս · զիա՞րդ կարէք աստ բնակել այսպիսի կենօք ։ Առ այս ասէ սբ՟ն · լո՛ւր ինձ որդեակ , և ասեմ քեզ · որ հաւատայ յա՟ծ յարարիչն երկնի և երկրի , ա՟մ ինչ ը՟ կամաց ն՟ր փոփոխի՝ որպէս և կամի՝ առ ծառայս իւր և փառաւորիչս անուան իւրոյ · և արդ մեք գտաք զո-

զորմութ՟ի յա՟յ , և սիրեցաք զնա յա՟մ սրտէ մերմէ , և յոյս մեր 'ի տ՟ր ա՟ծ է ։

Ասէ բառլահա ․ յորմէ՞ տոհմէ ես , և զի՞նչ անուն է քո ։ Ա՟ն ասէ ․ յերկրորդական դահէն թագակից էի արքայի ․ և անուն իմ յ՟վ առաջնումն բարաքադրայ (7) ․ բայց յորժամ եկի ես 'ի գիտութ՟ի ա՟յ , սուքիաս անուանեցայ ․ ք՟ս խաղաղական կեանս ստացայ ։ Ասէ զօրավարն․ պատերազմող այր երևիս ։ Եւ երանելին ասէ․ նիզակակից իսկ էի շահոյ արքայիդ ալանայ ։ Յայնժամ ասէ զօրավարն ․ և արդ ա՛զէ հաւանեա՛ց ինձ , և ե՛կ դարձի՛ր յառաջին պատուի՛ն , և նստցիս յերկրորդական գահին ․ և փառօք և հանգստեամբ անցուսցես զաւուրս ծերութե՟դ ։ Իսկ երանելին ասէ ․ մշա՛կ եմ տ՟ն իմոյ , և ժամանակ է վարձս առնլոյ ․ և զիա՞րդ 'ի յետին ժամուս ունայնաձեռն յետս դարձայց 'ի նմանէ ։ Ասէ զօրավարն , յայտ իսկ է տ՟ր քո , որում ծառայեսդ ․ ո՞չ ապաքէն զխաչեալն ասես տ՟ր քո ։ Ա՟ն ասէ ․ այո՛ յայտ է տ՟րն իմ (8) ։ Զօրավարն ասէ ․ զազատութ՟ի՟ն թողեր , և 'ի մշակութ՟ի՟ն անկար ։ Ասէ երանելին ․ եթէ գիտէիր զտ՟րն իմ , և դու 'ի մշակութ՟ի՟ս յայս անկանէիր ․ զի առնուիր զանապական կեանսն ։ Իսկ բառլահայ քամահէր զբանս ն՟ր՟ն՝ բազում սպառնալեօք սաստէր 'ի վ՟ր ն՟ր ։

Յայնժամ իբրև գիտաց երանելին սուքիաս զմիտս բռնաւորին , ժողովեաց զեղբարսն , և ասէ ․ եկա՛յք եղբա՛րք իմ , զի ժամանակ է եհաս կատարման և վարձս առնլոյ ։ Եւ ն՟ց խնդութ՟ լցեալ՝ ուրախ լինէին մեծապէս, և փառաւոր առնէին զա՟ծ ։ Եւ տեսեալ զօրավարին զն՟մ ժողովեալ 'ի մի վայր՝ բզ՟մ ողոքանօք պարգևս խոստանայր տալ նոցա, եթէ հաւանեալք ասէ դարձջիք յա՟ծ ձեր, և կացջիք 'ի կրօնս հայրենի, և յառաջին բարձս ։ Պատասխանի ետուն միաբան սր՟բքն, և ասեն ․ պարգևատուն մեր ա՟ծ է, որ տայ ըզպարգևս անմահութ՟ե ․ որ և ազատեաց ըզմեզ 'ի սատանայէ և 'ի գործոց ն՟ր ․ պարգևք քո ը՟ քեզ լիցին 'ի կորուստ, զոր խոստանաս տալ մեզ 'ի թագաւորէն ․ զի արքանեակք չարին էք դու և թագաւորն քո ․ մեք պարգևացն ա՟յ ակնունիմք, որ յոյսն է մեր ։ Ասէ բռնաւորն ․ ո՞ւր է պարգևատուն ձեր ։ Ասեն երանելիքն ․ պարգևատուն մեր ա՟ծ՝ է ա՟մ յա՟մի, այն՝ որ արար զերկինս և զերկիր և զա՟մ որ 'ի ն՟մ արարածք իցեն ․ նա է տ՟ր մեր և թագաւոր, որ ունի իշխանութ՟ի կենաց և մահու ա՟մ կենդանեաց ․ յորմէ երկինք դողան, և երկիր սարսէ 'ի բանէ ն՟ր ․ որ հրաման տայ ծովու, և ցամաքեցուցանէ զնա ․ սաստէ գետոց, և անդրէն դառնան ․ և ոչ ևս յաւելուցուն 'ի ծածկել զերկիր ։ Նոյն ինքն սաստեսցէ և 'ի քեզ և 'ի խորհրդակիցն քո սատանայ ․ և մի եղիցին կամք քո 'ի վ՟ր ծառայիցս ա՟յ ։

Զայս իբրև լուաւ բռնաւորն, զայրանայր 'ի վ՟ր ն՟ց, և կրճտէր զատամունս իւր ․ այլ թոյլ տուեալ ն՟ց առ վայր մի՝ զմտաւ ածէր է̅ իւրսն , եթէ՝ որո՛վ և ո՛րպիսի մահուամբ կորուսցէ զն̅ս : Իսկ երանելիքն իբրև գիտացին , եթէ մերձ է ժամ կատարման իւրեանց , եդեալ ծունր կային յաղօթս , և ասէին այսպէս . Տ̅ր ա̅ծ արարիչ երկնի և երկրի , որ արարեր զա̅մ արարածս յոչնչէ . դու ես ա̅ծ ճշմարիտ՝ հայր տ̅ն մերոյ յ̅ի ք̅ի , որ եկն և մարմնացաւ , և փրկեաց զտիեզերս 'ի ձեռն խաչի իւրոյ և թաղմանն և յարութե̅ն . և հոգիդ ս̅բ՝ որ լնու զա̅մ արարածս : Իսկ յիշատակեալ մի ըստ միոջէ զերախտիսն ա̅յ առ ազգս մարդկան ստեղծագործութե̅ և վերստին արարչութե̅ փրկագործութե̅՝ ապա ասեն . Իսկ արդ տ̅ր բարերար հայեա՛ց 'ի ծառայքս քո , որք սիրեցաք զքեզ յա̅մ զօրութե̅ , և հաւատացաք անսուտ խոստմանց քոց՝ զոր խոստացար սիրելեաց քոց : Տո՛ւր զօրութի̅ յուսացելոցս 'ի քեզ , և զօրացո՛ զմեզ 'ի պատերազմիս՝ որ վ̅ս անուա՛ն քո ս̅բ̅յ յարուցեալս է 'ի վ̅ր մեր . և սատանայ հանդերձ բռնաւորաւս յամօթ լիցի . և անուն քո փառաւորեսցի 'ի ծառայքս քո : Ա̅ծ գըթութե̅ և տ̅ր ողորմութե̅ նայեա՛ց 'ի յուսացեալքս և յապաւինեալքս 'ի քեզ . և մի՛ քակեսցէ թշնամին զբանական հօտս քո 'ի գաթէ քումմէ . ցածո՛ տ̅ր զմրրկեալ ալիս՝ որ յարուցեալ է 'ի վ̅ր մեր . զի ժամանեսցուք 'ի նաւահանգիստն խաղաղութե̅ . տո՛ւր զօրութի̅ ծառայից քոց յուսացելոց , զի յաղթեսցուք յաղթօղ զօրութե̅ քով . և մի՛ լիցուք ո̅պ̅ զտունն զայն՝ որ 'ի վ̅ր աւազոյն՝ զոր կործանեցին հողմք և անձրևք փորձութ՟եց . այլ հաստատուն պահեա զմեզ 'ի վ՟մ վիմիդ հաստատնոյ ք՟սի տ՟ն յուսոյդ մերոյ : Հայեա՛ց տ՟ր բարերարութ՟բ քո 'ի յուսացեալ ծառայքս քո, և տո՛ւր զնշան յաղթութ՟ե քո ապաւինելոցս 'ի քեզ . զի զտեալ և պարզեալ լիցուք 'ի պատերազմի բռնաւորին՝ որ նեղէ զմեզ . մի՛ խառնեսցէ 'ի մեզ որոմն դառնութ՟ե բանիւք խորովք պատրողին, և ապականեսցէ զցորեանն՝ զոր յա՟ծային շտեմարանաց ժողովելոց ես . և մի՛ բուսցի յայգիս մեր՝ որ յանուն քո՝ գաղձն փշաստակար, և ապականեսցէ զողկոյզն օրհնութ՟ե՝ զոր ընուս 'ի հնձանսն յաւիտենական : Մի՛ տար 'ի սասանութ՟ի զոտս մեր, այլ ամրացո՛ աջովդ քո . և աներկիւղ պահեա՛ յերևելի և յաներևոյթ թշնամւոյն . և տո՛ւր փառս անուա՛ն քում տ՟ր : Եւ տասցեալ զամենն՝ զօրացեալք լինելին 'ի վերին օգնականութ՟էն, և 'ի տեսչութ՟էն՝ զոր ընկալան երանելիքն անպատում խնդութ՟բ յոգիս իւրեանց : Եւ անդրէն յաղօթս դառնային գոհութ՟բ՝ ասելով . Գոհանամք զքէն տ՟ր, որ դարձուցեր զմեզ յանա՟ծութ՟է յա՟ծգիտութ՟ի . զի խաւարեալ էաք, և լուսաւորեցեր զմեզ լուսով գիտութ՟ե քո . և զկապեալքս արձակեցեր 'ի կապանաց բանսարկուին . և զի էաք 'ի խաւարի և 'ի ստուերս մահու, նշանեցաւ առ մեզ լոյս երեսաց քոց, և լուսաւոր արար զմեզ՝ առաջնորդելով գնալ 'ի ճանապարհս իրաւանց և արդարութ՟ե քո տ՟ր :

Նու արդ լո՛ւր տ՟ր եւ նայեա՛ց յաղօթս ծառայից քոց, եւ մի՛ տար տեղի սատանայի. այլ զօրացո՛ զմեզ զօրութ՟բ ս՟բ հոգւոյդ, որ առաջնորդեցեր մեզ 'ի տեղիս յայս եւ 'ի ժամս. զի կատարեսցուք զընթացս մեր արդարութ՟բ շնորհօք եւ մարդասիրութ՟բ տ՟ն մերոյ. զի փառաւորեսցի անուն քո ս՟բ, տ՟ր տ՟ծ մեր:

Լուր տ՟ր աղօթից մերոց, որպէս լուար աղօթիցն հեղիասու, որ եղեւ 'ի լերինն փախուցեալ 'ի յեզաբելայ. նոյնպ՟ս եւ մեք եմք փախուցեալք յամպարիշտ թագաւորացն, եւ զերծեալք 'ի ցանկութ՟եց աշխ՟ս 'ի լեառնս յայս, անդադար օրհնութ՟բք զքեզ միայն փառաւորել 'ի վ՟ր անպատում շնորհացդ քոց, զոր ծանուցեր մեզ տ՟ր: Լուր տ՟ր աղօթից ծառայից քոց յուսացելոց, որպ՟ս լուար աղօթիցն դանիէլի եւ շուշանայ, փրկելով 'ի գբոյ առիւծուցն զդանիէլ, եւ զշուշան 'ի դառն ծերոցն. եւ չարամահ սատակեցեր զ'ի վ՟ր յարուցեալսն. եւ այժմ փրկեա՛ եւ զօրացո՛ զմեզ 'ի սէր տ՟ծութ՟եդ քո՝ յաղթել թշնամւոյն. որ տ՟րդ ես եւ տ՟ծ:

Լուր տ՟ր աղօթից մերոց, որպ՟ս լուար եսայեայ եւ եզեկիայ, որք յուսացան 'ի քեզ, եւ արտասուօք խնդրեցին զօգնութ՟ի առ թշնամին. որ կործանեցեր զթշնամին հպարտացեալս եւ 'ի վ՟ր յարուցեալս. եւ այժմ զօրացո՛ զմեզ յաղթել թշնամւոյն. եւ պարսպեա՛ աջովդ քո. զի մի՛ ոք վարատեսցի 'ի մէնջ, եւ զրկեսցի 'ի խոստացեալ բարեացդ քոց՝ տ՟ր տ՟ծ մեր: Լուր տ՟ր աղօթից մերոց, որպ՟ս լուար աղօթից երից մանկանցն 'ի հնոցին . որ զԹագաւորին արհամարհեցին զբանն , և զքո բանդ պահեցին . և օրհնէին զքեզ տ̃ր ա̃ծ հարցն մերոց . լո՛ւր տ̃ր և մեզ յուսացելոցս 'ի զօրութ̃ի քո , և ապրեցո՛ 'ի փորձութ̃էս՝ որ վառեալս է զմեօք . զի արժանաւորք լիցուք փառաւորել զամենասբ̃ զերրորդութ̃իդ այժմ և յաւիտեանս յաւիտենից . ամէն ։

Իսկ բնաւորն զարմանայր ը̃ն երանելեացն աղօթս . և ձանձրացեալ ը̃ն անդադարելի օրհնութ̃իս ն̃ց՝ սաստէր լռել այնուհետև ։ Այլ ն̃ք աղաչելով ասեն . անսա՛ մեզ , զի կացցուք յաղօթս երրորդ անգամ առ տ̃ր ա̃ծ մեր . և ապա կատարեսցես զկամս քո ։ Եւ սկսան անդրէն միաբան ասել երանելիքն . Քո՛ եմք տ̃ր , և 'ի քեզ եմք յուսացեալ . և առաջի քո անկանիմք . տո՛ւր մեզ տ̃ր կատարել զը̃նթացս մեր նեղուե̃ ը̃ն կամաց քոց . և արժանաւորեա՛ զմեզ մեռանել վ̃ն անուանդ քում ս̃բյ , և առնուլ վարձս ը̃ն այնոսիկ՝ որք հաճոյ եղեն քեզ . և փառաւորեցաւ անուն քո ս̃բ 'ի նոսա . և եղեն վկայք ա̃ծութ̃ե քո կամաւոր մահուամբն իւրեանց . և թագաւորեալք և պսակեալք 'ի քո փառսդ՝ վայելեսցեն յանպատում և յանանց կեանսդ . զոր ակն ոչ ետես , և ունկն ոչ լուաւ , զոր պատրաստեցեր սիրելեաց քոց ։ Փութամք տ̃ր ելանել 'ի մարմնոյս , և խառնիլ 'ի դունդս վկայից քոց (ս̃բց ոսկեանց) , որք զմեզ լուսաւորեցին լուսով

ա̃ծութե̃դ քո. և՝ առաջնորդեցին մեզ 'ի վերինդ եդէմ, ուր ժողովեցես զա̃մ զս̃բսն և զսիրելիսն քո. զի քո է փառաւորութի̃, և քեզ մատուցանեմք գոհութ̃ զփառս այժմ
և յանզրաւ յաւիտենին:

Եւ յարուցեալ յաղօթիցն՝ եկին յանդիման եղեն բռնաւորին, և ասեն. արդ կատարեա՛ զհրամանս թագաւորին քո, և զխորհրդակցին ձերոյ սատանայի. զի մեք կազմ և պատրաստ եմք մեռանել քաջութ̃բ վ̃ն անուա՛ն տ̃ն մերոյ յ̃սի ք̃սի: Իսկ բռնաւորն կարի յոյժ զարմացեալ և զայրացեալ ը̃ համարձակութի̃ն երանելեացն՝ հրաման ետ զօրացն կապել զն̃ս, և տանջել բրովք. յետ այնորիկ ետ միոյ միոյ 'ի նոցանէ չորս ցիցս հարկանել, և պրկել զն̃ս. և հրամայեաց լապտերս և ջահս բերել, և մատուցանել 'ի ներքուստ 'ի մարմինս ն̃ց. ասէ. կիզմամբ հրոյ այրեցից, և կատարեցից զհրամանս թագաւորին, եթէ ոչ կամեսջիք գալ ընդ իս, և պատի՛ւս ընդունել 'ի թագաւորէն: Կարծէր բառլահա այսուի՛կ զարհուրեցուցանել զերանելիսն. այլ առաւել ևս տեսանէր համարձակեալս զն̃ս 'ի տանջանսն. զի ն̃ք ամենեւին առ ոչինչ համարեցան զայրեցումն մարմնոցն, և զկսկիծ ոսկերաց իւրեանց. այլ ուրախութեամբ օրհնէին զա̃ծ, և սաղմոսէին ասելով. Ա̃ծ յօգնել մեզ նայեա՛ց, և տէր յընկերել մեզ փութա՛. և՝ տ̃ր 'ի նեղութե̃ յիշեցաք զքեզ. քո առատ ողորմութի̃դ մխիթարեսցէ զմեզ: Զայս ասէր երանելին սուքիաս . և նմին ձայնակից լինէին եղբարքն . և արիաբար ը՟ունէին ըզտանջանսն : Դարձեալ զայրանայր բռնաւորն ը՟ փառաբանութ՟ի ա՟յ , և ը՟ սքանչելի համբերութ՟ի քաջ նահատակացն . զի ոչինչ համարէին զտանջանսն : Հրամայեաց ապա գայլ 'ի բերան նո՟ց հարկանել , զի մի՛ կարասցեն աղօթել , և կ՟մ օրհնել զա՟ծ :

Իսկ ս՟ն կոդրատոս անփոյթ արարե՟լ զայնոսիկ՝ առաջնորդէր ամենեցուն յաղօթս (որչափ և կարող լինէր բարբառել) , սկիզբն առնելով սաղմոսիւ . Որպէս փափաքէ եղջերու յաղբերս ջուրց , այնպէս փափաքեն անձինք մեր առ քեզ ա՟ծ մեր : Ասէ բռնաւորն . զի՛նչ են եղջերուքն՝ որ փափաքեն յաղբիւրս . որոց նման փափաքեն անձինք ձեր :

Եւ ս՟ն կոդրատոս ասէ . որպէս նոքա հարեալք յորսորդաց՝ տապանան , և փութան զովացուցանել զինքեանս ջրով . նոյնպէս և մեք եմք փափագօղք ջրոյն կենդանութեան խաղացելոյն 'ի կեանսն յաւիտենից , ապրեալք յորոգայթից սատանայի . վ՟ն զի ծարաւեալ եմք հանապազ ա՟յ մերոյ հզօրի և կենդանւոյ . և ձեպիմք ելանել 'ի մարմնոյս , և հասանել առ բաղձալին մեր ք՟ս , առ որ անձկացեալն եմք : (9)

Յայնժամ հրամայեաց բառլահա լուծանել զնո՟ 'ի չարաչար և 'ի դառն տանջանաց՝ խանձողեալ մարմնով . և ասէ . փութով տաց ձեզ հասանել փափաքանաց ձերոց՝ սրախողխող կո-

կորուսանելով զամենեսին զձեզ 'ի կենաց այտի, որում ոչ էք արժանի:

Եւ իբրև գիտացին սոքա, եթէ եհաս ժամ կատարման իւրեանց, անդրէն ուրախութբ մեծաւ ծունր եդեալ կային յաղօթս միաբան, և ասէին. Տր ած զօրութենց, որ արժանաւորս արարեր զմեզ կատարել զընթացս մեր անարատութբ 'ի փառս ամենասբ երրորդութենդ. լո՛ւր տէր աղօթից մերոց, և զօրացո՛ զմեզ զօրութբ սբ հոգւոյդ 'ի ժամ կատարմանս. և աներկիւղ պահեա՛ զմեզ 'ի պատրանաց բանսարկուին և յահէ բռնաւորիս. և շնորհեա՛ ամենեցուն ճշմարիտ խոստովանութբ վկայել, և ամենեցուն պսակս ընդունել և վայելել յանպատում 'ի կեանդ: Լո՛ւր տր աղօթից մերոց, և գթա՛ յերկիրս հայոց Տէր. զի դարձցին յերկրպագութիւն և 'ի փառաբանութի ամենասբ երրորդութե. զի քո՛ են արարածք. և քեզ վայելէ երկրպագութի և փառք յամ արարածոց տր ած մեր: Լո՛ւր տր աղօթից ծառայիցս քոց 'ի քեզ յուսացելոցս. զի ուր հեղցի արիւն վկայիցս, եղիցի հող երկրին 'ի բժշկութիւն ամ ցաւագնելոց. և զի բղխեսցէ երկիրս աղբիւր առ 'ի բժշկութի ամ ցաւոց. զի եթէ եկեսցէ ոք յանուն մեր բարեխօսութե՝ հանդերձ հաւատով, կմ ցաւած, կամ տագնապեալ 'ի սարսռոյ, կմ այսահարեալ յայսոց պղծոց, կմ վշտագնեալ 'ի բազում ցաւոց, և աղաչեսցեն զքեզ տէր ած 'ի տեղւոջ զենմանս մերոյ, դու լուիցես և ողորմեսցիս նոցա , և փրկեսցե՛ս յա՟մ նեղու՟է , և բժշկեսցե՛ս յա՟մ վտանգից հոգւոյ և մարմնոյ . զի դու կարօղ ես յա՟մի . և քեզ փառք յաւիտեանս յաւիտենից . ամէն ։

Յայնժամ ձայն եղև յերկնից առ նոսա , և ասէ . զոր ինչ միանգամ խնդրեցիք , տացի ձեզ . և եղիցի տեղի վկայութ՟ե ձերոյ աղբիւր ջրոյ բժշկութ՟ե , և հող երկրիդ 'ի փարատումն բազում ցաւոց՝ իբրև ը՟ երեք հարիւր վաթսուն և հինգ աւուրց ժամանակաց , որով վարի ձս . և դուք եկա՛յք 'ի պատրաստեալ ձեզ օթևանս , և ընկալջիք 'ի բազում աշխատու՟եցդ հանգիստ , և ուրախու՟ի և պսակ փառաց՝ զոր կազմեցիք ձեզ բազում ճգնութ՟բ , յանվախճան յաւիտեանս ։

Եւ զայս լուե՛ալ սրբ՟ցն , և զօրացեալ 'ի վերին շնորհացն՝ կնքեցին զանձինս նշանաւ ս՟բ խաչին , և դիմեցին յօժարութ՟բ 'ի մահ առ դահճս բռնաւորին՝ իբրև զոչխարս 'ի զենումն . որոց սուր 'ի վ՟ր եդեալ անօրինաց՝ կոտորեցին , իբրև գայլք զգառինս պատառելով . և նոքա ողջունեալք 'ի հրեշտակաց՝ աւանդեցին զոգիս իւրեանց՝ բարի խոստովանութ՟բ 'ի հայր և յորդի և 'ի ս՟բ հոգին , որ օր եօթնևտասն էր նաւասարդի ամսոյ , յամի տ՟ն իբր 130 , կ՟մ 140 , յետ կալոյ իւրեանց 'ի սուկաւէտ լերինն ամս քառասուն և չորս անտանելի ճգնութ՟բ , կերակրեալք ոչ հացի՛ւ , այլ զօրութ՟բ և շնորհօք տ՟ն՝ խոստաբուտ կենօք ։ Եւ այսպէս վկայեալ քաջ նահատակացն՝ առին զպսակն յաղթութ՟են 'ի

ք՟նէ՝

քան՝ անձինք վեշտասան կամ եօթնևտասան ։ Իսկ զօրավարին ալանաց յետ սպանանելոյ զսբ՟սն՝ հրաման ետ զօրաց իւրոց վ՟ս մարմնոց նց՟, և բարձեալ ընկեցին 'ի վիհս վիհս՝ կարկառ քարանց 'ի վ՟ր կուտեալ ․ և ինքն 'ի վաղիւ՞ անդր չու արար, և գնաց յճ՟ իւր ․ և պատմեաց թագաւորին զա՟մն ։

Բայց երկուք ոմանք 'ի խմբէ անտի սբ՟ց սուքիասանց, (որոց անուանք երևին լինել յակոբ և թէոդոսիոս,) որք կրտսերագոյնքն էին 'ի նս՟ և տկարագոյնք, ոչ բերելով զահ սրոյն խողխողմանն՝ 'ի վերջին պահու անդ կատարմանն փախուցեալք ծածկեցան 'ի խորշս լերինն ․ և յետ աւուրց ինչ դարձեալ անդրէն սրտցաւութ՟բ 'ի տեղին՝ գէթ ամփոփել զնշխարս սբ՟ց հարց և ընկերաց իւրեանց, գտանէին և ոչ զոք ․ բայց զտեղի կատարմանն գտեալ 'ի նշանաց արեան վկայից՝ ծածկեցին հողով զնուիրական արիւնս նց՟, և արձան քարի նշան կանգնեցին 'ի վ՟ր իւրաքանչիւր տեղեացն ։

Եւ ինքեանք այնուհետև ոչ իշխեցեալ մնալ 'ի տեղւոջն՝ իջին յարևմուտս կոյս 'ի հարաւոյ կողմանէ առ ստորոտով լերինն ․ և գտեալ տեղի բարեխառն մօտ 'ի դաշտաբերանն, յորում բղխէին աղբիւրք ոչ սակաւք հանդէպ հարաւոյ, անդ դադարեալ նստան՝ հայելով 'ի տեղւոյն բարետեսութ՟ն ․ ապա և արգելանոցս իւրեանց արարին գետնափոս դարիւք, և բնակեցան բազում ապաշաւանօք և կատարեալ ճգնութ՟բ մինչև յոր կատարման իւրեանց : Որս և գտեալ անդէորդաց ոմանց վախճանեալս՝ առեալ ծածկեցին 'ի նոյն դարափոս, կարծելով լինել իբրև զհիւանդոտս հալածեալս յ՟նէ : Այն է տեղին, առ որով յետ փոքր ինչ ժամանակի աւան մեծ շինեաց վաղարշ Թագաւոր հայոց՝ վաղարշակերտ յանուն իւր կոչեցե՟լ (ռամկօրէն՝ ալաշկերտ) . և անդ բնակեցուցանէր զորդի իւր զխոսրով սակս տեղւոյն բարեխառնութ՟ե :

Իսկ մարմինք ընկերաց սոցա ս՟բ նահատակաց սուքիասանց քօշից մնացին 'ի վերս անդ ջրաբաշխ լերինն սուկաւէտ կոչեցելոյ, մինչև 'ի ժամանակս լուսաւորութ՟ե ազգին հայոց 'ի ձեռն ս՟բյն գրիգորի լուսաւորչին . որոյ գնացեալ 'ի տեղին ազդեցութ՟ ս՟բ հոգւոյն՝ շինեաց վկայարան 'ի վ՟ր ն՟ց . և կարգեաց առաջին վանաց երէց զոմն յաշակերտաց իւրոց՝ աբաս անուն (10) : Այլ ասի յայլոց, թէ կոստանդիանոս կայսրն հրաման առե՟լ 'ի հրեշտակէն՝ եկն եգիտ զնշխարս ս՟բց սուքիասանց անարատ 'ի սուկաւէտ լերին . և տախտակ մի՝ յորում գրեալ էին անուանք ն՟ց . և ամփոփեալ զնոսա պատուով՝ տարաւ ասեն ը՟ իւր մասն ինչ յիւրաքանչիւր նշխարաց, ո՟պ և 'ի հողոյ երկրին՝ յոր ս՟բ արիւնք նոցա հեղեալ էին :

Եւ զայս ա՟մ՟ ը՟ վկայելոյ ճառընտրաց՝ 'ի գիր անցոյց անտոն ոմն անապատական 'ի հռոմայ . Թերևս եկեալ յարևելս ընդ այլ հռովմայեցիս յաւուրս փոխադրութ՟ե կայսե-

րա

րական աթոռոյն 'ի կոստանդինուպօլիս․ և կամ գուցէ իցէ սրբոյն անտոն ընկերին կրօնիգեայ՝ 'ի հրամանէ սրբոյ լուսաւորչին առաջին գրիչ վարուց սոցա, առեալ 'ի գրաւոր և յանգիր աւանդութեանց ։ Եւ կարի քաջ հաւաստի երևի, թէ նախկին պատմօղ և յայտարար վարուց և վկայաբանութեան սրբոցս՝ եղեն երկոքին այն ընկերք նոցա, որք մնացին 'ի նոցանէ․ և անշուշտ աւանդեցին զայն ոմանց 'ի հաւատացելոց կամ յաշակերտելոց, եթէ գրով և եթէ բանիւ․ յորոց էառ և անտոնն այն անապատաւոր հռովմայեցի, և կամ հռոմ, որ թարգմանի հռովմայեցի ։

Այլ 'ի տեղլի վկայութեան սրբոց սուքիասանց՝ ընդ խնդրելոյ նոցա 'ի տեառնէ՝ բղխեաց սքանչելի աղբիւր բժշկութեան 'ի փարատումն ամենայն ցաւոց․ յոր 'ի ժամանակս քրիստոնէութեան դիմէին բազմութիւնք ախտաժետաց իբրև յաւազանն պրոբատիկէ կամ 'ի սելովամ․ և գտանէին հաւատով զառողջութիւն ։ Եւ որպէս որ 'ի պրոբատիկէն անկեալ դնէին, ակն ունէին ըստ ժամանակին ջրոյն յուզման, նոյնպէս և 'ի սքանչելի աղբիւր անդ․ երևէր առատութիւն և նուազութիւն ընդ ժամանակին․ զի ամի ամի յաւուր տօնի սրբոցն առատանայր, կամ իբր նոր բղխէր վերստին․ և այնմ սպասէին նեղեալքն 'ի պէսպէս ախտից, մանաւանդ բորոտք և պիսակոտք․ և ընդունէին զբժշկութիւն ընդ հաւատոց իւրեանց՝ զօրաւոր բարեխօսութեամբ սրբոց սուքիասանց, 'ի փառս սքանչելարար փրկչին․ որ սքանչելին է 'ի սուրբս իւր ։

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ·

(1) 'Ի հին տօնացոյցս առ հասարակ, որպէս և 'ի Ծ. և 'ի Հ. պարզապէս դնի լոկ * Սուքիասանց ||, կամ * սրբոց սուքիասանց ||: միայն 'ի նոր օրինակս ինչ՝ յորոց առեալ են և տպագիրք, յաւելեալ կայ և պատահական կոչումն նոցա քօշ, այսպէս. * սուքիասանց քօշից ||. այլ պա՛րտ էր պահել զհետս հնութեան:

(2) Աղբիւր վկայաբանութեանս որ 'ի ճառընտիրս ըստ աւանդութեան անտոնի նախկին գրչի, պահի յստակութեամբ և 'ի Հ. զնոյն ընթերցեալ է և քաղեալ նաև յովհ. կաթ. վասնորոյ չիք մեզ տեղի տարակուսելոյ ընդ հնութեան: Միայն օրինակագիրք ճառընտրաց, որպէս և յովհաննէս կաթուղիկոս մեծապէս սխալեն 'ի ժամանակագրութեան՝ շփոթելով զանուն թագաւորին ալանաց ընդ համանուն արքային պարսից. և նոյն վրիպակ եմուտ և առ ոմանս 'ի յետնոց: Այլ պա՛րտ է մեզ ուղղագրել զճառընտիրս՝ բանիւ նոյն իսկ ճառընտրաց. ուր նախ գրի այսպէս. * Բնակեցան (սուքիասանք) 'ի սուկաւէտ լերինն . . . ,, յամս (այսինքն մինչև յամս) շապհոյ թագաւորի. քանզի ,, և երկիրն հայոց յետ ամաց աւերեալ լինէր. զի թագաւոր ոչ ունէին. քանզի սպանեալ էր զարտաւան ,, որդի վաղարշու և զխոսրով թագաւորն հայոց թագաւորն պարսից. և 'ի նախանձ մտեալ հայրենի վրէժուցն այնուհետև կամէր կորուսանել զերկիրն հայոց. ,, ասէր. անցեալ աւերեցից զերկիրն, և վրէժ առից ,, ըստ սովորութեան հայրենեացն: Այնուհետև զօրս ,, գումարեալ յամենայն՝ ջանայր այնուհետև վիպան առնել ,, և խոպանացուցանել զերկիրն հայոց ||. եւն: Ուր որպէս տեսանես՝ կարծելով գրչին, թէ շապուհ թագաւոր յիշատակեալ 'ի նախկին վկայաբանութեան (որոյ բանն էր զարքայէն ալանաց,) իցէ երևելին շապուհ արքայ պարսից որդի արտաշրի սասանեան, ըստ նմին յառաջ բերէ և զթագաւորս հայոց եղեալս առ արտաւանաւ և առ արտաշրիւ. և նկարագրէ զվիճակ հայաստանեայց ըստ նմին ժամանակի: Զայսպիսի յայտնի սխալանս ոչ ուշաբերեալ և յովհ. կաթուղիկոսի՝ առաւել պարզաբանելով երկրորդեաց այսպէս. * Եւ վասն զի (ասէ) յետ ամաց ,, բազմաց սպանաւ թագաւորն հայոց խոսրով յանակայ, և անիշխանացաւ երկիրս հայոց, ապա բռնահ-

,, Լոյ ոմն եկեալ յալանաց դրանէ, և 'ի խնդիր ելեալ
,, գրով վկայից, և գտեալ զնս 'ի ջրաբաշխն կոչեցեալ
,, լերինն. և հարց և փորձ արարեալ զնոսա վն 'ի քն
,, հաւատոյն, սուր 'ի վերայ եդեալ կոտորէ ||: որով
յանհնարինս երկարին կեանք սուքիասանց:

Բայց թէ յիրաւի շապուհն այն ոչ էր արքայ պարսից, այլ՝ ալանաց, և այն բազում ամօք յառաջ քան զելս սասանեանց, յայտ է 'ի բանից անտի նոյն ճառընտրաց. ուր պատմի՝ թէ սբն սուքիաս ասաց ցբարլահա. * Նիզակակից էի շապհոյ արքայի ||. արդ յայտ է թէ սբն սուքիաս էր նիզակակից իւրումն արքայի՝ այս ալանաց արքայի. և չկայր ինչ նր ընդ պարսիկս, թող թէ ընդ շապհոյ պարսից արքայի՝ որ յետ դարուց եկն յրդ: Զսոյն հաստատեն և այլ բանք սբյն սուքիասայ ըստ նոյն ճառընտրայ, թէ * բնութբ մարդիկ եմք, և յալանաց դրանէ, յամպարիշտ և յանհծ թագաւորացն փախուցեալք ||. և թէ՝ * յերկրորդական դահէն թագակից էի ||, յայտ է թէ արքային ալանաց շապհոյ: զորմէ ասեն դարձեալ ճառընտիրք. * և յետ ամաց ինչ վախճանեալ էր թագաւորն (շապուհ). և թագաւորեալ գիգիանոս (կամ ըստ Հ. դատիանոս) ալանաց ||. ևն:

Հաստատի ստուգուն բանիս և 'ի ստոյգ ժամանակագրութէ Հ. ուր բացայայտ գրի, թէ ամս խդ. եւթ կացին սուքիասանք 'ի լերինն սուկաւ մինչև 'ի ժամանակս ալանաց թագաւորութն դատիանոսի. որ առաքեաց զբարլահա 'ի նահատակել զսբս. և նոյնչափ ամք խդ. յիշին և 'ի Ճ. միայն թէ չփոթ բանիւ: Ուր ըստ նախագրեալ սխալանաց Ճ. և յովհ. կաթուղիկոսի՝ պարտ էր նց կեալ 'ի լերին անդ ոչ եթէ ամս խդ., այլ աւելի քան զամս ճխդ. զի 'ի սկզբանէ թագաւորութեն արտաշիսի որդւոյ սանատրկոյ՝ որ նստաւ յամի տն 88. և էառ զաթինինիկ 'ի տիկնութն (յորում եկին սուքիասանք 'ի հայս,) մինչև 'ի սպանանելն անակայ զխոսրով, և ցտիրելն արտաշրի 'ի վր հայոց Տին, որ եղև յամի տն. 259. հաշուէին ամք ճհա. և եթէ սբն սուքիաս 'ի դալն 'ի հայս էր դէթ քսանամեայ (թող զաւելին, զի ասի նիզակակից և դահակից արքայի,) 'ի նահատակելն՝ ըստ այդմ հաշուի լինէր իբր երկերիւր ամաց. և զիարդ հրաւիրէր զնա թագաւորն ալանաց դալ 'ի դուռն, և ունել զառաջին պատիւ:

Արդ թողեալ զդայանի վիպսանս՝ ըստ կարգի վկայաբա-

նու

նութեն նահատակուն սուքիասանց լինի յամի տն իբր · 130 · կմ 140 · 'ի հասակի վաթսուն և եօթանասուն, և առ առաւելն' ութսուն ամաց · զի թէ 'ի գալ իւրեանց 'ի հայս ընդ թագուհւոյն' կմ յաւուրս նր յամի տն իբր 90, և որ զկնի, էին 'ի տիս պատանեկութե և երիտասարդութե, և յետ կատարման ոսկեանց յամի տն իբր 107 · կացին 'ի սուկաւէտ լերին ամս խբ, հասակ երիցագունիցն նոցա 'ի նահատակիլն ոչ անցանէ անդր քան զեօթանասուն և քան զութսուն ։

Յայսոսիկ հայեցեալ' նահատակութեն սբցս հաւանականաբար եդաւ 'ի պատմութե հայոց շուրջ զամաւ տն · 130 · այն է նախընթաց ամ տիրանայ արքայի ։ Մարթ է դնել, և գուցէ հաւանականագոյնս' նաև յաւուրս տիրանայ, յամի տն իբր 140 · յորում ժամանակի նստաւ կայսր անտոնինոս պիոս · (թէպէտ և ամք կայսերաց փոքր մի յետևառաջութե տանին ընդ այլ և այլ ժամանակագրաց ·) զի վկայաբանութիւն քաջ 'ի դէպ գայ ժամանակի խռովութեց և պատերազմաց դրդռելոց ընդ տիրան հայոց արքայ, և ընդ պերոզ արքայ պարսից · և յարմար ևս տեսանի այն, զի յանկարծ դադարեաց աղմուկ մարտի' օգնականութբ աղօթից սբց սուքիասանց' ըստ գրելոյ ճառընտրաց · վն զի այդպիսի դադարումն պատերազմի ծին հայոց յիշի և առ արտաքին մատենագիրս · ոպ թէ արտաքին պատճառ դադարման լեալ իցէ անտոնինոս կայսր հռովմայեցւոց' առաքելով սպառնալիս առ արքայն պարսից · ոպ գրէ յուլիոս կապիտոլինոս 'ի վարս անտոնինոսի պիոսի ։ Չիշխեմք հաստատել, բայց կարեմք կասկածել, թէ մի արդեօք և անունն' անտոն անապատաւոր հռովմայեցի, որ առի առաջին գրիչ վկայաբանութես, չփոթեալ իցէ ընդ անուան անտոն ինքնակալի հռովմայեցւոց' պիոս անուն, որ թարգմանի բարեպաշտ · յորոյ աւուրս վկայեցին սուքիասանք ։

Դարձեալ 'ի ճառըն · Բ · 'ի վարս ոսկեանց, յետ պատմելոյ զմահ երկուց միայնակեցաց մնացելոց յընկերաց անտի սուքիասանց' ասի վն տեղւոյ գերեզմանի նոցա · * Բայց յետ փոքր ինչ ժամանակի և 'ի տեղին շինեալ ,, աւան 'ի թագաւորէն վաղարշոյ, անդ զորդի իւր ,, բնակեցուցանէր սակս տեղւոյն բարեխառնութե, վա֊ ,, ղարշակերտ յանուն իւր կոչեցեալ || · Արդ եթէ վաղարշ հայրն խոսրովու յետոյ քան զմահ երկուց ճգնաւորաց շինեաց զվաղարշակերտ, ուր այն ճգնաւորք բազում ամօք յետոյ մեռան քան զկատարումն սուքիասանց, զկնի որոյ հնար էր սուքիասանց կենդանի լինել յաւուրս վաղարշայ և խոսրովու, եւս և յետ մահու նր, և աղօթել վն խաղաղութե այնր ժամանակի։

Եւ գործեալ 'ի Հ. ասի, թէ մարմինք սբց սուքիասանց մնացին 'ի լերինն մինչև ցաւուրս կոստանդիանոսի կամ տրդատայ և լուսաւորչի՝ * ամս ՃԾ և Լ||. արդ եթէ սուքիասանք կենդանի լինէին ցաւուրս խոսրովու, և յետ մահու նր նահատակեալ, զկնի որոյ ՃԾ և Լ ամք անցանէին մինչև ցաւուրս տրդատայ որդւոյ նորին խոսրովու։ Ապա յամ կողմանց յայտ է, թէ վրիպակն ժամանակագրութե Ծ. և յովհ. կաթ. իրաւամբք ուղղագրեցաւ 'ի մէնջ։

(3) Անուանք սրբոցս հասարակօրէն միօրինակ գրին 'ի զանազան օրինակս Ծ. և Հ. թող զգոյզն տարբերութիւնս, զորս չէ հարկ նշանակել. միայն անունս իդիոքսիքիոս, զոր եդաք ըստ Ծառընտ. Ե. տեսանեմք զի 'ի Ծառընտ. Բ. գրի իբր երկու անուն, անդիոք, ուքիոն. և 'ի Հ. սուկ. իւքիւրոն. և ըստ այսմ թիւ սուքիասանց լինի կամ ԺԸ, և կամ ԺԹ. և զի երկուքն ոչ նահատակեցան, թիւ նահատակելոց լինի՝ ԺԶ, կմ ԺԷ. և գուցէ այսպէս պարտ է ընթեռնուլ նաև զգրեալն 'ի Ծ. Բ. * յորոց մն սուր եդեալ կատարեցին իբրև արս Ժ և Ե (գուցէ ասել գրելի էր Ժ և Է)... բայց երկուք ոմանք փախուցեալք ծածկեցան||։ Այլ սխալագրութե տեսանի և 'ի հին օրինակս ինչ Հ. * Մն սուքիասանքս ԻԷ էին. (թերևս՝ ԺԷ). և յաւուր նահատակութե երկուսն փախեան. և ԺԸ (գուցէ ըստ Ծ. կամէր գրել, ԺԵ). նահատակեցան. և այնք՝ որ փախեան, ոչ թէ զքն ուրացան, այլ 'ի սպանմանէն զերծան||։ Այս հատուած 'ի բաց թողեալ է 'ի յետին օրինակս, և 'ի տպ"։ Այլ ուղղագոյն քան զամ գրէ տր իսէլ. * էին սոքա թուով. ԺԹ||։

(4) Հ. ենթադրէ, թէ սուկաւ նշանակիցէ զանպարտ տեղի, յասելն 'ի բերանոյ սբյն սուքիասայ. * եկայք երթիցուք յայլ սուկաւ տեղիս||. որպ թէ նոյնանշան լինել ընդ բառիս հռոմայեցւոց սիքքուս, որ է չոր կմ ցամաք։ Ըստ այսմ լեառն սուկաւ կմ սուկաւէտ լինի կոչեցեալ յանարգաւանդութէն, որպ և է այնպիսի։ Բայց Ծ. և յովհ. կաթ. դնեն, թէ յանուն սբյն սուքիասայ կոչեցեալ իցէ լեառն այնպէս. զի 'ի Ծ. գրի. * բնակեցան 'ի սուկաւէտ լերինն, որ յա-

նուն գլխաւորին նոցա սուքիաս՝ կոչեցաւ սուկաւ ||: Եւ յովհ. կթ. ասէ. * և լեառնն ապա յայնմհետէ յանուն ,, սուքիանոսի գլխաւորի սրբոցն սուկաւ անուանի ||: Յաւելու Հ. * 'ի գաւառն վաղարշակերտու՝ 'ի լերինն , ,, որ այժմ կոչի քոսա տաղ ||. գուցէ արդեօք՝ յանուանէ սուքիասանց քօչ կոչեցելոց , կամի ասել. քանզի վասն այսպիսի մականուանութեան սրբոցս գրէ և յովհ. կաթ. * և ,, ըստ մերկութեան անձանց նոցա 'ի ցօղոյ երկնից դէսս ար- ,, ձակեալ մարմնացն. և 'ի պատահմանէ անտի քօչք ,, անուանեցան ||: Արդ պահեալ զյարգ բանից իւրաքանչիւր մատենագրացս՝ ասելի է, թէ որչափ և յեղյեղեցես զայսոսիկ այլ և այլ ձայնս՝ ունին ինչ միաբանութիւն ընդ միմեանս. զի քօչ կամ քոսա անխտիր մարթի լինել յետադարձութեամբ ծագեալ յանուանէս սուքիաս, կամ սուք, և յաւէտ 'ի յունականէս իսքիոս կամ հիսիւքոս. և դարձեալ քոսա տաղն՝ որ է նոյն ընդ սուկաւ լերին, կարէ նշանակել զանբոյս կամ զկարճաբոյս լեառն. որով և նոյնանայ ընդ նշանակութեանս սուկաւ, կամ սիքքուս. զի է լեառն մերկ 'ի ծառոց, և իբր անդալար և փօս:

(5) Յայսմ տեղւոջ՝ ուր բանն է զխորհրդոյ երանելեացս, պակասաւոր գտանին քանի մի տողք կամ համառօտ ինչ յօրինակս ճառընտրաց մերոց. 'ի միում աւելի, և 'ի միւսում նուազ թերութեամբ. վասն եթէ լրագոյն օրինակ ոք գտանիցէ, գուցէ առաւել ինչ որոշագոյն իմասցի:

Իսկ յաղագս բագնին՝ որ յիշի աստանօր, ունիմք ասել՝ թէ այն է, առ որով թաղեցաւ յետոյ մաժան քրմապետ ըստ պատմութեան խորենացւոյն. նմին իրի և եղբայր նորա տիգրան վերջին՝ արքայ հայոց՝ նորոգեաց և մեծացոյց զբագինն. և արար շուրջ զնովաւ հիւրանոցս. և եղև այն մի 'ի մեծամեծ մեհենաց՝ որ 'ի հայս. այլ թէ անուանս բագուան կամ բագնաց աւան, որ և գիցաւան, 'ի տիգրանայ եղաւ, եթէ կայր և յաւուրս սուքիասանց, խնդրելի է. միայն զայս յայտ առնէ վկայաբանութիւնս՝ թէ կայր անդ բագինն և յառաջ քան զաւուրս տիգրանայ:

(6) Բարւոք գրի 'ի Ձ. Բ. * և եկեալ զօրացն յերկիրն հայոց ||. զի ինքնին տայ իմանալ զզօրս ալանաց ընդ զօրավարին իւրեանց բառլահայ: Ուր 'ի Ձ. Ե. եդեալ է սխալական մեկնութիւն. * և եկեալ զօրացն պարսից ,, յերկիրն հայոց ||. և այս վրիպակ հաստատեալ է յայն չփոթութենէ, որով շապուհ արքայ ալանաց խառնի

ընդ շապհոյ որդւոյ արտաշրի սասանեան․ տես 'ի ծան″․ (2)։

(7) Ծ․ Բ․ բարաքաթա․ իսկ Ե․ բարաքադրայ։ Հ․ բահադրաս․ որ է համառօտեալ՝ թերևս փոխանակ գըրելոյ բարահադրաս։ Այլ 'ի տաղն ոսկեանց յետևառաջութե̃ գնի բահրատաս։ Ոպ̃ և փոխանակ անուան զօրավարին բաւղահա կմ̃ բաւղախայ՝ առ յովհ․ կաթ․ գրի բառահլայ։

(8) Ծ․ Բ․ * Ասէ զօրավարն․ ա՛յդ է քոյ տ̃ր, որում եադ։ Ասէ երանելին․ այն այս է տ̃րն ||։ Իսկ Ե․ * յայս
„ է և տ̃րն քո, որում եադ․․․ այդ յայս է տ̃րն իմ ||։
Արդ մեք ը̃ վերջին օրինակիս բացատրեցաք, ոպ̃ թէ զօրավարն ասէր․ գիտեմ թէ որպիսի տն̃ ծառայեք, տ̃ր կոչելով ձեզ զխաչեալն։ Բայց կարօղ էաք մեկնաբանել և զառաջինն, ոպ̃ թէ զօրավարն խօսիցի հայհոյելով 'ի խաչն կանգնեալ արդեօք մօտ 'ի բնակութեան սբ̃ց, թէ ա՛յդ է (իբր հեգնելով), և կմ̃ ա՞յդ իցէ (հարցանելով)։ Այլ միտ բանին միշտ է նոյն։

(9) Ոպ̃ գեղեցիկ պահի բացատրութի ծարաւու եղջերուոց՝ վերծանելով մեր ը̃ Ճառընտրաց * հարեալք յորսորդաց ||․ նոյնպէս՝ և գուցէ մեկն ևս պահի, եթէ ընթեռնուաք՝ * հարեալք յօձից ||։ Յայս միտ ասէ օգոստինոս 'ի մեկն․ սաղ․ խբ̃․ 1․ * Եղջերուս սպանէ զօձս․
„ և յետ սպանման օձիցն պապակի 'ի ծարաւոյ, և սրա-
„ գոյնս ընթանայ յաղբիւրս։ Օձք են ախտք քո․ ծա-
„ խեա՛ զօձս անզգամութե̃․ յայնժամ ևս քան զեւս փա-
„ փաքեսցես յաղբիւրս ճշմարտութե̃ ||։

(10) Այսպէս աւանդէ բառ առ բառ Ծ․ Բ․ թէ գլուխ նշխարաց սբ̃ց սուքիասանց եղև 'ի ձեռն տ̃ր լուսաւորչին մերոյ․ * Եւ բարձեալ ընկեցին (ասէ՝ զա-
„ հինգ զմարմինս սուքիասանց) 'ի վիհս վիհս, կառկառ-
„ քարանց 'ի վերայ կուտեալ․ և այսպէս կատարեալ
„ սբ̃քն՝ մնացին յայսպիսի թաղման մինչև 'ի ժամանակս
„ մեծին գրիգորի․ զոր իմացեալ ազդեցութե̃ սբ̃ հոգ-
„ ւոյն՝ շինէ վկայարան 'ի վ̃ր նց̃․ և առաջին վանաց ե-
„ րէց թողեալ զաբաս ոմն անուն յիւրոց աշակերտացն ||։
'Ի գնիլ այսր՝ ը̃ որ ոչինչ է մեզ երկուանալի, սակայն կմ̃ տկարանայ միւս պատմութին, ոպ̃ թէ սբ̃ն կոստանդիանոս եկեալ իցէ 'ի հայս, և գտեալ զմարմինս սբ̃ց սուքիասանց․ զի զի՞նչ հարկ կմ̃ զի՞նչ յարմարութի կայցէ յայդմ, ոպ̃ և ամ̃ իրօք քաջայարմար է գործն այն՝ սբ̃յն գրիգորի ը̃ սբ̃յն արդարոյ։ Եւ արդարև՝ որպէս ինձ թուի,

թուի, 'ի պատմելոյ սոցա զայս անցս 'ի տեսութ̅ն ընդ
կոստանդիանոսի՝ վրիպակաւ յետնոց ա̅ր գործողութ̅ն
լեալ է լսօղն փոխանակ ասողին․ և այնպէս է մուծեալ
սխալ պատմութ̅ն 'ի գիրն Դաշանց․ և անտուստ ձեւացեալ
նոր տեսիլ, որ 'ի Ճառընտիրս Բ․ և Ե․ ունի
այսպէս ։

* Տեսիլ կոստանդիանոսի Թագաւորի վասն սուքիասեանցն
,, ||․ կամ, * Տեսիլ կոստանդիանոսի ա̅ծասէր
,, Թագաւորի՝ յաղագս գտանելոյ զնշխարս երանելեացն
,, ||։ և 'ի վ̅ր բերի․ * Տեսանէր 'ի տեսլեան ըզհրեշտակ
,, ա̅յ, զի ասէր․ արի երթ 'ի հայս, 'ի բագրեւանդ
,, գաւառի 'ի սուկաւէտ լեառն վկայք վկայեցին,
,, և բազում ժամանակք են՝ զի անթաղ են նշխարք
,, ն̅ց․ և յայտնեսցէ քեզ ա̅ծ․ և գտանես տախտակս
,, կապարեայ, յորոյ վ̅ր գրեալ են անուանք նահատակացն,
,, և առեալ ամփոփեսցես զն̅ս, և յամենեցունց
,, նշխարացն առցես մասն ինչ․ և 'ի հողոյ երկրին՝ ուր
,, հեղեալ են արիւնք վկայից․ բերցես յերկիր քո և 'ի
,, քաղաք․ զի եղիցի բժշկութ̅ի ցաւոց՝ որ գալոց է յ̅ն
,, քո․ յկէ․ ցաւոց ի̅ թուոյ աւուրց, որով վարին ժամանակք
,, մարդկան։ Եւ այս ինչ է նշան հողոյն․ կանաչ,
,, կապուտակ, սպիտակ, սեաւ և երկնագոյն․ և
,, հողն ծակոտկէն է․ և արասցես ըստ իւրաքանչիւր
,, գունոց և ցաւոցն․ և եղիցի 'ի բժշկութ̅ի հաւատացելոց
,, բարեխօսութ̅բ սր̅ցն խնդրուածոց․ և արասցես
,, տօն մեծ զօր վկայութ̅ն ն̅ց ամէ յամ։ Եւ ասէ Թագաւորն
,, ցհրեշտակն տ̅ն․ զիա̅րդ երթայց ես յ̅ն հայոց,
,, զի Թագաւոր եմ․ երթեալ համբաւու յերթալն իմում
,, խռովեսցի երկիրն։ Ասէ հրեշտակն․ եղիցի յիմարումն
,, և պաշարումն գաւառին հայոց, և ոչ գիտասցեն ։

,, Ապա Թագաւորն կոստանդիանոս 'ի գալ միւսում
,, ամին գնայր ըստ բանի հրեշտակին տ̅ն․ և գտեալ
,, զնշխարս վկայիցն անարատս 'ի սուկաւէտ լերինն,
,, ո̅պ ասացաւ նմա 'ի հրեշտակէն, և զտախտակին ևս
,, կապարեայ, յորում գրեալ էր անուանք ն̅ց․ և ուրախ
,, լինէր և գոհանայր 'ի վ̅ր անպատում սքանչելեացն։
,, Եւ առեալ 'ի նշխարացն մասն ինչ յիւրաքանչիւրոց,
,, և 'ի հողոյ ուր ս̅բ մարմին ն̅ց հեղեալ էր 'ի
,, վ̅ր երկրին․ և զայլ նշխարսն եդեալ 'ի տապանի՝
,, ծածկեաց 'ի տեղւոջն, ուր հրամայեցաւն․ և կատարեալ
,, զտօն վկայիցն 'ի տեղւոջն սպիտակ ցլօք և ն-

,, խաղօք. և ինքն դառնայր խաղաղութ՟ յՏ՟ն իւր, բերելով
,, 'ի նշխարացն և 'ի հողոյ երկրին. և ոչ ոք դիտաց
,, զնա: Եւ շինեաց վկայարան, և եդ անդ զբերեալ
,, զնշխարս երանելեացն. յորում բազում բժշկութիւնք
,, լինէին, և ուրախ լինէր 'ի Տ՟ր: Եւ զայս
,, ասէր, եթէ 'ի յետին ժամանակին 'ի զօրանալ գնդին
,, հայոց յայտնեսցին նշխարք ս՟բ վկայիցն. և կատարի
,, մինչև ցայսօր յիշատակ վկայուե՟ն ն՟ց՝ փառաւորելով
,, զհայր և զորդի և զս՟բ հոգին այժմ և յաւիտեանս
յաւիտենից:

,, Ես անտոն անապատական 'ի հռոմայ ցանկացայ վկայութե՟
,, և վարուց երանելեացս, դիտակ լինել յորոյ
,, ձեռն մեծի Թագաւորին կոստանդիանոսի յայտնեցան.
,, և զիս արժանիս արար Տ՟ծ գիտել և գրել (կի՟մ
,, գտանել) 'ի մատենի զվկայութի և զվարս ն՟ց, և որպէս
,, ծածկեալ կան ս՟բ վկայքն մինչև 'ի ժամանակն՝
,, յորում Տ՟ծ յայտնեսցէ: Եւ որ ոք յիշեսցէ զանուն
,, վկայիցն, և կատարեսցէ զյիշատակ երանելեացս,
,, զոր ինչ և խնդրեսցէ 'ի նոցանէ՝ եղիցի 'ի վերնատուրողէն
,, ք՟սէ Տ՟յ բարեխօսուե՟ ն՟ց, և շնորհօք ողորմութե՟
,, ս՟բ երրորդութե՟ն. որում պատիւ, զօրութի,
,, և փառք յաւիտեանս. ամէն||:

Ուր տեսանես և ոչ մի յարմարութ բանից ը՟ ինքեան, այլ շփոթութի ը՟ գործոց ս՟բ լուսաւորչին՝ որ կանգնեաց վկայարան 'ի վ՟ր ս՟րց սուքիասանց, և կարգեաց զտօն ն՟ց. իսկ հռովմայեցիք կի՟մ հոռոմք իսպառ անտեղեակք են իրացս, և ոչ ունէին զտօն ս՟րցս կատարելոց 'ի հայս. վ՟ն վայրապար գրի և տեսիլն կոստանդիանոսի, և վայրապար ընծայի նոյն անտոն գրչի հռովմայեցւոյ կի՟մ հոռոմի, որ ասի գրիչ վարուց ս՟րցս. մեզ շա՟տ է ստոյգ պատմութի վկայաբանութե՟ ն՟ց. և չէ արժան զհետ լինել աւելորդ և օտար բանից:

ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Ս՟ց Ոսկեանց։ (1)

Հ. Սեպտ. 19. և օգոստ. 27։ Ճառընտ. Բ. երես. ՉԽԸ։ Եւս և ՉԼԷ. 'ի Վարս անապատականաց։ (2)

ԱՅՍ ԵՐԱՆԵԼԻՔՍ էին անձինք ազնուա՛կանք և արքունի պաշտօնեայք 'ի կայսերական պալատան, ազգաւ հռոմք կ՟մ հոռոմք յ՟մ հռովմայեցիք, առաքեալք յինքնակալէն հռովմայ 'ի հայս առ սանատրուկ արքայ, ոգիք հինգ (3). որոց գլխաւորի անուն էր խռուսի կ՟մ քռիւսի, որ թարգմանի հայերէն ոսկի. յորմէ և ոսկեանք առձայնէին։ Իսկ եղև 'ի հասանել նոցա 'ի սահմանս երկրին հայոց 'ի տեղի մի լեռնային և դաշտային, 'ի ճանապարհի հանդիպեցաւ նոցա ս՟բ առաքեալն Թադէոս, որ մին էր յեօթանասնից, և շրջէր քարոզութ՟ 'ի հայս։

Զոր տեսեալ արանցն այնոցիկ 'ի նուա՛ստ կերպարանս և անխինջ, հարցին զնա, և ասեն. ո՞ ես դու, ուստի՞ գաս, կամ յո՞ երթաս։ Իսկ առաքեալն ասէ. ես ծառայ եմ ա՟յ բարձրելոյ, և աւետարանիչ որդւոյ ն՟ր յ՟ի ք՟ի, որ վ՟ն զմեզ կեցուցանելոյ եղև որ-

որդի մարդոյ ։ Եւ սկսեալ ՚ի բանից աստի՝ քարոզեաց նց՟ յերկար վն՟ մարդեղութե՟ բանին ա՟յ . և սքանչացան արքն ընդ սքանչելի վարդապետութի՟ նր՟ , և քաղցր թուեցաւ ՚ի քիմս հոգւոյ նոցա հոգեբուղխ քարոզութե՟ առաքելոյն առաւել քան զմեղու խորիսխ ։ Եւ մինչ նա խօսէր նց՟ զբանն կենաց , ահա ջոկ մի եղանց երագընթաց վազիւք անցանէր ը՟ մերձակայ լեառն ։ Յայնժամ ասեն դեսպանքն ցԹադէոս . եթէ ծառայ ես ա՟յ բարձրելոյ , և կամիս՝ զի հաւատասցուք ասացելոցդ ՚ի քէն , ասա՛ զի դադարեալ կացցեն եղունքն այն . զի կալցուք զմի ՚ի նոցանէ , և կերիցուք աստ ՚ի գիշերիս . զի հեռի եմք ՚ի շինութ՟է յանմարդաբնակ վայրիս ։ Յայնժամ ձայնեաց Թադէոս եղանցն յանուն յ՟ի՝ գալ առ ինքն . և նոքա ոպ՟ բանաւոր անսացեալ հրամանին՝ եկին կացին առաջի նր՟ . և նա հրաման ետ արանցն ունել զմի յանասնոցն և զենուլ , խորովել և ուտել ։

Այլ ոպ՟ զի առաւել ևս հրաշագործեսցէ , և դիւրագոյնս ձգեսցէ զնս՟ յունկնդրութի՟ բանից իւրոց , պատուիրեաց նց՟ պահել զոսկերսն ուլոյն , զի մի կորիցէ ։ Եւ նք՟ արարին ըս՟ հրամանի նր՟ . զի խորովեալ կերան զեղջերուն յայնմ գիշերի . և զոսկերսն զամենայն եդին ՚ի մի տեղի . բայց մի ոմն ՚ի զինուորացն ոսկր մի գաղտ պահեաց առ ինքն , տեսանել՝ թէ զի՞նչ ունի առնել Թադէոս ։ Իսկ ՚ի վաղիւն անդր ետ բերել առաքեալն զնմ՟ ոսկերսն առաջի իւր · և ձգեաց զմորթն 'ի վ՟ր ոսկերացն ։ Եւ կացեալ յաղօթս՝ կարդաց զանուն յս՟ի ք՟սի · և առժամայն մերձեցան ոսկերքն առ միմեանս · և կենդանացաւ անդրէն անասունն այն · և սկսաւ գնալ զառ 'ի վեր լերինն բանիւ առաքելոյն · այլ յընթացս անդ թուէր կաղալ եղն, և ոչ կարէր վազել համարձակ ։ Եւ ասէ ս՟բն թադէոս ցարսն · տեսէք, թէ ոսկր պահեցիք, կմ՟ 'ի զա՟տ ձգեցիք յոսկերաց եղինն ։

Յայնժամ յարուցեալ զօրականն՝ որ զոսկրն զայն պահեաց, ասաց յայտնապէս զկիրս մտաց իւրոց, թէ վ՟ն այն պահեցի զայդ, զի փորձեցի բանն քո՝ սուտն և իրաւն ։ Եւ արդ այսուհետև հաւատամք յա՟նձն քո, զոր դու քարոզես · վասն զի արդար ես, և բանք քո ճշմարիտ են · և ոչ ոք կարէ զայդպիսի նշանս առնել, եթէ չունիցի իշխանութի՟ 'ի վերուստ ։ Եւ ապա ամենեքեան անկան յոտս առաքելոյն, և հաւատացին 'ի ք՟ս ա՟ծ, և աշակերտեցան բանից ս՟բյն թադէի · և նա մկրտեալ զնոսա՝ արար քրիստոնեայս · և զգլխաւորն զերանելին Ոսկի ձեռնադրեաց քահանայ ։

Եւ թողեալ նք՟ այնուհետև զբանս դեսպանութ՟ե՝ յանձն առին զհետ երթալ առաքելոյն խոնարհութ՟ե ճանապարհաւ · վասն որոյ գնացեալ 'ի շէնս ուրեք, և վաճառեալ զզէնս և զերիվարս իւրեանց՝ ետուն աղքատաց · և այլ ոչ դարձան 'ի տունս իւրեանց, և ոչ առ այն՝ որ առաքեալն էր զնոսա. այլ շրջէին ը՟ առաքելոյն. և որ ամ՟ օրէ հաստատէին 'ի հաւատս ք՟ի, և 'ի գիտութի՟ ա՟ծպաշտութե՟։

Իսկ զկնի կատարման ն՟ր առաքելոյն Թադէոսի՝ որ նահատակեցաւ 'ի սանատրկոյ, գնացեալ բնակեցան ոսկեանքն առանձնակի. քանզի չինեալ իւրաքանչիւր իրձիթս՝ կրօնաւորեցան 'ի լերինս ուրեք ծմակայինս յակունս եփրատայ 'ի խառնուրդս ձորոց, որք միանան ընդ լեառն ծաղկէոյ, 'ի գաւառն՝ որ կոչեցաւ ծաղկոտն վ՟ս գոլոյ լերանց և դաշտաց ծաղկաւէտ և զուարձալի վայելչութ՟բ զարդարեալ (4)։ Իսկ տուեալ զանձինս բազմապատիկ ձգանց և մշտամռունչ աղօթից՝ փայլեցին հրեշտակական վարուք, զտեալ և փորձեալ իբրև ոսկի ընտիր՝ մաքրութ՟բ ա՟ծային հրոյն, և եղեալ տաճար սրբութե՟ հոգւոյն ա՟յ։

Արդ յետ կալոյ յառանձնութե՟ անդ սքանչելի քաղաքավարութ՟բ զամս իբր քառասուն և երեք, ա՟ծային իմ՟ն ազդմամբ իջին 'ի լեռնէ անտի, և գնացեալ յարքունի դուռն հայոց՝ մատեան առ արքայ արտաշէս որդի սանատրկոյ, և առ թագուհին սաթինիկ, և քարոզեցին ն՟ց զբանն կենաց, ծանուցանելով նոցա վ՟ս ք՟ի ա՟ծուե՟ն, և ցուցանելով զկռոցն տկարութի՟։ Իբրև լուաւ թագաւորն, թէպէտև ոչ անտեղի համարեցաւ զբանս ն՟ց, այլ անփոյթ արար. լուեալ է իմ ասէ յաղագս այդորիկ և յայլոց բազմաց.

մաց· բայց յայժմուս անպարապ գտանիմ ՚ի պատերազմաց, և ոչ կարեմ լսել ձեզ։ Ապա հրաւիրեալ զնոսա գալ և խօսել զնոցին իւրաց յայլում ժամու՝ ինքն պատրաստեցաւ և խաղաց պատերազմաւ յարևելս։ Իսկ արքն սրք՟ զնոյն բանս յետ նր՟ խօսէին ընդ մեծի Թագուհւոյն՝ մերձ լինելով և աւագ որդւոյն· որ այն ինքն է Արտաւազդ(5)։ Եւ ՚ի խօսել նց՟ ստէպ՝ լուեալ զայս և մերձաւորաց Թագուհւոյն, որ զկնի նր՟ եկեալ էին յալանաց, զորոց ա՟ծ իսկ իմաստնացոյց զմիտս նց՟ ընդունել զբանն կենաց, հաւանեցան և հաւատացին բոլորով սրտիւ ՚ի քն՟։ Եւ իբրև ետես սրբ՟ն ոսկի զկատարեալ հաւատս նց՟, ՚ի մէջ գիշերին յարուցեալ տարաւ զնս՟ ընդ իւր· և մկրտեաց զամենեսին զնս՟ իբրև արս ութուտասան կմ՟ իննևտասն՝ ՚ի յակունս Եփրատայ, և արժանացոյց ընդունելութե՟ սբ՟ հոգւոյն· և ՚ի նշանակ նորոգութե՟ կենաց քն՟ական լուսաւորութ՟, և գրելոյ անուանց նց՟ ՚ի դպրութե՟ կենաց՝ փոխեաց զանուանս նց՟· որոց առաջինն կոչեցաւ սուքիաս· յորմէ և ընկերքն նր՟ սուքիասեանք անուանեցան։

Եւ եղև ՚ի միւսանգամ գալ սրբ՟ց ոսկեանց յարքունիս վն՟ քարոզութե՟ հանդերձ աշակերտելովք, իմացեալ որդւոցն սաթինկան զդարձ ազգականաց իւրեանց, և խանդացեալ ը՟ իրսն, մեծաւ Թշնամանօք հալածեցին զսբ՟ ոսկեանս ՚ի դրանէն· և նք՟ խնդութբ՟ գնացեալ նստան յիւրաքանչիւր մենարարանի ։ Զայն տեսեալ սուքիասանց՝ խոյս ետուն և ինքեանք յարքունեաց ․ և հետազօտեալ զհետս սո՟ցն՝ գնացին և գտին զն՟ս 'ի Ճգնարանս ն՟ց ․ և ջերմագոյն հաւատով կացեալ 'ի լուր ա՟ծային բանից նոցին՝ օրըս՟օրէ առաւել հաստատէին 'ի հաւատսն ։

Եւ իբրև խնդրեցան ն՟ք 'ի դրան թագուհւոյն և ոչ գտան , տեղեկութ՟ի առեալ՝ եթէ զկնի ոսկեանց գնացին , գրգռեցան ընդդէմ նոցա մանկագոյն որդիք թագուհւոյն վնոյն և վրդոյն (կմ՟ վրոյն) ․ և առեալ ընդ իւրեանս զերիցագոյն եղբայր իւրեանց զարտաւազդ՝ դիմեցին հանդերձ թիկնապահօք 'ի բնակարան ս՟ցն ․ և գտեալ զերանելին սուքիաս և զընկերս ն՟ր , աղաչէին թախանձելով , որ՟պս զի 'ի բաց դարձցին յերկրպագութենէն ք՟րի , և կալցին զառաջին պատիւ իւրեանց 'ի դրան ։ Իսկ ն՟ք ոչ հաւանեցան , և ոչ յանձն առին դառնալ 'ի լուսոյ 'ի խաւար հեթանոսական մոլորութե՟ ։

Եւ տեսեալ արքայորդւոց զանյողդողդ հաւատս ն՟ց և զհաստատութ՟ին , առաքեն կոչեցին զվ՟դպս ն՟ց զս՟բ ոսկեանս յիւրաքանչիւր մենարանէ ․ և հարկեցուցանէին զն՟ս ողոքանօք և սպառնալեօք՝ խօսել ը՟ն նորահաւատ արանցն , զի դարձցին անդրէն յառաջին պաշտամունս և 'ի գործ իւրեանց ։ Իսկ ս՟ցն ոչինչ ակնածեալ 'ի սաստից ն՟ց՝ առաւել ևս հաստատէին զաշակերտեալսն 'ի հաւատս ․ և ապա ասեն ․ թո՛ղ ինքեանք ընտրեսցեն զօգուտ իւրեանց ։ Եւ զայս ա-

սա

սացեալ՝ դարձան յետս՝ գնալ 'ի խորճիթս իւրեանց ։

Ընդ որ դառնացեալ արտաւազդայ և եղբարց նր՟՝ յանհնարս մտանէին, թէ զինչ արասցեն ․ քանզի իմացան յայտնապէս զադամանդեայ միտս սր՟ցն, և զանհրապուրելի խորհուրդս երկոցունց կողմանց՝ ոսկեանց և սուքիասանց ։ Եւ զի չիշխէին առնել ինչ սուքիասայ և ընկերաց նր՟՝ կասկած ունելով 'ի մօրէն իւրեանց, և խնայելով իսկ 'ի նոսա իբրև յազգականս, զա՟մ զցասումն թափեցին 'ի վր՟ ոսկեանց, հրաման տուե՟լ արբանեկաց իւրեանց՝ յարձակիլ 'ի վր՟ նց՟, և առ ետեղ խողխողել զն՟ս իբր մոլորեցուցիչս ազգականաց իւրեանց ։ Եւ ահա այն ինչ գնայր սր՟բն ոսկի հանդերձ ընկերօքն, և չև էր հասեալ 'ի դուռն սենեկին, անդէն 'ի վր՟ հասե՟լ դահճաց՝ կոտորեցին զն՟ս մօտ 'ի խորճիթս իւրեանց, սուսերաւ բարձեալ զգլուխս նց՟ յամի տն՟ իբր 107 ։ (6)

Ապա յետ մեկնելոյ արքայորդւոց՝ եկեալ սուքիասանց՝ կոծ մեծ առին 'ի վր՟ սր՟ցն անկելոց, որք՟ և յառաջագոյն հոգային յոյժ՝ զի մի 'ի պատճառս իւրեանց վտանգ հասանիցէ վկ՟այցն ․ և արտասուօք և սաղմոսիւք ամփոփեցին զպատուական նշխարս նց՟ ․ և ինքեանք առ ժամանակ մի կրօնաւորեալք 'ի բնակութի՟ս նց՟՝ ապա անցին 'ի լեառն ջրաբաշխ, որ և սուկաւէտ ․ ուր և յետ ժամանակաց նահատակեցան և ինքեանք ․ որք՟ է տեսանել յառաջին վկայաբանութե՟ն նց՟ ։

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ։

(1) Յամ̄ հին օրինակս տօնացուցից ընթեռնումք * Ոսկեանց ||· կմ̄ * սբ̄ց ոսկեանց ||։ միայն 'ի քանի մի յետին օրինակս եդեալ կայ * սբ̄ց ոսկեանց քահանայից ||· զոր և տեսանեմք 'ի կիր արկեալ յոմանց 'ի մաղթանս աւուր տօնի սբ̄ցս։ Եւ սակայն յայտ է 'ի վկայաբանութենէս, թէ սբ̄ն Թադէոս զոսկի միայն արար քահանայ· իսկ ընկերքն նր̄ էին լոկ կրօնաւորք, և ո՛չ քահանայք· վո̄յ դարձեալ գրի 'ի պատմութե̄ սուքիասանց վս̄ ոսկեանց, թէ * մի ոմն 'ի սբ̄ցն՝ որ զքահանայականն ստացեալ էր զշնորհս ||, մկրտեաց զսուքիասեանս, այն է սբ̄ն ոսկի քահանայ։ Վո̄յ և կցուրդն պատարագի 'ի տօնի ոսկեանց, * քահանայք քո զգեցցին զարդարութի̄ ||, ևն, ո՛չ յայտ առնէ թէ ոսկեանք առհասարակ քահանայք էին, այլ թէ գլխաւորն նոցա էր քահանայ· ապա թէ ոչ՝ յայլ ընթերցուածս և 'ի պաշտամունս աւուրն չէք այլ յիշատակ քահանայից։

(2) Կրկին հին օրինակք են վկայաբանութե̄ սբ̄ց ոսկեանց· առաջինն այն՝ որ բովանդակի 'ի վարս սուքիասանց իբրև յանուանէ հռովմայեցւոյ աւանդեալ, և ըստ այսմ՝ հասարակօրէն 'ի Ճառընտիրս և 'ի յայսմաւուրս 'ի միասին պատմին վարք երկոցունց դասուց սբ̄ցս, ըստ Հ· յօգոստ· 27· և թէպէտ ուրոյն ևս յիշին ոսկեանք 'ի Հ· սեպտ· 19· այլ ընթերցօղք առաջին 'ի նոյն տեղի· օգոստ· 27։ Իսկ երկրորդն է այն, որ ասի աւանդեալ 'ի տատախանոսէ լ̄ո Ճառընտ· Բ· ուր ուրոյն ևս գրին վարք ոսկեանց, թէպէտև հանդերձ պատմութե̄ սուքիասանց, զի մին զմիւսոյն է կախեալ· որ է ասել՝ թէ երկիցս առաջի դնին 'ի նմին Ճառընտրի վկայաբանութիւնք երկաքանչիւր խմբից միանգամայն՝ յայլ և այլ հեղինակաց առեալ զանազան ոճով, այլ նովին իմաստիւք· որ է առաւել հաստատութե̄ աւանդութե̄· վո̄յ եթէ յառաջիկայ պատմութե̄ ոսկեանց տեսցես զպարագայս ինչ մանունս փոքր մի տարբեր 'ի գրելոյն 'ի վարս սուքիասանց, մ՛ի ինչ զարմասցիս· զի նոյն բան յումեմնէ այսպէս բացատրի, և յայլմէ այնպէս։ Այլ արժան է յառաջ բերել աստ զյառաջաբան երկրորդ վկայաբանութե̄ս, որ 'ի Ճառընտ· Բ· երես· ջխը· օրինակ զայս· * Վկայութի̄ սբ̄յ Ոսկայ, և ընկերաց նորին։ Գտի միւս

,, Եւ այլ պատմագիր 'ի կողմանս յունաց . այր մի ըն-
,, թերցասէր տատիանոս անուն՝ որ լեալ է յաւուրս
,, վաղանդինիանոսի կայսեր, բազում ինչ պատմեաց նա
,, մեզ 'ի յունական մատենից . որոյ գրեանն անթիւ շա-
,, տաբանութբ՟ զրուցաց և այժմ 'ի միջի մերում գտանի .
,, զոր իմ իսկ բազում անգամ ընթերցեալ՝ գտի 'ի ճառս
,, նր՟, եթէ արք ոմանք՝ որք յաշակերտաց լեալ են մե-
,, ծին թադէոսի առաքելոյ, որոց գլխաւորի անունն
,, էր քռիւսի՝ (որ թարգմանի ոսկի.) այր յազգէ գռիկ
,, (ք՟ կուէգոս, որ է հռոմ)||. ևն ։

Արդ այս վկայագիր՝ որ զտատիանոս յիշէ այսպէս, կամ է ումն 'ի նախնի վիպասանից մերոց (գու իմն ըզխորենացին, կամ զհամանման զոք յաշակերտաց սբց՟ թարգմանչաց), և կմ՟ անստոյն այն հռովմայեցի գրիչ նախընթաց վարուց սուքիասանց. (զի զկնի սուքիասանց գրեալ կայ 'ի նախասացեալ ճառընտրի այս պատմութի՟ ոսկեանց)։ Ո՛ք և իցէ՝ է բարեացապարտ յոյժ. զի քաղեաց զայս վկայաբանութի՟ և 'ի գրոց տատիանոսի, որք յայժմուս ոչ առ հռովմայեցիս, ոչ առ հոռոմս կամ առ յոյնս, և ոչ առ հայս երևին 'ի միջի. բայց 'ի վիճաբանութեց՟ նր՟ ըդէմ՟ հեթանոսաց։ Սա էր աշակերտ սրբոյն՟ յուստինոսի վկայի և փիլիսոփայի, ճոխաբան հռետոր և փիլիսոփոս. որ եցոյց բազում նախանձայուզութի՟ վս՟ քրիստոնէութե՟. այլ յետոյ անկաւ յաղանդս. և եղև գլուխ խոտրականաց կմ՟ ենկրատեանց։

(3) Թիւ՛ անձանց սբց՟ ոսկեանց չէք 'ի Ճ՟. այլ պարզապէս ասի * արք ոմանք||. այլ յայլ վկայաբանութեց՟ առեալ դնի 'ի Հ՟. * և էին ոգիք Է՟||. ըն՟ որոց եգաք և մեք։ Եւ ըն՟ այսմ մեայ խնդրել, թէ ո՞րդեօք բայց 'ի հնգից դեսպանացս կայսերն և այլ զօրականք ուղեկիցք նց՟՝ հաւատացեալք ըն՟ հաւատալն նց՟, և նահատակեալք ըն՟ նս՟ ճգնութբ՟ և արեամբ, եթէ արդեօք նոյն դեսպանքն կոչէին միանգամայն և զօրականք 'ի կարգի վկայաբանութեանս։

(4) 'Ի ճգնարանն սբց՟ ոսկեանց հային և այս բանք գըրեալք 'ի գիրս բուզանդայ. Գ՟. 15. * Եւ սբն՟ գինդ...
,, առեալ վիճակ բնակութե՟ ունէր զանապատն, ուստի
,, բղխեալ հոսեն ակունք եփրատ գետոյն, անդէն բնա-
,, կեալ ըն՟ ծագս (կմ՟ ըն՟ ծակս) վիմացն. ուր յառաջ-
,, նոյ կայանքն էին մեծին գրիգորի առաջնոյ. որում
,, տեղեացն ոսկէք կոչեն. 'ի նոյն ծագս էր բնակեալ
,, մեծն անապատաւորաց գինդ||։

(5) Զանուն արտաւազդայ յաւելաք մ̃ն բացատրութե̃՝ 'ի պատմութե̃ սուքիասանց և ոսկեանց, զի այն էր երեցագոյն որդի արքային արտաշէսի ծնեալ 'ի սաթինկայ. իսկ այլքն՝ որք յիշին զկնի՝ մ̃յ և վրոյ (տ̃ Ծ. կամ վրոյ. տ̃ Հ.) մանկագոյնք էին 'ի ժամանակին. և գուցէ արագավախճան եղև մի 'ի նոցանէ. զի խորենացին երևի յիշել զմին, այլ ոչ զմիւսն՝ 'ի թուել զորդիս արտաշիսի յանուանէ, զ̃ արտաւազդ, վրոյր, տիրան, մաժան, զարեհ, հանդերձ այլովք, յորոց վերջինն եղև տիգրան: Իսկ թէ յաւուրս կատարման ոսկեանց՝ բաց յարտաւազդայ այլ եղբարք նո̃ մանկահասակք էին, յայտ է 'ի կարգէ ժամանակին. զի ոսկեանք յաւուրց անտի սանատրկոյ հօրն արտաշէսի էին չափահաս անձինք եկեալք դեսպանութ̃ 'ի հռովմայ, և արտաշէս՝ որ էր յայնժամ մանուկ նորածին, յետոյ ուրեմն 'ի չափ հասեալ թագաւորեաց, և ապա էառ զսաթինիկ 'ի կնութե̃: Եւ եթէ զկնի բազում ամաց գալստեան սաթինկան և սուքիասանց յալանաց՝ լեալ էր նահատակութի ոսկեանց, 'ի չափահաս լինել սաեմ ո̃մ արքայորդւոց, ոչ միայն 'ի կարի խոր ծերութե̃ հասանէին ոսկեանք, այլև չքաւէր այնմ միջոցի՝ ժամանակին խ̃դ ամաց, որ յիշի 'ի յովհ. կաթ. 'ի կատարմանէ անտի թադէոսի առաքելոյն ցկատարումն ոսկեանց:

(6) Ըստ ստուգագոյն զննութե̃ վկայաբանութե̃ց և պատմութե̃ հայոց՝ ժամանակ կատարման սե̃ց ոսկեանց երևի լինել յամի տ̃ն իբր 107. կամ 110: Փոքր մի յառաջ ցուցանէ հաշիւն յովհ. կաթողիկոսի, որ խ̃դ ամս դնէ 'ի վախճանէ սր̃յն թադէի ցվախճան ոսկեանց. զի թէ սր̃ն թադէոս նահատակեցաւ առ սանատրկով յամի տ̃ն իբր 50, ապա զկնի խ̃դ ամաց՝ նահատակութի ոսկեանց լինի 'ի վախճանի առաջին դարուն ք̃ի. բայց մեզ հարկ թուի քանի մի ամօք յետոյ դնել 'ի սկիզբն երկրորդ դարուն, զի մարթացի չափահաս լինել դոնէ արտաւազդ երէց որդի արտաշէսի որդւոյ սանատրկոյ: Թող զի կասկածեմք, թէ յովհ. կաթ. չփոթութ̃ իմն զայն խ̃դ ամս՝ որք տ̃ վկայաբանից անցին 'ի կատարմանէ ոսկեանց ցկատարումն սուքիասանց, փոխադրել է 'ի միջոցն՝ որ 'ի կատարմանէ սր̃յն թադէի ցկատարումն ոսկեանց: Պատճառ չփոթութե̃ն այն է, զոր փոքր 'ի շատէ քննեցաք 'ի վարս սուքիասանց. ծան. (2):

ՎԱՐՔ ՍՐԲՈՑՆ

Սահակայ պարթևի՝ հայոց հայրապետի ։

Հ. սեպտ. 9. ևս և սեպտ. 17։ Ճառընտ. Ի. ձեռգ̄. և Ի. տպգ̄։ Խորէն. Գ̄. 49 = 68։ Կորիւն։ Փարպեցի։ Յովհ։ Կաթ։ Շնորհալի. և այլք։ (1)

ԵՐԿՐՈՐԴ ԼՈՒՍԱՒՈրիչ համօրէն հայաստանեայց յետ առաջնոյն, լուսաշաւիղ և գեղեցիկ շառաւիղ սբ̃յն գրիգորի՝ երիցս երանելի հայրն մեր սահակ՝ էր որդի մեծին ներսեսի որդւոյ աթանագինեայ՝ որդւոյ յուսկան՝ որդւոյ վրթանիսի՝ որդւոյ լուսաւորչին. այն է վեցերորդ 'ի սբ̃յն գրիգորէ, միայնակ մարգարիտ մնացեալ 'ի սերնդոց անատի նորա, և միակ լուսափայլ ակն երևելի յազգի անդ իւրում. որ և եղև վերջին հայրապետ 'ի զարմէ պարթևազեան սբ̃յն գրիգորի. նմին իրի մականուանեալ կոչի սահակ կմ̃ իսահակ պարթև. ոմ̃ք և մեծ սահակ անուանի՝ ը̃ս մեծութե̃ յարգի արդեանց իւրոց. և առաջին սահակ 'ի մէջ համանուն կաթողիկոսաց ազգիս ։

Արդ երանելիս այս՝ այր ը̃ս սրտին ա̃յ, անդստին 'ի տղայ տիոց որբ մնացեալ 'ի մօրէ՝ որում անուն էր Սանդուխտ 'ի տանէ Մամիկոնէից, սնաւ յանարատ վարս սրբուէ՟ և յուսումն ամ՟ենայնի գիտութե՟ առ ոտս երջանիկ հօր իւրոյ մեծին Ներսեսի Պարթևի. և ըստ աճել հասակին աճեաց և յառաքինութե՟ և 'ի զգօնութե՟. և քաջավարժ գտաւ յա՟մ դպրութիս յունաց և ասորւոց և պարսից. թող զներհուն հմտութի՟ 'ի բնիկ բարբառ հայկաբան առանց գրոյ. զի ոչ գոյր հայերէնագիր դպրութի՟ մինչև ցաւուրս նո՟ց, վ՟յ վարէին օտար գրով. այլ առաւել քան զառաւել խելամուտ էր երանելին յընթերցմունս ս՟բ գրոց հին և նոր կտակարանաց, և ամ՟ի ընկղմեալ 'ի հոգևոր վ՟դպութի, առանձնասէր և աղօթասէր յոյժ, քաղցր և հեզահամբոյր բարուք, և լի հոգւով ս՟յ:

Եւ 'ի նստիլ հօր իւրոյ յաթոռ հայրապետութե՟, միաբանեալ ոգւով համակամութե՟ ընդ ընտրելոյն ա՟յ երանելոյն Մաշտոցի, ո՟ր ս՟բյն Մեսրոպայ, որ էր դպիր և նօտար ս՟բյն Ներսեսի, ևս քան զևս յառաջադէմ լինէր նովաւ հանդերձ 'ի զարգացումն գովելի գիտութե՟ց իմաստասիրութե՟, և ամենայն տիրապէս իմաստութե՟:

Եւ իբրև եհաս յարբունս հասակի, ստիպեալ 'ի բազմաց՝ յանձն էառ մտանել 'ի կարգծի, զի մի՛ շիջցի տունն Լուսաւորչին. զի ինքն միայն էր մնացեալ 'ի զարմէ ս՟բյն Գրիգորի. թող զի փափաքէր ազգն ողջոյն, զի պահեսցի միշտ ժառանգ աթոռոյն 'ի տանէ նախնի հայրապետին իւրեանց առաքելաշնորհ ս՟բ լուսաւորչին ։ Որոյ մ՟ն և երանելին սահակ խնդրէր յա՟յ ստէպ յաղօթս իւր՝ տալ նմա զաւակ արու ։ Եւ եղև իբրև ծնաւ նմա դուստր մի անուշ անուն , որ և սահականոյշ , և եկաց ամուսին ն՟ր 'ի ծննդոց , սկսաւ տխրիլ երանելին , և խորհուրդք անհնարինք նեղէին զնա ․ և անդադար զմտաւ ածելով զելս իրացն՝ աղաչէր զբարձրեալն շնորհել ինքեան արու որդի՝ ո՟պ նախնեացն իւրոց ։ Եւ մինչդեռ յայսմ խորհրդի էր , և սպասէր այցելութե՟ տ՟ն , 'ի հասանել մեծի հինգ շաբաթուն՝ 'ի հսկման աւագ ուրբաթուն , հազորդեցաւ 'ի ժամ երեկոյին պաշտաման՝ ս՟բ և մեղսաքաւիչ խորհրդոյ կենարարին 'ի ս՟բ կաթողիկէին յեկեղեցւոջ վաղարշապատ քաղաքի (այն է էջմիածին) , 'ի սպասաւորել անդ ս՟բ պատարագին ․ զի յայնժամ սարկաւագ իսկ էր ․ և ոչինչ այլ ճաշակեաց , բայց հաց և աղ և ջուր , պահելով զաւանդեալն կանոն 'ի նիկիական ժողովոյն ։

Եւ յորժամ կատարեցաւ պաշտօն երեկորին , տակաւին լոյս ճրագացն և կանթեղաց անշէջ պահեցաւ ․ զի զկնի սակաւուց սկիզբն արասցեն և գիշերային պաշտաման ․ այլ զի փոքր մի հանգիստ առցեն պաշտօնեայք՝ մինչև 'ի գալ բազմութե՟ ժողովրդոցն , ընթերցօղն կամաւ յերկարէր զկարդացմունսն ։ Եւ ահա յայնմ վայրի՝ մինչդեռ նստէր երանելին սահակ մօտ 'ի ս՟բ սեղանն , անկաւ զնովաւ թմրութ՟ի ․ և ետես տեսիլ հրաշալի , յորում գուշակէր նմա տէր զհանդերձեալըն ։ Եւ 'ի վերանալ տեսլեանն՝ այն ինչ զարմացեալ կայր սուրբն , և խռովեալ էր յանձն իւր՝ թէ զի՞նչ իցէ տեսիլս այս , յանկարծակի երևեցաւ նմա Հրեշտակ մի իջեալ յերկնից 'ի կերպարանս լուսաւոր առն , զի սլացեալ հասանէր մօտ առ նա . և էր տեսութիւն սաստկութեան լուսոյ նորա այնչափ պայծառ , մինչև մռայլեցուցեալ ծածկէր զարեգականն զլոյս ։ Եւ նորա առաւել ևս հիացմամբ ափշեալ 'ի փայլակնացայտ երևմանէ զուարթնոյն՝ անկաւ վաղվաղակի դողալով 'ի վերայ երեսաց իւրոց ։

Իսկ Հրեշտակն Տեառն բուռն հարեալ կանգնեաց զնա , և հաստատեալ կացոյց զնա 'ի վերայ ոտից իւրոց , և ասէ . քաջալերեա՛ց զօրացի՛ր , և մի՛ երկնչիր . այլ հաստատեա՛ զսիրտ քո յանուն Հզօրին , որ արար զամենայն . և եցոյց քեզ զմեծ խորհուրդ յառաջատես արարչութեան իւրոյ ։ Եւ իբրև ուշաբերեալ զօրացաւ 'ի բանէ անտի նորա , ասէ ցնա Հրեշտակն . վասն էր ես տրտում , և կամ ընդէ՛ր ըզբաղմունս նանրութեան պղտորեն զխորհուրդս քո , անգիտական մտածութեամբ տխրելով վասն չլինելոյ քեզ արու որդի . և այն զի քաջածանօթ էիր կամաց Հզօրին , որ ամենագէտ իմաստութեամբ իւրով բաշխէ ամենեցուն զիւրաքանչիւր օգուտ , և ոչ զլանայ ումեք ըզպարգևս իւր , և ոչ արգելու յումեքէ զարժանն ։ Եւ արդ գթալով 'ի քեզ բարձրեալն վասն սիրելոյ զքեզ՝ կամեցաւ հեռացուցանել 'ի քէն զայդպիսի ընդունայն մտածութիւն . և մխիթարեաց զքեզ տեսլեամբքդ այդուիկ, որ ցուցաւ քեզ յայտնութ՟ի մեծ՝ յայտարար ոչ միայն առաջիկայ իրաց, այլեւ որ ինչ առ յապա լինելոց է մինչ 'ի վախճան դ՟րի. քանզի նա ինքն տ՟ր է, որ ծանոյց քեզ՝ եւ քեւ ա՟մ հաւատացելոց 'ի բան ն՟ր՝ զայս ա՟մ, որպէս եւ երբեմն ճշմարիտ առն նախնոյն քո ս՟բյն գրիգորի ։

Եւ արդ լուր եւ պատմեցից քեզ զմեկնութ՟ի տեսլեանն, որ՟ք ինձ հրամայեցաւ. եւ դու ունկնդիր եղեալ բազում զգուշութ՟բ՝ գրեա՛ 'ի տախտակս սրտի քո անմոռաց. զոր եւ գրով թողցես հաւատացելոց ժ՟ղվրդոց անսխալ մինչ 'ի վախճան դ՟րիս ։ Եւ պատմեաց նմա հրեշտակն ա՟յ զա՟մ զմեկնութ՟ի իրացն. յորում ծանոյց նմա եւ զդադարումն քահանայապետութ՟ե յարժանաւոր ցեղէ ս՟բյն գրիգորի, եւ զխափանումն թ՟գրութ՟ե 'ի տանէ արշակունեաց, եւ զայլ եւս անցս դ՟րին հայոց յաւուրս հալածանաց եւ նեղութ՟եց. որ՟պս գրեալ կայ յառանձին ճառ տեսլեան ս՟բյն սահակայ. եւ ապա ասէ ցնա. եւ դու կնքեա՛ զտեսիլդ՝ որ ցուցաւ քեզ յայտնութ՟ի 'ի բարձանց. ք՟զի ոչ վրիպեսցի այտի բան, մինչեւ կատարեսցի ա՟մ ։ Եւ ապա տուեալ նմա ողջոյն խաղաղութ՟ե՝ եղեւ 'ի նմանէ աներեւոյթ ։

Յայնժամ զարթուցեալ սահակայ որպէս 'ի քնոյ 'ի տեսլենէ անտի, զոր ետես յայտնապէս իբրեւ 'ի յարթնութ՟ե, եւ 'ի զարմացման մեծի եղեալ՝ փառաւորեաց զա՟ծ, որ արժանի արար զնա այնպիսի ահաւոր տեսլեան ։

Եւ այնուհետեւ 'ի բաց թօթափեալ յանձնէ զա՟մ հոգ կենցաղոյս՝ յանձն արար 'ի խնամս բարձրելոյն, որ ինչ լինելոց էր անձին իւրում և աշ՟խին և համօրէն տիեզերաց: Եւ յայնմ հետէ առաւել ևս տու՛եալ զանձն 'ի հանապազորդ աղօթս և յընթերցանութ՟իս ա՟ծային պատգամաց՝ խոկայր յօրէնս տ՟ն 'ի տու՛է և 'ի գիշերի. և ա՟ծահաճոյ վարուք բուրէր զանուշահոտութ՟ին Ք՟ի, և օրինակ բարեաց լինէր ամենեցուն, փոյթեռանդն գտեալ յա՟ծպաշտու՟ե, և ծաղկեալ 'ի գործս բարեպաշտութ՟ե:

Եւ ապա մեկուսացեալ յամուսնոյն հաւանութ՟ե ն՟ր՝ եմուտ 'ի կարգ քահանայութ՟ե. և որքան զօր առաւելեալ 'ի ճգունս՝ կեայր յաշ՟խի իբրև յանապատի. զի ոչ միայն նմանող եղև ա՟մ առաքինութ՟եց հարց իւրոց, այլև առաւելեալ գտաւ աղօթից մասամբ. որում նախանձաւոր լեալ և բազումք յերկիւղածաց՝ աշակերտեցան նմա, և զնոյն օրինակ ճգնութ՟ե յանձինս բերէին. քանզի ստացաւ աշակերտս վաթսուն՝ ը՟ս նմանութ՟ե անապատաւոր հարց և երևելի կրօնաստանաց, արք կրօնաւորք, խարազնազգեստք, երկաթապատք, բոկագնացք, մեռեալք աշ՟խի, և որ ինչ յաշ՟խի. որք յար ընդ նմա շրջէին. որովք կանխեալ 'ի մշտամռունչ աղօթս և 'ի մշտնջենաւոր պաշտամունս՝ կատարէր զկանոնն միակեցական, որ՟պս զայնս՝ որ յանապատսն էին. և անպակաս հոգայր զպէտս եկեղեցւոյն և զկարևոր խնամս աշ՟խին՝ որ՟պ զայնս որ

յաշ՟խիս

յԾխս էին ։ Որ և յետ մեռանելոյ ամուսնոյ իւրոյ՝ ետ զդուստր իւր զսահականոյշ'ի համազասպ մամիկոնեան՝ երևելի'ի կարգս նախարարաց հայոց, և անուանի'ի բարեպաշտութ՟ե · յորմէ ծնան ս՟բ վարդան, և հմայեակ, և համազասպեան, առաքինի հաւու առաքինի թոռունք՝ որք սքանչելիք · և այնպէս'ի նս՟ մնացին հետք լուսաւորչեան զարմի'ի մայրական կարգի ևեթ ։

Յայսմ ժամանակի վախճանեալ էր ս՟բ ներսէս հայրապետ՝ հայրն երանելւոյն սահակայ՝ դեղեալ'ի զեղծ արքայէն պապայ · և էր ազ՟ն հայոց յերեսաց ցասմանն տ՟ն'ի մեծի աղեկոծութ՟ե հոգւոյ և մարմնոյ · որում ոչինչ կարացին օգտել թագաւորք ժամանակին վարազդատ, և զկնի արշակ և վաղարշակ · ո՟վ և ո՛չ կաթուղիկոսունքն շահակ և զաւէն և ասպուրակէս, որք սակաւ ամօք կեցին ։

Եւ եղև իբրև նստաւ խոսրով երկրորդ՝ արքայ հայոց, միաբանեաց զնախարարսն, և արար խաղաղութ՟ի ը՟ արկարդեայ կայսեր յունաց՝ որդւոյ մեծին թէոդոսի · և ապա յերրորդ ամի անդ իւրում, ո՟ր յամի տ՟ն 388 · յորում մեռաւ կթղկսն ասպուրակէս, հաւանութ՟բ ամենեցուն ետ ձեռնադրել զնա ինքն զերանելին սահակ պարթև'ի հայրապետութ՟ի հայոց, 'ի հասակի իբր յիսուն կմ՟ վաթսուն ամաց ։ Որով և իբր յեղակարծ փոփոխութ՟բ հանդիստ և անդորրութ՟ի մեծ եղաւ ազ՟ս հայոց · և սկսաւ փայլել բարեկարգութ՟բ ·

թ՟. Քզի ս՟. հայրապետն սահակ իսկ և իսկ ձեռն 'ի գործ արար նորոգել զա՟մ կարգս և զկրօնս ե՟ին հայոց , խրատելով զամենեսեան , և ուսուցանելով ամենեցուն զճանապարհս փրկութե՟ , լեալ ինքնին անձամբ կանոն ուղղութե՟ ա՟մ ժողովրդեան , և սքանչելի հայելի առաքինութե՟ , հանդերձ նախասացեալ սրբակրօն աշակերտօք իւրովք :

Եւ էր յայնժամ հայրապետանոցն հայոց իբրև խորանն մովսէսի , յոր դիմէին մեծամեծք և փոքունք առնուլ պատգամ 'ի բերանոյ ս՟ հայրապետին իբրև 'ի բերանոյ տ՟ն . և նովին ուղղեալ լինէին ա՟մ գնացք ն՟ց . և ինքն իսկ թագաւորն խոսրով մեծապէս հըպատակութ՟ի ցուցանէր և ակն ածէր 'ի մեծէն սահակայ հանդերձ աւագանւոյն :

Այլ ոմանք 'ի տիրանենց նախարարաց ոխս ունելով ընդ թագաւորին իւրեանց՝ բանսարկու եղեն առ շապուհ արքայ պարսից երկայնակեացն կոչեցեալ , և դրդուեցին զնա ընդդէմ խոսրովու , պատճառելով զմիաբանիլ նորա ընդ կայսեր յունաց , և զկարգելն նորա զսահակ յաթոռ կաթողիկոսութեան հայոց առանց հաւանութե՟ կամաց նորին շապհոյ : Եւ 'ի կոչել շապհոյ զխոսրով 'ի դուռն , և յընդդէմ դառնալ ն՟ր , առաքեաց շապուհ զգահակից զորդի իւր զարտաշիր զօրու ծանու 'ի հայս՝ ը՟ս սադրելոյ նոցին իսկ չարախոհ նախարարաց . և այնպէս անաշխատ ըմբռնեալ արտաշրի զխոսրով՝ տարաւ կապանօք 'ի պարս , եդեալ թագաւոր փոխանակ նորա ՚ի հայս զեղբայր նորին զվռամշապուհ . վրդովեաց և զնախարարս յիւրաքանչիւր պատուոյ, յոր կարգեալ էր զնս խոսրովու . ուստի և զսահակ ՚ի պատուոյ կաթողիկոսութեն : Այլ իբրև մեռաւ ՚ի նոյն աւուրս շապուհ, և թգրեաց նա ինքն արտաշիր ՚ի վր պարսից, թողացոյց անդրէն սահակայ վարել զպաշտօն իւր . քանզի և ՚ի վր եհաս բարելաւութե նր՝ թէ զիարդ ՚ի խաղաղութե պահէ զնս ընդ արքունի հրամանաւ :

՚Ի սմին ժամանակի մեռեալ էր սպարապետն հայոց սահակ ասպետ . և սբն սահակ միջնորդեաց առ վռամշապուհ արքայ հայոց, զի փոխանակ նորա կարգեսցի սպարապետ փեսայն իւր համազասպ մամիկոնեան՝ ըս թախանձելոյ դստերն իւրոյ . և վռամշապհոյ հաճեալ ըն այն, այլ ակնածեալ յարտաշրէ, ետ գիր սբյն սահակայ երթալ անձամբ ՚ի պարս, և խնդրել զհաւանութի արտաշրի վն նոցին իրաց . ուստի և այլ խնդիրս ինչ առաջի առնել նմա վն ձին հայոց :

Հասեալ սբյն ՚ի պարս՝ մեծարեցաւ յոյժ յարքայից արքայէ . զի առաջի անհաւատից արգոյ և պատուական ցուցանէ ած զծառայս իւր . մանաւանդ զի գիտաց արտաշիր, թէ սահակ է ՚ի պահլաւունի ազգէ անտի պարթևաց ՚ի ցեղէ մեծին գրիգորի . զորոյ զհայրն զանակ և զամ ազգատոհմն նր երախտաւոր ինքեանց համարէին սասանեանք, և պատճառ կանգնելոյ զթգրութի իւրեանց՝ վն սպանանելոյն զխոսրով զարքայն հայոց զգիզդիմակացն սասանեանն արտաշրի · վ՟ոյ և լինել կատարեալ զա՟մ խնդիր ս՟բյն՝ դարձոյց անդրէն պատուով 'ի հայս , գրեալ պինի առ վռամշապուհ , յորում յիշէր զկարծեցե՟լ երախտիս նախնեացն սահակայ առ պարսս , ո՟պ և զմեծ երախտիս նախնոյ ն՟ր գրիգորի առ հայս՝ բժշկելով զտրդատ արքայ ։

Յետ այսորիկ 'ի մեռանիլ արտաշրի , և 'ի թագաւորել վռամ կրմանայ 'ի վ՟ր պարսից , նա ևս սէր և խաղաղութ՟ի ունէր ը՟ հայս · որով և յանդորրու վայելէր ա՟ն հայոց · և ս՟բ հայրապետն սահակ անխափան վարէր ըզգործ հովուութ՟ե իւրոյ ա՟մ արթնութ՟բ և խնամով ըստ իւրում հոգեջան փութոյ յօգուտ ք՟ական հօտին ։ Արար և շինութ՟իս և նորոգութ՟իս եկեղեցեաց և վանորէից՝ ձեռնտուութ՟բ բարեպաշտ արքայն վռամ շապհոյ · զի ոչ սակաւ տեղիք աւերեալ և ապականեալ էին յերեսաց արշաւանացն պարսից յաւուրս շապհոյ ։ Ընդ որս իբրև նորոգեաց և զվկայարանս ս՟բց հռիփսիմեանց , տեսեալ թէ ոչ երևի տեղի նշխարաց նոցա , դիմեաց աղօթիւք առ ա՟ծ · և տ՟ր յայտնեաց նմա ։ Եւ տեսեալ հայրապետին զտապան սրբուհւոյն հռիփսիմեայ կնքեալ մատանեաւ ս՟բյն գրիգորի՝ յաւել 'ի վ՟ր և զիւր կնիք · և զետեղեաց անդրէն 'ի տեղւոջն ուրոյն նշանաւ ։

Յայնու ժամանակաւ եկն առ երանելին սահակ՝ մեսրովբ սիրելին իւր և հոգևոր հարազատն մաշտոց , այն է ս՟բն մեսրոպ · որ յետ փոխման մեծին ներսեսի կացեալ էր առ ժամանակ մի 'ի գործ ատենադպրութ՟ե 'ի դուռն արքունի . և ապա միակեցական վարս ընտրեալ՝ ձգնէր խստամբերութ՟ք . որդ բազում պատուա՛սիրութ՟ք ընդունելութ՟ի գտեալ 'ի ս՟բյ կաթողիկոսէն՝ հրամանաւ նորա սկսաւ քարոզել ամենեցուն ապաշխարութ՟ի փրկութ՟ե , փայլեալ սքանչելեօք : Այլ որչափ և աշխատ լինէր երանելին մեսրոպ 'ի քարոզութ՟ի բանին , տեսանէր՝ զի սակաւ օգուտ լինէր ազգին վ՟ն չունելոյ զա՟ծաշունչ գիրս 'ի հայ բարբառ . Ք՟զի առ 'ի չգոյէ և հայերէն նշանագրաց՝ ասորի և յոյն գրով շատանայր ուխտ եկեղեցւոյ . և պաշտամունք եկեղեցւոյ և կարդացմունք գրոց ասորի ուսմամբ վարէին յեկեղեցիս և 'ի վանորայս . զոր ոչն իմանային ժողովուրդք . վ՟յ անմխիթար մնային 'ի հոգևոր վ՟ճպուէ , եթէ ոչ մեկնէր ոք ն՟ց զասացեալսն : Սմին իրի սաստիկ հոգայր երանելին մաշտոց հնարս գտանել հայերէն դպրութ՟ե , և ծաղկեցուցանել 'ի հայս զա՟ծային գիտութ՟ի հայրենի բարբառով :

Եւ իբրև յայտնեաց զայսպիսի խորհուրդ իւր առաջի ս՟բյ հայրապետին սահակայ , եգիտ զնա առաւել ևս փափաքող այնմ , և խրատտու և յուսադիր : Ապա միաբանեալ 'ի մի խորհուրդ՝ բազում ջանիւք փորձ փորձէին իրացն . և իբրև ոչ յաջողեցաւ առժամն՝ որ՟պ զիարդ փափաքէին , յաղօթս եղեն ապաստան՝ իւրաքանչիւր առանձինն ձգնե-

Ճգնելով առաւել քան զառաւել խստամբեր վարուք, և խնդրելով յա՟յ կատարել զխնդիր նց՟ 'ի բարին :

Այլ յետ սակաւուց տեղեկութ՟ի առեալ 'ի վռամշապհոյ արքայէ՝ թէ դանիէլ ումն ասորի եպս՟ 'ի կողմանս միջագետաց ունի առ իւր նշանագիրս ինչ յունական ձևով յօրինեալ իբրև 'ի պէտս հայերէն դպրութ՟ե, առաքեցին արքունի հրամանաւ զայր ումն հաւատարիմ՝ ուսանել զօրինակ դանիէլեան նշանագրաց : Այլ իբրև տեսին զայնս, համարե՟ն թէ բաւական իցեն նոքին առ հայերէն վերծանութ՟ի, ժողովեցին մանկունս ուշիմս հրամանաւ թագաւորին, զի մարզեսցին յուսումն և 'ի կիրառութ՟ի նոցին՝ վերակացութ՟բ երանելոյն մեսրոպայ :

Այլ յետ երկամեայ աշխատութ՟ե՝ տեսե՟ն, թէ չէ մարթ նոքօք անվթար յօդել զհնչմունս հայկազեան լեզուի, և համարձակիլ 'ի յօրինուածս և 'ի թարգմանութիս գրոց, տառապէին և հոգային յոյժ երանելիքն : Ապա անձամբ երթեալ մեսրոպայ քանի մի աշակերտօք 'ի միջագետս, և առ արս իմաստունս խորհուրդ հարցեալ վ՟ն նոցին իրաց, իբրև անյոյս եղև 'ի մարդկային հնարից, յա՟ծ ապաւինեալ գլխովին՝ ընկալաւ 'ի նմանէ տեսլեամբ զկատարեալ նշանագիրս բաւականս վ՟ն ձոխ և բազմահնչիւն լեզուիս հայոց. և իսկ և իսկ առ խնդութ՟ե սրտին բուռն եհար 'ի թարգմանութ՟ի ս՟բ գրոց 'ի յոյն բարբառոյ, սկիզբն արարեալ յառակացն

կացն սողոմոնի 'ի պէտս մանկանց դպրատան · և առեալ զնոյն' դարձ արար և եկն 'ի հայս ։

Զոր տեսեալ մեծին սահակայ' լցաւ անպատում ուրախութ՟ք, և ծանեաւ' եթէ արար տ՟ր այցելութ՟ի հօտի իւրում · ապա այնուհետև հաւանու՟ք արքային ետ բանալ դպրոցս 'ի զանազան տեղիս, ժողովել ընտրանօք մանկունս մտավարժս, զի փութով ուսցին զհայերէն դպրութ՟ի, և լցցի հայաստան նովին գիտութ՟ք ։

Յայնժամ ժողովեալ ոմանց յեպ՟սաց քհին և 'ի վ՟դպաց հանդերձ մեսրոպաւ' եկին առ երանելի հայրապետն սահակ' յառաջիկայութ՟ե արքային վռամշապհոյ և աւագանւոյն, խորհուրդ 'ի մէջ առնուլ վ՟ն անյապաղ թարգմանութ՟ե բովանդակ ս՟ք գրոց, որ միանգամ ընդունելին է առ ա՟մ եկեղեցիս · և միաբան աղաչելով զս՟ն' հանդերձ թ՟գրաւն ասէին · Գիտեմք զշնորհս իմաստից պարգևեալ հօրդ հասարակաց առ 'ի հօրէն լուսոյ · զի ոչ ոք է յաւուր յայսմիկ իբրև զքեզ հմուտ ա՟մ հոգևոր ուսմանց, և կատարեալ 'ի գիտութ՟ս ազգաց բազմաց · ո՟պ և տուաւ քեզ զօրութ՟ի Հայրապետութ՟ե 'ի վերին օգնականութ՟էն · վ՟յ և քեզ միայն արկանել զանձն յաշխատութ՟ի հոգևոր, և թարգմանել զա՟ծաշունչ կտակս 'ի հայ բարբառս, գործակցութ՟բ երանելւոյս մաշտոցի' զոր զարթոյց ա՟ծայինն շնորհ յայսպիսի փափաքելի խնդիրս ։ Զի որպ՟ս ս՟բ նախահաւն քո՝ կենդանի նահատակն քո՛ւ Գրիգորիոս պահեալ անվնաս աջով հզօրին 'ի մահաբեր տանջանս՝ պարգևեցաւ ազգիս Հայոց 'ի լուսաւորութիւն աստուածգիտութեան , պահեալ շնորհեցաւ և քեզ նորին շառաւիղի վիճակ ժառանգութեան այսպիսի պայծառ պաշտամանս , սկիզբն առնել գործոյ մշակութեանս այսմիկ , և լինել նմանօղ սուրբ նախնոյն քում՝ ծագելով զլոյս աստուածային գիտութեան ընդ համօրէն ազգս Հայոց . որ նմանել ճշգրտապէս օրինակեցեր 'ի քեզ զվարս երանելոյ հօր քո ներսէսի , և նախահօրն քո գրիգորի :

Իսկ սուրբ հայրապետն սահակ իբրև լուա՛ւ զայս ամենայն 'ի Թագաւորէն և յամենայն ուխտէ քահանայից , փառաւոր արար զփրկչին ամենեցուն զՏէր Յիսուս Քրիստոս զաղբիւրն ամենայն շնորհաց և իմաստութեան . և 'ի նա եդեալ զամենայն յոյս իւր , և ոչ յանձին ինչ գիտուն , զուա՛րթամիտ սրտի՛ւ և կամաւոր յօժարութեամբ հաւանեցաւ ընդ առաջարկութիւն ժողովելոցն , յայտ արարեալ՝ թէ և իւր կամք սրտի և փափաք 'ի նոյն բերի , և ոչ խնայէ յանձին աշխատութիւն վասն այնպիսի մեծի և կարևոր օգտի հոգւոց : Ապա վստահացեալ յաստուածային օգնականութիւն և 'ի ձեռնտուութիւն շնորհաց սուրբ հոգւոյն , որ խօսեցաւ յօրէնս և 'ի մարգարէս և յաւետարանս , անվեհեր ձեռն 'ի գործ առնէր՝ թարգմանել զկտակարանս ամենայն զհինն և զնորն , աջակցութեամբ մեծին մեսրոպայ , և գործակցութեամբ գլխաւոր աշակերտաց իւրոց՝ մանաւանդ եզնկայ կողբացւոյ , նախ յաստուծոյն , և ապա 'ի յունականէն անվրէպ և անսայթաք տեսութ՟բ՝ ծ՟ ընտիր օրինակի թարգմանութե՟ եօթանասնից ։

ԱՅԼ 'ի ժամանակի անդ թարգմանութե՟ե ա՟ծաշունչ գրոց՝ բազում և այլ հոգեպատում մատեանք ս՟բց հարց և վարդապետաց եկեղեցւոյ 'ի լոյս ընծայեցան հայերէն բարբառով և գրով 'ի ձեռն ս՟բյն սահակայ և գործակցաց ն՟ր . և լցաւ երկիրս ա՟մ հայոց գիտութ՟բ ա՟ն 'ի հոգևոր վտակաց ն՟ք հայրապետին սահակայ պարթևի իբրև զջուրս բազումս , որ ծածկեն զծովս ։ Ս՟ոզ և զայլ բանաւոր գիտութե՟ց գիրս , և զազգի ազգի մատեանս . որովք ծաղկեցաւ Հայաստան ծ ը՟ առաջնորդութ՟բ մեծին սահակայ , և նորուն համավարտակ ամոլակցի մեծին մեսրոպայ . զորոյ և զվարս ուրոյն տեսցես ։

ԵՒ եղև 'ի վախճանել բարեպաշտ արքային հայոց վռամշապհոյ՝ աղաչեցին նախարարք հայոց զս՟բ հայրապետն սահակ երթալ անձամբ 'ի դուռն արքային պարսից յազկերտի որդւոյ շապհոյ , և հաւանեցուցանել զնա , զի արձակեսցէ զկապեալսն խօսրով՝ գալ և միւսանգամ թագաւորել 'ի հայս ։ Եւ ս՟բյն զիջեալ յաղաչանս ն՟ց վ՟ն օգտի իւրում՟ն հօտի՝ գնաց 'ի պարսս . և իւրով իմաստութ՟բ հաւանեցոյց զարքայն 'ի խնդիրն իւր , և այլ ևս հայցուածս առաջի արկեալ՝ ընկալաւ զա՟մն ։

ԱՅԼ յետ սակաւուց՝ իբրև մեռաւ խօսրով արքայ , թագաւորեցոյց յազկերտ 'ի վ՟ր հայոց զորդի իւր զշապուհ՝ չար մտածութ՟բ, զի առ սակաւ սակաւ մուծցէ 'ի նմ՟ խառնակրօն վարս և թուլամորթ կեանս, մինչև մարթասցի ընտելացուցանել զհայս 'ի կրօնս պարսից. այլ արթուն զգուշութ՟ի քաջ հովուին անվտանգ պահեաց զհօտ իւր: Պարձեալ իւրով աղաչանօք և յորդորանօք դադարեցոյց սբ՟ն սահակ զհալածանս 'ի քրիստոնէից աշխարհին պարսից զյարուցեալն 'ի յազկերտէ աստի առաջնոյ. ը՟ որում գովութ՟բ յիշատակեն պատմաբանք ասորւոց և քաղդէացւոց, (թէպէտև չփոթելով ը՟ սահակայ ասպետի և սպարապետի.) թող և զմիջնորդութ՟ի սբ՟յն մարութայի եպ՟սին նփրկերտոյ, և այլոց եպ՟սաց աշխարհին պարսից և ասորեստանեայց:

Յետ այսորիկ 'ի մեռանել յազկերտի և որդւոյ նր՟ շապհոյ, իբրև թագաւորեաց 'ի վր՟ պարսից վռամ երկրորդ, վրդովեցաւ աշխարհն հայոց 'ի մասն բաժնի պարսից. զի նախարարք հայոց վանեալ յերկրէ իւրեանց ըզպարսկական զունդն, և կասկածեալ յերկիւղէ վռամայ, այսր անդր ցրուեցան յամուր տեղիս. և աշխարհն կայր իբր զամս երիս ան՟տրունչ և անհանդիստ: Յայնժամ զգուշացեալ և սբ՟յն սահակայ վր՟ հայրապետական աթոռոյն, զի մի՛ ինչ վտանգ հասցէ յերեսաց պարսից, մեկնեցաւ առ ժամանակ մի 'ի մասն բաժնի յունաց, տարեալ ընդ իւր և զսբ՟ն մեսրոպ, և զերեսուն թոռունս իւր զորդիսն համազասպայ մամիկոնէի՝ զվարդան , զՀմայեակ և զՀամազասպեան : Եւ ոչ եգիտ զարժանաւոր ընդունելութի՟ 'ի կողմանսն յայնոսիկ . զի բնակիչք տեղւոյն՝ որ անդ , թէպէտև Հայք էին , այլ համարէին զանձինս լինել ը՟ առաջնորդութե՟ արքեպ՟սին կեսարիոյ . և յոյն վերակացուք տեղւոյն ոչ թողայուցին սբ՟յն սահակայ և մեսրոպայ մուծանել յայնոսիկ կողմանս զհայերէն դպրութի՟ :

Յայնժամ արձակեաց սբ՟ն սահակ զերանելին մեսրոպ հանդերձ վարդանաւ և քանի մի աշակերտօք 'ի թագաւորական քաղաքն 'ի կոստանդինուպօլիս , գրեալ թուղթ առ կայսրն թէոդոս փոքր և առ ատտիկոս պատրիարգ , զի հրաման տացեն վերակացուացն չլինել խափան իւրումն հովուութե՟ 'ի սեպհական վիճակի անդ իւրում , ոպ՟ և յառաջատուե՟ հայերէն ուսման : Եւ նց՟ հաւանեալ ը՟ այն՝ կատարեցին զա՟մ խնդիրս սբ՟յ հայրապետին . և յաւելին ևս պատուասիրել զառաքեալսն 'ի նմանէ . զի զվարդան կացոյց կայսրն ստրատելատ , այն է զօրավար . և զբ՟ն մեսրոպ՝ ատտիկոս պատրիարգն արար եկղեսիաստիկոս , որ էր անուն եկեղեցական պատուոյ առ յոյնս՝ ընծայեալ երևելի վարդապետաց ծաղկելոց բանիւ և գրով : Ապա առեալ մեսրոպայ և վարդանայ զթուղթ 'ի կայսերէ և 'ի պատրիարգէ՝ եկին առ հայրապետն սահակ . գրեալ էր կայսրն և հրովարտակ առ անատոլիոս զօրավար՝ լնուլ զա՟մ խնդիր կաթողիկոսին Հայոց, և միանգամայն շինել զքաղաքն Կարնոյ՝ որ կոչեցաւ Թէոդոսուպօլիս. այն է Էրզրում։

Զկնի սակաւուց իբրև հաճեցաւ Վռամ հաշտութ̅ի առնել ը̅ Հայս, կոչեցին անդրէն նախարարք Հայոց զս̅բն Սահակ. և ն̅ր առեալ ը̅ իւր զՎարդան ստրատելատ՝ եկն ՚ի Վաղարշապատ. ուր միաբան հաւանութ̅բ խորհուրդ արարեալ՝ առաքեցին առ Վռամ զՎարդան ընդ Սմբատայ ասպետի՝ խնդրել զխաղաղութ̅ի. և Վռամ թագաւորեցոյց ՚ի վ̅ր Հայոց զորդի Վռամշապհոյ զԱրտաշէս, անուն կոչեալ նմա Արտաշիր. և յանձն արար բոլորովին ՚ի ձեռս ն̅ր զ̅ս Հայոց, ոչ ևս դնելով պարսիկ զոք վերակացու. և այսպէս վերստին խաղաղացաւ երկիրն. և ծաղկեցաւ բարեկարգութ̅բ ը̅ հանապազօրեայ ջանից ս̅րյ հայրապետին Սահակայ։

Որ և առաւել ևս յայնմ միջոցի փոյթ կալաւ խորհրդակցութ̅բ համախոստակ գործակցին իւրոյ երանելւոյն Մեսրոպայ զարդարել զեկեղեցական կարգաւորութ̅ս ազգիս մերոյ. և միանգամայն առաքեաց զաշակերտս իւր յայլևայլ գլխաւոր քաղաքս Յունաց և Ասորւոց, զի որչափ ինչ օգտակար մատենաս գտանիցեն, անյապաղ թարգմանեսցեն ՚ի մերս բարբառ. ո̅պ և ինքն անխոնջ ՚ի նոյն դեգերէր զա̅մ ժամանակս իւր։

Արար ս̅բն Սահակ և ժողով եպ̅սաց ՚ի Վաղարշապատ, և կարգեաց կանոնս պէսպէս լի իմաստութ̅բ. և այնպէս զա̅մ հնարս հնարէր արթուն հսկողութ̃բ և հոգողութ̃բ՝ բարեկարգ և բարեզարդ յօրինել զեկեղեցի հայաստանեայց ։

Իսկ Թագաւորն արտաշիր՝ որ էր պատանի հասակաւ, եղև խենէշ վարուք, և որքան զօր յաւելաւ յանառակ գնացս 'ի կործանումն ազգին. և ոչինչ օգտեցաւ 'ի բազմապատիկ խրատուց սր̃յ հայրապետին ։ Նաև զի բազումք 'ի նախարարաց հայոց առթի սպասէին բառնալոյ գլխովին զմիապետ իշխանութ̃ն յֆ̃է իւրեանց, և տիրել ը̃ս հաճոյս իւրաքանչիւր իւրում գաւառի, յայնժամ ապա պատճառելով զանկարգութ̃ն Թագաւորին իւրեանց՝ խորհեցան խորհուրդ չար, մատնել զնա 'ի ձեռս արքային պարսից ։ Վ̃ս որոյ եկեալ առ մեծն սահակ՝ սկսան ատ̀իպել զնա, զի միաբանեսցի երթալ ընդ իւրեանս 'ի պարսս, և ամբաստան լինել զարտաշրէ ։

Իսկ ս̃բ հայրապետն իբրև գիտաց զխորհուրդս ն̃ց, որ հայէր 'ի կորուստ ազգին և ֆ̃ին, տրտմեցաւ յոյժ. և աղաչեաց զնոսա համբերել առժամանակ մի, և խնդրել աղօթիւք 'ի տ̃նէ, զի ցուցցէ ն̃ց ելս հնարից ։ Նաև տեսեալ՝ թէ պնդեալ կան նախարարք 'ի միտս իւրեանց, հարաւ յարտասուս, և ոչ ևս կարաց տալ պատասխանի բանից ն̃ց. այլ արձակեալ զն̃ս յիւրմէ՝ արգել զանձն յառանձին սենեկի, և անմխիթար լայր ոչ սակաւ աւուրս զմօտալուտ կորուստ աշխարհին. քանզի տեսանէր հոգւով, թէ ոչ միայն ըստ մարմնոյ վնաս մեծ ունի հասանել բովանդակ ազգին, այլև ըստ հոգւոյ :

Եւ եղև յորժամ միւսանգամ ժողովեցան առ նա նախարարք, և 'ի նոյն խորհուրդ իւրեանց ջանային ձգել զնա, սկսաւ երանելին վերստին արտասուախառն պաղատանօք յորդոր լինել նոցա յետս կալ 'ի խորհրդոյ անտի, և զայն գործել՝ եթէ հնար է, 'ի ձեռն կայսեր վճարել զդատ թագաւորին իւրեանց, և ոչ 'ի ձեռն անհաւատ պարսից : Առաջի դնէր նոցա զչարիսն՝ որք հանդերձեալ էին հասանել 'ի վերայ նոցա վասն այնր գործոյ . յուշ առնէր նոցա, թէ դովին խորհրդով ընդունայն առնէք զվաստակս սրբոյ լուսաւորչին և զորդւոց և զթոռանց նորա, որք լուսազարդեցին զազգն հայոց աստուածպաշտութեամբ և ամենայն կարգօք լաւութեան :

Եւ իբրև անսաստ գտան բանից երանելւոյն, յայնժամ ասէ ցնոսա պարզաբար . քաւ լիցի ինձ միաբանիլ յայդ խորհուրդ ձեր, զոր գիտեմ լինել մատնութիւն ճշմարիտ հաւատոյ 'ի ձեռս անհաւատից . զիա՞րդ հնար իցէ ինձ զիմ հօտի զմոլորեալ ոչխարն մատնել 'ի ձեռս գայլոց, և նախատինս դնել քրիստոնէական անուանն . զի թէպէտև մեղաւոր է, այլ զկնիք հօտին քրիստոսի յանձին ունի ծննդեանն սուրբ աւազանին : Արդ եթէ էր տանել առ բժիշկ առողջ զվիրաւոր անդամ եկեղեցւոյ, փութայի և ոչ յապաղէի . այլ յամենախտալից ատեան հեթանոսաց մատնել զիմ հիւանդացեալ ըստ հոգւոյ

ւոյ որդի՝ ոչ երբէք առնում յանձն . եթէ էր հաւատացեալ թագաւորի առաջի յանդիման առնել զնա , թերեւս համարձակէի յուսով գիւտի կորուսելոյն . այլ կշտամբել զհաւատացեալս յաղագս մեղաց առաջի անհաւատից՝ ոչ հաւանիմ ։ Լաւ է ինձ մեռանել , քան եթէ զոք 'ի հաւատացելոց վն̄ անարժան գործոյ մատնել անօրինաց . և զմիով ցաւով ախտացեալն տալ 'ի ձեռս նց̄՝ որք ա̄մ ախտիւք են վարակեալ . կամ զսակաւամեղն՝ ա̄մբ́ ամպարշտելոցն մատնել 'ի սատակումն ։ Բայց ձեզ ո՛րդիք , մի՛ խորհիք զխորհուրդդ զայդ . և մի՛ ջանայք կորուսանել զբնիկ տեարս ձեր , ո̄չ և ոմանք 'ի նախնեաց ձերոց արարին . զի մի՛ անձանց և բոլոր աշ̄խի մեծամեծ վնասուց և կորստեան պատճառք լինիցիք ։

Զայս ա̄մ լուեալ նախարարացն 'ի սբ̄ հայրապետէն՝ ոչինչ անսացին , այլ եւս քան զեւս խստացեալ ըմբոստացան առ հայրական խրատս նր̄ , և լրբութ̄ պատասխանի տուեալ ասեն . փոխանակ զի ոչ լուար բանից մերոց , և ոչ առեր յանձն միաբանիլ ը̄ մեզ , դիտասջիր զի ո̄չ եղեալ է մեր 'ի մտի հանել զարտաշիր 'ի թագաւորութէ̄ , նոյնպէս և զքեզ 'ի բաց հանցուք յառաջնորդութէ̄ աշ̄խս՝ ոչ եւս քահանայանալ 'ի վր̄ մեր ։ Եւ այսպիսի սպառնալեօք և դառնութ̄ եղեալ յերեսաց սբ̄յն՝ միաբանեցին ընդ իւրեանս զսուրմակ երէց արծկեցի 'ի գաւառէն բզնունեաց , խոստանալով նմա կացուցանել զնա կաթողիկոս փոխանակ սահակայ, եթէ տացէ վկայութի՟ւն չար զարտաշրէ առաջի արքային պարսից ։ Եւ այնպէս գնացեալ հանդերձ նովաւ առ վռամ՝ չարախօս եղեն ընդ թագաւորէն իւրեանց յաւելուածովք այլ ևս վնասուց, զոր ոչ կարէին ցուցանել . նոյնպէս և զառնէն ա՟յ զս՟րբոյն սահակայ սնոտի բանիւք պէսպ՟ս ամբաստանութի՟ս յօդէին ապաշնորհք ։

Յայնժամ հրամայն ետ վռամ, զի կոչեսցին ՚ի դուռն արտաշիր և սահակ ։ Եւ իբրև հասին անդր, արտաշիր անբասիր արար զանձն առաջի վռամայ՝ ասելով . չիք իմ գործեալ ինչ ը՟նդդէմ տ՟րութե ձերոյ, և ոչ ՚ի վնաս ձեր . այլ տիրատեաց նախարարքս պատճառս իմ՟ն հնարեն ը՟նդդէմ թագաւորի իւրեանց ը՟նդ առաջին սովորութե . զի ՚ի բնէ սովոր են թշնամանել զտեարս իւրեանց ։ Եհարց վռամ և զսահակ, թէ դու զի՞ ասես վ՟ն արտաշրի ։ Այլ նա չէառ յանձն տալ վկայութի ինչ չար կ՟մ բարի . զիս ինչ վ՟ն այդպիսի խնդրոց մի՛ հարցանէք ասէ . զի ես զարտաշրի զայնպիսի ինչ վատթարութի ոչ գիտեմ, որով արժանի լիցի դատել ՚ի ձէնջ ։ Իսկ սուրէն հազարապետն պարսից ՚ի պարթևական ցեղէ՝ յորդորեալ ՚ի թագաւորէ և յայլոց՝ բազմօք հնարէր հաւանեցուցանել զսահակ իւր սիրով ազգակցութե, զի յանձն առցէ միաբան ը՟նդ նախարարս չարախօսել զարտաշրէ, խոստանալով նմա բազում շքեղութի ՚ի կողմանէ արքայի . ապա թէ ոչ՝ ասէ, ՚ի բաց

զրկիս

զորկիս և դու յիշխանութ՟է քումմէ ։ Բայց ս՟քն ոչ իւիք ունէին մատոյց բանից նորա · զիա՞րդ հնար է ինձ ասէ վ՟ն սիրոյ փառաց և իշխանութ՟ե չարախօս լինել զայլմէ · և այն զի յանցանք ն՟ր թէպէտև ըստ մեր մաքուր կրօնից ստգտանելի , այլ առ ձեզ չունի տեղի ամբաստանութ՟ե ։

Յետ ա՟մի՝ քանզի կամէր վռամ բառնալ զտ՟րութ՟ի Հայոց , իբրև ետես՝ զի և նախարարք յօժար են բառնալ զթագաւորութ՟ի իւրեանց , ընկէց զարտաշիր յիշխանութ՟է , և վարեաց յաքսորս 'ի խուժաստան , կարգել փոխանակ ն՟ր 'ի վերակացութ՟ի Հայոց [illegible] պարսիկ զո՟մն մարզպան՝ վեհ միհր շապուհ անուն ։ Նոյնպէս և զս՟բն սահակ եդ յարգելանս , փոխանակ զի ոչ միաբանեցաւ 'ի կամս նախարարաց · և կացուցեալ 'ի տեղի նորա զսուրմակ երէց՝ արձակեաց հանդերձ նախարարօք և մարզպանաւ յերկիրն Հայոց· և յայնմհետէ բարձաւ թագաւորութ՟ի Հայոց 'ի տանէ արշակունեաց և անկան Հայք ընդ լծով անհաւատից ։

Եւ եղև յետ սակաւուց մերժել նախարարաց և զսուրմակ՝ խնդրեցին յարքունուստ այլ կաթուղիկոս · և վռամ ետ ն՟ց զբրքիշոյ ո՟մն ասորի · որոյ եկեալ գաւառակցօք իւրովք խառնակեցին արամբք և տանտիկնօք , սկսաւ զհետ լինել զօշաքաղութ՟ե (որ և սիմոնականութ՟ի) ։ Յորմէ տաղտկացեալ նախարարաց՝ խորհեցան զայլ ոք դնել 'ի տեղի ն՟ր · այլ բազումք ևս 'ի բարեպաշտից [illegible] խրատու սր̄յն մեսրոպայ և այլոց սր̄ քահանայից և եպ̃սաց խնդրելին զսր̄ն սահակ ըդ հարազատ հովւին դարձուցանել անդրէն յաթոռն ։ Նա 'ի գնալ պատգամաւորաց յերկոցունց կողմանց 'ի դուռն պարսից , կամեցեալ վռամայ զամենեցուն հաճել ըդ միտս՝ հրամանն ետ , զի զաթոռ եպ̃սական իշխանութե̃ ունիցի շմուէլ ոմն ասորի , որ վատթար ևս էր քան զբրքիշոյ · և սահակ նստեալ 'ի վիճակի իւրում՝ ունիցի իշխանութի վի̃պելոյ , և ձեռնադրելոյ զորս միանգամ թոյլ տացէ շմուէլ ։ Այլ յորժամ արձակեաց վռամ զսահակ , տայր ցնա առաջի ատենին · երդմնեցուցանեմ զքեզ 'ի քոյին հաւատ , զի միամիտ կացցես 'ի ծառայութե̃ մերում , և մի՛ իւիք խորհեսցիս իրս ինչ ապստամբութե̃՝ յարելով 'ի յոյնս վ̄ն մոլար հաւատակցութե̃դ ։ Իսկ սր̄ այրն ա̄յ յանդիման կացեալ արքային համեստ հայեցիւք և անվեհեր հոգւով՝ սկսաւ ամոք բանիւք յայտնի ցուցանել զհաւատարմութի̃ և զերախտիս ծի̃ն հայոց առ պարսիկս , և զն̄ց երդմնազանցութի̃ս և զվնասակար գործս ընդդէմ հայոց ։ Նա յաւել կշտամբել ճարտար բանիւք զհայհոյանս թագաւորին , որով մոլար հաւատակցութի̃ ասաց զմիաբանութի̃ քրիստոնէից · և միանգամայն ունայնացուցանել զմոլար կրօնս դենից անա̃ծից՝ ըր̄ տանելոյ հեթանոսական լսելեացն · և կնքեաց ըդ բանս իւր հրաշալի ա̄ծաբանութբ̄ սր̄ հաւատոյս մերոյ · մինչև յակճիռս կալ ապշութբ̄

ա-

ամենեցուն՝ որք կային յատենի անդ․ եւ ոչ ումեք իշխել ինչ ասել ըդ՟էմ, ակնածեալ 'ի պատկառելի երեսաց ծերունազարդ եւ ա՟ծազգեաց քահանայապետին ։

Եւ Թագաւորն գլխովին սքանչացեալ ընդ շնորհալի ատենախօսութի՟ սրբոյն այնպիսի համարձակութե՟, հրաման տայր մեծարել ըզնա բազում պարգեւօք։ Բայց երանելին չկամեցաւ բնաւ առնուլ ինչ․ այլ միայն աղաչեաց զԹագաւորն վ՟ս իրիք իրիք օգտակարութե՟ց ազ՟ին Հայոց, առ 'ի մնալոյ նախարարաց յիւրեանց պատուի, եւ չկրելոյ ինչ այլայլութիւն կարգաց ազ՟ին 'ի ձեռն պարսիկ մարզպանի ։ Եւ Թագաւորն կատարեալ զա՟մ խնդիր նր՟՝ արձակեաց զնա պատուով մեծաւ 'ի Հայս ։

Եւ եղեւ 'ի գալ սրբոյն յե՟ր իւր՝ անպատմելի խնդութի՟ ընծայեցաւ ա՟մ բարեսիրաց․ զի Թէպէտ ոչ եւս տեսանէին զնա յառաջին կարգի իշխանութե՟ եւ պատուոյ, այլ անպակաս վայելէին 'ի հոգեւոր վր՟պութե՟ նորա, որ բղխէր աղբիւրաբար, եւ զովացուցանէր զսիրտս ամենեցուն բանիւ եւ գրով ըս՟ առաջին սովորութե՟ն․ քանզի Շմուէլ անուամբ եւեթ էր կաթուղիկոս․ այլ զա՟մ հոգ եկեղեցեաց յանձին ունէր սբ՟ հայրապետն սահակ 'ի ծերութե՟ անդ իւրում ։

Ընդ այն ժամանակս՝ միով ամաւ յառաջ քան զդարձ սրբոյն սահակայ, այն է յամի տ՟ն 431 ․ գումարեցաւ սբ՟ ժողովն եփեսոսի ը՟դդէմ Նեստորի չարի․ եւ զի 'ի նոյն աւուրս

'ի

'ի կողմանս յունաց ծ̃ին կային տակաւին ոմանք 'ի թարգմանչաց մերոց՝ աշակերտք սահակայ և մեսրոպայ, առեալ ն̃ց զպատմութ̃ի և զվճիռ ժողովոյն՝ հանդերձ ընտիր օրինակաւ ա̃ծաշունչ գրոց 'ի յոյն բարբառ և այլ ևս մատենիւք, և հասեալ 'ի հայս՝ գտին զս̃բն սահակ, զի այն ինչ եկեալ 'ի պարսից՝ ժողով էր գումարեալ յաշտիշատ քաղաք վ̃ս բարեկարգուե̃ հօտին: Եւ իբրև մատուցին առաջի հարց զգրեանն՝ զորս բերին 'ի յունաց՝ հանդերձ թղթովք երանելի եպ̃սաց ոմանց, յայնժամ և ն̃ք միաբան ընկալան զսահմանս ս̃բյ ժողովոյն, և դատապարտեցին զնեստոր և զհամախոհս ն̃ր: Եւ ապա միւսանգամ ձեռնարկե̃լ երանելւոյն սահակայ 'ի թարգմանութ̃ի՝ նորոգ յօրինեաց զա̃ծմն ը̃ անվթար օրինակի եօթանասնից՝ բերելոյ 'ի թագաւորեալ քաղաքէն: Եւ ոչ այնու շատացեալ՝ խորհրդակցութ̃բ գործակցին իւրոյ ս̃բյն մեսրոպայ առաքեաց զոմանս յաշակերտաց իւրոց յաղեքսանդրիա և յաթէնս. ո̃պ զի յա̃մ ուսմունս քաջ վարժեալ՝ լցցեն զթերին թարգմանութ̃ե ս̃բ գրոց և այլոց ևս մատենից հարց ս̃բց:

'Ի նոյն աւուրս բերին 'ի հայս ոմանք յաղանդաւորաց համախոհից նեստորի զգիրս թէոդորոսի մոպսուեստացւոյ վ̃դպին նեստորի, և զգիրս դիոդորի տարսոնացւոյ վարդապետին թէոդորոսի, սերմանել հնարիւք 'ի հայս զվ̃դպութ̃ի նեստորականաց.

ո̃պ

ուղ՟ սերմանեցին 'ի կողմանս ասորեստանի , եւ հետեւողք նց՟ կոչեցան նեստուրք ։ Այլ սբ՟ն սահակ եւ սբ՟ն մեսրոպ կանխագոյն տեղեկութ՟ի առեալ յայլոց եպ՟սաց վ՟ս չարարուեստ հնարից աղանդաւորացն այնոցիկ՝ բացէ 'ի բաց հերքեցին զմոլորութ՟իս նոցա . քանզի ժողով արարեալ եւ քննեալ զվ՟դպութիւն նախասացեալ թէոդորի եւ դիոդորի՝ նզովիւք դատապարտեցին հանդոյն նեստորի . եւ զա՟մ սերմանացանս ժանտութե՟ հալածական արարին յեկ՟ղն հայոց ։ Եւ զայս ա՟մ գրեալ ծանուցին սբ՟յն պրոկղի՝ որ այն ինչ էր նստեալ յաթոռ պատրիարգութե՟ կոստանդնուպօլսոյ . եւ նա ես գովե՟լ հաստատեաց զնախանձ բարեպաշտութե՟ հայոց , գրելով եւ իւր գիր դաւանութե՟ համաձայն նոցին խոստովանութե՟ ։ Եւ այսպիսի զգուշաւոր արթնութ՟ի սբ՟յն սահակայ եւ որոց ընդ նմա՝ ահարկու եցոյց զեկեղեցի հայոց ըդ՟էմ ա՟մ աղանդաւորաց ժամանակին , եւ գովելի յաչս ա՟մ եկեղեցեաց . որ եւ առաւել հանդիսացաւ յետ ժամանակաց , յորժամ եւ ընդհանուր ժողովն հինգերորդ՝ զէն յաղթողական էառ 'ի ձեռս ըդ՟էմ հերետիկոսաց զզօրաւոր վկայութ՟ի ուղղադաւան նամակին հայոց առ պրոկղ ։

Արդ այսպիսի եւ այլ ես արդիւնաշատ գործովք առաքինացեալ մեծին սահակայ զա՟մ աւուրս իւր՝ եղեւ սիւն հաստատուե՟ հայաստանեայց եկեղեցւոյ , եւ ջահ եօթնալոյս պայծառացուցիչ տանս արամայ . եւ այն՝ հա-

լա

լածանօք հանդերձ, որ է սեպհական կնիք ընտրութեան ընտրելոց ո՟ք հայրապետաց և
քաջ հովուաց յիմ՚ի դարս ։

Եւ եղև իբրև մեռաւ շմուէլ ասորի՝ սուտանուն կթ՟ղկս, ժողովեալ նախարարաց առ ս՟րբն սահակ՝ խնդրէին ՚ի նմանէ ներել նոցա զչարիսն, զոր անցուցին ը՟ նա. և աղաչէին յանձն առնուլ անդրէն զպատիւն առաջին՝ վարելոյ զտիրապէս իշխանութիւն աթոռոյ կթ՟ղկսութե՟. և խոստանային տալ ազգաւ թոռանց ն՟ր զայն իշխանութի ։ Իսկ սքանչելի այրն ա՟յ բազում խոնարհութ՟բ ցուցեալ ն՟ց զանյիշաչար միտս իւր՝ ասէ. Ես ոչ ուսայ յերկնաւոր վ՟րդպէն իմմէ ՚ի ք՟նէ բարկանալ ումեք, այլ՝ օրհնել զհալածիչս, և բարի առնել ատելեաց. ո՟պ և ինքն իսկ վ՟ն խաչահանուաց աղաչէր զհայր չհամարել ն՟ց ըզմեղսն. այլ քահանայանալ ՚ի վերայ տիրանենգ ժողովրդոց ոչ կարեմ ։ Դուք ձեզէն գիտէք, թէ զիարդ կործանեցիք զթագաւորութ՟ի ձեր, և առ ոտն հարիք զուխտ քահանայութե՟ն. և ի՟ն արդեօք հնարիք զիս մխիթարել այժմ, որ առաջի աչաց տեսանեմ զյետին վիշտս վտանգի տ՟ս Հայոց յերեսաց չարեաց ձերոց ։ Եւ արդ թո՛յլ տուք անցուցանել զմնացուած աւուրց իմոց ալեօք ծերութե՟ս յողբս առանձնութե՟ ՚ի վ՟ր համաշխարհական կործանման երկրիս Հայոց. զորոյ զաղէտս կանխաւ եցոյց ինձ տ՟ր յառաջ քան զձեռնադրելն իմ յեպ՟սութ՟ի ։ Եւ ապա պատմեաց ն՟ց կարգաւ զտեսիլն՝ զոր ետես յաւուրս սարկաւագութե՟ն իւրոյ, յայտ արարեալ՝ թէ զիարդ ընդ բարձման թագաւորութե՟ն արշակունեաց՝ դադարեաց և քահանայապետութի՟ն 'ի տանէ լուսաւորչին, որ 'ի նոյն զարմէ պարթեւազանց ։

Եւ ն՟ց լուեալ զայն ՟ամ մի՟միոջէ՝ ողբս առեալ լայի՛ն անմխիթար 'ի վ՟ր անձանց և 'ի վ՟ր որդւոց իւրեանց, յիշելով և զանսուտ բանս փրկչին՝ թէ հա՛րկ է գալ գայթակղութե՟ն, բայց վա՛յ մարդոյն այնմիկ՝ յորոյ ձեռն գայցէ ։ Եւ անկեալ առ ոտս ս՟բյն բ՟զմ զղջմամբ՝ աղաչէին զնա աղօթս առնել վ՟ս ն՟ց առ ա՟ծ, զի հաշտ ակամբ հայեսցի 'ի վ՟ր ազգին. զոր և անդադար առնէր երանելին ։ Յայնժամ ընկալեալ զօրհնութի՟ն 'ի ս՟բյն՝ գնացին 'ի տեղիս իւրաքանչիւր թախծեալ անձամբք. և այնուհետև ոչ կամեցան և ոչ իշխեցին դնել զոք այլ կաթողիկոս, ցորչափ կենդանի էր ս՟բն սահակ. որ թէպէտև ը՟ս արտաքին հանդիսի նուաստութե՟բ կեայր, այլ ա՟մի՛ ընոյր զ՟ամ՟պետս եկեղեցւոյն, և հայրագութ սիրով անպակաս զեղոյր զհոգևորական խնամս իւր 'ի վ՟ր ամենեցուն ։

Եւ յամին՝ յորում մեռաւ վռամ արքայ պարսից, և թագաւորեաց յազկերտ երկրորդ՝ դառն հալածիչ քրիստոնէից, 'ի վրդովիլ ֆին հայոց՝ առանձնացաւ ս՟բն սահակ 'ի խորին ծերութե՟ն 'ի գիւղն կոչեցեալ բլուր կ՟մ գիւղ բլրոցաց 'ի բագրեւանդ գաւառի. ուր և հասեալ երանելւոյն 'ի կէտ կոչմանն յառաջին ամի սանդ յազկերտի, լի աւուրբք և ար-

արդեամբք՝ իբրև հասունացեալ բազմատոք ցորեան ամփոփեցաւ 'ի շտեմարանս երկնից արքայութե̃, փոխեալ առ անձկալին իւր քս̃՝ յամի փրկչին . 440 . 'ի վերջին աւուր ամսեանն նաւասարդի, որ և իններորդ օր սեպտեմբերի, յորում աւուր ծնեալ իսկ էր . այն՝ որ մահկանացու ծնեալ՝ անմահ զիւրն եթող յիշատակ՝ յետ կալոյ յաթոռ հայրապետութե̃ հանդերձ հալածանօքն՝ ընդ ա̃մ ամս . ծա̃ . և եղեն ա̃մ ամք կենաց նր̃ աւելի քան զհարիւր . ը̃ս ոմանց՝ իբր հարիւր և քսան :

Իսկ զպատուական մարմին սբ̃յն բարձեալ սարկաւագապետին նր̃՝ որում անուն էր երեմիա, և այլոց աշակերտաց՝ որք յայնժամ գտան առ նմա, հանդերձ ուխտիւ եկեղեցւոյ և բազմու̃ք ժողովրդեան տարան և թաղեցին պատուով՝ 'ի կալուած սեպհական ժառանգութե̃ նորին յաշտիշատ տարօնոյ . այլ զա̃մ ծախս հանդիսի յուղարկաւորութե̃ արար բարեպաշտ տիկինն մամիկոնեանց դխտիկ, որ և դստրիկ կոչեցեալ, կին մեծին վարդանայ սպարապետի թոռինն սբ̃յն սահակայ :

Եւ 'ի տեղւոջն՝ ուր թաղեցին զմարմին սբ̃յն, կանգնեցին եկեղեցի մեծապայծառ՝ զարդարեալ մեծագին սպասուք . շինեցին և առընթեր վանս կրօնաւորաց . և տօն սահմանեալ ամըստամ̃ կատարէին անդստին . և որք հաւատով գային 'ի յիշատակ սբ̃յն, գտանէին առողջութի̃ յիւրաքանչիւր ցաւոց իւրեանց :

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ։

(1) Որ ինչ կարեւոր բանք իցեն 'ի քննուն եւ 'ի հաստատութե վարուց սբյն սահակայ, առաքեմք զընթերցօղս 'ի պատմութե հայոց, եւ յաղբիւր անդր նորին 'ի գիրս խորենացւոյն, կորեանն, փարպեցւոյն, եւ որոց զկնի· միայն աստանօր յաւելցուք զքանի մի հետաքննին գիտելիս եւ զվկայութիս:

Յաւել խորենացւոյն· Գ· 49· զսբյն սահակայ (յո՟ղջ քան զկաթուղիկոսութի) թէ * սոսցաւ աշակերտս " վարթանու ը՟ն նմանու մայրաքաղաքացն սպուդէից||, ումն այսպէս, եւ ումն այնպէս կարօղ է իմանալ եւ մեկնել· այլ ը՟ն իմում տեսութե սպուդէն է տառադարձութի յունական ձայնիս ըսբուդի (որ է ըստ լատ· ըսդուտիում,) ը՟ն է փոյթ· յորմէ ըսբուդէօս (ը՟ն լատ· սդուդիօզուս) նշանակէ փոյթեռանդն, ժրաջան, իբրեւ կոչումն սեպհական կրօնաւոր եւ առաքինի ճգնողաց հանգոյն հարց սկիտացւոց· վ՟յ եւ մայրաքաղաքն կամ զերեւելի քաղաքաց զվանս 'ի մէջ բերէ աստ, կմ՟ զհռոյակապ վանորայս՝ որ մայրավանք եւս կոչէին: Եւ կարի քաջ հռչակաւոր էր յաւուրս թարգմանչաց մերոց 'ի կոստանդինուպօլիս վանքն ակումիտաց, ը՟ն անքուն կոչեցելոց, որ եւ անհանգստից վանք· նոյնն կոչիւր միանգամայն եւ վանք սպուդէից կմ՟ սդուտիդաց· ուստի ելին անձինք երեւելիք· թող զի ո՟ւղ 'ի գիրս եւագրի կրօնաւորութինն կոչի նաեւ ըսբուտի, նոյնպէս եւ 'ի վարս հիլարիոնի կոչի 'ի հերոնիմոսէ սդուտիում: Հ· ոչ հայեցեալ 'ի յետեւառաջունն պատմութե խորենացւոյն՝ յաւուրս կաթուղիկոսութե սբյն սահակայ պատմէ ստանալ նմա զվարթանուն աշակերտս խստակրօնս· իսկ Ճ· շփոթութբ անուան՝ սբյն մեսրոպայ ընծայէ զնոյն:

Միաբան ցուցանեն պատմութիք խոր· կոր· փարպ· եւն, թէ սբն սահակ ը՟ն երկար կենօք ապրեցաւ· այլ որոշակի չյիշեն զթիւ ամացն· միայն թովմա արծրունի բացայայտ գրէ, * կեցեալ սբն սահակ ամս ՃԻ·
" փոխի յաշխէս 'ի կարգս հրեշտակաց· եւ տարեալ հան_
" գուցանեն զնշխարս սբյն յաշտիշատ տարօնոյ 'ի տե_
" ղոջ վկայարանի սբյն յովհաննու մկրտչին եւ աթանա_

„ գինի վկային || ։ Այս չէ մեզ դժուարահաւատալի, յետ գիտելոյ թէ նստաւ 'ի կաթուղիկոսութե՟ ամս ծ՟ա. և 'ի նստելն ոչ էր արդեօք պակաս քան զվաթսունամեայ, հայելով 'ի հանգամանս պատմութե՟ց. վ՟յ ոչ պակաս քան զհարիւրեւմեան երևի վախճանեալ. բայց ծ՟ն աւել չտան մեզ թոյլ ժամագիրք, ը՟ս որոց թուականք ժողովոյն Նիկիոյ և Եփեսոսի՝ հանդերձ ամօք կայսերաց ժամանակին նշդեալք՝ անփոփոխելիք են ։

Կարևոր է լսել զբանս կորեանն ձեռնասուն աշակերտի սր՟յն սահակայ, թէ որպիսի հանգամանօք նկարագրէ զփոխումն և զթաղումն սր՟յն. (զոր մեք ը՟ս ոճոյ խորենացւոյն համառօտեցաք). * Յետ այնորիկ (ասէ)
„ դէպ լինէր նովին ճշմարտութ՟բ երանելոյն սահակայ,
„ լցեալ աւուրբք, երկայն ժամանակօք, և վայելչա-
„ ցեալ ա՟ծաբեր պտղոցն բարութ՟բք, յառաջնումն ամի
„ յազկերտի որդւոյ վռամայ թագաւորի կացելոյ 'ի
„ պարսից Ծ՟ին, 'ի բագրևանդ գաւառի 'ի գիւղ բլրո-
„ ցաց, 'ի կատարել ամսեանն նաւասարդի, ո՟ր և զօր
„ ծննդեան երանելոյն յիշէին, յերկրորդ ժամու ա-
„ ւուրն, 'ի պաշտաման անուշահոտ խնկոյն, հանդերձ
„ ա՟ծահաճոյ աղօթիւք՝ ծերունւոյն 'ի ք՟ս աւանդեալ.
„ հայեցեալ 'ի մարգարէն՝ որ ասէր, 'ի ձեռս քո
„ յանձն առնեմ զհոգի իմ. և ստեփաննոսի երանելոյ՝
„ որ ասէր, տ՟ր յ՟ս ընկալ զհոգի իմ. ը՟ս նմին օրինակի
„ և նր՟ ապասպրեալ զանձն և զմնացեալս ամենապահ
„ շնորհացն ա՟յ ։ Զոր և առեալ վաղվաղակի ա՟մ հան-
„ դերձելովք՝ ձեռնասուն ա՟ծասէր պաշտօնէիցն իւ-
„ րոց. որոյ գլխաւորին երեմիա անուն ճանաչէր՝ այր
„ ն՟ը և բարեպաշտօն, հանդերձ ա՟ծասէր իշխանակ-
„ նաւ միով՝ որ անուանեալ կոչէր դուստր, որ էր կին
„ վարդանայ՝ զոր 'ի վերնոյն յիշեցաք, և բազում ամ-
„ բոխիւ ս՟բց ժողովոց, բարձեալ զս՟բն սաղմոսիւք և
„ օրհնութ՟բ և հոգևոր բարբառով, յետ սակաւ ինչ
„ աւուրց՝ ը՟ տիւ և ը՟ գիշեր 'ի տարոն հասուցանէ-
„ յին մինչ 'ի բուն իւր գիւղն յաշտիշատ. և անդ 'ի մար-
„ տիրոսական խորանին յարկեղ ս՟բցն հանդերձ ա՟մ ա-
„ նուշահոտ խնկօք եդեալ. և կնքեալ ք՟սական կնքովն.
„ և զօրինաւոր յիշատակն 'ի վ՟ր կատարեալ, այնու-
„ հետև իւրաքանչիւրն դառնային. որոց և նոյնպէս
„ ամի ամի գումարելովք՝ 'ի նոյն ամսեան՝ զնոյն յիշա-
„ տակն տօնախմբեն || ։

ՎԿԱ.

ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Սրբոյն Պիոնի քահանայի, և որոց ընդ նմա վկայեցին զմիւռնիոյ ։ (1)

Հ. մարտ. 23 ։ Յ. մարտ. 11 ։ Լ. փետր. 1 ։ Ճառընտ. Ա. հհէ. և Գ. . ամփփ ։ Բոլլանտ. յուն. հատ. Ա. փետր. 1. էր. 37=46 ։ Ռուինարտ. 116 ։ Եւսեբ. պատմ. եկեղ. Դ. 14. եւս 15 ։ Մետափր. և այլք ։ (2)

ՍՈՒՐԲՆ ՊԻՈՆ ԱՅՐ և առաքինի վկայն քրիստոսի պիոնիոս, որ և պիոն քահանայ, էր մի 'ի գլխաւոր երիցանց եկեղեցւոյն զմիւռնացւոց (այժմ իզմիրու, որ 'ի յոնիա փոքուն ասիոյ), յերրորդ դարու, լի հոգւով և զօրաւոր բանիւ վարդապետութեան. որով դարձոյց զբազումս 'ի հրէից և 'ի հեթանոսաց 'ի ճանապարհն ճշմարտութեան. և եղև ամենայն հաւատացելոց՝ որ 'ի զմիւռնիա, հաստատութիւն 'ի կրօնս բարեպաշտութեան, և առաջնորդ 'ի վարս բարիս օրինակաւ իւրով, և առաւել քաջալեր 'ի համբերութիւն հալածանաց, որ յարեաւ ընդդէմ քրիստոնէից յաւուրս դեկոսի կայսեր ։

Եւ եղև զի աւուրբ միով յառաջ քան զտօն յիշատակի սրբոյն պօղիկարպոսի զմիւռնոյ հայբապետին (3), մինչդեռ 'ի պահս էր երանելի երիցն պիոն՝ հանդերձ նոքօք որ ընդ նմա էին 'ի տան, ը՟ն էն կին մի խոստովանող սաբինա անուն (4), և այր ո՟մն ք՟սասէր ասկղեպիադէս կոչեցեալ, յայտնեցաւ պիոնի 'ի տեսլեան, եթէ պարտ է ձեզ ըմբռնիլ յանհաւատից 'ի վաղիւ՟ անդր յաւուր կատարման պօղիկարպոսի, որ կոչիւր օր մեծի շաբաթու։ Յայնժամ յարուցեալ պիոնի՝ պատմեաց զտեսիլն սաբինայ և ասկղեպիադեայ, և առեալ անուրս երկաթիս էարկ 'ի պարանոց իւր և ն՟ց․ զի մի՛ 'ի տանել զն՟ս դահճացն արձակ՝ կարծիցէ ոք, եթէ իբրև զայլս երթան ճաշակել 'ի պիղծ զոհից, այլ զի տեսցեն ամենեքեան՝ եթէ սահմանեալ են իսկոյն 'ի բանտ տանել զն՟ս վ՟ս անուա՟ն ք՟սի․ վ՟ս զի զբազումս 'ի տկարամտաց որսացեալ էին անօրէնք յաւուրսն յայնոսիկ 'ի հաղբս չարին․ և էր ուրախութ՟ի մեծ անհաւատից, և սուգ անհնարին 'ի վ՟ր հաւատացելոց։ Եւ այնպ՟ս մնային պիոնեանք 'ի տան՝ յաղօթս ապաւինեալ զգիշերն ողջոյն մինչև ցլուսանալ առաւօտուն, և ոչինչ ճաշակեալ 'ի շաբաթուն՝ յորում հաղորդեցան ն՟ք խորհրդոյն, բայց միայն հաց և ջուր։ Եւ ահա եկն եհաս 'ի վ՟ր ն՟ց պողեմոն մեհենապետ հանդերձ պաշտօնէիւք, որք կարգեալ էին խնդրել և ձգել զքրիստոնեայս, զի զոհեսցեն և կերիցեն 'ի պիղծ կերակրոցն։ Եւ ասէ ց՟ն՟ս մեհենապետն․ ո՟մ իրօք գիտէք ըզհրաման ինքնակալին, որպէս հրամայէ ձեզ զոհել ա՟ծոցն :

Պիո՛նի ետ պիոն քահանայ, և ասէ. մեք դիտեմք զպատուիրանս ա՟յ, յորս հրամայէ մեզ նմա միայնոյ երկրպագանել : Իսկ պողեմոն ասէ. եկա՛յք ՚ի հրապարակ, և անդ հասու լինիջիք ստուգութ՟ե բանիցս, և հաւանեալ հնազանդեսջիք : Իսկ սաբինա և ասկղեպիադէս ասեն. մեք ա՟յ կենդանւոյ հնազանդիմք. և առեալ տանէր զն՟ս ոչ բռնութ՟բ. ը՟ նոսին կալան և զլեմնոս երէց, և զկին ոմն կարինացի մակեդոնիա անուն :

Եւ մինչդեռ գնային երանելիքն, տեսեալ զն՟ս ամբոխին՝ զի շղթայս ունէին, խուռն ընթանային զհետ ն՟ց իբրև ՚ի հանդէս ինչ չքնաղ տեսարանի. և իբրև եկին ՚ի հրապարակ թատրոնին ՚ի յարկ սրահին արևելից դրանն, լցաւ ա՟մ ատեանն և դստիկոնք յարկացն հեթանոսօք և եբրայեցւովք, կանամբք և մանկտւովք. քանզի պարապէին և հրէայք ամենեքեան վ՟ս աւուր շաբաթուն, (որ ը՟ ոմանց ասի լինել մեծ շաբաթն զատկի) : Արդ յորժամ կացուցին զկապեալսն ՚ի մէջ, խօսել սկսաւ պողեմոն. բարւոք է ո՛վ պիոնիէ հաւանել ձեզ և զոհել, որպէս բազումք հաւանեցան. զի մի՛ չարաչար տանջիցիք, այլ ապրեսջիք ը՟ օրինակի ն՟ց :

Յայնժամ պիոնի ձգեալ զձեռն յամբոխն լուրջ երեսօք՝ պիո՛նի առնէր վայելուչ ատենախօսութ՟ն այսպէս. Արք՝ որ ՚ի գեղեցկութ՟ե և ՚ի զուարճութ՟ե զմիւռնիայ յօրանայք, և ՚ի քերթածս մեղեդեաց քաղաքակցիդ ձերոյ Հոմերոսի՝ ո՟պ ասի՝ պանծանայք, և որք միանգամ ՚ի հրէից ը՟ ձեզ լիցեն այժմ, ունկըն դիք սակաւ բանից՝ զոր խօսելոցս եմ։ Վ՚անզի լսեմ, եթէ խնդամտիք, յորժամ ՚ի մերոցս զոք ՚ի ձեզ ձգէք, և անդէն ոտնհար լինիք ՚ի վ՟ր ուրացողացն՝ ծաղր առնելով զկործանումն նոցա, և խաղ համարիք զվրէպ ն՟ց՝ զի կամաւ զոհեցին։ Պա՛րտ էր ձեզ ո՛վ հելլենացիք անսալ վ՟դ՟պին ձերոյ Հոմերոսի, որ խրատն տայ, եթէ չէ՛ բարւոք խնդալ ը՟ մահ ուրուք, և ՚ի վ՟ր մեռելոյ ոտն հարկանել (5). և ձեզ ո՛վ հրէայք՝ լսել մովսէսի, որ հրամայէ, եթէ տեսցես զգրաստ թշնամւոյ քո անկեալ զբեռամբ, ոչ զանց արասցես, այլ յարուցանելով յարուսցես զնա. նոյնպէս և սողոմոնի՝ որ ասէն. եթէ անկցի թշնամին քո, մի՛ խնդար. և ՚ի գայթակղիլ ն՟ր մի՛ բարձրանար։ Ս՟ոյ և ես խմում վարդապետին հաւանեալ՝ մեռանել ընտրեմ մանաւանդ՝ ք՟ անցանել զբանիւք ն՟ր. և ջանամ չփոխել զոր ուսայն նախ, և ապա ուսուցի։ Իսկ արդ զո՞վ ծաղր առնել յօժարին հրէայք ՚ի պատճառս յանցաւորութե՟ն, ժամանակ առեալ համարձակութե՟ն յաւուրս տառապանացս քրիստոնէից. զի թէև թըշնամիք ն՟ց եմք՝ ո՟պ ասենն, այլ մարդիկ եմք. և կ՟մ զի՞նչ վնասեալք ՚ի մէնջ՝ զրպարտեն զմեզ. զո՞վ ոք զրկեցաք, զո՞վ ոք սպանաք, զո՞վ ոք կռապաշտել ուսուցաք։ Ա՟մ թէ իշխե՞ն արդեօք հաւաստել զյանցանս ոմանց ոմանց ՚ի մերայոց՝ որք վ՟ն երկիւղի մարդկան զրկեցան 'ի հաւատոց , ը՟ չարիս իւրեանց ծանրագոյնս յոյժ յոյժ . զի այնչափ առաւել է նոցայն , որչափ կամաւորն մեղք քան զակամայն . ո՞վ ոք արդեօք ստիպեաց զհրէայս նուիրել զանձինս բէլփեգովրայ , և զոհել դիւաց զուստերս և զդստերս իւրեանց , և յայլ ևս ազգի ազգի չարիս մտաբերել , միշտ խստապարանոց գտեալ և անսաստ յա՟ծակոյս կողմն անդր . ա՛ղէ ընթերցցի՛ն զելսն և զգիրս դատաւորացն և զթագաւորացն , և զայլն ամ՟՝ որովք յանդիմանին վ՟ա կամակոր ապիրատուե՟ցն , զոր գործեցին ։

Այլ թէ և զոմանս 'ի մէնջ ինքնակամ խոտորեալս տեսանելով՝ վասն նոցա զամենեսեան ստգտանէք , համարեցարո՛ւք զմօտակայ իրաց կալոյ նման լինել . ո՞ր շեղջ 'ի կալն մեծ իցէ . յարդի՞ն , եթէ ցորենոյն . ապաքէն յորժամ մշակն հեծանոցաւն սրբէ զշեղջն , յարդն վ՟ա զի թեթև է՝ դիւրաւ 'ի հողմային օդոյն այսր անդր տարուբերի , իսկ ցորեանն անդէն մնայ ։ Տեսանէք և զուռկանս՝ որ 'ի ծով արկանեն . մի թէ զա՟մ զոր ժողովեն , պիտանի՞ է . նոյնպէս և յորդիս մարդկան ընտրութիւն լինիցի ։ Արդ ո՞րպէս կա՛մ է ձեզ համարել զչարչարիլն մեր . իբրև զարդա՞րս , եթէ իբրև զանիրաւս ։ Եթէ իբրև զանիրաւս , զիա՞րդ ոչ դուք որ առաւել անիրաւ գտայք , 'ի նոյն իսկ 'ի գործոցդ յանդիմանեալք՝ զնոյն չարչարիք . ապա եթէ իբրև զարդարս , զի՞նչ յոյս ունիցիք դուք՝ յորժամ արդարքն այսպէս չարչարիցին . զի թէ ար-

արդարն հազի՛ւ կեայ , ամպարիշտն և մեղաւորն ո՞ւր գտանիցի · քանզի դատաստան ա՟յ կայ 'ի վերայ ե՟ի , և կայ մնայ մարդկան կրել զփոխարէն չարեացն իւրեանց յանտիս կ՟մ յաստիս հրով և ջրով և այլ արկածիւք : Եւ զայս հաստատեն մեզ և արդիւնք իրաց՝ որք երևեին 'ի վ՟ր երկրի : Իմ իսկ երթեալ , և շուրջ եկեալ ը՟ ա՟մ հրէաստան , տեսի 'ի սահմանս ն՟ր զնշանակս բարկութ՟ն ա՟յ , որ եղև 'ի նի՟մ վ՟ն մեղացն · երկիր 'ի հրոյ ածխանացեալ՝ անբաժ յա՟մ պտղոց , և բնութ՟ի ջրոյ տկարացեալ առ ոչ ևս կարելոյ կենդանի ինչ սնուցանել : Եւ զի՞ ասեմ վ՟ն հեռաւոր վայրացն այնոցիկ · դուք իսկ պատմէք վ՟ն հրոյն , որ ցոլանայ 'ի յետնէ՝ որ 'ի սիկիլիա , և յայլ կղզիս · և եթէ այն ևս հեռի է 'ի ձէնջ , հայեցարո՛ւք 'ի տեղիս ջերմկաց ջուրց՝ որ յերկրէ պղպջակէ · և իմացարո՛ւք , եթէ ուստի՛ լուցանի և կ՟մ ուստի՛ ջեռնու , եթէ ոչ էր 'ի ներքոյ զօրութ՟ի հրոյ՝ հաւասար երկրային բոցոյ : Պատմին և հրայրեացք և ջրհեղեղք ե՟ի · ո՞չ այն՝ զոր դուք առ դևկաղիոնաւն ասէք , և մեք առ նոյի՛ւ · զի 'ի ձեռն մասնաւոր նշանացս զհասարակացն ծանիցուք աղէտս յաւուրն ահեղի :

Ա՟յ վկայեմք ձեզ վ՟ն հանդերձեալ դատաստանացն , որ լինելոցն է յա՟յ հրով 'ի ձեռն բանին իւրոյ · և վ՟ն այնորիկ զա՟ծն՝ որ 'ի ձէնջ ասին , ո՛չ պաշտեմք , և պատկերին ոսկւոյ երկիր ո՛չ պագանեմք · զի մի՛ շարժեսցուք ը՟դէմ մեր զսաստկութ՟ի ցասմանն ճշմարտին ա՟յ :

Զայս

Ցայսվայր ունկն դնէին նմա պողեմոն մեհենապետն և գործակիցք նր՟ և ամ՟ ամբոխն անշշունչ լռութ՟. այլ իբրև լուեան զվերջին ասացուած սորին , ոչ ևս թոյլ ետուն նմ՟ խօսել. զի մի առաւել ծանակեսցի հեթանոսութին , և բարձրասցի կողմն ճշմարտութե ։ Ապա բերեալ զպիոն և զորս ը՟ նմա 'ի յարկաց անտի 'ի մէջ անդր թէատրոնին , և շուրջ պատեալ զնոքօք ոմանց 'ի գլխաւորացն հեթանոսաց հանդերձ պողեմոնիւ , աղաչէին և ասէին. հաւանեա՛ց մեզ պիոնիէ , և ապրեցո՛ զանձն քո , զի սիրեմք զքեզ. և զայս խրատ տամք քեզ , զի կեցցես. քանզի և բազում իրօք արժանի ես կեալ՝ բարի բարոյից քոց աղագաւ և հեզութեդ և իմաստութեդ. մինթէ ո՞չ բարւոք են կեանքս այս և լոյս. ընդէ՞ր զրկես զքեզ 'ի կենաց աստի և 'ի տեսոյ քաղցր արևուն ։ Բազում և այլ
ինչ ասէին բանս թախանձանաց ։

Իսկ պիոն ասէ. և ես ասեմ , թէ բարւոք են կեանք , այլ այն՝ որում մեքն ցանկամք. բարի և լոյս , այլ զոր տենչամքն տեսանել. բարւոք են և այս ամ՟ երևելիքս. և մեք ո՛չ եթէ մահու ցանկացեալ եմք և փախչիմք յարարածոցս այ՟ , այլ վս՟ առաւելութե ևս մեծամեծացն արհամարհեմք զայս. և զձեզ իսկ գովեմք 'ի պատուասիրել զմեզ վասն վայելից կենաց , այլ կասկածեմք 'ի դաւաճանութէդ , որ առաւել կորստեան է , և 'ի յաւիտենից կենաց զրկէ զմեզ. զի և ո՛չ այնչափ վնասէ յայտնի թշնամուին՝ որչափ գաղտնի նի հրապոյրք ։

Յայնմ վայրի աղեքսանդրոս ոմն այր դուհիկ և ժանտաբարոյ՝ լրբութ՟բ յառաջ մատուցեալ ասէ · լո՛ւր մեզ ո՛վ պիոնիէ ։ Ասէ ս՟բն · քեզ պարտ է յինէն լսել · քանզի զոր դու գիտես , ես քաջ գիտեմ · այլ զոր եսն գիտեմ , դու բնաւին անգիտանաս ։ Իսկ աղեքսանդրոսի ծաղր արարեալ զանուրն՝ որ ՚ի պարանոցին պիոնի , ասէ · այդ զի՞նչ է ։ Պիոն ասէ · ա՛յդ է նշանակ , զի գիտասջիք՝ եթէ ո՛չ ՚ի հարցփորձ անգամ մտանել արժան համարիմք , այլ դատե՞ն մեզէն՝ պատրա՛ստ եմք ՚ի բանտ երթալ , և ո՛չ ՚ի բախտանոցն ձեր ՚ի տեղի պաշտամանց զոհիցդ · և զի ՚ի տեսանել զանուրս ՚ի վ՟ր մեր ոչ բռնաբար յափշտակեալ տանիջիք զմեզ , այլ թողջիք ազատաքայլ բերիլ ՚ի հա՛նդէս վկայութ՟ե · և դարձեալ այս հնարք գեղեցիկ են չմտանել երբէք ը՟ն սեամս մեհենիդ ձերոյ · քանզի կարծեմ թէ կապանօքս հանդերձ ոչ մուծանէք զմեզ առաջի կռոցդ ։ Եւ իբրև այսպէս պապանձեցաւ այրն , դարձեալ որ շուրջն կային՝ ողոքանօք աղաչէին զպիոն , զի հաւանեսցի զոհել ։ Եւ ՚ի մերժել նր՟ զն՟ա՝ ասէ մեհենապետն պողեմոն · եթէ ո՛չ կամիս զոհել , գո՛նեա ՚ի բախտանոցն էկ ։ Ասէ պիոն · այլ չէ՛ օգուտ կռոցն քոց , թէև անդր եկեսցուք ։ Պողեմոն ասէ · հաւանեցո՛ մեզ զբանդ զայդ , և կա՛մ դու մե՛զ հաւանեաց ։ Իսկ ս՟բն ասէ · իցէ՞ թէ կարէի հաւանեցուցանել զձեզ քրիստոնեայս լինել : Զայն լուեալ հեթանոսաց՝ մեծաձայն ծիծաղեցան ասելով . մի՛ արդեօք արասցես զբանդ զայդ , զի մի՛ և մեք կենդանւոյն այրեսցուք ո՞չ զքեզ : Պիոն ասէ . չարագոյն է յետ մահու այրելն 'ի հուրն անշէջ : Դարձեալ ասէ պողեմոն . հաւանեա՛ պիոնիէ : Պատասխանի ետ երանելին . հրաման առեալ է քո կամ հաւանեցուցանել , կամ տանջել . արդ մ̅ն զի ոչ կարես հաւանեցուցանել , տանջեա՛ : Նա անդրէն ստիպէր . զոհեա՛ ասեմ ա՛յ պիոնիէ : Սբ̅ն ասէ . ասացի , և դարձեալ ասեմ . ո՛չ զոհեմ : Պողեմոն ասէ . ընդէ՞ր . պիոն ասէ . մ̅ն զի քրիստոնեայ եմ : Նա հարց պողեմոն . և զո՞ր ա̅ծ պաշտես : Սբ̅ն ասէ . զարարիչն երկնի և երկրի և ամենեցուն մեր . որ տայ մեզ զա̅մ ինչ . զոր և ծանեաք 'ի ձեռն բանին նր̅ ք̅ի յ̅ի : Ասէ պողեմոն . զոհեա՛ գոնէ ինքնակալին . պիոն ասէ . ես մարդոյ ո՛չ զոհեմ :

Ըստ սմին օրինակի եհարց մեհենապետն և զմի մի յընկերացն պիոնի . և 'ի գիր անցոյց զա̅մ բանս ատենին . և տեսեալ զանփոփոխելի միտս նց̅՝ ետ տանել զն̅ս 'ի բանտ ըստ հրամանի փոխանակի բդեշխին : Իսկ ամբոխն՝ որ սաստիկ կուտեալ լցեալ էր զհրապարակն ա̅մ , զարմանայր յոյժ ը̅ հաստատուն սր̅ցն և ը̅ զուարթամիտ յանձնառութ̅ կապանաց և մահու . և ոմանք ասէին վ̅ն պիոնի . զիա՞րդ միշտ դեղնեալ էր դիմօք , և այժմ կարմիր են երեսքն , և փայլէն իբրև զվարդ :

Եւ յորժամ արգելան 'ի բանտի ա՟յ վկայքն, բազումք 'ի հաւատացելոց հաճելով զբանտապանս՝ գային առ նո՟ և բերէին զպէտս նց՟ ։ Իսկ երանելին պիոն ոչ հրամայէր առնուլ ինչ ․ քանզի ասէր ․ եթէ արտաքոյն՝ յորժամ շատ ինչ պիտոյ էր , չեղաք ումեք ծանր, և այժմ զիա՞րդ առնուցումք՝ յորժամ սակաւ ինչ պէտք են ։ Ընդ որ դժուարեալ բանտապահացն՝ ոչ ևս կամեցան գութ ինչ ցուցանել նց՟ , այլ արկին զնո՟ 'ի ներքսագոյն բանտ , զի մի՛ գտցեն յումեքէ զողորմութի՟ ։ Եւ նց՟ փառաւորեալ զա՟ծ՝ ուրախութ՟բ դադարեցին 'ի խորագոյն արգելանս , շատ համարեն և զսովորական ոգեպահսն՝ զոր տային նց՟ ․ մինչև զզջանալ բանտապետին , և կամիլ փոխել զնո՟ 'ի տանէն ։ Այլ նք՟ չառին յանձն ․ փա՛ռք ասեն ա՟ն ․ լաւ ևս է մեզ աստէն դադարել ․ և եղև այն նոցա բարի ․ քանզի հեշտեաւ էր նց՟ յառանձնութե՟ անդ ընթեռնուլ և յաղօթս կալ 'ի տուէ և 'ի գիշերի ։

Բայց գային ստէպ բազումք 'ի հեթանոսաց որո՟ց բարեկամք , և ջանային հաւանեցուցանել զնո՟ ․ և լուեալ զպատասխանիս պիոնի երիցուն՝ զարմանային ։ Մտանէին և ուրացօղք ոչ սակաւք , որք յակամայս էին բռնադատեալ յանօրէն օրէնս ․ և սուգ աւեալ լային 'ի վ՟ր անձանց և ընկերաց ․ մանաւանդ որք յառաջն արք երկիւղածք և 'ի բարի վարս վկայեալք էին ․ մինչև լալ պիոնի , և ասել ․ Նորօրինակ տանջանօք

տան

տանջիմ, յօշ յօշ կոտորիմ, տեսեալ զմարգարիտս եկեղեցւոյ 'ի խոզից կոխան եղեալ. զաստեղս երկնից 'ի տանոյ վիշապին յերկիր քարշեալ. զորթն զոր տնկեաց աջն տ՟յ՝ 'ի կնջէ անտի ապականեալ. այժմ և զայն կթեն անցաւորք ճանապարհի ։ Որդեակք իմ, զորս դարձեալ վերստին երկնեմ, մինչև նկարեսցի ք՟ս 'ի ձեզ. փափուկք իմ գնացին զճանապարհս խիստս. լցեալքն 'ի սեղանոյ տ՟ն սովամահ կորնչին. ո՛չ սով հացի, և ո՛չ ծարաւ ջրոյ, այլ սով լսելոյ զբանն տ՟ն. այժմ համան 'ի խնջոյս է, և եսթեր և տ՟մ քաղաքն խռովի. լսեմ թէ իւրաքանչիւր ոք և զմերձաւոր իւր մատնէ. զի լցցի ասացեալն, մատնեսցէ եղբայր զեղբայր 'ի մահ. արդեօք խնդրեաց զմեզ սատանայ խարբալել իբրև զցորեան. և հրեղէն հեծանոցն 'ի ձեռս բանին է սրբել զկալն. և կարծեմ թէ անհամեցաւ աղն, և կոխի 'ի մարդկանէ ։ Բայց մի՛ ոք կարծեսցէ որդեա՛կք իմ, եթէ տկարացաւ տ՟րն. այլ մեք ։ Միթէ ձեռն իմ ասէ ո՞չ կարէ փրկել. և կա՞մ ծանրացա՞ւ ունկն իմ, զի մի՛ լուիցէ. այլ մեղքն ձեր որոշեն 'ի մէջ ձեր և տ՟յ ։ Բազում և այլ բանիւք խրատէր և յապաշխարութ՟ի յորդորէր զամենեսին. և զգուշացուցանէր զհաւատացեալս զգոյշ լինել ոչ միայն 'ի սուտ կրօնից հեթանոսաց, այլև 'ի հրէից դաւաճանողաց ։

Յետ այսորիկ իմացեալ պիոնի, եթէ գալոց են միւսանգամ՝ հանել զնա 'ի բանտէ

հան

հանդերձ ընկերօքն, և ստիպել 'ի զոհել, փութացաւ արձակեաց զորս եկեալ էին 'ի տես ն̅ր, և քաջալերէր առանձինն զընկերս իւր՝ ոչինչ երկնչել յանօրինաց։ Եւ ահա հասին 'ի վ̅ր ն̅ց մեհենապետն պողեմոն, և զօրագլուխն այրուձիոյ Թէոփիլոս՝ դահճօքն հանդերձ և բազում ամբոխիւ, և ասեն. ահա գլխաւորն ձեր եւկտեմոն զոհեաց. արդ ելէք եկայք 'ի մեհեանն, և հաւանեցարուք և դուք 'ի զոհել. և կամ դատեցարուք անդանօր առաջի իշխանաց, յորոց մի է այժմ և եւկտեմոնն այն։ Ասէ ցն̅ս պիոն. որք 'ի բանտ արկան հրամանաւ բդեշխին, պարտ է ն̅ց մնալ անդ, մինչև նա հանել կամեսցի կ̅մ 'ի բանտէ, և կ̅մ 'ի կենաց մարմնոյ. դուք զի՞ զձեզ 'ի ն̅ր գործ արկանէք։

Եւ ն̅ց յամօթ եղեալ՝ չոքան առ ժամ̅ն. և դարձեալ եկին՝ ունելով ը̅ իւրեանս զնուիրակապետն բդեշխին, առ 'ի տանել զնոսա բռնութ̅բ 'ի մեհեանն. և ասեն ցն̅ս նենգաւ. բդեաշխն յղեաց պատուիրակս, զի յեփեսոս երթիջիք։ Պիոն ասէ. եկեսցէ առաքեալն, և առցէ զմեզ։ Իսկ զօրագլուխն ասէ. այլ նուիրակապետս՝ որ աստ, պատուականագոյն է։ Զայս ասացեալ բուռն եհար զպարանոցէ ս̅ր̅յն, և պնդեաց այնչափ՝ մինչև փոքր մի ևս և հեղձուցանել զնա. և ետ ցդահիճսն. նոյնպէս կալաւ և զընկերս ն̅ր որ 'ի բանտին. և ասաց բերել զամենեսին ը̅ իւր 'ի մեհեանն։

Իսկ երանելիքն իբրեւ ելին 'ի հրապարակն , մեծաբարբառ աղաղակէին՝ եթէ քրիստոնեայ եմք • եւ չկամեցեալ երթալ 'ի մեհեանն՝ 'ի քարշ անկանէին • իսկ դահիճքն բռնանային բառնալ զնս եւ տանել • այլ առաւել եւս 'ի վր պինդ աշխատ լինէին • քանզի վեց դահիճք ոչ կարելով տանել զնա ուղղորդ վս 'ի քարշ անկանելոյն՝ վերառեալ ունէին գլխիվայր • եւ նա ծեծէր աքացի զկողս նց • եւ նոքա գելուին զոտս նր ։ Ածին այնուհետեւ զսբն վերամբարձ , եւ եդին առաջի բագնին 'ի գետնի • ուր տակաւին կայր 'ի մէջ իշխանաց եւկտեմոն (Եպիսկոպոս) , որ այն ինչ զոհեալ էր կռոց • եւ բռնի ստիպէին եւ զպինեանսն զոհել • եւ ոչ կարէին առնել տալ զոր կամէին ։ Յայնժամ ամէն ցնս իշխանքն • ընդէ՞ր ոչ զոհէք • եւ նք ասեն • վս զի քրիստոնեայք եմք ։ Ասէ լեպիդոս գլխաւոր իշխանն ցպիներեց • զո՞ր ած պաշտես • պինն ասէ • զայն՝ որ արար զերկինս եւ զերկիր եւ զամ ինչ ։ Լեպիդոս ասէ • զխաչեա՞լն ասես • ասէ պինն • զոր առաքեաց հայր 'ի փրկուի ազի • զնոյն եւ ընկերք նր միաձայն դաւանէին ։ Իսկ լեպիդոսի ծաղր արարեալ զնոքօք՝ անէծ եւ անաթեմա ասաց երանելեացն ։ Յայնժամ սբ քահանայն պինն մեծաձայն աղաղակեաց 'ի մէջ ատենին • յածպաշտութե պատկառեցէք , զարդարուի պատուեցէք • օրինաց ձերոց զհետ երթայք՝ զոր ընկալայք 'ի թագաւորաց • զի՞ զմեզ խոշտանգէք իբրեւ

զան.

զանհաւանս, ուր դուք անսաստ էք նոցին հրամանաց. տանջել հրամայեցայք, և ոչ բռնադատել. զի՞ զմեզ բռնի ձգէք 'ի պաշտել զնոտիս ։

Իսկ մի ոմն 'ի Ճարտարացն՝ որոյ անուն մեծ էր 'ի Ճարտարախօսութե՟, և 'ի վեր էր պատուով քան զբազումս, Ռուփինոս անուն ն՟ր, ասէ. լուեա՛ պի՛ոնիէ, և մի՛ սնապարծ մտօք յանդգնիր ։ Նա պատասխանի հզօր նահատակն, և ասէ ցնա. միթէ զայդ այդպէ՞ս ուսոյց քեզ գրագիտութի՟ քո. ա՞յդ են գիրք քո, ա՞յդ են պատմութի՟ք քո. ո՞չ ապաքէն և սոկրատէս յաթենացւոց չարչարեցաւ վ՟ս մերժելոյ զնոտիս. ո՞չ նոյնպէս հանդիսացան 'ի ձերում միջի և արիստիդէս արդարն կոչեցեալ, և անաքսարքոս աբդերացի. և որ այլ ևս հանդոյն նոցին յիմաստասիրութի՟ և յարդարութի՟ և 'ի ժուժկալութի՟ կրթեալք. գուցէ այդ ձերդ իմաստունք սնապարծ մտօք վարեցան. և որ յայժմուս անիմաստք և տգէտք՝ հեղգասիրտք և թուլամորթք՝ մնացիք համարին ։

Նա և երբեմն կարկեցաւ այրն Ճարտարաբան, այլ ոմն 'ի Ճոխաց և 'ի գլխաւորաց ասէ. մի՛ աղաղակեր պի՛ոնիէ, և մի՛ բանիւք կարծեր յաղթահարել ։ Նա պատասխանի երանելին. և դու մի՛ 'ի գործս անարժանս զմեզ բռնադատեր. այլ արա՛ ը՟ մեզ՝ զոր կամիս. հո՛ւր վառեա, և մեք մեզէն մտանեմք ։

Յայնժամ վայրի տերտիոս (կի՟ տերենտիոս) ոմն յամբոխէ անտի աղաղակեաց, և ասէ.

գիտէք՝ զի այրդ այդ է, որ զայլս ես յորդորեաց, զի մի զոհեսցեն. ապա թէ ոչ՝ նոքա դիւրաւ անսային մեզ ։ Զայս լուեալ բազմութեն՝ լրբութե բերեալ՝ դնէին պսակս 'ի գլուխս նց, զի յանձն առցեն պատուասիրել զդիս ։ Իսկ նոքա բուռն հարեալ 'ի բաց ընկենուին, և աղաղակէին, քրիստոնեայ եմք ։ Եւ իբրև չգտին ինչ առնել նոցա՝ առաքեցին զնս դարձեալ 'ի բանտն. և 'ի ճանապարհի ամբոխն հեթանոսաց խաղ առնէր զնոսա և հարկանէր. և այնպէս ածան 'ի բանտն. և մտեալ 'ի ներքս՝ փառաւոր առնէին զած, զի հաստատուն մնացին յանուն քն, և ոչ յաղթեաց նց թշնամին ։

Եւ յետ բազում աւուրց անցանելոյ դէպ եղև ըստ սովորութեն՝ որ աւուրց յաւուրս, գալ բդեշխին ասիացւոց յեփեսոսէ 'ի զմիւռնիա. որում անուն էր կուինտիղիանոս անթիհիւպատոս. և տեղեկացեալ անցիցն անցելոց՝ կոչեաց զպիոն առաջի իւր տեսանել զվերջին դատ նորա. եհարց զնա, և ասէ. զի՞նչ կոչիս ։ Նա ասէ. պիոնիոս ։ Եւ ասէ ցնա. զոհեա ։ Պիոն ասէ. ոչ ։ Իշխանն ասէ. զո՞ր աղանդ ունիս, և զի՞նչ գործ է քո ։ Պատասխանի ետ սբն. զուղղափառ վարդապետութի ունիմ զկաթողիկէ եկեղեցւոյ. և կաթողիկէ եկեղեցւոյ երէց եմ ։ Իշխանն ասէ. դու ես վարդապետ նց ։ Սբն ասէ. այո, ուսուցանէի՝ զոր ուսայ 'ի ճշմարիտ վարդապետէն իմմէ 'ի քսէ ։ Ասէ իշխանն. յիմարութե ուրեմն վարդապետ էիր ։ Պատասխանի ետ վկայն . քա՛ւ լիցի , այլ ճշմարիտ իմաստուե՟ , այս է ա՟ծպաշտութե՟ ։ Իշխանն ասէ . որո՞յ ա՟ծպաշտուե՟ . պիոն ասէ . որոյ է պաշտել զա՟ծ հայր արարիչ ա՟մի ։ Օ այս ասացեալ սբ՟յն՝ համբարձ զաչս իւր յերկինս , և օրհնէր զա՟ծ ։

Ասէ ցնա իշխանն . աւադիկ և ես զա՟մ ա՟ծս պաշտեմ՝ որ յերկինս են , և զերկինս գլխովին . զի՞ յօդդ հայիս , և այն յա՟ծոց համարի է . գէ՛թ զոհեա՛ նմա ։ Պատասխանի ետ պիոն . ես զմի ա՟ծ պաշտեմ , և առ նա միայն աղօթել ուսայ . և ո՛չ եթէ ը՟ օդդ հայիմ , այլ՝ ը՟ արարիչ օդոյդ , և երկնի և երկրի , և ա՟մի որ է ՚ի նո՟ ։ Իշխանն ասէ . և ո՞ արար զայդ ա՟մ , ասա՛ ինձ ։ Սբ՟ն ասէ . չէ՛ ինչ հարկ ասել . զի ա՟մ արարածք քարոզեն զմի արարիչ իւրեանց ։ Իսկ նա ասէ . ես գիտեմ , եթէ ա՟ծ է արամազդ՝ որ յերկինս է . և այլ և.ս ա՟ծք են և ա՟ծուհիք . և եթէ զդլուխն ա՟ծոց պաշտես , զոհեա՛ արամազդայ . քանզի նա է թագաւոր ա՟ծոց ա՟մի ։ Իսկ սբ՟յն ձանձրացեալ ՚ի յիմարական բանից նր՟՝ լուռ կայր այնուհետև ։

Ապա հրամայեաց բդեաշխն հանել զնա ՚ի կախաղան , և տանջել չարաչար քերանօք ։ Իսկ ստէպ ասէր ցնա . զոհեա՛ պիոնիէ . և սբ՟ն ասէր ևեթ , ո՛չ . և ոչ առնէր զնա արժանի պխ՟նւոյ ։ Իսկ իբրև քերեցին զնա երկար , ասէ դարձեալ իշխանն . ապաշաւեա՛ ա՛յր դու . ընդէ՞ր հպարտացե՟ ես և մոլիս ։ Ասէ երանելին . չեմ հպարտացեալ կամ մոլեալ ,

լեալ , այլ 'ի կենդանի ոտ̃նէ ա̃յ իմմէ երկնչիմ: Ասէ յնա • փութա՛ս 'ի մահ • պի̃նի ետ • այո՛ տ̃միրօք , փութամ յայն մահ՝ որ է ինձ կեանք : Ադեաշխն ասէ • ոչ մեծ ինչ իրս առնես փութալովդ 'ի մահ • քանզի և որք յանձն առնուն գրիլ ը̃ գազանամարտիկս՝ վ̃ն դոյզն լումայից արհամարհեն զմահ , և կռուին ը̃ գազանսն • և դու ես իբրև զմի 'ի նոցանէ • արդ վ̃ն զի փութաս 'ի մահ , կենդանւոյն այրեսցիս : Զայս ասացեալ հրամայեաց գրել զդատակնիք մահու 'ի վերայ պիոնի • և դպիրն գրեալ զվճիռն հռովմայերէն՝ ընթերցաւ 'ի լուր ամենեցուն ը̃ ոճոյ հռովմայեցւոց այսպէս • Զպիոնիոս՝ վ̃ն զի քրիստոնեայ ասաց զինքենէ լինել , հաճոյ եղև հրամայել կենդանւոյն այրել : (6)

Յայնժամ վաղվաղակի ել յասպարէզն երանելին պիոնի մեծաւ յօժարութ̃բ և լի հաւատովք • և հասեալ 'ի տեղին՝ ինքնին մերկացաւ զհանդերձս իւր • և հայեցեալ ընդ սբ̃ և ը̃ պարկեշտ մարմին իւր՝ լցաւ ուրախութ̃բ , գիտելով՝ եթէ կայ մնայ նմա ըզգենուլ զհանդերձն անապականութե̃ : Եւ դարձեալ հայեցաւ յերկինս , և գոհացաւ զա̃յ՝ որ այնպէս անարատ պահեաց զնա • և ապա պարզեաց զինքն 'ի վ̃ր փայտին , և ետ զինքն բևեռել դահճին • քանզի սովորութ̃ի էր 'ի փայտ հեղուսել՝ զորս կամէին այրել : Եւ իբրև բևեռեցաւ , բազմութի̃ն աղաղակէր և ասէր • ապաշաւեա՛ պի՛ոնիէ , և առցին 'ի քէն բևեռքդ : Իսկ սբ̃ն ասէ զուարթութ̄բ · ամենևին չզգացի՝ եթէ ընաւ իցեն յիս բևեռք ։

Եւ կանգնեցին այնուհետև զերանելին, և բերեալ կուտեցին փայտս շուրջանակի, և լուցին ։ Եւ իբրև բորբոքեցաւ բոցն, պխոն եխից զաչսն · և բազմութեան թուէր՝ եթէ եհան զհոգին ։ Իսկ նա 'ի ծածուկ յաղօթս կայր · և յորժամ եկն 'ի կատարած աղօթիցն, եբաց զաչսն զուարթալից երեսօք 'ի մէջ վառեցելոյ հրոյն · և լսելի բարբառով ասաց զամէնն · և առ նմին յանձն արարեալ զանձն 'ի ձեռս Տ̄յ՝ ասէ · Տ̄՛ր Յ̄ս ընկալ զոգի իմ ։ Եւ զոյգ ը̄ բանիցն իբրև յանոյշ խորտկաց լիութ̄է մեղմով զգայուեալ՝ այնպէս արձակեաց զոգին · և կատարեցաւ անյաղթելի վկայութ̄բ , արժանացեալ լուսեղէն պսակին յերկնաւոր հանդիսադրէն · որոյ և պսակն յաղթութ̄ե յայտնի եղև ամենեցուն 'ի ձեռն սքանչելեացն · քանզի յետ շիջանելոյ հրոյն տեսին զտեսիլ ն̄ր ա̄մ եկեալքն 'ի տեղին անդր՝ վարդափայլ կարմրացեալ իբրև զքաջ նահատակի , որ ելանէ զուարթածաղիկ դիմօք 'ի մրցարանէ , և լոյս սքանչելի երևէր ծագեալ յերեսաց ն̄ր · ո̄պ գրեն ականատես անձինքն յեկեղեցւոյն զմիւռնացւոց՝ որք աւանդեցին զայս վկայաբանութ̄ի , եթէ * մեք՝ որ առաջիկայ էաք , այնպիսի ,, զնա տեսաք || ։ Յորմէ և եղև քրիստոնէից առաւել հաստատիլ 'ի հաւատս , և անհաւատից մեծաւ երկիւղիւ՛ գնալ 'ի վայրէն ։ Գործեցաւ այս 'ի հիւպատոսութ̄ե գայիոսի՝

սի՝ (7) յերեքշաբաթի աւուր (զոր այլք ընթեռնուն՝ յաւուր շաբաթու)’ի տասներորդ ժամու , որ օր մետասան էր (ըստ այլ օրինակի՝ երկոտասան) մարտի ամսոյ , յամի տ̃ն իբր 250 ։ Ըստ նմին օրինակի կատարեցան և այլ ընկերք նր̃ն , զորոց զանուանս ’ի վեր անդր յիշեցաք ․ և այլք ևս՝ (ըստ ոմանց հինգ , կ̃մ վեց) որոց անուանք գրեալ են ’ի դպրութե̃ կենաց ։ (8)

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ։

(1) Անուն պիոնի քահանայի (որ յոմանց վրիպակաւ գրի պիմոն ,)’ի սովորական օրինակս տօնացուցից ձեռ" և տպ" երկիցս եդեալ տեսանի ․ նախ՝ աստ ’ի միջոցս առաջաւորաց ը̃ մարկոսի արեթուսայ եպ̃սի ևն̃ ․ և երկրորդ , զկնի երկրորդ կիրակէի վերափոխման ։ Այժմ պէսպէս պատճառք մարթին լինել ․ առաջինն այն է , զի շփոթութ̃ն է ’ի զանազան օրինակս նաև ը̃ այլ անուանց տօնելոց ը̃ պիոնի յերկուս տեղիս ևս ․ զի ոչ նոյնչափ և ոչ նոյնանուն սբ̃ք երկրորդքն ․ զ̃ի մեծաւ մասամբ հնագոյն օրինակք դնեն աստ զերիս միայն ․ զ̃ի զպիոն , զմարկոս , և զկիւրեղ սարկաւագ ․ իսկ ’ի յետին օրինակս առ հասարակ կցեալ են և աբդաւ , որմզդան , սային , և բենիամին ։ Իսկ յետ վերափոխման , ուր հասարակօրէն դնին երեք անուանք՝ * պիոնի քահանային , և ստեփաննոսի ուլնեցւոյն , և աբդլմսեհի վկային || , յօրինակս ինչ չիք անուն պիոնի , և յօրինակս ինչ պակասի անունն միոյ կ̃մ միւսոյ ’ի հետևորդ սբ̃ց ․ վ̃ս դիւրին է յայտնի շփոթութիւն լինել և կրկնութե̃ պիոնի յերկուս տեղիս ։ Երկրորդն է այն , զի աբդաւն՝ որ է ուղիղ ընթերցուած անուան աստանօր ը̃ պիոնի , յոչ սակաւ օրինակս գրի աբդլմսեհ ․ որ կրկնե̃լ կայ իբրև ’ի բուն տեղւոջ նաև ը̃ ստեփաննոսի ուլնեցւոյ ․ յորմէ երևի՝ թէ ’ի կամիլն ոմանց բառնալ աստի զվրիպակ անունդ աբդլմսեհ , և

գնել յերկրորդ տեղւոջ, փոխադրեալ են կրկնութիւնք և զանուն պիոնի: Բայց եդեալ՝ թէ խորհրդով իցէ կրկնութիւն, ունիմք սակ այլ պատճառ կրկնի. զի կամ գիւտ ինչ նշխարաց լեալ իցէ նորին սրբոյ (զորմէ չէք ինչ յիշատակ), և կամ կայցէ այլ սուրբ համանուն՝ մեզ անգիտելի. զոր և այլք յիշատակեն, թէպէտև տարակուսանօք:

Քանզի 'ի հերոնիմեան անուանեալ վկայագրութեան հռովմայեցւոց այսպէս գրի սատանոր 'ի ՓԵՏՐ. 1. * 'Ի կաղանդս փետրվարի, 'ի զմիւռնիա քաղաքի յիշատակ „ պօղիկարպոսի եպիսկոպոսի, պիոնի, գիոնեսիոսի, և այ„ լոց վեցից. դարձեալ պիոնի, և այլոց հնգից ||: Ուր բոլլանդեանք ոչինչ իշխեն որոշել. այլ միայն զպէսպիսութիւն այլոց վկայագրաց իւրեանց յուշ առնեն ասելով. ՅՒՐԷՆ. 40. * Բազում վկայագիրք (լատինաց„ ւոց) 'ի վեր անդր յիշատակենք՝ պիոնի փառաւոր „ վկայի ընկերս համարին թուով հնգետասան: Այլ „ ոչ սակաւք, և այն գրեթէ յանուն ուսուճարգայ մա„ կագրեալք՝ երկոտասան ևեթ հաշուեն: Հին վկա„ յագիրն հռովմայ (հերոնիմեանն)... զերկոսին յան„ ուանէ յիշէ, զդիոնեսիոս ընդ այլ վեց անձինս, և ըզ„ միւս պիոն ընդ հինգ ընկերս. որպէս թէ ոչ ամենեքին „ 'ի միասին, այլ 'ի զանազան աւուրս կամ 'ի տեղիս, „ և գուցէ նաև այլևայլ օրինակաւ մարտիրոսութեամբ „ կատարեալ իցեն: Ոչ այլուրեք լինի յիշատակութիւն „ այսր երկրորդ պիոնիոսի կամ պիոնի, և կամ պենի ||:

Ուր յայտ է թէ այս բանք ոչինչ օգտեն մեզ 'ի հաստատել զպիոն երկրորդ, այլ առաւել զմի միայնն լինել ցուցանեն. որպէս և վկայաբանութիւնն է միոյ ևեթ պիոնի: Այլ թէ որպէս հանդիպեալ իցէ կրկնութիւն անուան պիոնի 'ի հերոնիմեան օրինակի՝ համաձայն կարծեցեալ կրկնութեան նոյն անուան 'ի մերում տօնացուցի, թէպէտև դիպուած ոք համարեսցի պատահական, այլ ինձ երևի այլ պատճառ քաջայարմար. իբր զի որպէս ունիս տեսանել 'ի յաջորդ ծանօթութեան, 'ի համաձայն բանից եւսեբի կեսարացւոյ 'ի վաղուց հետէ շփոթութիւն էր առ վկայաբանս՝ թէ արդեօք պիոն քահանայ 'ի ժամանակս պօղիկարպոսի իցէ, եթէ միով դարու զկնի. և զի հերոնիմոս 'ի քրոնիկոնն եւսեբի եդ յիւրմէ զպիոն ընդ պօղիկարպոսի, և վկայաբանութիւն պիոնի յայտ առնէ զնա բազմօք յետոյ լինել քան զպօղիկարպոս, 'ի հերոնիմեան վկայաբանութեան եդաւ կր-

կին

կէն կարծեաց եւս եղեալ են երկու անձինք պիոն անուամբ . և նոյնպիսի կարծեօք երկբայութե̄ նոյնպէս կրկնագրեալ է 'ի տօնացուցս մեր . ոչ (որպ̄ կարծեմ) յառաջին յօրինողաց . այլ յայլոց նորոգողաց ։ Այսչափ ինչ մեզ 'ի միտս եկն ասել . այլք որպ̄ կամին՝ ընտրեսցեն ։

(2) Ամենայնիւ հաստատուն և վաւերական է առաջիկայս վկայաբանութիւն սբ̄յն պիոնի քահանայի՝ իբրև գրեալ յականատես անձանց զմիւռնացւոց . և անայլայլելի աւանդութբ̄ պահեալ յամ̄ եկեղեցիս քրիստոնէից . և մի և նոյն վկայաբանութիւն է՝ որ գտանի 'ի ճառընտիրս մեր և յունաց և լատինացւոց , և զնոյն քաղեն ամ̄ համառօտագիր յայսմաւուրք . որոց կայ և կրկին թարգմանութիւն առ լատինս՝ հին և նոր , դոյզն տարբերութբ̄ , և մեք հայելով յամենեսին և բաղդատելով ը̄ ճառընտիրս մեր՝ իմիք իմիք պարզաբանութբ̄ եդաք առաջի ըստ ոճոյ գրչութե̄ մերոյ ։ Այլ որ մեծն է , զնոյն զայս վկայաբանութիւն ընթերցեալ է և եւսեբի յաւուրս իւր , այն է միով դարու զկնի սբ̄յն պիոնի , և անցուցեալ 'ի կարգս վկայական ճառից հաւաքելոց յիւրմէ . և թէպէտ չիք յայժմուս հաւաքումն այն եւսեբեան (որ էր գանձ ցանկալի) , այլ շատ է՝ զի նոյն ինքն եւսեբիոս քաղէ զաիրապէս բովանդակութիւն նորին յեկեղեցական պատմութե̄ իւրում, դ̄ . 15 . օրինակ զայս (ը̄ հին թարգ") ։ * Եղբարք իսկ եկեղեցւոյն
,, զմիւռնացւոց գրեցին զայս պատմութիւն նր̄ (ց̄ սբ̄յն
,, պօղիկարպոսի հայրապետի) յայսմ թղթի , զոր դրոշ-
,, մեցաք մեք . բայց 'ի սոյն յայս դեռևս վս̄ այլոց վը-
,, կայից՝ որ վկայեցին 'ի զմիւռնիայ 'ի սոյն յայն ժա-
,, մանակս , գրեցին ը̄ նմին ը̄ վկայութե̄ն պօղիկարպո-
,, սի . և ը̄ նոսին ը̄ պիոնոսիկ պատմեն և վս̄ մետրոդո-
,, րոսեայ (կմ̄ մետրոդորոսի) , այն՝ որ կարծեալ է-
,, րևի երէց մոլորութե̄ն մարկիոնացւոց , այն որ զյոյս
,, յարութե̄ն չունէր նա , իբրու վս̄ նախանձու վկայ-
,, ից այլ մատնեցաւ և նա 'ի հուր , և մեռաւ ։ Բայց
,, անուանի վկայիցն՝ որ են յայնմ ժամանակի , մի 'ի
,, նոցանէ էր երևելի պիոնիոս , այն՝ որ խոստովանու-
,, թիւն նր̄ 'ի մասունս մասունս և համարձակութբ̄ բա-
,, նիւ իւրով . և պնդութիւն վս̄ հաւատոց՝ որ առ ժողո-
,, վուրդն և առ դատաւորսն . և ուսումն վկայութե̄
,, նր̄՝ որ առաջի ամ̄ մարդոյ . և զընդունելն՝ զոր ըն-
,, դունէր նա որ միանգամ անկան 'ի փորձանաց անտի
,, հալածանաց , և զմխիթարութիւն՝ զոր մխիթարէր

„ նա 'ի տան բանտի զեղջարուն, որ միանգամ մտանէին
„ տեսանել զնա · և դարձեալ այսոքիմբք և զտան-
„ ջանսն՝ զոր համբերէր նա, և չարչարանացն և բևե-
„ ռեալ բևեռացն, և զհամբերութիւն՝ որ 'ի հուր անդ,
„ և կատարած նր՝ որ ամին լի կատարեալ էր, դրոշ-
„ մեալ են 'ի պատմութիւնն՝ որ յաղագս նորա են · որ
„ միանգամ սիրեն և կամին ուսանել, ահա գրեալ է
„ 'ի վճիռս վկայից՝ որ ժողովեալ է մեր յառաջագոյն ||:

Այլ ինչ աւելի խնդրեաք յեւսեբեայ 'ի հաստատութիւն վկայաբանութեան՝ երբ գեղեցիկ և ուղիղ համառօտէ բանիւս զամն · այլ երանի թէ որոշ ժամանակագրութ յայտնէր, թէ երբ եղև կատարումն սբյն պիոնի · ուր ընդ հակառակն անորոշ բանիւս, * բայց անուանի վկայիցն՝ որ են յայնմ ժամանակի, մի 'ի նցէ էր երևելի պիոնիոս ||, չփոթութիւն մեծ արկաւ 'ի մէջ վկայաբանից · զի ոմանք իմացան՝ թէ յայնմ ժամանակի սբյն պօղիկարպոսի էր և պիոն · մինչ զի իշխեաց կամ հերոնիմոս 'ի թարգմանութն քրոնիկոնին եւսեբի, (զոր ոչ պահէ ձեռագիր մի օրինակի հայերէն թարգմանութե, այլ որ ինքն վկայէ՝ բազում յաւելուածովք զարդարէ,) և կմ օրինակագիրք նորա իշխեցին առընթեր անուան պօղիկարպոսի առ մարկոսիւ որելիոսիւ կայսերաւ՝ որ նստաւ յամի տն 161 · դնել և զպիոն · ուր 'ի հայերէն թարգմանութե և 'ի յունական հատուածն սինկեղեան՝ լոկ պօղիկարպոս գրի առանց պիոնի: 'Ի հերոնիմեան օրինակ անդր հայելով և յետին քննչաց լատինացւոց, և այն՝ արանց երևելեաց, զի են պետաւիոս, սկալիգեր, պէարսոնիոս, և այլք՝ որք զհետ երթան նոցա, պարզապէս 'ի նոյն ժամանակ եդին զպիոն ընդ պօղիկարպոսի:

Բայց եղեն և այլք՝ որք ստուգագոյն քննութբ ուղղեցին զսխալանս նց · որպս և արժան իսկ էր ուղղել · զի եդին մի մեզ՝ թէ պիոն միով դարու յետոյ էր քան ըզպօղիկարպոս, և նահատակեցաւ առ դեկոսիւ, որ թագաւորեաց յամի տն 249 · որպէս բացայայտ գրի 'ի Յ · * առ թգրութբն դեկոսի || · և 'ի Հ · * էր (պիոն) յամս դեկոսի կռապաշտ արքայի ||: Նոյնպէս բացայայտ դնի և յաղեքսանդրեան ժմկագրութե · և զսոյն հաստատեցին 'ի յետնոց բարոնիոս, ուսսերիոս, բոլլանդ, և այլ ականաւոր քննիչք ընդ ենրիկոսի վաղեսիոսի լատին թարգմանչի պատմ · եկեղ · եւսեբեայ: Եւ զի բուն իսկ վկայաբանութենն յայտ առնէ, թէ պիոն յետոյ էր բազ-

մօք քան զպօղիկարպոս, որ յաւուրս դեկոսի, վ՟յ ոչ պարտի զոք չփոթել համաձայնութիւն եւսեբի 'ի պատմութե․ մինչև ասել հռուինարտայ, *յինչ միտս և առ-
„ ցի իմաստ բանիցն եւսեբեայ, ո՛չ իմիք կարեն զօրել
„ աւելի քան զհեղինակութի վկայաբանութե ս՟բյն պիո-
„ նի ||: զի 'ի վկայաբանութեն անդր է հաստատեալ և վկայութեն եւսեբի․ և որ անաչառ զննէ, 'ի միտ առնու՝ թէ նպատակ եւսեբեայ է այս եւեթ՝ 'ի միում վայրի նշանակել զերևելի և զհին վկայս զմիւռնիոյ, թէպէտև ոչ սակաւ ամք անցեալ իցեն 'ի միջի․ միանգամայն և հաստատել զայն բան վկայաբանութե, թէ յորում աւուր նահատակեցան պօղիկարպոսեանք, 'ի նմին աւուր դիպաւ յետ ժամանակաց և ըմբռնումն պիոնեանց ։

Յայսպիսի բանից՝ ո՟պ նշանակեցաք 'ի նախընթաց ծանօթութե, երևի բաժանելն ոմանց զմի պիոն յերկուս, որ՟պս թէ միում լինել առ պօղիկարպոսիւ, և միւսում զկնի ։ Թո՛ղ զայլ անբերելի վրիպանս ոմանց, որք զպօղիկարպոս 'ի վայր բերին 'ի ժմկս պիոնի, և համարեցան նահատակեալ առ դեկոսիւ․ որ է ը՟դէմ ա՟մ պատմութեց և ժմկագրութեց ։

(3) Քանզի ը՟ անժխտելի վկայութե վկայաբանութես, յաւուր մեծի շաբաթու՝ յորում էր յիշատակ կատարման ս՟բյն պօղիկարպոսի նահատակելոյ 'ի նախընթաց դարու, եղև յետ ժամանակաց և ըմբռնումն պիոնի, նմին իրի ո՟պ վարանելին քննիչք՝ թէ ո՛ր իցէ օրն այն մեծի շաբաթու՝ յորում ասի նահատակեալ պօղիկարպոս, նոյնպէս և աստ 'ի վարս պիոնի 'ի նոյն տարակուսանս ըմբռնելին․ մեք զմեր կարծիս ծանուցաք 'ի վկ՟ պօղիկարպոսի․ և աստ աւելի ինչ ասել ոչ ունիմք․ միայն նշանակեսցուք զպէսպիսութի ընթերցուածոց և կարծեաց 'ի պէտս հետաքննին եղելոց ։

Արդ վ՟ն աւուր ըմբռնմանն պիոնի այսպէս գրի 'ի ճառընտիրս մեր․ *'Ի վեցերորդում ամսեանն, որ օր եր-
„ կուէին, 'ի մեծի շաբաթին որ օր յիշատակ էր պօղի-
„ կարպոսի երանելոյ (կմ՟ վկայի) ||: 'Ի հին թարգ″ լատ″․
* Յերկրորդ աւուր ամսեանն վեցերորդի՝ որ է չոր-
„ րորդ օր իդոսին մարտի 'ի մեծի աւուր շաբաթու ||․ որ է ասել 'ի մարտի․ 12 ։ Եւ սակայն այդ իսկ է օր կատարմանն, ո՟յ և 'ի վախճանի ասի անդ․ *'ի չորս
„ իդոսին մարտի ը՟ հռովմայեցւոց, և ը՟ ասիացւոց 'ի
„ վեցերորդ ամսեան՝ յաւուր շաբաթու ||: Իսկ նոր թարգ″ լատ″․ մետափրաստեսի առ լիպոմանոսի և

տուրխոսի վասն աւուր ըմբռնմանն ունի այսպէս. * 'ի
,, քսաներորդ երրորդ աւուր ամսեանն փետրվարի,
,, երբ առաջին կայր շաբաթն մեծ ||: Եւ վն աւուր կատարմանն
այսպէս, * յառաջ քան զչորսն իդոսի մարտին՝
,, ը̅ հաշուէի հռովմայեցւոց, և ը̅ ասիացւոց 'ի
,, մետասաներորդ աւուր եօթներորդ ամսոյն յաւուր
,, շաբաթու ||: Բայց ճառընտիրք մեր զօր կատարմանն
նշանակեն այսպէս. * որ օր քսան և երեք էր (կմ̅ իբ̅)
,, արեգ ամսոյն՝ յերեքշաբաթի աւուր ||: Զորս մի առ
մի քննել աւելորդ երևի. զի և բոլլանդեանք և այլ ևս
քննիչք լատինացւոց վճռեն, թէ անմարթ է զստոյգն
ընտրել 'ի թուագրուեց սոսա:

Ըստ պէսպիսութե ընթերցուածոց տեսանես և զպէսպիսութի ամսագրուե և օրագրութե կատարման սրբյն պիոնի 'ի յայսմաւուրս Հ. մարտ. 23. Յ. մարտ. 11. և Լ. փետր. 1. ուր հարկի առել բոլլանդ (թէպէտև չէր հարկ յայսպիսի չփոթութեց միջի), թէ այսպիսի տարբերութե * բազում պատճառք՝ որք և յայլս, մարթին
,, բերել. ա̅յ գիւտ նշխարաց, կմ̅ փոխադրութի, ամփո_
,, փումն (ա̅յ թաղումն), և կմ̅ կառուցումն եկեղեցեաց
,, 'ի պատիւ նոյն վկայից ||:

'Ի վախճանի ծանիր, զի 'ի հին Թարգ" լտ". ը̅ օրինակաց ինչ գտանի ուրեք կից ը̅ անուան սրբյն պիոնի բառս ճէմինուս, որ թարգմանի երկուորեակ կմ̅ երկուորեակն. յորմէ 'ի կարծիս եղեն ոմանք, թէ զերկուս պիոնս նշանակիցէ. կմ̅ թէ մականուն սրբյն իցէ գեմինոս. և կմ̅ մին յընկերաց նր գեմինոս անուանեալ իցէ. այլ 'ի զուր. զի յայլ օրինակս գրի ճէնուինուս. որ թարգմանի հարազատ, ստոյգ, հաւատարիմ. և յօդի ը̅ նախընթացն բանս. վնյ աւելորդ է յայլ և այլ միտս դեգերիլ:

(4) Վն սաբինայ՝ որ 'ի ճառընտիրս մեր կոչի կին խոստովանող, պատմի սատանօր ըստ յն. և լտ. օրինակաց վկայաբանութեն, թէ փոքր ինչ յառաջ ժամանակաւ առ կայսերութե̈ գորդիանոսի աղախին գոլով առ հեթանոսի՝ կապանօք ընկեցիկ լեալ էր 'ի լերինս ուրեք վն հաւատոյ. և յետ ազատելոյն եկեալ բնակէր 'ի տան սրբյն պիոնի, որում նահատակակից լինել արժանի եղեւ. Եւ այս ևս պատմութի հաստատէ, թէ պիոնեանք ոչ էին նահատակեալ յաւուրս աւրելիոսի մարկոսի՝ որ յառաջ էր քան զգորդիանոս:

(5) 'Ի մէջ եօթն քաղաքաց՝ որք պարծէին լինել հայրենիք հոմերոսի, առաջինն էր զմիւռնիա. ը̅ առածի քեր_

թողացն հելլենացւոց · * Զմիւռնիա, հռոդոս, կողոփոն, սաղամիս, քիոս, արգոս, աթէնք, սոքա ամենեքին ելեելս առնեն զմիմեամբք՝ լինել քո հայրենիք՝ հոմերոս || : Այլ հասարակօրէն ասի լինել զմիւռնացի · կմ՟ քիացի · ֆ՟ իզմիրցի, կմ՟ սախըզցի :

Իսկ բանն հոմերոսի գտանի յոդիսեան գիրս նորա · Ե՟ · համար · 90 · ուր յետ պատմելոյ՝ թէ ոդիսեւս կշտամբեաց զթեթեւամտութի՟ եւրիկլեայ դայեկին իւրոյ, որ ՚ի ձայն ուրախութե՟ խնդայր ը՟ սպանումն արանց յարձակելոց ՚ի վր՟ նր՟, ՚ի վր՟ բերէ հոմերոս · * չէ օրէն խնդամտել ը՟ մահ արանց || :

(6) Հռովմայերէն եգաք, ո՞չ թէ հռոմերէն կմ՟ հոռոմերէն · որք առ հասարակ անորոշ միան · ըստ որում ոմանք իմանան ՚ի բարբառ հռովմայեցւոց, եւ այլք ՚ի բարբառ յունաց՝ բայց հռովմայեցի գրով · քանզի այսպէս սովորութի՟ էր երբեմն գրել եւ ՚ի դատաստանս յունաստանի եղելոյ ը՟ տէրութբ՟ հռովմայ :

(7) Ճառընտիրք մեր այսչափ եւեթ նշանակեն · * գործեցաւ այս ՚ի հիւպատուոջ գայիոսի || · ուր անխտիր լինի իմանալ զդեկոսի կայսեր հիւպատոսութի՟, եւ զանթիհիւպատուն՟ կուինտիղիանոսի յարեւելս · զի գայիոս կմ՟ կայիոս է անուն տիրական՝ բազմաց հասարակ : Դեկոսի ՚ի դէպ գայ բանս, ը՟ որում ՚ի դրամս նր՟ գտանին այս անուանակոչութիք · * ինքնակալ կայիոս մեսսիոս կուինտոս տրայիանոս դեկոս օգոստոս || : Զսոյն հաստատէ եւ հին թարգ՟ լատ՟ · վկ · ուր ընթեռնուն ոմանք · * յանթիհիւպատուե՟ յուլիոսի պրոկղի կուինտիղիանոսի, ՚ի հիւպատոջ ինքնակալին գայիոսի մեսսիոսի կուինտոսի տրայիանոսի դեկոսի, եւ վիտիոսի կրատոսի || · Թող զոր այլք փոքր մի այլազգ ընթեռնուն :

(8) Են՝ որք կարծեն, թէ սբ՟ քահանայն պիոն թողեալ իցէ գիրս ինչ պաշտպանութե՟ վս՟ հաւատոյ քրիստոնէից ը՟դէմ հեթանոսաց · եւ յայս միտ երեւի լինել վկայագիրն հռովմէական ուղղագրեալն ՚ի բարոնիոսէ : Այլք ասեն, թէ այն իսկ է գրեալն ՚ի վարս նր՟ ատենախօսութի՟ եւ քարոզութի՟ ը՟դէմ հրէից եւ հեթանոսաց : Այսմ նպաստէ եւ բան ճառընտրաց մերոց, ուր ասի զսբ՟ն պիոնէ · * Մինչ էր նա յԶի, զբազումս դարձոյց ՚ի մոլո-
,, րութ՟է, առաքելական այր եղեալ ՚ի ժամանակս մեր ·
,, եւ ՚ի վախճանի՝ յորժամ վկայեաց, եւ կոչեցաւ առ տր՟,

,, ԸՂ·

„ զգիրս զայս եթող մեզ 'ի խրատ, զի և այժմ ունի„ցիմք զյիշատակ վկյուէ նր ||. ուր բանն երևի ըզվկայաբանուէ խուժ։ Բայց 'ի դէպ է յաւելուլ և զայլ մեկնութն. ոչ թէ այս վկայաբանութն պիոնի առ ըզմիւռնացիս՝ գրեցաւ 'ինչէ 'ի նոյն մատենի՝ յորում կայր և վկայաբանութն պօղիկարպոսի. (յորմէ եղև և եւսեբի՝ կմ ընթերցողաց նր շփոթել զժամանակս նց). և զի վկայաբանութն կմ վարք սբյն պօղիկարպոսի աւանդեալն յականատես երիցանց զմիւռնոյ՝ յետոյ հաւաքեալ արձանագրեցաւ 'ի ձեռն պիոնի ուրումն, զոր քննիչք 'ի զանազան ժամանակս ձգեն, մեզ հաւանական երևի՝ թէ վկայագիրն այն լեալ իցէ սա ինքն սբն պիոն. յայս միտ տեսանեմք հակամիտեալ և զբոլլանդ՝ յասելն. * չէ ինչ անհաւանական, թէ հեղինակն այն իցէ մերս այս նբ վկայ ||։

ՎԿԱՅՈՒԹԻՒՆ

Ս՟րյն Մարկոսի խոստովանող եպ՟սին Արեթուսայ. և նահատակութիւն ս՟րյն Կիւրղի սարկաւագին. և որոց ը՟ն նոսա։ (1)

Հ. մարտ. 23։ Յ. մարտ. 30։ (Լատ. մարտ. 29։) Մատուըն. Ա. ուղ՟։ Բոլլանդեանք (Հէնսջէն. և Բապէբրոխ) 'ի 29. մարտի. հատ. Գ. եր. 774 = 778։ Գր. ա՟ծաբ. ճառ. Գ. որ և ա՟ ընդդէմ յուլիանոսի։ Թէոդորետ. պատմ. եկեղ. Գ. 6 և 7. Սոզոմ. Ե. 10։ Թէոփանէս, և այլք։

ՄԵԾՆ 'Ի ԽՈՍՏՈՎԱնողս ք՟ի, և բազմաչարչար նահատակն Մարկոս՝ էր եպ՟ս Արեթուսայ քաղաքի 'ի կողմանս երկրին ասորւոց՝ յաւուրս մեծին կոստանդիանոսի կայսեր, նախանձախնդիր ք՟նական հաւատոյ, և յանդիմանող մոլորութե՟ կռապաշտից. որ և զօրաւոր բանիւք յաղթահարեալ զպաշտօնեայս ամպարշտութե՟ 'ի սահմանս վիճակին իւրոյ՝ զբազումս 'ի հեթանոսաց էած 'ի ս՟բ հաւատս, և զհաւատացեալս անարատ պահեաց յա՟մ խաբէութե՟ց դից սնոտեաց։ Աւերեաց և զմեծակառոյց և զհոյակապ տաճար կռոց՝ որ կայր յարեթուսայ քաղաքի, և զա՟մ բագինս կործանեաց.

նեաց . չինեաց եկեղեցիս , և կանգնեաց բազում խաչերս . որոյ վ̃ն յանհնարինս ոխային ընդ նմա գլխաւորքն հեթանոսաց . այլ ոչ կարէին ինչ առնել նմա չարիս՝ յահէ ինքնակալին կոստանդիանոսի ։

Իսկ երբ յաւուրս խռովութ̃ե արիանոսաց՝ յորժամ վրդովեալ էր ուխտ եկեղեցւոյն ը̃ ա̃մ արևելս և ը̃ արևմուտս , ալեկոծեցաւ առ փոքր մի և սա ինքն մարկոս՝ կուսակից լինելով կիսարիոսեան անուանեալ եպ̃սաց , որք պատճառանօք խաղաղելոյ զեկեղեցին՝ տային լուել զհամագոյակից անուն , յորոյ վ̃ն էր գլխաւոր ընդդիմութ̃ի արիոսեանց ։ Իսկ զի յաջողակ էր մարկոս 'ի գիր և 'ի բան՝ համարձակեցաւ մխել 'ի նոյնպիսի ձեռնարկս , կարծելով չինութ̃ի լինել եկեղեցւոյ զառիթն կործանման՝ զսուտ զգուշութ̃ի կիսարիոսեանց . յորոց ոմանք էին բարեմիտք , և ոմանք չարամիտք ։ Բայց իբրև ետես մարկոս , եթէ այնպիսիքն օր քան զօր 'ի վատթարն նկրտին , զգաստացեալ զգուշացաւ անձին իւրում . և թօթափեալ զա̃մ յոյզս խնդրոց՝ զնոցայն կալաւ ճանապարհ , որք անալէկոծ մտօք ունէին զուղղամիտ վարդապետութ̃ի նիկիական դաւանութ̃ե՝ հեռանալով ոչ միայն 'ի չարամտաց , այլև 'ի բանակռուողաց յոչինչ պէտս 'ի կործանում̃ն լսողաց . և այնպէս հանդարտացեալ՝ իւրում̃ն ևեթ պաշտաման խնամ ունէր , հսկելով 'ի վ̃ն հօտին , և կրթելով զիւրսն յանբիծ հաւատս և 'ի վարս բարիս ։ (2)

Յեր.

Յերկարեաց երանելին մարկոս յեպ՟սութե՟ իւրում նաև յաւուրս կայսերութե՟ որդւոցն կոստանդիանոսի ։ յորում ժամանակի յուլիանոս՝ որ էր յազգականուէ՟ ինքնակալաց , խնդրեցաւ 'ի խնդրակաց՝ որք կամէին կորուսանել զնմ՟ զարմ նր՟ ։ և զի յուլիանոս ապաւինեալ էր յերկիրն ասորւոց առ քահանայս և եպ՟սունս՝ պահել զնա 'ի վտանգէն , ոչ գիտելով նր՟ զհանդերձեալ ուրացութի և զչարութի նր՟՝ առին և պահեցին զնա ը՟ սբ՟ սեղանով իբրև պաշտօնեայ եկեղեցւոյ ։ մի էր 'ի սոցանէ և մարկոս եպ՟ս ։ և սակայն ումեք և յանգէտս ազատարար , 'ի նմանէ կրեաց յետոյ զհալածանս և զչարչարանս 'ի ծերութե՟ իւրում ։ (3)

Քանզի յորժամ եհաս յուլիանոսի թագաւորել , ապստամբեալ նր՟ 'ի սբ՟ ուխտէ քրիստոնէութե՟՝ ուրացաւ զփրկիչ իւր , և եղև չարադև արբանեակ չարին ։ և սկսաւ մաքառիլ ը՟դէմ քրիստոնէութե՟ , մանաւանդ թէ ը՟դէմ քրի՟ որպ՟ դերաք՟ , այն իսկ է նեռն ։ և զնմ՟ ձիգն և զփոյթ իւր դարձոյց յանօրէն կռապաշտութի և 'ի հեթանոսական պղծութի ։ Յայնժամ համարձակութի առեալ հեթանոսաց՝ որք զօղեալ և ամօթապարտեալ կային , յայտնեցին զպատրուակեալ չարութի իւրեանց ։ և յայտնապէս հեղին յամ՟ տեղիս 'ի վր՟ հօտին քրի՟ զմթերեալ թոյնս դառնութե՟ ։

Շինէին անդրէն աներկիւղ բագինս և տաճարս կռոցն 'ի հրամանէ ուրացողին յուլիա-

նու

նոսի , և կանգնէին անդրիս և պատկերս դիւաց՝ անուանեալ ա̄ծոցն . և շաղախէին միւսանգամ զերկիր արեամբ զոհիցն , և պղծէին զօդս ճէնճերօք և ճարպով ողջակիզաց ծխելոց 'ի ձեռն դիւանուէր քրմաց : Այլ զորս միանգամ գտանէին հաւատացեալս 'ի տէր մեր յս̄ քս̄ , անարգէին և թշնամանէին , կոփահարէին և խոշտանգէին . և ըզբազումս ևս չարաչար տանջանօք սպանանէին . և էր այնուհետև խուճապ տագնապի և նեղութի̄ անհնարին 'ի վ̄ր դասուցն հաւատացելոց :

Այլ զի համբաւ երանելւոյն մարկոսի արեթուսացւոց եպ̄սի հասեալ էր 'ի լսելիս անօրէն թագաւորին , մանաւանդ զի յուշ արարին նմա մատնիչք բազումք 'ի հեթանոսաց զա̄մ գործս մարկոսի՝ որ առ կոստանդիանոսիւ , հրաման ետ և զնա ունել ընդ այլ կալանաւորս իբրև զմի 'ի նշանաւոր թշնամեաց դիցն . և ստիպել զնա մահուչափ տանջանօք , զի կամ ինքնին շինեսցէ զմեծ մեհեանն արեթուսայ՝ զոր կործանեաց , և կմ̄ տացէ զգին նորա :

Իսկ երանելւոյն իմացեալ զխորհուրդ չարութե̄ անօրինաց , լաւ համարեցաւ ըս̄ տէրունական հրամանին խոյս տալ առ ժամանակ մի յերեսաց նց̄ . վ̄յ փութացեալ անկաւ յանապատ տեղիս : Այլ իբրև լուաւ , եթէ անհաւատքն զայլս ոմանս կալան փոխանակ նր̄ , և մատնեցին 'ի ձեռս դատաւորաց , յարուցեալ փութապէս ինքնակամութբ̄ եկն առ նս՟, եւ ասէ . եթէ զիս խնդրէք, թո՛յլ տուք այլոց երթալ յազատութի՟ն : Իսկ նք՟ իբրեւ տեսին զերանելի եպս՟ն, զարմացան ը՟ անակնկալ եկն նր՟ . եւ փոխանակ մեղմանալոյ՝ առաւել 'ի մոլեգնութի՟ն դարձան . զի ոչ կարծէին, եթէ անձամբ համարձակեսցի նա գալ երեւիլ նոցա . վ՟յ զայրագնեալք 'ի վ՟ր նր՟ իբրեւ կատաղի շունս եւ իբր արինարբուս գազանս, կրճտէին զատամունս՝ ծարաւեալք արեան նր՟ . եւ զգալուստ նր՟ արհամարհութի՟ն վարկուցեալ անձանց՝ գրոհ ետուն միաբան 'ի վ՟ր եպսին մեծամեծք եւ փոքունք, ազնուականք եւ գռեհիկք . կռփէին հարկանէին, յայսկոյս յայնկոյս ձգձգէին . եւ ապա կապէ՟ն չո՛ւան զոտիցն՝ գետնաքարշ առնէին ընդ պողոտայս, ո՛չ 'ի պատո՛ւական ալիսն խնայելով, եւ ո՛չ 'ի պատկառելի առաքինութե՟ն ակնածելով :

Յետ այսորիկ ածեալ զնա 'ի հրապարակ՝ մերկացուցին, եւ սկսան նորանոր տանջանօք չարչարել զերանելին, վիրաւորելով եւ խոցոտելով զա՟մ մարմինն թշնամանօք : Ժողովեցին եւ զմանկունս 'ի դպրոցաց, եւ հրաման ետուն նոցա երկաթի գրչաւ ծակոտել զգագաթն սր՟յն . եւ նք՟ առեալ եդին զնա 'ի սապատ մի, եւ կախեալ 'ի բարձանց՝ կապելով զականջացն բարակ չուանօք, որք կտրատէին զունկն նր՟, ճօճէին իբրեւ յօրօրոցի, այսր անդր խաղացուցե՟ն . եւ մերթ ը՟ մերթ դադար տուեալ՝ շուրջ պատէին զնովաւ, խաղային գրչօք եւ խոցոտէին չարաչար . մինչև վիրաւորից և կիսամեռ արարեն՝ թողին զնա և գնացին . և այնպէս արկաւ 'ի բանտ . ուր նա ուրախութ՟ գոհանայր զտ՟նէ ։

Յետ այսորիկ յաւուր միում կերակրէր հանին զնա և զայլ ևս երանելի կապեալս վ՟ն անուա՛նն ք՟ի , և երկաթի բևեռօք հեղուսին զոմանս 'ի վ՟ր խաչաձև կամ ձողանիշ փայտից , և զայլսն հանին 'ի կախաղան , ը՟ որս և զտ՟ր եպ՟սն մարկոս , եդեն 'ի մէջ զամբիւղաց կամ ցանցից հիւսելոց խոշոր և լայն ասպարիզօք . և էին մարմինք վկայիցն օծեալ մեղու և իւղով ։ Նաև եղև 'ի տօթաժամու 'ի սաստկանալ տապոյ արեգակնակեզ միջօրէին , մինչդեռ կախեալ էին նահատակքն ք՟ի 'ի բարձրաւանդակի , յայնժամ ժողովեցան 'ի վ՟ր մարմնոց սրբոցն ա՟մ չիթող պիծակք և մեղուք , գոռեխք և շանաձանձք . և կեղեքեցին և քանդեցին զանդամս ն՟ց . զի մինչև յոսկերս հասուցանէին զխայթո՛ւածս և զվէրս ցաւոց , և մորմոքեցուցանէին զնոսա . մինչև յողորմ գալ և քարասիրտ անձանց 'ի գնին եղելոց ։

Իսկ երանելի հայրապետն մարկոս զո՛ւարթութ՟ կայր և յայն տանջանս , և քաջալերէր զնահատակակիցսն . և յոչինչ համարէր զչարչարանս ա՟մ՝ ողբալի զչարչարօղսն ցուցանէր , ասելով առ ն՟ս . աւադիկ ես բարձրացեալ կամ , և զձեզ տեսանեմ 'ի վ՟ր երկրի իբրև վայրանկեալս . որով և զվիճակ երկուքանչիւր կողմանն 'ի միտ առնում , թէ ո՛ր բարձրութ՟ի իմն պահեալ կայ յերկինս ,

և ո՞ր կործանումն 'ի խորս վ՟ս ձեր հանդերձ
բռնաւոր առաջնորդաւ ձերով ։

Ապա սկսաւ սբ՟ եպս՟ն աղօթել ձայնակցութ՟բ երջանիկ վկայակցաց իւրոց , և ասել այսպ՟ ․ Տ՟ր Ա՟ծ յ՟ս ք՟ս արարիչ ա՟մ արարածոց , և պըսակիչ սբ՟ց քոց վկայից , որք վ՟ն անուան քո մեծի և ահաւորի ետուն զանձինս իւրեանց 'ի մահ զանազան և դառն տանջանաց , և կատարեցին զընթացս իւրեանց համբերութ՟բ , և արժանի եղեն ժառանգորդ լինել երկնային պսակացն ․ դու նոյն ինքն Տ՟ր մեր և փրկիչ յ՟ս ք՟ս արժանի՛ արա և զմեզ նոցին բարեխօսութ՟բ հաղորդս լինել անմահական բաժակին , և նոցին համբերութ՟ն և ժառանգութ՟ն երկնային ուրախութ՟ցդ ․ և ը՟ նոսին փառաւորել զհայր և զորդի և զսբ՟ հոգիդ յաւիտեանս ․ ամէն ։

Իսկ դատաւորն իբրև գիտաց զանփոփոխելի միտս սբ՟ցն , ետ իջուցանել զն՟ս 'ի կախաղանէն , և հրամայեաց բերել առ ինքն զեպիսկոպոսն , և տանջել զնա մահակօք՝ պահանջելով 'ի ն՟մէ զսակ ոսկւոյ և արծաթոյ , զի շինեսցեն զբագինս և զմեհեանս կռոց զաւերեալսն 'ի ն՟մէ ։ Նա պատասխանի հայրապետն , և ասէ ․ փոխանակ ոսկւոյ և արծաթոյ զանձն իմ ետու 'ի ձեռս ձեր ․ զի այլ ոչինչ ունիմ , և ոչինչ պարտիմ հատուցանել ։ Բարկացաւ դատաւորն , և ասէ ․ ո՞չ դու էիր , որ առ կոստանդիանոսիւ կործանէիր զարձանս ա՟ծոցն , և քակէիր և այրէիր զբագինս ն՟ց , և եկեղեցիս և մատրանոցս չինէիր ․ և արդ յուրաստ կաս և խաղ առնես , և չհատուցանես զպարտոն ը՟ հրամանի քաջի արանց յուլիանոսի ։ Ասէ երանելին ․ վ՟ն աւերելոյ զբագինսն և խորտակելոյ զպատկերս անուանեալ ա՟ծոցն՝ խոստովան լինիմ , թէ արարի , և ոչ ուրանամ ․ զի ա՟ծասէր ինքնակալին հրամանաւ ոչ միայն ես գործէի զայն գործ , այլև յոլովք զնոյն առնէին ․ և որ իշխանութի՟ ունէր՝ ոչ ցասեաւ , այլ առաւել հաճեցաւ՝ զի բարձցին սնոտիք յերկրէ ․ և ոչ ա՟ծքն ձեր կարացին հատուցանել չար փոխանակ չարի իւրեանց ․ և արդ ը՟ ձեր անմտութե՟դ յոյժ զարմացեալ եմ , որք կռոց վրէժխնդիր ամբարձայք ․ զի ա՟ծք որ զերկինս և զերկիր ոչ արարին , կորիցեն ՚ի ներքոյ երկնից ։

Դատաւորն ասէ ․ եթէ ոչ անկեալ երկիր պագանիցէք մեծի ա՟յն Հերակլեայ և զոհիցէք , ո՟պ ինքնակալն և ամենեքեան որ ՚ի ն՟ր կամս են , և ՚ի խորհրդական ողջակիզացն ոչ ճաշակիցէք , յետ չարաչար և ՚ի դառն տանջանս մատնեցից զձեզ ։ Ս՟բն ասէ ․ ո՟պ առեր հրաման , և ո՛՟պ կամիս , տանջեա՛ զիս ․ և վաղվաղակի առաքեա՛ զիս առ այն՝ որում ցանկացեալն եմ ․ և թերևս վարձս առցես վ՟ն իմ ՚ի ն՟մնէ , և եկեսցես ՚ի խաւարէ մոլորութե՟ քո ՚ի լոյս ճշմարտութե՟ ․ ապա թէ ոչ՝ գիտեա՛ , զի ո՛չ եմ լսելոց քեզ ։

Յայնժամ տեսեալ դատաւորին՝ թէ արհամարհեալ է առաջի ն՟ր մահն , ոչ կամեցաւ

տան

տանջանս մահու տալ նմա , այլ հրամայեաց տանել զնա և զընկերս նր̅ , և դնել 'ի ներքնում բանտին , և պնդել զոտս նց̅ 'ի կոճեղս . և խնուլ զլուսանցոյց բանտին՝ զի զլոյս մի տեսցեն , և փակել զդուրս զգուշութ̅բ ։ Եւ յետ բազում աւուրց անսուաղ մնալոյ նց̅ 'ի բանտին՝ հրամայեաց հանել զնոսա , և բերել զառաջեաւ . և դարձեալ հարցփորձ առնէր , եթէ հաւանի՞ն զոհել ։ Եւ իբրև ոչ առին յանձն , հրաման ետ ծովակուր առնել զընկերս երանելոյ եպ̅սին 'ի խորս ջուրցն . և այնպէս վկայեցին նոքա 'ի քս̅ , որ օր քսան էր յունվարի ամսոյ ։

Իսկ զծերունի եպ̅սն առաքեաց կապանօք առ յուլիանոս , որ էր յայնժամ յարևելս 'ի մօտակայ գաւառսն (թերևս յանտիոք ասորւոց) ։ Եւ նա դարձեալ հարցեալ զնա , և ը̅ բազում չարչարանօք արկեալ՝ զարմանայր ը̅ համբերութ̅ի սր̅յն , և ը̅ մեծ յոյս քրիստոնէից ։ Յետ այնորիկ իբրև ետես զանպարտելի միտս սր̅յ վկային , կամէր կարճել զնա 'ի կենաց . այլ զի մի տացի նմա պատիւ մարտիրոսութ̅ե , արտասահման արար զնա պատճառանօք 'ի հեռաւոր կղզիս արևմտական ծովու . զի անդ ասէ յանձանօթս մեռցի . և զի մի ոք տեսեալ զհամբերութ̅ի նր̅՝ նախանձաւոր լիցի գործոց նր̅ . դարձեալ ասէ՝ զի մի գուցէ գալիլեացիքն առցեն 'ի պատիւ զնշխարս ոսկերաց նր̅ ։ Եւ այնպ̅ս յետ աւուրց կատարեցաւ բարի խոստովանութ̅բ երանելի եպ̅սն 'ի քս̅ ։

Ըստ այսմ օրինակի կատարեցան 'ի նոյն աւուրս և այլ բազմու̅թք քրիստոնէից պէսպէս տանջանօք և աքսորանօք․ այլ երևելի գըտաւ 'ի նմ̅ պանծալի վկայն ք̅սի ս̅բ սարկաւագն կիւրեղ․ վ̅ոյ և յանուանէ տօնախըմբի․ զորմէ առաջի կայ մեզ ասել ։

Սա էր 'ի հեղիուպօլիս քաղաքէ՝ որ յերկրին փիւնիկեցւոց մօտ 'ի սահմանս լիբանանու , փայլեալ բարեկրօն վարուք առաքինութե̅ յաւուրց անտի մեծին կոստանդիանոսի․ և ա̅ծային նախանձու վառեալ ըստ օրինակի մարկոսի եպ̅սին՝ բազում տաճարս կռոց էր քակեալ , և զբագինս խորտակեալ ։ Զայն յուշ առնէին ա̅ծամարտին յուլիանոսի անա̅ծ հելլենացիքն , և բորբոքէին իբրև զհրատ բոցոյ 'ի վ̅ր ս̅բյ սարկաւագին․ վ̅ որոյ և նա հրամայեաց ունել զկիւրեղ , և մատնել 'ի ձեռս քրմաց․ զի որպէս և կամին՝ վրէժս առցեն 'ի նմանէ ։ Եւ նց̅ ըմբռնեալ զերանելին՝ սկսան ազգի ազգի խոշտանգանօք լլկել զնա․ յիշեցուցանէին զոր ինչ գործեաց նա ը̅ նմ̅ և ը̅ պաշտամունս նոցա յաւուրս համարձակութե̅ քրիստոնէից․ և ստիպէին զնա ուրանալ զ̅քս և զոհել , ո̅պ զի մարթասցի ազատանալ․ զի այսպէս հրաման ետ ասեն ինքնակալն մեր յուլիանոս ։

Պատասխանի ետ ս̅բ սարկաւագն կիւրեղ արութե̅ քաջուե̅ , և ասէ․ մեք ո՛չ անա̅ծ հելլենացիք , զապականացու և զանա̅ծ թագաւորի զհրամանս ո՛չ կատարեմք , մանաւանդ զուրացողի․ որ զճշմարիտն ա̅ծ թողեալ՝

ղեալ՝ զտարերս ա՟ծ խոստովանի , և 'ի նոյն մոլորութ՟ի հնարի և զայլս խարդաւանել . այլ զանմահ թագաւորին փութամք պահել զհրամանս և զպատուիրանս . որ ասէ , թէ՝ որ ուրասցի զիս առաջի մարդկան , ուրացայց և ես զնա առաջի հօր իմոյ՝ որ յերկինս է ։ Ասեն ցնա անօրէնքն . և արդ ո՞չ կամիս ունել զկամս արքային մերոյ ։ Սբ՟ն ասէ . ո՛չ ։ Ասեն ցնա քուրմքն . գիտեա՛ , զի վ՟ս յամառուե՟դ քո դառնագոյն տանջանս պատրաստեմք քեզ , ո՛չ և որոց յամառեալ են իբրև զքեզ ։ Կիւրեղ ասէ . թէպէտև 'ի տանջանաց ձերոց մեռանիմք զառժամանակեայ մահս , այլ անստուերին հասանեմք լուսոյ , և յաւիտենական և անվախճան կենացն լինիմք ժառանգորդք , զոր խոստացաւ ա՟ծ սիրելեաց իւրոց ։

Զայս լուեալ անօրէն քրմացն և հելլենացւոցն՝ լի եղեն սրտմտութ՟բ , և արկին զնա 'ի հասարակաց բանտն . մինչև խորհեսցին՝ թէ զինչ արասցեն ը՟նա ։ Յետ սակաւ աւուրց ածին անդրէն զառաջեաւ զերանելին . և կրկին հարցափորձեալ՝ իբրև գտին զնա հաստատուն 'ի ք՟ս , ասեն ցնա . բազում հեզութ՟ի և մարդասիրութ՟ի թագաւորին մերոյ՝ որ առ քեզ եղեն , ոչ ածին զքեզ յուղղութ՟ի , և ոչ դարձար 'ի նանիր խորհրդոց քոց . արդ այսուհետև յաճախեմք 'ի վ՟ր քո նեղութ՟ի , և մատնեմք 'ի չարաչար տանջանս . ո՛չ և արժանիդ ես ։ Իսկ սբ՟ն արհամարհեաց զա՟մ սպառնալիս ն՟ց , և ասէ . գրեալ է 'ի ս՟բ աւետարանի, Թէ մի՛ երկնչիք յայնցանէ՝ որ սպանանեն զմարմին, և զոգին ոչ կարեն սպանանել. այլ երկերո՛ւք յայնմանէ՝ որ զոգի և զմարմին կորուսանէ 'ի գեհենի: Արդ մերձ է փրկուԹի՟ մեր. և ո՛չ եմք հնազանդելոց ձերոց խաւարասէր կրօնիցդ, որ տայ մատնիլ 'ի հուրն անշէջ, և կերակուր լինել անքուն որդանցն. այլ պարտ և արժան է մեզ չարչարիլ վ՟ն ն՟ր, որ վ՟ն մեր համբերեաց մահուչափ չարչարանաց և մահու խաչի. զի և փառաց նորա հաղորդս լիցուք:

Յայնժամ ասեն անօրէնքն ցմիմեանս. արդ զի՞ ևս կամք մնամք նորահնար տանջանօք կորուսանել զդա, զի ա՟ծամարտ է և քակիչ անմահից ա՟ծոյն. և տակաւին աներկիւղ բարբառի: Ապա հաճոյ Թուեցաւ պատառել զորովայն ս՟բյն, և լափել զարիւն ն՟ր, և զլեարդն արտաքս հանել, և ամենեցուն հաղորդել 'ի լերդէ նորուն՝ 'ի ցոյց յետին ցասման իւրեանց:

Նա՛ և իբրև զայս արարին անագորոյն մտօք գազանու՟է, առժամայն յայտնի եղեն սքանչելիք 'ի տ՟նէ ահագին պատուհասիւք. զի որք միանգամ զայսօրինակ անօրինեցան 'ի ս՟բ վկայն, նոցին ատամունք 'ի տեղւոջ անդ Թափեցան 'ի բերանոց իւրեանց, և լեզուք ն՟ց նեխեցան, և բիբք աչաց ն՟ց խաւարեցան. և որք տեսինն, վկայեցին՝ Թէ մեծ է զօրուԹի՟ օրինաց քրիստոնէից: Նաև արի նահատակն երանելին կիւրղոս իբրև յոգիս ապա-

պա

պաստան եղև, զօրացեալ տ՟ր աղաղակեաց ՚ի ձայն բարձր ը՟ս նմանութե՟ նախասարկաւագին. Տ՟ր Յ՟ս ընկալ զոգի իմ. և այնպէս կատարեցաւ ՚ի ք՟ս փառաւոր վկայութե՟:

Հանդիսակից մրցանաց երկոցունց սո՟ցա նախագրելոց համարին ՚ի վկայաբանից և այլ անանուն վկայք ժամանակին ՚ի կողմանս ասորւոց. ո՟չ և ՚ի քաղաքին ասկաղոնացւոց և գազացւոց, և ՚ի քաղաքս քաղաքս պաղեստինացւոց. յորս բնակեալ էին բազումք ՚ի քրիստոնէից ա՟ծասիրաց, բարեպաշտ քահանայք և Յականք, անապատական միայնակեացք, և կանայք կուսակրօնք. քանզի կալեալ ոչ սակաւս ՚ի նոցանէ հրամանաւ յուլիանոսի՝ ազգի ազգի կոտտանօք և դառն չարչարանօք նեղէին զերանելիսն, և տանջէին քքօվք և քերանօք. հերձուին զորովայնս մաքուրս, և գարի արկանէին իբրև ՚ի մսուրս. և զկինձս և զխոզս արձակէին ՚ի վ՟ր ս՟բ մարմնոցն կերակրել նոքօք: Իսկ զոր ՚ի սեբաստուպօլիս արարին, ո՟պ ՚ի սամարիա, և ՚ի կեսարիա պաղեստինու, և ՚ի կողմանս գալիլեացւոց. ուր և հրամայեաց անօրէն Թագաւորն բանալ զգերեզման ս՟բյն յովհաննու մկրտչի, և զմ՟նացորդս նշխարաց ն՟ր արտաքս հանել, և այրել հրով, և զփոշին ցնդել յօդս: Այլ՝ որք ասեն, թէ չէր անդ մարմին ս՟բյն. այլ կամեցեալ պիղծն յուլիանոս կատարել զկամս իւր՝ ետ հանել զայլ ոսկերս հաւատացելոց, որք մերձ կային ս՟բյ տապանին. զորս խառնեալ ը՟ն ոսկերս շանց՝ այրեցին, և հողմով հոսեցին ։

՚Ի նոյն աւուրս նահատակեցաւ յուլիանոս յանտիոք ասորւոց և զմեծ վկայն արտեմիս․ զոր տեսցես ՚ի վկայաբանութեան նր՟, և ՚ի վարս սբ՟ց քահանայիցն եւգինէոսի և մակարիոսի․ ետ հրով այրել և զեմիղիանոս զքաջ զօրականն ։

Իսկ մի ոմն երիտասարդ ՚ի դասէ զօրականաց թագաւորին քրիստոնեայ հաւատով թէոդոտոս անուն, իբրև ետես զայնչափ չարիս ուրացողին՝ զոր առնէր յա՟մ տեղիս՝ ը՟ որ անցանէր, վառեցաւ հոգւով․ և յաւուր միում եկեալ երթայր ը՟ մէջ հրապարակին, և ասէր ՚ի ձայն բարձր բարբառոյ զերգս սաղմոսաց բացադրութ՟բ յամօթ հեթանոսաց՝ կցորդելով զալէլուն այսպէս․ Յամօթ լիցին՝ որ պաշտեն զկուռս հեթանոսաց, ալէլուիա․ դարձցին յետս և ամաչեսցեն, որք ա՟ծ անուանեն զնա, ալէլուիա․ ա՟ծք՝ որ զերկինս և զերկիր ոչ արարին, կորիցեն ՚ի ներքոյ երկնից, ալէլուիա․ նման նոցա եղիցին ա՟մ յուսացեալքն ՚ի նոսա, ալէլուիա ։ Ա՟յ կալեալ զնա կռապաշտից ՚ի հրամանէ յուլիանոսի՝ կախեցին և հարին յանխնայ զթիկունս նր՟ արջառաջլօք․ և զկողս նորա քերեցին երկաթի եղնգամբք․ և զօրն ողջոյն այնպէս թողին զնա ՚ի կախաղանի ։ Իսկ իբրև երեկոյ եղև, իջուցին և կապեցին շղթայիւք և արկին ՚ի բանտ․ և իբրև առաւօտ եղև, տեսին զնա՝ զի սաղմոսէր ուրախութ՟բ՝ ողջացեալ յա՟մ վիրաց․ և երթեալ պատմեցին Թագաւորին ։ Յայնժամ ասէ ամպարիշտն յուլիանոս . զարմանալի՛ է համբերութ՟ի քրիստոնէից , զի մեծաւ ուրախութ՟բ և յօժարութ՟բ ընդունին զչարչարանս , և պարծին 'ի տանջանս . և մարտիրոս անուամբ փառաւորիլ կամին . այլ ոչ տաց նց՟ զայն փառս ։ Ապա հրամայեաց , և արձակեցին զսբ՟ վկայն 'ի կապանաց և 'ի բանտէ , և հանեալ 'ի զինուորութ՟է՝ տարագիր արարին . որ և զխոստովանողական անուն ժառանգեալ՝ մնաց կենդանի ամս բազումս , բնակելով յանապատս ճգնու՟բ մեծաւ ։ Հարցանէին ամենեքեան զկենդանի նահատակն , և ասէին , եթէ 'ի ժամու չարչարելոյն զքեզ զգայի՞ր զցաւս սաստիկ տանջանացն . և նա ասէր . 'ի սկզբան հարուածոցն 'ի ժամու մտանելոյն 'ի հանդէս՝ փոքր ինչ զգայի . իսկ յետ այնորիկ ջերմանայր անձն իմ , և իբրև 'ի քուն թմբրեալ կայի . քանզի և տ՟ր ինքնին փարատէր զցաւս անձին իմոյ , և լնոյր զսիրտ իմ ուրախութ՟բ ։

Այլ ինքն անօրէնն յուլիանոս յետ ամ՟ չարեաց իւրոց և՛ս մեծամեծս սպառնացեալ քրիստոնէից՝ խաղաց գնաց 'ի վր՟ պարսից . և 'ի պարտութ՟ի մատնեալ՝ հարաւ յաներևոյթ զօրութ՟է , և սատակեցաւ 'ի փառս սատանայի , և այնպէս չարն չարաւ բարձաւ 'ի միջոյ . և 'ի թագաւորել փոխանակ նր՟ յովիանոսի քրիստոնեայ ինքնակալին՝ խաղաղութ՟ի եղև ամ՟ եկեղեցեաց քրիստոնէից .

և որք ՚ի կապանս էին, արձակեցան. և աքսորեալքն յետս դարձան, և փառաւոր առնէին զա̅ծ :

* * *

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ:

(1) Ճ՛առընտիրն ունի ՚ի խորագրի այսպէս. * Վկայաբանութի սր̅բյն Մարկոսի Արեթուսայ եպ̅սի, և Կիւրղի սարկաւագի, և որք ը̅ն նմ̅ վկայեցին Ճգնազգեաց վկայքն ք̅սի ||. Կարի ՚ի դէպ. զի թէպէտև յանուանէ զմի և զերկուս տօնեմք, այլ ը̅ն նոսին է իմանալ և զա̅մ վկայս ժամանակին՝ որոց անուանք գրեալ են ՚ի դպրութ̅ե կենաց : Զնոյն յայտ առնէ և բասիլեան յայսմաւ. Յն : Միայն Հ. թէպէտև ՚ի վերնագրի դնէ լոկ, * վկայութի սր̅բյն Մարկոսի եպ̅սին ||, այլ պատմէ ՚ի կարգի և զնահատակութի Կիւրղի սարկաւագի, և զայլոց անանուն վկայից՝ հանդերձ հանդիսիւ խոստովանողաց, իբրև քաղուած ճառընտրաց : Յար և նման գտանեմք առ_ ցա և զբանս Թէոդորետոսի. զի և նա ՚ի նոյն աղբերաց է հանեալ. ըստ իմիք նման ելանեն և համառօտ բանք Սոզոմենոսի : Այլ աղբերակն սոցա ա̅մի ճանաչի Գրիգոր ա̅ծաբանն, որ ճառօրէն պատմէ զայս ա̅մ ՚ի յանդիմանական բանն ընդդէմ Յուլիանոսի. արժան է լսել զբուն գրուն նորին. Երես. 87. ըստ տպ. յն. լտ.

* Ո՞ է (ասէ) որ անգիտանայ զաղմուկն հեղիուպօլսեցւոց. ո՛ զգազացւոց զյանդգնութի. որք զարմանալիք և պատուականք առաջի ն̅ր ցուցան (թ̅ Յուլիանոսի ուրացողին) վ̅ն ՚ի բարիոք կարծիս լինելոյ յաղագս մեծվայելչութ̅ե ն̅ր. ո՛ զարեթուսացւոց զմոլեգնութի. որք յառաջն աննշանք ոմանք էին, և յայնմ ժամանակէ հետէ նշանաւորք եղեն. զի հռչակելիս առնէ ոչ աջողակի գործ միայն, այլև չարութին յաղթող չարացն պարծանաց : Վ̅ն զի սոքա, ո̅չ ասի, զի պարտ է զմին ՚ի բազմաց ասել՝ որ և անա̅ծից գլխովին քստմնելի, զկուսանս անարատս և զերջ̅ծիկս՝ զոչ երևեալս երբէք և յաչս արանց, ՚ի մէջ ածեալ, և մերկեալ ՚ի հանդերձից, զի նախ ուսուց̅ ծանակեսցին, յետ այնորիկ գիշատէին և յօշոտէին. ո՞վ որպէս

„ հան_

„ հանդուրժեսցիս այնր ժամու երկայնմտութե քո Քն՛ .
„ էր զոր ատամամբք իւրեանց չարաչար ըմբոշխնէին ,
„ և արժանի չարագիճութե իւրեանց զթարմ լեարդս
„ նց լափէին , և յետ այնպիսի ճաշակաց 'ի սովորական
„ և յօրինաւորն կերակուր մատչէին . և էր զոր մինչ
„ այն ինչ ալիքն 'ի տեղւոջն տափային , խողաճարակ
„ մասուր կաղմէին , և զջերմագոյնս 'ի խոզից 'ի վր յարձակէին ,
„ տեսարան ինն ընծայելով' տեսանել զմարմինս
„ գարեխառն կերեալս . . . . Իսկ ո՞ ոք իցէ այնպէս
„ օտարական արտաքոյ Տէս մերոյ , մինչև անգիտանալ
„ և չլինել կանխագէտ յիշատակի պատմութե
„ մարկոսի սքանչելւոյ , և արեթուսացւոց : Սա քանզի
„ յաւուրս երևելւոյն կոստանդեայ (կամ կոստանդիանոսի)
„ ա̃ իշխանութեն տուեցելոյ 'ի ժամանակին'
„ քրիստոնէից , զդիմաց կործանել էր բնակութե ինչ , և
„ զբազումս 'ի քրիստոնէից 'ի հեթանոսական մոլորութէ
„ փոխադրեալ էր 'ի փրկութ , ոչ նուաղ 'ի ձեռն լուսափայլ
„ վարուց' ք̃ 'ի ձեռն բանին զօրութ , անդստին 'ի
„ ցասումն էր անկեալ արեթուսացւոց , և առաւել ևս
„ դիցասիրացն արեթուսացւոց : Արդ իբրև խախտեցան
„ իրք քրիստոնէից , և հեթանոսացն զայրանալ սկսաւ ,
„ ոչ կարաց խուսափել 'ի բռնութէ ժամանակին . քանզի
„ սիրէ ամբոխն' թէպէտև առ ժամանակ մի զուսպ ունիցի
„ զցասումն իբրև հուր թաքուցեալ 'ի գաղախի կմ
„ իբր հոսանք գետոց արգելեալ բռնութբ , եթէ ժամ
„ առցէ , անդրէն վերստին բորբոքիլ և յորդել : Արդ
„ տեսեալ զշարժումն ամբոխին յիւր վր , և զանկարգ
„ և զյանդուգն բերումն նոցին, զառաջինն խորհեցաւ 'ի
„ փախուստ երթալ յերեսաց նց , ոչ այնչափ անարի
„ զանձն ցուցեալ , քան որչափ զպատուէրն լցեալ , որ
„ հրամայէ փախչել քաղաքէ 'ի քաղաք , և մեկուսանալ
„ 'ի հալածչաց : Քանզի և պարտ իսկ է քրիստոնէից'
„ ոչ զանձանց ևեթ խորհել , թէպէտև արուորագոյնք
„ իցեն և քաջասիրտք , այլև վն հալածչացն զմտաւ ածել ,
„ զի մի իւրեանց մասամբ առիթ տացեն յանձանց
„ զայրացուցանել զմարտ թշնամւոյն : Այլ յորժամ
„ իրազեկ եղև , եթէ զբազումս ըմբռնեն և ձգեն յատեան
„ 'ի պատճառս իւր , և թէ բազումք ևս այն են'
„ որ առ խստութ հալածչայն 'ի վտանգս հոգւոյ դնին,
„ ոչ ևս ժուժեաց այլոցն վտանգելոյ իւրով զգուշութբ .
„ վն և խորհուրդ խորհեցաւ քաջ և իմաստասէրագոյն
„ յոյժ . դարձ արար 'ի փախստենէ , և ետ զանձն

„ 'ի

,, 'ի ձեռս ամբոխին՝ առնել ը̄ նա զոր ինչ կամիցին. և
,, ճակատեցաւ ը̄դէմ ժամանակին դժնդակութե̄: Եւ
,, զի՞նչ դառնութի̄ ոչ լինէր անդանօր, և որ ծանր ծանր
,, հնարք ոչ հայթհայթէին. վս̄ զի մի զմիով ելևելս ա-
,, նէին 'ի մի խորհուրդ չարուե̄. զի թէ ոչ այլով իւիք,
,, և ո՛չ յիմաստասիրուէ̄ առն պատկառէին, այլ առա-
,, ւել ը̄ այն զայրանային, զի արհամարհուեի անձանց
,, մանաւանդ՝ քան թէ արութի քաջութե̄ ը̄դէմ վշտաց
,, վտանգի զառն համարձակութի̄ համարէին:

,, Ածեալ լինէր ծերունի քահանայն, նահատակն կա-
,, մաւոր, ընդ մէջ քաղաքին, արգոյ ըստ հասակին, և
,, գերյարգոյ ըս̄ քաղաքավարութե̄ն՝ յաչս ամենեցուն,
,, բաց 'ի հալածչաց և 'ի բռնաւորաց: Եւ ածեալ լի-
,, նէր յամ հասակէ և 'ի վիճակէ, ո՛չ 'ի միոյն, և 'ի միւ-
,, սոյն ո՛չ, այլ յամենեցունց միահաղոյն՝ յարանց և 'ի
,, կանանց, յերիտասարդաց և 'ի ծերոց, եթէ 'ի պաշ-
,, տօնէից քաղաքականին, և եթէ 'ի մեծամեծաց: Եւ
,, էր ամենեցուն ճիգն մի, զանցանել զմիմեամբք մո-
,, լեգնութի̄ ընդդէմ ծերունւոյն, և մասն բարեպաշ-
,, տուե̄ բոլորից էր համարեալ՝ բազմագոյն չարիս հա-
,, սուցանել նմա, և յաղթել ծերունի նահատակին մր-
,, ցելոյ ը̄դէմ բովանդակ քաղաքին: Ձգէին զնա ընդ
,, փողոցս, և քարշէին ը̄ լուալիս. և քանցէին զհերս,
,, լլկանօք խառն ը̄ թշնամանս . . . 'ի մանկանց առ ման-
,, կունս 'ի կախ ձգձգեալ լինէր. գրչօք խոցոտեալ լի-
,, նէր ազնուական մարմինն, և 'ի խաղս էր համարեալ
,, ողորմ տեսիլն: Եւ գելուին սրունք նորա մինչև յոս-
,, կերս. և ականջք նորա կարեալ լինէին չուանօք, և
,, այն բարակագոյն և կարկամ. ուր նա զամբիւղով
,, վերառեալ էր 'ի բարձունս. մեղու և իւղով շուրջա-
,, նակի օծեալ՝ 'ի մեղուաց և 'ի պոռեխաց 'ի միջօրէի
,, խայթիւր՝ 'ի ճառագայթել տօթագին արևու. որ ըզ-
,, սորա մարմինն խորովէր, և նոցա ջերմագոյն առնէր
,, զկերակուր երանելի այն մարմնոյն. զի ո՛չ աւաղելի
,, ասել յօժարիմ: Եւ յայսմ վայրի աստ, զոր և արժան
,, է 'ի գիր արձանացուցանել, թէ ծերունին՝ նոյն և
,, երիտասարդ 'ի մրցմունս, զի ո՛չ եթէ 'ի բաց եթող
,, 'ի տանջանս զհոգւոյն զուարթուն, այլ փափկանայր
,, 'ի չարչարանաց անտի, զհանդիսացեալն զայն և զար-
,, ժանին յիշատակաց բարբառէր բան. Իբրև զի հա-
,, ճեալ եմ ը̄ նշանակս ը̄ այս, ուր վերամբարձ զանձն
,, իմ տեսանեմ, և 'ի ձեզ ցածագոյնս և յերկիր ան-
,, կեալս:

,, կեալս : Այսպէս վերագոյն գտանէր քան զունօղս
,, իւր . և այնպէս հեռի էր 'ի վշտաց , մինչ այն թէ այլ
,, ոք էր` որ առաջի իւր 'ի տանջանս կայր . և հանդէս փա-
,, ռացի , այլ ոչ եթէ աղէտս զիւրն վարկանէր : Եւ զոր
,, ոք ոչ շարժէին այսոքիկ` յորոց ունիցին զզայութիւն
,, և չափով կարեկցութիւն և մարդասիրութիւն . այլ զայս չետ
,, նոցա ժամանակն , և ոչ ցանկութիւն թագաւորին , ան-
,, մարդի գտեալ և ժողովրդոց և քաղաքաց և իշխա-
,, նաց . Թէպէտև բազմաց ոչ այնպէս թուէր , որք ան-
,, գէտն էին խորոց չարաբարոյութեան նորա :

,, Այսպիսիք մեզ քաջակորով ծերունւոյ հանդէսք :
,, Եւ այսոքիկ էին վասն . զի մի և զմի ոսկի տայցէ տանջո-
,, ղացն ('ի շինութեան մեհենին) . յորմէ և յայտ է , թէ
,, մինչ վասն բարեպաշտութեան տարաւ դառն կտտանաց : Զի
,, ուր արեթուսացիք ծանրագին առնելով զկարգ մե-
,, հենին` զբովանդակ գումար ոսկւոյն 'ի նմանէ պա-
,, հանջէին , կամ զմեհեանն վերստին շինել հրամայէին .
,, մարթ էր կարծել ('ի տալն սակաւ ինչ) , թէ նա
,, առ անկարօղ լինելոյ մանաւանդ զհրամայեալն կա-
,, տարել` քան թէ առ բարեպաշտութեան հոգւոյ պնդեալ
,, կայր . . . մինչև յայտնի եղև տիրապէս , թէ ոչ վասն գը-
,, րամոց , այլ վասն բարեպաշտութեան կայր 'ի մրցանս . . .
,, Եւ ոչ տակաւին զայն յաւելի . զի առ մի 'ի նոցանէ
,, էր , որք 'ի ժամանակին` յորում վտանգեցաւ ամենայն
,, զարմն նորա , ապրեցուցին զժանտաժուտն զայն (զյու-
,, լիանոս) , և զանխլաբար կորզեցին . և գուցէ վասն
,, այսր բանի միայն իրաւամբք զայդոսիկ կրէր , և զա-
,, ռաւելն կրել արժան էր , զի զայնպիսի չարն ապա-
,, կանիչ տիեզերաց ոմն յանգէտս էր ապրեցուցեալ :
,, Վասն և այրն` որ 'ի ժամանակին զեպարքոսութիւն ունէր
,, պատիւ , թէպէտև հեթանոս ըստ կրօնից , այլ 'ի վեր
,, քան զհեթանոսս քաղաքավարութեամբ , և ընդ լաւս գո-
,, վեալ յառաջնոց և յորոց առ մեօք , ոչ եւս ժոյժ ու-
,, նելով ընդ բազմաչարչար կտտանս , և ընդ կիրս համբե-
,, րութեան առնն , զայս այսպէս ասաց առեն . Ո՜չ ամօթ
,, իցէ մեզ թագաւոր այսպիսի ամօթապարտ լինել յաչս
,, ամենայն քրիստոնէից , զի և ոչ զմի ծեր կարացաք
,, յաղթահարել . զայն` որ ընդ ամենայն տանջանս էանց . և ո-
,, րում յաղթելն չէր ինչ մեծ , 'ի սմանէ յաղթիլն ոչ
,, մեծ խայտառակութիւն իցէ : Եւ մինչ երևի , նովիմբք`
,, որովք եպարքոսք ամաչէին , թագաւորք պարծէին .
,, և զինչ քան զայսոսիկ թշուառագոյն իցէ տանջողացն
,, առա-

,, առաւել, քան չարչարելոցն: Արդ արեթուսացւոցն
,, այս իրք այսպէս ունէին ||:

Ենրիկոս վաղեսիոս 'ի ծան. սոզոմ. ասէ, թէ այս եպարքոս է սալլուստիոս պրետոր՝ վերակացու պալատան, այր իմաստնագոյն յիւրում ժամանակի. զոր յիշեն արտաքին մատենագիրք:

(2) Յետ նախանշանակեալ բազմադրոշմատ վկայութե̃ ա̃ծաբանին գերանելւոյն մարկոսէ, և յետ տօնելոյ զնա արևելեան եկեղեցեաց, որպէս և յիշատակելոյ արևմտեանց, 'ի զուր գայթակղին ոմանք 'ի լատին մատենագրաց ընդ բարոնիոսի՝ վս̃ գտանելոյ երբեմն մարկոսի կուսակից կիսարիանոսաց: Մինն իրի բազմօք արդարացուցանեն զնա բոլլանդեանք. և առ այս բերեն և ըզպանծալի բանս՝ զոր նուագեն յոյնք 'ի ժամագիրս ըզմարկոսէ, կոչելով զնա * լուսափայլ ճրագ եկեղեցւոյ
,, քս̃ի, անարատ պաշտօնեայ ա̃յ, 'ի մարդս հոգևորականս
,, քն̃ական հաւատոյ հանդուցեալ և աճեցեալ.
,, ընթացակից վկայից՝ առաջնորդ ունելով զքս̃ || . և ն̃:
Եւ 'ի վր̃ բերեն բոլլանդեանք. * Եւ զի այս այսպէս
,, է, և բովանդակ եկեղեցւոյ յունաց միաձայնութ̃ իբրև
,, սր̃ պաշտի և քարոզի մարկոս եփ̃ս արեթուսացւոց,
,, ուղղութ̃ մոլանոս 'ի կարգի յաւելուածոց իւրոց
,, առ վկայագիրն ուսուարդայ ճ̃ելուզեաց և զյիշատակ
,, նր̃ ը̃ կիւրղի սարկաւագի և այլոց նահատակելոց
,, առ յուլիանոսիւ́ բռնաւորաւ: Ուղղութ̃ և գալեսինոս
,, զսա միայն իբրև գլխաւորագոյն գտեալ 'ի
,, բովանդակ հալածանս յերկրին ասորւոց արձանագրեաց
,, յիւրում վկայաբանութե̃, զոր յարմարագրեաց
,, 'ի պէտս հռովմէական եկեղեցւոյ, և ընծայեաց գրիգորի
,, ժգ̃երորդի, հանդերձ երկար ներբողիւք առ 'ի
,, յունաց: Զոր և յաջորդն գրիգորի կղեմէս ը̃երորդ
,, յամի տ̃ն. 1598. հաստատեաց իւրով հաւանութ̃.
,, և յունաց՝ որոց արդելեալ էր մուտ 'ի դասն, թոյլ ետ
,, զկիրառութիւն նորոյ ծաղկաբանութե̃, ըս̃ ժամագրքի,
,, զոր քաղեալ էր արկուդիոսի 'ի մայր ժամագրոց յունաց,
,, և ոմանք յեպ̃ս̃աց և այլ ևս եկեղեցական անձինք
,, տեղեակք երկոցունց լեզուաց (յն. և լտ.) ճըշգրիւ́
,, զննեալ էին. ուրանօր առաջին դնի մարկոսի և եթ
,, ներբողն առ 'ի վերծանել: Վս̃յ ոչ միայն յունաց, այլև
,, լատինացւոց եկեղեցւոյ ընդունելի լեալ պարտի համարիլ
,, պաշտօն նր̃: Մինչև զարմանալ արժան է, թէ
,, զիա́րդ կարդինալ բարոնիոս . . . . խստագոյն բանիւք

,, վարեցաւ ը̅դ̅էմ ն̅ր̅ ||։

Ապա 'ի մէջ բերեալ զբանս բարոնիոսի՝ ցրէն զգայթակղութի ն̅ր̅ , և ցուցանէն ը̅դ̅էմ ն̅ր̅ 'ի պատմական զննութե̅ց և 'ի ձեռնարկութե̅ց , թէ մարկոս ոչ միայն ազատ էր յարիոսական մտաց , այլև ոչ յերկար մնաց 'ի միաբանութեան կիսարիոսեանց , այլ փութով թօթափեաց · և յետ ամի ասէն · * Այլ չէն ինչ պէտք գու-
,, շակական բանից · քանզի 'ի վկայութի յայտնի ուղ-
,, ղափառութե̅ մարկոսի բաւական է հեղինակութիւն
,, նազիանզացւոյն · որ զնա միայն ընտրեալ 'ի միջոյ ա-
,, մենեցուն (նահատակելոց առ յուլիանոսիւ̅) յառաջ
,, բերէ յօրինակ քրիստոնէական արիութե̅ , որում ոդ-
,, ւով չափ հակառակամարտ էր խստութի կռապաշ-
,, տութե̅ , և ներբողաբանէ ։ Յայս հայեցեալ՝ ոչ կա-
,, րեմք ասել , թէ խաբեալ իցեն ոմանք՝ չիմանալով
,, զմիտս բանին (ո̅մ̅ կարծէ բարոնիոս)· ո̅մ̅ այն թէ
,, ս̅բ վ̅դ̅պն եկեղեցւոյ և հզօր ախոյեան ուղղափառ հա-
,, ւատոյ ը̅դ̅էմ արիանոսաց՝ ոչինչ փոյթ 'ի մտի եդեալ
,, իցէ՝ թէ ո՞յք իցեն զորս գովէ , ուղղափառ , եթէ ոչ||։

Յաւելուն բերել և զայլ բանս 'ի տարեգրութե̅ն բարոնիոսի՝ զոր յետոյ գրեաց , և նոքիմբք ցուցանեն՝ թէ փոխեալ իցէ զկարծիս իւր · տես յամի տ̅ն̅ · 362 ։ Եւյարեն · * Այսոքիւք բանիւք յետս կոչեալ պարտ է
,, համարել զկարծիս իւր , զոր ը̅դ̅էմ մարկոսի ցուցե̅լ
,, էր նորին բարոնիոսի 'ի ծանօթութիս (վկայագրու-
,, թե̅)։ Վ̅ս̅յ և չեն ինչ զարմանք , զի ինչ ոչ երկմտեալ
,, 'ի բանից ն̅ր̅ փերրարացւոյն՝ եդ զմարկոս 'ի հանրա-
,, կան իւր ցուցակի ա̅մ̅ ս̅բ̅ց · զոր և յառաջ քան զնա՝
,, մանաւանդ թէ յառաջ ք̅ զբարոնիոս՝ արարեալ էին
,, կանիսիոս 'ի վկայագիրն գերմանական , և փելլիկիոս
,, 'ի տօնացոյցն պատմաբանական ||։ Թո՛ղ զանհիմն կարծիս ենրիկոսի վաղեսեայ 'ի ծան · սոզոմ · ուր համարի , թէ կայցէ այլ մարկոս արեթուսացի արիոսեան՝ մեռեալ յա̅ռ̅ջ քան զժողովն սարդիկեայ · և այլ իցէ մարկոս արեթուսացի յաջորդ նորին՝ գտեալ 'ի սուտ ժողովսն սարդիկեան · զի յերկբայական բանս է հաստատեալ ։ Այլ մեզ՝ ուր մարդկօրէն ինչ գայթակղութե̅ տեսանի 'ի ս̅բ̅ս , պարտ է 'ի միտ ածել զզօրութի շնորհացն ա̅յ՝ որ կանգնեաց զն̅ , և նս սրբագոյնս արար ։

(3) Ո՛չ կարէ ոք 'ի պարզամտաց գայթակղիլ և ը̅ ազատել ս̅բ̅յն մարկոսի այլովք հանդերձ զյուլիանոս · և ո՛չ ածաբանն այլազգ մտօք ընդ վայր հարկանէ զայն գործ ,

բայց միայն 'ի ցուցանել զանօրէնութիւն յուլիանոսի՝ որ և ոչ յազատարարս իւր խնայեաց: Զայս յիշեաց և սբ̃ քահանայն բարսեղ վկայ անկիւրացի յառենի հեթանոսաց, առեալ առ կոմն նախագահ (առ Ռուինարտայ. երես. 514). * Յուշ արա բռնաւորին քում յու-
„ լիանոսի, որպէս իցէ զօրութիւն ք̃ի՝ զոր նա 'ի բաց
„ եթող, և կորոյս զշնորհ իւր՝ խաբեալ 'ի սատանայէ.
„ ոչ յիշեաց. թէ որպէս ազատեաց զնա 'ի մահուանէ
„ 'ի ձեռն սբ̃ց քահանայից իւրոց, թաքուցանելով զնա
„ 'ի ներքոյ սբ̃ և սքանչելի խորանի եկեղեցւոյ սբ̃յ. և
„ նորա զայսպիսի երախտիս մոռացեալ՝ արտաքս եհան
„ զանձն, և 'ի բաց ոստեցաւ յեկեղեցւոյ||: Տես և 'ի վարս միւս կիւրղի կմ̃ կիւրակոսի եհմացւոյ:

Այլ ինչ ծանօթութիւնս ոչ աւելորդ 'ի վր̃ մասնաւոր հանգամանաց վկայաբանութեան բաղկացելոյ 'ի բանից գր. ածաբ. և ճառընտ. և այլոց նշանակեալ գրոց. զի որ ինչ տարբերութիւն տեսաք առ այս կամ առ այն վկայաբան, բովանդակն ծագի 'ի պէսպէս ընթերցուածոց և 'ի պէսպէս իմացուածոց բանից ածաբանին:

ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Սբ՟յն Աբդայի կ՟մ աբդեայ եպիսկոպոսի (1), և Որմզդանայ, և Սայինի, և Բենիամենի սարկաւագի, և որոց ընդ նմ՟՝ վկայեցին պարսից ։ (2)

Հ․ ապր․ 14․ Յ․ մարտ․ 31 ։ Լ․ մարտ․ 31 ։ Ճառընտ․ Բ․ նչէ ։ Բուլլանդեանք․ հատ․ Գ․ մարտի․ 31․ երես․ 905․ և հատ․ Գ․ մայիսի․ 16․ երես․ 574 ։ Թէոդորետ․ պատմ․ Ե․ 39 ։ Ասսէման․ ԵԶ ։

ԱԲԴԱՅ ԿԱՄ ԱԲԴԱԻ (որ և աւտա, կամ օտա) անուն՝ զանազան եպ՟սունք յիշատակին յարևելեան մատենագրութ՟իս․ յորոց երկոքին նահատակեալք ՚ի պարսից յայլևայլ ժ՟մկս՝ գտանին ՚ի վկայաբանութ՟իս, ո՟չ և ՚ի յայսմաւուրս մեր․ մին է այն՝ որ դնի ՚ի կարգս ս՟բց յիշատակելեաց ը՟ն աբդիշու եպ՟սի ՚ի մայիսի․ 16․ իսկ միւսն է՝ որ տօնախմբի ը՟ն բենիամենի սարկաւագի․ զորմէ է ճառս առաջիկայ ։

Արդ երանելիս այս աբդայ էր եպ՟ս մեծանուն ՚ի կողմանս պարսից, ը՟ս ոմանց արքեպիսկոպոս շօշայ, և ը՟ս այլոց եպ՟ս խուժաստանի, զարդարեալ առաքինութ՟բ, և հովիւ քաջ եւ արթուն, առ կայսերութ՟բ Թէոդոսի փոքու կայսեր Հոռոմոց ։ Եւ եղեւ զի շարժեաց սատանայ պատերազմ 'ի վ՟ր եկեղեցւոյն ա՟յ 'ի ձեռն հրապաշտ արքային պարսից յազկերտի առաջնոյ որդւոյ շապհոյ երկայնակեցի. զի սա ըստ օրինակի հօր իւրոյ սկսաւ նեղել զհաւատացեալս՝ որ կային յերկրին պարսից, եւ ազգի ազգի հնարիւք հանել զոմանս 'ի հաւատոց, եւ բազմացուցանել զմոգութի՟ եւ զկրակապաշտութի՟ ։

Զայն իբրեւ ետես երանելին աբդայ եպ՟ս, շարժեցաւ ա՟ծային նախանձու, եւ հրձիգ արար գործակցութ՟բ ովսեայ երիցու զպիւռիոնն՝ որ էր 'ի մերձակի իւրում, այն է տուն կրակի կամ տաճար հրոյ՝ ատրուշան կոչեցեալ. յորում անշէջ բորբոքէին զօրհանապազ զհուր պաշտօնեայք կրակին, երկիրպագանելով նմին եւ պաշտելով որպ՟ զա՟ծ ը՟ այլ տարերս եւ ընդ լուսաւորս երկնից ։ (3) Ազդ եղեւ մոգուց եւ մոգպետաց. եւ նոքա պատմեցին արքային, խնդրելով զվրէժ պաշտամանն իւրեանց ։ Կոչեաց թագաւորն զսբ՟ եպ՟ն առաջի իւր. եւ նախ մեղադիր եղեւ նմ՟ վ՟ն գործոյն. եւ ապա հրամայեաց միւանգամ շինել զատրուշանն. ապա թէ ոչ՝ ոչ զերծցիս ասէ 'ի ձեռաց իմոց ։

Իսկ սբ՟ եպ՟կն հակառակաբանէր առաջի արքային, եւ ասէր. անհնար է ինձ դառնալ վերստին շինել զաւերեալն 'ի մէնջ զանօտի տեղի մոխրապաշտից, մանաւանդ թէ անա՟ծից, որք զարարածս պաշտեն փոխան ա-

րար

բարչին օրհնելոյ 'ի բարձունս : Ընդ որ յանհնարինս ցասուցեալ արքայ՝ ետ անդէն առաջի իւր սպանանել զոք եպսն . եւ եւս քան զեւս բորբոքեալ զհրդեհ դառնութեան՝ հրամայեաց հրձիգ առնել եւ աւերել զամ եկեղեցիս քրիստոնէից որ 'ի պարսս . եւ ըզբարեպաշտութե դաւանողսն ըմբռնել , եւ ազգի ազգի տանջանօք կորուսանել , թէ չառնուն յանձն զօրէնս մոգութե :

Եւ իբրեւ առին զայս հրաման անողորմ ազգն պարսից , սկսան ձեռն արկանել 'ի քրիստոնեայս 'ի մեծամեծս եւ 'ի փոքունս , եւ ստիպել 'ի դենս իւրեանց անօրէնս . եւ տեսեալ՝ թէ չառնուն նոքա յանձն , զոմանց զձեռս եւ զոտս հատանէին , կամ զձեռս եւ զթիկունս մորթեզերծ առնէին . զոմանց զունչս եւ զականջս ծայրատէին . զայլոց զերկոսին զաչս խաւարեցուցանէին . եւ զայլս 'ի վկայիցն սրբց 'ի գլխոյն մինչեւ 'ի մօրուսն եւս եւ մինչեւ 'ի լանջս մորթէին . զկիսոց մարմինս սայրասուր եղեգամբք ձեղքեալ քանցէին . եւ զբազումս կապեալ ոտիւք եւ ձեռօք՝ ձարպով օծանէին , եւ ընկենուին 'ի խորափիտս գբոց . եւ անդ արկանէին մկունս եւ աքիսս , եւ զգուշանային խորուե գբին , զի մի կարասցեն կայտառքն փախչել . եւ այնպէս 'ի քաղցոյն զկծեալք՝ կրծէին զմարմինս սրբցն , եւ մինչեւ յոսկերսն հասուցանէին :

Այլ այսու ամի ոչ կարացին երկեցուցանել զերանելի վկայսն քսի . մանաւանդ թէ զայլս ևս բազումս 'ի նոյն հանդէս նահատակութե̃ն ձգեցին. զի որ միանգամ տեառնէին զհամբերութի և զյուսապատար զուարթութի սր̃ց յայնպիսի խստամբերութե̃ տանջանաց, ինքնայորդոր յօժարութ̃. և փափաքմամբ մեծաւ ընթանային 'ի մահ վասն անուանն ք̃ի ։ Արդ 'ի Թուոյ աստի երջանիկ վկայից և խոստովանողաց ժամանակին, որոց անուանք գրեալ կան 'ի վերին դպրութե̃, երեցունց միայն երևելի արանց անուանք գտանին 'ի գիրս պատմութե̃ց. զորս և յանուանէ տօնեմք ը̃ սր̃յն աբդայի. արդ ժամէ ասել զնոցանէ առանձինն ։

Էր յայնժամ ոմն յաւագ իշխանացն պարսից՝ մեծատուն յոյժ և քրիստոնեայ հաւատով. անուն նր̃ պարսկերէն Հիւրմիզ. որ 'ի մեզ Որմզդան կոչի, և յայլոց որմիզդէս կամ որմիզտա ։ Լուեալ արքայի զնմանէ՝ թէ քրիստոնեայ է՞, ետ կոչել զնա զառաջեաւ, և պատուիրէր նմա 'ի բաց կալ 'ի ք̃սէ ուրացութ̃, և մի ևս անուանել զանձն քրիստոնեայ ։ Եւ ասէ Որմիզդան ցյազկերտ. ո՛վ արքայ եթէ ոք 'ի քո ծառայից ուրասցի զքեզ՝ որ մահկանացուդ ես, և հեռանել 'ի քումմէ ծառայութե̃ ապստամբութ̃՝ առ այլազգի թագաւոր երթայցէ, ո՞չ ապաքէն մեծաց տանջանաց և մահու արժանի դատեալ լինի. և արդ ո՞րչափ ևս առաւել մեծամեծ պատուհասից չիցէ արժանի, մինչև անշէջ հրոյն մատնելոյ, որ զա̃ծն երկնի և երկրի ուրանայցէ զանմահ թագաւորն յա-

ւի

փառենական. Թո՛ղ զի որ դիւրաւ զմեծն ամենեցուն արհամարհէ, այնպիսին դիւրագոյն ևս զերկրաւոր Թագաւոր անարգէ 'ի սրտէ. զի որ անհաւատարիմ է 'ի մեծն, զիա՞րդ հաւատարիմ գտանիցի 'ի փոքուն: (4) Զայս իբրև լուաւ Թագաւորն, յամօթ եղև. և նոյնժամայն ընկէց զայնպիսի այր երևելի 'ի պատուոյ իշխանութենէն, և տարամերժեաց 'ի տանէ և 'ի ստացուածոց իւրոց. և մերկացուցեալ զնա 'ի պատմուճանաց՝ հրաման ետ անարգանօք, զի արածեսցէ զուղտերամակն՝ ածեալ զմիջով ցնցոտի ինչ 'ի մերկուց: Իսկ յետ աւուրց բազմաց ետես զնա Թագաւորն 'ի բարձր վայրէ, զի դեգերէր ողորմկենօք 'ի դաշտի՝ մերկ և աշխատեալ զկնի ուղտուցն 'ի տապ արևու. առաքեաց նմա շապիկ մի կտաւի, և ասէ. յիշեա՛ զքո զառաջին ազնուականութիւն զմեծութիւն և զփափկութիւն և զքաղցր կեանքն. 'ի բա՛ց թող զորդի հիւսան, ուրացի՛ր զքրիստոնէութիւնդ, և հաստատեա՛ պաշտամանց մերոց: Իսկ երանելւոյն լուեալ զմահաշունչ հրապոյրս և զհայհոյանս Թագաւորին, անդէն և անդ առեալ զշապիկն՝ պատառեաց 'ի բազում ծուէնս, և անարգեաց զպաշտօն Թագաւորին. և ասէ. եթէ սովիմբ համարիս յետս դարձուցանել զիս Թագաւորդ 'ի կրօնիցս բարեպաշտութենէ, պարգև նր նմա՛ լիցի հանդերձ ամպարշտութեամբ իւրով: Յայնժամ ցասուցեալ արքայի՝ հրամայեաց կորուսանել զնա վաղվաղակի. և անդէն 'ի տեղւոջն կատարեցաւ երանելին սրով. այլք ասեն, տարագիր արար զնա յօտարութի̄ . և անդ կատարեցաւ ։

Միւս այլ ոմն էր 'ի մեծատունն իշխանացն պարսից քրիստոնեայ , որ ունէր ծառայս հազար . և անունն ն̄ր Սային , կի̄ն ա̄ծ այլոց՝ սուրն ։ Սա ևս բազում անգամ բազում հնարիւք փորձեաց արքայ 'ի մոգութի̄ դարձուցանել ։ Եւ յորժամ ոչ կարաց ածել 'ի հաւանութի̄ , զատոյց զնա 'ի հազար ծառայիցն . և զմին 'ի նոցանէ՝ որ քան զամենեսեան անարգ էր , աղտեղի և դարշ դիմօք , մեծացոյց և իշխանացոյց . և ետ նմա զտ̄րն իւր զսային 'ի ծառայ , և զտիկինն սայինայ 'ի կնութի̄ նմա . և հրամայեաց՝ զի ծառայեսցէ նոցա ա̄մ հպատակու̄ ։ Որ և յօժարակամ կատարէր երանելին ա̄մ սիրով առ սէրն ք̄ի . և զայն ա̄մ նեղութիս արհամարհանաց՝ որ եկին 'ի վ̄ ն̄ր , հանգիստ իւր համարէր . և այնպէս ոչ իւիք 'ի բաց եկաց 'ի յուսոյն ք̄ի . մինչև կատարեցաւ բարի խոստովանութ̄բ 'ի ք̄ս ։

Կայր և ոմն 'ի սարկաւագաց եկեղեցւոյ Բենիամին անուն , քարոզ բանին ճշմարտութե̄՝ զօրաւոր հոգւով . և զի զբազումս դարձուցանէր 'ի մոգութէ̄ յա̄ծպաշտութի̄ , կալան զնա կրակապաշտք , և գան հարեալ սաստիկ՝ արկին 'ի բանտ . ուր մնաց զամս երկուս ։ Յետ այսորիկ դէպ եղև գալ դեսպանաց ոմանց 'ի թագաւորէն յունաց 'ի թէոդոսէ 'ի պարսս վ̄ն խաղաղութե̄ . որոց տե-

ղեզեկացեալ վն՟ բենիամենի սարկաւագին , եթէ վասն քնի՟ արգելեալ կայ 'ի բանտի , խնդրեցին 'ի յազկերտէ արքայէ հանել զնա 'ի բանտէ ։ Եւ թագաւորն ասէ ցնս՟ . Թող վստահացուցէ զմեզ ձեռնագրով իւրով և վկայութ՟ ձերով , զի 'ի մոգացս պարսից զոք մի դարձուսցէ 'ի հաւատոյն իւր , և մի ուսուսցէ զոք յերկրիս յայսմիկ վ՟դպութ՟ իւրով . և ապա վն՟ խնդրոյ ձերոյ ազատեցից զնա 'ի կապանացն ։ Եւ դեսպանքն անգէտ խորհրդով յուսացուցին զարքայ հաւանեցուցանել զբենիամին գնալ ը՟ հրամանաց արքունի ։

Իսկ երանելոյն լուեալ զայն՝ ոչ իմիք առյանձն՝ առնել զհրամանս արքային . անհընար է ինձ ասէ արգելուլ զշնորհսն այ՟ իմոյ 'ի մարդկանէ . զի ոչ կարեմ չհաղորդել այլոց զլոյսն՝ զոր ընկալայ . այլ որչափ կարօղ իցեմ, լուսաւորեմ զխաւարեալսն . զի մի պատիժս կրեցից ը՟ թաքուցանողին զտաղանդ տն՟ իւրոյ ։ Այլ յայսր ա՟մի վր՟ թագաւորն զիջե՟լ յաղերսանս և 'ի կամս դեսպանացն թէոդոսի , և հաւատացեալ բանից նոցա՝ թէ բենիամին անսայ բանից իւրոց , ազատեաց զնա 'ի բանտէ ։ Իսկ նր՟ ելեալ և շրջեալ 'ի քարոզութ՟ բանին , ոչ դադարէր յուսուցանելոյ և 'ի մկրտելոյ զկրակին պաշտօնեայսն և զմոգսն . և ցորչափ 'ի պարսս էին դեսպանք յունաց , լռութի՟ էր զգործոց բենիամենի . այլ յետ դարձի նց՟ 'ի միւսում տարւոջ՝ ազդեցին յազկերտի , թէ բենիամենին այն՝ առաւել քան զառաջինն վարէ զգործ իւր։ Հրաման ետ, և կալան կացուցին զնա առաջի իւր. յայնժամ սկսաւ Թագաւորն և որ զնովաւն կային՝ ստիպել զնա ուրանալ ՚ի հաւատոցն, և երկիր պագանել արեգական և կրակի. զի շնորհեսցին նմա կեանքն։

Յայնմ վայրի լցեալ երանելւոյն հոգւով՝ բազմագիմի ա̅ծիմաստ բանիւք յանդիմանեաց զմոլորութի̅ և զանհաւատութի̅ ն̅ց. և ասէ. ա̅ծք որ զերկինս և զերկիր ոչ արարին, գրեալ է՝ կորիցեն ՚ի ներքոյ երկնից. ես զտարերս ա̅ծ ո՛չ խոստովանիմ, և մոխրոյ և հրոյ զոհ ո՛չ մատուցանեմ. զոր ինչ կամիս ա՛րքայ, արա՛ վաղվաղակի։

Յայնժամ դառնացեալ յազկերտի՝ հրաման ետ արկանել զվկայն յորսայս, և վարել եղեգունս սրեալս ԺԲ քանեսին եղնգունս ձեռաց և ոտից երանելւոյն. յորոց իբրև ՚ի բազմավտակ աղբերաց հոսէր արիւնն իբրև զյորդաբուղխ առուս, և ոռոգանէր զերկիր։ Եւ ոչ այսու շատացեալ անօրինաց՝ յաւելին զայլ քստմնելի տանջանս. սրեցին երկայնագոյն եղէգն, և մխեցին ընդ անցս ներքինս ջրհեղ անդամոցն, և գազանաբար սաստիկ հանէին և արկանէին։ Բայց քաջ նահատակն ոչինչ զանգիտեալ զարհուրեցաւ յանհնարին չարահնարիծ կտտանաց. այլ փառաւորէր զա̅ծ և գոհանայր, և յօրհնելոյ զտ̅ր ոչ դադարէր։

Եւ իբրև երկարեցաւ ՚ի դառն տանջանսն

և յոգիս ապաստան երևէր , թողացուցին նմա առ վայր մի · զի թերևս զգաստասցի ։ Իսկ նա ամբարձեալ զձեռս իւր յերկինս ը̃ արևելս՝ սկսաւ աղօթել , և ասել այսպէս · Հայր տ̃ն մերոյ յս̃ի ք̃սի , տ̃րդ և արարիչդ ա̃մ արարածոց , որ առաքեցեր զմիածին որդիդ քո զճառագայթդ և զնկարագիր էութե̃ քո , որ կրէ զա̃մ բանի՛ զօրութե̃ իւրոյ , որ եկն և էջ յարգանդ կուսին կամաւ քո , և մարմին զգեցաւ ճշմարտապէս և առանց կարծեաց · որ 'ի յերկրի երևեցաւ և ընդ մարդկան շրջեցաւ · և ճանապարհորդեաց ը̃ ա̃մ մարմնական կիրս կենցաղոյս , և խաչի և մահու համբերեաց · թաղեցաւ , և յարեաւ յաւուր երրորդի · և համբարձաւ առ քեզ հա՛յր յերկինս՝ ուր էրդ յառաջ · և զս̃բ զհոգին զէակիցն և զմշտնջենաւորակիցն առաքեաց յաշխ̃ · որով ծանոյց զա̃ծութի̃ քո ։ Աղաչեմ զքեզ տ̃ր իմ և ա̃ծ , տուր ինձ զպսակն՝ զոր խնդրեցի · զի դու ինքնին գիտես , զի ես ինձէն խնդրեցի փափամամբ մեռանել վ̃ն անուանդ քում ս̃բյ , և կենդանի լինել 'ի քեզ · զի ա̃մ մտօք և ոգւովք և կենօք սիրեցի զքեզ · զի տեսից ըզքեզ , և ուրախ եղէց և հանգեայց · և այլ մի ես կացից յաշխ̃ի և տեսից զչարչարանս ժողովրդեանն , և զաւեր եկեղեցեաց քոց , ըզկործանումն սեղանոյն , և զնեղութի̃ ս̃բյ ուխտին · զվհատուի̃ հաւատացելոցն , զզանգիտանս դարձելոցն 'ի ճշմարտութենէ · այլ յոր կոչեցայն՝ 'ի սմին հաստատուն կացից , և յոր հրաւիրեցայն՝ զնոյն և կատարեցից արդեամբք. և եղէց օրինակ ա՟մ ժողովրդեան քում՝ որ յարևելս. և տաց զարիւն իմ առաջի ն՟ց, և առից ը՟ նոսա զկեանս իմ յերկրին կենդանեաց. ուր ո՛չ հողք են և ո՛չ ծուփք, ո՛չ տրտմութ՟ի և ո՛չ յոյզք խորհրդոց. ո՛չ սպառնալիք և ո՛չ ահք թագաւորաց. ո՛չ որ սաստէ և երկեցուցանէ, և ո՛չ որ տագնապէ և զարհուրեցուցանէ: Լուծութ՟ի ոտից քո զօրասցի ճանապա՛րհդ՝ կենաց. վաստակք անդամոցս քո հանգիցեն օծեա՛լդ. վիշտք սրտիս քո մոռասցին բաժա՛կ փրկութ՟ե մերոյ. վտակք արտասուա՛ց աչացս՝ որով պաղատիմս առ քեզ, քո արգելցին՝ մխիթարութ՟ի ցնծութ՟ե մերոյ:

Եւ իբրև ասաց զայս, և կամէր այլ ևս յերկարել զընդ ա՟ծ խօսս խանդաղատանաց, վաղվաղակի ել հրաման յարքայէ ներել նմա, եթէ երկիր պագանիցէ արեգական և կրակի. ապա թէ ոչ՝ մի՛ թողացուցանել նմա զտանջանս, այլ և ևս չարչարել զնա ընդերկար նովին անբերելի կրիւք մինչև 'ի մահ: Առ որոյ հարցանէին, թէ յանձն առնուցո՞ւ զոհել: Այլ ս՟բն ա՟յ բացէ 'ի բաց մերժեաց զառաջարկութ՟ի ն՟ց, և յայտ արար՝ թէ առ ոչինչ համարե՟լ էին յաչս իւր ա՟մ տանջանք. և ա՟մ հեծութ՟իք ն՟ր յայն բերին, թէ երբ ելանիցէ 'ի մարմնոյ, և մտանիցէ առ տ՟ր ա՟ծ իւր:

Յայնժամ ը՟ս հրամանին արքունի ցցեցին անօրէնքն զաւազան երկայն ընդ նիստ նորա երկսայր սլաքով, և միջամուխ արարին մինչև 'ի ներքին որովայն նր՟. և այնպէս՝ մինչդեռ յայն անհնարին տանջանս էր անպարտելի զօրականն քի՟, աւանդեաց զհոգին 'ի ձեռս հրեշտակաց. և պսակեցաւ անմահական փառօք յարարչէն իւրմէ յանվախճան Թագաւորութենէ երկնից ը՟ այլ պսակակից նց՟ վկայս, յամի տն՟ իբր. 418 ։ (5)

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ ։

(1) Որ 'ի Հ. անխտիր գրի յուղղականն աբդիու, և 'ի սեռականն նոյնպէս աբդիու կամ աբդաւի, և 'ի նոր տօնացոյցս աբդաւայ, մեք ը՟ Ճ. և ը՟ յոլովագոյն օրինակաց հին տօնացուցից եդաք աբդայի կամ աբդեայ. զոր և այլք 'ի վկայաբանից հաստատեն ը՟ Թէոդորետոսի՝ գրելով հասարակօրէն յուղղական աբդա կմ՟ աբդաս ։ Թող զոր 'ի նոր տօնացոյցս ինչ, ոպ՟ 'ի տպագրելն եղեալ կայ աբդլմեհ. իսկ 'ի հնագոյն ձեռագիրս չեք բնաւ անուն չորից սբ՟ցս աբդայի, որմզդանայ, սայինի և բենիամենի. զի ենթադրին լինել 'ի կարգէ սբ՟ց յիշատակելեաց. այլ յետոյ անցեալ են 'ի կարգս տօնելեաց, հայելով թերևս 'ի յոյնս՝ զի և նք՟ անը՟միջապ՟ զկնի մարկոսի արեթուսայ եպ՟սի և կիւրղի սարկաւագի որ 'ի մարտի. 30. կարգեն զաբդա եպ՟ս և զբենիամին սարկաւագ 'ի մարտի. 31 ։ Իսկ լատինք ոչ յիշեն զայս աբդա, այլ ըզմիւսն՝ որ 'ի մայիսի. 16. իսկ սա 'ի մարտի. 31. ըզբենիամին միայն նշանակեն. գուցէ ը՟ մի համար եդին կմ՟ նոյն համարեցան զերկոսին աբդայս. ոպ՟ և արդարև յայս վրիպակ կարծիս եղեն բոլլանդեանք 'ի մարտի. 31. այլ յետոյ 'ի մայիսի 16. յայտնապէս յետս կոչեցին ըզսխալանս իւրեանց, և հաստատեցին՝ թէ երկու են աբդա անուամբ եպ՟սունք վկայք ։

(2) Վկայաբանութիւն սր՟յն աբդայի և որոց ը՟ նմա 'ի պարսս, ոչ միայն ը՟ գոյացուէ՟, այլև ուրեք ուրեք ըստ բառիցն միօրինակ աւանդի 'ի Ճ. և 'ի գիրս Թէոդորետոսի. յայտ է թէ 'ի միոյ հին մատենագրէ աղբերացել՟.

միայն զգեղեցիկ աղօթս բենիամենի զանց առնէ Թէոդորետոս, ոմ̃ և Հ. վ̃ համառօտաբանութե̃:

Այլ ծանիր, զի ուր Ծ. և Հ. և այլ վկայագիրք յայտ առնեն, թէ յազկերտ էր թշնամի քրիստոնէից և հալածիչ նց̃, և միայն 'ի գործոյ անտի սբ̃յն աբդայի՝ որ յառաջ գայր 'ի նախանձաւորութէ̃ փառացն ա̃յ, առաւել գրգռեցաւ հալածումն, Թէոդորետոս զբովանդակ վնասն երևի արկանել 'ի վր̃ սբ̃յն, և համարձակի ըստգտանել զնա, գրելով այսպէս. * Ընդ այն ժամս յազկերտ
,, պարսից արքայն ընդդէմ եկեղեցեացն շարժեաց
,, զպատերազմ, սկզբնաւիթ աստի առե̃լ: Աբդաս
,, ոմ̃ եպ̃կս էր բազմօք զարդարեալ առաքինութե̃
,, տեսակօք. սա ոչ 'ի դէպ նախանձու վարեցե̃լ՝ զպիւրոն
,, կործանեաց||. և որ 'ի կարգին. ուր յետ ասելոյ՝ թէ թագաւորն ստիպեաց զնա 'ի վերստին շինել. և նա չէառ յանձն, ապա յարէ. ցասուցեալ արքայի, և * նախ զա̃ծային այրն հրաման տուեալ բառնալ 'ի
,, կենաց, կործանել հրամայեաց զեկեղեցիս:|| Այլ ես
,, զքանդումն կրակատանն տարադէպ ժամու գործ
,, առնեմ. քանզի և ոչ ա̃ծային առաքեալն յորժամ եկն
,, յաթէնս, և զքաղաքն եւես ըմբռնեալ 'ի կռապաշտութե̃,
,, զբագինս ինչ պաշտամանց նց̃ կործանեաց
,, երբէք. այլ բանիւ և եթ զանգիտութի̃ նոցա յանդիմանեաց,
,, և զճշմարտութին յայտնեաց: Իսկ ընդ
,, չառնուլ նր̃ յանձն միւսանգամ կանգնել զաւերեալ
,, տաճարն, այլ զմեռանելն մանաւանդ ընտրել՝ ք̃ զայն
,, գործ առնել, իրաւամբք սքանչանամ, և պսակաց արժանի
,, համարիմ: Զի հաւասար ինձ թուի՝ կրակի
,, երկիր պագանել, և զտեղի պաշտամանն նորա շինել:
,, Արդ աստի սկիզբն առեալ մրրիկն հալածանաց՝
,, յարոյց սաստիկ և անհնարին ալեկոծութիւս ընդդէմ
,, աշակերտաց բարեպաշտութե̃||:

Ուր թէպէտև իմաստութե̃ կարծի խօսել, բայց թերակատար տեղեկութե̃, մանաւանդ թէ ը̃ այնպիսի կեղակարծ համբաւոյ՝ զոր յոյն դեսպանք 'ի բերանոյ կրակապաշտ պարսից լուեալ՝ պատմէին յծ̃ին յունաց. զի ա̃մ հալածիչ պատճառանս իմն կրկնէ իւրումն չարութե̃. և արդարև ո՞ կարէ ասել, թէ սբ̃ն աբդա անխորհրդաբար 'ի ժամանակի խաղաղութե̃ իշխեալ իցէ առնել զայդ գործ՝ որոյ կատարածն էր յայտնի. ապա պարտ է ասել, թէ զոր օրինակ և ղևոնդեանք կործանելով զայլևայլ մեհեանս՝ առաւել գրգռեցին զպարսիկս ը̃-

դէմ խուրեանց բայց ոչ անխորհրդաբար կործանեցին .
այլ զի հարկն պահանջէր, զի մի տարածեսցի մոգութիւն
'ի Հայս . սոյնպէս խնամ կալեալ արդեօք աբդա 'ի վիճակի
խուրում յծին պարսից . իսկ օրինակն պօղոսի յաթենաջունի
սատ ընաւին հանգիստուն . ամ̃ յայտ է որոց միտ
դնեն : Զայս յայն սակս յիշեցի, զի իմասցիս՝ թէ այսու
օրինակաւ համբաւեցաւ 'ի յոյնս և գործ վարդանանց
և զղևոնդեանց ը̃դէմ կրակապաշտ պարսից . վ̃յ և յոյնք
ընդ ակամբ հայեցան, և ոչ օգնեցին . այլ ա̃ծ օգնեաց
նոցա :

(3) Պիւռիոն կ̃մ պեւռիոն, զոր միանգամ և երկիցս 'ի
կիր առնուն աստանօր Ճ . և Հ . է յունական ձայնս
բիռիօն 'ի կիր արկեալ և 'ի Թէոդորետոսէ . և սուգաբանի
կրակարան կ̃մ հրանոց . զի բխռ է հուր կամ
կրակ : Եւ այս է նշանակ, թէ 'ի յունական գրոց թարգմանեալ
է Ճառս, ուստի առնու և Թէոդորետոս : Դարձեալ՝
ամ̃ գրի 'ի Ճ . * և զամս երեսուն զմիհրին հալածանացն
" 'ի քրիստոնէից ոչ վերացոյց ||. նոյնպ̃ և Թէոդորետոս
ասէ . * այս միհրին հալածանաց եկաց մնաց
" և յետ անցանելոյ երեսուն ամաց || . զոր պարտ է իմանալ
ընդհատութբ̃ յաւուրց յազկերտի առաջնոյ մինչև
ցյետին աւուրս յազկերտի երկրորդի, առ որով նահատակեցան
վարդանանք և ղևոնդեանք : Այլ զառաջնոյն
յազկերտի զհալածանս դադարեցուցին ս̃բն մարութա
և ս̃բն սահակ պարթև . զոր ասորի պատմիչք կոչեն
առաջնորդ հայոց՝ համաձայն բառին . մինչ զի մարթ
է իմանալ և զզօրավար . գուցէ իմանան զսահակ ամ̃ն ասպետ
կ̃մ զայլ ոք յաւագաց յաւուրս մեծին սահակայ :
Տեսցեն որոց կամք իցեն, և զոր ինչ խօսին բոլլանդեանք
'ի Բ հատ . մարտ . երես . 907 . պէսպէս չափելով
զժամանակ այսց հալածանաց ըստ ցուցանելոյ այլևայլ
մատենագրաց . այլ մեզ չէ հարկ աշխատ լինել 'ի սոսին,
զի 'ի պատմութեց հայոց յայտնի են գործք այնր դարու,
և ժամանակք նոցին ոչ անյայտ :

(4) Զոր ասացն երանելին որմզդան առաջի յազկերտի,
զնոյն Ճոխագոյնս գրէ Թէոդորետոս 'ի բերանոյ բենիամենի
սարկաւագին՝ այսպէս . * Եհարց ցԹագաւորն,
" թէ որո՞ւմ պատուհասի արժանի համարիս
" զայն, որոյ թողեալ զթագաւորութ քո՝ ըն̃ այլով մտցէ
" ծ̃րութ̃ : Եւ յասել արքային՝ թէ մահու և յետին տանջանաց
" արժանի է այրն, 'ի վ̃րյ եած այրն ամենիմաստ .
" և արդ որո՞ւմ պատժոյ չիցէ արժանի, որ զարարիչն
" իւր

,, խուր և զհաստիչ լքանէ, և զմի ՚ի ծառայակցաց իւ-
,, րոց մծացուցանէ. և զպաշտօնն՝ որ Ա՟յ է անկ, նմին
,, ընծայէ ||: Արդ թէպէտև չէ՛ ինչ ըդէմ, եթէ զնման-
օրինակ բանս ասացե՟լ իցէ երկաքանչիւր վկայից, բայց
թուի տարբերութիւն յընթերցուածի օրինակաց, ուր
ոմն զնոյն բան ՚ի նոյն վկայաբանութե՟ն փոքր մի յառաջ
է գրեալ, կ՟մ ոմն փոքր մի յետոյ։

(5) ՚Ի հալածանս ժամանակիս հայր և աւելի սրբոյն Օգոս-
տինոսի ժամանակակցի, ՚ի ԺԸ՟ գիրս. յշ. քաղաքին Ա՟յ. գլ.
52. * Զի՞նչ այժմ յաշխարհին պարսից. ո՞չ ապաքէն
,, այնչափ բորբոքեցաւ հալածումն ՚ի քրիստոնեայս,
,, միայն թէ արդեօք հանդարտեա՟լ իցէ, զի և փախս-
,, տեայք ոմանք մինչև ՚ի քաղաքս քաղաքս հռովմայեց-
,, ւոց եկեալ հասին ||: Որ հայի յաւուրս յազկերտի ա-
ռաջնոյ, և որդւոյ ն՟ր վռամայ. բայց քանզի ոչ էր մշտա-
տև հալածանք, վ՟ն և յոյս ունի դադարեալ գոլոյն ՚ի
Ժ՟մկի գրութ՟ե իւրոյ։ Ընդ հակառակն պարզապէս ա-
սացուած սոկրատայ սուտ ելանէ. Է. 18. այն՝ թէ *՚ի
,, մեռանել յազկերտի արքային պարսից, որոյ զորս անդ
,, քրիստոնեայս ոչ երբէք հալածեալ էր, որդի ն՟ր վռ-
,, ռամ յաջորդեալ ՚ի թագաւորութեան, և ՚ի մոգուց
,, գրգռեալ՝ չարաչար հալածեաց զքրիստոնեայս, դժն-
,, դակ տանջանս և չարչարանս պարսկականս ՚ի վերայ
,, ածեալ ն՟ց ||: Այլ յայտ է ՚ի պատմութ՟եց և ՚ի վկայ-
աբանութ՟եց, թէ յազկերտ ևս յարոյց հալածանս, այլ
վռամ կրկին ևս բորբոքեաց. իսկ յազկերտ երկ՟րդ զան-
ցոյց զերկոքումբք. ո՟պ յայտ լիցի ՚ի վկ. ղևոնդեանց։

ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Սրբ՟ց Ղեւոնդեանց քահանայից:

Տ. յուլիս. 31: Աղբ՟ն Եղիշէ. Է. և Ը: Փարպեցի: Ճառընտիր. և այլ ժամանակագիրք հայոց: (1)

ՂԵՒՈՆԴԵԱՆՔ Ս՟Բ քահանայք՝ յա՟մ ո՟բ աստիճանաց կարգի և երիցու՟ե, է որ կաթողիկոս, է որ ե՟պկս, են որ երիցունք, և են որ սարկաւագունք, անուն ընկալան 'ի պանծալի պարագլխոյ հոգւոր զօրավարու՟ե և նահատակու՟ե իւրեանց. այն է երիցս երանելւոյն Ղեւոնդ երէց՝ մին յերիցագոյն և 'ի գլխաւոր աշակերտաց սրբոց թարգմանչաց մերոց սահակայ և մեսրոպայ: Զի թէպէտև աւագագոյն էր ը՟ կարգի 'ի ղեւոնդեանս ս՟բն յովսէփ կաթողիկոս ա՟մ հայոց՝ աշակերտակից նորին ղեւոնդեայ, և յետ նո՟ր ս՟բն սահակ ե՟պս ռշտունեաց՝ այր երեւելի 'ի մէջ հայոց և պարսից, բայց անուն ո՟բ քահանային ղեւոնդի եւս քան զեւս հռչակեցաւ բազմապատիկ արդեամբք 'ի մէջ հայոց և յունաց և պարսից, առաւելապէս 'ի հանդիսի անդ նահատակութ՟ե ս՟բց վարդանանց և ղեւոնդեանց. զի էր այր լի հոգւով սբ՟վ, առատ և լուսաւոր վարդապետութ՟բ. որով զնախարարս և զքահանայս աշխ՟ին վառէր և սպառազինէր՝ քաջութ՟բ մարտնչիլ ը՟ը թշնամիս հաւատոյ, և աներկիւղ դնել զանձինս 'ի մահ 'ի վ՟ր եկեղեցւոյ և 'ի սէր ք՟ի. վ՟ոյ և պարսիկք՝ ա՟մ անցից աշխ՟ին հայոց պատճառ դնէին զերանելին ղևոնդ, և զա՟մ ցասումն իւրեանց հնարէին 'ի վերայ նորա թափել։

Այլ որ սքանչելին է, զի բազում ամօք յառաջ քան զկատարումն սբ՟ցս՝ յաւուրս խաղաղութ՟ե հայաստան աշխ՟ի, յորժամ կային 'ի միասին մեծ վարդապետն սբ՟ն մեսրոպ, և աշակերտք նորա կորիւն և արձան, տեսին զղևոնդ երէց մտեալ 'ի քուն, և ճառագայթեալ շուրջ զնովաւ լոյս սաստիկ. որք և անդէն և անդ ծանեան երանելի արքն ս՟բ հոգւով՝ թէ հանդերձեալ է երանելին ղևոնդ կատարիլ նահատակութ՟բ. և թէպէտ և ոչ հանին նմա 'ի վեր զայն տեսիլ սքանչելի, այլ 'ի ստէպ շշնջելն պատմեալ հռչակեցաւ 'ի մէջ աշխ՟ին բան երևմանս այսորիկ. ո՟պ և յելից իրացն ճշմարտե՟լ ցուցաւ վայելչապէս. որով և եղև սբ՟ն ղևոնդ պարծանք ընկերաց իւրոց դասուց քահանայութ՟ե, զոր օրինակ սբ՟ն վարդան քաջ նահատակաց նիզակակցաց իւրոց. քանզի ս՟ք երկոքին եղեն արդարև հրեշտակք պահապանք աշխ՟ին հայոց ը՟դէմ բանակաց չարին։

Արդ յորժամ եղև մեծ պատերազմն հայոց, յորում կատարեցան ս՟բ վարդանանք, յամի ն՟ն.

ամն . 451 . առաջիկայ էին 'ի բանակի անդ և բազմութիւնք քահանայից և պաշտօնէից եկեղեցւոյ ընդ սրբոյն յովսեփայ կաթուղիկոսի և ընդ սահակայ ուշտունեաց եպիսկոպոսի . որոց հրամանաւ երանելի երեցն ղևոնդ եբաց զբերան իւր հոգխաշունչ , և աստուածաբուղխ վարդապետութեամբ իւրով խօսեցաւ բանս յորդորականս առ քաջ զօրականս , և զուարթացոյց զսիրտս ամենից առ հասարակ 'ի հանդէս նահատակութեան :

Իսկ եղև յետ վճարելոյ գործոյ պատերազմին՝ գնացեալ անկան քահանայք հանդերձ կաթուղիկոսաւ 'ի բերդ մի ամուր . զոր եկն պաշարեաց մուշկան նիւսալաւուրտ սպարապետն պարսից . և 'ի ձեռն հնարից խաբէութեան ուրացելոյն վասակայ սուտ երդմամբ իջուցեալ զամրականսն՝ կոտորեաց 'ի նոցանէ արս երկերիւր և երեքտասան . և 'ի բողոքել քահանայից 'ի դուռն արքայի՝ հրամայեաց սպարապետն արձակել զնոսա 'ի տեղի իւրեանց . այլ զյովսէփ և զղևոնդ ետ պահել 'ի բերդն աւէն ընդ ձեռամբ պարսից , մինչև յատեան ելցեն թագաւորին յազկերտի երկրորդի որդւոյ վռամայ : Յետ այսորիկ չարարուեստն յազկերտ ընդ խորհրդոյ խորամանկ հազարապետին իւրոյ միհրներսեհի առաքեաց նենգութեամբ պատգամ խաղաղութեան 'ի հայս , և հրամայեաց՝ զի եկեսցեն 'ի դուռն արքունի մեծամեծք ազգին հայոց 'ի կարգէ քահանայից և աւագ նախարարաց՝ հանդերձ վասակաւ , որպէս թէ ստուգութեամբ դատել զպատճառս խռովութե՟ տ՟նին , և հաստատել զհաշտութի՟ :

Յայնժամ ատրորմիզդ մարզպան պարսիկ տեղեկացեալ վ՟ն քահանայից՝ թէ ո՞ ոք 'ի նոցանէ առաւել դիմադարձ գտաւ պարսից և ձեռնտու վարդանանց , ետ բերել առ ինքն ընտրանաւ զս՟բն յովսէփ և զղևոնդ երէց . ը՟ որս և զոմանս յաշակերտաց ն՟ց՝ յորս երևելի էին խորէն երէց , և աբրահամ երէց . ոմ՟ և զարշէն երէց բագրևանդայ , և զքաջաջ սարկաւագ աշտունեաց , որք գտան ը՟ ն՟ս 'ի բերդըն աւէն . նոյնպ՟ս և յայլ բերդից ետ ածել զսահակ եպ՟ս աշտունեաց , և զմեծ երէցն արծրունեաց մուշէ անուն յաղբակոյ . և զերկուս ականաւոր քահանայս յարարատեան տ՟նէ 'ի գեղջէ արածոյ զսամուէլ և զաբրահամ : Արդ 'ի վ՟ր հասեալ ատրորմիզդ՝ թէ սոքա եղեն առաւել թշնամիք պարսկական դենի՝ աւերելով զկրակատունս , և հալածելով զմոգս , ետ զամենեսին կապել 'ի շղթայս , և վարել 'ի պարս ը՟ կարաւանին :

Յելանել սոցա 'ի ճանապարհ՝ հանդիպեցաւ և ուրայեալն վասակ , որ գայր 'ի սիւնեաց տ՟նէն՝ երթալ շքով 'ի պարս . զոր տեսեալ 'ի բացուստ ս՟բյն յովսեփայ՝ ասէ ցղևոնդ երէց . գիտեմ զի ուրացօղն առ մեզ ուղղեալ գայ յողջոյն անամօթ լրբութ՟բ . արդ զմտաւ ած դու , թէ զի՞նչ պարտիցէ մեզ ասել յողջունել ն՟ր զմեզ . և որպ՟ս ասեսդ՝ այնպ՟ս արասցուք : Առ որ ասէ ս՟բն ղևոնդ . զվարդապետութի՟ փրկչին մի՛ խնդրեր ուսանել 'ի մարդոյ .

դոյ · յոր քաղաք կամ գեօղ մտանիցէք ասէ , ողջոյն ասացէք · և ուր գտցի որդի ողջունի, հանգիցէ ողջոյնն ձեր 'ի վ՟ր նր՟ · ապա թէ ոչ իցէ արժանի , առ ձեզ դարձցի ողջոյնն ։ Եւ յայն բան եհաս ուրացողն , և կեղծաւորութ՟ իշխեալ յերկփարէն' ողջունեաց զսբ՟ն · և նոքա սիրով ընկալան զողջոյն նր՟' ոչինչ ընաւ կարծեցուցեալ թշնամութ՟ի ը՟ նմա · իսկ սբ՟ն ղեւոնդ' որ միշտ էր զուարթերես և անտրտում դիմօք , սկսաւ երկարս խօսել ը՟ վասակայ ախորժակ բանիւ և լրջմտութ՟ · և նր՟ լուեալ զքաղցրաբանութ՟ին և զշնորհալի ասացուածս երանելւոյն , եդ 'ի մտի' թէ սոքա չեն ինչ գիտակ իմոցս չարութե՟ց · վ՟յ և ուրախութ՟ ուղեկից լինէր ճանապարհի նց՟ ։ Ապա հրաւիրեալ զնս՟ յաւուր յայնմիկ ը՟ իւր ճաշել յօթեւանին , յառաջեաց ինքն փոքր մի քան զնոսա ։

Յայնժամ ձայնեաց սբ՟ն ղեւոնդ զկնի նորա պատուոյ անուամբ , սիւնեա՛ց տր՟ , սիւնեա՛ց տր՟ · և նր՟ խնդամիտ հայեցեալ յետս' ետ պատասխանի , տեա՛րք զի՞նչ ասէք ։ Եւ սբ՟ն իբրև յանդգնոտս ասէ · զա՟մ ինչ մեր ասացեալ ը՟ քեզ , զպիտոյսն և զառաւել օգտակարսն մոռացաք հարցանել' թէ ո՞ւր երթաս · իբրև լուաւ զայն նենգաւորն վասակ , 'ի միտ էառ' եթէ գիտակ են սբ՟քն չարութե՟ նր՟ ա՟մի , այլ խաղ առնեն զնովաւ · վ՟յ և զայրագին ետ պ՟խնի · առ արքայ երթամ դատանել 'ի նմանէ ըստ արժանի մեծ վաստակոյս զհատուցումն մեծ ։

Իսկ սր̃ն ղևոնդ ասէ ցնա․ դևն՝ որ պատրեաց զքեզ և դրդեաց նենգել սր̃ աւետարանին, նոյն տայ քեզ կարծել ստութբ̃՝ թէ մեծամեծս վաստակեցար, մինչև ոչ այլազգ կարեն պարսիկք փոխարէնս առնել քոց վաստակոց, եթէ ոչ տայցեն քեզ զթգ̃րութի̃ աշ̃խին Հայոց․ բայց՝ թէ արդարև դու կենդանութբ̃ զգլուխդ 'ի վ̃ր ուսոցդ 'ի Հայս տանիս, ապա բ̃ իս տ̃ն տ̃յ չէ՛ խոստացեալ: Զայս լուեալ Վասակայ՝ լուծաւ լքաւ յանձն իւր, գիտելով զի ոչ վրիպէր բան սր̃յն․ որ̃պ և եղև իսկ․ զի հասեալ ուրացելոյն 'ի պարսս՝ թէպէտ և զառաջինն 'ի վերին երեսս պատուեցաւ յարքայէ, այլ յետոյ անաչառ քննութբ̃ ատենի պարտաւոր գտաւ յա̃մ կողմանց:

Իսկ երանելի քահանայքն՝ որք ծանր շղթայիւք յուղի անկեալ էին յաւուրս ձմերայնոյ, բազում տառապանօք ճանապարհ արարեալ զամիսս երկուս և զաւուրս քսան՝ յետոյ ուրեմն հասին 'ի ձմերոց արքունի: Իսկ իբրև յանդիման եղեն զառաջինն յատեան միհրներսեհի հազարապետի, եհարց նա զմի մի 'ի նոցանէ, թէ զիա՞րդ իշխեցիք սպանանել զկրակն և հալածել զքուրմս․ և եղէք պատճառ մեծի պատերազմին՝ յորում անկաւ և քաջ այրն Վարդան: Իսկ 'ի հեգնել նց̃ ըզբանս հազարապետին՝ յառաջ մատեաւ սր̃ն ղևոնդ 'ի դիմաց բոլորեցուն, և ա̃ծային իմաստութբ̃ յամօթ արար զսնոտի բարբանջմունս նորին, ցուցանելով զստութի̃ հեթանոսական պաշտամանց, և զճշմարտութի̃ քր̃ական հաւատոց՝ յորոյ վր՟ եդին զանձինս երանելի զօրքն հայոց նահատակեալքն ՚ի պատերազմի ․ և վն՟ նորին ասէ ճգնիմք և մեք ․ զի մեք իսկ էաք քաջալերիչք նց՟ , և արդարև ճշմարիտ վարդապետք նոցին ։

Եւ իբրև տեսան ընկերք սբ՟յն ղեւոնդեայ գովել և հաստատել զբանս նր՟ , ցասուցեալ միհրներսեհի՝ եհարց ցնս՟ ․ տուք մեզ ասէ գիտել, թէ՝ և ձեր ամենեցուն նոյն բա՞նք են , զոր մահապարտդ այդ իշխեաց աներկիւղ համարձակուբ՟ յանդգնել և խօսել առաջի մեր ։ Յայնժամ ասեն սբ՟ն յովսէփ և սբ՟ն սահակ ․ զամ՟ բանսդ՝ զոր ըստ արժանի իւրոյ սրբութե՟ խօսեցաւ ը՟ ձեզ տր՟դ ղեւոնդ քաջալերեալ օգնականուբ՟ն այ՟ , անդստին ՚ի սկզբանէ հանապազ խորհեալ և խօսեալ է մեր ամենեցուն ․ և զոր մեքս կամէաք ասել, նա ինքն ը՟ իւր ա՟ծաշնորհ գիտութե՟ն գեղեցկապէս յօրինեալ կարգեաց առաջի ձեր ․ վն՟յ և ՚ի դոյն կամս ամենեքեան կամակիցք եմք , և խնդրեմք՝ զի արժանի լիցուք վճարիլ ՚ի դմին ։ Զնոյն և այլ ընկերք նց՟ միաբան ասէին ։

Ընդ այս դառնացեալ իշխանին՝ հրամայեաց դահճացն հարկանել զբերանս ամենեցուն շղթայիւք ․ մինչև հոսիլ յորդ արեան ը՟ բերանս և ը՟ ունդունս նց՟ ․ և ապա ետ դնել զնս՟ ՚ի բանտ մահապարտաց ։ Իսկ երանելիքն ըստ օրինակի սբ՟ առաքելոցն գնացին խնդուբ՟ յերեսաց ատենին, զի արժանի եղեն վն՟ անուանն քի՟ անարգանաց և գանից և պատասխանատուութե՟ : Սոյնպէս և զնախարարս հայոց՝ որք եկին 'ի պարսս, արգել 'ի նոյն բանտ : Ընդ եղաւ և ուրացեալն վասակ յետ պարտաւորելոյ իւրոյ յատենի արքային՝ վկայութեամբ համօրէն հայոց և պարսից . որոյ տեսեալ զանձն 'ի յետին թշուառութե՟՝ անբերելի տխրութ՟ և անյոյս մտօք դառնագինս հեծեծէր . և հայեցեալ 'ի զուարթութի՟ սրտի և դիմաց երանելի կապելոցն քահանայից և նախարարաց՝ առաւել ևս ընկղմէր 'ի դառնութի՟ . և ձաղանօք սփռեալ զթաթս ձեռաց իւրոց՝ ինքնին զիւրոյին ծեծէր զդէմն՝ ասելով . ահա ընկալ զայս ձաղս, զոր ետ բերել քեզ ուխտանենգութի՟ մէջ աւետարանին, և արիւն նահատակութե՟ մէջն վարդանայ մամիկոնէի, և այլոց ցանկալի հաղորդելոցն ընդ նմա . որոց ժառանգեալ զյաւիտենից կեանսն՝ ընկալան և յերկրի զանուն բարի և անանց յազգաց յազգս իւրեանց . իսկ դու (ասէ) մեղաւոր անձն իմ կեաս խղճիւ և ցաւօք մտաց զսակաւաթիւ զաւուրս կենցաղոյս, և պատրաստեալ պահիս մշտնջենաւոր և անանց գեհենին : Այլ որ չար ևս է, զի թէպէտ և ճանաչէր զչարիս իւր, այլ ոչ երբէք գայր 'ի ճշմարիտ զղջումն . անկաւ անդէն յախտս դժնդակս, և բովանդակ մարմինն նր՟ տորորեցաւ 'ի ցաւոց . լեզուն միայն կայր կենդանի 'ի բերան նր՟, այլ ոչ գտաւ խոստովանութի՟ 'ի շրթունս նր՟ . մինչև կորեաւ զյետին կորուստն չարաչար :

Իսկ երանելին կապեալքն քահանայք և նախարարք թէպէտև էին 'ի մեծի նեղութե՟ բանտին , այլ սիրով տանէին ա՟մի 'ի սէրն ք՟սի . և զարմացեալ կային ը՟ արդար դատաստանն ա՟յ , որ հատոյց զչարիսն վասակայ 'ի գլուխ նո՟ր : Մխիթարէին զմիմեանս և ասէին . որք մինչև ցայժմ ճգնեցաք 'ի վե՟ր ս՟բ հաւատոյ , և քաջութե՟բ պատերազմեցաք ը՟ թշնամիս եկեղեցւոյ , յայսմհետէ և առաւել ևս համբերութե՟բ ճգնեսցուք : Լուեալ է մեր 'ի ս՟բ հարցն մերոց , եթէ գլուխ ա՟մ առաքինութե՟ համբերութիւն է , և իմաստութի՟ երկնաւոր՝ կատարել ա՟ծպաշտութի՟ . և գիրք քարոզեն՝ եթէ բազում նեղութե՟բք պարտ է մեզ մտանել յարքայութի՟ն երկնից . և որչափ յաճախեն նեղութի՟ք և ընդերկարին չարչարանք , առաւել բազմանայ վարձ հատուցման : Ոչ զայս միայն աղաչեսցուք զա՟ծ , զի համբերել կարասցուք , և տ՟ր ինքնին արասցէ հնարս մերում փրկութե՟ : Լուեալ է մեր զօրինակ դատաստանին , որ ցուցաւ 'ի վե՟ր քառասուն զինուորացն ք՟սի նահատակելոց 'ի սեբաստիա . որոց երեսուն և ինունքն համբերութե՟բ պսակեցան և հասին երկնային աւետեաց . իսկ մին 'ի նոցանէ անձամբ զանձն վրիպեցոյց 'ի ս՟բ պսակէն , և այլ ոք եառ զպսակ նո՟ր : Ահաւասիկ և մեր ընկերակիցն վասակ , որ որոշեալ 'ի մէնջ՝ եղև գործակից սատանայի , մինչդեռ ոգին 'ի մարմնի է՝ ընկալաւ զառհաւատչեայ գեհենին տանջանաց . որ ոչ միայն ս՟բցն է ողբալի , լի , այլև ամ՟ գազանաբարոյ մարդկան . Զայս ասելով՝ բազում արտասուս 'ի մ՟ջ կորուսելոյն հեղուլին . և անդէն սաղմոսէին , բարի է յուսալ 'ի տ՟ր՝ քան յուսալ 'ի մարդիկ . և որ 'ի կարգին : Քաջալերէին զմիմեանս , և ասէին , զայս գիտելով եղբարք՝ մի երկիցուք յանա՟ծ ազգէն հեթանոսաց . զի թէպէտև իբրև զմեղուս խոցոտիչս պատեալ են զմեօք , այլ ըստ բանի գրոյն՝ անուամբ տ՟ն վանեսցուք զն՟ս . զի որպ՟ս մեղուք 'ի խայթել զայլս՝ վնասին և ինքեանք , սոյնպէս և որ չարչարենն զմեզ՝ անձանց առաւել վնասակարք են քան մեզ :

Նա և եղև յետ կալոյ երանելի քահանայից և նախարարաց 'ի բանտի անդ իբրև զտարի մի սքանչելի համբերութ՟բ , այն ինչ հանդերձեալ էր Թագաւորն յազկերտ խաղալ պատերազմաւ ը՟դէմ հոնաց , հրամայեաց՝ զի տարցին զկապեալսն հայոց առ հասարակ յամուր դղեակն Նիւշապուհ քաղաքի , որ յապար աշ՟ին 'ի վրկանս : Նա և յանձն արարեալ զնոսա մոգպետին մեծի , որ կարծիւր իբր 'ի ծագ հասեալ ամ՟ մոգական աղանդոց և պաշտամանց պարսից , վ՟յ և կարգեալ էր իշխան դենպետ ո՟ր պետ կրօնից յապար աշ՟ին , պատուիրեաց նմա , զի ողոքանօք և տանջանօք հնարեսցի որսալ զքահանայս , և նոքօք զնախարարս՝ դառնալ 'ի հաւատոյն ք՟սի :

Զայս պատուէր առեալ մոգպետին՝ տարաւ եդ զն՟ս 'ի դղեակ անդր . և զաւուրս

բա

բազումս բազմօրինակ տանջանօք նեղեաց զն՟ս առաւել քան զհրամանն արքունի , զի թերեւս մարթասցի խախտել զն՟ս 'ի հաւատոյ։ Այլ իբրեւ ետես , զի ն՟ք զուարթութ՟բ տանին ա՟մ չարչարանաց , և այլ զընկեր քաջալերեն 'ի տանել սիրով նեղութ՟եց , որոշեաց զքահանայսն 'ի նախարարաց և յաշակերտաց իւրեանց , և փակեաց 'ի ներքնատուն մի գէջ և խաւարչտին , հրաման տուեալ ծառայից իւրոց՝ միայն սակաւ ինչ կերակուր ոգեպահիկ տալ ն՟ց ։ Իսկ իբրեւ կացին անդ ս՟բ քահանայքն զաւուրս քառասուն , լուեալ մոգպետին՝ եթէ ն՟ք զօր ա՟մ ուրախութ՟բ օրհնեն զա՟ծ , զարմացաւ յոյժ . և 'ի կարծիս անկեալ՝ թէ գուցէ ոք 'ի սպասաւորաց ակնկալութ՟բ կաշառոց աւելի ինչ դիւրութ՟ի առնէ ն՟ց , գնաց անձամբ և կնքեաց զդուրս բանտին . և զսակաւապէտ կերակուր ն՟ց տայր տանել 'ի ձեռն հաւատարիմ արանց ։ Իսկ իբրեւ զփորձ ետ համբերութ՟ն ն՟ց այսպիսի խստութ՟բ այլ եւս աւուրս հնգետասան , և եգիտ զն՟ս նոյնպէս զուարթս և անդադարս յօրհնութ՟իս ա՟յ , զոր և զարմացմամբ մեծաւ պատմէին ծառայքն, սքանչանայր յանձն իւր ։

Ապա յարուցեալ 'ի գիշերի միում եկն անդր լուելեայն. և հայեցեալ ը՟դ լուսամուտ տանեաց բանտին՝ ետես զերանելիսն , զի 'ի քուն կային հանդարտութ՟բ՝ գետնախշտի 'ի վ՟ր մերկ հողոյ . և մարմինք իւրաքանչիւր ն՟ց սքանչելի լուսափայլութ՟բ պայծառացեալ

իբ

իբրեւ զկանթեղս պայծառս վառեալ բորբոքէին : Ահի հարաւ ը՟ տեսիլն, եւ ասէր ը՟ միտս ը՟ մոլար դենին . զի՞նչ իցեն այս մեծ սքանչելիքս . ա՟ծքն մեր ուրեմն եկեալ իջեալ են 'ի բանտս, եւ ն՟ց փառաւորութ՟ին է՝ որ այսպէս լուցեալ բորբոքի . ապա թէ ոչ՝ առանց ն՟ց անհնար է մարդոյ լոյս զայսպիսի պայծառութ՟ի լուսոյ յանձին զգենուլ . եւ կ՟մ թէ ասէ կախարդանք ինչ իցեն քրիստոնէից ազգին, զորոց լսէի բազում ինչ այսպիսի առնել արուեստիւք : Եւ մինչդեռ յայսպիսի ունայն խորհուրդս վարանէր, ետես՝ զի յարեան ս՟քն 'ի քնոյ, եւ նովին լուսափայլ տեսլեամբք սկսան կատարել զպաշտամունս ա՟յ . յորմէ ստուգեաց՝ եթէ ո՛չ առաջօք ինչ է տեսիլն, այլ՝ յանձանց ն՟ց ծագէ պայծառութ՟ի լուսոյն . վ՟յ եւ առ ահին անկաւ 'ի թմրութ՟ի, եւ մնաց իբրեւ անշշունչ 'ի վ՟ր տանեաց մինչեւ ցառաւօտ :

Ապա յարուցեալ տկարաքայլ ոտիւք դարձաւ յապարանս . եւ կոչեալ զպահապանսն՝ հրաման տայր, զի երթեալ հանցեն զերիցունսն 'ի դիձին բանտէ անտի, եւ պահեսցեն յանդորրու 'ի ցամաք վերնատան միում : Յայնժամ մի ո՟մն 'ի դահճաց անտի վաղագոյն ընթացեալ առ երանելիսն՝ պատմեաց ն՟ց իբր աւետիս ինչ մեծ տալով վ՟ն զերծանելոյ 'ի նեղուէ՟ց անտի բանտին . քանզի եւ մեք իսկ աղաչեցաք ասէ զմոգպետն, զի հանցէ զձեզ յայսպիսի անբերելի վայրէս : Իսկ ս՟քն յոլվելի հեզաբար սկսաւ ցուցանել

դահ

դահճին , թէ ինքեանք ո՛չ են ցանկացեալ անցաւոր հանգստեան , և ո՛չ իբրև առ հարկի փակեալ կան ՚ի բանտի անդ , այլ՝ կամաւոր սիրով և խնդութ՟բ վ՟ս անուանն ք՟սի . եթէ կամեցեալ էր մեր ասէ զդիւրութի՟ մարմնոյ , ՚ի ձեռս մեր էր չանկանել ՚ի ձեռս թագաւորիդ ձերոյ . այլ որ՟պս յօժար կամօք և գիտութ՟բ եկաք յայսպիսի վիշտս վտանգի , սոյնպէս կամիմք՝ զի առաւել ևս ծանրասցին նեղութիւնք ՚ի վ՟ս մեր : Քանզի ա՟ծն մեր՝ որ վ՟ս մեր մարդ եղեալ չարչարելի մարմնով՝ կամաւ յանձն էառ զամ՟ չարչարանս խաչի և մահու , նա ինքն յարութ՟բ իւրով շնորհեաց մեզ զօրութի՟ երկնաւոր՝ աներկիւղ մտօք չարչարակից լինել նմին և մահակից , որով և փառացն հաղորդակից . մինչև փոքր համարել մեզ զչարչարանս զայս առ սէր փոխարինին , զոր եցոյց տ՟ր մեր առ ազգս մարդկան : Իսկ դուք քանզի ըմբռնեալ էք յանցաւորս , զանանց բարեաց ինչ ոչ գիտէք , և կուրութ՟բ մտաց չտեսանէք և ոչ լսէք և ոչ իմանայք , եթէ մոլորեալ էք , և յանիրաւի առանց յանցանաց զծառայս ք՟սի անողորմ դատիք : Այլ մեր թագաւորն առա՛տ է և բարերար , և բա՛ց է դուռն արքայութ՟են ն՟ր . եթէ ոք կամի դառնալ յապաշխարութի՟ , դիմեսցէ համարձակ . զի նա քաղցր է որոց դառնան առնա : Զայս և առաւել քան զսոյն լուեալ առն՝ յապուշ կրթեցաւ . և երթեալ անդրէն պատմեաց մոգպետին : Իսկ մոգպետն առաւել ևս յիմարեալ ՚ի միտս իւր՝ զարմանայր 'ի վ՟ր սքանչելի համբերութ՟ե սր՟ցն և 'ի վ՟ր եղելոց իրացն . և հատեալ էր քուն յաչաց ն՟ր զբաղում գիշերս ։

Ապա յաւուր միում յերեկուն պահու միւ անգամ յարուցեալ գնաց առ ն՟ա միայնիկ մնջիկ . և հասեալ 'ի դուրս բանտին՝ հայեցաւ ը՟ ծակ մի 'ի ներքս , և ետես ը՟ առաջին տեսլեան՝ զի լուսափայլ անձամբք 'ի քուն կային խաղաղիկ ։ Զայնեաց մեղմով յանուանէ զսահակ ե՟պսն , զի նա քաջ գիտէր պարսկերէն . և ն՟ր եկեալ 'ի դուրսն՝ հարցանէր . ո՞վ ես դու ։ Ես ինքնին իսկ եմ ասէ մոգպետն . կամիմ 'ի ներքս մտանել , և տեսանել զձեզ ։ Եւ իբրև եմուտ 'ի մէջ սր՟ցն , ոչ ևս տեսանէր զնշանն . այլ պատմեաց ն՟ց զերկիցս երևումն սքանչելեացն ։ Յայնժամ ասէ ցնա ղևոնդ երէց . ա՟ծ՝ որ ասաց 'ի խաւարի անդ , եղիցի լոյս , և եղև լոյս , և լուսաւորեաց զաներևոյթ արարածս , նոյն զօրութ՟ն ծագեաց և այսօր 'ի խաւար մտաց քոց , և բացան կուրացե՟լ աչք ոգւոյդ , և տեսեր զանշիջանելի լոյս շնորհացն ն՟յ . փութա՛, մի՛ հեղգար , գուցէ դարձեալ կուրացեալ ը՟ խաւար գնայցես ։ Եւ զայս իբրև ասաց , յոտն կացին ամենեքեան ասելով . առաքեա՛ տ՟ր զլոյս քո և զճշմարտութ՟ի քո , զի ն՟ք առաջնորդեսցեն և ածցեն զմեզ 'ի լեառն ս՟ր և 'ի յարկս քո . արդարև ճշմարի՛տ տ՟ր առաջնորդեցեր և ածեր զմոլորեալս զայս յանանց ուրախութ՟ն և յանմերժելի հանգիստ . ահա նմանեալ

է

է օրս այս՝ աւուր սբ՟ չարչարանաց քոց • զի որ՟պս անդ ապրեցուցեր զմահապարտ աւազակն յերկրորդ մահուանէն, և նովաւ բացեր զաղխեալ դրունս դրախտին, նոյնպէս և այսօր գտեր զայս կորուսեալ այրս, որ էր պատճառ մահու բազմաց • և արարեր զսա պատճառ կենաց անձին իւրում և մեզ ։ Գոհանամք զքէն տր՟ ած՟ մեր, և ձայնակից լինիմք սբ՟ մարգարէին • մի՛ մեզ տր՟՝ մի՛ մեզ, այլ անուան քում տո՛ւր զփառս վն՟ ողորմուե՟ և ճշմարտութե՟ քո • մի՛ երբէք ասասցեն 'ի հեթանոսս, թէ ո՞ւր է ած՟ նց՟ • ո՞չ և այսօր իսկ յայտնի եղև զօրութ՟ի քո մեծ 'ի մէջ ապարասան խաւարազգեստ ազգիս ։

Ընդ և մոգպետն ինքնին լուսաւորեալ յոյ՟՝ սկսաւ փառաւորել զած՟ վն՟ շնորհացն, որք եղեն առ նա • զի որպ՟ 'ի խաւարէ 'ի լոյս եկեալ, կմ՟ յալէկոծ նաւէ 'ի ցամաք ապրեալ, նորոգեցաւ զուարթացաւ սիրտ նր՟ 'ի տր՟ • և աղաչէր պաղատէր առ ճշմարիտն ած՟՝ ասելով • մի՛ որոշեր զիս տէր 'ի սբ՟ գառանցդ՝ յորս խառնեցայ • զի մի՛ արտաքոյ փարախիդ քո գտեալ՝ մատնեցայց 'ի ժանիս չար գազանին • մի՛ հայիր տէր 'ի բազմամեայ ամպարշտութ՟ի իմ, և մի՛ թողուր զիս միւսանգամ 'ի նոյն մոլորութ՟ի ընկղմիլ և կորուսանել զանձն իմ և զայլս • այլ որոց եղէ պատճառ մահու, նոցին եղէց պատճառ կենաց • և սատանայ՝ որ զիս ունէր զէն չարութե՟ իւրոյ, ինև կորացեալ ամաչեսցէ 'ի մէջ իւրոց աշակերտաց ։

Եւ այնպէս կացեալ ամենեցուն յաղօթս և 'ի հոգևոր քաջալերութիս հանդերձ մոգպետին՛ մինչև յերրորդ պահ գիշերոյ, ապա 'ի քուն մտին մինչև 'ի ժամ առաւօտու աղօթիցն ։ Իսկ մոգպետն ոչ եղև 'ի քուն․ այլ յոտն կացեալ, և զձեռսն 'ի վեր ամբարձեալ կայր յաղօթս ։ Եւ մինչդեռ ը̃ երդն 'ի վեր պշուցեալ հայէր յերկինս, յանկարծակի լի եղև լուսով տունն բանտին․ և երևեցան նմա սանդուղք լուսեղէնք՝ կանգնեալ յերկրէ յերկինս, ընդ որ ելանէին 'ի վեր գունդք գունդք զօրաց չքնաղ և սքանչելի իբրև զտեսիլ հրեշտակաց․ և 'ի միտ առնոյր զթիւ՛ ն՟ց ուրոյն, գունդ մի հազար արանց, գունդ մի երեսուն և երից, և գունդ այլ՝ երկերիւր և երեքտասանից ։ Եւ այնպէս մօտ նշմարէր զն՟ս, մինչ ճանաչել նմա զերիսն 'ի նոցանէ, զմեծն վարդան և զնիզակակիցս ն՟ր զարտակ և զխորէն․ որք ունէին 'ի ձեռս իւ՟ն պսակ․ խօսէին ընդ միմեանս վ՟ն եղելոցն 'ի բանտի ս՟բց երիցանց, և ասէին․ ահա եկն եհաս ժամ, զի և ս՟ք խառնեսցին 'ի գունդս մեր․ քանզի և մեք սոցա իսկ մնայաք, և զառհաւատչեայ պատիւ՛ սոցա բերաք․ և որում ոչ ևս մնայաք, եկն և դա խառնեցաւ, և եղև իբրև զմի 'ի զինու՛որաց ք՟ի ։ Եւ իբրև երիցս երևեցաւ այս չքնաղ տեսիլ առնն երանելւոյ, զարթոյց զս՟բսն 'ի քնոյ անտի, և պատմեաց ն՟ց զա՟մ տեսիլն կարգաւ ։ Յայնժամ յարուցեալ յաղօթս կացին, և գոհացան զա՟յ վ՟ն այցելութէն, զոր արար առ մոգպետն, և վ՟ն աւետեացն՝ զոր ընկալան 'ի ձեռն նր՟ վ՟ն մերձաւոր պսակման իւրեանց. և այսպէս յերկարեալ զաղօթս՝ յորդ արտասուօք աղաչէին զա՟ծ, զի համատարուն կայցեն 'ի վիճակս Վրդանցն, և մի՛ զրկեսցին 'ի ցանկալի պսակացն՝ զոր ունէին ս՟քն 'ի ձեռս իւրեանց. քանզի յայտնապէս 'ի միտ առին ազդմամբ ս՟բ հոգւոյն, զի մերձեալ էր ժամանակ կոչման նց՟. և կարօտագին փափաքմամբ մնային կատարման իւրեանց ։ Իսկ քանզի ինքն մոգպետն իշխան էր Ապրին, և 'ի ձեռս նորա յանձնեալ էին կապեալքն, մ՟յ և համարձակութ՟բ ը՟ առաւօտն առեալ տարաւ զերիցունսն յապարանս իւր, ետ բերել անդր և զնախարարս՝ որք կային յայլում բանտի. և լուաց և սրբեաց զն՟ց յաղտեղութ՟ց բանտին. և առեալ զջուր լուացմանն ս՟ցն՝ արկանէր զիւրով մարմնովն. Ապա ուղղեալ 'ի տան իւրում աւազան՝ մկրտեցաւ 'ի ս՟բ երիցանցն. և հաղորդեցաւ 'ի կենդանի մարմին և 'ի քաւիչ արիւն տ՟ն մերոյ յ՟ի ք՟ի. և լցեալ հոգւով մեծաձայն օրհնէր զա՟ծ ։ Դնէր այնուհետև և սեղան ը՟ մարմնոյ կերակրոյ, և սփոփէր զամենեսին. և էին ամենեքեան 'ի մեծի խնդութ՟ե վ՟ն նոր սքանչելեացն եղելոց. և չյիշէին ամենևին՝ եթէ վիշտք անցեալ էր ը՟ նս՟ ։

Այլ 'ի ժամ նստելոյ 'ի սեղան՝ կարծիք իմն եղեն 'ի միտս ս՟ց երիցանց վ՟ն արշէն երիցու, որ մի էր 'ի նոցանէ. զի որովհետև 'ի մէջ շինական մարդկան կեցեալ էր , և չէր այնչափ տեղեակ գրոց , կասկածէին՝ զի մի՛ վտանգ ինչ հասցէ նմա . վա՜յ առ 'ի քաջալերել և զօրացուցանել զնա՝ պատուասիրէին և բռնադատէին ունել զառաջին տեղի 'ի մէջ բազմականին : Իսկ երանելի այրն ասէ . զի՞նչ է այդ՝ զոր դուքդ գործէք , և կամ յինէն զի՞ թաքուցանէք զծածուկս խորհրդոցդ . ես կրսերագոյն եմ յամենեսին 'ի ձէզ , և յետնագոյն ա՟մ իրօք . զիա՞րդ կարացից այդմ պատուոյ տանել : Այս իսկ մեծ էր ինձ , զի ս՟ք կապանացդ ձերոյ հաղորդեալ եմ . և արդ եթէ արժանի համարիք զիս ձերում սեղանոյ , կալայք դուք զիւրաքանչիւր տեղիս բազմականիդ , և հրամայեցէ՛ք ինձ զիմ տեղին :

Այլ ս՟ք եպ՟սն սաստիկ բռնադատեաց զնա միաբան հաւանութ՟բ ամենեցուն , և բազմեցոյց 'ի վերոյ քան զամենեսին : Իսկ իբրև բոլորեցաւ ակումբ բազմականին , և սկսան ճաշակել զուարթութեամբ սրտի , յոտն եկաց ս՟քն Յովնէփ , և մարգարէաբար աւետիս տայր ասելով . Ուրախ լերուք ամենեքեան 'ի ք՟ս , քանզի վաղիւն 'ի սմին ժամու ունիմք մոռանալ զա՟մ նեղութ՟իս և զչարչարանս , և փոխանակ սակաւ աշխատութեանս բազմապատիկ հանգիստ գտանել յերկնից արքայութե՟ , մտանելով փոխանակ խաւարային արգելանի բանտին 'ի լուսեղէն քաղաքն երկնային՝ որոյ քաղաքապետ ինքն ք՟ս է . այն՝ որ 'ի գլուխ տարաւ զկատարել յաղթութ՟ի ամենայաղթ նշանաւ ս՟բյ խաչին , և զմեզ զօրացոյց 'ի նոյն հանդէս՝ 'ի փրկութ՟ի անձանց մերոց և 'ի պարծանս մեծափառ ս՟բ եկեղեցւոյ ։ Նաև զո՛ր օրինակ տեսէք զեղբայրս զայս գլուխ բաղմականիս մերոյ , սոյնպէս նախ սա ընդունելոց է վաղի՛ն զպսակն 'ի ձեռն կատարման մերոյ ․ զի ահա մերձեալ է առ մեզ թշնամին կենաց մերոց , և պսակիչ ս՟բ չարչարանաց ծառայից ք՟ի ։

Յայնժամ լցաւ հոգւով և երանելին երէցն արշէն , և սկսաւ խօսել զուա՛րթութ՟բ բանս ուրախութ՟ե վ՟ս աւետեացն , զոր լուաւ ․ ուրով յոյժ մխիթարեցան ամենեքեան ․ զի զորմէ կարծիս ունէին , թէ գուցէ երկիցէ 'ի մահուանէ , նա կաթոգին կարօտանօք առաւել քան զամենեսին ցանկայր տեսանել զօր վաղուի՛ն , և նահատակել յառաջ քան զն՟ս ը՟ գուշակութ՟ե ս՟բյն յովսեփայ ․ 'Ի ս՟բ աղօթից ձերոց ասէ այսպէս արասցէ ինձ ք՟ս , և կատարեսցէ զելս վախճանի իմոյ յետս ըստ բանի քում ։ Ահա է՟ ասելդ քո ազդումն եղև հոգւոյս իմոյ ․ և յիշեցի ես զմարդասիրութ՟ին ք՟ի ․ և ակն ունիմ , զի որպէս գթացաւ յաւազակն , և յառաջեցոյց զնա լինել կարապետ մտելոցն յերկնային դրախտն , նոյնպէս և զիս արասցէ տէր ք՟ս սպասաւոր մեծաշուք գնդին ձերոյ ․ քանզի և ս՟բ զօրականքն՝ որք երևեցան , զուրախութ՟ե աւետիսն մեզ հասարակաց տային ։ Աղաչեմ զձեզ տեա՛րք իմ և հարք , աղօ՛թս արարէք 'ի վ՟ր անարժանութ՟ես իմոյ , զի արժանի եղէց հասանել մեծի աւետեաց՝ զոր ետուքդ ինձ անսուտ բերանովդ ձերով ։ Արդ փութամ տեսանել զվաղուին օրն, և յաւուր անդ զժամն նահատակութե̃ եկեալ հասե̃լ ՚ի վ՟ր մեր . և երբ լիցի՝ զի ելից ՚ի թանձրադանդաղ ձանձրալի մարմնոյս . Երբ լիցի՝ զի տեսից զքեզ տ՟ր ք՟ս . Երբ լիցի՝ զի աներկիւղ եղէց ՚ի մահուանէ . Երբ լիցի՝ զի տգիտու̃ս իմ հասցէ ՚ի կատարեալ գիտութի̃ն ։ Օգնեա՛ ինձ տ՟ր, օգնեա՛ ինձ, և կարկառեա՛ զամենազօր աջդ յօգնականութի̃ . զի արդեամբք կատարեսցին այս ձայնք աւետեաց . և փառաւորեսցի, ո՛վ յամենեսին՝ նոյնպէս և յիս ՚ի մեղաւորս՝ անուն ս՟բ քո ։ Յետ այսորիկ յարուցեալ ՚ի սեղանոյ՝ մատուցին զաղօթս գոհութե̃ . և անդրէն նստեալ՝ սկսան խորհուրդ ՚ի մէջ առնուլ վ՟ս մոգպետին, թէ որո՛վ հնարիւք մարթասցին ապրեցուցանել զնա . զի մի՛ ՚ի պատճառս ն՟ր՝ և բովանդակ տանն և այլոց բազմաց հասցէ նեղութի̃ մեծ յարքունուստ ։ Այլ իբրև ոչինչ կարացին ՚ի ժամուն վճարել, միաբան յանձն արարին ՚ի կամս տ՟ն ։

Այլ մինչև էր լուսացեալ աւուրն, լու եղև ՚ի քաղաքին՝ թէ եկեալ հասեալ է յերեկոյէ վեհդենշապուհ ամբարակապետ արքունի . զորոյ զպ՟տճառս անգիտանային այլք . այլ ս՟րքն իմացան հոգւով, եթէ վ՟ս նահատակութե̃ իւրեանց գայ . որպէս և էրն իսկ ։ Քանզի յազկերտ արքայ կորակոր յետս էր դարձեալ ՚ի պատերազմէն հոնաց . և դառնա

նա

նացեալ յանձն իւր՝ պատճառէր զանմիաբանութ՟ին զօրաց, և զանհոգութ՟ին մոգուց, որպ՟ թէ վ՟ն չպատուելոյ ն՟ց սուտ զոհիւք զդիսն՝ ձախողակի վճարեցաւ մարտն։ Այլ առաւել 'ի վարանս լինէր միհրներսեհ հազարապետն մեծ՝ խորհրդատուն պատերազմի, զի մ՟ի յիւր վ՟ր հեղցէ արքայ զցասումն· վ՟յ հնարս չարութ՟ե ածեալ զմտաւ՝ եդ բանս 'ի բերան մոգուցն ասել ցյազկերտ· մեք գիտեմք արքա՛յ քաջ 'ի զօրութ՟ե դենիս մերոյ, զի ոչ ոք 'ի մարդկանէ կարող է յաղթել քեզ· բայց քանզի խնայեցեր դու 'ի քրիստոնեայս, և մինչև ցարդ կենդանի պահեցեր զկապեալ քահանայս ն՟ց, որք սպանին զա՟ծս մեր, վ՟յ ա՟ծքն բարկացան, և թոյլ ետուն զօրաց քոց կոտորիլ 'ի հոնաց։

Զայսպիսի բանս անմտութ՟ե լուեալ յազկերտի՝ հաւան գտաւ սուտ հրապուրանացն· և նախ ետ կոչել փաղփաղակի առաջի իւր զերկոսին ս՟բ քահանայսն զսամուել և զաբրահամ, որք կային կապանօք 'ի կարաւանին· և ետ հատանել զաջ ձեռս ն՟ց, և դընել 'ի վ՟ր ձախոյ ձեռաց իրերաց· փոխանակ զի իշխեցին ասէ ձգել զձեռս 'ի սպանանել զկրակ· և ապա ետ տանել զն՟ս հեռագոյնս ուրեք 'ի բանակէն և գլխատել· զի մի՛ լիցի ումեք 'ի քրիստոնէից գտանել զոսկերս ն՟ց և պատուել։ Եւ եղև կատարումն երկոցունց ս՟բց յեօթներորդ աւուր հրոտից· (այն է ը՟ յայսմաւուրաց 'ի յուլիսի· 13)։ Յետ այսորիկ յղեաց յազկերտ մոգս յԱսորեստան՝ նահատակել և զսբ՟ն Թաթիկ եպս՟ն Բասենոյ, որ և էր յաշակերտաց սբ՟յն Սահակայ և Մեսրոպայ, կանխագոյն տարագրեալ անդր բանիւ՛ ուրացելոյն Վասակայ, և մատնել 'ի կապանս և 'ի տանջանս. զոր և բազում կոտտանօք չարչարեալ զաւուրս բազումս՝ քերեցին զմարմին նր՟ մինչև յոսկերս. և ապա հատին զգլուխ երանելւոյն: Իսկ վն՟ երիցանց եղելոցն 'ի Նիւշապուհ ը՟ սբ՟յն Ղևոնդեայ՝ առաքեաց զԴենշապուհ ը՟ ասացելոյս, հրաման տուեալ նմա, զի կամ հնարեսցի դարձուցանել զնս՟ 'ի մոգութի՟, և կմ՟ բարձցէ 'ի կենաց զաղտ յամենեցունց. զի մի ոք 'ի քրիստոնէից պաշտեսցէ զնոսա իբրև զսբ՟ս, և պահեսցէ զնշխարս նց՟: Եւ ահա 'ի գիշերին յայնմիկ, յորում մկրտեցաւ երանելի մոգպետն, եհաս սա ինքն Դենշապուհ 'ի Նիւշապուհ քաղաք. և առ ծածկելոյ զիրսն՝ համբաւեաց, թէ եկեալ է ազատել զքահանայս արքունի հրամանաւ. իսկ զնախարարս ասէ՝ ինքնին արքայ գայ արձակէ 'ի կապանաց: Եւ յաւել պատու՛իրել պահապանաց և վերակացու՛աց քաղաքին սպառնալեօք մահապարտութե՟՝ չթողուլ զոք 'ի Հայոց դտելոց անդ ելանել զքանի մի աւուրս 'ի քաղաքէ անտի. զի մի ինչ գիտասցեն վն՟ նահատակութե՟ սոց՟:

Բայց խնամոքն այ՟ եկեալ էր ը՟ Դենշապհոյ և այր մի խուժիկ, այն է յերկրէն և յազգէն Խուժաստանի, քրիստոնեայ հաւատով 'ի ծածուկ. որ և ծանօթ իսկ էր Հայոց, և փափաքէր 'ի ձեռս բերել զնշխարս ն՟ց յաւուր նահատակութ՟ե · այլ դենշապհոյ խաբեալ 'ի նմանէ՝ կարծէր զնա ջերմ կրակապաշտ և վրէժխնդիր ը՟դէմ քրիստոնէից · վ՟նյ և առեալ էր զնա իւր գործակից · զի տեսանէր զնա այր յաջողակ յ՟ամի ։ Արդ ք՟զի քաջ գիտէր խուժիկ զմիտս դենշապհոյ, 'ի հասանել 'ի քաղաք անդր կոչեաց լռելեայն զոմն 'ի դահճայ՝ որ բարեկամութ՟բ էր ընդ կապեալս, և ետ ազդ առնել ս՟բց երիցանց և նախարարաց զպատճառս գալստեան դենշապհոյ ։ Այն իբրև լուան ս՟բքն, լցան անպատմելի ուրախութ՟բ · զի տեսին՝ թէ եկեալ հասեալ է կատարումն գուշակութ՟ե ս՟բյն յովսեփայ յառաջինկայ աւուր անդ ։

Իսկ նախարարքն սկսան մորմոքիլ յանձինս՝ տեսանելով, զի առաջի՛ կայ ն՟ց բաժանիլ 'ի հոգևոր հարց իւրեանց, և մնալ իբրև ոչխարս առանց հովուի 'ի մէջ գայլոց · վ՟նյ և արտասուօք անկեալ առ ոտս ն՟ց՝ աղաչէին զն՟ս յանձն առնել զինքեանս հոգւոյն ս՟բյ, զի մի՛ ոք 'ի մէնջ ասեն թուլացեալ և ելեալ արտաքս 'ի հաւատոյ միաբանութենէս՝ կերակուր լիցի չարաբարոյ գազանին ։ Բայց ս՟բքն միաբան քաջալերէին զն՟ս՝ ասելով · զօրացարու՛ք եղբարք 'ի տէր, որ ոչ թողու զձեզ որբս · ունիմք հաւատս 'ի ք՟ս, զի ոչ շիջանի վառումն կանթեղաց ձերոց, և ոչ ուրախ լինի խաւարասէր թշնամին կենաց ձերոց · այլ նոյն ինքն տ՟րն՝ որ զօրացոյց զառաջին նահատակսն՝ խառնելով զնոսա 'ի գունդս հրեշտակաց իւրոց , հովանի լինի և ձեզ աջով իւրով . և հոգիք սր՟ց և դասք արդարոց հասանեն ձեզ յօգնականութ՟ի համբերութե՟ . զի ը՟ նոսին նոցունց պսակացն արժանի լինիք ։

Եւ յաւելին ևս գուշակել նոցա , թէ այցելութ՟ի այս արասցէ ձեզ տ՟ր , զի արձակե՟ զձեզ ըստ ժամանակին յերևելի կապանաց աստի՝ դարձուսցէ խաղաղութ՟ի յա՟ հայրենի . և յաներևոյթ կապանաց սատանայի արձակեալ զոգիս ձեր՝ տարեալ հասուսցէ ՚ի մասն ժառանգութե՟ ք՟նի ը՟ սր՟ս տ՟ր ։ Այլ մեք փութամք ճեպիմք ը՟ հաճոյս բարերարին վաղագոյն երթալ ՚ի բնիկ հայրենիս մեր յերկինս . և դուք մի՛ տրտմիք , այլ ուրախակի՛ց մեզ լերուք . և զո՛ր օրինակ եթէ ոք ՚ի ձէնջ յուղարկեալ լինէր ՚ի հայս , ողջոյն սիրոյ և թուղթս ողջունացոյցս յղէիք առ սիրելիս ձեր մեծաւ խնդութ՟բ , և խընդրէիք ևս ՚ի տ՟նէ զյաջողութ՟ի հասանելն ՚ի տեղին՝ յո՛ր դիմեցեալն է . սոյնպ՟ և այժմ քանզի յուղարկիմք մեք ՚ի ձէնջ առ ա՟ծ , խնդալից սրտի՛ խնդրեցէ՛ք ՚ի տ՟նէ լինել մեզ ամենեցուն արժանի երկնաթռիչ ցանկալի ուղւոյն , և տանել զձեր աղերսանս առ բազումողորմ՟ն ք՟ս , և զողջոյն ձեր և ըղյանձնարարութ՟ի առ երջանիկ գունդս առաքելոց և մարգարէից և ա՟մ սր՟ց . որոց բարեխօսութ՟ք թախանձեսցի գորովալից գութ ամենողորմ արարչին՝ լինել ձեզ մխիթարիչ և փրկիչ և այցելու յա՟մ ժամ ։

Յայնժամ ալ̃խնի ետուն և նախարարքն արտասու՛ախառն զո՛ւարթութ̃բ, և ասեն․ քա՛ւ լիցի մեզ որոշիլ վ̃ն մեկնելոյ ձեր ՚ի հովտէս որոշմուէ̃ և մտանելոյ առ ա̃ծ․ և ընդէ՞ր իսկ ծնանիցի տխրութի̃ ՚ի սիրտս մեր, որք արժանի եղաք ցանկ զհոգևոր ծնօղս մեր և զվ̃դպս ՚ի կենդանութե̃ մերում իբրև զհրեշտակս ՚ի մարմնի տեսանել, և ՚ի վախճանի իբրև զզո՛ւարթունս․ բայց որ արտասու՛եմքս ողբալով, զայն խորհիմք՝ թէ ընդէ՞ր իսկ անմահ և անախտ ստեղծեալքս յարարչէն՝ դարձեալ ՚ի հող մահու անկանին․ այլ անդրէն մխիթարիմք հաստատուն յուսով անմահութե̃․ և զօրս զայս կատարման ձերոյ կարապետ մեզ գիտեմք աւուրն տեսանելոյ զձեզ յերկնից բարութ̃իւն ։

Եւ իբրև լո՛ւան սր̃ք քահանայքն ա̃յ զայսպիսի բանս աւետալիցս յերանելի նախարարաց, մեծաւ ուրախութ̃բ սկսան ամենեքեան տարածել զձեռս ՚ի յերկինս, և ասել․ Գոհանամք զքէն ա̃ծ, որ ՚ի շնորհէ քարոզութե̃ սր̃ առաքելոցն բազում ծնար առաքեալս, և ՚ի շնորհէ սր̃ց մարտիրոսաց անթի՛ւ ծնար նահատակս, և ՚ի ձեռն առաքելաշնորհ սր̃յն գրիգորի բազում որդիս ՚ի փառս ածեր, վ̃դպս և նահատակս, միանձունս և դասս կուսանաց, առնելով զամենեսին տաճար բնակութե̃ քումդ սրբութե̃ ։ Գոհանամք զքէն փրկիչ, որ ՚ի հօտէն սր̃յն գրիգորի զօչխարսն առաւել քան զհովի՛ւս բանաւորս արարեր, և զաշակերտս ՚ի ժողովրդենէն առաւել քան զվ̄դպս յօրինեցեր գիտունս . ահա և մեք այժմ զօրացեալք քաջալերեցաք 'ի բանից շնորհալից հոգևոր որդւոցս մեր , հարք յորդւոց , վ̄դպք յաշակերտաց , քահանայք 'ի ժողովրդոց ։ Եւ արդ սոքա ուրախութ̄բ յուղարկեն զմեզ առ քեզ տ̄ր . և ինքեանք մնալով 'ի մարմնի՝ ը̄ քեզ են և առ քեզ , և քև զօրանան ։ Պահեա զսոսա ամենազօր աջովդ քո , պարսպեա՛ զսոսա ամրութ̄բ ս̄բ հոգւոյդ , մխիթարեա՛ զսոսա ուրախութ̄բ բանի քո . զխաղաղութ̄ի քո տո՛ւր սոցա , և աճեցո՛ 'ի սոսա զշնորհսն ։ Եւ այսպէս օրհնեալ ս̄բցն զկապեալ նախարարս՝ յանձն արարին զն̄ա տ̄ն . և էր առաջնորդ բանից վ̄դպուե̄ և մխիթարութե̄ երանելին ղևոնդ՝ ը̄ հրամանի ս̄բյն յովսեփայ և սահակայ ։ Ապա մեկնեցան նախարարքն ողբալով և խնդալով 'ի բանտն իւրեանց . և քահանայքն գնացին յիւրեանց տեղի բանտարկութե̄ . ուր և ինքնակամ բանտակից եղև ն̄ց երանելի մոգպետն՝ արկեալ անձամբ յինքն զկապանս շղթայից ։ Եւ եթէ այն ինչ հաւախօսն առաւօտու լսելի լինէր , և ս̄բքն միաբան ասէին , ծագեա՛ զողորմութ̄իս քո՝ որք ճանաչեն զքեզ , եկեալ հասին դահիճք դենշապհոյ՝ հանել 'ի բանտէ զկապեալ քահանայս , և տանել առ նա ։ Այլ յորժամ տեսին զմոգպետն՝ որ վերակացուն էր կապելոց , զի նստէր կապանօք 'ի մէջ ն̄ց , և լսէր ն̄ց , և քաջալերէր իսկ զն̄ա չերկնչել 'ի մահուանէ , զարմացան յոյժ ը̄ իրան .

հրոյն . և ընթացեալ պատմեցին դենշապհոյ . Եւ նա իբրև լուսաւ, զահի մեծի հարաւ . և փութացոյց զդահիճսն, զի վաղվաղակի լուծցեն զկապանս քահանայից , և բերցեն զնմ՟ ուր ինքն երթալոց էր՝ արտաքոյ քաղաքին . նոյնպէս և զմոգպետն առանձինն ածցեն առ նա : Եկին անդրէն դահիճքն 'ի բանտն՝ բերեալ ընդ իւրեանս զդարբինս 'ի քակել զշղթայս սց՟ն . և զի ստուար շղթայք էին երանելեացն , և մանաւանդ սց՟ն յովսեփայ կաթողիկոսին , բազում աշխատ եղեալ դարբնաց՝ ոչ կարացին խարտել կամ կտրել և 'ի բաց հանել զերկաթսն 'ի ձեռաց և յոտից և 'ի պարանոցաց սց՟ն . որպ՟ս և փափաք սց՟ն այն էր , զի նովին շղթայիւք հասցեն 'ի տեղի վկայութե՟ն , և նոքիմբք կատարեսցին , առաւել շուք փառաւորութե՟ն համարեալ անձանց զծանրութի՟ կապանացն որ վ՟ս տ՟ն՝ քան զա՟մ զարդ ոսկւոյ և ականց պատուականաց և մարգարտաց : Բայց քանզի առ նենգութե՟ հրաման տուեալ էր դենշապուհ լուծանել զկապանս ն՟ց , ո՟չ զի կարծեսցի 'ի քաղաքի՝ թէ յազատութի՟ գնան ն՟ք , ստիպէին դահիճք զդարբինս , զի ո՛ր և է հնարիւք արհեստիւրեանց խորտակեսցեն զշղթայսն : Եւ յայնմ վայրի զեղան 'ի տես ն՟ց բազմութի՟ք 'ի հեթանոսաց . ո՟չ և ոմանք 'ի քրիստոնէից 'ի համբոյր սց՟ն . վ՟յ փութացեալ դարբնաց՝ եդին զշղթայս իւրաքանչիւր ն՟ց 'ի վ՟ր սալիցն , և ուռամբք ջարդեալ հազիւ զերծուցին և հանին զերկաթսն՝ չարաչար կոտորելով և վի-

րաբաւորելով զմարմինս սր՟բցն . և առեալ տանէին զն՟ս արտաքոյ քաղաքին :

Եւ զի ցնծալից ուրախութ՟բ ընթանային սր՟բքն 'ի նահատակութի , կարծելով դահճաց՝ թէ ն՟ք խնդան վ՟ն յուսոյ ազատութե , և զերծանելոյ 'ի շղթայից , այպանէին զն՟ս ընդ միտս իւրեանց՝ ծաղրելով իբրև անգէտս հրամանի թագաւորին , և ասէին գաղտ ցմիմեանս . զի թէ գիտէին երիցունքս այս զմահն՝ որ պատրաստեալ է ն՟ց , ունէին արդեօք բազում պատճառս լալոյ զանձինս , և ոչ լինէին կարօղ այդպէս ծիծաղել և ուրախանալ : Եւ զայն ոչ գիտէին անմիտքն , թէ այն իսկ էր պատճառ մեծի խնդութե սր՟բցն՝ զոր ինքեանք տրտմութե աւիթ համարէին :

Եւ եղև իբրև ածին զսր՟բսն առաջի դենշապհոյ , առեալ ն՟ր նախ առանձինն զմոգպետն՝ հարցանէր ցնա 'ի ծածուկ , թէ զի՞նչ պատճառք իցեն կապանաց ն՟ր , զոր արկեալ էր զանձամբ 'ի բանտին իբրև զմի 'ի քրիստոնէից կապելոց : Ետ պ՟նի երանելին և ասէ . մի՛ խօսիր ընդ իս 'ի ծածուկ , և մի՛ լսեր զխորհուրդս լուսոյ 'ի մէջ խաւարի . զի բա՛ց են աչք իմ . քանզի տեսի զլոյսն երկնաւոր :

Եւ իբրև լուաւ 'ի նմանէ զա՟մ բան տեսլեանն և զօրինակ դարձի նորա , և զհաստատուն միտս ն՟ր մնալոյ 'ի քրիստոնէութե և 'ի միաբանութե սր՟բցն , փութացաւ ծանոյց թագաւորին՝ որ 'ի բանակի անդ էր ոչինչ հեռի 'ի տեղւոջէն : Ընդ որ զարմացեալ թագաւորին՝ յահի եղև . և արգել չվիճել ը՟ նմա

'ի

'ի վ՟ր հաւատոց, զի նա գիտակ գոլով ասէ ա՟մ բանի՝ յամօթ առնէ զմեզ. և ես զգուշացոյց, զի մի՛ ոք 'ի պարսից լուիցէ զերևել տեսիլն, և խախտեսցի 'ի դենէ իւրմէ. և մի՛ ոք իմասցի՝ թէ նա քրիստոնեայ եղև և վասն հաւատոց պատուհասի. այլ եթէ ոչ դարձցի անդրէն ողոքանօք և սպառնալեօք, դի՛ր ասէ 'ի վ՟ր ն՟ր սուտ յանցանս ը՟դէմ թագաւորութ՟ե, և աքսորեա՛ իբրև մահապարտ 'ի հեռաւոր երկիր. և անդ ընկեցեալ 'ի վիրապ մի՝ ընկալցի զմահ թշուառութ՟ե: Իսկ զքրիստոնէից երիցունսն փութանակի կարգեա՛ 'ի կենաց, զի մի՛ և զ՟ոս ողջոյն դարձուսցեն յօրէնս իւրեանց. զի թէ զճարտար մոգպետն այնպէս երագ աշակերտեցին, տգէտ մարդիկ զիա՞րդ կարասցեն կալ առաջի ն՟ց պատիր խաբէութ՟են:

Արդ եկն նստաւ դենշապուհ արտաքոյ բանակին յառաջնում վայրի. և ասէ առանձին ցմոգպետն. իշխանութ՟ի առի վ՟ս քո ո՛չ լոկ բանիւք հարցանել, այլ՝ ա՟մ հարուածովք դատել մինչ 'ի մահ. ա՛ղէ մինչև ձեռն արկեալ է իմ 'ի քեզ, ընկա՛լ զառաջին պատի՟ւ քո, և զերծի՛ր 'ի տանջանաց մահու՝ խնայելով 'ի պատուական ալիսդ. թո՛ղ անդր 'ի բաց զքրիստոնէութ՟ին՝ զոր ոչ ունէիր 'ի բնէ, և դարձի՛ր անդրէն 'ի մոգութ՟ի. ո՞վ և էիրն իսկ մոգաց պետ և մ՟ծպ բազմաց: Ետ պ՟խնի երանելին և ասէ. աղաչեմ զքեզ՝ որ յառաջ իբրև սիրելի հարազատ համարեալ էիր յաչս իմ, և այսօր թշնամի հոգւոյ գտանիս, մի՛ ը՟ն առաջին սիրոյն` գթար դու յիս . այլ կատարեա՛ 'ի վ̅ր իմ զկամս չարութե̅ թագաւորին քո , դատելով զիս` որպ̅ և առեր հրաման : Տեսեալ դենշապհոյ զանշարժելի միտս նորա և զաներկիւղութի̅ , արար ը̅ նա ը̅ հրամանի արքային . և այնպէս կատարեցաւ երանելին յօտարութե̅ յանծանօթս ուրեք վկայական հանդիսիւ́ , և արժանի եղև պսակացն` զոր ետես 'ի տեսլեան :

Յետ այսորիկ փութացե̅լ դենշապհոյ բառնալ 'ի կենաց և զքահանայս , եառ ը̅ իւր և զայլ երկուս յաւագաց պարսից , զջնիկան մարզպետ կմ̅ մայպետ , և զմովան անդերձապետ . և հրամայեաց դահճաց և սպասաւորաց` ը̅ որս խառնե̅լ էր և խուժիկն , զի տարցին զս̅բս̅ն 'ի խորագոյն ևս անապատ անմերձ 'ի մարդկանէ . և էր տեղին այնպէս առապար դժնեայ , մինչև չգտաւ և տեղի նստելոյ երեցունց իշխանացն . ապա իջեալ ն̅ց հեռագոյնս` հրամայեցին դահճաց կապել զոտս և զձեռս ս̅ր̅ց , և արկանել երկայն պարանս յոտս ն̅ց , և ը̅ քարշ ածել : Եւ դահիճքն երկու երկու լծեցան , և առին 'ի քարշ զերանելիսն . և այնպէս ձգձգեցին ը̅ ապառաժ տեղիսն , զի ամենևին խայծ ոչ մնաց 'ի մարմինս ս̅ր̅ցն . և ապա լուծին և ածին 'ի մի տեղի :

Թուէր իշխանաց , թէ սովաւ կակղեցան միտք երանելեացն , և այնուհետև դիւրին լիցի ձգել զն̅ս 'ի կամս իւրեանց . և ոչ գիտէին , թէ նովին իսկ իբրև քաջ զինուորս վառեցին և վարժեցին զնս՟. զի եթէ և սակաւ ինչ երկիւղ մարդկային կայր 'ի սիրտս նց՟ յառաջագոյն, հայեցեալ նց՟ 'ի չարաչար վէրս մարմնոց իւրեանց՝ իսպառ 'ի բաց մերժեցին զերկիւղ, և սկսան մի քան զմի յառաջել 'ի պսակատուութի՟ հանդիսի նահատակութե՟. քանզի փութային իբրև ծարաւեալք յաղբիւր, եթէ ո՛վ վաղ զիւր արիւնն հեղցէ վս՟ այ՟:

Խօսել սկսաւ ը՟ նս՟ դենշապուհ, և ասէ. արքայ յղեաց զիս առ ձեզ՝ ասել, թէ ամ՟ աւեր աշխարհին հայոց, և կոտորածք զօրաց հայոց և պարսից առ 'ի ձէնջ եղեն, և 'ի պատճառս ձեր կան նախարարք հայոց 'ի կապանս. արդ 'ի ձեռս ձեր է արձակել զնս՟, և զայլ ևս բազմութի՟ գերեաց, և առնել շինութի՟ աշխարհին. ապա թէ ոչ՝ դուք չարաչար մահու մեռանիք, և աշխարհ ձեր կորնչի. և ամ՟ արիւնքն՝ որ հեղան և որ հեղլոց են, 'ի ձէնջ խնդրին 'ի ձեռն ածոց: Ահա դուք ձեզէն տեսիք թէ զո՛րպիսի այր երևելի 'ի դենիս մերում, որ սիրելւոյն էր արքայի և ամ՟ մեծամեծաց, վս՟ խոտորելոյ 'ի կրօնս ձեր անխնայ դատեցաք՝ տարագրելով յօտարութի՟ հեռաւոր. մինչև և յերթալն իսկ մեռանի, և ոչ հասանէ 'ի տեղի պատուհասին իւրոյ. արդ եթէ 'ի բուն սիրելւոյս ոչ խնայեաց արքայ, ո՛րչափ ևս 'ի ձեզ 'ի տարաշխարհիկս, որ մահապարտ իսկ էք իբրև վնասակարք յիրս արքունի. վո՛յ չէք այլ ձեզ հնարք ապրանաց, բայց եթէ երկիր պագանիցէք արեգական ը՟ կամս թագաւորի. զի

յայն

յայնժամ ոչ միայն 'ի մահուանէ ապրիք , այլ մեծամեծ պարգեւօք յուղարկիք յտ̅ն ձեր ։

Զայս եւ առաւել ք̅ զայն խօսեցեալ դենշապհոյ՝ հրաման ետ սահակայ եպ̅սի , որ առաւել տեղեակն էր պարսկական լեզուի , պարզ իմացուցանել եւ այլոց ընկերաց իւրոց ։ Իսկ նա ասէ․ մի՛ ստիպէք զիս՝ զայդպիսի ծաղրական բանս յեղուլ 'ի լսելիս մ̅րց․ արարէք դուք զոր ինչ եւ գիտէք , եւ մի՛ յերկարէք խօսել առ մեզ բանս սնոտիս․ զոր եթէ լուիցեն՝ զասացեալսդ այպանեն , եւ ը̅ իս ցասնուն իբրեւ ը̅ ժամավաճառ եւ վայրախօս ։ Սրտմտեալ ը̅ այս դենշապհոյ համդերձ գործակցօքն՝ ասէ ցսահակ․ դու հարկաւորութ̅ե ասա ցդոսա՝ զոր ինչ եւ լուար․ թո՛ղ գիտասցուք եւ զդոցա կամս եւ զխօսս ։ Եւ սր̅ն կարճ 'ի կարճոյ եւ վեր 'ի վերոյ բանիւք պատմեաց նց̅ ծաղու եւ այպանօք․ եւ նք̅ իբրեւ լուան , առհասարակ այպն արարին մեծաձայն ծաղու ։

Յառաջ մատեաւ յայնժ̅մ երանելին ղեւոնդ երէց , եւ կացուցեալ թարգման զնա ինքն զսահակ եպ̅ս՝ ասէ ցդենշապուհ․ Զիա՞րդ լուիցուք երկդիմի հրամանացդ քոց , որ զերկրպագութիդ ետուր նախ արեգական , եւ զկատարումն երկրպագութ̅են 'ի կամս թագաւորին ձգեցեր․ եւ այնպէս մեծացուցեր զթագաւորն քան զարեգակն՝ զոր մեծարել կամէիր․ յայտ արարեալ՝ թէ արեւն չունի ինչ կամս , այլ հարկաւ արբանեկէ արարածոցս ը̅ վերին հրամանի • իսկ Թագաւորն ձեր ըստ կամի՝ զոր կամի ա̅ծացուցանէ , և զոր կամի ծառայեցուցանէ • և ինքն գլխովին անգէտ է , թէ ո՞ր իցէ ա̅ծ ճշմարիտ :

Այլ մեք քանզի գիտեմք զճշմարիտն ա̅ծ , չկարեմք փոխանակել զնա ը̅ ստութե̅ • և նորին իսկ հրամանաւ հպատակեմք արքայական իշխանութե̅ , ցորչափ չհակառակի ա̅յ իշխանութե̅ն • վա̅յ 'ի զուր եդեր զմեզ լինել պատճառ ապստամբութե̅ և աւերածոյ ե̅րի • զի այդ արտաքոյ է օրինաց մերոց • այլ դուք ձեզէն հակառակ կացէք ա̅յ և մարդկան :

Եթէ խօսիր ընդ մեզ իբրև ընդ տղայս , և մի՛ կարծեր յաղթել մեզ՝ իբր մեկուսի դնեալ զմեզ յառաքինի զօրականաց մերոց • չեմք մեք միայն՝ որպ̅ս դուդ կարծես • չի՛ք տեղի ունայն , ուր ոչ իցէ Թագաւորն մեր ք̅ս՝ զօրացուցիչ մեր և փրկիչ • միայն այնոքիկ Թափուր են 'ի նմանէ՝ որք ուրացեալ են 'ի նմանէ : Նա զիա՞րդ ակնունիցիս փոխել զմիտս մեր հաստատեալս 'ի ք̅ս • ուր և զինուորք ե̅րին մերոյ՝ որք մեօք աշակերտեալ էին 'ի ք̅ս , առ ոտն հարին զանարժան հրամանս Թագաւորին ձերոյ , և առ սէրն ք̅սի յոչինչ համարեցան զա̅մ ինչ և զկեանս իւրեանց , և զերկրպագուս արեգականդ չարաչար հարուածովք սատակեցին , և ինքեանք յառաջեցին քան զմեզ յարքայութի̅ն ա̅յ , և խառնեցան 'ի գունդս վերին հրեշտակաց յանպատում ուրախութի̅ս • 'ի նոյն բարիս վիճակեցաւ և երանելի մոգպետն , զորմէ դու ասես՝

Թէ յաքսորս յղեցի ։

Նա պխնի մովան անդերձապետն և ասէ. ող՟ծքն բարերար են, և երկայնամիտ լինին առ ձեզ, զի վայելեսջիք 'ի բարիս ն՟ց 'ի ձեռն Թագաւորին մերոյ, յորոյ 'ի բերանոյ ելանէ հրաման կենաց և մահու. և ձեզ ո՛չ էր յանդգնելի այդպէս ընդդիմանալ, այլ յանձն առնուլ զերկրպագութ՟ի արեգական և հրոյ, որովք կեայ և կերակրի աշխս. և մեք զի տեսանեմք զձեզ անդէտս, երկայնամիտ լինիմք 'ի վ՟ր տգիտութե՟դ ձերոյ. խնայեցէ՛ք յանձինս ձեր, և մի՛ խառնէք զմեզ ակամայ յարիւնս ձեր ։

Առ այս ասէ սբ՟ն Սահակ. իբրև ուսեալ և յոյժ խրատեալ խօսիս. բայց զայդ կարի տգիտաբար ուսուցանես, զի ա՟ծս բազումս խոստովանիս, և հակառակ կամս 'ի նոսա դնես. և եթէ վեհքն հակառակ են միմեանց, մեք խոնարհագոյնքս չկարեմք հպատակել ն՟ց, մ՟յ և ո՛չ մնոտի բանիցդ անսալ. միօրինակ վեհ համարիք դուք և պաշտէք զկրակ և զջուր, որք եղծիչք են իրերաց. արեգակն անկերակուր է, այլ կարօտի օդոյ 'ի ձգել զճառագայթս լուսոյ և 'ի ջեռուցանել. 'ի ձմեռան ցրտանայ և սառուցանէ զերկիր, և յամառան տօթանայ և տօչորէ զտիեզերս. իսկ հուրն միշտ անյագ ուտէ զփայտս յարքունի ծախուց, և աշխատ առնէ զծառայս. և ոչ երբէք ինքնին մնայ կենդանի, այլ հանապազ մեռանի. և զիա՞րդ հնար իցէ այսպիսեաց փոփոխելի և եղծական տա-

րեըերաց ա՟ծական անուն ընդունել , և կամ այլոց կենսատու լինել ։ Բազում և այլ բանիւք յամօթ արար զկուրուն հեթանոսաց , և յանդիման կացոյց զճշմարտութի՟ քրիստոնէութե՟ ։

Սոյնպէս և սբ՟ն յովսէփ բազմօք խօսեցաւ առ իշխանսն , եթէ 'ի զուր է ձեզ վաստակիլ առ որսալոյ զմեզ · զի այդպիսի հարցուածք և այլ անգամ եղեն առ մեզ յատենի պարսից · և միշտ 'ի սոյն միտս և 'ի կամս հաստատուն գտաք և ծանուցաք արքային ձերում · և ո՛չ կարեմք փոփոխել զբանս մեր , ոպ՟ թէ յառաջն այլազգ ինչ խորհեալ իցէ մեր · այլ այս ևեթ խորհուրդ վառեալ կայ 'ի սրտի մերում , և օր քան զօր բորբոքի , զի այսօր քան զերէկն և զեռանդն առաւել ցուցցի յանձինս մեր լաւութի՟ և գործ բարի ա՟յ հաւատոյն ք՟րի · յորում կամիմք կեալ և մեռանել ։ Մի՛ վայրապար սպառնայք մեզ զմահ , որում տենչացեալն եմք սիրով · կամ խոստանայք մեզ բարիս առնել , զոր չար գիտեմք · ապա եթէ 'ի հաւանել մեր ասէք արձակել և զնախարարս , մի՛ և մի՛ լիցի ումեք 'ի հաւատացեալ կապելոցն արձակիլ յըստ մարմնոյ ազատութի՟ մերովս ուրացութբ՟ , և 'ի յաւիտենից անլոյծ կապանսն անկանիլ · ոպ՟ և նոքին իսկ իբրև զմեզ խնդրեն այժմ յա՟յ զմեր վ՟ն ա՟յ զվախճանն , քան թէ զկեալն մեր կմ՟անձանց իւրեանց ուրացութբ՟ ։ Ապա զոր ինչ կամիք՝ արարէք վաղ , և կմ՟ երբ և կամիք ։ Զսոյն և այլ ընկերք սբ՟յն ասէին՝

մուշէ երէց , արշէն երէց , և քաջաջ սարկաւագ • որք և աղաչեցին զսահակ եպսն ասել ցիշխանսն բանիւ նց , թէ զոր ինչ ասացին սբ վկայքն մեր և հոգևոր հարքս տր յովսէփ և տէր ղևոնդ , դոյն են մեր կամք և խնդիրք • կատարեցէք վաղվաղակի՝ յոր եկեալ էք , և մի յապաղէք :

Տեսեալ դենշապհոյ զհաստատութի նոցա և զկոճարթութի , հրամայեաց յառաջ մատուցանել զկրտսերագոյնն ՚ի նա և զտկարագոյն կարծեցեալն • այն է արշէն երէց • և ետ կապել զոտս նր , և մեծաւ ուժով պնդել զձեռսն , մինչև ճարճատեալ հատան ջիլք նր : Եւ մինչդեռ կայր երանելին յանհնարին պրկոցսն , եբաց զբերան իւր և սաղմոսէր ասելով • ահա շրջեցան զինև շունք բազումք , և ժողովք չարաց պաշարեցին զիս • ծակեցին զձեռս և զոտս իմ , և փոխանակ բերանոյ իմոյ աղաղակեցին ամ ոսկերք իմ : Լուր ինձ տր , և լուր ձայնի իմում • և ընկալ զոգի իմ ՚ի ժողով սբ զօրականին քո , որ երևեցան նորակերտ դաստակերտին քո (հաստատեցեալ մոգպետի) • գոհանամ զքէն տր , զի ես որ կրսեր էի յամենեսեան՝ ողորմուժի քո գթացեալ յառաջեցոյց զիս : Եւ զայս իբրև ասաց , ոչ ևս կարէր բանալ զբերանն յանհնարին պրկոցսն գեհարանին • և անդէն վաղվաղակի հրամանաւ երեցունց նախարարացն հատին դահիճքն սրով զպարանոց երանելւոյն , և ընկեցին զմարմինն ՚ի խորխորատ մի ցամաք •

մաք . և այնպէս կատարեցաւ ս՟բն արշէն յառաջ քան զայլ ընկերս իւր՝ ը՟ գուշակութ՟ե ս՟բյն յովսեփայ յընթրիս :

Պարծեալ սկսաւ խօսել դենշապուհ ընդ սահակայ եպ՟սին, և ասէ . խնայեմ 'ի քեզ և 'ի յովսէփ . զի զերկոցունց զձէնջ բազում գովութ՟ի լուեալ է իմ 'ի ժամանակին՝ յորում շրջեցայ յաշխարհին հայոց տարի մի և վեց ամիս . և ես աչօք իմովք տեսանէի զքո լաւութ՟իս , որպ՟ և զյովսեփայն՝ թէ որպէս բարիոք քաղաքավարէր մարդասիրութ՟ե առ ամենեսեան , հայր հաստատուն համարեալ ամ՟ աշխարհին , և հաւատարիմ յիրս արքունի . արդ փոխանակ ձեր ես աղաչեմ զձեզ , խնայեցէք 'ի պատուական անձինս ձեր . և մի՛ մատնիք 'ի մահ դառն՝ որ ձեզ առաջի՛ կայ վ՟ն յամառութ՟ե ձերոյ : Գիտեմ ես , զի 'ի հրապոյրս առնդ այդորիկ ղևոնդի ըմբռնեալ էք դուք , որ 'ի մահ կրթէ զձեզ . քանզի ինքն ախտացեալ է մարմնով , և ոչ գտեալ հնարս առողջութ՟ե 'ի բժշկաց , և հիւանդոտ կենօք ձանձրացեալ՝ փափաքէ 'ի մահ քան 'ի կեանս :

Եւ այս ետ պ՟խնի ս՟բն յովսէփ . գովութիւնդ՝ զոր ետուր մեզ ը՟ կարգի պատուոյ ալեացն, արդարանայ ա՟մի՛ . և արդարև պարտ իսկ էր մեզ անարատ քաղաքավարիլ յառաջնորդական վերակացութ՟ես մերում, որպ՟ վայել է ճշմարիտ ծառայից ա՟յ . ոչ իշխանաց դիմադարձ լինել , և ոչ զժողովուրդս 'ի տրտունջ ձգել , այլ՝ օրինօք ընթանալ յա՟մի :

Այնպէս և զոր ասացեր վ̄ն հրապուրանաց առնս այսորիկ, ո՛չ ստեցեր. այլ ո՛չ եթէ ո՛չ օտար ոք հրապուրէ զմեզ, այլ քանզի յոյժ սիրէ զմեզ, յօգուտ մեր յորդորակից լինի. և որ հրապոյրք քեզ կարծին, այդ իսկ է մեր հաստատուն խորհուրդ յա̄մ ժամ, զի անքակ ունիցիմք զկենաց միաբանութիս. իսկ եթէ սա ձանձրացեալ իցէ յախտալից մարմնոյս, առաւել ևս մեք ամենեքեան. զի չի՛ք ոք ամենևին՝ որ ունիցի զմարմին առանց ցաւոց չարչարանաց:

Դենշապուհ ասէ. զայդ ո՞չ գիտէք՝ ո՛րչափ երկայնամիտ լինիմ ես 'ի վ̄ր ձեր արտաքոյ արքունի հրամանին իմոյս քաղցրութ̄ե. զի չեմ անագորոյն իբրև զձեզ, զի անձանց ատելի էք, և այլոց թշնամի. իմ զի աղ և հաց կերեալ է յտ̄ին ձերում, գութ և սէր ունիմ առ տ̄ն: Ետ պ̄խնի ս̄բն Ղևոնդ, և ասէ. որ այլոց գթայ, առաւել յանձն իւր ունի խնայել՝ կատարելով զպատուէրանս ա̄յ. զի չեմք անձանց տ̄ր, այլ ունիմք համար տալ ա̄յ վ̄ն ա̄մի: Եւ եթէ դու երկայնամիտ լինիս մեզ՝ ոչ հայելով 'ի հրամանս թագաւորին, չէ՛ ինչ. զի բարւոք առնէք չանսալ թագաւորին ձերոյ՝ որ աւերիչ տ̄ի է, և սատակիչ անմեղ մարդկան, բարեկամ սատանայի, և թշնամի ա̄յ. այլ մեք ոչ կարեմք անցանել զհրամանաւ մերոյ թագաւորին, և ոչ զանանց կեանս փոխանակել ը̄ պատրանս տ̄իս: Այլ վ̄ն իմ զի ասացեր, թէ չգտեալ առողջութ̄ի 'ի բժշկաց՝

սիրէ զմահ քան զկեանս, ոչ ուղիղ խորհեցար. զի թէ զՅ՟ի զվիճակ գիտէիր, ընդ իս ինչ ոչ զարմանայիր կա՟մ մեղադիր լինէիր. ո՞ ոք 'ի մահկանացուաց ունիցի կեանս անտրտունս. ո՛չ ահա լի են ա՟մ ախտիւք, և տառապանօք հոգւոյ և մարմնոյ. և չեն ինչ զարմանք, եթէ չկարեն բժիշկք զա՟մի ըղդեղ գտանել. վ՟ն զի մահկանացու են՝ այն որ բժշկեն, և որ բժշկին:

Այլ երանի՛ թէ և դուք այնչափ ինչ հոգտանէիք նախ հոգւոց ձերոց, և ապա այլոց, որչափ հոգան բժիշկք վ՟ն մարմնոց. զի թէ զհոգիսդ բժշկէիք յա՟մ ախտից մոլորութե՟ց Յիս, այնուհետև դիւրաւ կային ձեզ այլք մարմնով 'ի ծառայութ՟ի: Եւ զի դուք տգիտութ՟բ զանմահ հոգիսն մահկանացու արարիք՝ պարտաւոր առնելով անվախճան պատժոց գեհենին, մարմնովդ՝ եթէ՛ կամիք և եթէ ոչ կամիք՝ ախտացեալ էք յանողջանալի ցաւս. և զմեզ նախատէք այդպիսի ցաւովք մարմնոյ՝ որ ոչ է 'ի մեր ձեռս, այլ ա՟յ և վիճակեցաւ 'ի բնութե՟ս ը՟ս իւրաքանչիւր անձին: Այլ ես խնդամ և ուրախ եմ, յորժամ տեսանեմ զմարմինս չարչարեալ, գիտելով զի զօրանայ յիս առողջութ՟ի հոգւոյս. և զի ա՟մ որ տնկակից լինի մահու փրկչին մերոյ, նաև յարութե՟ նո՟ր հաղորդ լինիցի: Եւ արդ դու որ ունիս իշխանութ՟ի 'ի վ՟ր մեր, մի՛ հեղգար, այլ արագ արագ դատեա՛ զմեզ ը՟ս կամս քո. չեմք ինչ զանգիտելոց 'ի սպառնալեաց մահու, զոր ածելոց ես 'ի վ՟ր մեր:

Զարմացեալ երեցունց իշխանացն Ը իմաստուն պխ̃նիս և Ը աներկիւղ համարձակութ̃ի նց̃՝ անդրէն ստիպէին զսահակ ասել ցղեւոնդ ․ մեր լուեալ է մ̃ քո , թէ չիք ոք իբրև զքեզ տեղեակ օրինաց քրիստոնէից , և առաւել ՚ի քոյ խրատուց եղև ո̃մ անցք ծ̃ին հայոց և կորուստ բազմաց ․ արդ այդպիսի մեծ և իմաստուն մտաց պարտ է ճանաչել զբարերարութ̃ի արքայից արքայի , որ զայնչափ վնասն թողու ձեզ , և շնորհէ ըզկեանս ձեր , եթէ ծանիջիք զա̃ծս մեր ։ Արդ ոչ եղեր խրատատու չարեաց և պատճառմահու բազմաց , լե՛ր այժմ խրատատու կենաց , և թո՛ղ կեան և՛ դոքա և՛ այլ բազում անձինք ․ յորդորեա՛ զդոսա , զի պագցեն արեգականն երկիր , և կեցցեն ․ և դու այնպիսի պատիւս գտանես ՚ի թագաւորէն , մինչև անուանի լինել ՚ի քում ծ̃ին և յազգս ամենայն ։

Իսկ իբրև թարգմանեաց զայսոսիկ սբ̃ն սահակ երկայնմտութ̃բ և ծաղրելով , ասէ ցնա սբ̃ն ղեւոնդ ․ ապաքէն չէր մեզ պարտ այսչափ երկար պխ̃նւոյ արժանի առնել զսոսա ․ շա՛տ էր այնչափ ինչ ասել՝ որչափ պխ̃նի արար փրկիչն յատեանն պիղատոսի ․ բայց զի ծանուսցուք անմտութ̃ե դոցա զհաստատութ̃ի ճշմարտութ̃ե և զանյեղլի կամս մեր , ասա՛ անդրէն ցդոսա ․ Դուք ասացէք աւադիկ զոր ինչ լուեալ է ձեր մ̃ իմ, թէ օրինացն մերոց տեղեակ եմ, և բազմութ̃ե ժողովրդոց եղեալ եմ ուսուցիչ ցայսչափ ամս մինչև ՚ի լիութ՟ն ծերու՟ե. և արդ զիա՞րդ զայսպիսի ընտրողութ՟ն լաւ գիտու՟ե իմոյ՝ որում դուք իսկ վկայէք, զի ուսեալ եմ յա՟յ և ոչ ՚ի մարդոյ, այսօր յաղագս երկիւղի մահկանացու և ապուշ մարդոյ ՚ի մոռացօնս արկեալ՝ փոխանակեցեմ ընդ մոլար տգիտու՟ե, և կորնչիցիմ. քա՛ւ լիցի ինձ առնել զայդ, և լսել զիրաւացի յանդիմանութ՟ին, թէ որ ուսուցեր զբազումս, զանձն քո ոչ ուսուցեր. և մի՛ լիցի ինձ առնուլ ՚ի մահկանացու մարդոյ զսնոտի պատիւ և զփառս՝ զոր ինձ խոստանայք, և զրկել ՚ի ճշմարիտ փառաւորութ՟ենէն՝ զոր ունիմ զգենուլ յերկնաւոր և յանմահ աջոյն բարձրելոյ. զոր ոչն արժեն երկինք և երկիր և ամ՟ զարդք նց՟ ։ Ո՝ի ինչ պակաս է ՚ի մեր երանելի փառաւորութ՟ենէս, բաժակ մահուդ՝ որում իբրև զպասքեալ ծարաւիս փութամք ըմպել. ա՛ղէ արբուցէ՛ք վաղվաղակի, և թո՛յլ տուք մեզ զերծանիլ ուրախու՟ե յերերալից կենցաղոյս. և մի՛ ևս յերկարել ձգտէք զանմիտ և զխստասակար բանս բանդագուշեալ թագաւորիդ ձերոյ ։

Յայնժամ զամօթի հարեալ և դառնացեալ դենշապհոյ՝ ոչ ևս խօսեցաւ ընդ ղևոնդեայ, այլ մեկուսացոյց սակաւիկ մի զերանելին ՚ի միմեանց, և ասէ առանձինն ցս՟բն սահակ. [1]Պովու՟ին զոր ետու քեզ յառաջ, չետ քեզ իմանալ զպատիւ անձին քո. և դեռ այսպանես զբանիւք մերովք՝ մոլորեալ ՚ի բանից առն այնորիկ. և արդ ես ինձէն յիշեցուցանեմ քեզ զչարիս քո, զի անձամբ զանձն քո մահապարտ արարցես . ասա՛ ինձ , արդեօ՞ք դո՞ւ աւերեցեր զատրուշանսն յռշտունիս , և կա՞մ զկրակն դո՞ւ սպաներ , չարչարելով զմոգսն , և զսպաս պաշտամանն 'ի քեզ կորզելով : Ասէ սուրբն . այժմ ուսանել կամիս զայդ , եթէ յառաջագոյն գիտէիր : Դենշապուհ ասէ . ո՞յր է համբաւն , և ո՞յր է ճշմարտութիւն . իմ լուեալ էր՝ եթէ զամենայն վնաս յռշտունիս դու արարեր . այլ զճշմարիտն 'ի քէն կամիմ ուսանել : Ասէ եպիսկոպոսն . եթէ այդպէս լուա՛ր հաւաստեաւ , 'ի զուր էր քեզ կրկին հարցանել . իսկ այժմ ո՛չ զօգուտն կենաց կամիս լսել յինէն , կամ որ ինչ ուսանել , այլ արեան խնդիր ցանկան միտք քո : Դենշապուհ ասէ . չե՛մ գազան արիւնախանձ , այլ վրէժխնդիր եմ աստուծոյն անարգութեան : Սահակ ասէ . զտարերս համարիս աստուածս խոստովանիս , և զմարդիկ պատկերակից քո խողխողել կամիս . այլ գիտեա՛ , զի ընդունելոց ես զհատուցումն վրիժուց հանդերձ թագաւորաւն քով յանկաշառ ատենին Աստուծոյ : Արդ զոր քո չար կամքդ կամին , զայդ ես ասեմ քեզ . զկրակատունսն արդարև ես աւերեցի . և զմոգսն ես չարչարեցի գանի՛ւ , և զկահս պղծութեան որ 'ի սմանն էր , 'ի ծո՛վն ընկեցի . այլ զկրակ ո՞ կարէ սպանանել , զորոյ զբնութիւն որոց և զայլոց տարերաց անմահ հաւատացեալ արարին : Աղէ սպա՛ն դու զօդ , եթէ կարես . և կամ ապականեա՛ զհող , զի մի բուսուսցէ զդալարի . փոշոտեա՛ զգետ , զի մեռցի ջուրն . մեռանի այն՝ որ ծնանի և շարժի և գնայ, ուտէ և ըմպէ ․ Ե՞րբ տեսեր դու զկրակ գնայուն կ՟մ խօսուն կ՟մ գիտուն ․ արդ զոր կենդանի չէ քո տեսեալ, մեռեա՞լ խոստովանիս ․ վ՟յ և անթողլի է ամպարշտութիւդ ձեր քան զա՟մ հեթանոսաց, որք թերևս գիտնագոյն իցեն ք՟ զձեզ ․ զի թէպէտ և 'ի ճշմարտէն ա՟յ մոլորեալ են, և պաշտեն փոխանակ ա՟յ զմարդիկ կ՟մ զայլս 'ի կենդանեաց, այլ զանխօս տարերս ա՟ծ ոչ խոստովանին ։

Բարկացաւ դենշապուհ, և ասէ ․ ո՛չ մտանեմ ես ը՟ քեզ 'ի պայքար քննութ՟ վ՟ն բնութ՟ տարերաց ․ այլ խոստովանեա՛ ինձ, եթէ դու՞ անցուցեր զկրակն՝ եթէ ոչ ։ Յայնժամ ասէ երանելին ․ ես ինձէն իսկ մտի 'ի կրակատունն ձեր, և տեսի զպաշտօնեայս կրակին առաջի կրակարանին՝ որ բորբոքեալ այրէր լի հրով ։ Հարցի ցն՟ն նախ բանիւք, և ոչ գանիւք, եթէ զի՞նչ համարիք դուք 'ի միտս ձեր զկրակ պաշտամանս այսորիկ ։ Նոքա ասեն ․ մեք ոչինչ գիտեմք, բայց զայս ևեթ, զի սովորութ՟ի է նախնեաց, և հրաման բուռն թագաւորին ։ Ես եմ դարձեալ ցն՟ն ․ զի՞նչ իմանայք զբնութ՟ի կրակիդ ․ արարի՞չ կարծէք, եթէ արարած ։ Եւ նոքա միաբան ասեն ․ մեք արարիչ զդա ոչ գիտեմք ․ ո՟չ և ո՛չ հանգուցիչ աշխատելոց ․ ձեռք մեր փապարեալ են 'ի կացնի փայտահարութե՟, և ողունք մեր մաշեալ 'ի փայտակիրս ․ աչք մեր գինձայեալ են արտասուօք 'ի կծուէ ծխոյ դորա, և երեսք մեր մրոտեալ ։ Եթէ շատ մատուցանեմք նմա զկերակուրն, յոյժ քաղցնու. և եթէ բնաւ չտամք, բնաւ անցանէ և սպառի, և 'ի մոխիր դառնայ. մեր այդպէս հասեալ է 'ի վ՟ր բնութ՟ե դորա :

Եւ ասեմ ցն՟ա. և ո՞չ ուսուցեալ է ձեզ զայդպիսի մոլորութ՟ի, գիտիցէ՞ք արդեօք, կամ լուեա՞լ իցէ ձեր ուստեք : Նոքա ասեն. զի՞ 'ի լսելոյ հարցանես զմեզ. այլ հայեաց յաշխատանսն՝ զոր եդին 'ի վ՟ր մեր. քանզի և այս օրինադրաց մերոց է գործ, որք ոգւովք մտաց միայն են կուրացեալ. իսկ թագաւորն մեր մարմնոյ միով ակամբն կոյր է, այլ հոգւոյն բնաւ չիք իսկ աչք : Ո՜ այս իբրև լուայ ես 'ի մոգուցն, յոյժ ողորմեցայ. զի տգիտութ՟ե զարդարն խօսեցան. սակաւիկ մի չարչարեցի զն՟ս գանի՛ւ, և նոցունց իսկ ետու զկրակն 'ի ջուրն ընկենուլ. և այսպէս ասացի, ա՟ծք՝ որ զերկինս և զերկիր ոչ արարին, կորիցեն 'ի ներքոյ երկնից. և ապա զմոգսն 'ի բաց արձակեցի :

Իբրև լուաւ դենշապուհ զայս իմ անարգանս դենին 'ի բերանոյ ս՟բյն սահակայ, գոչեաց իբրև զառիւծ զայրագին, և հանեալ զսուսերն՝ յարձակեցաւ գազանաբար, և եհար զաջ ուսն եպ՟սին 'ի վերուստ մինչև 'ի գօտին, և 'ի վայր ընկէց զբազուկ ն՟ր թիկամբն հանդերձ. և ն՟ր յահեակ կողմ՟ն թաւալեալ՝ յեցաւ 'ի քար մի. դարձեալ անդրէն զօրացաւ, և առեալ 'ի վեր զաջ ձեռն զայն զհատեալ՝ մեծաձայն գոչեաց առ ա՟ծ. ընկալ տ՟ր զկամաւոր պատարագս, որ ինձէն զիս քեզ մատուցի բոլորովին ․ և խառնեա՛ զիս 'ի գունդ սր̃ զինուորացն քոց ։ Գոհանամք զքեն քո̃ գառնդ կենդանարար , որ բազում անգամ անմահական զենմամբ մատակարարեալ բաշխեցար անծախապէս 'ի ձեռաց մերոց ․ իսկ այժմ և զմեզ իսկ մարդասիրապէս հաճեցար ընդունել 'ի զենումն պատարագի և 'ի հոտ անուշից ։

Եւ ցընկերսն ասէր քաջալերելով ․ հա՛պա ա՛ռաքինիք , եհաս ժամ պսակման մերոյ ․ խցէ՛ք զաչս մարմնոյդ վայր մի , և այժմ տեսանէք զլոյսն մեր քո̃ ։ Եւ ինքն Թաւալելով ընդ արիւն անձին իւրոյ՝ սաղմոսէր ասելով ․ օրհնեցից զտ̃ր յա̃մ ժամ , հանապազ օրհնութի̃ նր̃ 'ի բերան իմ , մինչև ցայն տեղի , բազումնեղութի̃ք են արդարոց ․ յա̃մէ փրկէ զնս̃ տ̃ր , և պահէ զա̃մ ոսկերս նց̃ ։

Եւ մինչդեռ կայր յուժի մարմնոյն , հայեցեալ ետես՝ զի իջանէր յերկնից գունդ բազում հրեշտակաց , և վեց պսակ 'ի ձեռին հրեշտակապետին ․ և գայր ձայն 'ի վերուստ , որ ասէր ․ Քաջալերեցարո՛ւք սիրելի՛ք իմ , զի ահա մոռացայք զվշտալից զկեանսդ , և հասի՛ք երանելի պսակացդ՝ զոր ձերով ճըգնութե̃դ կազմեցի՛ք ․ առէ՛ք դի՛ք յիւրաքանչիւր գլուխ ձեր զնիւթ պատուական , որ 'ի ձէնջ գործեալ հիւսեցաւ ․ իսկ ճարտարուե̃ գործոյդ յամենասբ̃ ձեռացն ք̃ի կազմեցաւ ․ զոր և 'ի սպասաւորաց այտի իսկ ընկալեալ՝ ե̃ ստեփաննոսի լինիք պսակակից ։

Յայնմ վայրի հրաման ետ դահճաց դենշա֊

պուհ համդերձ ընկերօքն, զի առանց յապաղելոյ գլխատեցին զամենեսին : Յայնժամ առէ սբ̅ն ղևոնդ ցսբ̅ն յովսէփ կաթողիկոս. մատի՛ր յառաջեա՛ց դու ըզդէմ սրոյն. քանզի դու աստիճանաւ ’ի վե՛ր ես քան զամենեսեան : Ընկերկեաց և այլոց ընկերաց կալ ը̅ս կարգի իւրեանց. և խրախուսէր զամենեսին ’ի տ̅ր : Եւ ’ի մերկացուցանել դահճաց զսբ̅ն յովսէփ՝ ասաց երիցս. դա՛րձ ա՛նձն իմ ’ի հող և ’ի հանգիստ քո, զի տ̅ր բարի արար քեզ. և անդէն հատին զգլուխ նր̅ : Նոյնպէս կոտորեցին սրով և զգլուխս սբ̅յ երիցուն մուշէի, և սարկաւագին քաջաջայ, որք և ասացին ’ի ժամ կատարմանն. տ̅ր յ̅ս̅ ընկա՛լ զոգիս մեր :

Իսկ մինչդեռ կէսք ’ի դահճացն զհետ էին գլխատման սբ̅ց, այլոց հրաման ետուն իշխանքն, զի զղևոնդ մի՛ փութով սպանցեն, այլ մերկացուցեալ զնա քարշեսցեն ուժգին ը̅ս քարաժեռ տեղիս, առ ’ի զովացուցանել զտապ սրտից իւրեանց ըզդէմ նր̅. քանզի զերանելին ղևոնդ գիտէին լինել առաւելապէս խրատատու և պատճառ ամ̅ իրացն սբ̅ց վարդանանց, և արդեամբք տեսին՝ զի նոյնպէս քաջալեր և զօրացուցիչ եղև սբ̅ ընկերացն իւրոց : Իսկ դահիճքն այնպէս քարշեցին զսբ̅ն ը̅ս ժայռս և ընդ քարուտս, մինչև քանցեալ քերեցան ամ̅ մարմինք լանջացն և թիկանցն մինչև ցոսկերս. և ապա փատտակեալ ածին զնա կիսամահ ’ի նոյն տեղի, ուր այլքն կատարեցան :

Եւ

Իսկ իբրեւ պատրաստեցաւ դահճին հատանել և զգլուխ սր՟յն ղեւոնդեայ, նա առեր զուարթագին ձայնիւ. գոհանամ զքէն քս՟, որ բազում գթութ՟բ քո օգնեալ պահեցեր զիս 'ի մանկութէ իմմէ. և հասուցեր 'ի ժամս յայս՝ արժանի արարեր մասին սր՟ց. 'ի ձեռս քո փրկիչ յանձն առնեմ զհոգի իմ. և այնպէս կատարեցաւ և նա սրով: Յայս վայր կենդանի կայր տակաւին ս՟բ եպ՟ն սահակ, և տեսանէր զշողալ սուսերացն 'ի վ՟ր պարանոցի երանելեացն. և ապա զկնի ամենեցուն հատին և զգլուխ ն՟ր. որոյ մատուցեալ նուաղ ձայնիւ զվերջին աղօթս, և ասացե՟լ զամէնն՝ աւանդեաց զոգին:

Զայս օրինակ պանծալի վկայութ՟բ կատարեցան 'ի վեշտասաներորդ ամի թագաւորութ՟ն յազկերտի, 'ի իե՟ ամսոյն հրոտից (որ էր յայնժամ յուլիսի. 25. կմ՟ ը՟ս յայսմաւուրաց՝ յուլիսի. 31.) յամի տ՟ն. 454. վեցեքին ս՟բ ղեւոնդեանք ս՟բ քահանայք 'ի մեծ անապատին յապար աշխ՟ի մերձ 'ի գեօղն մոգուց ռէվան կոչեցե՟լ 'ի սահմանս նիւշապուհ քաղաքի. և անուանք ս՟ցն ը՟ս կարգի երիցանե՟նց, Յովսէփ կթ՟ղկս 'ի վայոց ձորոյ 'ի հողոցմեց գեղջէ. Սահակ եպ՟ս ռշտունեաց գաւառին՝ որ 'ի վասպուրական աշխ՟ին արծրունեաց. Ղեւոնդ երէց 'ի վանանդայ 'ի գեղջէ իջաւանից. Մուշէ դպրան երէց ներշապհոյ արծրունեաց յերկրէն աղբակոյ. Արշէն երէց 'ի բագրեւանդայ յեղեգեակ գեղջէ. Քաջաջ սարկաւագ սահակայ եպ՟ի 'ի ռշտունեաց:

’Ի թիւ սր՟ց ղեւոնդեանց համարին և ը՟ նորին տօնախմբին և այլ չորեքին ընկերք նց՟ 'ի նոյն աւուրս նահատակեալք յայլևայլ տեղիս, ը՟ որում յիշեցաք յընթացս վկայաբանութեանս․ ք՟ էն Մոգպետն 'ի Նիւշապուհ քաղաքէ, որ մկրտեցաւ 'ի ղեւոնդեանց, և կատարեցաւ յօտարութե՟․ Սամուէլ երէց յաբարատեան ձէ 'ի գեղջէն արածայ, և Աբրահամ երէց՝ սարկաւագ նր՟ 'ի նմին գեղջէ, որ 'ի կարաւանին արքունի կատարեցան 'ի փատգետ կամ 'ի փարդգէս գաւառի․ և Թաթիկ եպ՟ս՝ որ յասորեստան կատարեցաւ․ ը՟ ամ՟ ոգիք տասն․ որք միով աւուր 'ի հրամանէ յազկերտի նահատակեալ՝ ընկալան զանթառամ պսակն վկայութե՟ ։

Նաև եղև յետ կատարման սր՟յն ղեւոնդեայ և հնգեցունց ընկերաց նր՟՝ կարգեաց դենշապուհ 'ի պահպանութի՟ մարմնոց սր՟ցն զարս ինն, և վերակացու նց՟ զխուժիկն, որ ըստ ասացելոցս կարծիւր մտերիմ դենշապհոյ, զգուշանալ անդ զաւուրս տասն, մինչև անցցէ կարաւանն արքունի․ ոչ՟ զի մի լիցի ումեք 'ի քրիստոնէից գալ և առնուլ զնշխարս նց՟․ և ինքն դարձաւ 'ի քաղաքն հանդերձ գործակցօք իւրովք ։ Բայց ո՟ր ունայնացոյց զխորհուրդս չարին․ զի այն՝ որ ամ՟ օգնով զհետ էր գողանալոյ զմարմինս սր՟ց, անդէն իսկ էր, ք՟ է խուժիկն․ որ ստէպ խնդրէր 'ի տ՟նէ ցուցանել նմա հնարս հասանելոյ փափաքանաց իւրոց ։

Մինչդեռ նա յայս միտս դեգերէր յանկարծակի 'ի նմին աւուր յերեկորեայ գիշերոյն՝ շարժումն մեծ եղև 'ի տեղւոջ անդ, դղրդիւնք և ձայնք յանդնդոց, և ահագին որոտմունք և փայլատակունք 'ի վերուստ. մինչև միաձայն դղրդիլ լերանց և դաշտաց յարհաւրաց երկնի և երկրի. և առ նմին այլ նշան սքանչելի, զի մարմինք սրբոց կանգնեալ տեսան 'ի վ͞ր ոտից, և սիւն լուսոյ իջեալ յերկնից իբրև զծխածան շուրջ պարուրէր զնոքօք. յորոց տեսութ͞է պակուցեալ պահապանացն՝ թմրեալ անկան, և կիսամեռ մնացին զաւուրս երիս ը͞ տևելոյ նշանին: Ապա զինն ժամու աւուրն երրորդի սակաւիկ մի ոգի առեալ յահագին ապշութ͞ե՝ աչս ածէին փախչել 'ի տեղւոջէն. այլ 'ի յոյժ բեկմանէ սրտիցն ոչ կարէին 'ի վեր կանգնիլ. միայն յերեսս միմեանց հայէին, և ոչ կարէին խօսել: Բայց խուժիկն զօրացեալ սկսաւ կամաւ կաղ 'ի կաղս փախչել, զի և այլոց յորդոր լիցի հեռանալ 'ի տեղւոջէ անտի. որպ͞ս և եղև իսկ. զի և նոքա զհետ նորա սկսան երթալ գայլ 'ի գայլ մինչև 'ի տեղի մի. ուր յաւուրն չորրորդի երկուք 'ի պահապանաց անտի չարաչար լլկեցան 'ի դիւէ. և ընկերք նոցա տակաւին կային յառաջնում սոսափման. այլ յաւուրն վեցերորդի զգաստացեալ՝ փութացան անկանիլ 'ի քաղաքն նիւշապուհ. և պատմեցին դենշապհոյ և գործակցաց նր͞ զեղեալսն ա͞մ ահաբեկ սրտիւ: Իսկ ն͞ք լուեալ զայն՝ յահի եղեն յոյժ. այլ պատուիրեցին պահապանաց չյայտնել ումեք զիրսն , և ոչ զմահ երիցանցն . ապա ինքեանք նախարարքն երեքին խօսել սկսան 'ի մէջ իւրեանց հիացմամբ ; և ասել . Ո՛չ են իրք քրիստոնէից թեթև ինչ և դուզնաքեայ, այլ՝ հաստատ մե՛ծ է զօրութիւն օրինաց նոցա և հաւատոյ . և մեք արդեօք յանգիտութեան մնալով կորնչիմք և չզգամք . ապա թէ ո՛չ զի՞նչ գործեսցուք, զի՞նչ արասցուք վասն անքննին աղանդոյս քրիստոնէից . քանզի մինչդեռ կենդանի են , զարմանալի են կեանք իւրեանց . ընչատեացք են իբրև զանկարօտս , սրբասէրք են իբրև զանմարմինս , անաչառք են իբրև զարդարադատս , աներկիւղք են իբրև զանմահս : Իսկ եթէ զայս տեսանեմ տգիտութեամբ և յանդգնութեամբ գործեն , զխա՞րդ ապա զմարդ ցաւոտս սքանչելեօք բժշկեն 'ի կենդանութեան և 'ի մահու : Քանզի և յետ մեռանելոյ առաւել սքանչելի երևին . ո՞ր ուրուք դի կանգնեցաւ երբէք յոտին , որպէս սոցայս . և չէ՛ մարթ ասել՝ եթէ սուտ ինչ յօդեցին ընդ մի բերան հաւատարիմ սպասաւորք մեր . զի թէ նենգել կամէին , գաղտ տանէին ըզդիակունս նոցա առ քրիստոնեայս , և ընդ կշռոյ իւրաքանչիւր մարմնոյ ոսկի առնուին :

Թո՛ղ զի և արքն որք 'ի դիմէ չարչարեցան , առողջ եկին յառաջն , որպէս մեք մեզէն գիտեմք . ապա յայտ է թէ այժմ նշան մեծ երևեցաւ : Իսկ եթէ լուռ լինիմք , ոչ ծածկին այս մեծ սքանչելիք . ապա եթէ հասցէ 'ի լսելիս թագաւորին, գուցէ և օրինացս մերոց քակտումն ինչ հասանիցէ : Յայնժամ մոլեալն անդեր-

ձաւ

ճապետ քաջալերեաց զընկերս իւր , և փարատեաց զխորհուրդս ն՟ց սնոտի յուսով մոգական նպաստից . և ը՟դէմ կասկածանաց ն՟ց ասէ . այդ խնդիր մե՛ր մոգաց է , և մեք հաճեմք զմիտս թագաւորին :

Իսկ ա՟ծասէր խուժիկն իբրև ետես զվարանս իշխանաց , և իմացաւ թէ չէ՛ ինչ նոցա փոյթ այնուհետև վ՟ս մարմնոց երանելեացն , էառ վաղվաղակի ընդ իւր արս տասն 'ի քրիստոնէից , և գնաց նոքօք հանդերձ գիշերայն մօտ 'ի տեղի կատարման սր՟ցն . այլ վրիպեցաւ 'ի վայրացն : Եւ մինչդեռ ցաւէին և վարանէին յոյժ , յանկարծակի էջ 'ի բարձանց արծուի լուսափայլ , և նստաւ 'ի վ՟ր մարմնոյ սր՟յն ղևոնդեայ . յորմէ այնչափ լուսաւորեցաւ տեղին , մինչև պայծառ ք՟ 'ի լոյս տուընջեան տեսանել և զայլ մարմինս . ը՟ որ ուրախացեալ գոհացան զա՟յ : Եւ փութանակի ժողովեալ զմարմին սր՟ցն 'ի մի մի սապատ՝ տարեալ հեռացուցին յայլ տեղի ամայի . և անդ հանդարտեալ զաւուրս եօթն՝ իբրև յանհոգս եղեն , սրբեցին կազմեցին զոսկերս երանելեացն՝ որոշելով 'ի մարմնոց , յորոց բուրէր հոտ անոյշ , և զմայլեցուցանէր զամենեսին :

Ապա պատեալ զսր՟ս մարմինս 'ի մաքուր կըտաւս՝ բազում պատուով և զգուշութ՟բ թաղեցին 'ի տեղւոջն . իսկ զոսկերսն զա՟մ առեալ ը՟ իւրեանս՝ բերին 'ի նիւշապուհ քաղաք . և առ սակաւ սակաւ սկսան բաշխել հաւատացելոց յայլևայլ տեղիս . այլ զառաջինն ըն-

ՆԱՀԱՏԱԿՈՒԹԻՒՆ

Սրբ̃ց Վարդանանց զօրավարաց և զօրականաց՝ ո̃ղջ վկայից ։

Յ. օգոստ. 7 ։ Սբ̃ն Եղիշէ ։ Փարպեցի ։ Յովհաննէս.
և այլ ժամանակագիրք հայոց ։ (1)

ՊԱՐԾԱՆՔ ՏԱՆՍ հայոց , և պսակ եկեղեցւոյ հայաստանեայց հիւսեալ ՚ի կարմրափայլ վարդից ՚ոք արեան իւրոյ Վարդան քաջ նահատակն՝ էր թոռն սբ̃յն սահակայ պարթևի հայրապետին մերոյ ՚ի սահականոյշ դստերէ նորա , որդի համազասպայ մամիկոնէի՝ հանդերձ երկու եղբարբք , որոց անուանք էին հմայեակ և համազասպեան ։ Արդ՝ առ ժամանակօք բարձման թագաւորութ̃ե հայոց ՚ի տանէ արշակունեաց՝ սա ինքն մեծն վարդան առեալ պատիւ ստրատելատութ̃ե , զ̃ի զօրավարութ̃ե , ՚ի կայսերէն յունաց՝ այն է թէոդոս փոքր , և մեծարեալ բազմօք ՚ի պարսից վ̃ս մեծամեծ գործոց քաջութ̃ե իւրոյ , եղև երևելի քան զ̃ամ նախարարս հայոց արդեամբք վաստակոց իւրոց յօգուտ Ծ̃ին . քանզի արութ̃ե էր մի միայն , և առաքինութ̃ե և ա̃ծպաշտութ̃ե աննման . զգօն ՚ի խորհուրդս , զօրաւոր 'ի բանս , և յաջողակ յ̃մ 'ի գործս . մինչև առաջնորդուբ̃ նր̃ և առանց Թագաւորի առաւել քան զժամանակս Թագաւորութե̃ փայլել Ե̃ին Հայոց յ̃մ բարեկարգութի̃ս . այլ քանզի տ̃րունի Ե̃ին անկեալ էր ը̃ բռնակալուբ̃ հեթանոսաց , իսկ և իսկ հեղան զեղան աղէտք անհնարին 'ի վերայ Հայաստանեայց :

Քանզի կրակապաշտ արքայն պարսից յազկերտ որդի վռամայ մոլեալ յօրէնս իւր անօրէնս՝ եդ 'ի մտի 'ի դէն մոգութե̃ շրջել զ̃մ ազգս քրիստոնէից , որ ը̃ տ̃րուբ իւրով . և այսմ խորհրդոյ Թելադիր և զօրացուցիչ եղև մեծ հազարապետ դրանն արքունի՝ վեհմիհրներսեհ անուն , գործակցութ̃բ մոգուց և մոգպետաց : Եւ զի յազկերտ 'ի Թագաւորէն յունաց եւեթ ակնածէր , մի՛ արդեօք ձեռնտու լինիցի հաւատացելոց , նախ զնա խորհեցաւ լռեցուցանել ահարկուբ̃ . վ̃ն որոյ խաղաց պատերազմաւ 'ի սահմանս տ̃րուե̃ կայսեր . աւերեաց և կողոպտեաց զքաղաքս և զաւանս , և այրեաց զեկեղեցիս . յորմէ զահի հարեալ Թէոդոսի փոքու՝ զիջաւ իբրև խաղաղասէր հաշտութի̃ առնել 'ի ձեռն անատոլեայ զօրավարին արևելից , տալով զոր ինչ և խնդրեաց յազկերտ . մինչև տալ 'ի ձեռս նր̃ և զհաւատացեալ պարսիկս անկեալս 'ի կոստանդինուպօլիս :

Դարձ արարեալ այնուհետև յազկերտի փքացմամբ 'ի տեղի իւր՝ համարձակուբ̃ եհան հրաման ՚ի վ՟ր քրիստոնէից եղելոց ՚ի պարսս՝ դառնալ ՚ի պաշտօն կրակի․ և յոչ առնուլ նց՟ յանձն՝ չարաչար տանջանօք նահատակեաց զբազումս․ և զայլս մատնեաց ՚ի բանտս և ՚ի կապանս և ՚ի մետաղս ։

Յայն ինչ խորհէր և յայլ ազգս ձեռն արկանել, գործի չարութե՟ եգիտ զերկուս յիշխանաց հայոց ազգին՝ զվարազվաղան սիւնի և զվասակ սիւնի, որք թշնամիք էին միմեանց ։ Քանզի վասակ՝ որ նենգանօք ետ սպանանել զհօրեղբայր իւր զվաղինակ, և եղև փոխանակ նր՟ իշխան սիւնեաց, տուեալ էր զդուստր իւր ՚ի կնութի՟ վարազվաղանայ․ և զի նա ատելութ՟ վարէր ընդ կինն, ՚ի լինել գժտութե՟ ՚ի մէջ նց՟՝ խոյս տուեալ վարազվաղանայ յերեսաց աներոյ իւրոյ՝ գնաց ՚ի պարսս, և գրգռեաց զմիհրներսեհ և զյազկերտ ը՟դէմ վասակայ և բովանդակ ազգին հայոց․ և ՚ի կատարումն չար կամաց իւրոց յանձն էառ և զմոգութի՟ ։ Տեսեալ յազկերտի զայսպիսի միաբանութի՟ ՚ի տանէ հայոց՝ խորհուրդ արար ը՟ իշխանս իւր և ը՟ մոգս, թէ որպիսի օրինակաւ մարթասցի ձգել զա՟մ հայս և զայլ ևս քրիստոնեայս օտարազգիկս ՚ի կրօնս պարսից ։

Իսկ քանզի պատերազմ էր յայնժամ ընդ պարսիկս և ը՟ հոնս, խրատ ետուն միաբան մոգքն, և ասեն․ դիւրին է քեզ արքայ ՚ի գլուխ տանել զկամս քո, եթէ հնարիւք հեռացուցես զմեծամեծս քրիստոնէից հանդերձ զօրօք յիւրաքանչիւր ազգաց իւրեանց ․

արդ յղեալ հրամանս առ ամենեսին, զի գիտաւոր իշխանք ա՟մ աշխարհաց և այրուձի նո՟ց եկեսցեն ը՟ քեզ 'ի պատերազմ 'ի վ՟ր հոնաց. և իբրև մնացուսցես զնոսա անդր քան զդուռն պահակայ (որ և դուռն ալանաց և ճորայ), յետ վանելոյ զհոնս՝ արգել և փակեա՛ զքրիստոնեայս անդէն, և բռնադատեա՛ 'ի պաշտօն արեգական և հրոյ, սպառնալիս եդեալ ջնջել զա՟մ ազգ և զերկիր նոցա. և այնպէս հարկաւ հնազանդին քեզ. յայնժամ պարսիկ մոգք և վերակացուք սփռել ը՟ աշխարհս նոյն քրիստոնէից՝ դիւրաւ ձգեսցեն զամենեսին 'ի մոգութի՟ :

Հաճեալ յոյժ յազկերտի ընդ այս՝ գրեաց հրովարտակս յա՟մ երկիր իւրոյ տ՟րութե՟ 'ի չորրորդ ամի թագաւորութե՟ իւրոյ (այն է յամի ք՟ի 442.) առ հայս, առ վիրս, առ աղուանս, և առ այլ ազգս քրիստոնէից, պատուէր տուեալ ամենեցուն քաղցրաբանութ՟բ և վեր 'ի վերոյ մարդասիրութ՟բ՝ գալ հաստատել զօրօք և զօրավարօք յապար աշխարհ 'ի վրկանս, զի անդէն ձմերեալ՝ խաղասցեն ը՟ իւր 'ի վ՟ր հոնաց : Նաև առ 'ի չտալոյ հայոց զկարծիս զիւրոյ նենգութե՟՝ յղեաց առ վասակ սիւնի զպատի՛ մարզպանութե՟ փոխանակ պարսիկ մարզպանի, իբրև յանդէտս լինելով զանցիցն վարազվաղանայ. և զքաջն վարդան սպարապետ զնահապետն մամիկոնէից հաստատեաց 'ի պատի՛ ընդհանուր սպարապետութե՟ հայոց աշխարհին, և յորդորեաց զնո՟ 'ի գործ դնել անյապաղ զարքունի հրամանս .

Իսկ

Խիթալի էր Հայոց և այլոցն ամենեցուն պատուէրն և պատիւն յազկերտի ։ այլ զի չէին գիտակ յայտնապէս զաղտնեաց չարութե՟ նր՟, փութացան կամակատար լինել ը՟ առաջին կարգի ։ և այնչափ առաւել, որչափ լուան, եթէ բեկաւ և զօրու՟ն յունաց առաջի պարսից ։ Վ՟ որոյ արձակեցին Հայք և այլք ՚ի քրիստոնէից գունդս գունդս ՚ի ձեռն զօրավարաց և զօրագլխաց՝ որ յազգատաց և ՚ի նախարարաց, հանդերձ կտակարանօք՝ քահանայիւք և պաշտօնէիւք ը՟ սովորութե՟ բանակի հաւատացելոց ։

Իբրև յանդիման եղեն յազկերտի յապարաշխ՟ի, ուրախ եղև յոյժ թագաւորն, և ՚ի մերին երեսս բազում խնամս և սէր եցոյց նց՟ ։ Ապա դիմեալ նոքօք հանդերձ ՚ի վր՟ հոնաց, բազում անգամ պատերազմեցաւ և վտանգեաց զնս՟ ։ այլ յոչն կարել նուաճել զնոսա խսպառ, երկարեցաւ գործն ։ վ՟ որոյ շինեաց բերդ ամուր ՚ի դրունս ալանաց, որ կոչեցաւ պահակ հոնաց ։ և արար անդ իւր արքունիս և քաղաք բնակութե՟ մարդկան ։ և ամ՟ ը՟ ամէ բերել տայր նոր զօրս յիւրաքանչիւր աշխ՟աց՝ յետս առաքելով զառաջինսն, զի մի՛ լքանիցին զօրքն, և մի՛ ինչ կարծիք տացին չարութե՟ ։ և ինքն երբեք երբեք գնայր ՚ի տիսբոն յաթոռ թագաւորութե՟ իւրոյ, և անդրէն դառնայր ։ և այսպէս առնէր իբրև զամս եօթն մինչև ՚ի մետասաներորդ ամն թագաւորութե՟ իւրոյ ։

Եւ զայնչափ ժամանակս հանապազ երկ-

նէր

ներ թագաւորն որսալ զվօրս քրիստոնէից 'ի կամս իւր . էր զի սիրով խօսէր ը՟ նմ՟ , և էր զի անհագինս սպառնայր . ո՟չ և երբեմն ցուցանէր՝ ո՟չ թէ 'ի խնդիր իցէ ճշմարտութե՟ . քննեսցի ասէ և տեսցի , ո՞ր լաւն իցէ 'ի դենից . և զայն կալցուք . այլ անդրէն զառածանէր 'ի գովութի՟ մոգութե՟՝ մեծացուցանելով զարեգակն և զհուր իբրև զա՟ծս , և արհամարհելով զքս՟ . զի՞նչպիսի ա՟ծ իցէ ասէ՛ այն , որ խաչեալ է և մեռեալ և թաղեալ : Ի յաճախել անօրինին զայսպիսի հայհոյանս օր քան զօր , եռայր սիրտ հաւատացելոց ը՟դէմ նր՟ . այլ ոչ ոք իշխէր ասել ինչ : Իսկ մի ոմն 'ի մանկագոյն նախարարաց հայոց զարեգին անուն 'ի տանէ սրուանձտեայց՝ չհանդուրժեալ ընդ անարգանս անուանն քրի՟ , ասէ յաւուր միում ցթագաւորն . Արքայ քաջ՝ դու ուստի՞ գիտես վս՟ ա՟ծն մերոյ , եթէ տանջեցաւ , խաչեցաւ , մեռաւ և թաղեցաւ : Ասէ յազկերտ . իմ իսկ առաջի ընթերցան գիրս մոլորութե՟ ձերոյ : Յայնժամ պատանեակն լցեալ հոգւով՝ ասէ ցթագաւորն . ը՟նէ՞ր ո՛րքայ ցայդ վայր միայն ետուր ընթեռնուլ . ա՛ղէ այլ ևս յառա՛ջ մատո ընկարդացումն , և լուես անդ և զյարութի՟ն և զերևելն բազմաց , զվերացումն յերկինս , զնստիլն ը՟ աջմէ հօր , և զխոստումն միւսանգամ գալստեանն հրաշալի փառօք՝ յարուցանելով զմեռեալս , և հատուցանելով արդար դատաստանաւ իւրաքանչիւր ըստ գործս իւր :

Իբրեւ լուաւ զայս Թագաւորն, 'ի խոր խոցեալ՝ վեր 'ի վերոյ ծիծաղեցաւ. եւ ասէ. այդ մեծ խաբէութիւն է ։ Նա պնդնի քաջ զինուորն Քրիստոսի եւ ասէ. եթէ արժանահաւատ համարիս զմարմնով չարչարիլն փրկչին, առաւել եւս իրաւացի էր քեզ հաւատալ եւ զփառաւորութիւն նորա եւ զերկրորդ գալուստն ։ Յայնժամ բորբոքեալ Թագաւորին 'ի բարկութիւն՝ վճիռ մահու ետ 'ի վերայ նորա. այլ զի մի խռովութիւն լիցի 'ի քրիստոնեայս, հրաման ետ արկանել 'ի բանտ չարչարանաց կապեալ ոտիւք եւ ձեռօք. ուր եկաց երանելին զամս երկուս. եւ ապա արձակեալ ընդ այլս՝ նահատակեցաւ 'ի պատերազմի ։

Այս փորձ հանդիսի քաջազօր նահատակին լքոյց զսիրտ յազկերտի, եւ զօրացոյց զսիրտս հաւատացելոց առ հասարակ եղելոց 'ի բանակին ։ Յայնժամ տեսեալ Թագաւորին՝ թէ ոչինչ վճարէ գաղտնի հնարիւք, յայտնապէս հրաման ետ ընդ մեծ բանակն, զի ամենեքին դարձցին 'ի պաշտօն արեւու ։ Եւ իբրեւ ոչ ոք գտաւ հաւան կամաց նորա, այլ միաբան աղաղակէին՝ թէ քրիստոնեայ եմք եւ պատրաստ 'ի մեռանիլ, ոչ կարաց բռնանալ 'ի վերայ նոցա. այլ փոխեաց զբանս իւր՝ թոյլ ետ նոցա առժամն կալ 'ի կամս իւրեանց ։

Յետ այսորիկ քանզի յաղթեաց հոնաց խապառ 'ի մետասաներորդ ամի Թագաւորութեան իւրոյ, այնուհետեւ հրաման ետ բռնի ձգել զքրիստոնեայս յօրէնս պարսից. եւ որ ոչն առնու յանձն, մատնեսցի՛ ասէ ՚ի բանտ և ՚ի մահ, և ա՟մ ստացուա՛ծք նո՟ր յարքունիս լիցին ։ Բայց և ոչ այնպէս շահեցաւ ինչ · վ՟ն զի կամակար յանձն առին հայք և որ այլ ևս հաւատացեալք՝ զա՟մ նեղութի՟ և զտանջանս մահու · և ոչ թողին զք՟ն ։

Ապա յանհնարս մտեալ յազկերտի՝ առաքեաց զդենշապուհ ոմն հարկահան յա՟ն հայոց՝ նեղել զն՟ո արտաքին խստութե՟ք, զի առ զերծանելոյ ՚ի նեղութե՟ց՝ ակամայ հարկեսցին զիջանիլ ՚ի կամս թագաւորին · այլ նոքա սիրով յանձն առին զա՟մ տուգանս, և ոչ ետուն տեղի բանից կրակապաշտից ։ Յաւել թագաւորն գրել թուղթ ՚ի հայս՝ ո՟պ և յայլ տեղիս, ՚ի գովութի՟ պարսկական դենին, և ՚ի պարսաւ քրիստոնէութե՟ · զնոյն գրեաց երկար աղճատանօք և մեծ մոգպետն ՚ի դիմաց Միհրներսեհի հազարապետի ։

Զորս յառաջ բերեալ հայոց յատենի նախարարաց և եպ՟սաց՝ ծաղր արարին և անարգեցին · և գրեցին պ՟խնի առ թագաւորն և առ հազարապետն, ունայնացուցանելով զսնոտի օրէնս մոգու՟ե, և քարոզելով զանսուտ ճշմարտութի՟ ք՟նական հաւատոց · ուր և կրկին կրկին բողոք կալեալ ասեն · Ո՛չ կարեմք մեք թողուլ զարարիչն մեր՝ զա՟ծն ա՟ծոց, զթագաւորն թագաւորաց և զտ՟րն տ՟րանց, և պաշտել զարարածս և զանբան տարերս · ոչ ոք կարէ խախտել զմեզ ՚ի ճշմարիտ հաւատոյս մերմէ՝ որ ՚ի հայր և յորդի և ՚ի սբ՟ հոգին, ո՛չ դևք և ո՛չ մարդիկ, ոչ տանջանք եւ ոչ մահ. ա̅մ ինչք մեր եւ մարմինք մեր 'ի ձեռս ձեր. 'ի ձէնջ տանջանք, եւ 'ի մէնջ յանձնառութիւնք. սուր քո, եւ պարանոց մեր. այսուհետեւ մի՛ բանիւք զմեզ հարցանէ՛ք, այլ արարէ՛ք զի՛նչ եւ կամիք. զի ոչ եթէ ը̅ մարդոյ է ուխտ հաւատոց մերոց, յորմէ պատրեցիմք իբրեւ զտղայս, այլ՝ ը̅ ա̅յ կենդանւոյ. յորմէ չէ՛ հնար մեզ քակել եւ 'ի բաց ելանել երբէք:

Եւ եղեւ իբրեւ եհաս պ̅տնին Հայոց առ Թագաւորն կնքով նախարարաց եւ եպ̅սաց, եւ ընթերցեալ եղեւ յատենի, զամօթի հարան յոյժ մոգպետն եւ հազարապետն, եւ ինքն թագաւորն ափիբերան եղեւ. քանզի եւ բազումք 'ի լսողաց սկսան չչնջել ը̅ միմեանս, եւ գովել զհաստատութ̅ի Հայոց 'ի հաւատս իւրեանց. եւ առհասարակ զարմացեալ կային ը̅ համարձակ պ̅տնիս ն̅ց: Յայնժամ անօրէն մոգպետն գրգռեաց զթագաւորն, զի սաստիկ հրամանաւ կոչեսցէ զնախարարս աշ̅խին Հայոց եւ վրաց եւ աղուանից 'ի դուռն արքունի յաշ̅խին պարսից, եւ բռնութ̅ տացէ ն̅ց երկիրպագանել արեւու. զի ոչ կարէ ասէ ընդդէմ կալ բուռն հրամանաց ա̅ծանման տ̅ն մերոյ արքայից արքայի: Զայդ կամէր լսել եւ յազկերտ. վ̅ս որոյ վաղվաղակի գրեաց հրովարտակ առ գլխաւոր նախարարս Հայոց, զորս ինքնին ճանաչէր յականէ յանուանէ, պատուիրելով ն̅ց ծանր ծանր սպառնալեօք անյապաղ գալ 'ի դուռն:

Ընկալեալ նախարարացն զայսպիսի հրաման՝

յայսյայտնի իմացան զչարութ՟ն նր՟ · բայց քանզի չէր ինչ յազկերտի յայտնեալ 'ի բանս իւր՝ թէ առ ի՞նչ կոչէ զնոսա , ապստամբութ՟ն համարեցան չերթալ 'ի կոչ արքայի · և քաջ իսկ գիտէին , զի 'ի չերթալն իւրեանց՝ 'ի սուր սուսերի մաշէ բռնաւորն զա՟մ քրիստոնեայս որ 'ի պարսս և որ 'ի բանակի · վ՟յ լաւ վարկան երթալ , և զելս գործոյն յա՟ծ ապաստան առնել ։ Ուխտ եդին միաբան ը՟ առաջարկութե՟ սբ՟յն յովսեփայ կաթուղիկոսի նախարարք երեցունց աշխ՟աց հայոց և աղուանից և վրաց՝ անսասան մնալ 'ի հաւատս · և ապա յուղի անկեալ գնացին յաշխ՟ն պարսից ։ Ա՟ս էին երևելիքն յաւագ նախարարաց այսոքիկ · վասակ սիւնի մարզպան հայոց · ներշապուհ արծրունի ամբոսեան · արտակ ռշտունի · գադիշոյ խորխոռունի · վարդան մամիկոնեան սպարապետ · արտակ մոկացի · մանեճ ապահունի · վահան ամատունի · գունտ վահևունի , և շմաւոն անձաւացի ։ Ընդ որս և արքայն վրաց վազգէն փեսայ վարդանայ · բդեշխն գուգարացւոց աշուշայ · և արքայն աղուանից վաչէ արսվաղէնեան , հանդերձ այլ ևս իշխանօք · թող և զօրս կային 'ի դրան · յորոց մի էր և կամսարականն արշաւիր արշարունի՝ միւս փեսայ վարդանայ ։

Ա՟ս իբրև յանդիման եղեն ատենի թագաւորին այս ա՟մ արք մեծամեծք , որ օր էր յառաջընթաց սբ՟յ զատկի , այն է աւագ շաբաթ՝ յամի տ՟ն · 450 · սկսաւ յազկերտ մենչելով և որոտալով խօսել ը̄ նա̄ անարգանօք ․ և ասէ ցնախարարս Հայոց ․ զի՞նչ համարիք դուք զիս, և զանձինս ձեր, արարէք պխ̄նի ։ Եւ նոքա ասեն ․ չե՞ն ինչ պէտք պխ̄նւոյ առ այդ ․ զի ինքնին իսկ յայտ է ա̄մ արեաց և անարեաց ․ մեք զձեզ թագաւոր գիտեմք ամենեցուն՝ առաւել ևս մեր, տիրաբար ունող իշխանութ̄ի սպանանելոյ և կեցուցանելոյ ։

Յայնժամ ասէ թագաւորն ․ այդ պխ̄նի շատ հեռի է ՚ի նամակէն՝ զոր յառաջն դրեցիք ․ զի անդ ցուցեալ էր ձեր, թէ է ինչ՝ յորում պարտական եմք հնազանդիլ քեզ ․ և է ինչ՝ զոր ոչ քեզ պարտ է ասել, և ոչ մեզ առնել ։ Եւ արդ նախկին և կարևոր հրաման թագաւորութ̄ե մերոյ այս է, զի ընկալջիք զմեր օրէնս ․ որով ճանաչի տ̄րուի մեր ՚ի վ̄ր ձեր, և ծառայուի̄ ձեր առ մեզ ։ Եւ եթէ զայդ կամս մեր՝ զոր վ̄ն ձեր հոգւոյ փրկուե̄ հոգացաք, յանձն առնուցուք, մեծամեծ փառօք արձակիք ՚ի մէնջ ․ ապա թէ ոչ՝ կանամբք և որդւովք և բովանդակ ազգաւ սատակեցից զձեզ, և ջնջեցից զյիշատակս ձեր յերկրէ ։

Յառաջ մատեաւ քաջն Վարդան, խօսել բակաւ զուարթ դիմօք և համեստ բանիւք, և ասէ ․ բազումք են աստ քան զիս աւագագոյնք գահու և աւուրբք, և են որ կրտսերագոյնք են ․ և ամենեցուն մեր հաւատարիմ ծառայութ̄ի առ ձեզ և վաստակ բազմապատիկ յայտնի է առաջի տ̄րուե̄ ձերոյ, մինչև աւելորդ է երկրորդել, և պատրաստ ևս եմք դարձեալ ծառայել ձեզ ը՟ս առաջնոյ կարգի. և թէ մարթ ինչ իցէ՝ և ևս աւելի. զի թէ գոյր հնար, զմի անձն իմ բազմացուցանէի, և ը՟մ անձամբք և բովանդակ ուժով առաւել քան զամենեսին վաստակէի իբրև մտերիմ ծառայ տ՟ն ։ Բայց քանդ՝ զոր այժմ հրամայէք, չէ ծառայութի՟ն, այլ՝ ապստամբութի՟ն յա՟յ կենդանւոյ, և յետին թըշուառութի՟ն. զոր չէ մարթ ինձ յանձն առնուլ. և ոչ իսկ ձեզ օրէն է բռնի պահանջել ։ Եթէ զծառայութի՟ս իմ խնդրէք, աւասիկ եմ. ապա եթէ զհաւատս իմ խախտել կամիք, այդ անհնարին է. զի զպարգևն՝ զոր ընկալայ յա՟յ անդստին ՚ի մանկութե՟, չկարեմ թողուլ, և կա՟մ ուրանալ զտ՟րն իմ վ՟ս մարդկան երկիւղի. զի թէ՝ և ՚ի մարդոյ առե՟լ էր իմ զայն, և գիտելով զճշմարիտն լինել՝ ուրանայի, ողորմելի զանձն իմ համարէի. քանի ևս զոր յա՟յ ընկալայ, և ՚ի բերանոյ ն՟ր ուսայ, անհնար է վաճառել վասն սնոտի փառաց. քա՛ւ լիցի ինձ առնել զայդ. իմ պի՟նի այդ է. յորում ցանկամ մեռանիլ, քան թէ ուրանալ և կեալ առանց ա՟յ ։

Յայնժամ զօրացեալ և այլոց նախարարաց՝ յայտ արարին արքայի պարզաբար, քանի վաստակեալ է իւրաքանչիւր ն՟ց ՚ի ծառայութե՟ ն՟ր առաւել քան յաւուրս այլոց թագաւորաց. և ը՟էր ասեն յուզեալ իցէ այժմ ցասումն քո ՚ի վ՟ր մեր. զի՞նչ վնաս արար քեզ օրէնք քրիստոնէութե՟ մերոյ. ո՞չ ապաքէն ՚ի հրամանէ օրինաց մերոց հնազանդել կամք քեզ 'ի ծառայութի՟ն՝ հարկօք և վտանգօք կենաց մերոց 'ի պատերազմի ։ Իսկ թագաւորն զերեսս 'ի բաց դարձուցել՝ ասէ ․ զ՟նսա համարիմ ը՟ունել 'ի գանձս իմ զհարկս ժողովելոյ 'ի քրիստոնէից , և անօգուտ են ինձ ծառայութիւնք ձեր՝ որ գործին առանց ա՟ծոց մերոց ․ վ՟ն զի տգիտութ՟ե մոլորեալ անարգէք զպաշտամունս մեր , զկրակ սպանանէք՝ ոչ պահելով միշտ անշէջ , և զհող ապականէք՝ թաղելով զմեռեալս ։ Իսկ արդ եթէ կամիք ապրել և կալ 'ի ձերում պատուի , վաղիւ 'ի ծագել սքանչելւոյն արևու՝ վաղվաղակի երկի՛ր պագէք նմա ․ ապա թէ ոչ՝ զ՟մ տանջանս ածից 'ի վ՟ր ձեր , մինչև ակամայ կամօք կատարեսջիք զհրամանս իմ ․ Զայս լուեալ նախարարաց՝ միաբան աղաղակեցին յատենին ․ մի՛ ևս ասեր մեզ զայդ բան ա՛րքայ ․ զի ոչինչ բան կարէ խախտել զհաւատս եկեղեցւոյ , որ ո՛չ է շինուած մարդկան , կ՟մ տուրք արեգական , այլ՝ սիւն հաստատութ՟ե հիմնեալ զօրուբ՟ն ա՟յ 'ի վ՟ր անշարժ վիմի ․ զոր ո՛չ երկիր և ո՛չ երկինք կարեն դրդուեցուցանել , թո՛ղ թէ մարդ մահկանացու՝ որ խոռոխտայ յաղթել նմա ։ Հա՛պա զի՛նչ և կամիս՝ արա՛ , պատրա՛ստ եմք յա՟մ նեղութ՟իս և 'ի մահ գլխովին ։

Լի եղև դառնութ՟ե յազկերտ , և ահագինս սպառնացաւ ն՟ց՝ երդուեալ յարեգակն երիցս և չորիցս ․ եթէ արդարև ոչ զիջանիք ասէ 'ի կամս իմ , զամենեսին զձեզ հանդերձ այլ ևս քրիստոնէիւք որ 'ի բանակին՝ կապանօք տամ տանել իբրև անարգ գերիս մինչև 'ի սագաստան ընդ առապարս. ուր կէսք զճանապարհայն կորիցեն, և կէսք յանել բանտս մատնեսցին : Եւ յաշխարհս ձեր առաքեմ զօրս փղօք բազմօք, ոտնակոխ առնել և սատակել զա̃մ դիմակացս. զա̃մ ընտանիս ձեր և զորդիս 'ի խուժաստան տամ խաղացուցանել. քանդեմ զեկեղեցիս ձեր և զվկայարանս, և զա̃մ աշխարհն յաւեր դարձուցանեմ. և զմնացեալսն ակամայ կամօք ձգեմ յօրէնս մեր :

Զայս ասաց, և անդէն հրամայեաց հանել զնո̃ մեծաւ անարգութ̃ յատենէ անտի, պատուէր տուեալ դահճապետին, զի զա̃մ նախարարս հանդերձ այլովքն որ յառաջնմէ իսկ անդ էին, պահեսցէ 'ի դիպահոջ. զի կամ յանձն առցեն զհրամանն արքունի, և կամ յանձինս ընկալցին զվճիռ պատուհասին: Իբրև այս այսպէս եղև, անկան նախարարքն ա̃մ 'ի վարանս անհնարինս. զի վտանգ կորստեան մարմնոյ կամ հոգւոյ առաջի կայր նո̃ց և ա̃մ ազգին. ո՛չ ժամանակ գոյր խորհելոյ, և ո՛չ հնար փախչելոյ, քանզի և օրն էր տարաժամեալ, և ստիպումն հրամանին 'ի վ̃ր կայր վ̃ն վաղուեան աւուր : Բազում խոստմամբք ընչից միջնորդ ունէին զիշխանս պարսից, և ինչ ոչ շահէին :

Եւ յորժամ անցուցին զայն գիշեր կոծով և տրտմութ̃բ, և արտասուախառն պաղատանօք առ Տ̃ր, ը̃ առաւօտս կոչեաց զնո̃ Թագաւորն. և վերստին հարկեցուցանէր զնոսա ողոքանօք և սպառնալեօք պատրաստ լինել յերկրպագութի արեգական ։ Եւ իբրև մերժեցին զբանս նորա, հրաման ետ յազկերտ դնել զն՟ս անդրէն 'ի տան միում իբրև 'ի բանտի, և պահել 'ի խիստ նեղուե՟՝ ա՟մ զգուշութ՟ հանդերձ, զի մի՛ ոք զերծանիցի. և ասաց պատրաստել գունդ մի, զի չարաչար վշտօք վարեսցեն զն՟ս յանդարձ օտարութե՟ 'ի սագաստան ։

Եւ մինչդեռ կէսք 'ի նախարարաց յօժարամիտ ցուցանէին զանձինս յայն պատուհաս, և կէսք վարանեալ ծփէին 'ի խորհուրդս, տեսեալ զաղէտս տարակուսանաց ն՟ց ներքինի ոմն 'ի խորհրդականաց արքայի քրիստոնեայ 'ի ծածուկ՝ եկն առ նոսա զանխուլ յերկրորդումն գիշերի, խրատ չար ետ ոմանց 'ի նոցանէ պատճառանօք բարւոյ և զերծանելոյ յե՛ս մեծագոյն չարէ. ո՞չ գիտէք ասէ, զի ը՟ ձեզ և ձ՟ն կորնչի, և յօտարանալ ձերում ա՟մ ազգ ձեր հարկի 'ի հրամանս արքունի. և արդ ա՛ղէ առ վայր մի արտաքուստ արտաքս յա՛նձն առէք զկամս թ՟գ՟րին՝ երկիրպագանելով արեգական, և զմիտս առ ք՟ս ուղղելով. և յետ անցից վտանգիս երթա՛յք յտ՟ն ձեր, և ապրեցուցէք զանձինս և զտ՟ն ։ Այս խորհուրդ անբերելի՝ հաճոյ թուեցաւ լսելեացն. վ՟յ և ծածուկ 'ի վարդանայ առաքեցին բանս առ թագաւորն, և աղաչեցին թոյլ տալ ն՟ց խորհել առ ժամանակ մի ։ Ուրախ եղև յազկերտ, և թողացոյց ն՟ց աւուրս

ւուրս ինչ՝ ընտրել զոր կամին : Եւ էր տեսանել յայնժամ ալէկոծ խորհուրդ և վէճ ՚ի մէջ նախարարաց՝ տակաւին գաղտ ՚ի վարդանայ . զի թուլամիտք հանդոյն վասակայ սիւնեայ և գադեշոյի խորխոռունեայ ինքնին զիջանէին ՚ի խորհուրդն անօրէնութե՟ . երկիւղածքն վարանէին . տգէտքն օրինաւոր կարծէին առնել զչարն՝ զի եկեսցէ բարի . և գիտնաւորքն տկարացեալ՝ առ հարկի կամակից լինէին նմ՟ , զմտաւ ածելով զելս չարագոյնս . եթէ զանձանց ևեթ փրկութի՟ հոգամք ասեն յայժմուս , վտանգեմք զփրկութի՟ ն՟ին . ապա եթէ ՚ի ժամուս պատճառանօք գայթակղեսցուք , ապա երթեալ յ՟ մեր՝ պինդ ունիմք զքրիստոնէութի՟ , և վանեմք զանօրէնս :

Այս խորհուրդ յաղթեաց մտաց բոլորեցուն . այլ ոչ իշխէին յայտնել մեծին վարդանայ՝ գիտելով զկատարեալ ա՟ծպաշտութի՟ ն՟ր և զտեղեկութի՟ օրինացն ա՟յ և զպատուիրանապահութի՟ . բայց զի մի՛ յոչն միաբանիլ նորա՝ այլազգ շրջեսցին իրքն , թո՛ղ զի և առանց ն՟ր անբաւական համարէին զանձինս զդէմ ունել յետոյ պարսից , ժողովեցան առ նա բազմութ՟ք , և սկսան թախանձել բազմօք՝ զի միաբանեսցի ՚ի խորհուրդն , զոր խորհեցան . Հայեա՛ց ասեն ՚ի վտանգդ առաջիկայ , որով կորնչելոց են ազգք և ազինք քրիստոնէից տամբք և որդւովք և կանամբք՝ առաւել հոգւովքան մարմնով մինչև ՚ի կատարած . գթա՛ ՚ի հոգիս անթիւ՛ բազմութե՟ , և լեր պատճառ փրկութե՟. միայն յանձն առ առ փոքր մի հիւանդանալ ը՟դ մեզ. և յետ սակաւուց ողջացուսցէ զքեզ և զմեզ ամենաբժիշկն յս՟ ։

Իսկ և իսկ 'ի բաց հերքեաց մեծն վարդան զայն խորհուրդ անարժանութե՟. մի՛ լիցի ինձ ասէ ստել արարչին իմում, կ՟մ մոռանալ ըզբան նր՟, թէ որ սիրէ զկին կ՟մ զորդիս առաւել քան զիս, չէ՛ ինձ արժանի. և արդ մի՛ ես ասի՛ք ինձ զայն ինչ, զոր չէ՛ ինձ արժան լսել, թո՛ղ թէ արդեամբք կատարել. մեք զմեր հոգիս հոգասցուք տ՟ր, և տ՟ր ինքնին հոգասցի զհոգս փրկութե՟ այլոցն ամենեցուն ։

Նոքա իբրև լուան զբանս վարդանայ թէպէտև իրաւացի համարէին, բայց յանհնարս մտե՟լ մարդկօրէն խորհրդով՝ անդրէն թախանձէին զնա. և զի առաւել ընտանի էր և սիրելի վարդանայ արտակ մոկացի, զնա յորդորէր բդեշխն գուգարաց աշուշայ հաւանեցուցանել զվարդան. և ինքն աշուշայ բազում բանս խօսէր ձայնակցութ՟ե այլոց նախարարաց, 'ի մէջ բերելով և բանս 'ի գրոց յօտար միտս՝ ո՛չ թէ արժան իցէ վտանգել առ փոքր մի և զանձին փրկութի՟ վ՟ս այլոց. եթէ առաքել՟ն պօղոս յանձն առնոյր ասել նզով լինել վ՟ս փրկութե՟ եղբարց և ազգականաց ը՟ս մարմնոյ, յանձն առ և դու նզով լինել վ՟ս փրկութե՟ հոգւոց համօրէն ծխի հայոց և վրաց և աղուանից. յայժմուս դու լսօղ լեր մեզ, և մեք զոր ինչ հրամայես յետոյ՝

տոյ՝ առնեմք , մինչև հեղուլ զարիւնս մեր 'ի պաշտպանութի̃ հաւատոց · միայն առ անգամ մի զերծցուք 'ի վտանգէս ։

Եւ առ հաստատելոյ զբանս իւրեանց՝ միաբան երդուա՛ն՝ ձեռս դնելով յաւետարանն ք̃ի · որ ոք ստեսցէ ասէն այսմ երդման , որոշեալ ձեղքեսցի յարքայութէ̃ն ա̃յ , և զա̃մ վնաս հոգւոց խնդրեսցէ ա̃ծ 'ի ձեռաց ն̃ր ։

Զայս ա̃մ տեսեալ վարդանայ՝ դառն հեծութե̃ և լի արտասուօ՛ք զիջաւ 'ի կամս ն̃ց · և ապա ամենեքին աղօթս մատուցեալ՝ խոստովան լինէին ա̃յ արտասուօ՛ք զչարն՝ զոր ինչ գործելոցն էին · քանզի և ինքեանք գիտէին՝ թէ չէր արժան , զոր առնել կամէին ։

Եւ մինչդեռ ն̃ք յայս միտս ծփէին , գուժկան եհաս առ թագաւորն՝ թէ հո՛նք ասպատակաւ արշաւեցին 'ի կողմ̃ն մի պարսից աշխ̃ին ։

Յայնժամ փութայեալ յազկերտի խաղալ ը̃դէմ ն̃ց՝ փութացոյց յառաջ քան զգնալ իւր ստիպել անդրէն զնախարարսն · և նոցա առիթ դիպօղ վարկուցեն զմեկնիլն յազկերտի վաղվաղակի՝ ծանուցին արքայի խաբանօք , եթէ յանձն առին կատարել զկամս ն̃ր · զի փութով արձակեսցէ զինքեանս ։

Յայնժամ լցեալ յազկերտի ուրախութե̃՝ առ տարաւ զն̃մ շքով յատրուշանն · և 'ի մատուցանել ն̃ր երկրպագութի̃ հրոյ և արեգական՝ զնոյն արարին յարտաքին երևոյթս և նախարարքն առ հասարակ , թէպէտև յակամայս և պատճառանօք կորացուցանելով զանձինս 'ի ցոյց երկրպագութե̃ , բայց յերկուց եւ յերկից ոմանց անօրէն ուրացողաց , որք անխտրաբար մխեցին զանձինս յերկրպագութիւն եւ 'ի զոհ ըստ օրէնս մոգութեան ․ եւ թուեցաւ յազկերտի՝ թէ ամենեքին 'ի նոյն միտս իցեն ։ Եւ յետ կատարման գործոյն դատաւնութեան՝ յորժամ եկին յատեան , առ իսպառ խաբելոյ զմիտս թագաւորին՝ ոմանք սուտ գովութիւնս եւ շնորհակալութիւնս առնէին նմա , ասելով՝ թէ ձեր նախնիքն սիրէին զմեզ՝ հոգալով զմեր օգուտ մարմնաւոր , այլ դուք եւ մեզ հոգւոյ օգտի խնամ կալայք ․ եւ եթէ նոցա ծառայեցաք յօժարութեամբ , առաւել եւս ձեզ ծառայեսցուք ։ Եւ ոչ ինքեանք շատացեալ՝ ստիպէին եւ զվարդան ասել նոյնօրինակ բանս ․ քանզի գիտէին՝ թէ նմա առաւել հաւատայ թագաւորն՝ քան ամենեցուն ։ Յայնժամ ասէ վարդան երկդիմի բանիւք առաջի թագաւորին եւ մեծամեծացն նորա ․ Զվաստակս եւ զհպատակութիւն իմոց նախնեաց առ ձեր թագաւորութիւնդ դուք ամենեքեան քաջ գիտէք ․ եւ ինձ չէ օրէն պանծանօք զնոյն յեղյեղել ։ Եւ ես թէպէտեւ բազմօք յետնեալն եմ քան զիմ նախնիս , սակայն որչափ եւ կարն էր յիս՝ փոյթ ունէի յամենայնի արդար վաստակօք հաճել զձեզ ․ եւ ուր ուրեք երթեալ է իմ 'ի գործ պատերազմի 'ի ձեր հրամանէ , տեսեալ է զօրագլխաց ձերոց եւ ընկերաց իմոց զիմ աշխատութիւն ըստ իմուժոյ միամտութեան ։ Բայց արդ եթէ մինչեւ ցայժմ գործեալ ինչ է իմ, այլ ոչ արժանի անուան կամ գովութեան , յայսմ հետէ դուն գործեմ եւ հնարիւ ամ՟ զօրուբ՟ և ուժով՝ օգնականութ՟ն այ՟՝ առնել գործ այնպիսի, որոյ համբաւն ոչ միայն առաջի ձեր արեաց, այլև ՚ի դրան կայսեր յունաց և յամ՟ ազգս պատմեսցի մինչև ցյաւիտեան ։ Զայս բան ասաց արին վարդան՝ նշանակելով զկամս իւր արիաբար նահատակելոյ ը՟դէմ պարսից մինչև ցհեղումն արեան վ՟ն տ՟ն ․ այլ յազկերտ և աւագանին պարսից համարեցան, թէ ՚ի ծառայութ՟ն նց՟ ունի աշխատել առաւել քան զառաջինն ։

Արդ այսպիսի բանիւք և գործովք նախաբարաց գլխովին պատրեալ յազկերտի՝ մեծարեաց զն՟ա բազում պարգևօք ․ և հաստատեալ զամենեսին յառաջին աւագութ՟ե իւրեանց՝ հրաման ետ դառնալ յաշխ՟ն իւրեանց հանդերձ այլ ևս երևելի արամբք, որք կային ՚ի կապանս ը՟ գարեգնի սրուանձտեան ։ Կարգեաց ը՟ նոսա բազում զօրս ՚ի պարսից հանդերձ զօրավարօք, և մոգս և քուրմս եօթն հարիւր հանդերձ մոգպետաւ, յորդորելով զն՟ա փութով գնալ ՚ի հայս, և դարձուցանել զամ՟ աշխ՟ն ՚ի մոգութ՟ն ։ Բայց զերկուս որդիսն վասակայ կալաւ առ իւր ՚ի պատանդի, որպէս և զթագաւորն վրաց, և զթագաւորն աղուանից, և զբդեշխն գուգարացւոց ․ տեսանել՝ թէ զինչ անցք անցանեն ը՟ աշխ՟ն հայոց, զի նոյնպէս արասցէ և ը՟ աշխ՟ս նց՟ ․ և ինքն աւետաւորս առաքեալ ընդ ամ՟ տեղիս վ՟ն սոցին իրաց՝ փութանակի խաղաց գնաց ՚ի վ՟ր գնդին հոնաց ։

Իսկ քրիստոնեայքն՝ որք կային յշխ՟ին պարսից ՚ի զանազան ազգաց, եւ էին ՚ի մնչու հալածանաց, իբրեւ լուան զգործ ուրացութեան նախարարացն, անկան ՚ի սուգ անհնարին. զի եւ չէին գիտակ գաղտնի խորհրդոց նց՟. մ՟յ եւ ոմանք ՚ի նոցանէ եկին առ նախարարս, եւ սկսան արտասուօք ասել ցնոսա. Դուք էիք մեր հաստատութիւն եւ ապաւէն. դուք էիք մեր ուսուցիչ եւ խրատտու ՚ի քրիստոնէութեան. դուք էիք մեր պարծանք առ թշնամին ճշմարտութեան. արդ զի՞նչ լինիցի մեզ ՚ի կործանիլ ձերում. զիա՞րդ թողիք զած՟, եւ հնազանդեցայք դիւաց. զիա՞րդ ընդ կուրացեալսն եւ դուք կուրացայք. գիտիցէ՞ք արդեօք, զի երկինք եւ երկիր սուգ առեալ են ը՟ կորուստ ձեր. եթէ ՚ի մարդոյ երկնչիք, իսկ զի՞նչ առնիցէք զած՟ասաստ բարկութիւն. ոչ միայն զանձանց դատաստան տալոց էք առաջի ահեղ ատենին ա՟յ, այլ եւ զայլոց բազմաց՝ որք ՚ի պատճառս ձեր վտանգին։ Այս եւ առաւել քան զոյն լուեալ նախարարաց ՚ի քրիստոնէից անտի՝ արտասուօք զերեսս թանային, եւ հեղձամղձուկ լինէին յոգիս. զի ոչ կարէին յայտնել նց՟ զխորհուրդ իւրեանց, զի մի՛ գիտասցեն պարսիկք. եւ դառն էր նց՟ լսել զայնպիսի բանս զանձանց իբրեւ զկատարեալ ուրացողաց։

Իսկ քահանայքն՝ որք կային ՚ի տիսբոն թագաւորական քաղաք պարսից, փութապէս առաքեցին առ յշխ՟ն հայոց, եւ ծանուցին երանելւոյն Յովսէփայ կաթուղիկոսի և այլոց եպ՟սաց զգործս նախարարացն : Նոքա իբրև լուա՛ն, յանչափ տրտմութի՟ն ընկղմեցան . և գիտացեալ թէ գալոց են ը՟ նոսա և մոգք առ 'ի բառնալ զկարգ եկեղեցւոյ և կարգել մեհեանս, հաստատեցին լրութ՟ ազգի և աշխարհի պատերազմիլ ը՟ նս՟ . մի՛ խնայեսցէ ասեն ձեռն եղբօր 'ի մերձաւոր իւր . և այնպ՟ս ա՟մ բնակիչք աշխարհին արք և կանայք, եկեղեցականք և աշխարհականք միով հոգւով վառեալ պատրաստեցան ընդդէմ նց՟ :

Եւ եղև իբրև եհաս բանակ նախարարաց և մոգուց 'ի ծաղկոտն գաւառ մօտ 'ի գիւղաքաղաքն անգղ, իմացեալ զայն երանելւոյն ղևոնդեայ քահանայի՝ դիմեաց 'ի քաղաք անդր զօրավիգն լինել հաւատացելոց : Եւ ահա յետ աւուրց ինչ մոգպետն ինքնին եկն անդր յաւուր միաշաբաթու զօրօք հանդերձ . և մատուցեալ 'ի դուռն եկեղեցւոյն՝ կամէր քակել զ՟ արքունի հրամանի : Յայնժամ սբ՟ն ղևոնդ հանդերձ ուխտի՛ւ եկեղեցւոյ ը՟դդէմ եկաց նց՟ քաջութ՟, և 'ի բաց վանեաց . և 'ի լինել աղաղակի զեղան անդր և բազմութ՟իք 'ի քաղաքացւոց քրիստոնէից արք և կանայք . և դիմեալ 'ի վ՟ր անհաւատից քարամբք և փայտիւք՝ հարին չարաչար զմոգպետն և զմոգսն հանդերձ գնդաւ նոցին . մինչև հազի՛ւ փախստեայ անկանիլ նոցա 'ի բանակն :

'Ի տարածիլ համբաւոյն՝ ընթացան անդր զինուք այլևս բնակիչք աշխարհին մեծամեծք և փոքունք՝ հանդերձ կաթուղիկոսիւ՛ և այլ ևս եպ̃սօք և քահանայիւք. յորս յաւելան և այլք 'ի քահանայից և 'ի ժողովրդոց՝ որք կային 'ի բանակն նախարարաց. և ոմանք 'ի սոցանէ՝ որք գիտակն էին գաղտնի խորհրդոց նախարարաց, պատմեցին կաթուղիկոսին և որոց ընդ նմա: Եւ նք̃ յղեալ 'ի ծածուկ՝ կոչեցին զսպարապետն Վարդան. որոյ եկեալ անկաւ արտասուօք առ ոտս հայրապետին և եպ̃սաց. և խոստովանեալ զարտաքին ուրացուի̃ իւր և զընկերացն՝ յայտնեաց նց̃ զիրսն ստուգութ̃. և քաջալերեալ զնս̃ ինքն դարձաւ անդրէն 'ի բանակն:

Իսկ մոգպետն զփորձ առեալ հաստատութե̃ Հայոց՝ գիտաց, եթէ անհնար է հարկեցուցանել զնս̃ 'ի մոգութ̃. սկսաւ 'ի խորհուրդ մտանել ը̃ Վասակայ սիւնեաց Հայոց մարզպանի, և ասէ. Թո՛ղ դրեցից առ Թագաւորն, զի թո՛յլ տացէ ազգիդ կալ 'ի խաղաղութե̃, և առ փոքր փոքր սիրով շահեսցի զմիտս դոցա. ապա թէ ոչ՝ բռնութ̃ ոչինչ ունիմք վճարել. զի թէ անդէն մարդիկն այնպէս բռնացան, եթէ յանկարծ և զգլխաւորս միաբանեսցեն ը̃ իւրեանս, ո՞ կարէ կալ առաջի յանդուգն յարձակմանն նց̃. որոց առաջի արհամարհեալ է մահ և կեանք, թո՛ղ թէ ստացուածք և փառք, կապանք և տանջանք: Եւ յաւել պատմել մոգպետն, թէ զիա՛րդ յաւուրս շապհոյ արքայից արքայի գուն գործեցին պարսիկք ջնջել ըզքրիստոնէութի̃ յա̃էն պարսից, և նահատակեցլին զբազումս ․ բայց շահեցան և ոչինչ ․ զի ը՟ յաճախել հալածանաց բազմամեայլին հաւատացեալք ։ Եւ դու ասէ՝ որ գիտէիր զայդպիսի անդարձ միտս ազգիդ , ընդէ՞ր համարձակ չասացեր յառենի արքային , թէ անհնար է կատարել կամաց նր՟ ․ ապա թէ ոչ՝ յայտ առնես , թէ և դու կամակից ես նոցա՝ կոտորել նենգանօք զպարսիկս ․ զի դու ես մարզպան աշխ՟ին ։

Իսկ ամօրէնն վասակ՝ որ 'ի սրտէ ևս արհամարհեալ էր զքր՟ հաւատս , և ակն ունէր ուրացութե՟ հասանել մեծ ևս փառաց՝ մինչև թագաւորել 'ի վր՟ աշխ՟ին , խորհուրդ տայր մոգպետին և այլ դունդ զօրաց տալ բերել 'ի պարսից , և բռնանալ ը՟դէմ քրիստոնէից։ Եւ զի ոչ հաւանեցաւ այսմ մոգպետն , յորդորեաց զնա հանդարտիլ առ վայր մի ․ զի ես ասէ այլով ճարտարութե՟ 'ի գլուխ տարայց զհրամանն արքունի ։ Ուրդ երթեալ վասակայ անձամբ 'ի քաղաքն անդր՝ պատիր բանիւք խաղաղացոյց զամբոխն , ո՞չ թէ յակամայս ինչ լեալ իցէ ձեռնարկել մոգպետին յեկեղեցին ․ զի ես ասէ ունիմ հրաման յարքայէ յանդորրու պահել զաշխ՟ն ։ Եւ յետ ցրուելոյ զբազմութ՟ին յիւրաքանչիւր տեղիս՝ թոյլ ետ և նախարարացն որ 'ի բանակին , երթալ 'ի տունս իւրեանց ․ և ինքն սկսաւ յորդոր լինել աստ անդ , զի առ ժամանակ մի՝ թոյլ տացեն մոգուց վարել յառանձին տեղիս զպաշտամունս իւրեանց ․ զի սովաւ ասէ հաճեալ զթագաւորն՝ առ սակաւ սակաւ յետս դարձուցանեմք զն̃ա. և մեք համարձակ պաշտեմք զքրիստոնէութիւն ։

Նա այսպիսի հրապոյրս անօրինին լսելի լինէին, զի էր խորամանկ բարուք և իշխան աշխ̃ին, և յառաջ ժամանակաւ անուն ունէր բարեպաշտութե̃ յիրս իրս. վ̃ս որոյ կարծէին լսօղք, եթէ ողջմտութ̃բ խօսի զա̃մն ։ Նա իբրև այսու օրինակաւ և դիւ́ական հնարիւք պղտորեաց զմիտս մեծամեծաց և փոքունց, սկսաւ սփռել զմոգս 'ի տունս նախարարաց. յորոց և զոմանս ձգեաց կաշառօք 'ի խորհուրդս չարութե̃ իւրոյ. և ինքնին տայր առնել խրախունս կոչնոց յայլ և այլ տեղիս, և զա̃մ ինչ ը̃ հեթանոսական կարգի յարմարէր. մինչև սկսաւ տարածիլ կրակապաշտութի̃, և խափանիլ հանդէս ա̃ծպաշտութե̃ ։ Քանզի 'ի յաճախել մոգուցն ըղգարշ պաշտամունս իւրեանց 'ի քաղաքս և 'ի գիւղս, 'ի յայտ ելին այնուհետև և ըստուգապէս ուրացեալք. մինչ զի երկուք ոմանք յաւագ իշխանաց հայոց՝ շաւասպ արծրունի և Վ̃րդոյ գո́նեցի՝ կանգնեցին կրակատուն 'ի գո́ւին քաղաքի. որոյ քրմապետ եղև չերոյ որդի Վ̃րդոյի ։ Նա տեսեալ ուրացելոյն վասակայ զյաջողուա́ծս անօրէնութե̃ց՝ առաքեաց գաղտ, և ետ բերել զունդ նոր յաշխ̃էն պարսից. զի անկասկած լիցի յուխտապահ նախարարաց, յորոց խիթայր ։

Տեսեալ մեծին վարդանայ սպարապետի, եթէ յընտանի թշնամեաց է կորուստ աշխ̃ին, և չիք ոք 'ի նախարարաց՝ որ զօրասցի վանել զպարսիկս, ՝անյոյս եղև ՚ի գլուխ տանել զխորհուրդն առաջին. և փութացաւ ազատել զանձն իւր և զիւրսն ՚ի կորստենէ ։ Կոչեաց առ ինքն զո̃մ ազգականս և զընտանիս, և ասէ ցն̃ս. Ես ոչ ուրացայ զարարիչն իմ և զո̃ր յո̃ քո̃ կամաւ և կ̃մ առ երկիւղի. այլ յակամայս առ վայր մի թաքուցի զճշմարտութ̃ի խաբանօք՝ դնելով զանձն իմ ՚ի վտանգ կորստեան վասն ձեր. և զի թողի զո̃րն իմ պատճառանօք, կամիմ ստուգութ̃ թողուլ զո̃մ ինչ կենցաղոյս առ ՚ի գտանել զնա. և արդ չի՛ք այլ մեզ հնար յայսպիսում ժամանակի, բայց եթէ ՚ի բաց լքանել զերկիր հայրենի և զտուն, և դիմել յերկիր ո̃րուն կայսեր ։ ՚Ի սոյն յորդորեաց և եղբայր նո̃ր հմայեակ. որա՛ ասէ անյապաղ՝ որ ինչ հաճոյ թուի քեզ. և մեք պատրա՛ստ եմք ը̃ քեզ ՚ի կեանս և ՚ի մահ ։ Եւ այնպէս միաբանեալ հանդերձ ընտանեօք՝ թողին զո̃մ ինչ, զոր ունէին. և յուղի անկան գնալ ՚ի կողմանս յունաց ։

Ընդ եղև նախարարաց չու վարդանայ, և զահի հարան առ հասարակ. ք̃զի գիտէին՝ զի առանց նո̃ր կործէին և ինքեանք. կէսք խորհէին և ինքեանք զնոյն առնել, և խոյս տալ յա̃էն. այլք ասէին փութալ յետս դարձուցանել զվարդան. ՚ի սոյն խորհուրդ առաւել յորդոր լինէր վասակ, զի մի՛ և այլք զհետ նո̃ր երթիցեն, և դատարկացի ա̃ն՝ յորոյ վ̃ր կամէր թագաւորել. և կամ թէ չարիք ինչ հասցեն ինքեան յարքայէ, զի մարզպան գոլով ն̃ին՝ ոչ կարաց պահել զն̃ն ։ Ապա կոչեալ զուխտապահ նախարարսն հանդերձ եպ̃սօք և քահանայիւք՝ գրեաց թուղթ աղաչանաց 'ի դիմաց ամենեցուն առ վարդան՝ մի՛ մեկնիլ յն̃էն . և երդումն տուեալ 'ի ս̃բ. աւետարանն կնքով իւրով և բոլորեցունց՝ ետ տանել առ նա զնոյն աւետարան 'ի ձեռն երանելւոյն ղևոնդեայ և այլ երկուց 'ի քահանայից , և 'ի ձեռն արշաւրի կամսարական իշխանի , և այլ երկուց նախարարաց , խոստանալով՝ զի 'ի դառնալ վարդանայ՝ հնազանդեսցին նմա ամենեքին , և նոյնպէս վանեսցեն զմոգս յաշխարհէն , և միաբանեալ ը̃ կայսեր յունաց՝ զդէմ կալցին պարսից ։

Իսկ երբև եհաս այս պատգամ միաբանութե̃ առ վարդան 'ի գիւղն արտամինայ 'ի բագրևանդ գաւառի , չկարաց ը̃դէմ կալ խնդրոյ ն̃ց յօգուտ համօրէն ն̃ին . այլ փութանակի դարձ արար՝ հաստատել 'ի միտ դնել զանձն 'ի մահ վ̃ն փրկութե̃ անձին և ազգին ողջոյն ։ Իսկ մինչդեռ նա այսպիսի հոգւով ժամ 'ի ժամէ պատրաստէր զանձն և զիւրսն , միւսանգամ ուրացեալն վասակ յապաղումն 'ի վ̃ր ածէր պէսպէս պատճառանօք ։ Իսկ եղև յաւուր միում յորժամ ժողովեալ էին նախարարքն յապարանս մեծին վարդանայ 'ի շահապիվան , հասին անդ եպ̃սունք 'ի վաղարշապատէ հանդերձ կաթուղիկոսիւն , բողոք բարձին և ասեն . մինչև յե՞րբ լռիցէք , զի ահա կործանի ն̃ս հեթանոսութե̃ . աւանիկ տեսաք և անօրէնութի̃ նոր, զի կանայք մոգուց և իշխանաց պարսից հրամանաւ փառակայ մարզպանի և մոգպետին պատառեցին զհանդերձս հաւատաւոր կանանց, և շիջուցին զճրագունս յեկեղեցիս. և արդ եթէ և դուք կամակից էք այդմ ա̃մի, նախ զմեզ սպանէք աստ, և ապա զո՛ր և կամիք՝ արարէք:

Եւ իբրև զահի հարան լսօղքն, յոտն եկաց քաջն Վարդան, խրախոյս ետ, և ասէ. Հապա ո՞ւմ կայք ա՛ռաքինիք. Ժա՛մ է մեզ զարթնուլ 'ի քնոյ, և առնուլ վրէժ 'ի թշնամեաց ճշմարտութե̃: Եւ անդէն միաբանեցան ուխտիւ, վանել զկրակապաշտս մահուչափ պատերազմաւ 'ի վ̃ր ս̃բ հաւատոյ, և երդուեալ հաստատեցին աւետարանաւ զուխտ իւրեանց. և զՎարդան սպարապետ դարձեալ ընտրեցին գլուխ և առաջնորդ ամենեցուն, բանս եղեալ՝ ժողովել իւրաքանչիւր զօրս գաղտ 'ի Վասակայ, և սկիզբն առնել մարտին յամսեանն մարերի, ո̃ր 'ի յունիսի:

Իսկ զանդաղան ոմն յոստանեայ տանէ գիտացեալ զխորհուրդ նախարարացն՝ ազդ արար Վասակայ. զայն իբրև իմացան նախարարքն, առաքեցին կալան զմատնիչն, և եդին 'ի բանտ. և յետ քանի մի աւուրց ետուն քարկոծ առնել հրապարակաւ. զի յայտնի լիցի ամենեցուն վրէժխնդրութի̃ նց̃ վ̃ս ճշմարտութե̃: Եւ 'ի հնչել այսր համբաւոյ՝ բազումք յորոց ակամայ միաբանեալ էին ը̃ մոգս, կի̃ պահէին զնո̃ 'ի տունս իւրեանց,

՚ի բաց վարեցին զն՟ս, և եկին յարեցան ՚ի վարդանանս ։

Յայնժամ անձնապարեալ և մոգպետին և զօրավարացն պարսից՝ ժողովեցին զա՟մ զօրս իւրեանց ՚ի բագրևանդ գաւառ, գործակցութ՟ ուրացելոյն վասակայ՝ որ սատարացոյց զգունդսն՟ ։ Ապա յամսեանն մարերի եկին հասին նախարարք հայոց ը՟ ժամադրութե՟ յամուրն անգղ ՚ի ծաղկոտն գաւառ, և եղեն բանակ մեծ. ը՟ որս էր և յովսէփ կաթողիկոս հանդերձ եպ՟սօք և քահանայիւք ։ Եւ անդ յերկս առաջս բաժանեալ՝ զխմբեցին ՚ի վ՟ր պարսից, և չարաչար հարին զն՟ս. և զերևելիս ՚ի նոցանէ ձերբակալ արարե՟՝ եդին կապանօք ՚ի բերդս ամուրս ։ Կալան և զանօրէնն վասակ. և մինչդեռ խորհէին սատակել զնա, կա՟մ մատնել ՚ի կապանս, նա ը՟ կեղծուպատիր և չարարուեստ բարուց իւրոց ողոքէր և աղաչէր խնայել ՚ի նա իբրև ՚ի մեղուցեալ, երդումն տուեալ յաւետարանն ս՟բ՝ հաստատուն կալ ՚ի հաւատս, և զա՟մ ապաշխարանս յանձին կրել, միայն թէ մի՛ մեկնեսջիք զիս աստ ՚ի ս՟բ միաբանութ՟է ձերմէ ։ Եւ նց՟ վստահացեալ յահագին երդումն նր՟՝ ո՟չ յանձն առարին զդատաստան նր՟, և ընկալան յիւրեանս՝ թէպէտև կասկածանօք հանդերձ ։

Յետ այսորիկ ՚ի հաստատութ՟ի իւրացն ժողով մեծ արարին եպ՟սունք և նախարարք ՚ի վանս սպարապետին ՚ի շահապիվան հանդերձ Յաժողով բազմութ՟բ. և սկսան առել յանդիման վասակայ . Մ՝եզ այլ ոչ է խորհել ինչ, բայց եթէ յայտնապէս պաշտպանել ս̄բյ հաւատոյս . ջնջել զհետս մոլորուե̄ յ̄ծէս հայոց, և համարձակ պաշտել զք̄ս . և եթէ մահ առաջի կայցէ սրով կ̄մ պատերազմաւ, անխնայ տալ զանձինս մեր՝ 'ի սէր փրկչին մերոյ և եկեղեցւոյ նորա : Զայս լուեալ վասակայ՝ առաւել քան զամենեսին նախանձախնդիր զանձն ցուցանէր . և առաջի ամենեցուն վերստին երդուեալ կընքէր զաւետարանն իւրով մատանեաւ . ըզնոյն արարին և ա̄մ իշխանք ը̄ կարգի պատուոյ և երիցութե̄ իւրեանց :

Ապա միաձայնութ̄բ ժողովոյն գրեցին եպիսկոպոսունք 'ի բերանոյ նախարարաց դաւանութի̄ ուղղափառ հաւատոյ 'ի ձև մաղթանաց առ ա̄ծ, խոստովանելով զերեքանձնեայ մի տ̄րուի̄ ա̄ծուէ̄ հօր և որդւոյ և հոգւոյն ս̄բյ, և զմարդեղութի̄ միածնին յա̄ծածին ս̄բյ կուսէն վ̄ս մեր մարդկան և վ̄ս մերոյ փրկուէ̄ . 'ի վ̄ր բերելով զխոստովանութի̄ յանցանաց ուրացութե̄ իւրեանց, և աղաչելով ընդունել զապաշխարութի̄ իւրեանց իբրև զդարձ անառակ որդւոյ : Եւ ասեն առ փրկիչն . որ̄պս հեղեր դու զարիւնդ քո ս̄բ 'ի վ̄ր մեղաւորաց 'ի փրկութի̄ յանցաւորաց, պարգևեա՛ և մեզ հեղուլ զարիւնս մեր 'ի վ̄ր խոստովանութե̄ս այսորիկ և իւրաքանչիւր թողուէ̄ մեղաց : Կարգեցին զկնի և նզովս ահագինս 'ի վ̄ր այնոցիկ, որք ուխտազանց լինիցին և քակեսցին 'ի միաբանութե̄ երդմանն ։ Եւ զայս եւս Նամակ կնքեցին ամենեքին՝ սկսե՟լ ՚ի վասակայ մինչեւ ՚ի ստորին իշխանս ․ եւ եդեալ զայն ՚ի մէջ աւետարանին՝ յանձնեցին ՚ի ձեռս սբ՟յն յովսեփայ կաթուղիկոսի ։

Յայնմ վայրի հնչեաց ժողովն ամ՟ ՚ի բազմութ՟է մարդկան՝ մեծաց եւ փոքունց, որք միաձայն յա՟ծ խրախուսեալ ասէին ․ Պատրաստ եմք ՚ի հալածանս եւ ՚ի մահ եւ յա՟մ նեղութ՟ս վ՟ն սբ՟ եկեղեցեացն, զոր աւանդեցին մեզ սբ՟ հարքն մեր առաջինք զօրութ՟բ գալստեան տ՟ն մերոյ յ՟սի ք՟սի ․ որով վերստին ծնաք ՚ի սբ՟ աւազանէն, եւ կամիմք միւսանգամ չարչարանօք եւ արեամբ նորոգել զանձինս մեր ․ քանզի հայր մեր զս՟բ աւետարանն գիտեմք, եւ մայր զառաքելական կթղկէ եկեղեցի ։ Եւ այսպէս միով ոգւով վառեալ առհասարակ՝ զմի զինուորութ՟ի զինուորէին ՚ի ք՟ս, միով զրահիւք հաւատոյ սպառազինեալ ․ ըզկեանս իւրեանց ՚ի մահ համարէին, եւ զմահն վ՟ն տ՟ն անշուշտ կեանք ։ Եւ այս բարբառ ստէպ ընթանայր առտնին եւ ՚ի հրապարակի ․ քաջութ՟բ միայն մեռցուք, զանուն եւ ըզհոգիս եւեթ ժառանգեսցուք ․ զի կենդանի իցէ ՚ի մեզ ք՟ս ․ որում դիւրին է միւսանգամ նորոգել զմեզ ՚ի հողոյ, եւ հատուցանել իւրաքանչիւր ըստ գործս ։

Զայս այսպէս հաստատեալ իր՟՝ այնուհետեւ ձեռն ՚ի գործ արարին իշխանք եւ քահանայք հայոց մաքրել զ՟տն յա՟մ գարշութ՟եց հեթանոսական կրօնիցն պարսից, եւ ՚ի խառնակ

նակ գնացից՝ միաբանելոցն ը̅ նս̅ : Իսկ նախ զիմէ ը̃ երանելոյն վարդանայ հզօր գնդաւ ՚ի վերայ դուին քաղաքի՝ կործանեաց զմեհեանն զշինեալն ՚ի շաւասպայ արծրունւոյ և ՚ի մշկանայ պարսկէ․ զշաւարշ սատակեաց , և զմշկան արար փախստական․ նոյնպէս և զիմդոյ դունեցին այրեաց ՚ի կրակարանի նց̅ , և զորդի նց̅ զշերոյ քրմացեալն կախեաց զփայտէ , և զկրակատունն քանդեաց․ և կանգնեաց ՚ի տեղի մեհենին զեկեղեցի մի փայտեայ յանուն սբ̅յն գրիգորի հայաստանեայց լուսաւորչի :

Նմին նման արարին և յայլ ա̅մ քաղաքս և ՚ի գիւղս՝ յորս գտանէին մոգք և պաշտօնեայք կրակի․ զոմանս կոտորեցին , զայլս ՚ի բանտ մատնեցին․ և զա̅մ տեղիս պղծեալս ՚ի պարսից սրբեցին , և աւերեցին և բնաջինջ արարին զհետս հեթանոսութե̅ : Իսկ զի յայտնի լիցի՝ թէ ա̅ծ ինքնին յաջողէր զգործ նց̅ , մեծամեծ նշանք ևս գործեցան զօրութբ̅ սբ̅յ խաչին․ զոր տեսեալ անհաւատից՝ դարձան բազումք ՚ի հաւատս ք̅ի :

Մինչդեռ յայս գործ քաջութե̅ կայր հայաստան աշ̅, հասին աղաչաւորք յաշ̅էն աղուանից՝ կաթուղիկոսն նց̅ և հազարապետն՝ խնդրել օգնականութի̅ ՚ի հայոց․ քանզի և յաշ̅ մեր յղեաց ասեն յազկերտ երեք հարիւր մոգս զօրօք բազմօք՝ դարձուցանել ՚ի դէն պարսից : Զայս գոյժ իբրև լուան հայք , անկան ՚ի վարանս․ զի ձեռն տալ աղուանից կարևոր դատէին վ̅ն սիրոյ քրիստոնէութե̅․

այլ հայեցեալ 'ի պէտս երկրին իւրեանց՝ զոր հազի՛ւ ապրեցուցին, չիշխէին բաժանել և
հեռացուցանել զզօրս ։

Յայնժամ քաջալերեալ զաղուանս՝ խոստանալով յետ սակաւուց հասանել նց՟ 'ի թիկունս, ինքեանք փութացան նիզակակից առնել զյոյնս ․ վն՟ յղեցին դեսպանս առ կայսրն յունաց թէոդոս փոքր զատովմ գնունի զազգակիցն սբ՟յն ատովմայ առաջնոյ, և զհմայեակ մամիկոնեան զեղբայրն երանելոյն վարդանայ, ընդ որս և զվահան ամատունի, և զմերհուժան արծրունի 'ի մասն հայոց՝ որ ընդ ձեռամբ կայսեր, հանդերձ թղթով աղաչանաց առ ինքնակալն 'ի դիմաց յովսեփայ կաթուղիկոսի և ա՟մ եպսաց և նախարարաց, յայտ արարեալ զվտանգ երկրին հայոց և մերձակայ երկրաց յերեսաց անհաւատից, և աղերս առաջի արկեալ ձեռն տալ նց՟ վն՟ սիրոյ քրիստոնէութե՟ ։

Այլ զի ոչ գոյր ժամանակ սպասելոյ պատասխանւոյ, ինքեանք ը՟ստ տանելոյ ժամանակին յերիս բաժանեցին զզօրս երկրին ․ զմին ետուն ներշապհոյ արծրունւոյ՝ երթալ յատրպատական երկիր, և կալ 'ի պահպանութե՟ ը՟դէմ արշաւանաց պարսից՝ հանդերձ գործակից նախարարօք ․ զերկրորդն ետուն 'ի ձեռս քաջին վարդանայ սպարապետի՝ գնալ յաղուա՛նս, և վանել զզօրս պարսից ․ և եդեն նիզակակիցս վարդանայ և այլս 'ի նախարարաց՝ որք ա՟մ օգնով վառեալ էին 'ի վրէժխնդրութե՟ս սբ՟ եկեղեցւոյ ․ վն՟ և կանխա-

մանեալ

մտեալ յեկեղեցի՝ համբուրէին զսբ՟ խաչն և զաւետարանն ջերմ արտասուօք, և դնէին 'ի վր՟ աչաց և ճակատու իւրեանց, պատրաստելով զանձինս 'ի մահ 'ի պաշտպանութ՟ հաւատոյ :

Իսկ զերրորդն հնարեցաւ վասակ սիւնի յինքն առնուլ իբրև մարզպան և վերակացու աշխարհի, ընտրելով իւր գործակիցս զայնոսիկ յիշխանաց՝ զորոց գիտէր զթուլամտութ՟ 'ի հաւատս : Սոյ՟ և յետ մեկնելոյ վարդանանց՝ գրեաց առ զօրավարն պարսից սեբուխտ, որ էր 'ի սահմանս աղուանից, ծանուցանելով նմա՝ թէ զզօրս հայոց յերիս գունդս բաժանեցի. և ահա սակաւուք գայ ընդդէմ քո վարդան. հա՛ր զնա և զօրս ը՟ նմա. և յետ նուաճելոյ զաղուանս՝ եկ այսր յաշխարհս հայոց. զի ես եղէց քեզ ձեռնտու :

Եւ եղև իբրև պատահեցան միմեանց սակաւաթիւ գունդն վարդանայ, և բազմամբոխ զօրքն սեբուխտայ 'ի սահմանս ուտէացւոց և աղուանից 'ի դաշտի միում հանդէպ խաղխաղ քաղաքի, սրտապնդեաց երանելին վարդան զիւրսն՝ յած՟ ապաւինիլ, և մի երկնչիլ : Յայնժամ յաղօթս կացեալ նյ՟ առ տր՟ յաղագս վանելոյ զհակառակորդս սբ՟ հաւատոյ՝ զօրութ՟ փրկական նշանի, և տալոյ 'ի ձեռն սակաւուց զյաղթութ՟ ը՟դէմ բազմութե՟, համարձակ 'ի վր՟ յարձակեցան, հարին կոտորեցին զբազումս 'ի սուր սուսերի. մինչև զահի հարեալ գնդին պարսից՝ քակտեցան 'ի միմեանց. կէսք փախուցեալ անկան ՚ի պահակն հոնաց , և մնացեալքն ցիրեցան եղեն . զորոց զհետ մտեալ Հայոց՝ մղեցին զնոսա ՚ի գետն լոբնաս . և անդ զոմանս ջրահեղձոյց արարին , զայլս նետահար կորուսին . մինչև ոչ մնաց ՚ի նոցանէ ապրեալ , բայց ՚ի միոյն՝ որ անցեալ երիվարաւ ընդ գետն՝ մազապուր զերծաւ ՚ի պահակն հոնաց . իսկ ՚ի Հայոց ոչ ոք անկաւ՝ բայց ՚ի միոյ ևեթ , այն է երանելին մուշ դիմաքսեան՝ խրեալ ՚ի տղմուտս :

Յետ այսորիկ անցեալ Հայոց ընդ կուր գետ՝ մտին յերկիրն աղուանից . կոտորեցին զամենայն մոգս պարսից , և սրբեցին զամենայն տեղիս պղծեալս ՚ի զոհից նոցա . և զերկիրն զերծուցին ՚ի ձեռաց նոցա : Յայնժամ և աղուանք բնակիչք երկրին՝ որք ցրուեալ էին ՚ի լերինս , եկեալ և միաբանեալ ընդ գնդին Հայոց՝ դիմեցին առ հասարակ ՚ի դուռն ճորայ , որ հանէր յերկիրն ալանաց և հոնաց , և հարին զբանակն պարսից՝ որ կայր անդ ՚ի պահպանութեան , և զամենայն այր պարսիկ՝ զոր և գտին . կործանեցին զբնակութիւնս նոցա , և տապալեցին զձեռակերտն յազկերտի զպահակն մեծ . և հրեշտակս առաքեալ առ հոնս՝ դաշնաւորեցան ընդ նոսա ընդդէմ պարսից : Եւ յայս ամենայն պատերազմունս ևս՝ ոչ ոք անկաւ ՚ի Հայոց . զի տէր ինքնին էր՝ որ խորտակէր զթշնամիս հաւատոյ առաջի երեսաց նոցա :

Յայնմ վայրի դուժկան հասանէր առ վարդան յերկրէն Հայոց , եթէ տէրն սիւնեաց վասակ հանդերձ ուխտազանց գործակցօք իւ-

իւրովք յոգւոյ ապաստան արար զջերմ հաւատացեալս ք֟ի, և կորոյս զա֟ն՝ աւերելով զբազում տեղիս, և գերելով զորդիս տոհմին Մամիկոնէից և այլոց միաբանելոց ընդ վարդանայ. դարձեալ և 'ի ձեռն ստայօդ թղթոց օտարացոյց 'ի հայոց զկոյնս և զհայս որ 'ի բաժնին յունաց, ուխտ եդեալ ընդ պարսիկս դարձուցանել զազգն ողջոյն 'ի մոգութ֟ի. վ֟ոյ կալաւ և զոմանս 'ի քահանայից՝ եդ 'ի բանտի. զբազում միայնակեացս հալածեաց յա֟էն, և կողոպտեաց զսպասս եկեղեցեաց ։

Զայս լուեալ ս֟բյն վարդանայ և որոց ընդ նմա՝ տրտմեցան յոյժ յոյժ. այլ յա֟ծ եդեալ զա֟մ յոյս իւրեանց՝ ասէին. ահա առեալ հեծանոց 'ի ձեռս փրկչին ամենեցուն ք֟ս՝ սրբէ զկալ իւր՝ ընտրել զհատս ցորենոյ, և շտեմարանել յարքայութ֟ի իւր, և զյարդն մատնել անշէջ հրոյն. արդ եղիցուք մեք ցորենահատք սրբեալք՝ ժամ 'ի ժամէ սպասելով աւուր նահատակութ֟ե մերոյ 'ի սէր անուանն ա֟ն. որում եթէ արժանի գտցուք, հաղորդս գտանիմք մասին սրբոց ։

Ապա փութացեալ դարձան յա֟ն հայոց յամսեանն տրէի, այն է նոյեմբեր, հանդերձ բազում աւարաւ. զոր լուեալ վասակայ չարին և ընկերաց ն֟ր՝ տագնապաւ անկան յերկիրն սիւնեաց յամուր տեղիս ։ Իսկ գունդն վարդանայ պնդեալ զհետ ուրացելոցն՝ արարին կոտորած և աւեր բազում 'ի տեղիս գոծակծակցաց նոցա. և գերի բազում ածեալ յարարատեան տունն՝ ահ մեծ արկին 'ի վերայ ամենայն ուխտանենգից. և տիրեալ 'ի վերայ ամրոցացն՝ յորս բռնացեալ էին փախստականք, կալան զնոսա ընդ ձեռամբ իւրեանց. և գոհանային զԱստուծոյ ։ Եւ ընդ հրամանի սրբոյն յովսէփայ կաթուղիկոսի զառաջիկայ ամսին քաղոց մինչև 'ի տօն յայտնութեան կատարեցին պահօք և աղօթիւք՝ 'ի շնորհակալութիւն յաղթութեանցն եղելոց, և 'ի յաջողութիւն առաջիկայից. քանզի և օր քան զօր պատրաստէին զանձինս 'ի մեծ նահատակութիւն ընդդէմ պարսից, գիտելով՝ թէ յազկերտ ունի յառնել ընդդէմ իւրեանց ամենայն զօրութեամբ իւրով ։

Ակն ունէին գտանել ինչ օգնութիւն 'ի յունաց ընդ խնդրոյ դեսպանացն՝ զորս արձակեցին առ նոսա, այլ 'ի դերև ելին 'ի մարդկային յուսոյ. քանզի և տէրն յունաց պատաղեալ էր յայնժամ յեկեղեցական աղմուկս և 'ի քննութիւնս ժողովականս 'ի պատճառս ժանտին եւտիքեայ. թող զի 'ի նոյն աւուրս մեռաւ թէոդոս, և յաջորդ նորա մարկիանոս զանգիտեալ յերեսաց յազկերտի, մանաւանդ թէ և գրգռեալ 'ի բանսարկու արանց կարգելոց 'ի վերակացութիւն արևելից՝ չկամեցաւ քակել զբարեկամութիւն տէրութեան ընդ պարսիկս, և ձեռն տալ հայոց ։ Զայն իբրև իմացան նախարարքն և եպիսկոպոսունք հայոց, ոչ ինչ զչարեցան. այլ յղեցին անդրէն գիր սիրոյ առ ուխտ եկեղեցւոյն յունաց՝ պատմելով նոցա զյաջողութիւն, զոր արար տէր ինք-

նին

նեն ը՟ Հայս ։ և խնդրեցին 'ի նոցանէ փոխանակ մարմնաւոր օգնականութե՟ զձեռնտուութի՟ աղօթից ։ զի ո՟չ սկսաք ասեն , 'ի նմին և կատարեսցուք ։

Իսկ յազկերտ արքայ պարսից 'ի վ՟ր հասեալ զօրութե՟ Հայոց և յաջողութե՟ ն՟ց , խորհեցաւ նենգանօք հաշտութի՟ խօսել ը՟ նոսա , և թոյլ տալ ն՟ց կալ 'ի խաղաղութե՟ ։ զի յանկարծակի հասցէ 'ի վ՟ր ն՟ց ։ Զայս գիտելով և Հայոց՝ չետուն տեղի սուտակապա պատգամաւորութե՟ ն՟ր ։ մեք ասեն ապրեալքս զօրութե՟ն ա՟յ , և հաստատեալքս 'ի յոյս ք՟ի՝ ոչ պատրիմք այսուհետև իբրև զտղայս , այլ պատրաստ եմք ա՟մ փորձութե՟ց և մահու 'ի վ՟ր եկեղեցւոյ ս՟բյ ։

Ապա 'ի յաջորդ ամի 'ի սկիզբն գարնայնոյ յայտնապէս պատերազմ բացեալ յազկերտի՝ յղեաց զզօրավարս իւր 'ի Հայս անհամար զօրօք և բազմութ՟բ փղաց , պատուէր հրամանի տուեալ ն՟ց սատակել զա՟մ այր քրիստոնեայ յերկրին Հայոց , փոխանակ զի չաւին յանձն զօրէնս մոգութե՟ , և կոտորեցին զմոգս և զայլ պարսիկս ։ և այնպէս բռնանալ երկրին , և կամայ ակամայ ձգել զմնացեալսն 'ի կրակապաշտութի՟ ։ Եւ էր վերակացու գործոյն միհրներսեհ հազարապետ արքունի ։ որոյ եկեալ 'ի փայտակարան՝ կոչեաց առ ինքն զուրացեալսն վասակ ։ և տեղեկացեալ 'ի նմանէ զվիճակ Հայոց միաբանելոց ը՟ վարդանայ՝ զգուշացաւ անդէն և անդ 'ի մարտ մխել ։ այլ խոստացեալ վասակայ բազում ինչ՝ մինչև Թագաւոր Հայոց զնա կացուցանել, յորդորեաց՝ զի հնարիւք քակտեսցէ զմիաբանութի ազգին ։

Յայնժամ և վասակ ամանն չարուէ 'ի գործ եդեալ զամ հարարուեստ խաբէութիս իւր՝ սկսաւ սուտ երդմամբք հաւանեցուցանել նախ զսիւնիս, թէ յազկերտ խաղաղութի խնդրէ, և վարդան զթշնամութի յեղծումն Տլին Հայոց․ ապա և 'ի ձեռն սուտ երիցանց և սարկաւագաց աւետարանս շրջեցուցանէր ը ամ Տն Հայոց 'ի հաստատել զխաղաղասիրութի Թագաւորին․ և այնչափ ինչ արար, զի բազումք 'ի հայաստանեայց խորշեցան 'ի վարդանայ, և ոչ սակաւք յընկերաց նր 'ի բաց որոշեցան 'ի նմանէ․ Թո՛ղ զի և աղուանք և վիրք օտարացան, և հոնք չառին յանձն նիզակակից լինել․ այլ և յոյնք իսպառ ձեռնթափ եղեն․ քանզի ուրացեալն վասակ գտեալ զայլ ոմն վասակ անուն մամիկոնեան վերակացու Հայոց՝ որ 'ի բաժնին յունաց, 'ի ձեռն նր անդադար չարախօսէր զվարդանայ և զընկերաց նր մինչև 'ի դուռն կայսեր ։

Օայս ամ իբրև ետես միհրներսեհ, ուրախ եղև յոյժ, և շնորհս կալաւ անօրինին վասակայ իբրև քան զինքն անօրինագունի․ և յետ կարգելոյ զքանակն պարսից ըդէմ պատրաստուէ զօրացն վարդանայ՝ ը լրտեսուէ վասակայ, յանձն արար զհոգս պատերազմին 'ի ձեռս մեծի զօրավարին, որ կոչիւր մուշկան նիւսալաւուրտ, պատուէրելովն զհետ երթալ խրատուն վասակայ . և ինքն դարձ արարեալ 'ի պարս առ թագաւորն՝ զա̃մ հնարս վասակայ ուրացելոյն պատմեաց իբրև զիւր գործ , և զնա ը̃վայր եհար և ատելի կացոյց յաչս յազկերտի ։

Իսկ քաջն վարդան սպարապետ հայոց յորժամ ետես զյայտնի չարութի̃ վասակայ՝ որով անկաւ երկպառակութի̃ 'ի մէջ ազգին , թէպէտև գիտաց այնուհետև զմօտալուտ վտանգ կորստեան հոգւոց և զտնակործան աղէտս՝ իբրև 'ի պատուհաս մեղացն , որով բարձաւ թգ̃րութի̃ հայոց և քահանայապետութի̃ 'ի տանէ սբ̃ լուսաւորչին առ մեծն սահակաւ , այլ ոչինչ թերեհաւատեցաւ 'ի յուսոյն որ առ ա̃ծ . զօրացաւ տր̃ , և եդ 'ի մտի ոգւով չափ ձգնիլ վ̃ս հաւատոյ՝ դնելով զանձն 'ի վ̃ր եկեղեցւոյ սբ̃յ ։

Սա̃յ իբրև էառ զլուր պատրաստութե̃ մեծի գնդին պարսից՝ որ 'ի փայտակարան , առաքեաց պատգամաւորս առ ուխտապահ նախարարս և առ միաբանեալսն ա̃մ , որք յաղագս տօնի զատկին սփռեալ էին 'ի տունս իւրեանց , յորդորել զն̃ս ոչ 'ի մարմնաւոր պատերազմ , այլ 'ի հոգևորն նահատակութի̃ . Աւանիկ ասէ գունդ բազում հասեալ գայ՝ բերելով ա̃ծասիրացն պսակս երկնաւորս . արդ որք ցանկայք առնուլ զպսակն վկայութե̃ , անձապարեցէք և մի հեղգայք , զի մի վրիպեսցի ոք և զղջանայցէ . ապա թէ ոք այլազգ ինչ խորհի , ո̃պ և այլքն՝ որք խոտորեցան զկնի սատանայի , դադարեալ հանգիցէ՝

ցէ՝ ուր և հաճոյ թուեսցի ինքեան. քանզի ոչ ոք պսակի ը̅ ընկերս իւր, թէ ոչ չարչարի ը̅ նոսա. այլ իւրաքանչիւր ոք անձին իւրում գանձէ զհոգեղէնսն կ̃մ զյաւիտենականսն:

Յայնժամ եկին ժողովեցան փափաքողք նահատակութեան և վրէժխնդիրք ճշմարտութեան՝ նախարարք և ազատք հանդերձ իւրաքանչիւր առանձին գնդաւ յարտաշատ քաղաք, յաւուրս յինանց քանի մի աւուրբք յառաջ ք̅ զտօն համբարձման փրկչին. և էին անուանք գլխաւորաց և զօրավարաց նոցա այսոքիկ. Վարդան մամիկոնեան սպարապետ և առաջնորդ համօրէն բանակին. Ներշապուհ արծրունի երևելին ՚ի նախարարս, և ազգակից նորին վահան արծրունի. խորէն խորխոռունի. արտակ պալունի տ̅րն մոկաց. վահան ամատունի. գիւտ կ̃մ գունտ վահևունի. հմայեակ տ̅րն դիմաքսենից. թաթուլ դիմաքսեան տ̅րն վանանդայ. գազրիկ դիմաքսեան տ̅րն աբեղենից. արշաւիր արշարունի տ̅րն կամսարականաց՝ փեսայ վարդանայ. շմաւոն անձաւացի. տաճատ գնթունի. առավեմ գնունի. խորայրով գաբեղեան. կարէն սահառունի. ներսեհ քաջբերունի. փարսման մանդակունի. արսէն ընծայացի. այրուկ սղկունի. ապրսամ արծրունի. շահ ախոռապետ. վրէն տաշրացի. խուրս և գաբեղին սրուանձտեանք, հանդերձ այլ ևս ազատորերով և սեպհօք, և նիզակակցօք նոցա:

Եւ էր թիւ համարոյ համօրէն զօրականացն ք՟նի՝ ը՟ հեծեալ և ը՟ հետեւակ, վաթսուն և վեց հազար այր · որոց ամենեցուն մի սիրտ էր և մի կամք՝ կամակար մեռանել վ՟ն անուանն տ՟ն՝ 'ի մեռուցանել զթշնամիս ճշմարտութե՟ · զի ոչ այլ ճանապարհ գոյր ն՟ց պաշտպան լինելոյ ք՟նական հաւատոյ ը՟դէմ հեթանոսաց ։ Եմին իբր եկեալ մտանէին 'ի հանդէս ճակատու ն՟ց և բազմութիւք քահանայից և պաշտօնէից եկեղեցւոյ · յորս երեւելիքն էին ս՟բն յովսէփ կաթողիկոս ա՟մ հայոց, ս՟բն սահակ եպ՟ս ռշտունեաց, և ս՟բն ղեւոնդ երէց վանանդացի · զի ոչ եթէ մարմնաւոր ինչ կռուի համարէին զառաջիկայ գործն, այլ ծաժողով ճակատամարտ 'ի պաշտպանութի ս՟բ հաւատոյ · յորում և ցանկային հեղուլ զարիւնս իւրեանց ը՟ երանելի նահատակացն 'ի պարծանս անուանն ք՟նի ։

Եւ եղև յորժամ եկն եհաս մուշկան նիւսալաւուրտ սպարապետն պարսից 'ի գաւառն զարեւանդ և 'ի հեր բազմագունդ զօրօք իւրովք՝ հանդերձ փղասկաւ և բազմութ՟բ գործակցաց ն՟ր, և սկսաւ ասպատակ սփռել 'ի մերձակայ տեղիս, փութանակի ընտրեաց քաջն վարդան 'ի զօրաց իւրոց սեպուհ մի առանձար անուն ամատունի՝ երկու հազար հետեւակօք և երեք հարիւր հեծելովք, և առաքեաց ը՟ առաջ ասպատակաւորաց ։ Յորոց վ՟ր հասեալ առանձարայ՝ եհար և սատակեաց զբազումս 'ի ն՟ցնէ, և զմնացորդս փախստական էարկ 'ի մեծ բանակն · և ինքն իւրովքն հանդերձ դարձաւ ողջանդամ առ Վարդան. և եղև ուրախութիւն մեծ զօրուն Հայոց:

Իսկ Մուշկանն Նիւսալաւուրտ զահի հարեալ ը̃ զօրութ̃ին Հայոց՝ ’ի խորհուրդ մտանէր ը̃ չարին Վասակայ. զի վերստին հնարեսցի քակտել սուտ անուամբ հաշտութեան զմիաբանութիւն գնդին Հայոց: Իսկ նա ը̃ իւրում̃ն անպատկառ կեղծաւորութեան առաքեաց ’ի բանակն Վարդանայ զսուտ երիցունս իւր հանդերձ պարսիկ իշխանաւ՝ խօսել զխաղաղութենէ: Բայց քանզի յայտնի էր ամ̃ իմաստուն մտաց խարդախութիւն չարին, կորակոր յետս դարձան՝ որք առաքեցանն. սակայն արկին և որոմն ’ի միտս ոմանց ’ի պարզամտաց. որք թէպէտև ’ի բանակի անդ Վարդանայ կային, այլ սիրտք նց̃ միտեալ էին զհետ Վասակայ:

Յետ այսորիկ այլ ևս յառաջ խաղացոյց Մուշկան Նիւսալաւուրտ զբանակ իւր՝ գալ հասանել յԱրտազ գաւառ Հայոց: Զայն իմացեալ մեծին Վարդանայ՝ աճապարեաց և ինքն դիմել ը̃ առաջ գնդին պարսից, և էջ բանակաւ իւրով ’ի մեծ դաշտն Արտազու մերձ ’ի գիւղն Աւարայր առ Տղմուտ գետով՝ յաւուր ուրբաթու մեծի պենտեկոստէին: Իբր տեսեալ Հայոց ’ի հեռաստանէ զպարսիկս այն ինչ հասեալ, և յանհոգս դադարեալ ցրիւ այսր և անդր, թէպէտև դիւրաւ կարէին խուժել զն̃ո և վնաս մեծ առնել, այլ թոյլ տուեալ դադարեցին և ինքեանք զայն օր ․ զի ոչ էր այնուհետև կամք նց՝ հնարիւք որսալ զմարմնաւոր յաղթութի, այլ ազատադէմ շահատակութբ մտանել զանձինս ՚ի տենչալի մարտիրոսութի ։ Ապա հանդարտեալ առ ետեղ՝ սկսան առաւել զհոգևոր պատրաստութի հոգալ քան զարտաքինն ․ և նա ինքն պարագլուխն նահատակաց քնի քաջն վարդան լցեալ հոգւով՝ խօսել սկսաւ առ նիզակակիցս իւր բանս հոգևորական մխիթարուե, և զուարթացուցանել զամենեսին ՚ի տր ։

՚Ի բազում պատերազմունս մտեալ է մեր ասէ, և առաւել յաղթօղ գտեալ յամի՝ ք թէ յաղթեալ ․ այլ այն ամ մարմնոյ պարծանք էին ՚ի հրամանէ երկրաւոր թագաւորի ․ ուր որ փախչէրն՝ վատանուն երևէր յաի, և պատուհաս մարմնոյ ընդունէր ՚ի թագաւորէն ․ իսկ որ քաջութբ յառաջ մատչէր, քաջ անուն ազգի ժառանգէր, և պարգևս մեծամեծս ՚ի մահկանացու թագաւորէ ըունէր ․ ոմ և մեք իսկ աւասիկ յիւրաքանչիւր մարմինս ունիմք վէր և սպիս բզմս ՚ի նշանակ արութե, ոյր վն առեալ է մեր և պարգևս մեծամեծս ։

Այլ անարգ և անօգուտ համարիմ զայն քաջութիս և զայն պարգևս, զի խափանելի է ամն ․ իսկ արդ՝ եթէ վն մահկանացու հրամանատուի զանձինս ՚ի մահ դնելով՝ զայն արուիս կատարէաք, ո՛րչափ ևս առաւել արժան է այժմ զնոյն առնել վն անմահ թագաւորին մերոյ, որ տրն է կենդանեաց և մեռելոց , և ունի հատուցանել իւրաքանչիւր ըս գործս իւր ։ Ապաքէն թէպէտ և 'ի խոր ծերութի հասցուք , հա՛րկ է 'ի ժամուն ելանել 'ի մարմնոյ աստի ․ այլ գո՛րծ է , զի յետ մեր յաստեաց երբ և իցէ՝ մնացուք առ ած կենդանի , որ ոչ ևս ելանիցեմք 'ի նմանէ ։ Արդ աղաչեմ զձեզ քա՛ջ նիզակակիցք իմ ․ գիտեմ զի բզմք 'ի ձէնջ լաւագոյն են քան զիս արութբ , և դահու 'ի վեր ըս հայրենի պատուոյն ․ բայց յորժամ ձերով կամօք և յօժարութբ առաջնորդ և զօրավար զիս ձեզ կացուցէք , ընդունելի լիցին բանք իմ 'ի լսելիս ձեր ամենեցուն՝ մեծի և փոքու ։ Մի զանգիտեսցուք 'ի բազմութէ հեթանոսաց , և մի յահագին սրոյ առն մահկանացուի ըզթիկունս դարձուսցուք ․ զի եթէ տացէ տր յաղթուի 'ի ձեռս մեր , սատակեսցուք զզօրութի նց ․ զի բարձրասցի կողմն ճշմարտութե ․ ապա եթէ հասեալ իցէ ժամանակ կենաց մերոց սբ մահուամբ պատերազմիս , ընկալցուք խնդամիտ սրտիւ ․ բայց միայն յարութի քաջութես վատուի մի խառնեսցուք ։ Դուք ինքնին իսկ գիտէք , եթէ զիա՛րդ ոմանք 'ի մէնջ յակամայ կամս և խաբանօք յանձն առաք զկամս ամպարշտուե թագաւորին , և վտանգեցաք զանձինս առ 'ի կարօղ լինելոյ ազատել զեղբարս մեր առ հասարակ 'ի վտանգէ անտի կորստեան հոգւոյ և մարմնոյ՝ մարտնչելով ըս անօրէն իշխանին 'ի վր ածատուր օրինաց ․ և արդ զի եհաս ժամ օրինօք պատերազմիս զնոյն վճարել , քան լիցի մեզ թուլանալ, և կրել յանձին զանուն ուրացութե՟ն իբրև զայլսն , և այնպ՟ս վ՟ն օգտի մարմնաւոր սիրելեաց զհոգիս կորուսանել , և զա՟ծ ը՟ մարդոյ փոխանակել : Եւ զի տ՟ր ինքնին օգնական է մեզ , յայտնի եղև յերկուս և յերիս կռիւս , յորս զօրացաք տ՟բ . զզօրսն արքունի հարաք , զմոգսն սատակեցաք , և զպղծութի՟ն կռապաշտութե՟ն 'ի տեղեաց տեղեաց սրբեցաք . և զանօրէն հրամանն թագաւորին առ ոտն հարեալ ունայնացուցաք , և զբարձրութի՟ն ամբարտաւանութե՟ն ն՟ր 'ի խոր խոնարհեցուցաք : Եւ արդ մի ակնկալցի որով և աղեղամբ և նիզակաւ յաղթել անվանելի եկեղեցւոյն ք՟սի : Հաստատուն կացէք յանշուշտ զօրագլուխն մեր , որ ոչ երբեք մոռասցի զգործ նահատակութեանս :

Ո՛վ քաջք , և այս մեծ պարգևք են մեզ 'ի տ՟նէ՝ մեռանիլ 'ի փառս անուա՟ն ն՟ր . զի թէ զթշնամիս ա՟ծային օրինաց սատակելով պարծանս ժառանգեցուք յերկրի , և վարձուց մեծաց ակնունիմք յերկինս , ո՞րչափ ևս առաւել՝ եթէ մեք մեռանիմք 'ի վ՟ր մեծի վկայութե՟ն տ՟ն մերոյ յ՟ի ք՟սի : Եւ այս ո՛չ ամենեցուն է , այլ որոց պատրաստեալ է 'ի բարերար տ՟նէ . որում և երկնաւորք արդեօք ցանկային , թէ գոյր հնար ն՟ց մեռանելոյ : Եւ ահա մեզ պարգևեալ տեսանեմք զայս շնորհ աննախանձ պարգևատու՟ին . զի լցցի ասացեալն , եթէ ուր առաւել եղեն մեղքն , անդէն առաւելան շնորհքն ա՟յ :

Հա՞պա ո՜չ երբեմն առաւելապէս երևեցաք մարդկան ամպարշտեալք, այժմ սովին հանդիսիւ նահատակութե՟ կրկին առաւելութ՟բ երևեցուք արդարացեալք՝ մարդկան և հրեշտակաց և հօրն բոլորեցունց. և ուրախ արասցուք զմարդիկ և զհրեշտակս՚ի վ՟ր մեր։ Նու արդ եկն եհաս ժամանակ, զի զա՟մ պատճառս տրտմութե՟ և զկեղտ անուն ուրացութե՟ ՚ի բաց բարձցուք. և որք երբեմն իբրև թախծեալ սգաւորք յոգի և ՚ի մարմին՝ շրջէաք, այսօր երկոքումբք զուարթացեալ յա՟ծ խնդասցուք. քանզի և զբարերար տ՟րն ը՟ մեզ տեսանեմք յառաջնորդութ՟ի։

Ոչ՛ մեզ մարդ զօրավար, այլ՝ զօրագլուխն ա՟մ մարտիրոսաց ք՟ս. որ հանդիսադիրն է մրցանացս, և պսակիչ վաստակաւորաց. աւադիկ բացեալ է փրկիչն զդուռն արքայութե՟, և մնայ ընդունել զամենեսին զմեզ և ուրախ առնել. որոյ ուրախութի՟ն մշտնջենաւոր է և անանց և անվախճան. փութասցուք ժամանել առ նա առանց յապաղելոյ. մի՛ ոք յետնեալ գտցի ՚ի մեծէ բարեմասնութ՟էս։ Այլ ես բաժակին՝ որում վաղնջուցն ցանկացեալ էի, պապաքեալ կամ, և փափաքանօք ընդունիմ. և ը՟ գրեցելումն գոչեմ, զբաժակ փրկութե՟ ընկալայց, և զանուն տ՟ն կարդացից։

Այսպիսեօք յորդառատ բանիւք և հոգելից զուարթութ՟բ խօսեցաւ առաքինի զօրավարն ը՟ ա՟մ զօրս. և ՚ի ձեռս առեալ զգիրս մակաբայեցւոց՝ ընթեռնոյր ՚ի լսելիս բազմութե՟

մուն՟ զմակաբեանց արունիս ը՟դէմ հեթանոսաց 'ի վ՟ր ա՟ծային օրինաց, և 'ի նոյն խրախուսէր զամենեսին. և զմի մի քաջալերէր և սրտապնդէր, և զա՟մ պէտս զինուց նոցա լնոյր. և զուարթագին զինքն ցուցանէր ամենեցուն ։ Եւ իբրև ընդ երեկս լինէր, աւագան ուղղեալ քահանայից՝ մկրտեցին զերեխայս, որ գտան 'ի զօրուն. ը՟ որում զայնու ժամանակաւ յերկարէր մկրտու՟ի ոմանց յարբունս հասակի. և զա՟մ գիշերն անցուցանէին 'ի հոգևոր մխիթարու՟իս ։

Ընդ և երանելին ղևոնդ երէց՝ այր լի հոգւով սր՟վ, և առատ 'ի բանս վարդապետու՟ն, հրաման ընկալեալ 'ի սր՟յն յովսեփայ կաթուղիկոսէ, և յեպ՟սէն սահակայ՝ ըստ փափաքելոյ զօրաց և զօրագլխաց, խօսեցաւ բազում ինչ 'ի յորդոր ք՟ակ բանակին, յուշ առնելով նոցա զկատարումն երջանիկ նահապետաց և մարգարէից և առաքելոց և մարտիրոսաց վկայական հանդիսին 'ի վերայ ճշմարտու՟ն և կարգաց ա՟ծպաշտու՟ն՝ 'ի վրէժ խնդրու՟ի փառացն ա՟յ. ևս առաւել զզենումն անպարտական և անմահ գառինն ա՟յ 'ի փրկու՟ի տիեզերաց. որ իւրով մահուամբն խափանեաց զիշխանու՟ի մահու ։

Եւ արդ ասէ՝ եթէ մահուամբ մահ մեռանի, մի երկիցուք մահակից լինել ք՟ի փրկչին մերոյ. զի եթէ ը՟ նմա մեռանիմք, ընդ նմին և կենդանանամք ։ Զայս գիտելով եղբարք՝ մի թուլութ՟բ լքանիցիմք, այլ՝ պնդութ՟բ սրտի և հաստատուն հաւատովք կամակար յարձակեսցուք 'ի վ̃ր թշնամեացն հաւատոյ, որ յարուցեալ գան 'ի վ̃ր մեր ։ Մ՝եր յոյսն մեզ կրկին երեւի. եթէ մեռանիմք, կեանս ընդունիմք. և եթէ մեռուցանեմք, նոյն կեանք մեզ առաջի կան ։ Որ միանգամ ճշմարտութ̃ միացե̃լ էք ը̃ սիրոյն քի̃, հոգւոյ աչօք տեսանէք զաներեւոյթ յստակ լոյսն ճառագայթից իմանալի արեգական. որ լուսաւոր արար և առնէ զսիրտս ձեր, և ուղղեաց 'ի վեր յերկինս. և 'ի բարձրութ̃ի անդր ա̃ծային մեծութ̃ե իւրոյ ձգեաց զսիրելիս իւր 'ի ժառանգութ̃ի անանց և անտրտում ուրախութ̃ե ։

Մ՝ի տեարք իմ պատուականք՝ յետ այսչափ 'ի բարձունս վերանալոյ՝ այսրէն յերկիր անկեալ թաւալիցէք. այլ զտեղի առեալ անդրէն 'ի բարձրութ̃ն հաստատեսցուք ։ Եւ այն զի՝ եթէ հայեսցուք 'ի ստորին կողմ երկրիս, տեսանեմք զսա լի ա̃մ ապականութ̃բ և ազգի ազգի թշուառութ̃բք անբերելի աղետից հոգւոյ և մարմ̃նոյ. յորս առհասարակ ըմբռնեալ կան ազգ մարդկան, և հանապազ տանջին 'ի վիշտս դառնութ̃ե ներքոյ և արտաքոյ. իսկ որ թուին մեզ՝ եթէ յանդորրու վայելեն, յաջողեալք 'ի մեծութ̃ի և փափկացեալք ուրախութ̃բ 'ի պակասելի կեանս, մեծամտեալք հպարտութ̃բ յանցաւոր փառս ճոխս, և օտարացեալք յա̃յ՝ փոխանակելով զարարիչն ը̃ արարածս, այնպիսիքն են՝ որ գլխովին կուրացեալ են հոգւով, և անմասն 'ի ճշմարիտ կենացն, ողորմելի

մելի .քան զա͞մ մարդիկ :

ԱՅԼ մեր բացահայտեաց աչօք տեսանել զլոյսն երկնաւոր , մի՛ պատահեսցէ մեզ խաւարն արտաքին : Նորանի՛ տամ դասուցդ ընտրելոց , որք հրաւիրեալդ էք 'ի մասն ժառանգութե՛ սրբոցն 'ի լոյս , լինել ժառանգորդ վերին իմանալի քաղաքին . ուր նստի ք͞ս աջմէ հօր առաջնորդն փրկութե՛ ձերոյ . այն՝ որ քաջութե՛բ նահատակեցաւ ը͞դդէմ բանսարկուին , և զնոյն արութի՛ ուսոյց գործակցաց իւրոց . յորոց կարգի և դուք այսօր երևեցայք , օրհնեալք յաջոյն բարձրելոյ , և զինեալք հաւատովք ը͞դդէմ աներևոյթ թշնամւոյն , և պատենազէն զրահիւքդ ը͞դդէմ արբանեկաց սատանայի :

Գիտէք դուք ամենեքեան , զի յառաջ ժամանակաւ 'ի մտանել ձեր 'ի պատերազմ՝ թէպէտև անպակաս ունէիք ը͞ ձեզ զքահանայս 'ի բանակի , այլ 'ի ժամ ճակատուցն յանձն արարեալ զձեզ յաղօթս ն͞ց՝ յամուր տեղւոջ ուրեք թողուիք զնոսա . իսկ այսօր եպ͞ք և երիցունք և սարկաւագունք , սաղմոսերգօղք և դպրակարդացք՝ իւրաքանչիւր կարգաւ կանոնաւ իւրեանց իբրու զինուվառեալք և պատրաստեալք 'ի պատերազմ, կամին ը͞ ձեզ յարձակիլ հարկանել զթշնամին ճշմարտութե՛ . և եթէ մեռանել ևս հասցէ յայսմ հանդիսի , ոչինչ են զանգիտելոց . քանզի լաւագոյն համարին զմեռանելն քան զմեռուցանելն : Որ և կրկին աչս ստացեալ ունին . հաւատոյ աչօք զկատա րումն նախնի նահատակաց ա̃մի տեսանեն, և մարմնոյ աչօքս զքաջութ̃ի ձերոյ նահատակութ̃եդ . մանաւանդ թէ 'ի ձեզ զերկոսեանն իսկ տեսանեն . ո՞չ և դուք իսկ տեսանէք նովին տեսութ̃բ զքարկոծանս մարգարէիցն, զչարչարանս ս̃բ առաքելոցն, և զառաքելաշնորհ հայրապետաց, ը̃ որս և զմեծի նահատակին գրիգորի լուսաւորչին հոգւոց ձերոց . և միանգամայն զպանումն ա̃մ ս̃բ մարտիրոսաց . որոց մահուամբն հաստատեցաւ ս̃բ եկեղեցի . և հեղումն արեան նոցա եղև 'ի պարծանս երկնաւորաց և երկրաւորաց . և նոյն նահատակութ̃ի անպակաս կատարեսցի յեկեղեցւոջ՝ մինչև 'ի միւսանգամ գալուստ փրկչին, եթէ՛ տանջանօք և եթէ մահուամբ 'ի սէր կենարարին . թո՛ղ զորս նահատակին 'ի ճգունս պահոց և գետնատարած անկողնոց, և յայլ ազգի ազգի առաքինութ̃իս ը̃ն ա̃յ քաղաքավարութ̃բ . և սոքա ամենեքեան գեղեցիկ վաճառաշահութ̃բ զընեն ը̃ անցաւորիս զանանցն և ը̃ ապականացուիս զանեղծութ̃ի :

Եւ ահա 'ի սոյն վիճակ բարերջանիկ հրաւիրեցայք և դուք ը̃ դասս երանելի վկայից . զորոց զպատուականութ̃ին սաղմոսերգուն գոչէ ասելով . պատուական է առաջի տ̃ն մահ ս̃բց իւրոց : Ահա և ճգնասէր հայրապետն գրիգորիոս վարդապետն ձեր կոչէ զձեզ յերկնային քաղաքն եէ̃մ յամենատենչ և յանուշահոտ ընթրիսն ք̃ի, ուստի մերժեալ են ցաւք և տրտմութ̃իք և հեծութ̃իք :

Օ այս ա՟մ և առաւել քան զայն խօսելով ս՟բյն Ղեւոնդեայ յորդաբուղխ իմաստութ՟բ և հոգեշնորհ վարդապետութ՟բ՝ ընդ որ ուրախութ՟բ զսիրտս ամենեցուն. և ս՟բն յովսէփ հայրաբար յանձանձէր զամենեսին, և քաջալերէր ՚ի տ՟ր, և յորդորէր յա՟ծ ապաւինել ՚ի բոլոր սրտէ ։ Եւ այսպիսի հոգեւոր բանիւք սփոփեալ զա՟մ գիշերն, և ա՟մի՛ զօրացեալ զինուո՛րացն ք՟սի՝ վառեցան զինու ս՟բ հոգւոյն իբրև անվանելի ամրութ՟բ. և այնպէս բորբոքեցաւ յոգիս ն՟ց հուր սիրոյն ք՟սի և փափագ հանդիսի նահատակութե՟, մինչև զսովորական ժամս գիշերոյն կարծէին երկայնագոյն քան զայլ գիշերացն, և բաղձային փութով տեսանել զառաւօտ փրկութե՟ն. ո՟պ զի հասեալք ՚ի կատարումն՝ արբցեն զբաժակ արքայութե՟ն երկնից ։

Եւ իբրև այն ինչ հաւախօսն մերձենայր, հրաման ետ ս՟բն յովսէփ հանդերձ ա՟մ քահանայիւք կատարել զպաշտօն կանոնական աղօթից ձայնակցութ՟բ ա՟մ զօրականին. և ապա սեղան կանգնեալ քահանայից՝ մատուցին զս՟բ խորհուրդ պատարագին, և հաղորդեցուցին զամենեսեան մեղսաքաւիչ և կենարար մարմնոյ և արեանն տ՟ն. և այնպէս կազմ և պատրաստ սպառազինեալ հոգւով՝ սկսան ա՟մ բազմութ՟ի զօրացն մեծաւ զուա՛րթութ՟բ աղաղակել, և ասել. Հաւասարեսցի՛ մահս մեր մահու արդարոցն, և հեղումն արեանս մերոյ ը՟ արիւն ս՟բ մարտիրոսացն. և հաճեսցի ա՟ծ կամաւոր պատարարագաւս, և մի տացէ զեկեղեցի իւր 'ի ձեռս հեթանոսաց ։

Իսկ 'ի մերձենալ ժամու ելից արեգական, յորժամ յօքնախուռն գունդն պարսից վառեալ կազմ էին 'ի պատերազմահագին պատրաստութ̃բ հանդերձ բազմութ̃բ փղաց, յայնժամ և քաջն վարդան առեալ զօրհնութ̃ի 'ի ձեռն քահանայից՝ յարդարէր զճակատ իւրոյ բանակին՝ բաժանեալ 'ի չորս գունդս հաւանութ̃բ աւագանւոյն հայոց, տալով զմի մի գունդ յիւրաքանչիւր երևելի նախարարս, և թևակից նմ̃ զայլս 'ի կրտսերագունից. նոյնպէս և յինքն առնոյր զգունդն չորրորդ՝ ընտիր ընտիր նիզակակցօք հանդէպ հզօրագոյն կողման պարսից ։ Իսկ զհամազասպեան զիւր եղբայրն թողոյր վերջապահ զօրուն՝ պատուէր տուեալ նմա մի զոք բռնադատել, այլ յորդորել միայն բանիւք յաղագս իւրեանց փրկութ̃ե. քանզի խիթայր 'ի թուլամտաց ոմանց համախոհ լինել ը̃ վասակայ, որ էր 'ի բանակին պարսից հանդերձ ուխտանենգ արամբք ։

Իսկ իբրև պատրաստեցան կողմանքն երկոքին, յամբառնալ դրօշակաց և 'ի հնչել փողոց մարտչէին մօտ 'ի միմեանս՝ ունելով 'ի միջի զտղմուտ գետն. և նախ նետիւք և նիզակօք վտանգէին զմիմեանս, և ահագին շառաչմամբ զերկիր դողացուցանէին. և յանկանիլ վիրաւորաց առ ափն գետոյն և 'ի կարմրանալ ջուրցն յարենէ, թանձրամիտքն յիմարէին և վատասիրտք լքանէին, քաջքն խի-

զա

զախտէին, և նահատակքն գոչէին :

Եւ ՚ի զանգիտել պարսից ը՟ գետոյն անցանել, գունդքն Հայոց համարձակ անցեալ, ձի ՚ի վեր առեալ յարձակէին, և սաստկագ՟ս բաղխէին ը՟ թշնամիս հաւասարս. և ՚ի խառնիլ պատերազմին՝ սաստկանայր կոտորածն ՚ի սուր սուսերի. և որք անուանիք յերկուց կողմանց մեռանէին, և բազում վիրաւորք յերկիր անկեալ՝ դիաթաւալ խաղային. ուր անհաւատք դառն հեծութե՟ մնչէին, և հաւատացեալքն յարեան իւրեանց թաթաւեալ՝ ուրախութե՟ աւանդէին զոգիս ՚ի ձեռս փրկչին :

Յայնժամ մեծի տագնապի ՚ի վեր հայեցեալ քաջն Վարդան՝ տեսանէր զձախակողմն գնդին Հայոց վտանգեալ առաջի ընտիր ընտիր զօրուն պարսից. մեծաւ ուժով ՚ի տեղին յարձակէր, և զաջ թեւն գնդին պարսից բեկեալ չարաչար հարուածով՝ արկանէր ՚ի վ՟ր փղաց. և զգազանսն ճեղքեալ՝ շրջան առնոյր և կոտորէր մինչև ՚ի նոյն տեղի : Եւ ՚ի ցրուիլ բազմութե՟ յառաջոյ ն՟ր՝ ը՟ առաջ ել ն՟ն նիզակակիցն Վարդանայ արին Վահան Արծրունի, և դարձոյց զն՟ն յետս սաստկութե՟. և այնպէս ՚ի մէջ փակեալ զն՟ն երկուց քաջաց թիկնապահօք իւրեանց՝ կոտորեցին զբազումս ՚ի նոցանէ, և զայլ ևս գունդս սփռեալս ահացուցին. և այնպէս շտապ տագնապի ՚ի վ՟ր հասուցին. մինչ գունդն հզօր՝ մատեան կոչեցեալ, և անմահ կարդացեալ առ պարսիկս՝ քակտեալ բաժանեցան ՚ի մեծամուր պատրաստութե՟ իւրեանց ։

Ընդ վտանգեր և ուրացեալն վասակ իւրովքն հանդերձ · այլ աճապարեալ թաքչէր անօրէնն 'ի մէջ փղաց , և անկեալ յամրափակ բանակն՝ զերծանէր ։ Զայս տեսեալ համախոհից չարին՝ որք գտանէին 'ի ծածուկ 'ի կողմն ճակատուն վարդանայ , սկսան շփոթիլ և շփոթ արկանել 'ի զօրականս ք՟րի · և ահ արկանելով նիզակակցաց՝ ոչ թէ անհնար իցէ առաջի կալ բազմութե՟ զօրու թըշնամեաց , սկսան 'ի փախուստ դառնալ · որով և հզօրք ոմանք սրտաբեկեալ քակեցան և ընկրկեցան յետս կոյս ճակատուն 'ի հովիտս լերանց ։

Բայց այլքն առհասարակ զպատերազմ տ՟ն պատերազմելով՝ հարկանէին վանէին զօրս առաջի իւրեանց · և աներկիւղ տուեալ զանձինս 'ի մահ՝ քաջութե՟ նահատակէին ։

Իբրև հայեցաւ մուշկանն նիւսալաւուրտ 'ի խառնամուրդ մարտին , և 'ի բազմութ՟ի կոտորածի իւրոցն յերեսաց վարդանանց , զոր ոչն կարծէր , գոչէր առ զօրս պարսից ուշ ունել առանձին գնդին վարդանայ · փութացուցանէր զարտաշիր փղապետ՝ հասուցանել զգազանսն 'ի տեղի անդր · և 'ի ձայն գալարափողոց ստիպեալ զիւր գունդն՝ յառաջամարտիկ զօրօք 'ի ներքս փակէր զվարդան և զօրս ընդ նմա ։ Իսկ կորովին վարդան իւրովք քաջ նիզակակցօք ոչ սակաւ նախճիրս 'ի տեղւոջն գործէր , և իբրև զբոց հնոցի ծախէր զգնդովս 'ի պարսից , ո՛չ յանձին վըտանգ տանդ հայելով, այլ զթշնամիս քնի վատնելով․ զի ոչինչ էր այնուհետև առաջի նորա մահ և կեանք, այլ բոլորովին 'ի սէրն քնի փոխարկեալ՝ մնայր փոխիլ 'ի մահուանէ 'ի կեանս․ որպէս և արժանի իսկ եղև առնուլ 'ի տեղւոջ անդ զկատարեալ նահատակութի․ զի յամենայն կողմանց պաշարեալ 'ի պարսից, և վիրաւորեալ 'ի բազմութէ նիզակաց և սուսերաց՝ անկանէր քաջ նահատակն․ և զուարթութբ աւանդէր զսբ հոգին 'ի ձեռս զօրագլխին իւրոյ քնի՝ հանդերձ նահատակակից ընտրելովք 'ի նր ։

Եւ եղև ը անկանիլ սբյն վարդանայ՝ և արևն 'ի մուտս խոնարհէր․ և զօրք հայոց մնացեալ առանց զօրավարի՝ դիմեցին սաստկութբ իւրաքանչիւր հանդէպ երեսաց իւրեանց, և վանեալ խորտակեալ զամ ախոյեանս իւրեանց՝ ելին 'ի պատերազմէ․ որով առաւել յահի եղեն պարսիկք, տեսեալ թէ ոչ իբրև զվատասիրտս 'ի փախուստ դարձան, այլ իբրև՝ զպատերազմոն վճարեալ՝ համարձակ 'ի բաց մեկնեցան․ թող զի տեսանէին, զի սակաւք ոմանք անկան 'ի սակաւութի զօրաց հայոց, և բազումք յոյժ 'ի բազմութի գնդից իւրեանց ։ Վոյ և առ զայրոյթ սրտին 'ի վր յարձակէին ոմանց ոմանց 'ի հայոց, զորս գտանէին այսր անդր ցրուեալ արտաքոյ բանակին, և բերեալ 'ի տեղի ճակատուն՝ սպանանէին զնս․ որոց և զայլս բազումս՝ որք զկնի պատերազմին ամրացան 'ի բերդս անառիկս հանդերձ քահա-

նայք

նայիւք , նենգաւոր 'ի վայր իջուցեալ կառափելին .

Այլ սրբեամբք յաղթող հանդիսացաւ բանակն հաւատացելոց , և բարձրացաւ բազուկ ճշմարտութե̃ն ը̃դէմ հակառակամարտից . մինչև 'ի միտ առեալ այնուհետև իշխանաց և զօրագլխացն պարսից՝ թէ անհնա՛ր է նուա՛ճել զքրիստոնեայս 'ի հեթանոսութի̃ն , հաւանեցուցին զթագաւորն՝ թողուլ զհայս 'ի կրօնս քրիստոնէութե̃ն իւրեանց . քանզի և յազկերտ ամբարտաւանն զինչ փոքր մի 'ի բարձրամտութե̃ն իւրմէ , և սրտաբեկ եղև յոյժ , յորժամ լուա՛ւ զքաջութ̃ նահատակին վարդանանց . զի ոչ ո̃ք կարծէրն՝ այնպէս վճարեցաւ . վ̃ն զի 'ի պարսից և 'ի դասուց ուրացելոց անկան յաւուր միում 'ի մեծի պատերազմի անդ երեքհազար հինգհարիւր քառասուն և չորս արք . յորս էին արք 'ի մեծ պատուա՛ւորաց էին և 'ի կարի սիրելեաց արքային : Իսկ 'ի հայոց 'ի պատերազմի անկան նուա՛զ քան զերեքհարիւր անձինս . այլ յետ վճարելոյ մարտին աստ անդ ձերբակալութ̃ մասնեալ 'ի ձեռս անօրինաց՝ նահատակեցան շատ ևս բազմութի̃ք . որով և թի՛ւ ամ̃ նահատակաց վարդանանց եհաս 'ի հազար երեսուն և վեց : Եւ այս է թի՛ւ համարոյ ն̃ց ը̃ անուա՛նք գնդի պարագլուխ ս̃ զօրավարաց :

Ի մարտի անդ կատարեցան ս̃ վկայքն ք̃ի՝ քաջն Վարդան մամիկոնեան սպարապետ հարիւր երեսուն և երեք ընտիր ընտիր արամբք .

րամբք ․ կորովին խորէն խորխոռունի՝ իննևտասն արամբք ․ արին արտակ պալունի յիսուն և եօթն արամբք ․ զարմանալին տաճատ գնթունի իննևտասն արամբք ․ իմաստունն հմայեակ դիմաքսեան քսանևերկու արամբք ․ հրաշակերտն ներսեհ քաջբերունի եօթն արամբք ․ մանուկն վահան գնունի երեք արամբք ․ արդարն արսէն ընծայեցի եօթն արամբք ․ յառաջադէմն գարեգին սրուանձտեան՝ երկու հարազատօքն, և ութևտասն արամբք ․ ը̃ ա̃մ՝ երկերիւր իննսուն և վեց ․ կա̃ երկու հարիւր ութսունևեօթն զօրականք՝ ինն զօրավարօք հանդերձ ։

Իսկ որք յայլևայլ նախարարութե̃ց 'ի նոյն աւուրս պատերազմի ըմբռնեցան և սպանան 'ի պարսից , կա̃ յամբոցաց իջուցեալ գլխատեցան , եղեն եօթն հարիւր քառասուն , կա̃ եօթն հարիւր յիսուն ։ Եւ այսպէս միահամուռ գումար նահատակաց սբ̃ց վարդանանց լինի հազար երեսուն և վեց հոգի ․ որք զանուանս իւրաքանչիւր գրեցին 'ի դպրուե̃ կենաց , և ընկալան 'ի քս̃է զպսակն վկայական՝ հեղմամբ սբ̃ արեան իւրեանց ։ Որ և հրաշալի տեսլեամբք հաստատեաց ա̃ծ յաւուրս նահատակութե̃ սբ̃ց ղևոնդեանց քահանայից՝ զկնի երից ամաց կատարման վարդանանց , ցուցանելով մոգպետին դարձելոյ 'ի հաւատս զգունդս գունդս սբ̃ց վարդանանց զօրավարաց և զօրականաց հրեշտակակերպ տեսլեամբ՝ բերելով պսակս առ սբ̃ ղևոնդեանս ։

Արդ՝ պանծալի նահատակութե՟ն սբ՟յն մեծին Վարդանայ և ընկերաց նր՟ա եղև յամի տն՟ն · 451 · 'ի մարերի վերջն, կմ՟ 'ի սկիզբն մարգաց ամսոյ · այն է ը՟ ժամանակին ը՟ այնմիկ յունիսի · 2 · յեօթներորդ աւուր տօնի պենտեկոստէին յաւուր շաբաթու, յերեքտասաներորդ ամի թգ՟րութե՟ն յազկերտի երկրորդի, և 'ի մետասաներորդ ամի կթղկութե՟ սբ՟յն յովսեփայ, 'ի փառս և 'ի պատիւ անուան քսի այ՟ մերոյ, և 'ի պարծանս և 'ի նորոգումն եկեղեցւոյ նր՟ա սբ՟յ ։

Ցանկալի՛ էր մեզ գիտել ինչ վս՟ նշխարաց սբ՟ցս, մանաւանդ թէ և ունել մասն 'ի պատուական ոսկերաց սբ՟յն Վարդանայ · զորոց ինչ ոչ նշանակեն երանելին եղիշէ և ղազար փարպեցի ականատես և ժմ՟կակից պատմիչք՝ նոյն և վկայաբանք մեր ։ Միայն 'ի յայսմաւուրս նշանակի՝ թէ յետ իբր ամսոյ միոյ ամ՟ փոխեցան անկեալքն 'ի պատերազմի, և թէ մարմինք սբ՟ց նահատակաց յայտնի լինէին 'ի լուսափայլ տեսլենէ և 'ի բուրմանէ անուշահոտութե՟ ։ Իսկ 'ի մեծ Ճառընտրի մերոյ 'ի լուսանցս՝ ուր կան ազգի ազգի յիշատակարանք վս՟ հոգևոր յիշատակաց տուելոց ուխտի սբ՟ լուսաւորչին, որ և են վաւերական ը՟ հաստատուն աւանդութե՟ նոյն վանաց, գրե՟լ կայ այս բան · * Գրիգոր միայ-
„ նակեաց՝ որ շրջէր յծ՟ի լեշկ մաշկով, նա
„ առ սէրն՝ զոր ունէր, յիշատակեաց (ը՟
„ ետ յիշատակ) 'ի դամբարանս սբ՟ լուսա-
„ ւորչիս նշխարս երկուս, զսկաւառակն սբ՟

,, վարդանայ , և զմեծ բազուկն , և զմիւս
,, բազուկն փիլիպպոսի առաքելոյն . և միա_
,, բանեցաւ հոգւով . և որ հանդիպի տե_
,, սուչ սրբ ուխտիս , 'ի տարին կատարէ (զայս
,, յիշատակս) անմոռաց || . Երեւ. Ճկբ . 'ի Գէ—
Նշէ . Լ— :

XXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXX

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ :

(1) Ոպ ղևոնդեանց , նոյնպս և վարդանանցն վկայաբանութի քաղի'ի համեմատութէ բանից երկոցունց ժամանակակից և ստուգապատում մատենագրաց , ք սբյն եղիշէի վրդպի , և ղազարայ փարպեցւոյ . զորս և մեք ըօրինակեցաք՝ կէս մի ը բառից , և կէս մի ը իմաստից : Զնոյնս հաստատեն և ամ պատմաբանք ազգիս . ոպ և յայտ է . նմին իրի չունիմք ինչ պէտս առանձին քննութեան , մանաւանդ յետ քննելոյ կարևոր բանից ամ 'ի պատմութե հայոց և 'ի ծանօթութիս նր . որ ոք կամի , ունի լնուլ տեսանել անդ :

Միայն ծանիր նախ , զի զհատուած մի բանից՝ որ վս վահանայ արծրունւոյ , ունիմք միայն 'ի գրոց Թովմայի արծրունւոյ , յայտ է թէ առեալ յառանձին յիշատակարանաց նախարարութե արծրունեաց . ոպ և զայլ հատուած՝ որ վս կրակատան շինելոյ 'ի դուին յուրացողաց , և կործանելոյ 'ի սբյն վարդանայ , ունիմք 'ի յովհաննէս կաթուղիկոսէ ևեթ . և այն ևս առեալ 'ի յիշատակագրութեց աթոռոյն դուինայ :

Ծանիր երկդ , զի 'ի մէջ զանազան հին և նոր օրինակաց տօնացուցից՝ բազում այն են , որք ունին այսպէս . * Վարդանանց և այլ զօրականացն հայոց ուղղ վկայիցն || . կամ * սբց վարդանանցն և այլոց զօրավարացն հայոց ,, ուղղ վկայից || . յորս թիւ վկայից բարւոք գրի համաձայն վկայաբանութեն և շարակնոցին , * բամկական ,, խումբ հազարաց և երեսնից թիւ ը վեցից , որք ը ,, նոսին նահատակեալ արիաբար պատերազմաւ , և հեզին ,, զարիւնս իւրեանց 'ի նորոգումն եկեղեցւոյ , ընդ ,, նոսին պսակելով 'ի յերկնաւոր հանդիսադրէն || : Եւ սակայն յայլ օրինակս տօնացուցից գտանեմք գրեալ. * Վարդանանց և այլ զօրականացն հայոց կզռ վկայիցն || կմ * կռ վկայիցն ||, և կմ * հռ վկայիցն ||. ուր յայտ է թէ այսպիսի գրիչք եդեալ են զթիւ համարոյ բովանդակ բանակին, որ էր վաթսուն և վեց հազար այր. և մարթի բոլորակն թուով ասել անխտիր վաթսուն կմ եօթանասուն հազար. և սակայն վկայք ասին և են միայն նահատակեալքն 'ի պատերազմի անդ որ վս հաւատոյ, կմ կոտորեալքն 'ի պարսից վս նոյն պատճառի և յետ կատարման պատերազմի. իսկ այլք որք ապրեցան՝ մարթին ունել զանուն խոստովանողի, այլ չեն 'ի թիւս նահատակաց:

Ստոյգ է և այն, թէ պարտ էր պահել զոճ հին տօնացուցից, ասելով. Վարդանանց և այլ զօրականաց. ուր վարդանանք յայտ առնեն զզօրավարս և զզօրագլուխս, և զօրականք զգլխաւորս գնդից գնդից. այլ հետ զհետէ զօրացաւ սովորութիւն ասել ևեթ՝ Վարդանանց զօրավարաց. նշանակելով անխտիր զզօրագլուխս և զզօրս. որպս և նաւավարդ անուն թէպէտ և զնաւապետն տիրապէս նշանակէ, այլ ասի և զնաւաստեաց:

Ծանիր երրորդ, զի օր կատարման սրբց վարդանանց յայտնապէս աւանդեալ 'ի փարպեցւոյն՝ յեօթներորդ աւուր պէնտեկոստէի, յայտ առնէ յամի անդ տն 451. զյունիսի. 2. որ ըս հաշուի յայսմաւուրաց ունէր լինել մարերի. իզ. ոպ եղաւ և 'ի պատմութեան հայոց. կմ՝ ըս շարժական տումարի. 'ի մարերի Է. մանաւանդ թէ 'ի սկիզբն յաջորդ ամսեան մարգաց. 'ի ա. կմ բ. և սակայն տեսանեմք, զի յամ ճաշոցս դնի տօն վարդանանց 'ի հրոտից. Է. ամբողջ երկու ամսով զկնի. զոր և հաստատուն պահեալ յայսմաւուրաց՝ ըս նմին եդեալ է զհամեմատութիւն անշարժ տումարի իւրոյ, այս է օգոստոսի. 7. որ օտարանայ 'ի վկայութենէ փարպեցւոյն, եւս և 'ի դնելոյ սրբյն եղիշէի՝ թէ ժամանակն էր գարնայնոյ: Այլ զպատճառս այսր շփոթութեան և տեղափոխութեան տօնից այլուր տեսցես:

Առ այժմ ասելի է, ոչինչ աւելի զօրեն յայսմ մասին վկայութիւնք ճաշոցաց քան զյայսմաւուրաց. զի ոչ եթէ հաստատագոյն վկայութիւն գտեալ ուստեք զօրէ կատարման սրբց վարդանանց՝ քան զանհրաժեշտ բանս փարպեցւոյն և եղիշէի, եդին զհրոտից. Է. այլ շփոթելով ըզշարժական տումարն ընդ անշարժելւոյն՝ որ կախեալ կայ զաւուրց թարգմանչաց, ըստ նմին յարմարեալ են (իբր զկնի երկուց դարուց) և զամին կատարման Վարդանանց · միանգամայն գուցէ և կարծելով թէ աւուրք գարնայնոյ ը̅ եղիշէի պարտ իցէ իմանալ զամառնային ամիսն օգոստոսի : Այլ ը̅ վերջին կարգաւորութե̅ տօնացուցի՝ յորում գլխաւոր տօնք ազգին վերածեալ եղեն 'ի միջոցս առաջաւորաց, այժմ 'ի ձմեռնամիջի կատարի տօն վարդանանց : Տօնասէրք մի զաւուրս խտրեսցեն, այլ սրբութ̅բ պաշտեսցեն զս̅ս :

ՏՕՆ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼՍԻ

Սբ̅ Ժողովոյն՝ ճ̅ծ Հայրապետաց : (1)

(Հ. Յունվարի. 18. 'ի Հարս Եկեղեցւոյ Եպիփանարէ :) Առաքելոց. Բ. ՀԼԷ. և ՃԼԴ : Սեանհոտ. հատ. Դ : Սոփերատ : Սողոմ : Թղթոցոր : Խորէն. Դ. 33 : Յովհ. ԺԵ : Շնորհ : Կանոնգիրք. ԼԸ :

ՅԵՏ ՀԵՐՔԵԼՈՅ արիոսեան չար աղանդոյն 'ի ս̅բ ժողովն Նիկիոյ առ ինքնակալութ̅բ մեծին կոստանդիանոսի, և կրկին ևս սանձահարելոյ արիանոսաց յաւուրս կոստասայ որդւոյ կոստանդիանոսի, իբրև այն ինչ թագաւորեաց առանձինն կոստանդ. միւս որդին նր̅՝ կուսակից արիանոսաց կմ̅ կիսարիանոսաց, միւսանգամ զօրանային չարափառք : Եւ 'ի դառն արմատոյ այնր աղանդոյ կրկին ընձիւղէր արմատ անիծից մակեդոն հայհոյիչ հոգեմարտ՝ ուրացօղ զա̃ծութի̃ հոգւոյն և զկատարեալ անձնաւորութի̃ նր̃ , որպէս արիոս ուրացաւ զա̃ծուի̃ և զմիշտնջենաւորուի̃ որդւոյն . ընդ նմին 'ի վեր երևեցան և այլ ևս անիծակուռ շաւաւիղք եւնոմեանց , ապողինարիտաց , փոտինեանց , և այլոց հերեսիովտաց ։

Արդ մակեդոնս այս հերեսիովտապետ՝ միանգամ և երկիցս նստաւ յաթոռ պատրիարգութե̃ յունաց 'ի կոստանդինուպօլիս թագաւորեալ քաղաքի՝ յամի տ̃ն 342 . և 351 . փոխանակ երանելոյն պօղոսի խոստովանողի՝ զոր երկիցս ընկէց կոստանդ կայսր յաթոռոյ վ̃ն ուղղափառութե̃ նր̃ 'ի սադրելոյ արիոսեան եպ̃սաց , և ընտրեաց 'ի տեղի նր̃ զմակեդոն . զի էր համախոհ արիոսի ։ Բայց սակայն ատելի գտաւ մակեդոն ո՛չ միայն ուղղափառաց դասուն , այլև արիանոսաց վ̃ն հարստահարելոյ և կեղեքելոյ զն̃ն բազում իրօք ։ Եւ զի ձեռնամուխ ևս եղև առանց գիտութե̃ կայսեր և ը̃դէմ՝ կամաց ժողովրդեան փոխադրել զմարմին մեծին կոստանդիանոսի յեկեղեցի ակակիոսի վկային՝ բազում աղմկաւ , մինչև լինել և արիւնհեղութե̃ առ դուրս տաճարին , անկաւ այսո՛ւիկ և յաչաց կոստանդեայ . վ̃ն որոյ ընկեցաւ իսպառ յաթոռոյ յամի տ̃ն 361 . և նըստաւ 'ի տեղի նր̃ եւդոքսիոս արիոսական՝ ձեռնտուութե̃բ ակակիոսեանց՝ որք էին նշանաւորք 'ի մէջ արիանոսաց ։

Ընդ որ զչարեալ մակեդոնի՝ յետս եկաց 'ի խմբէ արիոսեանց , և յարեցաւ 'ի կիսարիոսեանս՝

եանս՝ քարոզելով այնուհետև զմեղմագոյն կարծեցեալ վարդապետութ՟ին ն՟ց՝ առ որսալոյ զշնորհս ն՟ց · զի որ յառաջն ը՟ ակակիոսեանց արիանոսաց ասէր զորդի սոսկ նման հօր , սկսաւ այնուհետև ասել ը՟ կիսարիոսեանց նմանագոյակից հօր · և 'ի նոյն վարդապետու՟ի ձգեաց և զայլս , զի մի՛ յանձն առնուցուն ասել երբեք ը՟ ուղղափառս համագոյակից ը՟ հօր , ը՟ս նոյնագոյ և բնութենակից : Իսկ իբրև որքան զօր բազմանային համախոհք մակեդոնի , յաւել անօրէնն միւս ևս նոր մոլորութ՟ի՝ առ 'ի լինել գլուխ առանձինն աղանդոյ , և ստանալ իւր ժողովուրդ առանձին · քանզի բացեալ զպիղծ բերան իւր ը՟դէմ ամենաս՟բ հոգւոյն՝ սկսաւ հայհոյել , թէ չիք հոգւոյն ս՟բյ հաղորդու՟ի ինչ ը՟ ա՟ծութ՟ն հօր կ՟մ որդւոյ , այլ օտար է յէու՟է և 'ի ա՟րրու՟է անտի ն՟ց , և լոկ պաշտօնեայ նոցին : Իսկ թէպէտ ոչ ընդերկարեալ հոգեմարտ հայհոյչին զաւուրս իւր՝ սատակեցաւ չարաչար ցաւովք , այլ անհնարին աղանդ ն՟ր մնաց 'ի համախոհս ն՟ր , որք կոչեցան մակեդոնեանք · յորոց ոմանք ուղիղ դաւանէին զորդւոյ , և ոմանք է՛ զի այսպէս՝ և է՛ զի այնպէս · այլ միաբան ընդդէմ զլինէին ա՟ծութ՟ն հոգւոյն ս՟յ · վ՟սն որոյ և հոգեմարտ անուանեցան :

Միւս ևս շառաւիղ դառնութ՟ե յարիոսեան արմատոյ երևեցաւ ը՟ այն աւուրս աղանդն եւնոմեանց · և առաջնորդ նոցա սարկաւագ ումն գէորգեայ եպ՟սի յաղանդոյ արիանոսաց և մելետիանոսաց՝ այետիոս կամ էտիոս անուն. (աէտիոս թարգմանի անամօթ. ոչ և էտիոս՝ ամօթ.) այլ վասն իւրոց հայհոյութեանց կոչեցաւ և աթէօս, այն է անաստուած. սա՝ որ մինչև յարքունիս հասակի անմասն էր 'ի գիտութենէ գրոց, յետոյ ուրեմն գնացեալ յաղեքսանդրիա՝ մխեցաւ 'ի սոփեստական ուսմունս. և յանդգնեցաւ զհաւատոյ վարդապետութիւնս ընդ մտի յեղյեղել ճարտարութեամբ մարդկային բանից, և նիւթական ծրագրութեամբ ձևոց. մինչև սերմանել պատ 'ի պատ և մանուածոյ ասացուածովք զարիոսի և զմակեդոնի մոլորութիւնս միանգամայն. և միօրինակ մերժեալ զասելն համագոյակից և նմանագոյակից՝ հնարեցաւ ինքն ասել զորդւոյ և զհոգւոյ այլագոյակից, կամ օտար բնութեամբ։

Արդ գլխաւոր աշակերտ այետիոսի եղև Եւնոմիոս անուն՝ չարագոյն քան զվարդապետ իւր. զի յայտնապէս խշխեաց ուսուցանել ընդ արիոսի՝ զորդի արարած ասել, իբրև գերագոյն և առաջին 'ի ստեղծուածս՝ օտար 'ի բնութենէ հօր. նոյնպէս և զհոգին հայհոյելով ընդ մակեդոնի՝ արարած գոլ ասէր, և այն ոչ 'ի հօրէ յառաջագայեալ, այլ յորդւոյ նախ քան զայլ արարածս. նմին իրի և զմկրտութիւն ուղղափառաց՝ որ յանուն ամենասուրբ երրորդութեան՝ ծեքել կամեցաւ. անկնունքս զնա կոչէր, և զխոտորեալսն զկնի մոլորութեան իւրոյ կրկին տայր մկրտել նորաձև մկրտութեամբ 'ի մահն Քրիստոսի ևեթ։ Արբանեակք չարութեան սորա Եւնոմեանք անուանեցան.

ցան • նոյնք և անոմեանք ասէին , թ՟ աննմանք՝ ը՟ս չընդունելոյ և զնմանագոյակիցն կիսարիոսեանց • այլք լաւ ևս կոչեցին զն՟ս անոմոսս , թ՟ անօրէնս՝ հանգոյն ան՟ձ առաջնորդի իւրեանց :

Այսպիսեացն անզգամութե՟ն չկարացեալ հանդուրժել և կայսրն կոստանդ՝ ետ աքսորել զգլուխս ն՟ց , զայետիոս 'ի փռիւգիա , և զեւնոմիոս 'ի պամփիլիա • այլ աշակերտք ն՟ց կացին մնացին : Թո՛ղ և զայլ հերձուածս ազգի ազգի 'ի մէջ կիսարիոսեանց յաւուրց անտի ժողովոյն արիմինու • ո՟պ և զփոտինեանս և զլուսկիփերեանս և զապողինարիտս • յորոց այլ և այլ որոմունք մոլորութե՟ն սերմանեցան 'ի բարի ագարակի եկեղեցւոյն ք՟նի • և ծաւալեցան ը՟ բազում տեղիս առ կայսերութ՟բ կոստանդեայ և յաջորդաց ն՟ր մինչև 'ի սատակումն վաղեսի արիոսամոլ կայսեր • որ յայտնագոյնս հալածեաց զուղղափառս , և արտասահման արար զբազումս 'ի ն՟ր եպ՟սաց • ը՟ որս և զմեծն ներսէս հայրապետ հայոց :

Եւ եղև իբրև թագաւորեաց ա՟ծասէր և բարեպաշտ կայսրն թէոդոս մեծ՝ գահակից գրատիանոսի ուղղափառ ինքնակալի , յամի տ՟ն • 379• անյապաղ փոյթ կալեալ հաստատութե՟ ուղղափառ հաւատոյ և խաղաղութե՟ եկեղեցւոյ , հրաման եհան տիրապէս՝ զի ա՟մ քրիստոնեայք , որ կան ը՟ թագաւորութ՟բ ն՟ր , միաբանեսցին 'ի նիկիական դաւանութ՟ի և 'ի մի ճշմարիտ հաւատ կաթողիկէ եկեղեցւոյ, որ 'ի հայր և յորդի և յամենաս՟բ հոգին. և որ աքսորեցանն 'ի վաղեսէ չարափառէ, յետս դարձցին 'ի տեղիս իւրեանց. ը՟ որս դարձոյց և զս՟բն ներսէս, և պահեաց առ իւր 'ի կոստանդնուպօլիս. զի առաջիկայ լինիցի ժողովոյն մեծի, զոր խորհէր առնել ը՟դէմ մոլորուե՟ հոգեմարտից և այլոց աղանդաւորաց ժամանակին, միանգամայն և վասն հաստատելոյ զա՟ծաբանն գրիգոր զախոյեանն հաւատոյ յաթոռ պատրիարգուե՟ կոստանդնուպօլսոյ. ուստի ընկեցեալ էին զնա անգլուխք ոմանք, և կարգեալ փոխանակ ն՟ր մաքսիմոս զոմն անարժան. և էր ոչ սակաւ խռովութի՟ 'ի թագաւորական քաղաքին:

Ապա յամի տ՟ն. 381. յամսեանն մայիսի՝ ը՟ հրամանի ք՟ասէր ինքնակալին թէոդոսի, և հաւանութե՟ ս՟բյն դամասոսի հռովմայ հայրապետի՝ եկին գումարեցան 'ի կոստանդինուպօլիս հարիւր և յիսուն եպ՟սունք. յորս կային բազում հարք նշանաւորք սրբութե՟ և իմաստութե՟. ո՟պ ս՟բն գրիգոր նազիանզացին՝ այն է ա՟ծաբանն՝ ջահ եկեղեցւոյ. ս՟բն գրիգոր նիւսացի՝ եղբայր մեծին բարսղի կեսարացւոյ. ս՟բն մելիտոս հայրապետ անտիոքայ. ս՟բն կիւրեղ հայրապետ եէ՟մի. ս՟բն ներսէս պարթև հայրապետ հայոց. ս՟բն ամփիլոքիոս եպ՟ս իկոնիոյ՝ գործակից բարսղի և գրիգորի. եղադիոս եպ՟ս կեսարու կապադովկացւոց՝ յաջորդ բարսղի. տիմոթէոս հայրապետ աղեքսանդրու.

Թա

Թալասիոս կմ՟ գելասիոս կեսարեայ պաղեստինու ․ և այլ առաջնորդք երևելիք ։

Անդ նախ զառաջինն իբրև բանք եղեն վս՟ աթոռոյն կոստանդնուպօլսոյ՝ նոր հռովմ կոչեցելոյ, և իբր երկրորդ զկնի հնոյն հռովմայ, միաբան հաւանութբ՟ 'ի բաց հանին զմաքսիմոս աղանդաւոր, և դարձեալ նստուցին զս՟ծաբանն գրիգոր իբրև հովիւ արժանաւոր ։ Այլ մինչդեռ երկարէր գործ ժողովոյն, վախճանեցաւ սբն՟ մելիտոս անտիոքայ հայրապետն ․ յորոյ վր՟ ասաց ճառ ներբողական գրիգոր նիւսացի յատենի հարց ․ (զորոյ զբանս չփոխեն ոմանք ընդ բանից գրիգորի ս՟ծաբանի) ։ Եւ զի սբն՟ մելիտոս էր առաւել ձեռնտու ս՟ծաբանին, 'ի մեռանիլ նր՟ դրդուեցան անդրէն յաչաղկոտք 'ի բաց հանել յաթոռոյ պատրիարգութեան զս՟ծաբանն գրիգոր ։ Եւ նր՟ տեսեալ՝ թէ սաստկանայ խռովութիւն, եւ յատեան սբ՟ ժողովոյն, և հրաշալի ատենախօսութբ՟ ինքնակամ աղաչանօք խնդրեաց հրաժեշտ 'ի պատուոյ աթոռոյն կոստանդնուպօլսոյ ։ Յայնժամ ակամայ կամօք զիջեալ սբց՟ հարցն 'ի բանս նր՟՝ ընտրեցին յայն աթոռ զնեկտարիոս տարսոնացի այր երևելի 'ի դրան արքունի և ընտիր վարուք ։

Ապա այնուհետև անզբաղ մտօք պարապեալ սբց՟ հարանց 'ի քննութի՟ բանիցն հաւատոյ՝ յառաջ կոչեցին զերեսուն եպ՟սունս 'ի դասուց մակեդոնեանց, և պահանջէին 'ի նոցանէ ընդունել ը՟ կաթողիկէ եկեղեցւոյ

զնիկիական դաւանութի՟, և ասել և քարոզել զորդին բնութենակից և համագոյ ը՟ հօր և ը՟ հոգւոյն, նոյնպէս և զամենաս՟ր հոգին էակից և համագոյակից հօր և որդւոյ: Եւ յոչ առնուլ ն՟ց յանձն՝ ՚ի բաց հերքեցին զն՟ս ՚ի ժողովոյ ուղղափառաց, և հատին ՚ի հաղորդութե՟ եկեղեցւոյ. ապա մի առ մի նզովս կարգեցին ը՟դէմ հոգեմարտին մակեդոնի և հետևողաց ն՟ր, ը՟դէմ եւնոմեանց և ապողինարիտաց և այլոց աղանդաւորաց ժամանակին. և հաստատեցին զնիկիական հաւատս որ ՚ի մի ա՟ծութի՟ համագոյ և միասնական անբաժանելի ը՟ երրորդութե՟՝ հօր և որդւոյ և հոգւոյն ս՟բյ: Եւ առ առաւել զգուշութի՟ յերեսաց մոլորութե՟ հերեսիովտաց՝ խորհեցան յաւելուլ ինչ ինչ բացատրութի՟ ՚ի վ՟ր նիկիական հանգանակին, յօրինելով միւս ևս հանգանակ իբրև բացայայտութի՟ առաջնոյն. զոր և գրեաց ս՟բն գրիգոր նիւսացի ձայնակցութե՟ համօրէն հարց ս՟բ ժողովոյն. որում և միաբան ձեռն եդին ամենեքին ըստ կարգի պատուոյ և աստիճանի իւրեանց: Իսկ յաւելուածք ձայնից կարևորաց յայս հանգանակ ՚ի վ՟ր նիկիականին են այս. Յաղագս բանին ա՟յ՝ ուր ասի ՚ի նիկիականն, * որդին ա՟յ ծնեալ ՚ի հօրէ միածին‖, եդ այս ժողով.
* որդին ա՟յ միածինն ՚ի հօրէ ծնեալ յառաջ
„ քա՟ զա՟մ յաւիտեանս‖: Եւ վ՟ս մարդեղութե՟
ն՟ր, ուր ասիւր * մարմնացեալ, և մարդա-
„ ցեալ, չարչարեալ, և յարուցեալ յերրորդ
„ ա-

,, աւուր, և ելեալ յերկինս. և գալոց միւսանգամ դատել զկենդանիս և զմեռե՟լս ||, եդ այսպէս. * մարմնացեալ 'ի Հոգւոյն սբ՟յ
,, և 'ի Մարիամայ կուսէն և ներմարդացե՟լ.
,, և խաչեալ վ՟ մեր առ Պոնտացի Պիղա-
,, տոսիւ, և չարչարեալ և թաղեալ, և յա-
,, րուցեալ յերրորդ աւուր ը՟ս գրոց. և ել-
,, եալ յերկինս, և նստեալ ը՟ աջմէ Հօրն.
,, և միւսանգամ գալոց փառօք դատել ըզ-
,, կենդանիս և զմեռեալս. որոյ թագաւո-
,, րութե՟ ոչ եղիցի վախճան ||։

Իսկ 'ի վկայութի՟ ա՟ծութե՟ ամենասբ՟ Հոգւոյն, ուր 'ի Նիկիական Հանգանակի պարզապէս ասիւր եւեթ. * Եւ 'ի Հոգին սբ՟ ||. արար ժողովն Կոստանդնուպօլսոյ յաւելուած զայս. * Եւ 'ի Հոգին սբ՟ տ՟րն, կենդանարարն, 'ի
,, Հօրէ ելօղն, ը՟ Հօր և ը՟ որդւոյ երկրպա-
,, գակից և փառաւորակից, որ խօսեցաւ
,, Մարգարէիւք ||. Նոյնպէս յաւել և զմնացեալ բանքս. * 'Ի մի սբ՟ կաթողիկէ և ա-
,, ռաքելական եկեղեցի։ Խոստովանիմք մի
,, մկրտութի՟ 'ի թողութի՟ մեղաց. ակնու-
,, նիմք յարութե՟ մեռելոց, և կենացն Հան-
,, դերձելոյ յաւիտենին. ամէն ||։

Յետ այսորիկ սահմանեցան 'ի ժողովի անդ և պէսպէս կանոնք վ՟ բարեկարգութե՟ և բարեզարդութե՟. որովք Հաստատեցաւ խաղաղութի՟ եկեղեցւոյ ։ Քանզի և ինքն իսկ ինքնակալն Թէոդոս Հրաման ետ 'սաստիկ, զի թէ ոք յե՟պսաց իշխեսցէ օտարանալ 'ի վարդապետութե՟ սբ՟ ժողովոցն Նիկիոյ և Կոստանտանդնուպօլսոյ , անկցի յաթոռոյ իւրմէ , և արտաքսեսցի յեկեղեցւոյն . և մի՛ թողցի այնպիսումն երթալ յարիլ 'ի մին յեկեղեցեաց ուղղափառաց , և ո՛չ 'ի քաղաք նց̅ մտանել . և որք ը̅դ նմ դարձան , արքունի իշխանութ̅բ սանձեաց զն̅ս . և այնպէս անդորրացոյց զտիեզերս ։

Արձակեաց և զմեծն Ներսէս պատո՛ւով մեծաւ 'ի հայս յաթոռ իւր . որ և ը̅ս օրինակի սբ̅յն արիստակեայ դարձ արարեալ փառօք 'ի վիճակ իւր օրինակաւ սահմանի և կանոնաց ժողովոյն , յաւելլ ը̅ս պիտոյից հօտի իւրոյ՝ յետ սբ̅յ հօրն մերոյ գրիգորի լուսաւորչի՝ բացատրութիս ինչ 'ի Նիկիական հանգանակն լուսաւորչեան , զոր անվրէպ պահէր եկեղեցի հայաստանեայց ։ Եւ նախ ոչ կարեւոր համարեցաւ դնել վ̅ն որդւոյ առանձինն *յառաջ ք̅ զա̅մ յաւիտեանս ‖, որովհետև 'ի լուսաւորչէ կանխաւ եդեալ կայր վ̅ն ամենասբ̅ երրորդութ̅ե միանգամայն , *Իսկ մեք փառաւորեսցուք՝ որ յառաջ քան զյաւիտեանս երկիր պագանելով սբ̅ երրորդութենն և մի ա̅ծութե̅ ‖ եւ̅ ։ Յորոյ 'ի դնիլն և ոչ հարկ կայր յաւելուլ վ̅ն հոգւոյն * երկրպագակից և փառաւորակից ‖ . այլ եդ կմ̅ եդիտ արդէն եդեալ 'ի լուսաւորչէ զայսոսիկ կարեւոր եղերս . * Հաւատամք և 'ի սբ̅
,, հոգին յանեղ և 'ի կատարեալ . որ խօսեցաւ յօրէնս և 'ի մարգարէս և յաւետարանս ‖ եւ̅ ։ Նոյնպէս և գեղեցիկ յաւելաւ 'ի հանգանակն լուսաւորչեան վ̅ն մար-

դեղուն բանին ը՟դէմ ա՟մ հերետիկոսաց .
* մարմնացաւ , մարդացաւ , ծնաւ կատարելապէս՝ի մարիամայ ս՟բյ կուսէն հոգւով
,, ս՟բվ . որով էառ մարմին , հոգի և միտք ,
,, և զա՟մ որ ինչ է 'ի մարդ , ճշմարտապէս
,, և ոչ կարծեօք , (կ՟մ , և ո՛չ կարծիս ունելով)‖ : Որովք յայտ է , թէ մի և նոյն հանգանակն է նիկիական , զոր ժողովն կոստանդնուպօլսոյ այս ինչ բացատրութ՟բ , և ս՟բ լուսաւորչին և նախկին յաջորդք ն՟ր այն ինչ բացայայտութ՟բ պարզաբանեցին : Նաև դարձեալ յայտ է , թէ հանգանակն մեր կ՟մ լուսաւորչեանն է առաւել նիկիական՝ քան կոստանդնուպօլսեան . իսկ յոյնք և լատինք վարեն զկոստանդնուպօլսին 'ի պաշտամունս եկեղեցւոյ . և ա՟մն է մի և նոյն ուղղափառ դաւանութ՟ն կաթողիկէ և առաքելական ս՟բ եկեղեցւոյ :

* * *

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ :

(1) Յիշատակ ս՟բյ ժողովոյս , կ՟մ որ նոյն է՝ ս՟բց հայրապետաց ժողովոյն կոստանդնուպօլսոյ միօրինակ գտանի յա՟մ տօնացոյցս մեր հինս և նորս . յորս ոմանք առաջի դնեն և զպատմութիւն սակաւատող կամ բազմատող բանիւք : Իսկ 'ի Հ . ք՟ 'ի յայսմաւուրս չէք ուրոյն օր յիշատակի . այլ միայն առաջի դնի պատմութի ժողովոյն 'ի վարս մեծին թէոդոսի . 'ի յուն՟վ . 18 : Այլ 'ի Ճառընտ . Բ . երկիցս տեսանի համառօտ յիշատակութի այսր ժողովոյ . մի՝ 'ի վարս թէոդոսի կայսեր 'ի կայսերական դրոց , ք՟ 'ի սոկրատայ և յայլոց յոյն պատմաբանից . յերես . չէ՟ . և միւս ևս յերես . չղ՟ք . առեալ 'ի բանից խորենացւոյն՝ քաղելով ինչ ինչ և 'ի գրիգորէ ա՟ծաբանէ :

Թող

Թո՛ղ զոր յիշեն հարևանցի և այլ պատմիչք հայոց 'ի կարգի գործոց ս՟բյն ներսեսի ։

Արդ մեր կամեցեալ տալ որոշ ինչ տեղեկութ՟ի վ՟ն երևելի հայրապետացս ս՟բ ժողովոյս, ևս առաւել վ՟ն գլխաւոր պատճառաց և գործոց ն՟ր, կարևոր համարեցաք առաջի դնել փոքր 'ի շատէ զպատմութ՟ի ժողովոյս՝ քաղեալ 'ի սիւնհոդոսական մատենից․ յոր հային և աւանդեալքն յայլ ա՟մ մատենագրաց ։

Յոյնք և լատինք չունին զյիշատակ այսր ժողովոյ 'ի պաշտամունս իւրեանց ։ Վ՟ն լատինացւոց չեն ինչ զարմանք․ զի առ նոսա չէր սովորութ՟ի առնելոյ զառանձին յիշատակ ժողովոց 'ի կարգս տօնից ։ Ո՛ւր թողից զայն, զի հռովմայեցիք 'ի սկզբան անդ ընկալան միայն զսահման ժողովոյն, ք՟ զբան դաւանութ՟ե ն՟ր․ իսկ զկանոնադրութիս բարեկարգութ՟ե ոչ կամեցան ը՟ունել․ մանաւանդ զմին 'ի կանոնաց յայտնապէս մերժեցին, զայն՝ որ վ՟ն ունելոյ եպ՟սին կոստանդնուպօլսի զերիցութ՟ի պատուոյ 'ի մէջ պատրիարգաց իբրև երկրորդ աթոռ յետ գահին հռովմայ՝ անուամբ նոր հռովմայ․ և եթէ յետ ժամանակաց զիջան այնմ, ոչ այնչափ բանիւ կանոնին եղև այն, որչափ սովորութ՟բ ։

Բայց յոյնք՝ որք տօնեն զայլ քանի մի ժողովս, որ յառաջ և որ զկնի, երևի թէ 'ի վաղ ժամանակաց զայս ս՟բ ժողով իբրև ը՟ մի համար դասելով ը՟ ժողովոյն նիկիոյ՝ ը՟ որում էր 'ի համաձայնութ՟ի ն՟ր, ոչ կարգեցին տօն առանձին․ ք՟զի 'ի Յ․ ք՟ 'ի բասիլեան հին յայսմաւուրս յունաց գտանին միայն յիշատակք այս ժողովոց․ Նիկիոյ ա՟ ընդդէմ արիոսի․ նիկիոյ է՟ ը՟դդէմ պատկերամարտից․ քաղկեդոնի ը՟դդէմ եւտիքեանց․ և կոստանդնուպօլսի մասնաւոր ժողով ինչ կ՟զ եպ՟սաց, զոր ոմանք նոյնացուցանեն ը՟ հինգերորդ ժողովոյ ։ Միայն 'ի ժամագիրս յունաց 'ի յուլիսի 16․ յիշի ընդ այլ ժողովս և ժողովն կոստանդնուպօլսի ։

Ծանի՛ր և զայն, զի խորենացին ը՟ հարս ժողովոյս թուէ և զբարսեղ կեսարու հայրապետ․ բայց ը՟ այլոց վախճանեցաւ նա փոքր մի յառաջ, և ոչ եհաս 'ի ժողովն․ այլ եկն յաջորդ ն՟ր եղադիոս՝ հանդերձ եղբարբ բարսղի, այն է գրիգոր նիւսացի․ զոր և խորենացին յիշէ ։ Իսկ 'ի ճառընտիրն նախանշակեալ յերես․ ջղ՟ք․ յաւելեալ է 'ի գրչաց և աթանաս և գրիգոր սքանչելագործ, յոհան, պրոկղ, երանոս, եպիփան, եփրեմ․ որ են հարք այլ և այլ դարուց առաջնոց և յետնոց ։ Պատճառ սխալալանացս է այն, զի ը՟ հնագոյն կարգաւորութե՟ ճառը ցաց 'ի ամին աւուր՝ մ՟ 'ի շաբաթու աւուր, որ նախ ք՟ զբուն բարեկենդանն, դնի յիշատակ ոչ միայն հայրապետաց կոստանդնուպօլսոյ ս՟բ ժողովոյն, այլև համօրէն ս՟բ հայրապետաց ճծ՟ եպսաց, թուելով յանուանէ զոմանս յերևելեաց · որպ՟ս զի կարգ ընթերցուածոց աւուրս ծառայեսցէ յաւուր յիշատակի որ և է հայրապետի · նոյնպէս դնի յայլ օր ընթերցուած մարտիրոսաց վ՟ն ն՟մ մարտիրոսի · և՟ն ։

Իսկ վասն գտանելոյ ս՟բյն ներսեսի մեծի յայս ժողով, վկայեն ն՟մ պատմաբանք և մատենագրութիւնք ազգիս · թէև այլք չյիշեն · զորմէ տես և 'ի ծանօթութիւնս պատմութե՟ հայոց ։ Այլ որ ասի 'ի Հ · մ՟ 'ի յայսմաւուրս, թէ թէոդոս զս՟բն ներսէս * ածեալ պատուով կացոյց գլուխ ժողովոյն որ ժողովեալ էին 'ի քաղաքն յատրմպօլ|| է յաւելուած տգիտի ուրուք՝ անհեթեթ բացատրութ՟, փոխանակ ասելոյ՝ թէ ս՟բն ներսէս էր մի 'ի գլխաւորաց · ապա թէ ոչ՝ ոչ ոք կարէր լինել գլուխ ժողովոյն վ՟ն իրիք պատուոյ · այլ ը՟ աստիճանի աթոռոց նստէին · վ՟յ որչափ և վերագոյն նստուցեալ իցեն զս՟բն ներսէս, ոչ էր մարթ նստիլ նախ քան զպատրիարգունս · մանաւանդ թէ և ոչ յառաջ քան զհայրապետն կեսարու և զնմանիս ն՟ց · զի և ոչ ս՟բն ներսէս առնոյր յանձն՝ եթէ առ խոնարհութեան, և եթէ 'ի սակս յարգելոյ զկարգ ժողովոյն ։

ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Սրբոյն Թէոդորոսի զինուորին՝ տիրոնին կամ տիրոն կոչեցելոյ։ (1)

Հ. Ե. Յ. Փետր. 17։ Լ. Նոյեմբ. 9. Գիր. Նիւս. 'ի ճառն Թէոդորոսի։ Ղամբեկ. Բ. ոծբ. և Ս. ճծա։ Մետափր. առ Սուրիոսի. հատ. բ. երես. 226։ (2)

ԲԱԶՄԱՅԱՂԹ ՎԿԱՅՆ քի, մեծապարգև անուն արդիւնական՝ սբն Թէոդորոս զինուոր՝ քեռի սբյն Թէոդորոսի ստրատելատի արակլացւոյ, էր 'ի ժամանակս դիոկղետիանոսի և մաքսիմիանոսի, հայրենեօք 'ի կողմանցն ամասիայ քաղաքին պոնտոսի, 'ի քիմիաղոն գաւառէ 'ի սաքոռէ կամ ատուրբէ գեղջէ՝ մօտ 'ի վերին քաղաք երկրորդ հայոց, հաւատով քրիստոնեայ՝ և բարեպաշտ ծնողաց զաւակ։ Նա մինչդեռ էր մանուկ ստնդիայց, մեռաւ մայր նր. վաղ և հայրն սնոյց զնա խարշեալ հատիկ ցորենոյ և հատաջրով։

Նա ը աճել հասակին՝ զարգացաւ Թէոդորոս գովելի վարուք առաքինութե, վարելով զմանկութին իւր զգաստ և պարկեշտ յամի. և ը անդատին սովորութեն զնոյն ցորենա-

հատս ունէր իւր կերակուր ախորժական, և այնու շատացեալ՝ ոչինչ աւելի կամէր ճաշակել ։ Եւ յարքունս հասեալ՝ եղև երիտասարդ առոյգ և բարեկազմ, խորագոյն մօրուօք, կարճ և գանգուր հերովք . Թխամորթ երկաթագոյն մարմնով, և ահաւոր տեսլեամբ . միջակ և բարեվայելուչ հասակաւ,
և կատարեալ արութեամբ ։

Զոր տեսեալ զօրավարին և զօրաց կայսեր՝ որ կային 'ի պահպանութեան կողմանցն այնոցիկ, և նստէին յամասիա, ձգեցին զնա 'ի գունդն իւրեանց՝ որ կոչիւր մարմարացւոց կամ մառմառիտոն պոնտոսական . և կարգեալ 'ի թիւ համարոյ նորեկ և նորակերտ զօրականին՝ անուանեցին տիւռօն (այն է ըստ յունաց դիռօն, և ըստ հռովմայեցւոց դիռօ, այսինքն համբակ կամ նորամուտ 'ի կարգ զինուորութեան) ։ Եւ զփորձ առեալ արիական ոգւոյն՝ կամէին հաստատել զնա 'ի զօրականութեան, և հանել 'ի պաշտօն աւագութեան արքունի բանակին . այլ նա չառնոյր յանձն՝ ասելով . ես երկնաւոր Թագաւորին զինուորեալ եմ՝ տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի որդւոյն Աստուծոյ ։

Իբրև լուեան զայս բան 'ի բերանոյ նորա զօրքն, քանզի հեթանոսք էին, արհամարհանօք 'ի բաց թողին զնա՝ կալ ըստ կամս իւր ուր և կամիցի . ակնունելով՝ թէ նա իւրովին զղջացեալ խնդրեսցէ յարիլ 'ի նոսա . և կէսք գիտելով զանկարծելի պնդութիւն նորա՝ 'ի հակառակութիւն և 'ի թշնամութիւն բերէին ընդ նմա, և երկնէին չարիս ընդդէմ անձին նորա . բայց ոչ 'ի զօրուն էին 'ի ծածուկ քրիստոնեայք, սիրէին յոյժ զԹէոդորոս, և օգնական և ձեռնտու լինէին նմա յա՟մի :

Ընդ այն աւուրս դէպ եղև քաջին Թէոդորոսի գնալ երիվարաւ 'ի պէտս ինչ գործոյ, և անցանել ը՟ն պրաստն կամ ընդ մարգս աւանին, որ կոչիւր Եւքայիտա կամ Եւխայիտէ (որ թարգմանի վարսագեղ կամ բարեսաղարթ), ուր էին կալուածք Եւսեբեայ ուրումն հաւատացեալ և մեծատուն կնոջ այրւոյ . և զի էր տօթաժամ և տապ սաստիկ, խորհեցաւ Թէոդորոս հանգչել 'ի մարգաձակի պրաստին . և կապեալ զձին ը՟ն ծառ՝ կողմնեցաւ ընդ հովանեաւ տնկոյն : Զայն տեսեալ Եւսեբիայ 'ի տանեաց սրահին իւրոյ, կարկառեաց զձեռն, աղաղակեաց և ասէ . ա՛յ հեծեալ ա՛յ հեծեալ մի՛ դադարեր յայդմ տեղւոջ . զի հուպ է այդր որջ վիշապի անարւոյ . և զայսու ժամաւս ելանէ և շրջի 'ի մարգաձակիդ . գուցէ վնասիս դու՝ կամ երիվարդ . այլ արի՛ եկ 'ի տնիկս . ուր լուասցես զոտս քո, և ճաշակեալ հանգիցես 'ի միջօրէիս . և 'ի հովուն անկանիլ՝ երթիցես բարեաւ զճանապարհ քո :

Նա պ՟խնի երանելին Թէոդորոս, և ասէ . ես յուսալով յօգնականութ՟ի ա՟յ իմոյ՝ յաներևոյթ վիշապէն իսկ երկնչիմ ո՛չ, թո՛ղ թէ յերևելի օձէ . եղցէ՛ ը՟ս բանի քում, և սատակեսցիս զնա անուամբ ա՟ծ իմոյ յ՟սի ք՟սի : Իսկ բարեպաշտն Եւսեբիա իբրև լուաւ, գիտացեալ թէ հաւատակից իւր է, 'ի բ՟զմ խնդութ՟էն ան-

անձամբ ընթացաւ ընդ առաջ նր՟ , և բուռն հարեալ աղաչէր յառնել 'ի տեղւոջէ անտի , և պատսպարիլ 'ի տուն իւր ։

Մինչդեռ նա զայն խօսէր , եղև մեծապէս խօլիւն գալստեան վիշապին ․ մինչև ճիչ բառնալ եւսեբեայ և փախչիլ ․ իսկ վիշապն քաջալանջ և մեծապարանոց յարձակեցաւ 'ի վր՟ երիվարին ահագին և քստմնելի շչմամբ ։ Յայնժամ քաջ զօրականն ք՟սի Թէոդորոս կնքեալ զինքն նշանաւ ամենայաղթ սբ՟յ խաչին՝ եհար նիզակաւ զգլուխ վիշապին ․ և շեշտակի ձեղքեալ՝ առ ժամայն սատակեաց զնա ․ որ և տապալեալ յեղեգնուտն հուպ 'ի ջուրն՝ իբրև զգերան մեծ՝ ահագին տեսողացն երևէր ։ Եւ յայնմ օրէ եղև ծանօթութ՟ի և սէր բարեպաշտին եւսեբեայ առ երանելին Թէոդորոս ոպ՟ առ յիւրմէ ծնեալ որդի ։ (3)

Իսկ սբ՟ն Թէոդորոս երթեալ առ զինուորակիցս իւր և հաւատակից հեծեալս՝ պատմէր նց՟ զյաջողուէ՟ն , զոր արար տ՟ր 'ի ձեռն նր՟ ․ և այնու առաւել զօրացուցանէր զն՟ս 'ի հաստատուէ՟ի քրիստոնէուէ՟ , համարձակագոյնս ուսուցանելով վ՟ս զօրուէ՟ անուանն ք՟սի փրկչին մերոյ , և խրատելով զն՟ս յայտնի ունել իբրև զինքն զք՟նական հաւատս , և պահել զպատուիրանս ա՟յ ․ և զոր ասէր բանիւք , առաւելապէս գործովք յանդիման կացուցանէր 'ի ձեռն ա՟ծահաճոյ վարուց և ջերմ պաշտամանն ։

Զայնու ժամանակաւ ել հրաման դառնութէ ՚ի Մաքսիմիանոսէ արքայէ գաղերիոսէ(4), որ թագաւորեաց յամի տն̅. 304. և ՚ի գործակցաց նր̅ առ ամ̅ դատաւորս՝ որք ը̅ իշխանութե̅ հռովմայեցւոց, զի ամ̅ քրիստոնեայ՝ որ ճաշակէ զզոհէն, կեցցէ. և որ ոչ կամիցի զոհել, և ո՛չ ՚ի զոհից ճաշակել, չար դատապատանօք դատեսցի: Յայնժամ ըմբռնեցաւ ը̅ բազումս յզօրէն արևելից և երանելին թէոդորոս տիւրոնն. զի յորժամ կայր նա ՚ի ձմեռոցն ամասիոյ ը̅ այլ զինուորակիցս, բռնակաս անուն ոմն իշխան ունէր զվերակացուե̅ կայսերական գնդին՝ պրեպոսիտոս պատուով, որ ՚ի մէջ զառաջաւոր անուանի և սենեկապետ արքունի. սա տեղեկացեալ՝ եթէ կան ՚ի մէջ տիւռոնից կմ̅ նորընտիր զինուորաց և քրիստոնեայք, հրամայեաց գրել ըզնոսա ՚ի կարգ արքունի գնդին, զի հաւասարեսցին ը̅ այլս ՚ի զոհս:

Իսկ մծ̅ թէոդորոսի քանզի պատմեցաւ, թէ յայտնի պաշտէ զքրիստոնէութի̅, և ոչ կամի կցորդ լինել կարգի հեթանոս զօրականին, հրաման ետ ածել առաջի իւր յատեան. և սկսաւ հրապուրել և ստիպել զնա, զի զոհեսցէ դից: Նա որպէս հաւատարիմ ծառայ ա̅յ բարձրելոյ կայր անդրդուելի ՚ի մէջ բազմութե̅ զօրականին. և լի հոգւով համարձակ բարբառէր. ես քրիստոնեայ եմ, և զոհել գարշելեաց և ուրուական պատկերաց ո՛չ հաւանիմ. նմին իրի ահա ՚ի բաց հանի յանձնէ և զզարդ զինուորութե̅, զի մի̅ եղէց հաղորդ անհաւատից: Լսէ բռնակաս.

ուստի՞ այդ չափ յանդգնեցար Թէոդորէ, մինչև անարգել զօրէնս ինքնակալաց, և ոչ ստորանկիլ դողութե՟ թագաւորական հրամանին. և արդ անսա՛ ինձ. և ա՛ռ զզէն զինուորութե՟ քո, ո՟ր և զինուորեալդ իսկ ես կայսեր, և անցեալ 'ի գիր համարոյ. հա՛պա միաբանեալ ը՟ համօրէն գնդին՝ եկ 'ի մեհեանն հանդերձ բզ՟մ պատուով, և զոհեա՛ ա՟ծոցն մերոց. և լինիս սիրելի թագաւորին ։

Յայնժամ աներկիւղ համարձակութե՟ և հաստատուն դիմօք պ՟խնի ետ երանելին և ասէ. չգիտեմ զի՞նչ ա՟ծքն իցեն ձեր. ք՟զի և չեն իսկ ճշմարտութե՟. զայս գիտեմ, զի ա՟մ կուռք հեթանոսաց դևք են. զորս դուք պատրանօք չարին ա՟ծական անուամբ պատուէք. այլ ա՟ծն իմ ճշմարիտ ք՟ս է, տ՟րն իմ և թագաւորն իմ. և ես զօրական եմ իմում թագաւորին երկնաւորի, և այլում զօրական ոչ կարեմ լինել ։

Բարկացաւ Բրինկաս և ասէ. և սոքա ամենեքեան՝ որ կան աստ, ո՞չ ապաքէն քրիստոնեայք են և զինուորեալ ինքնակալի ։ Պատասխանի ետ ս՟բն. իւրաքանչիւրոք գիտէ՝ որպէս և կամ ո՟ւմ կամիցի զինուորել. ես զի՟մն գիտեմ, ում զինուորեալ եմ՝ թագաւորին անմահի. և այլում զինուորել ոչ կամիմ, բայց միայն ա՟յ մերոյ ճշմարտի, և միածին որդւոյ ն՟ր տ՟ն յ՟ի ք՟ի ։ Եւ 'ի վ՟ր այսր ճշմարիտ խոստովանութե՟ պատրաստ եմ 'ի տանջանս և 'ի մահ սրոյ և հրոյ. և ոչ դադարեցայց երբէք 'ի վկայելոյ ճշմարտութե՟.

մինչեւ եթէ ոք ձանձրասցի 'ի ձէնջ ը՟ բանս իմ, 'ի բաց հատցէ եւ զլեզուս. վ՟ զի եւ ըստ միոյ միոյ յանդամոցս պարտապան է անձն իմ ցուցանել զհամբերութի՟ 'ի սէր իւրոյ արարչին ։

Զարմացաւ ատեանն ընդ համարձակախօսութի՟ սրբ՟յն, եւ ը՟ անպարտելի արութի՟ առաքինւոյն. քանզի տեսանէին երիտասարդ առոյգ ինքնակամ յառաջեալ 'ի չարչարանս, որ տենչայր մահու՝ որ վ՟ ք՟ի՝ որպ՟ քաղցր բաժակի ։ Եւ 'ի շշնջել բազմութե՟ ընդ միմեանս, մին յիշխանաց զօրուն պոսիդոնիոս անուն, որ եւ ըստ կարգի պատուոյն դուկենարիոս՝ այս է երկերիւրապետ եւ վերակացու երկրորդ կարգի Ճակատուն, հեգնել սկսաւ զբանս սրբ՟յն, եւ ասէ. եւ ա՟ծն քո որդի՞ ունի ո՛ Թէոդորէ, ծնունդ ունելով իբրեւ մահկանացու եւ ախտակիր ։ Ասէ ցնա երանելին. այո՛ ունի զբանն Ճշմարտութե՟, որով զա՟մ ինչ արար. բայց դու մի՛ ախտաբար ինչ իմասցիս զա՟ծորդին լինել. որդի խոստովանիմ, այլ ա՟ծավայելչապէս ասեմ զծնունդն. այլ ո՛վ դու տղայամիտ եւ հեգ. ո՞չ շառագունիս եւ ոչ ծածկես զերեսս՝ իգական ա՟ծուհի խոստովանելով, որ մայր անուանի 'ի ձէնջ երկոտասան ա՟ծոց, երկրպագեալ իբրեւ բազմածին ոմն դեւ իգակերպարան, դիւրաւ յղացեալ եւ միանգամայն 'ի բաց ծնեալ զբազմութի՟ գարշելեաց 'ի նմանութի՟ նապաստակաց կ՟մ խոզից ։ Յայնժամ զամօթի հարան յոյժ հեթանոսք. այլ անդրէն այպանէին զօրինօք քրիստոնէից, և խաղ առնելով ցուցանէին՝ թէ կամէր և ինքեանց ընդունել զքո̄, եթէ իմասցին ինչ ստուգութ̄բ վ̄ն ն̄ր : Ամին իրի ասէ բրինկաս զառաջաւոր . մեք կարեմք սրտեօք ճանաչել զա̄ծն քո քո̄ կոչեցեր : Պինի ետ ս̄բն Թէոդորոս . մարդասէրն ա̄ծ ետ մեզ զիմաստութի̄, զի ծանիցուք զնա . ի՞ցէ թէ և դուք խնդրէիք 'ի նմանէ, և տայր ձեզ իմաստութի̄ ճանաչել զնա . զի օգուտ մեծ լինէր ձեզ : Իսկ պոսիդոնիոս և բրինկաս ասեն . թէև ճանաչէաք զնա և կամէաք հաւատալ 'ի նա, չեմք բաւական թողուլ զթագաւորն մեր, և դառնալ առ նա :

Ասէ ցնո̄ երանելին . ոչինչ կարէ ոք խափանել զձեզ 'ի թողուլ զխաւար, և դիմել առ լոյսն . և զառժամանակեան համարձակութի̄դ՝ որ առ մահկանացու թագաւորն ձեր՝ 'ի բաց ընկենուլ, և դառնալ յա̄ծ կենդանի, և անսպառ համարձակութ̄բ ճանաչել ձեզ զթագաւորն անմահ, և զինուորիլ նմա յաւիտեան, ո̄պ և եսս : Իբրև ետես բրինկաս, թէ չէ́ մարթ բանի́ յաղթահարել զմկայն, ասէ ցիւրսն . ա՛ղէ սակաւ ինչ աւուրս թողութ̄ տացուք մոլելոյդ այդմիկ . զի անձամբ զանձն խրատեսցէ, և ինքնին եկեսցէ յօգտակարութի̄ իւր . և զայլս ևս 'ի նոյն կրթեսցէ . այլ ես կասկածիմ, դուցէ ոք զմեզ նախատիցէ վասն այսր բանի : Օ այս ասացեալ՝ արձակեաց զնա 'ի բաց . Եւ խորհէր նախ ձեռն արկանել յայլ քրիստոնեայս, որք էին 'ի զօրուն և 'ի քաղաքի անդ ամասիոյ ։

Իսկ երանելւոյն Թէոդորոս իբրև էառ զներումն, ոչ վ՟ն անձին ինչ հոգայր, զի վստահ էր 'ի տ՟ր՝ մատնել զանձն իւր 'ի մահ վ՟ն սիրոյ ն՟ր, այլ վ՟ն այլոց առաւելապէս հոգ 'ի միտ դնէր, զի մի ոք վտանգեսցի ․ վ՟յ առեալ այնուհետև զհասակակիցս իւր՝ որ 'ի զինուորական կարգէ, և զայլս 'ի հաւատացելոց, ստէպ յորդորմամբ խրատէր և զօրացուցանէր հաստատուն կալ յա՟ծ ։ Եւ քանզի բազումք մերձենային առ ս՟բն Թէոդորոս, և կարդային զնա վ՟դ՟պ, յայնժամ մոլեալ անօրինաց՝ կալան զո՟մ ունկնդիրս բանից ն՟ր, և առեալ տանէին 'ի բանտ ․ և ս՟բն զհետ գայր խմբի ն՟ց, և մեծաձայն աղաղակեալ զկնի՝ խրախուսէր 'ի տ՟ր, ուսուցանելով ն՟ց զճանապարհս փրկութե՟ և համբերութե՟, զի մի ուրասցին զթագաւորն ք՟ս ։ Եւ յայսմ ա՟մի վ՟ր ոչ արկին 'ի նա ձեռն ը՟ս առաջին հրամանի իշխանին, մինչև ինքնին ընտրեսցէ զոր կամի ․ թո՛ղ զի և ակնածէին 'ի զօրութ՟է առն ։

Իսկ բարեպաշտ նահատակն և զինուորն ք՟սի տեսեալ, եթէ այլք 'ի նահատակաց արգելան 'ի բանտ, և ինքն յազատութե՟ կայ, յարիագոյն ևս ճակատամարտ վառեալ պատրաստեցաւ ը՟ս օրինակիս ը՟ս այսմիկ ։ Իռաապելեալ մօրն ա՟ծոց ռէայ, որ և կիւբեղէ ասի՝ կին կռոնոսի, տաճար մի էր հոյակապ 'ի քաղաքի անդ ամասիացւոց, շինեալ առ ափին ռիս կ՟մ իրիս գետոյն, որ անցանէր ը՟ս մէջ քաղաքին, և իջանէր 'ի ծովն պոնտոսի · արդ գիտելով քաջին Թէոդորոսի 'ի ժամս անդ պարապոյ զպահ դիպողագոյն, յարեաւ 'ի գիշերին՝ յորում հողմ ուժգնակի շնչէր · և հուր արկե՟լ վառեաց զմեհեանն ողջոյն ։ Նա զայս ոչ գաղտագողի ինչ արարե՟լ թաքչէր, այլ կայր մնայր 'ի տեսիլ հրոյն բորբոքելոյ, յայտ արարեալ՝ եթէ գործովք պատասխանի առնէ հարցափորձի հեթանոսաց, և ակնկալութ՟ն նց՟՝ որում սպասեալ մնային ։ Նա ոչ ը՟դ երկար ինչ ծածկեր գործն · զի 'ի մէջ քաղաքին յայտնապէս ցոլացաւ բոցն · վ՟րյ մինչ չև լուսացեալ աւուրն՝ ընթացան անդր բազմութ՟ի կռապաշտից, և աճապարեալ կալան զԹէոդորոս · քանզի գիտացին՝ թէ նր՟ է գործն · որ՟պս և ինքն իսկ պատմեաց նց՟ անպատրուակ և զուարթ դիմօք · և յաւել պարծել իբրև ը՟դ գործ ուղղութե՟ն, և մեծապէս ծիծաղել ը՟դ վարանս անա՟ծիցն վ՟ս մեհենի չա՟ծուհւոյն իւրեանց ։ Նա հաս 'ի վ՟ր և կռոնիդէս շահապ քաղաքին հանդերձ սպասաւորօք · և զահի հարեալ յանձին վ՟ս իրացն եղելոց՝ ասէ զայրագին · ո՛յ չարամահ չարագութ և անողորմ, զքաղաքս ճաղ արարեր, զտաճարն հայրենի այրեցեր, և զա՟ծս մեր թշնամանեցեր ։ Նա ոչ իշխեալ անձամբ առնել ինչ Թէոդորոսի՝ զոր ճանաչէր լինել 'ի զինուորաց դասէ, ոչ կամեցաւ տանել և առ զօրագլուխս՝ զի մի՛ արդեօք ապրեցուսցեն · այլ փութանակի առե՟լ ած առ գլխաւոր դատաւորն պոբլիոս ստրատոնացի , և սկսաւ ամբաստան լինել այսպէս . Ո՛վ արս այս նորեկ 'ի կարգ զինուորութե՟ մեծ ոճիրս գործեաց 'ի քաղաքիս . զտաճար մօր ա՟ծոյն հրձիգ արար , և թշնամանեաց զա՟ծս մեր . արդ իմ ըմբռնեալ զդա ածի առ քո մեծ իշխանութի՟դ , զի ա՟մ ոք գիտասցէ՝ թէ չար մահու արժանի է դա :

Յայնժամ դատաւորն ետ կոչել զբրինկաս զառաջաւոր արքունի գնդին , և ասէ ցնա առանձինն գանգատանօք . դո՞ւ ետուր դմա ժամանակ թողութե՟ և իշխանութի՟ , զի համարձակ հրկէզ արասցէ զտաճար ա՟ծոյն մերոյ : Իսկ բրինկաս ասէ . ես բազում անգամ աղաչանօք և սպառնալեօք խրատեցի զնա , զի հաւանեսցի գալ 'ի դենս մեր ը՟ս հրամանի թագաւորին . և մինչ թոյլ ետու նմա առ ժամանակ մի , զի զմտաւ ածել զօգուտ անձինն՝ զոհեսցէ . արդ եթէ արհամարհեաց նա զհրամանս մեր , և քամահեաց զա՟ծս , և ընտրեաց զիւրն ք՟սս , ես զի՞նչ առնեմ . դու այսուհետև զհրամայեալսն քեզ արա՛ ը՟ս իշխանութե՟ քում :

Ապա նստեալ դատաւորին յաթոռ՝ հրամայեաց ածել զթէոդորոս առաջի իւր . և ասէ ցնա լի ցասմամբ . զի՞ գործեցեր զայդ . փոխանակ երկրպագանելոյ ա՟ծոց մերոց , և խունկս անուշունս մատուցանելոյ , հրկէ՞զ արարեր զտաճար ն՟ց : Պատասխանի ետ քաջ նահատակն , և ասէ . զոր արարի , ո՛չ ուրանամ . փայտ մատուցի յա՟ծսն ձեր , և իբրև զհուր եղև փայտն 'ի մեհենի անդ.

դէպ ,

դիցդ, և վառեցաւ զնմանէ. ես զփայտան լուցի, և քարեղէն ա՟ծքն ինքնին այրեցան, զի կիր լիցին. և զիա՞րդ ձեր ա՟ծուհին այդչափ անպիտան գտաւ, զի դիւրաւ մերձեցաւ 'ի նա հուրն. յա՛յտ է թէ ճարակ են հրոյ գեհենին նմ ա՟ծք ձեր. այլ զդո՛յշ լինիջիք, զի և դուք ը՟ նոսին կորնչելոց էք հոգւով և մարմնով յանշէջ կիզմանն յաւիտեան :

Արտմնեալ դատաւորին՝ հրամայեաց արկանել զս՟բն 'ի տախտապար, և գանել յոյժ. և մինչդեռ հարկանէին զնա, ասէ ցնա դատաւորն. ապաքէն հեզ բանիւք իմովք և այլոց՝ համարձակութի՟ առեր դու, և այդչափ յանդգնեցար. այլ այսուհետև չար դատաստանօք դատեցայց զքեզ, և տաց քեզ թագաւորական հրամանաց ծառայել: Թէոդորոս ասէ. ո՛չ այդպիսի բանիւք սպառնալեաց հաւանեցուցանես դու զիս, և ոչ տանջանօք կարող ես զիս մեկնել 'ի սիրոյն ք՟սի. և թէ այլ ևս ահագին դատաստանս ածես 'ի վ՟ր, չերկնչիմ ինչ. զի յոյս ապաստանի իմոյ առ ա՟ծ եղեալ է, որ տայ ինձ համբերուի՟, և փրկէ զիս 'ի քոյին խաբէութ՟էդ. և պսակէ անանց փառօք 'ի յերկինս : Դատաւորն ասէ. զոհեա՛, և ե՛րթ փրկեա՛ զանձն քո 'ի տանջանացդ. զի խնայեմ յառո՛յդ հասակդ, և ա՟ծքն ներեն քեզ զվ՟ասն : Ասէ վկայն. ո՛չ են տանջանքս այս յաւիտեան. և ես ո՛չ զանգիտեմ յառժամանակեայ տանջանաց. քանզի տ՟րն իմ և թագաւորն յ՟ս ք՟ս առաջի աչաց իմոց է ․ և փրկել զիս ՚ի տանջանաց քոց՝ զոր մատուցանես ․ այլ դու զնա ոչ տեսանես ․ զի կոյր ես հոգւոյ ականբ , նմին իրի և ոչ զանձինդ քո չար նշմարես ։ Զայս իբրև լուաւ դատաւորն , մռնչեաց իբրև զառիւծ , և ոչ ևս կամեցեալ տեսանել զնա առաջի իւր՝ հրամայեաց վաղվաղակի տանել և արկանել զնա ՚ի բանտ խաւարային , և կնքել զդուրս , և թողուլ անմերձ ՚ի մարդկանէ ․ զի ՚ի սովու և ՚ի ծարաւու մեռցի , և գերեզման նր͞ բանտն լիցի ։ Արդ իբրև արգելլին զերանելին յայն դժնդակ բանտ , նա կայր մխիթարեալ սրտիւ , և կերակրիւր ՚ի ս͞բ հոգւոյն ․ այս է ը͞ պարզելոյ ոմանց՝ հրեշտակ տ͞ն կերակրեր զնա ՚ի բանտին ։ Եւ ՚ի գիշերին յայնմիկ երևեցաւ նմա տ͞րն մեր յ͞ս ք͞ս , և ասէ ցնա ․ Թէ՛ոդորէ քաջալերեա՛ց , զի ես ընդ քեզ եմ , և մի՛ առնուր կերակուր ՚ի մարդկանէ ․ զի քեզ պատրաստեալ է հաց հրեշտակաց յանապական և յերկնաւոր կեանս ․ և զայս ասացեալ փրկիչն վերացաւ ՚ի նմանէ ։ Յայնժամ ըսկսաւ ս͞րն Թէոդորոս գոհանալ զտ͞նէ , և օրհնել զնա ուրախութ͞բ ՚ի ձայն սաղմոսաց ․ և ահա եկին բազմութիւնք զօրաց երկնաւորաց , և ձայնակից եղեն կցորդելին սաղմոսերգութե͞ն սր͞յն ։

Լուեալ բանտապետին զբարբառս բազմութե͞ն , յարուցեալ ընթացաւ ՚ի դուրս բանտին՝ տեսանել թէ զի՞նչ իցէ այն ․ և եգիտ զդուրսն փակեալ և կնքեալ՝ ո͞ղ և էր յառաջադոյն . հայեցաւ ը̃ պատուհանն , և ետես՝ զի բազումք էին ը̃ Թէոդորոսի սպիտակազգեստք , և սաղմոսէին ը̃ նմա . և երևէր սենեակ բանտին լի պայծառ լապտերօք իբրև լուսափայլ ջահաւորուի ։ Զահի հարաւ ը̃ հրաշափառ տեսիլն և ը̃ իրացն պատահումն . և յերկիւղէն գնաց և պատմեաց պօբղիոսի դատաւորին ։

Յայնժամ յարուցեալ գայր դատաւորն ինքնին 'ի դուրս բանտին . և դրօքն փակելովք և կնքելովք լսէր զձայն սաղմոսին 'ի բերանոյ բազմութե̃ ։ Ասէ . ո՞չ ապաքէն քրիստոնեայք են , որք գաղտ մտեալ են 'ի գիշերի առ Թէոդորոս ։ Հրաման ետ զօրականաց վառիլ զինուք , և կազմ կալ շուրջ պատեալ զբանտիւն . և ապա ետ բանալ զդուրս բանտին , զի կալցին զորս 'ի ներքս ։ Եւ ահա ոչ զոք գտին , բայց միայն զծառայն ա̃յ ըզԹէոդորոս պնդեալ 'ի կոճեղս . և անկաւ ահ մեծ 'ի վերայ դատաւորին և որոց ընդ նմայն էին ։

Ապա իբրև գթասիրել 'ի նա կամեցեալ դատաւորին՝ հրամայեաց տալ նմա զութերորդ մասն նկանակի միոջ , և զութերորդ բաժին ջրոյ դորակի միոջ ։ Իսկ երանելին նահատակն՝ ըս̃ պատուիրելոյ նմա փրկչին , և ըս̃ գրեցելումն՝ Թէ արդարն 'ի հաւատոց կեցցէ , ոչ կամեցաւ առնուլ ինչ կերակուր 'ի նոցանէ . այլ ասէ , զիս կերակրէ տ̃րն իմ և Թագաւորն , բարերարն և ողորմածն ։ Յետ այսորիկ հրաման ետ դատաւորն ածել

ծել անդրէն զսբ̃ն զառաջեաւ, և ասէ ցնա․ Թէոդորէ հաւանեա՛ ինձ, և զոհեա՛ ա̃ծոցն առանց չարչարանաց․ երդուեալ իմ յա̃մ ա̃ծս, զի գրովք 'ի Թագաւորաց հաստատեմ զքեզ տ̃ր ծ̃իս, և քահանայապետ ա̃ծոցն, և աթոռակից իշխանութե̃ իմոյ․ և յինէն ևս ընկալցիս պարգևս մեծամեծս։ Իսկ երանելին համբարձեալ զաչս իւր յերկինս՝ կընքեաց զինքն նշանաւ սբ̃յ խաչին․ և ապա ասէ համարձակ ցբռնաւորն․ մարմ̃նոյ իմոյ ունիս իշխանութի, այլ ո՛չ 'ի վ̃ր մտաց և կամաց հոգւոյս․ և արդ եթէ 'ի հուր արկանես, եթէ գազանաց մատնես, և եթէ այլ բազմազան տանջանօք ապականես զբովանդակ մարմինս իմ, ցորչափ իցէ շունչ յըռնգունս իմ, ո՛չ ուրանամ զանունն տ̃ն մերոյ յ̃ի ք̃ի ։

Այլ վ̃ս բանին՝ զի խոստանայքն նմա զպատիւ քահանայապետութե կռոց, ը̃երկարագոյն ծիծաղեցաւ երանելին, և ասէ․ Ես զքահանայս դրօշելոյ կռոցն եղկելիս համարիմ քան զա̃մ մարդիկ, և ո՛չ պաշտօնեայս սնոտեաց ողբամ զն̃ս․ ո՞րչափ ևս առաւել զքահանայապետսդ Թշուառականս դատիմ, և տաղտկամ իբրև 'ի գարշելեաց․ զի առ վատթարագոյնսն ա՛յն է առաւել հիգագոյն, որ մեծ ևս իցէ և նախապատիւ․ ո՛չ և առ անիրաւսն անիրաւագոյնն, և առ արինարբու գազանս մարդասպանն գիշախանձ եղբօր իւրոյ․ իսկ արդ՝ զիա՞րդ դուք կորստական հրապուրանօք ինձ խոստանայք զմեծն 'ի չարեաց • և այն՝ յօժարելոյս ա͞ծպաշտութ͞բ և ը͞ն ա͞յ առաքինութ͞բ քաղաքավարիլ, թէպէտև անշուք կենօք 'ի յետին ցածութե͞ • զի լաւ է ինձ ընկեցիկ լինել 'ի տան ա͞ն առաւել քան բնականալ 'ի յարկս մեղաւորաց : Ու վնկ իսկ ես զթագաւորադձեր աւաղեմ իբրև ողորմելիս • զի ոչ շատացեալ թագաւորական իշխանութ͞բ՝ յաւելուն յանձինս ձգել և զքրմապետութե͞ կարծեցեալ պատի՛ւ՝ քահանայապետ զինքեանս կարդալով• և որ յարքունի ծիրանիս փայլէին, այնուհետև և 'ի պղծալից բագինսն մերձեալք՝ փոխանակ թագաւորաց խոհարարք և յաշտարարք լինին, զհաւսն զոհելով, և զվատթարագոյն անասնոց զփորոտիս շօշափելով, և արիւնաշաղախ ձեռօք իբրև զմսավաճառս 'ի սպանդանոցս նստելով, և ճարպով զոհիցն զանձինս զանգանելով :

Զայս ա͞մ լուեալ հեթանոսաց՝ կրճտէին զատամունս 'ի վ͞ր ս͞բյն , զի չարաչար մահու կորուսցեն զնա իբրև հայհոյիչ դից և թագաւորաց : 'Ի խորհուրդ կոչէր դատաւորն զբրինկաս զառաջաւոր , և ասէր ցնա • զի՞նչ արասցուք զայս այր : Յայնժամ ը͞ն խորհրդոյ նո͞ր հրամայեաց կախել զո͞քն գլխիվայր • և հարկանել զնա փշալից գաւազանօք • և այնչափ հարին զերանելին , մինչև քանցեցան ա͞մ մարմինք նորա : Ու ոչ այսու շատացեալ անօրինացն՝ ակնարկեցին դահճաց մատնել զնա և 'ի քերանս • և այնչափ քերեցին երկաթի քերչօք , մինչև մերկացան կողքն, և անկանէր հատուած 'ի մարմնոյն յերկիր, և լեարդն Թոքովն հանդերձ երևէր արտաքս։ Իսկ քաջ նահատակն ք̅սի զուարթագին կայր 'ի տանջանս անհնարինս զօրութ̅բ տ̅ն, ո̅չ թէ այլոյ ուրուք մարմին իցէ՝ որ տանջի. և ոչինչ տայր պատասխանի, այլ յաղօթս կայր, և ասէր. օրհնեցից զքեզ տ̅ր յա̅մ ժամ, հանապազ օրհնութ̅ի քո 'ի բերանի իմում. և ստէպ զյ̅ս կարդայր փրկիչ իւր։

Իսկ դատաւորն իբրև լսէր զայս, զարմացեալ կայր ը̅ սքանչելի համբերութ̅ե առաքինւոյն. և զչարեալ ը̅ անպարտելի հաստատութ̅ե ոգւոյ ն̅ր՝ ասէր առ զայրոյթ սրտին. չամաչե̅ս այ̅ տառապեալ քան զա̅մ մարդիկ, զի 'ի մարդ մեռեալ ունիս զյոյս քո, և մանաւանդ 'ի բռնամահիկ յ̅ս անուն. այնպէս անբան ես, մինչ մնոտի յուսով այդպիսի տանջանաց զքեզ մատնեցեր։ Յայնժամ ետ պատասխանի ս̅րն Թէոդորոս, և ասէ. այս գեղեցիկ ամօթ ինձ եղիցի, և ա̅մ մարդոյ՝ որ երկնչի յա̅յ, և կարդայ զանուն տ̅ն յ̅սի ք̅սի, որ տ̅րն է փառաց։ Իսկ ամբոխն հեթանոսաց՝ որ կայր 'ի հեռաստանէ, աղաղակէր վաղվաղակի կորուսանել զնա։

Դարձեալ դուն գործէր դատաւորն լուծանել զպնդութ̅ի սրտի ն̅ր, և դարձուցանել զնա 'ի կամս իւր. վ̅յ հրամայեաց զկիւրդեկոն դահճն (կ̅մ զկիրիկոն, որ է քարոզ և մունետիկ 'ի մէջ դահճաց), զի հնարեսցի ահարկութ̅բ և քաղցրութ̅բ կակղել զխիստ

Թէոդորոսի ․ ասա՛ ասէ նմա , զոհեա՛ , և երթ Թափեա՛ 'ի տանջանացդ յայդցանէ ։ Իսկ քաջայաղթ վկայն ք՟ի զայրացեալ յոգի իւր վ՟ն կուրութե՟ն հեթանոսաց , և վասն այնչափ ստիպելոյ նո՟ց զնա 'ի յետին մոլորութ՟ի , սկսաւ առաւել ևս կշտամբել զբռնաւորն , և ասէ ․ ո՛վ ամպարիշտ և ապիրատ , լի ա՟մ անիրաւութ՟բ և թշուառութ՟բ , որդի՛ սատանայի , ժառանգ դժոխոց , և գրաւական գեհենին , մինչև յե՞րբ ոչ երկնչիս յա՟յ շնորհողէն քեզ զայդպիսի իշխանութ՟իդ , և ոչ պատկառես 'ի հզօրէն ․ և ոչ իմանաս , թէ Թագաւորք ա՟լ ունին զթագաւորութի՟ս , և դատաւորք զա՟րութի ․ և դու զիս բռնադատես թողուլ զա՟ծ կենդանի , և երկիրպագանել քարեղինաց անշունչ պատկերաց ։

Օ ամօթի հարաւ պռոքղոս 'ի յանդիմանութ՟է ս՟բյն ․ և ոչ ևս կամեցեալ յերկարել բանս ը՟ նմա՝ ասէ ․ ընտրեա՛ զոր կամիս , զի՞ փաղփաղակի կատարեսցուք 'ի վ՟ր քո ․ զի՞նչ կամիս այսուհետև , ընդ մե՞զ լինել , եթէ ը՟ ք՟ին քում (5) ։ Պ՟խնի ետ վկայն ուրախութ՟բ ․ ես ը՟ ք՟ին իմում էի և եմ և եղէց յաւիտեան ․ և արդ դու զոր փութես՝ արա՛ փաղփաղակի ։ Յայնժամ բռնաւորն ետ վճիռ հրամանի վասն նորա օրինակ զայս ․

Օ Թէոդորոս ոչ հաւանեալ բարեյաղթ թագաւորաց և ա՟ծոցն , այլ հաւանեալ յ՟ի ք՟ի 'ի պահել զաւանդ նորա , որ խաչեցաւ առ պոնտացւով պիղատոսիւ 'ի հրէից , զսա հրամայեմ հրկէզ առնել ․ որում և արժանի

Իսկ է վասն հրկէզ առնելոյ զտաճար մօրն ա̄ծոյ ։

Եւ ընդ ելանել վճռոյն՝ փութացեալ սպասաւորաց ատենին և ամբոխին վաղվաղակի պատրաստել զհուրն, բերին և կուտեցին ՚ի միում վայրի ՚ի փայտից՝ որ ՚ի պէտս բաղանեաց. յայնժամ ետ դատաւորն պնդել զվկայն ՚ի վ̄ր փայտի, և տանել ՚ի փայտակոյտ անդր ։ Երբև ածին զերանելին ՚ի տեղին՝ ուր հրամայեցաւ, և հուրն պատրաստեալ բորբոքեցաւ, տ̄նագրեաց նա զդէմս և զանձն բովանդակ նշանաւ ս̄բյ խաչին, և յաղօթս կացեալ նուիրէր զինքն ողջակեզ բանաւոր ՚ի զոհ ընդունելի արարչին իւրոյ, և ասէր. Տուր ինձ զօրութ̄ի ա̄ծ փրկիչ իմ, և շնորհեա՛ կատարել զընթացս իմ քրիստոնէութ̄ե, և առնուլ զնշան յաղթութ̄ե քո. պարգևեա՛ տ̄ր և որք ընդ իս ըմբռնեցան ՚ի դեռընտիր կարգէ զինուորութ̄ե և յայլոց հաւատացելոց, զի և նք̄ ճշմարիտ խոստովանութ̄ե և հաւատով անուան քո կատարեալ՝ յաղթեսցեն հակառակամարտին, և ընկալցին ՚ի քէն զանթառամ պսակն ։

Զայս ասացեալ՝ համբարձ զաչս իւր ՚ի բազմութ̄ին. և ետես անդ զկղեմնիկոս կամ զկաղինիկոս (6) զինուորակից իւր և մտերիմ սիրելի, ը̄ որում միաբանաբար մտեալ էր ՚ի տիւռոնական կարգ նորակիրթ զինուորութ̄ե. աղաղակեաց առ նա, և ասէ. Կղեմնիկէ քեզ ասեմ, փութա՛ հասանել ինձ. քանզի որ յայպանելի ծիս ոչ թողաք

զմե

զմիմեանս, այնպ՟ս և 'ի կեանսն յաւիտենից մի՛ թողցուք զմիմեանս :

Յետ այսց բանից դարձեալ աղօթէր երանելին, և ասէր · Տ՟ր Յ՟ս Ք՟ս՝ որ միջնորդդ ես ա՟յ և մարդկան · որ արժանի արարեր զիս զտառապեալս յաղթել բռնաւորին, և կատարել զհանդէսս զայս խոստովանութ՟բ անուան ամենաս՟բ երրորդութ՟եդ · գոհանամ զքէն, և առաւել գոհանամ առ ժամս և յանսպառ յաւիտեանսն : Ընկալ Տ՟ր զհոգիս իմ խաղաղութ՟բ, զի փառաւորեսցի յիս ա՟բ անունդ հօր և որդւոյ և հոգւոյդ ս՟բյ՝ յիս 'ի տառապեալս, որ գտի 'ի քէն զանըպառ ողորմութ՟ի քո, առաւելեալ 'ի շնորհաց քոց պարգևս :

Զայս իբրև ասաց, առեալ արկին զնա 'ի մէջ հրոյն բորբոքելոյ · և կայր երանելին 'ի հնոցի անդ զուարթատեսիլ իբրև զմարդ կարմիր և անուշահոտ · և զօրացեալ 'ի Հոգւոյն ս՟բ՝ ետ միւսանգամ փառս ա՟յ, ասելով · փա՛ռք քեզ Հա՛յր ս՟բ, փա՛ռք քեզ Որդի՛դ միածին, փա՛ռք քեզ Հոգի՛դ ճշմարտութ՟ե · ա՟բ երրորդութ՟իդ միում ա՟ծութ՟եդ՝ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից : Եւ ասացեալ զամէնն՝ զօրէն փչման արձակեաց զոգին, և աւանդեաց 'ի ձեռս ա՟յ : Եւ որք մերձն կային 'ի հաւատացելոց, տեսին զհոգի երանելւոյն, զի իբրև զփայլակն վերացաւ յերկինս :(7)

Եւ եղև իբրև 'ի բաց փարատեցաւ ամբոխն, եկն նախայիշատակեալն եւսեբի եւքայիտացի՝ անո՛ւամբ և արդեամբք բարեպաշտ, և տո՛ւեալ ինչս բազումս՝ խնդրեաց և եառ զպատո՛ւական մարմին սբ͞յն Թէոդորոսի, զոր իբրև որդի սիրելի ունէր. և հանդերձեալ կազմեաց ազնի՛ւ գինւով և անոյշ իւղով, և պատեալ 'ի մաքուր կտաւս՝ ամփոփեաց 'ի տապանակի. և տարեալ 'ի քաղաքէ անտի ամասիոյ 'ի գիւղն իւր եւքայիտայ՝ հանգոյց 'ի տան իւրում. և սպասաւորէր ն͞ր նշխարաց մեծաւ հաւատով, կատարելով ը͞ այլ հաւատացեալս զյիշատակ սբ͞յն 'ի փառս ամենասբ͞ երրորդութ͞ե ։

Եւ եղև այնուհետև տունն այն երևելի ուխտատեղի՝ փայլեալ սքանչելեօք. և ապա շինեցաւ եկեղեցի. ուր բարեխօսու͞ե սբ͞յն Թէոդորոսի բժշկէին ախտաժէտք և դի՛ւահարք. և համօրէն բնակիչք կողմանցն այնոցիկ յա͞մ նեղութ͞ս իւրեանց դիմէին 'ի տապան փառաւորեալ վկային, և հաւատով գտանէին զօգնականութ͞ի ։ Ընդ բերեալ եղև ասեն յետ ոչ բազում ամաց և մարմին միւս նշանաւոր վկային Թէոդորոսի ստրատելատի, որ քեռորդին էր սորին Թէոդորոսի տիւռոնի. յորմէ և ոմանք շփոթեցին ի՛իք ի՛իք զգործս երկոցունց ը͞ միմեանս ։ Ընդ սբ͞յն Թէոդորոսի առաջնոյ 'ի նոյն աւուրս ասին նահատակեալ և զինո՛ւորակիցք ն͞ր և ազգակիցք՝ երեքին վկայք. կղէոնիկոս, եւտրոպիոս, և բասիլիսկոս. յորոց զառաջնոյն գուշակեաց յորդորանօք և ս͞բն Թէոդորոս ը͞ նախաճառելոցս ։

Սա

Կատարումն բարեյաղթ վկայիս սբ՟յն Թէոդորոսի տիւռնի եղև յամի տն՟ իբր ․ 305 ․ ՚ի ժէ աւուր ամսեանն փետրվարի , որ հասարակօրէն անկանի ՚ի սկիզբն աղուհացից ․ վ՟ն որոյ և յառաջին շաբաթու քառասնորդաց կատարի տօն ն՟ր ո՛չ միայն ՚ի մեզ , այլև ՚ի յունաց առանձին հանդիսիւ ․ որոյ գլխաւոր պատճառն այսպէս առաջի դնի միաբան աւանդութ՟բ ՝ առեալ ՚ի պատմուէ՟ նեքտառիոսի պատրիարգի ։

Յետ իբր վաթսուն ամաց ՚ի նահատակուէ՟ անտի սբ՟յն Թէոդորոսի զինաւորի՝ յորժամ թագաւորեաց ուրացօղն յուլիանոս , և յարոյց հալածանս սաստիկս ընդդէմ քրիստոնէից , տեսեալ անօրինին՝ թէ անմա՛րթ է նուաճել զն՟ս յայտնի բռնութ՟բ , խորհեցաւ սատանայական հնարիւք շաղախել զնոսա ՚ի հեթանոսական պղծութ՟իս ․ քանզի ՚ի մերձենալ քառասնորդական պահոցն աղուհացից կոչեաց առ ինքն զեպարքոսն , և ասէ ․ ո՛րչափ ջանս եդի վ՟ն քրիստոնէից դարձուցանել զն՟ս ՚ի պաշտօնս մեր , ոչ կարացի՝ ո՛չ ողոքանօք և ո՛չ սպառնալեօք ․ իսկ ՚ի դիւրերիս յայսմիկ քաջ խորհուրդ արկին ածքն ՚ի սիրտ իմ ․ զոր եթէ արարից , այնու հետև քրիստոնեայք կա՛մ ուրանան և զոհեն դից , և կամ ՚ի սովոյ մեռանին ։ Եւ խորհուրդն այս ինչ է ․ ահա մերձեալ է պահք իւրեանց մեծ , զոր ա՟մ ոք ջանայ պահել սրբութ՟բ ․ արդ պատուէ՛ր տուր ՚ի քաղաքդ , որ ո՛չ հաց և ո՛չ այլ ինչ ՚ի պէտս կերակրոյ կ՟ ըմպելւոյ դիցեն 'ի վաճառ, այլ զոր եսն առաքեցից 'ի վաճառարանսն՝ խառնելով զո՟մ ինչ 'ի ճարպոյ և յարենէ զոհիցն. զի որք գնեն՝ յակամայ կամս կերիցեն, և լուծեալ զպահեցողութ՟ի 'ի պարարտաց՝ հաղորդ լիցին միանգամայն զոհից ա՟ծոց մերոց. ապա թէ ոչ՝ անսուաղութ՟ սատակեսցին: Եւ եպարքոսն գումեաց զխորհուրդ չարին, և փութացաւ կատարել զհրամայեալսն. վ՟ն 'ի սկիզբն լինել աղուհացից ոչ ետ հանել 'ի վաճառս այլ ինչ, բայց միայն զպղծե՟լ հացս և զայլ պէտս կերակրոց՝ զոր առաքեաց պիղծ արքայն: Այլ բարեխնամն ա՟ծ կանխե՟լ ունայնացոյց զչարաչար զայն խորհուրդ ժանտագործին, և զիւր հաւատացե՟լսն պահեաց 'ի զազրալի կերակրոցն. քանզի յառաջին գիշերի 'ի մուտս պահոցն երևեցաւ վկայն ք՟ի ս՟րբն Թէոդորոս՝ պատրիարգի քաղաքին (Թերևս անտիոքայ ասօրւոց, ուր էր յուլիանոս նախ քան զերթալն 'ի պարսս), և ասաց. ընդ առաւօտն ժողովեա առ քեզ զո՟մ քրիստոնեայս, և պատուիրեա ն՟ց՝ զի ամենևին կերակուր մի գնեսցեն 'ի վաճառանոցէն. քանզի ո՟մ ինչ պղծեալ և խառնե՟լ է 'ի ճարպոյ և յարենէ զոհիցն հեթանոսաց: Ասէ հայրապետն. որ մեծատունքն են, ունին զի՞նչ ուտիցեն. քանզի կան ն՟ց մթերք ամբարե՟լ 'ի տունս իւրեանց. իսկ աղքատքն և օտարականք՝ որք զաւուրն պարէնս 'ի վաճառանոցէ առնուն, ուստի՞ կամ զի՞նչ կերիցեն: Եւ ս՟րբն ասէ. տա՛ ն՟ց, զի կուլիբա կերիցեն ․ (այն է ռամկօրէն գո՛լիվա ը՟ հնչման յունաց) ․ և որ ոչն ունին և զայն , դուտուր ն՟ց ուտել ․ և այնպէս ազատ կացո զն՟ս 'ի պղծութ՟է հեթանոսաց ։ Իսկ հայրապետն անգիտացեալ զանսովոր անուն կուլիբային՝ հարցանէր , թէ զի՞նչ իցէ այն ։ Ասէ ս՟բն Թէոդորոս ․ այն է ցորենահատ եփեալ ․ զի մեք ասէ յերկիրն եւխայիտայ՝ եփած ցորենոյն կուլիբա ասեմք ։ Որով յայտ արար միանգամայն ս՟բն , թէ ինքն է ծանուցեալ վկայն ք՟ի 'ի կողմանց եւխայիտայ , ուր անդստին 'ի մանկութ՟է սնաւ ցորենահատի՛ ։ Բայց հայրապետն՝ որ ոչ գիտէր հաւաստեաւ զստուգութ՟ի տեսլեանն , ոչ ծանեաւ զս՟բն ․ մ՟այ և եհարց համարձակ՝ ասելով ․ և դու ո՞ իցես տ՟ր , որ այդպիսի խնամարկութ՟բ և գթով հոգացար զփրկութ՟ի ժողովրդեանն ք՟ի ։ Եւ նա ասէ ․ ես եմ Թէոդորոս զինուորն և վկայն ք՟ի յեւխայիտայ ․ որ առաքեցայ 'ի տ՟նէ ա՟յ ազդել ձեզ զբանդ զայդ ։

Յարուցեալ պատրիարգին ը՟ առաւօտն՝ ժողովեաց զա՟մ եկեղեցեաց աւագ երիցունսն , և պատմեաց ն՟ց զտեսիլն ․ և ասաց , զի ա՟մ աւագերէց պատուիրեսցէ իւր ժողովրդեանն առնել ը՟ հրամանի ս՟բյն ։ Զայն իբրև գիտաց ուրացողն յուլիանոս , յամօթ եղև գործակցօքն իւրովք ․ և զի նաև վաճառօղքն սկսան գանգատանօք բողոքել վ՟ս դադարելոյ վաճառաց , զի ոչ գնէր ինչ ոք այլ քրիստոնեայ , հարկեցաւ թագաւորն յետս դարձուցանել զանօրէն հրամանն. և ինքն յամօթոյն 'ի նաւ մտեալ ել 'ի քաղաքէն իբրև 'ի պէտս կարեւոր ինչ գործոց ։ Իսկ հաւատացեալքն իբրև հասին 'ի շաբաթ օրն, տօն կատարեցին 'ի պատիւ սր՟յն թէոդորոսի ուրախութ՟բ մեծաւ. և եփեալ ցորեան բաղում՝ բաշխեցին աղքատաց 'ի յիշատակ սր՟յն. և նոյն սովորութ՟ի պահեցաւ և առ յապայն 'ի փառս ա՟յ ։

Գրեն դարձեալ պատմաբանք յունաց զոնարաս և կեդրենոս այլովքն հանդերձ զայլ սքանչելիս, յորժամ շարժեցաւ յովհաննէս չմշկիկ կայսրն յունաց հայկազն 'ի նորոգել զեւքայիտա քաղաք, և անուանել թէոդորոսուպօլիս. այլ առանց բացայայտ որոշման, թէ առ ո՞ր յերկուց համանուն և ազգակից սր՟ց թէոդորոս կոչեցելոց հայեցի ։ Յորժամ ել ասեն յովհաննէս չմշկիկ կայսրն բարեպաշտ 'ի պատերազմ ը՟դ էմնախնի ռուսաց սկիւթացւոց՝ յամի տ՟ն. 971. յերկարել գործոյ պատերազմին դիմեաց յօգնականութ՟ի բարեյաղթ վկային ք՟ի սր՟յն թէոդորոսի, և այնպէս իսպառ խորտակեաց զթշնամիս. քանզի երևեցաւ յանդիման զօրու քրիստոնէից այր հեծեալ 'ի ձի սպիտակ, որ խաղաց ահագին զօրութ՟բ ընդդէմ ճակատու թշնամեաց իբրև յառաջամարտ ախոյեան. և դղրդեալ սասանեցոյց զն՟ս. յորմէ եղև և կայսեր յառաջ մղել զիւր ճակատ, և 'ի գլուխ հանել զյաղթութ՟ի ։ Եւ թէպէտև ոչ ոք ծանեաւ 'ի զօրաց՝ թէ ո՛ ոք էր այրն այն, այլ

հաւ

հաստատեցան 'ի բանից կայսերն՝ թէ ս՟բն Թէոդորոս ինքնին էր այն . որոյ և 'ի նմին աւուր հանդիպեցաւ տօն յիշատակի :

Նաև ես հաւաստարիմացոյց զնոյն տեսիլ այլ տեսիլ եղեալ 'ի թ՟գւորական քաղաքի . ք՟զի ասեն կին ոմն բարեպաշտ 'ի Կոստանդինուպօլիս՝ միով աւուրբ յառաջ քան զօր պատերազմին այդ տեսանէր 'ի տեսլեան, զի կայր ինքն մօտ օգոստայ տիրուհւոյն ս՟բ ա՟ծածնի, և լսէր 'ի նմանէ ասել առ զօրական ոմն . Տ՟ր Թէոդորէ, իմ և քո սիրելին յովհաննէս (կայսր) 'ի վիշտս կայ վտանգի . փութա՛ հասանել նմա 'ի թիկունս օգնականութե՟ . և զայս պատմեաց կինն մերձաւորաց իւրոց 'ի վաղիւ անդր . որ և գտաւ յետոյ լինել օր յաղթութե՟ : Նմին իրի 'ի շնորհակալիս երախտեաց ս՟բյն Թէոդորոսի կայսրն չմշկիկ եւ 'ի հիմանց քակել զփոքրիկ վկայարան տապանի ս՟բյն յեւքայիտա, և շինեաց մեծակառոյց տաճար, կարգեալ նմին և մեծահաս կալուածս . և զքաղաքն եւքայիտա (որ է այլոց եւքանիա) կոչեաց Թէոդորուպօլիս . որ անխտիր հայի 'ի պատիւ ս՟բյն Թէոդորոսի առաջնոյ և երկրորդի . զի և ռամկօրէն զերկոցունց անխտիր զոյգ է այլոց համանուն վկայից ս՟բ Թորոս ասի . ո՟չ և այլ տաճարք և վկայարանք, որ գտանին յայլևայլ քաղաքս արևելից և արևմտից, մանաւանդ և նշխարք ն՟ց սփռեալք 'ի բազում տեղիս՝ բազում մասամբ են դժուարագիտելի, թէ ո՟ւմ յերկոցունց իցէ ընծայելի . այն զի՝ ո՟չ

աւ

առաջինն՝ Թէոդորոս տիրոնին՝ միօրինակ զինաւոր և զօրավար կոչի, նոյնպէս և երկրորդին անուն ստրատելատ՝ զօրավար թարգմանի ։

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ ։

(1) Ըստ ընտրելագոյն օրինակաց տօնացուցից, մանաւանդ թէ առ ստուգագոյն որոշումն անուանց՝ առաջինս այս որ Թէոդորոս՝ կոչի և է կոչելի ԶԻՆԱՒՈՐ, քան թէ զօրավար. և սակայն տեսանեմք՝ զի ոչ յօրինակս ինչ տօնացուցից, նոյնպէս և 'ի Ճառընտիրս և առ զանազան մատենադիրս մեր ԶՕՐԱՎԱՐ գրի վր սորին սրբոյ. և թէպէտև ստրատելատն անուն սեպհականեալ երկրորդ Թէոդորոսի՝ նշանակէ զօրավար, բայց ոչ երբէք 'ի գիրս և 'ի տօնացոյցս մեր զօրավար ձայնի, այլ միշտ ստրատելատ. և այսպէս չիք 'ի մէջ շփոթումն ինչ. թող այլք որոշեսցեն զշփոթութիւն լուրեանց. որպէս տեսցի 'ի մօտոյ ։

Առ այժմ ծանիր, զի գլխաւոր որոշիչ առաջնոյս Թէոդորոսի է անուն գնդի նորա ՏԻՐՈՆ, կմ ՏԻՐՈՆՆ, այ̄ համրակ. այ̄ որում և սբն գրիգոր նիւսացի 'ի ներբողեանն նր երկիցս կոչէ զնա սովին յունական կմ հռովմայեցի ձայնիւ ՏԻՐՈՆ կամ ՏԻՐՈՆՆ. զոր և հայերէն թարգմանն է զի յեղու 'ի մէջ ՆՈՐԱԿԱՐԳ, և է զի ՏԻՐՈՆԷՍ ։ Նոյնպէս և 'ի վկայաբանութեան Ճառընտրաց մերոց թարգմանեալ տեսանի երբեմն ՆՈՐԷԿ, և երբեմն ՆՈՐԱԿԵՐՊ. այլ պահելով բազում անգամ և զհնչումն ըստ ձայնին. մանաւանդ յաւել անդ. * կոչեցին զնա տիւռոնն ||. այ̄ գրեցին Ե̄ նորակարգ զինուորս ։

Եւ թէպէտև յառաջեաց Թէոդորոս 'ի կարգի անդ, մինչև կամէր զնա զօրագլուխն 'ի վերագոյն պաշտօն հանել զօրավարութե. այլ նա ոչ էառ յանձն. և այսպէս համարեցաւ՝ ոչ երբեք, 'ի կարգի ազատ զօրականի կմ սպայի, այ̄ այրուձիոյ ։ Վ̄ որոյ և բոլլանդ 'Ի ՓԵՏՐ. 7. 'ի քննութե վարուց ստրատելատին այսպէս գրէ և վասն զինուորին Թէոդորոսի. * տիւռոն կոչի հասարակօ֊
,, րէն, ոչ զի և 'ի ժամանակի նահատակութե իւրոյ՝ դեռ
,, այն ինչ իբրև համրակ մարզէր 'ի զինուորութե, այլ
,, (որ֊

,, (որպէս ծանուցանէ գուառ․․․) զի գլխաւոր էր 'ի
,, գունդն անուանեալ տիւռոնաց, և կամ հարիւրա_
,, պետ․ և կմ̅ զի էր լոկ 'ի կարգէ անտի տիւռոնաց՝
,, ը̅ Նիկեփորի||․ և ը̅ այսմ արդարանայ 'ի մէջ երբեմն
զինուոր և երբեմն զօրավար կոչել զտիւռոն ։

(2) Գեղեցիկ միաբանին ը̅ բովանդակ վկայաբանութ̅ես ճառընտրաց մերոց՝ Հ․ և Յ․ և զնոյն վկայաբանութ̅ն քաղէ գրիգոր նիւսացին 'ի ներբողեան սր̅յն․ վս̅ որոյ և չէք մեր բնաւին երկբայուն ը̅ առաջիկայս պատմուն ծագէ 'ի ծագ․ և զի պանծագոյն ևս ունիմք 'ի ճառընտիրս մեր նաև զվկայաբանուն Թէոդորոսի ստրատելատի գրեալ 'ի ճարտար դպրէ նր̅ յաբգար դպրէ, վս̅ որոյ որոշեալ և յստակ է 'ի մէջ երկաքանչիւր վարք տիւռոնի և ստրատելատի, զոր չփոթ տեսանեմք ը̅ իմիք առ յետին յոյնս, և առաւել խառնակեալ առ լատինս ։ Պատճառ չփոթութե̅ այն է, զի սուրիոս և այլ արևմտեան վկայագիրք՝ ոչ գիտեմ որպիսի օրինակի մետափրաստեսի հանդիպեալք, զպատմութիւն վիշապին ընծայեն Թէոդորոսի ստրատելատի առակլայցւոյ․ զոր ճառընտիրք մեր․ և Հ․ և Յ․ ը̅ բասիլեան վաւերական յայսմաւուրք յունաց՝ պատմեն զառաջնոյն Թէոդորոսէ տիւռոնէ ։

Միայն ժամագիրքն յունաց՝ որ բաղադրեալ է 'ի հին և 'ի նոր խառն աւանդից, յերկուս հետս կաղայ․ քանզի նախ բարւոք գրէ 'ի փետր․ 17․ վս̅ տիւռոնի․ * զխռ_
,, բագէտ վիշապին ջաղխեցեր զգլուխ․ վս̅ որոյ և 'ի
,, նահատակութե̅ քում քո̅ բոլորեալ պսակեաց զպատ_
,, ուական գլուխ քո ով մեծավկայ նահատակ||․ և թէ՝
* հրով ողջակիզեալ՝ ոչ̅ հաց անուշակ՝ երրորդութե̅
,, նուիրի||․ և 'ի կարգի պատմութեն․ * մտեալ 'ի զին_
,, ուորութ տիւռոնաց, և ը̅ կարգաւ բրինկայ զառա_
,, ջաւորի դատեալ||․ ևն̅․ և * կատարի (ասէ) յիշատակ
,, տօնախմբութե̅ նր̅ 'ի սր̅ք վկայարանի նր̅՝ որ 'ի փորակ․
,, 'ի շաբաթու առաջին եօթնեկի պահոց, յորժամ դի_
,, պեցաւ 'ի ձեռն նր̅ սքանչելիք կուլիբային․ որով ըղ_
,, ձողմուրդն ուղղափառաց ազատեաց 'ի պիղծ կերակ_
,, րոյ զոհից||։ Այլ յետոյ յաւուր տօնի Թէոդորոսի
ստրատելատի 'ի յունիսի․ 8․ երգի անդանօր զնմանէ․
* նիզակաւ արութե̅ քո ջախեալ զվիշապն, հզօրացեալք
,, մեծապէս՝ ոչ̅ զօրական անպարտելի․․․ ոչ̅ ստրա_
,, տելատ զօրաւոր||․ և այլն։ Եւ զայս երկրորդ կար_
ծիս կալան բազումք 'ի լատինացւոց ։

Այսմ վճռական կարծեաց երկու պատճառք մարթին օգնել. նախ՝ թէ Գրիգոր Նիւսացին, որ գրեաց զներբողեան տիւռինի, ոչ յիշէ զմիշտայքին տեսութիւն ՚ի նմանէ. ուրեմն ո՛չ նա, այլ սորատեղայն սպան՝ զմիշտայն։ Երկրորդ՝ զի վաւերական վկայաբանութիւն սորատեղայոյն իբրև ՚ի դպրէ նր՟ յարգարէ գրեալ, ունի ըզպատմութիւն միշտայքին ՚ի յոյն և ՚ի լատին օրինակս՝ որ յանուն մետափրաստեսի կամ անանուն հաւաքողի վկայաբանութեանս։

Այլ անաչառ խօսելով՝ ոչինչ օգտեն այս պատճառք. առաջինն՝ զի պակասական է. և ո՛ ոչ գիտէ, թէ որք հարքն ՚ի խօսելն ճառ ՚ի վ՟ր սր՟ց՝ ո՛չ զլիակատար պատմութիւն նոցա շարագրեն, այլ նիւթ առեալ զառաքինի գործս նց՟ ներբողաբար պատուեն զնոսա. և ահա Նիւսացին զընթացս վկայութեան և կատարման սր՟յն համառօտ վկայաբանութեամբ քաղէ. և զմիշտայքին տեսութիւն իբրև զարտաքին քաջութիւն ենթադրէ և ոչ յիշէ. և զնպատակ ճառին ուղղէ ՚ի ձգել զլսօղս ՚ի ջերմեռանդն պաշտօն սր՟յն։ Այս թէ ոչ՝ ըստ սովորական ՚ի մերմէ վկայաբանութեան, ոչ բարւոք խմնան զբանս Նիւսացւոյն. այլ և տեսանեմք իսկ, զի հաւաքիչք և միջեգաս ոչ կարելով մարմնել զվկայագիրս յունաց և լատինացւոց՝ զներբողեան Նիւսացւոյն արարին իւրեանց նիւթ վկայաբանութեան. և այսպ ասեմք հայեցեալ ՚ի հնաբանեան բանս ներբողեանին՝ վարանեցան, թէ առ որ յերկուց Թէոդորոսաց հայի ճառն այն. և ասեմք իրխեցին յաւելուլ ՚ի փոխման բանից Նիւսացւոյն համառօտ ինչ, զի ՚ի՟ առաջնոյն Թէոդորոսի յիշեսցի և երկրորդն, այսպէս. * կոչեմ զանծանօթից և զնմանակենցաղն, քո զԹէոդորոս՝ համգերձ անմնեքումբք ||. այլ մեզ չէ՟ հարկ զայսպիսիս խնդրել, երբ գիտեմք զումեմն՝ խօսի Նիւսացին։

Իսկ երկրորդ պատճառն՝ ՚ի հակառակն զօրէ առաւել. զի հարազատ վկայաբանութիւն սորատեղայոյն դպրեայն յարգարէ՝ որ կայ ՚ի ճառընտիրս մեր, ոչ առնէ յիշումն զմիշտայքն. և ոչ իսկ ՚ի դէպ գայ կարգի պատմութեան, որ գեղեցիկ կարգաւորութեամբ է յօրինեալ՝ ուր գործն է մասամբ և ճարտար դարի. ուր տեսցես յիրաւի սեղանոյ. իսկ այն օրինակ գտեալ առ լատինս՝ համգերձ պատմութեամբ միշտայքին, է անշուք և տարբեր բաղադրութե յունաց ուրումն հաւաքի, անվայել և մետափրաստեսի. Եւ այս այնչափ, զի միօ ևս հին հեղինակ լատին վկայաբանութեան ստրատելատի, այն է բոնիտոս կիսասարկաւագ եկեղեցւոյն Նէապօլսոյ, հարկեցաւ կոչել զաբգար անուն գրիչ, շինականագոյն մտօք, ջեռեռանդ և անգրագէտ․ զոր ոչ կարէր առնել, եթէ ընթերցեալ էր զընտիր օրինակ նորա՝ որ անկաւ 'ի ձեռս նախնեաց մերոց յօրինողաց զճառընտիրս ։ Եւ որ մեծն է, վկայէ նա ինքն բոնիտոս, թէ չէ գտեալ իւր զընտիր օրինակ վկայաբանութեան ստրատելատին յարեւմուտս, այլ 'ի բազմայօք գրուածոց յանուն աբգարու և անանուն մատենագրաց հատընտիր քաղելով կարգեալ է ինքն զվկայաբանութիւն ինչ․ յորում պահէ և զսպանումն վիշապին 'ի ստրատելատէն․ զոր թէ ոք համեմատէ ընդ աւանդելոցն 'ի մէնջ ընդ ճառընտրաց, գտանէ զբանս բոնիտոսի կարօտ բազում ուղղագրութեան, և արժանի թօթափելոյ յաւելորդ պարագայից․ որպէս տեսցի 'ի յառաջորդ ծան․ ։

Ո՛ր թողից զայն, զի նախ՝ ընդ ասացելոցս բասիլեան յայսմաւուրք յունաց, որ առ իմ քննիչս է արժանահաւատ քան զժամագիրս նոցա, միաձայնի ընդ մեզ ։ Երկրորդ՝ զի առ մեզ որպէս վարք ստրատելատին, նոյնպէս և տիրոնին է լիակատար, սկսեալ 'ի ծագմանէ նորա՝ անուամբ հայրենեաց, գաւառի և քաղաքի․ եղանակ ծննդեան և զինուորութեան յայտնի․ և սպանումն վիշապին՝ պատճառ ընտանութեան ընդ եւսեբիայ բարեպաշտ տիկնոջ, որ և ամփոփեաց զնշխարս նորա․ ուր այլք և ոչ զմի յայսցանէ գիտեն․ վասն որոյ և խնդրեն քննիչք․ թէ ո՛ է եւսեբին այն՝ որ թաղեաց զնին թէոդորոս ։ Այլափոխ անգիտութեամբ զարմանան և ոմանք, թէ զիարդ երբեմն եւքայիտայի կոչին երկոքին եւս ոմք, և թէ որպէս երկու համանուն վկայք լեալ իցեն 'ի միում որ ժամանակս 'ի նոյն գաւառի․ զի ոչ զորոշ տեղի նոցա գիտեն և ոչ զազգականութիւն նոցա․ զի ոչ ունէին 'ի ձեռին զատոյգ վկայաբանութիւնս, որպէս մեքս ունիմք ։

Վասն այսպիսի անստուգութեանց՝ 'ի ժամագիրն հռովմէական եդեալ կայ միայն յիշատակ թէոդորոսի զինուորի․ և այն՝ 'ի նոյեմբ․ 9․ իսկ ստրատելատին ոչ․ զոր այլ վկայագիրք հռովմէացւոց դնեն 'ի փետր․ 7․ ուր խօսին և բոլլանդեանք չփոթ բանիւք, և ինքեանք զբարբանիս հանուրին շփոթարան․ քանզի այսպէս խօսին անգամօր բոլլանդ․ * Յայտ է, թէ իրաւունք երկոքին „ եւս (ոմք՝ թէոդորոսս անուանեալք) ընծայիւն եւքայ- „ տայոյ (ի եւքայիտայի կոչին)․ թէպէտև առա- „ ւել զի թէոդորոսի ստրատելատի քաղաքն այն էր- „ թուի

,, քայիտա յետոյ կոչեցեալ լիցի Թէոդորուպօլիս...
,, Սալ զայս անուանակոչութիւն (քաղաքի) բարոնիւ
,, 'ի ծան. վկայաբ. 9. նոյեմբ. համարեցաւ առեալ
,, յանուանէ Թէոդորոսի ախոյանի, ինքնին իւրովք
,, ախոյանօք հաստատելով զասացեալն յիւրմէ 'ի փետր.
,, 7. Թէ էր [illegible] գրանի [illegible] ի Թէոդորոս առեալ
,, փոխանակ [illegible]||. այլ այս բանք ևս՝ առաւել մեզ
օգտեն՝ քան այլոց:

(3) Ով որ յողջամտաց տեսանէ անտեղութիւն ինչ կա՛յ աւելորդաբանութեան 'ի պատմութեան սուտ ճառընտրաց մերոց յաղագս սպանման վիշապին 'ի սրբոյն Թէոդորոսէ զինաւորէ. և Թէ կան արդարև մեծամեծ օձք՝ որք վիշապ անուանին, ձողաչափ և իբր գերանաչափ, ոչ պակասին ականատեսք. յորոց զմին զմռսեալ տեսի 'ի դրատան մալթայու բերեալ յափրիկեայ, գլուխ նորա իբրեւ չափու գլխոյ գառին կա՛մ մանկան տղայոյ, թանձրութիւն առաւել քան զհաստ բազուկ հսկայի, և երկայնութիւն իբր գիրկս երկու՝ և ևս աւելի: Իսկ Թէ 'ի պատկերս գրի վիշապ Թևաւոր իբր քարբ, զայդ ոչ աւանդէ պատմութիւն վկայաբանութեան, այլ ստեղծու պատկերահանն: Զայս եդեալ՝ արժան է լսել, Թէ քանի՛ չարաբանութեամբ և աւելորդ հանդամանօք գրէ զնոյն պատմութիւն վկայաբանն սուրիոսի 'ի վարս միւս Թէոդորոսի սպարապետին. * Էր (ասէ) Թէոդորոս երիտասարդ հասակաւ,
,, այլ բարեպաշտութեամբ ալեօք ծաղկեալ. որ և սպան
,, զվիշապն յեւքայիտա. քանզի էր անդ վիշապ մի գազան ահագին. յորոյ 'ի շարժմանէն յելս իւրում դողայր երկիրն դղրդմամբ վասն շարժման նորա. արդ յորժամ ելանէր յորջոյ իւրմէ, եԹէ մարդոյ և եԹէ անասնոյ հանդիպէր, կլանէր զնա: Եւ եղև իբրև
,, լուաւ վասն դժնեայ գազանին քաջ նահատակն Քրիստոսի
,, Թէոդորոս, ոչինչ ամենևին արարեալ 'ի բանակի իւրում՝ եւ գնաց միայնակ, իւրով իմաստութեամբ բարձեալ զպատուականն խաչն և զզէն ընկերութեան իւրոյ.
,, ասելով յանձին. երԹայց և ազատեցից զհայրենի
,, կալուածն իմ 'ի չար գազանէ անտի 'ի վիշապէ: Եւ
,, իբրև եկն 'ի տեղին, տեսեալ զդալար խոտոյ, կողմնեցաւ անդ և ննջեաց, ոչ գիտելով՝ Թէ բունեալ իցէ
,, վիշապն: Եւ էր 'ի կողմն մի եւքայիտացւոց՝ որ հայի
,, ընդ հիւսիս, կին մի բարեպաշտ եւսեբիա անուն հաւատացեալ 'ի Քրիստոս: Սա իբրև ետես զնահատակն Քրիստոսի
,, զԹէոդորոս՝ զի ննջէր, ահիւ մեծաւ եկեալ առ նա,

,, և բուռն հարեալ զնմանէ՝ յարոյց զնա, ասելով. ա-
,, րի եղբայր իմ, և փութով ՚ի բաց գնա ՚ի տեղւոջէ
,, աստի. զի ոչ գիտես զերկիւղն՝ որ կայ ՚ի տեղւոջս
,, յայսմիկ. քանզի կայ երկիւղ մեծ. այլ արի և փու-
,, թանակի երթ զճանապարհ քո ։ Իսկ երանելի վկայն
,, քնի Թէոդորոս՝ իբրև յարեաւ, ասէ ցնա. զի՞նչ եր-
,, կիւղ և սարսափ կայցէ ՚ի տեղիս յայս մայրիկ ։ Իսկ
,, աղախինն քնի եւսեբիա ասէ ցնա. որդեակ, կայ ՚ի
,, տեղւոջս յայսմիկ վիշապ անհնարին մեծութբ. վն որոյ
,, ոչ ոք կարէ անցանել ը այս տեղի. քանզի զօր ամե-
,, նայն ելեալ՝ զոր և գտանէ առաջի իւր, եթէ մարդ
,, և եթէ արջառ կամ ոչխար, սպանանէ ։ Եւ կատա-
,, րեալ նահատակն քնի Թէոդորոս ասէ ցկինն. երթ
,, մայրիկ, և հեռի կաց ՚ի տեղւոջէ աստի, և տեսցես
,, զզօրութին քնի այ իմոյ. իսկ երանելի կինն ՚ի բաց
,, մեկնեալ անտի՝ տարածեաց զանձն ՚ի գետին, և ա-
,, ներ լալով. օգնական լեր դմա ած քրիստոնէից ՚ի
,, ժամուս յայսմիկ ։ Իսկ սբ վկայն քնի Թէոդորոս ա-
,, րարեալ զնշան քնի, և բախեալ զկուրծս իւր, հայե-
,, ցաւ յերկինս, և ասէ. տր յն քս գեղեցիկ անուն, որ
,, եսդ ճառագայթեալ յէուէ հօր, մի՛ անտես առներ
,, կատարել զխնդրուածս իմ, զոր հայցեմ առ ՚ի քէն.
,, որ ՚ի պատերազմունս ը իս ես, և տաս ինձ յաղթութի
,, ըդէմ հակառակորդաց. և այժմ դու նոյն ինքն ես
,, տր քս ած, առաքեա առ իս յաղթութի ՚ի բարձրունէ
,, սրբութեց քոց, զի յաղթեցից հակառակորդ վիշապիս ։
,, Յայնժամ ապա և ը երիվար իւր խօսելով իբրև ը
,, մարդոյ՝ ասէ. գիտեմք, զի բարեսէր կամօք բերի ած
,, առ ամենեսին, եթէ առ մարդիկ, և եթէ առ ա-
,, նասունս. վն որոյ և դու լեր ինձ օգնական ՚ի զօրա-
,, ցուցանել զքեզ քնի, զի յաղթեցից հակառակորդին ։
,, Եւ իբրև լուաւ երիվարն զբանս տն իւրոյ, եկաց
,, արթնութբ՝ սպասելով շարժման վիշապին ։ Յայնժամ
,, ասէ վկայն քնի ցվիշապն. քեզ ասեմ և հրամայեմ
,, յանուն տն մերոյ յնի քնի՝ խաչելոյն վն ազգի մարդ-
,, կան, և զօրութբ նր, ե՛լ ՚ի տեղւոջէ այտի քումմէ, և
,, ե՛կ առ իս ։ Եւ վիշապն լուեալ նահատակին քնի՝
,, շարժեաց զինքն. և յորժամ նա շարժէր, քարինք
,, տեղւոյն խախտէին, և երկիր դողացաւ ։ Իսկ սբն
,, Թէոդորոս արարեալ զնշանն քնի՝ ել յերիվար իւր.
,, և ՚ի մտանելն նր՝ եկաց կանգնեցաւ երիվարն ՚ի վե
,, վիշապին ամփոփ իւրովք չորեքումբք ։ Յայնժամ նա-
,, հա-

,, հատակն քս̃ի Թէոդորոս մերկեալ զսուրն՝ եհար և
,, սպան զվիշապն · և ասէ · գոհանամ զքէն տր̃ յս̃ քս̃,
,, զի լուար ինձ 'ի ժամու յայսմիկ, զի յաղթեցից թըշ-
,, նամւոյն: Այս դարձ արարեալ նո՛ գնաց խաղաղութ̃բ
,, զճանապարհ իւր, ուրախ լինելով և փառաւոր առ-
,, նելով զա̃ծ: Եւ բազումք 'ի հեթանոս զինուորաց՝
,, որք անդ էին, իբրև լուան զքանչելիսն՝ զոր արար
,, սր̃ն Թէոդորոս, հաւատացին 'ի քս̃, ասելով այս-
,, պէս · արդարև մեծ է ա̃ծ նո՛ · և 'ի նմանէ մկրտեցան
,, յանուն հօր և որդւոյ և հոգւոյն սր̃յ · և եղեն ա-
,, մենեքին մի հօտ քս̃ի · և օրհնէին առհասարակ զա̃ծ
,, սր̃յ և մեծի վկային Թէոդորոսի: Իսկ Լիկինիոս (Թա-
,, գաւորն) իբրև լուաւ զայսոսիկ զնմանէ, յղեաց առ
,, նա, և կոչեաց առ ինքն || · ևն̃:

Տեսանե՞ս, թէ զիա՞րդ աղաւաղ և դժուարալուր ոճով այլայլեալ է հարազատ պատմութիւնն 'ի շատաբան գրչէ ումեմնէ · զոր 'ի գիրս ուրեք յունաց գտեալ՝ թարգմանեալ են և լատինք · բայց զարմանալին այն է, զի Բոնիդոս Նէապօլսեցի ուղղագրել և հարթել կամելով զայն՝ ևս քան զևս կուտակէ օտարոտի բանիւք, զորս կամ 'ի ռամկաց զրուցաբանութ̃է, և կամ 'ի թելադրութ̃է մտաց իւրոց կցկցէ · արժան է յառաջ բերել և զայն՝ առ 'ի ցոյց օրինակի օտարացելոց 'ի հարազատ վկայաբանութ̃է մերմէ:

Այս բանք են Բոնիդոսի ըս̃ տպագրելոյ Բոլլանդեանց 'ի վարս Թէոդորոսի ստրատելատի · * Արդ՝ էր 'ի ժա-
,, մանակին յայնմիկ այր ոմն նշանաւոր և հզօր նահա-
,, տակ ա̃յ Թէոդորոս անուն, իշխան քաղաքին Եւքայի-
,, տայ · հասակաւ երիտասարդ, այլ մտօք կատարեալ · ·
,, և 'ի հիւսիսակողման քաղաքին ունէր ընդարձակ ան-
,, դաստան, յորոյ 'ի բարձրաւանդակ տեղիս դոյր վի̃հ
,, ինչ անդնդախոր, և 'ի ստորոտս նո՛ բունեալ էր վի-
,, շապ մի ահագին · զոր երբեմն, աւա՜ղ մեծի ապիրա-
,, տութեա̃ս, աւաղէլի ամբոխ տեղւոյն պաշտելով՝ 'ի
,, տեղի ա̃յ ունէին զայն: Այլ յորժամ այրն ա̃յ Նա-
,, խասացեալ սր̃ն Թէոդորոս զժողովուրդ քաղաքին
,, Եւքայիտայ յետս ընկրկեալ 'ի դրօշելոց կռոց՝ առ սա-
,, կաւ սակաւ գուն գործէր դարձուցանել առ քս̃ քա-
,, րոզութ̃բ իւրով, վիշապն այն գրգռութ̃բ դիւին 'ի
,, վհէ անտի երբեք երբեք 'ի դուրս վաղեալ, զոր և
,, կենդանի գտանէր, իսկ և իսկ յօշոտէր: Եւ իբրև
,, կոտորած մարդոյ և անասնոյ լինէր 'ի նմանէ, ժողո-

,, վուրդն

,, վուրդն ամ ընթացեալ առ ծառայն այ Թէոդորոս Իշխանն իւրեանց՝ սպառնական բանիւք վիճէին ըդէմ նր, ասելով. Թոյլ տուր մեզ ձօնել նուէրս ածոց մերոց, ոպ օրէն էր հարց մերոց հանապազ առնել ը առաջին սովորութե. զի յորմէ հետէ յետս կացաք 'ի պաշտամանց նց, պէսպէս հարուածովք նեղիմք, և վտանգիմք յերեսաց ազգի ազգի արկածից. և արդ կա՛մ զօրութբ այ քո՝ զոր ուսուցանես, կորո՛ զվիշապդ ծախիչ կենաց մերոց, և կմ եթէ ոչ կարես առնել զայդ, մերոց կամացս լիցի անխափան կատարումն: Եւ իբրև լուաւ ծառայն այ զայս բան 'ի բերանոյ նց, ամոք բանիւք խաղաղացոյց զբուռն յարձակումն խուժանին. դուք ասէ այսօր երթիջիք աստի խաղաղութբ այր իւրաքանչիւր 'ի տուն իւր. քանզի օգնականութբն այ այսուհետև և ոչ մի ինչ վնաս ձեզ ,, հասցէ 'ի վիշապէն:

,, Եւ եղև յետ գնալոյ նց երանելի նահատակն քնի տարածեալ զձեռն իւր յաղօթս առ տր՝ զայս աղերս պաղատանաց եհեղ առաջի տն, ասելով. ամենակալ տր յս քս՝ թագաւոր և տր ամ էից, որ 'ի տեսարան աշխս իջեր վն մեր մեղաւորացս 'ի կորզել զմեզ սբ արեամբդ քով 'ի ժանեաց բանսարկուին. որ և զամ մարդ 'ի վր ամ երկրի 'ի կարդալն առ քեզ իբրև զմի այր 'ի միում վայրկենի տեսանես և լսես. լուր տր հիգացելոյս՝ որ կարդամս առ քեզ, և հայցեմ զմեծ քո զողորմութի. ոպ զի 'ի սատակել վիշապիս քոյով զօրութբ՝ ծանիցէ ժողովուրդս ամ, զի դու ես ճշմարիտ և սքանչելի ած սքանչելարար յերկինս և յերկրի: Եւ 'ի կատարել այսպիսի աղօթից՝ այն ինչ կամէր յառնել, իբր վաստակեալ ըմբռնեցաւ 'ի թմրութե, և հանդարտեաց 'ի քուն: Եւ անդէն վաղվաղակի երևեցաւ նմա 'ի տեսլեան երիտասարդ ըզգեցեալ պատմուճան ձիւնափայլ՝ լուսաւոր դիմօք և զուարթահայեաց աչօք, և ասէ ցնա. Թէոդորէ ճշմարիտ վկայ յսի քսի՝ գիտեմ, զի լսելի եղեն աղօթք քո. և արդ արի և ել յերիվար քո՝ զգեցեալ զսաղաւարտ փրկութե, և ամրացեալ վահանաւ սբ հաւատոյ, և զկենսատու խաչն կրելով ը քղամդաւ, և զդեղարդն 'ի ձեռս առեալ, երթ աներկիւղ և անկասկած՝ անուամբն յսի քսի. քանզի իսկ և իսկ սատակեսցի 'ի քէն վիշապն: Զայս իբրև ասաց, և վերացաւ յօդս, ապա յարուցեալ 'ի քնոյ այրն սբ՝ լի

,, ուրախութբ̃, և զօրացեալ 'ի յայտնութէ հրեշտակին,
,, զքաջ երիվարն զոր վարէր 'ի պատերազմի՝ հրամայեաց
,, հանդերձել ինքեան, զոր յունական ձայնիւ դարդանոս
,, կոչէր . . . (զպատճառն կոչման նս յեղյեղէ
աստ բազմաբան գրիչն, որպ̃ և բոլլանդեանք 'ի ծանօթութէ :)
,, Արդ յորժամ ել այրն՝ զօրականն քս̃ի՝ յայն
,, երիվար, զոսկի խաչն ը̃ քղամդաւ զպարանոցաւն արկեալ՝
,, անկաւ 'ի ճանապարհ . և իբրև փոքր ինչ մեկնեցաւ
,, 'ի քաղաքէն, և եմուտ 'ի դաշտ դալարազուարճ,
,, զկայ էառ անդանօր վայր մի :
,, Եւ ահա կին մի եւսեբիա անուն՝ քրիստոնեայ և
,, ազնուատոհմ, որ ճանապարհ առնէր 'ի քաղաքն
,, հանդերձ ուղեկցօք, հայեցեալ ետես 'ի հեռաստանէ
,, զսբ̃ն թէոդորոս, զի կայր 'ի վտանգաւոր յանդի
,, անդ . փութացեալ դիմեաց առ նա . և զի որպ̃
,, կարծեմ՝ ծնօղ նր̃ էր, բուռն հարեալ զատնոյ քղամդի
,, նր̃՝ հարցանէր ստիպաւ, թէ ո՛ւր երթաս այդպէս
,, զինե̃լ միայնակ : Եւ յասել նր̃, թէ առ վիշապն
,, երթամ, զի յանուն յս̃ի քս̃ի սպանից զնա, վաղվաղակի
,, անկեալ յերկիր առ ոտս նր̃՝ կանացի տկարութբ̃
,, սկսաւ խրատել զնա չերթալ անդր : Իսկ այրն այ̃յ ասէր
,, ցնա, թէ ոչ միայն չէր պարտ քեզ արգելուլ զիս
,, յընթացից, այլև աղօթս առնել առ ած̃ : Զայս լուեալ
,, կնոջն՝ ասէ ցնա . արդարև այն՝ որ խաչեցաւ,
,, կարօղ է խորտակել զվիշապն, և զքեզ ցուցանել յաղթօղ
,, ծառայ իւր . զի թէ ոչ էր ած̃ ահաւոր և սքանչելի,
,, ոչ արդեօք յառնէր 'ի գերեզմանէ : Եւ զայս ասացեալ՝
,, փոքր մի հեռացաւ 'ի տեղւոջէն, և զտեղին
,, էառ՝ դիտելով զելս իրաց, և աղաչելով զտր̃ վս̃ նր̃ :
,, Յայնժամ վայրի փառաւոր զօրականն քս̃ի հասեալ 'ի
,, դուրս այրին, և իջեալ յերիվարէն՝ գետնատարած
,, անձամբ յաղօթս եկաց, և ամբարձեալ զձեռս իւր
,, յաստեղս՝ այսու աղօթիւք կարդաց առ տր̃ . Յս̃ քս̃
,, տր̃, որ եսդ 'ի սկզբանէ առ հօր ը̃ սբ̃ հոգւոյն, և յանկերպարան
,, և յանգոյ նիւթոյ հանդերձեցեր զերևելիս
,, և զաներևոյթս, որ և զվիշապն առաջին զգազանն
,, չար զամբարտաւանութբ̃ դեղեալն և զփքացեալն արամերժեալ
,, յերկնից բնակութէ՝ 'ի գուբն կապեցեր
,, անդնդային, դու ինքն կարկառեսց առ իս զյաղթօղ
,, զօրութիւնդ և զաջդ օգնականութե̃ . զի 'ի սատակել
,, վիշապիս այսորիկ զօրութբ̃ քով՝ ծանիցէ և հաւատասցէ
,, քաղաքս ամ̃ եւքայիտայ, զի դու ես միայն և Ճշ-

„ մարխտ ած՟ կենդանի և մշտնջենաւոր Թագաւոր յա՟մ
„ յաւիտեանս ։
„ Զայս աղօթս մատուցեալ՝ դարձեալ աշտանակեաց
„ ջերխլար, և զայրեճն ուր դադարեր վիշապն՝ երից
„ շուրջ եկեալ, և յետոյ ուրեմն արձանացեալ 'ի բե-
„ րան այրին՝ ձայնեաց առ նա այսպէս. ով չարաթոյն
„ և դժոխորովայն վիշապ, 'ի կենարար անուն յաւիտե-
„ նից Թագաւորին՝ տն՟ մերոյ յս՟ի ք՟ի՝ հրամայեմ քեզ.
„ զի վաղվաղակի 'ի դուրս այսր առ իս եկեսցես յորջոյ
„ քումմէ ։ Եւ ը՟ ասել ն՟ր զայս՝ սկսաւ յա՟մ կողմանց
„ դղրդիլ շրջապատն այրին, և իբրև յերեսաց ահագին
„ սասանութե՟ երկրի երերայր յոյժ գետինն մերձակայ.
„ և ահա վիշապն անհնարին ցասմամբ 'ի դուրս վաղէր.
„ զգլուխն 'ի վեր ուղղեալ, զկոկորդն լայնաբաց տա-
„ րածեալ. և զպարանոցն ուռուցեալ մաղխաք ցցուե-
„ լովք, ոլորեալ տտամբ 'ի Թիկանց, և հրացայտ լու-
„ սարանօք երկոքումբք, քստմնելի ահարկութե՟ եւ ար-
„ տաքս առ նա ։ Յորոյ վ՟ր յարձակեալ երխլարաւ քաջ
„ զօրականն ք՟ի, զգեղարդն որ 'ի ձեռին՝ 'ի Թօքս ն՟ր
„ մխեալ հարստէր. և ն՟ր տտամբն զերկիր բախեալ, և
„ առ վայր մի՝ ցորչափ շունչ ն՟ր 'ի նմա էր՝ շարժլեալ,
„ յետ այնորիկ անշնչացեալ սատակէր ։ Յայնժամ իբրև
„ ետես այրն ած՟յ զսատակումն նորին, բերկրալից գո-
„ հաբանութե՟ նուագեաց զօրհնութիս զայս ած՟ն, և ասէ.
„ Դու Թագաւոր յաւիտենից,
„ ած՟ փրկիչ տիեզերաց.
„ զերկինս զերկիր զբռամբ ունիս,
„ փայլատակունս տեղաս յերկնից ։
„ Քև, ո՛չ առանց քո զօրանան,
„ որ ինչ 'ի վեր, որ 'ի ստորինս.
„ զքեզ օրհնեն հնչմամբ ձայնից՝
„ համայնութիք բոլոր էից.
„ երկինք, երկի՟ր, ծով և այեր,
„ միշտ իւրերաց քաջ ձայնակից ։
„ Քեզ վայելէ տ՟ր բոլորից,
„ ը՟ հօր, հոգւոյդ քո էակից,
„ փառք, մեծութի՟, և զօրութի՟,
„ զուգապատիւ յաւիտենից ։
„ Եւ արդ ով՟ զիս տ՟ր ամենակալ արժան համարեցար
„ զօրացուցանել օգնականութե՟ քով, մինչև անկաւ արդ
„ վիշապս սատակեալ յինէն, սոյնպէս և զժողովուրդ
„ քաղաքիս՝ որք դիւական պաշտամանց անսան կռոց,

,, քոյին ձեռնտուութեամբ ածից 'ի ծանօթութիւն ամենայնի
,, ճշմարտութեան քո : Եւ իբրեւ երգեաց զայս օրհնութիւն,
,, դարձ առնէր 'ի քաղաք իւր յաղթանակաւ :

,, Անդէն վաղվաղակի ընդ առաջ եղեւ նմա նախասա-
,, ցեալն Եւսեբիա, ընդ որում նախ եղեւ խօսակից · զի
,, չեւ էր նորա մեկնեալ 'ի տեղւոջէն, այլ սպասեալ մնայր
,, վարանական մտօք, թէ զինչ ունիցի առնել զինուորն
,, քրիստոսի · եւ իբրեւ ետես զգալուստ նորա, տարածեալ բազ-
,, կօք ընթացաւ առ նա, եւ ասէ · զինչ ասես տէր իմ
,, բարեպաշտօն, սատակեցան արդեօք թշնամին մեր :
,, Եւ նա ասէ · անդստին իրագէտ է թշնամին տիեզե-
,, րաց ընդ սատակումն իւր, յորմէ հետէ տէրն եւ փրկիչն
,, մեր յիսուս քրիստոս գերեաց 'ի նմանէ զզօրութիւն եւ զիշխանու-
,, թիւն նորա՝ նշաւակեաց զնա 'ի խաչին · զի թէ՝ եւ ինքն
,, իսկ առաջնորդն մահու ծանուցեալ էր զնա վասն մեր
,, բեւեռել 'ի խաչ, ո՞չ իմիք կամակից լինէր այնմ · ա-
,, պա եւ զթշնամին կենաց մերոց գիտասջիր ձեռնտուու-
,, թեամբ նորին սատակեալ լինել : Յայնժամ ասէ
,, կինն · օրհնեալ աստուած յաւիտենական, որ եհան զքեզ
,, յայս պատիւ փառաց, զի նա 'ի բերանոյ քումմէ քա-
,, րոզեցի, եւ վիշապն 'ի ձեռաց քոց սպանեալ գտցի :
,, Մինչ այս մինչ այն՝ եւ համբաւն լսելի լինէր 'ի քա-
,, ղաքի · եւ ահա ամբոխն առհասարակ արք եւ կանայք
,, յտ̄մ հասանէ 'ի տեսարան անդր դիմեալ գային ձե-
,, պով : Եւ իբրեւ գտին զսուրբն Թէոդորոս զիշխանն իւ-
,, րեանց նստեալ 'ի ձի, եւ զարիւնամած գեղարդն 'ի
,, ձեռին, միաբան ընթացան ամենեքեան ընդ առաջ նորա,
,, եւ ասէին · Դու փառք եւ ցնծութիւն մեր, դու քաղա-
,, քիս Եւքայիտայ սքանչելի վայելչութիւն, դու ուրա-
,, խութիւն, դու շուք պարծանաց ժողովրդեան մերոյ ·
,, դու փրկութիւն եւ ազատութիւն մեծափառ՝ հոգւոց մե-
,, րոց · զի ոչ խնայեցեր յանձն քո, այլ յանուն աստուծոյ քո
,, 'ի բաց բարձեր 'ի մէնջ զհակառակորդն մեր՝ որ տագ-
,, նապէրն զմեզ :

,, Ապա ընթացակից լեալ ընդ քաջայաղթ զօրականին քրիստոսի՝
,, եկին միաբան 'ի տեղին, ուր անկեալ տարածեալ կայր
,, վիշապն · եւ ընդ տեսանելն զայն 'ի հեռաստանէ՝ մինչ-
,, չեւ մերձեալ էին, բազումք 'ի նոցանէ ոտս առեալ
,, 'ի տեղւոջէն յետս ընդ կրունկն սրացան երագ ըն-
,, թացիւք 'ի քաղաքն · քանզի ահ մեծ եւ դողումն կա-
,, լաւ զամենեսին · վասն եւ բազումք սասանեալ կային ·
,, եւ ոչ ոք իշխէր մերձենալ 'ի տեղին : Նմին իրի քաջա-
,, մար-

,, մարտիկ զինուորն ք՟սի հուպ եղեալ 'ի նա, և իջեալ
,, յերիվարէն, եդ զոտս իւր զերկոսին 'ի վ՟ր ահագին
,, գազանին. (ո՟ր այժմ կանգնեալ է և արձան ն՟ր 'ի վ՟ր
,, սեան 'ի հրապարակի վենետկոյ.) որով և այլոց հա֊
,, մարձակելի եղև այնուհետև մերձ լինել 'ի տեղի անդր:
,, Եւ 'ի կրթիլ ամենեցուն յապշութե՟ն մեծ՝ ասէ ցնոսա
,, քաջ զինաւորն ք՟սի. Ահա դուք ինքնին իսկ տեսա֊
,, նէք, թէ որչափ է զօրութի՟ն ա՟ն իմոյ յ՟սի ք՟սի, որոյ
,, ա՟ծային անուամբն սատակեալ տեսանի յանդիման
,, ձեր գազանս ահագին. հապա 'ի բաց թողեալ ըզ֊
,, պաշտօն պիղծ կռոց՝ փութացարուք ընդունել ըզ֊
,, ճշմարիտ հաւատս ն՟ր՝ յետ խորտակելոյ ն՟ր յայժմ ծ՟ի
,, զթշնամին կենաց ձերոց. և եթէ յաստիս 'ի մահկա֊
,, նացու ընթացս մարդկութե՟ս հաստատուն կացջիք
,, 'ի նմա՝ հաւատալով յանուն նորա, սատակեսցէ նա
,, առաջի ձեր և զվիշապն մահաշունչ զսատանայ զկա֊
,, պեալն 'ի մշտնջենաւոր կիզման, տալով ձեզ ցնծալ
,, յերջանիկ թագաւորութե՟ն: Եւ ն՟ց լուեալ զայս՝ թո֊
,, ղին այնուհետև և 'ի բաց մերժեցին զկռապաշտութի՟ն,
,, և վաղվաղակի ընկալեալ 'ի նմանէ զս՟բ մկրտութի՟ն՝
,, ամենեքեան հաւատացին 'ի ք՟ս, հռչակելով զմեծա֊
,, մեծ գործս ն՟ր հիացմամբ, և գովելով և օրհնելով
,, զնա՝ որ սքանչելին է 'ի ս՟բս իւր||: Հա՛տ լեցի այս֊
չափ ինչ վ՟ր օրինակի. Թո՛ղ զոր զկնի յերկարաբան
բաղդատութի՟ն ը՟ սպանումն վիշապին, որ 'ի դանիէլէ,
և որ 'ի Թէոդորոսէ: Ահա այսչափ ը՟լայնմամբ ընդար֊
ձակէ բոլլանդոս արևմտեան մատենագիր զհամառօտ պատ֊
մութի՟ն վիշապին, որով և նոյնչափ օտարանայ 'ի ճշմար֊
տութե՟է. զի թէ զպատմութի՟ն էառ 'ի վկայաբանութե՟ն
ստրատելատի ըստ սխալ օրինակաց՝ զոր բերէ և սու֊
րիոս ընդ անստոյգ անուամբ մետափրաստեսի, ուստի՟
յաւելու և զայլ բազմօրինակ հանգամանս բանից. յայտ
է թէ յուրոց քմաց, կ՟մ գոնէ 'ի շատաբանից ոմանց. և
զարմանք են՝ զի բոլլանդեանք, որք այլուր այնչափ հա֊
մարձակախօս են յե՟վայր հարկանել զօտարն պատմու֊
թիս, ըստ համբերեն արևմտեան հեղինակի, մեղմով
ևեթ զայս ինչ նշանակելով. * ունի այս պատմութի՟ն
,, քան զառաջինն զայն որ 'ի մետափրաստեսէ, ոչ այնչափ
,, զիրաց, որչափ զբանից՝ և այն ոչ ախորժելեաց, զան֊
,, հնարին կուտակութի՟ն||:

Իցէ՞ թէ և զայլոց արևելեան մատենագրութե՟ց այս֊
պիսի ճարտար ակնածութե՟բ խօսէին: Այլ թողեալ

զայդ, քաջ գիտեմք՝ զի թէ ունէին բոլլանդեանք ըղհարազատ վկայաբանութիւնս Ճառընտրաց մերոց ՚ի ձեռին, տիրաբար վճռէին՝ թէ որքան ճշգագոյն և ստուգագոյն է բան Ճառընտրաց համաձայնութեամբ բասիլեան յայսմաւուրաց յունաց և յայսմաւուրաց հայոց. նոյնպէս և ստոյգ է՝ թէ վիշապն սպանաւ ՚ի թէոդորոսէ տիւռոնէ, և ոչ ՚ի ստրատելատէ:

Եւ այսմ ապացոյց լիցի նաև վկայութիւն օտար վկայաբանութեանցդ սուրիոսի և բոնիդոսի և հետևողաց նոցա. քանզի և ըստ նոցա կինն այն՝ որ ամփոփեալ զնշխարս սրբոյն թէոդորոսի տիւռոնի յեւքայիտա, եւսեբիա կոչիւր. և զի չիք տարակոյս՝ թէ նոյն եւսեբիա է, որ յիշի յամենեցունց ՚ի պատմութեան վիշապին, ապա սպանող վիշապին թէոդորոս է տիւռոնն, և ոչ ստրատելատն. զի ՚ի թաղմանէ տիւռոնի մինչև ցաւուրս զօրավարութեան ստրատելատի ոչ երևի կենդանի մնալ եւսեբիայ, որ էր հասուն տիօք յաւուրս տիւռոնի. և ճշմարտագոյն է մայրօրինակ գութ նորա առ տիւռոն, քան կեղակարծ գուշակութիւն բոնիդոսի՝ թէ նա իցէ մայր ստրատելատին. զի թէ մայր նորա լինէր, լինէր և քոյր առաջնոյն. զի ըստ ստոյգ վկայաբանութեանս ստրատելատն է քեռորդի տիւռոնի. զորմէ չունէին տեղեկութիւն հետևողքն անըստոյգ վկայագրութեանց:

՚Ի գտնել զայսոսիկ՝ ՚ի հնացուցածս պատմութեան գործոց և նահատակութեան սրբոյն թէոդորոսի զինաւորի ոչ տարբերին ՚ի մէնջ և այլ վկայաբանք, բաց ՚ի դոյզն զանազանութենէ ոճոյ և բացատրութեան, և առաւել յերկար կամ համառօտ ձևոյ բանից:

(4) Հ. ասէ զթէոդորոսէ զինաւորէ լինել յամս ամպարիշտ թագաւորացն * մաքսիմիանոսի և դիոկղետիանոսի, և մաքսիմեայ դատաւորին||. փոխանակ գրելոյ՝ բրինկայ կամ պրըլեայ դատաւորի, զորս յիշեն այլք առ հասարակ. միայն ՚ի Ճ. է զի բրինկա գրի, է զի բերենիկաս, և է զի բերենիկէ. որպէս և ՚ի Յ. կրինգաս. այլ սուրիոս՝ բրինկաս: Իսկ թագաւորք յիշին ՚ի Ճառընտիրն Բ. մաքսիմիանոս և մաքսինդէս. և ՚ի Ե. մաքսիմիանոս և մաքսիմիոս: Յն. բս. մաքսիմիանոս և մաքսիմինոս. որպէս դրէ և սուրիոս. իսկ Յն. ժամագր. մաքսիմիանոս և մաքսիմոս: Սուր պարտ է գլխաւորաբար զմաքսիմիանոս գաղերիոս իմանալ, այն՝ որ առանձին հալածանս յարոյց յետ մեծի հալածանաց դիոկղետիանոսի և մաքսիմիանոսի հերակլէս կոչեցելոյ:

(5) Հ. * Եւ դարձեալ արկին զնա 'ի բանտ, և թո-
„ ղին անխնամ, և հրեշտակ տ̅ն էջ 'ի բանտն, և ողջա-
„ ցոյց զամ̅ վէրս նորա. և յետ աւուրց հանին զնա 'ի
„ բանտէն, և տեսին ողջացեալ յամ̅ վիրաց անտի:
„ Ասէ դատաւորն. ընդ որ կամիս լինել. ը̅ մեզ, թէ
„ ը̅ քնին քում||: Այլ այս կրկնութիւն բանտարկութե̃,
որ չիք 'ի Ճ, և առ այլս, առեալ է 'ի յետևառաջութէ̃
բանից գրիգորի նիւսացւոյն, որ յառաջ ք̅ զբանտար-
կութիւն յիշէ զտանջանս քերանաց, և ապա դրէ զբան-
տէ, և զձայնակցութէ̃ հրեշտակաց:

(6) Որ 'ի Յ. գրի կղեմենիկոս, 'ի ՃՃ. եպե̃ւ կայ կաղե-
նիկոս, կմ̅ կաղլինիկէ. զոր չէ պարտ շփոթել ընդ այլ
վկայի սր̅յն կալլինիկոսի. միայն ծանիր, զի որովհե-
տև յունարէն գալլինիգօս նշանակէ բարեյաղթ կամ
քաջայաղթ՝ է նաև անուն հասարակ ամ̅ զօրականն նա-
հատակաց, զորս սովորութիւն էր յօգնութիւն կարդալ 'ի
պատերազմի:

(7) Զո՛ր օրինակ սուրբս դրէ ը̅ մետափր", իբրև 'ի
բերանոյ ականատեսից, * տեսաք զպատուհական և զսբ̅
„ հոգին Ն̅՝ իբրև փայլակն վերացեալ յերկինս||. նոյն-
պէս ունին և ճառընտիրք, * տեսաք զհոգի Ն̅, զի
„ իբրև զփայլակն վերացաւ յերկինս||: Իսկ Հ. ասէ.
* և տեսին հաւատացեալքն զհոգի սր̅յն, որ̅ աղաւնի
„ թռուցեալ 'ի հրոյն՝ ել յերկինս սպիտակափայլ որ̅
զլոյս||: Եւ զի այսպիսի բանք կան և 'ի վարս սր̅յն պօ-
ղիկարպոսի, չգիտեմ որպիսի շփոթութը̅ ճառընտիրք
աստանօր բառ առ բառ օրինակեալ են զայն ամ̅ հան-
գամանս կատարման 'ի վր̅ թէոդորոսի, զոր գտանեմք
'ի յոյն բնագրի վարուց պօղիկարպոսի. որ̅ և փոխա-
նակ դնելոյ զկատարումն թէոդորոսի 'ի փետր. ժէ.
ը̅ որում դնեն Հ. և Յ. և սուրբս, եդեալ են *յամ-
„ սեանն յունիսի, որ օր ը̅ էին||. կմ̅ *յամսեանն յո...
յերկրորդում աւուր||:

ՎԱՐՔ ՍՐԲՈՅՆ

Կիւրղի Եղ՟մայ հայրապետի ։ (1)

Հ․ Յ․ Լ․ մարտ․ 18 ։ (Դ՛աւուրընք․ Բ․ հէջ ։) Բոլլանդեանն ճառընտիրք․ հատ․ Է․ մարտի․ եր․ 625=633 ։ Տուտտէոս 'ի յառաջաբանս․ Գործոց Կիւրղի ։ Սուրիոս․ հատ․ Է․ եր․ 307 ։ Սոզոմ ։ Սոկրատ ։ Թէոդորէտ ։ Թէոփանէս․ և այլք ։ (2)

ՍՈՒՐԲ ՀԱՅՐԱՊԵՏՆ Կիւրեղ Եղ՟մացի, մին յերկոտասան վարդապետաց եկեղեցւոյ, եղև տիրապէս պարծանք Սիոնի և աթոռոյն Եղ՟մի, զ՟ որում յետ Յակոբայ արդարոյ եղբօր տն՟՝ մեծանուն և բազմարդիւն հովիւ գտաւ 'ի մէջ ամ՟ եպս՟աց ա՟ծակոխ քաղաքին, ականաւոր լուսափայլ վարդապետութբ՟ գրոցն՝ որ կոչի կոչումն ընծայութե՟, և հանդիսացեալ գրովն՝ որ առ Կոստանդ կայսր վս՟ հրաշալի երևման սբ՟յ խաչին առ իւրև ։ Արդ՝ էր սա հայրենեօք պաղեստինացի, գուցէ և ծննդեամբ Եղ՟մացի, բարեպաշտ ծնողաց զաւակ, սնեալ յա՟ծպաշտութե՟ և յա՟ծային գիտութե՟ անդէն յԵղ՟մ քաղաքի․ քանզի եղև յոյժ հմուտ հին և նոր կտակարանաց, որպ՟ և տեղեակ ուսմանց արտաքին հանճարոյ փիլիսոփայութե̃ · այլ առաւելեալ անարատ քաղաքավարութ̃բ, որ առնէ զմարդն կատարեալ և գովելի յաչս այ̃ և մարդկան ։ Իսկ առ մեծի փութոյն՝ որով ՚ի մանկութ̃է հետէ սիրէր զվարս առաքինութե̃, ընտրեալ զսրբակրօն մաքրութե̃ և զձգնողական կեանս կրօնաւորութե̃՝ միայնացաւ յառանձնութե̃, տուեալ զանձն աղօթից և պահոց և հոգևոր կրթութ̃եց և տեսութ̃եց · վ̃յ և եղև խելամուտ խորհրդոց ա̃ծաշունչ տառից, և գեղեցիկ աւանդից հօգելից հարց առաջնոց յաւուրց անտի առաքելոց ցաւուրս իւր · մինչև լի լինել նմ̃ իմաստութ̃բ, և առատանալ ՚ի բանս վարդապետութե̃ ը̃դէմ հրեից և հեթանոսաց և բիւրազգի աղանդաւորաց ժ̃մկին ։

Ամին իրի արժանապէս ընտրեցաւ և կոչեցաւ ՚ի սարկաւագութ̃ի եկեղեցւոյ ՚ի սբ̃յն Մակարայ հայրապետէն եղ̃մի · և ապա ընկալաւ զքահանայութ̃ի ՚ի յաջորդէ նր̃ յերանելոյն Մաքսիմոսէ խոստովանող հայրապետէ՝ յամի տն̃ իբր 335 ։ Իսկ այն Մաքսիմոս է, որ յաւուրս հալածանաց կռապաշտից զրկեալ էր յաջոյ ական վ̃ն հաւատոյն ք̃սի, ոտ̃ և աջոյ սրունքն ջաղխեալ ։ Իսկ զի սովորութ̃ի էր յաթոռանիստ եկեղեցիս, զի քահանայք մի կմ̃ երկու ևևս աւելի ընտրանաւ սահմանեալ՝ խօսէին բանս առ ժողովուրդն, և յետ նր̃ ելանէր եպ̃ն ՚ի բեմ̃ քարոզել հովուական իշխանութ̃բ կմ̃ հրաման տալ վ̃ն իրաց ինչ, սա ինքն երանելին կիւրեղ վ՟ս առատ և՝ սքանչելի վ՟պուե՟ն իւրոյ կարգեցաւ 'ի մաքսիմոսէ գլուխ քարոզչաց բանին, ո՟պ թէ վ՟պ վ՟պաց. մինչ գրեթէ յամ՟ կիւրակէս ինքն էր՝ որ խօսէր ըզբանս վ՟պութե՟ իբրև փոխանորդ հայրապետին։ Այս էր գործս ո՛չ թեթև, այլ ծանր յոյժ քան զքարոզութի՟ և զբեմբասացութի՟ այլոց տեղեաց. մի՝ վ՟ս բազմութե՟ ազգաց ամի ամի ժողովելոց 'ի ս՟բ քաղաքն եդէմ, յորս գտանէին և երևելի անձինք գիտնաւորք յեկեղեցական և յաշխ՟ական կարգէ. որոց առաջի պէտք էին բանից իմաստութե՟ և ըզգօնութե՟ 'ի շինութի՟ իմաստնոց և անմտաց, մեծի և փոքու. և միւս ևս՝ վ՟ս բազմութե՟ երեխայից, ո՟ք նորոգ դարձելոց 'ի ս՟բ հաւատս, ո՛չ յեդէմ ևեթ, այլև 'ի քաղաքս հեռաւորս. զի և սոքա բազում անգամ գային յեդէմ վ՟ս մկրտութե՟ 'ի յորդանան. զորս առհասարակ հրահանգէր կիւրեղ 'ի հաւատոյս, և պատրաստէր առ արժանաւոր ընդունելութի՟ ս՟բ մկրտութե՟ 'ի ձեռաց հայրապետին և գործակցաց ն՟ր քահանայից և սարկաւագաց. և այս հրահանգութե՟ կոչիւր ԿՈՉՈՒՄՆ ԸՆԾԱՅՈՒԹ՟Ե, ը՟ս յունաց ԿԱԹԷՔԷՍԻՍ։

ԱՅԼ յաղթէր ա՟մ դժուարութե՟ց վիշտ վտանգի ժամանակին յերեսաց բազմագլխի և բազմաճղի աղանդոց և հերետիկոսութե՟ց տարածելոց ը՟ն ա՟մ տեղիս. վ՟յ ձիգն մեծ էր կրթել զժողովուրդն, և առաւելապէս զնորատունկս՝ յողջամիտ վ՟պութե՟ ուղղափառ հաւատոց, կշտամբելով տիրապէս փաստիւք և վկայութբք զմոլար վրդպետս, միանգամայն և հաստահիմն առնելով զանմոլար ճշմարտութիւն ։ Եւ ահա 'ի սոյն առաջելաջան մշակութի բազմօք վաստակեցաւ երանելին կիւրեղ անդստին յաւուրց անտի քահանայութե իւրոյ՝ ձեռնարկութբ հայրապետին իւրոյ մաքսիմոսի ․ և տառապանս կրեաց բազումս վն սոցին իրաց ոչ միայն 'ի հերեսիովտաց ժամանակին և 'ի սուտանուն եղբարց , այլև 'ի ստոյգ ուղղափառաց անգամ ։

Վն զի զայնու ժամանակաւ յալէկոծ ծուփս տագնապէր եկեղեցի համօրէն յերեսաց արիանոսաց յետ դատապարտութե պղծոյն արիոսի 'ի սբ ժողովն նիկիոյ ․ մինչ զի արիոսեանք նենգամիտք՝ յորս բռնագոյն էր եւսեբիոս նիկոմիդացի , ձեռնամուխ եղեն ընկենուլ յաթոռոց զերևելի երևելի եպսունս ուղղափառաց , որպ և ընկեցին իսկ զսբն աթանաս աղեքսանդրացի և զձայնակիցս նր ․ զորս աքսորանօք և հալածանօք վտարանդիս առնէին , և 'ի նց տեղիս կարգէին կամ զչարափառս , կմ զայնս յուղղափառաց՝ զորս ակնունէին ձգել 'ի կողմն իւրեանց երկդիմի բանիւք ․ քանզի և 'ի պատրել զանգէտս հնարեցան յօդել այլևայլ դաւանութիւնս նսեմ և պատիր ասացուածովք՝ ցուցանելով զանձինս ոչ օտար 'ի ճշմարտութե ․ և այսպիսի շփոթութբք զօրացաւ հանապազորդեան գժտութի և հակառակութի եպիսկոպոսաց ը եպիսկոպոսունս , և ժառանգա-

ւո

ւորաց եկեղեցւոյ ը̃ միմեանս՝ զրեթէ յա̃մ քաղաքս:

Այլ առաւել սաստկացաւ խռովութիւն 'ի ժամանակին՝ յորում քակտեցան 'ի միմեանց եպ̃սունք 'ի ժողովն սարդիկեայ՝ յամի Տ̃ն · 347 · զի թէպէտ և մեծաւ մասամբ ուղղափառք կացին մնացին 'ի սարդիկէ առ 'ի մերժել խաւար զաղանդն արիոսի և հետևողաց նր̃, բայց եւսեբեանք արիոսամիտք անկան 'ի փիլիպուպօլիս առնել ժողովակ առանձին ընդդէմ դասուց ուղղափառաց · և այնպէս նզովք աստի և նզովք անտի 'ի վեր ելին ը̃դդէմ իրերաց, և թուղթք շրջաբերականք յը̃վայր հարկանել զմիմեանս. սարդիկեանք զփիլիպուպօլեանս հաստատէին լինել հետևօղս արիոսի և թշնամիս նիկիոյ ս̃բ ժողովոյն, և սոքա զնյ̃է իբրև զսաբէլեանց չարախօսէին:

Յայսպիսի նամականւոյ երկաքանչիւր կողմանց 'ի վարանս անկեալ և այլոց եպ̃սաց՝ որք ոչ մտին 'ի ժողովսնց̃, կէսք յայս կողմն, և կէսք յայն հակամիտէին. իսկ այլք զմիջին կարծելով գնալ ճանապարհ՝ նոր հերձուած կացուցանէին՝ կիսարիոսեան. և 'ի նս̃ ոմանք մոլորամիտք, ոմանք ողջամիտք, այլ առհասարակ պէսպիսաձայնք և տարաձայնք: Յորում վիճակի վտանգ մեծ էր հաղորդիլ ը̃ այսմ կմ̃ ը̃ այնմ՝ առանց արատոյ հերձուածոց. որպ̃ և յոչն հաղորդիլ՝ դարձեալ առիթ հերձուածոյ նորոյ:

Սմին իրի և մաքսիմոս հայրապետ եմ̃ի,

որում անսայր և կիւրեղ իբրև առաջնորդի իւրոյ, լաւ համարեցաւ սիրով գնալ ընդ ամենեսին, զի թերևս այսու շահեսցին երկոքին կողմանք • և յառաւել զիջանելն՝ պատրանօք եւսեբեանց ձգեցաւ և 'ի ժողովն տիւրոսի գումարեալ յարիանոսաց ընդդէմ աթանասի • և հարկեցաւ ևս առաջիկայ գտանիլ 'ի միւս ժողովն եկնի ընդդէմ նորուն աթանասի • որով և առ ժամանակ մի եղև 'ի համարի կիսարիոսեանց • մանաւանդ զի ոչ անսաց խրատու սրբոյն պափնուտիոսի խոստովանողին, որ ընդ օրինակի նորա զրկեալ էր 'ի միոյ ակնէ վասն հաւատոյ • քանզի սա յառաջիկայ լինել ընդ մաքսիմոսի 'ի ժողովն տիւրոսի՝ տեսեալ թէ գլխաւորք ժողովոյն են 'ի կողմն չարափառաց ընդդէմ մեծին աթանասի, կալեալ զձեռանէ մաքսիմոսի, և ասէ • ո՞ն արի գնասցուք աստի • յայտ արարեալ՝ թէ չէ արժան որոց մատնեցին զանձինս իւրեանց 'ի խեղումն վասն խոստովանութեան անուանն քրիստոսի, կալ մնալ 'ի ժողովս քրիստոսամարտից • իսկ մաքսիմոս չէառ առ ժամն 'ի միտ զխորհուրդս չարաց ։

Արդ թէպէտև այսպէս վտանգեցաւ մաքսիմոս, այլ յետոյ 'ի վերայ հասեալ խարդախանաց արիանոսաց՝ 'ի բաց որոշեցաւ 'ի նոցանէ, և միաբանեցաւ ընդ սրբոյն աթանասի ։ Քանզի յորժամ դէպ եղև աթանասի անցանել ընդ պաղեստին (ըստ ոմանց 'ի դառնալն 'ի ժողովոյն սարդիկեայ, կամ ըստ այլոց 'ի դարձին 'ի վտարանդութենէ իւրմէ յարևմտից 'ի կողմանս արևելից՝ յամի . 349 .) ընտանի խոստակցութ̃բ շինեաց նա զմիտս մաքսիմոսի և որոց ը̃ նմա . յայնժամ 'ի հրամանէ մաքսիմոսի ժողովեալ հնդետասան եպ̃սաց յեէ̃մ՝ ընկալան զաթանաս 'ի հաղորդուի̃ , և խոստովան եղեն՝ թէ պատրանօք օտարաց խաբեալ մեր զառաջինն՝ յակամայս ձեռս եդաք 'ի մերժել զաթանաս յաթոռոյ . և յաւելին գրել միաբան ստորագրութ̃բ գիր ուրախակցութե̃ յաղեքսանդրիա և առ եպիսկոպոսունս եգիպտացւոց՝ աւետաւորելով ն̃ց զդարձն աթանասի և զընդունելութ̃ն 'ի հաղորդութ̃ի իւրեանց ։

Յետ այսորիկ իբրև վախճանեցաւ մաքսիմոս յամի տ̃ն իբր 350 , անժառանգ մնաց առվայր մի աթոռն եէ̃մի . զի արիանոսք գուն գործէին տիրել այնմ . և կէսք զհերակլիոս ոմն ասէին թողեալ 'ի մաքսիմոսէ լինել իւր աթոռակալ . իսկ ժողովուրդն խնդրէր ըզկիւրեղ աւագերէց հայրապետանոցին՝ իբրև վ̃դպ հաստատակաց ։ Եւ յետ բազում խնդիր լինելոյ՝ ժողով շրջակայ եպ̃սաց զիջաւ 'ի խնդիր ժողովրդեան , և ընտրեաց զերանելին կիւրեղ իբրև արժանի ժառանգ այնր աթոռոյ , և այսմ ոչ միայն ուղղափառք հաւան գտան , այլև կիսարիոսեանք և թաքուն արիոսեանք . որոց գլխաւորն էր աղուէսամիտն ակակիոս եպ̃ս կեսարու պաղեստինացւոց ։ Զի թէպէտև գիտէին նք̃ զկիւրեղ ջաղխիչ աղանդոյ իւրեանց , բայց հայեցե̃լ 'ի հեզահամբոյր բարս նր̃ և 'ի խաղաղասիրուբունի , միանգամայն եւ 'ի զգօնունի , որ եւ 'ի հերքելն զաղանդս այլոց՝ լուեր զանուանս աղանդաւորաց , յօժարեցան միաբանիլ ընդ սրբութ՟ի նր՟ ․ եւ զի գլխաւորն 'ի մետրապօլիտս պաղեստինացւոց էր եպ՟ս կեսարեայ փիլիպպեայ , որ եւ կեսարիա պաղեստինու , նմին իսկ ակակիոսի եհաս ձեռն դնել նախ կիւրղի 'ի ձեռնադրութ՟ե անդ նր՟ յաթոռն եղ՟մի ։

Եւ այս գործակցութ՟ի ակակիոսի՝ որ էր մի 'ի հերքելոցն 'ի ժողովոյն սարդիկեայ , արատ իմն գոգցես թուեցաւ արկանել 'ի վր՟ սբ՟յն կիւրղի ․ ոպ՟ եւ նոյնօրինակ բամբասեցաւ զկնի սբ՟ն մելիտոս անտիոքայ հայրապետ , որ 'ի նմին ակակիոսէ ձեռնադրեցաւ ․ զնոյն իմա՛ եւ վն՟ այլոց ոմանց ողջամիտ եպիսկոպոսաց , զորոց համբաւէին ակակիոսեանք՝ թէ մեք ոչ ձեռն դնէաք նց՟ , եթէ ոչ գիտէաք լինել զն՟ս մեզ ձայնակիցս ․ այլ խաբեցան չարքն , եւ յամօթ եղեն յելից իբացն ․ զի ոչ այնպէս՝ ոպ՟ կարծէին , վճարեցան իրքն ։ (3)

Քանզի երանելին կիւրեղ՝ որ յառաջին ըզգուշութ՟ի իմն ցուցանէր 'ի կշտամբել անդ զհերձուածս ժամանակին , յետ նստելոյ յաթոռ հայրապետութ՟ե առաւել համարձակ եւ անպատրուակ յանդիմանէր եւ յաղթահարէր զն՟ս , եւ յայտնապէս ը՟ բանիւ առնէր զյայտնի հակառակօղսն ճշմարտութ՟ե , եւ ըզբաղումս 'ի մոլորելոց դարձուցանէր 'ի ճըշմարիտ հաւատս ուղղափառութ՟ե ։

Եւ յաւել տ՟ր շնորհել ս՟բյ հայրապետին կիւրղի լինել հայր բազմու՟ե նոր հաւատացելոց 'ի ձեռն ծագելոյ սքանչելեաց երեւման ս՟բյ խաչին յե՟կն. քանզի յառաջնում ամի անդ հայրապետութ՟ե նր՟ կի՟մ 'ի սկիզբն երկրորդին, այն ամ՟ին էր 351 կամ 352. յեօթներորդ աւուր ամսեանն մայիսի՝ զերրորդ ժամու աւուրն՝ երեւեցաւ յօդս խաչ մեծ հրաշալի լուսեղէն, որ յաղթէր պայծառութ՟բ ճառագայթից արեգական, տարածեալ 'ի վ՟ր ս՟բ լերինն գողգոթայ, և ձգեալ մինչեւ 'ի լեառն ձիթենեաց, գեղեցիկ և սքանչելի յոյժ՝ պատեալ շուրջանակի պսակաձեւ նշուլիւք իբրեւ զծիածան. և այն ոչ հարեւանցի երեւութացեալ, այլ հաստատուն տեսլեամբ ընդ բազում ժամս. մինչեւ ակնյայտնի տեսանել զայն ամ՟ն բազմութ՟ե քաղաքին:

Քանզի դղրդեցաւ քաղաքն ամ՟ն, և պակուցեալ հիացեալ կային առհասարակ ը՟ սքանչելի տեսիլ ս՟բյ խաչին ցուցեալ արփիագեղ. և ապա ամ՟ն բազմութ՟ի տեսողաց իբրեւ 'ի միոյ ոգւոյ միաբան ընթացան 'ի մայր եկեղեցին ս՟բ սիոնի՝ արք և կանայք, ծերք և տղայք, եթէ բնակք և եթէ եկք օտարականք, եթէ քրիստոնեայք և եթէ հեթանոսք. և իբրեւ ը՟ մի բերան օրհնելով զք՟ս՝ մեծացուցանէին զս՟բ հաւատս նր՟. և եղեւ ուրախութ՟ի մեծ հաւատացելոց. և բազումք յանհաւատից եկին 'ի հաւատս ք՟սի. և հրահանգեալ 'ի ս՟բյն կիւրղէ՝ մկրտեցան 'ի նմանէ և 'ի պաշտօնէից նր̄ (4) ։

Եւ նա ինքն սբ̄ հայրապետն կիւրեղ ականատես վկայ սքանչելեացն՝ մեծապէս գոհութի մատուցեալ փրկչին՝ փութացաւ գրեաց գիր առ կոստանդ կայսր, քարոզելով զմեծութի աճաւոր հրաշիցն ։ Արդ թէպէտև քաջ գիտէր նա զխոստովանութին կոստանդեայ 'ի կողմն արիանոսաց, այլ առ շահելոյ զսիրտ նր̄՝ պատուասիրեաց ըն̄ սովորուե̄ անուամբ գովութե̄ ա̄ծասէր և բարեպաշտ թագաւորաց . և յորդորեաց զնա ազդու բանիւք 'ի միտ առնուլ զզօրութի սբ̄յ խաչին հանգոյն բարեպաշտ հօր իւրոյ կոստանդիանոսի, և ա̄ծապաշտ կարգօք փայլեցուցանել զթագաւորութի իւր . զի և ոչ կարէր աւելի ինչ բացայայտագոյնս խրատել զնա վս̄ ուղղափառութե̄, զի մի գրգռեսցէ զնա ընդդէմ ուղղափառաց ։ Յայս միտ խօսի և ձառընտիրն զայն բան . * Մ`ինչև կոստանդեայ
,, թագաւորի որդւոյ մեծին կոստանդիա-
,, նոսի գրել թուղթ աղերսանաց երանելոյն
,, կիւրղի, և կոչել զնա բարեպաշտ և ա̄ծ-
,, ային . իբր թէ ողոքանօք զնորայն կար-
,, ծեաց շահել փրկութի, որ մոլորեալ էր
,, զկնի արիանոսացն հերձուածոյն, ցուցա-
,, նելով նմա զա̄ծային նշանին երևումն,
,, և զբազմութի դարձելոցն նովաւ առ ա̄ծ,
,, թէ զմի՞ և ոչ դու ըն̄ նոսա ժամանեցեր‖ ։
Այս թուղթ է սբ̄յն կիւրղի, որ վերծանի յեկեղեցւոջ 'ի սկիզբն ընթերցուածոց տօնի երևման խաչի ։

Յետ այսորիկ իբրև որ քան զօր մեծանայր համբաւ սրբութ՟ե և իմաստութ՟ե երանելւոյն կիւրղի ճշմարիտ քարոզի բանին ուղղափառ վ՟դպութ՟ե , մախացեալ ը՟ այն ակակիոսի չարանենգ եպ՟սին կեսարու պաղեստինոյ , դրդռեաց հակառակութ՟ի ընդդէմ ս՟բյ հայրապետին . և ժողովեալ զհամախոհս իւր յարիանոսաց և 'ի կիսարիոսեանց՝ յարոյց վէճ 'ի վ՟ր պատուո՛յ աթոռոց , որ՟պս թէ չէր արժան կիւրղի այնպէս ինքնիշխանաբար վարել զհովուապետութ՟ի 'ի պաղեստին . զի մեծ է ասէ պատի՛ մետրապօլտութ՟ե իմոյ քան զնորայն . և այլ ինչ բազում . յօդեաց 'ի վ՟ր կիւրղի և կեղտ անուն մոլորութ՟ե՝ վ՟ս յաղթահարելոյ ն՟ր ը՟ այլ աղանդս և զարիոսեանն . և վ՟ս այսր ա՟մի ոխրաբար 'ի դատ կոչէր զնա , յուսացեալ յօգնականութ՟ի կայսեր . մինչև սպառնալ ընկենուլ զնա յաթոռոյ ։

Իսկ յոչ անսալ կիւրղի սնոտի բանից նորա՝ եգիտ ակակիոս զայլ հնարս չարութ՟ե ամբաստան լինել զնմանէ առ ինքնակալն ։ Քանզի զայնու ժամանակաւ 'ի լինել սովու յե՟րին պաղեստինացւոց , և 'ի դիմել բազմութ՟ե աղքատաց առ ս՟բ հայրապետն կիւրեղ , նա յետ բաշխելոյ զա՟մ զոր ինչ ունէր՝ ետ վաճառել ինչ ինչ և 'ի սպասուց եկեղեցւոյ 'ի պէտս կարօտելոց ։ Զայս կարևոր տնտեսութ՟ի հայրադութ խնամոց քաջ հովուին , և զկատարեալ ողորմածութ՟ին ն՟ր՝ առիթ առեալ ակակիոսի , համբաւէր զերանելին իբրև

վաճա

վնասակար եկեղեցւոյ, վաճառիչ գանձուց, և քակտիչ ամ̃ կարգաց. և հանդերձ համախոհ եպս̃օք վերստին սպառնալիս կարգեն 'ի վ̃ր ն̃ր՝ կոչեաց զնա 'ի դատ ժողովոյ, ոչ թէ առ արդարացուցանել զանձն ։ Եւ յոչ անսալ սբ̃յն կիւրղի անիրաւ և կասկածելի կոչմանն ն̃ր և որոց ը̃ նմա կեղակարծ և մոլորամիտ անձանց, զայրացաւ ակակիոս և 'ի բացակայութ̃ն սբ̃յն ընկեց զնա իբրև պարտաւոր յաթոռոյն ե̃կմի. և այնչափ բռնացաւ, մինչև հալածել զկիւրեղ քաղաքէ 'ի քաղաք, և ինքնին տիրել աթոռոյ ն̃ր, մինչև դիցէ զոք այլ արքունի իշխանութ̃բ ։ Իսկ սբ̃ն կիւրեղ իբրև հարկեցաւ մեկնիլ յե̃կմէ, բողոքեաց 'ի մեծագոյն ժողով ողջամիտ եպիսկոպոսաց, և այնպէս փախստեայ անկաւ յանտիոք ասորւոց. այլ ոչ կարաց անդ վճարել ինչ. զի այն ինչ վախճանեալ էր ղևոնդիոս եպս̃ տեղւոյն, և աթոռն էր առանց հովուի ։ Եւ զի ոչ կարէր յայլ երևելի աթոռս դիմել, զի 'ի բազումս 'ի նոցանէ զօրացեալ էր բռնութ̃ի արիանոսաց, ել գնաց 'ի տարսոն կիլիկեցւոց՝ առ երևելին սիղուանոս եպս̃. որ թէպէտև կուսակից էր կիսարիոսեանց, այլ ոչ օտար յուղղափառաց. վ̃ն սիրով ընկալաւ զկիւրեղ, և պատուով թոյլ ետ նմա քարոզել զբանն ա̃յ առ ժողովուրդն տարսոնի ։ Յայնժամ գրեաց ակակիոս առ սիղուանոս, թէ կիւրեղ մերժեալ է յաթոռոյն, և չէ պարտ հաղորդիլ ը̃ նմա. վ̃ն և յոյժ մեղադրանօք սպառնայր սիղուանոսի վ՟ս ը՟ունելութե՟ն կիւրղի ։ Այլ նա զբանս նորա իբրեւ զառասպելս համարեցաւ . եւ 'ի մեծ յարգի ունէր զկիւրեղ . թո՛ղ զի ակնածէր եւ 'ի ժողովրդենէ՝ որք զվ՟դ՟պուն կիւրղի ա՟մ փափաքմամբ ընկալան . նմին իրի ո՛չ իշխէր արգել զնա յեկեղեցւոյ . եւ կիւրեղ իմաստութ՟բ իւրով շահեցաւ զսիղուանոս 'ի բաց կալ 'ի թաքուն արիանոսաց եւ 'ի կիսարիոսեանց ։ Եւ զի յայնմ ժամանակի լինէր ժողով ճ՟ծ եպ՟սաց 'ի սելեւկիա իսաւրացւոց յամի տ՟ն . 359. գնաց անդր եւ կիւրեղ հանդերձ սիղուանոսիւ, եւ ընկալեալ եղեւ յամենեցունց 'ի հաղորդութի՟ ։

Հասեալ անդր եւ ակակայ գործակցօք իւրովք՝ ասէ անպատկառ ցժողովեալ եպ՟սունս . չէ՛ մարթ մեզ հաղորդիլ ը՟ ձեզ 'ի խորհուրդ գումարմանդ , մինչեւ ոչ հանցի 'ի ժողովոյ աստի կիւրեղ՝ որ անկեալ է յեպ՟սութ՟է ։ Եւ 'ի լինել հակառակու՟է , ոմանք յեպ՟սաց իբրու հնարս խաղաղութե՟ խորհելով յորդորէին զկիւրեղ ելանել 'ի ժողովոյն , խոստանալով եւս նմա՝ զի յետ քննելոյ զխնդիր հաւատոյ՝ տեսցեն եւ զիրաւունս նր՟ ։ Այլ անհնար եղեւ կիւրղի յանձն առնուլ զայն . զի ոչ միայն անարգու՟ն մեծ էր այն ս՟բյ աթոռոյն եհմի , այլեւ յայտնի նշանակ յառաջանալոյ գաղտնի հնարից կիսարիոսեանց ընդդէմ իւր եւ ընդդէմ՝ ա՟մ ուղղափառաց . վ՟ս այնդէր , թէ կամ որոշեսցի խնդիր հաւատոյ յառաջիկայու՟է իմում , եւ կ՟մ նախ ցուցից եւս զիրաւունս իմ եւ զբռնութի՟ ակակիոսեանց ։

Եւ

Իսկ իբրեւ իրաւացի դատեցան հարք զբանս Կիւրղի, ըմբոստացեալ ակակայ՝ ել ՚ի բաց ՚ի ժողովոյ անտի բարկութ՟բ՝ խռովքն հանդերձ ։ Յայնժամ հարք ժողովոյն քննեալ զդատ Կիւրղի՝ հաստատեցին զնա անդրէն լինել արժանաւոր ժառանգ ս՟բյ աթոռոյն Ե՟ղմի ․ եւ կոչեցին զակակ գալ յանդիման լինել ատենին, եւ տալ պ՟խնի վ՟ն հակառակութեանց եղելոց ը՟դէմ Կիւրղի, եւ արդարացուցանել զանձն ՚ի համախոհութ՟է արիոսի ․ նոյնպէս ազդ արարին եւ այլոց եպ՟սաց՝ որք համամիտք էին ընդ ակակայ ։ Իսկ յարհամարհել ն՟ց զհարս՝ ն՟ք եւս մերժեցին զակակ եւ զգործակիցս ն՟ր իբրեւ խռովարարս եւ համախոհս արիոսի ․ յորս նշանաւոր էր եւդոքսիոս՝ որ բռնացեալ էր յաթոռն անտիոքայ, այլ չունէր զհաստատութ՟ի յարքունուստ ։

Զայս գիտելով ակակայ՝ խրատ ետ եւդոքսիոսի չմնալ ՚ի ժողովն անդր սելեւկիոյ, եւ սրտապնդեաց զնա չերկնչել յայլոց եպ՟սաց ․ զի ես եղէց առ պաշտպան անձին քո առաջի կայսեր, եւ տաց զքեզ նստուցանել յաթոռն անտիոքայ կ՟ կոստանդնուպօլսոյ ․ զի ոչ մեծն եւսեբիոս կեսարացի սիրելի էր յոյժ յաչս մեծին կոստանդիանոսի, սոյնպէս եւ յաչս որդւոյ ն՟ր կոստանդեայ պատուեալ էր անարժանն ակակիոս յաջորդ եւսեբեայ ։ Սովին խորհրդով առեալ ակակայ զեւդոքսիոս ը՟ն իւր՝ դիմեաց ՚ի թ՟գւորեն ք՟ղքն ՚ի կոստանդինուպօլիս ․ եւ մատուց՟են առ կայսրն կոստանդ՝ չարախօսս եղեւ զՀայոց ժողովոյն սելեւկիոյ. այլ առաւել ը՟դէմ կիւրղի գրգռեաց զնոա չարանենգ լեզուն. ք՟զի ասէր, թէ զո՟ր պատմուճանն կա՟ զնափորոտն ոսկեթել, զոր հ՟այր քո օգոստափառն կոստանդիանոս ՚ի պատուել զեկեղեցին եէ՟մի տուեալ էր ՚ի պարգեւս մակարայ հայրապետի այնր քաղաքի, զի նովին զգեստաւորեալ կատարեսցէ զմկրտուե՟ն խորհուրդ, զայն վաճառեաց կիւրեղ պատճառանօք սովոյն (5). զոր եւ գնեալ ասէ ՚ի ձեռաց վաճառականաց միմոս ո՟մն երգեցիկ ՚ի թատրոնի, կա՟ մի ո՟մն ՚ի կաքաւչաց, արկեալ է զանձամբ, եւ այնպէս մտեալ ՚ի խաղս. այլ ՚ի ժամ կաքաւելոյն պատուհասեալ եւ սահեալ՝ անկեալ է եւ մեռեալ։ Յաւել եւ զայլ ազգի ազգի ստայօդ չարախօսութիւս. եւ ահա ասէ մոլորամիտ եպ՟սունք՝ որք զայսպիսի այր զընկեցեալն ՚ի մէնջ ընկալան ՚ի հաղորդուե՟ի, ժողովեալ են քննել զխնդիրս հաւատոյ, եւ հերքել զմիաբանեալսն ը՟ մեզ եւ ը՟ քեզ։ Յայնժամ կոստանդ. հրաման ետ, զի տասն հարք ՚ի գլխաւորաց ժողովոյն եկեսցեն առ նա ՚ի կոստանդինուպօլիս. եւ նոքա իբրեւ եկին, պնդագոյնս ջատագով եղեն ճշմարտութե՟ առաջի կայսեր. զի թէպէտեւ յառաջնմէ ՚ի թի՟ս կիսարիանոսաց էին, այլ ը՟դէմ ակակեանց զուղղափառուե՟ի համարձակ քարոզէին. յորոց մի էր եւ սիղուանոս տարսոնացի։ Բայց կայսրն՝ որ առաւել անսայր ակակեանց, ը՟ խնդրոյ նց՟ ետ նոցա հրաման առնել այլ ժողով ՚ի թագաւորական քաղաքի անդ յամի 360 ․ ուր նոքա յանդգնեցան հերքել զկիւրեղ և զմիաբանեալսն ը՟ նմա իբրև խռովիչս և մոլորեցուցիչս ․ վ՟ղ և կոստանդ հաւատոս ընծայեալ ն՟ց՝ եհան հրաման արտասահմանութե՟ ը՟դէմ կիւրղի և գլխաւոր գործակցաց ն՟ր ․ իսկ զեւդոքսիոս արիոսամիտն նստոյց ը՟ խնդրոյ ակակայ յաթոռն կոստանդինուպօլսոյ ։ Նաև այնուհետև յա՟մ կողմանց զօրացաւ ակակիոս չարն ․ և երթեալ 'ի տարսոն՝ ետ աքսորել զսիղուանոս և զկիւրեղ 'ի տեղիս հեռաւորս , նոյնպէս և զայլս յուղղափառ եպիսկոպոսաց ։

Արդ զտարսոնի հովուութիւն ետ 'ի գայլ յափշտակիչ յեւնոմիոս եպ՟ս գերմանիկոյ ․ իսկ յերուսաղէմ կարգեաց առ ժամանակ մի փոխանակ սր՟յն կիւրղի զեւտիքիոս ոմն եպ՟ս թշնամի ն՟ր ․ ոպ՟ և յետ սակաւուց զայլ ոք ․ զի հաւատացեալքն առաջնորդեալք 'ի քաջ հովուէն իւրեանց ոչ հանդարտէին այնպիսեաց չարափառ և չարաբարոյ աւազակաց ․ վ՟ս որոյ դարձեալ առի յոմանց՝ թէ 'ի սմին միջոցի առաջնորդէր երուսաղեմացւոց հերեննիոս կի՟ արհեննիոս անուն , և ը՟ այլոց հերակլիոս կի՟ կիւրղոս անուն ․ զի ստոյգն է անգիտելի ․ մինչև 'ի դէպ է կարծել , թէ հուսկ յետոյ ակակիոս 'ի խնդրոյ ժողովրդեան կացուցեալ իցէ առաջնորդ այնր աթոռոյ զծերունին յուդա , այն որ հաւատաց 'ի ժամանակս գիւտի խաչին առ հեղինեաւ , և կոչի միւս կիւրեղ՝ իբրև եպ՟ս երուսաղեմի ․ որ և յետ սակաւուց նահատակեցաւ հանդերձ մարբն ’ի յուլիանոսէ․ ոպ̃ տեսցի զկնի։ Բայց արդ թէպէտև ոչ սակաւ ժամանակս այսպէս աւերած լինէր եկեղեցի յերեսաց արիանոսաց զօրացելոց, ոպ̃ և փոքր մի զկնի յուզէր հալածանօք յուլիանոսի ուրացողի, այլ ա̃ծ ’ի բարին եկեղեցւոյ տնօրինեաց զա̃մ։ Քանզի իբրև մեռաւ յայն աւուրս կայսրն կոստանդ, և թագաւորեաց յուլիանոս յամի տ̃ն․ 361․ սա զառաջինն առ ’ի տալ զկարծիս խաղաղասիրութե̃ և սուտ մարդասիրութե̃, թող զցոյց իշխանասիրութե̃ և փառասիրութե̃, հրաման ետ յետս կոչել յաքսորանաց զա̃մ եպ̃սունս տարագրեալս ’ի հրամանէն կոստանդեայ։

Եւ այնպէս դարձաւ յարտաքսահմանութէ̃ և ս̃բն կիւրեղ․ և ’ի գալ իւրում յե̃մ՝ յորժամանցանէր ը̃ անտիոք, ուր էր յայնժամ և թագաւորն, բազում մարդասիրութե̃ ընկալաւ զնա ս̃բն մելիտոս հայրապետ անտիոքայ․ որ և յանձնեաց կիւրղի մանուկ զոմն որդի քրմի՝ այն իսկ եկեալ ’ի հաւատս, և փախուցեալ ’ի ձեռաց հօր իւրոյ և յուլիանոսի․ և կիւրղի առեալ զայն գիշերայն՝ ել ’ի քաղաքէն, և եկն յաթոռ իւր յե̃մ․ ուր երախայացոյց և մկրտեաց զմանուկն․ և յետ ժամանակաց երանելի մանուկն այն դարձոյց և զհայր իւր ’ի ս̃բ հաւատս։ Եւ զի այսչափ ընտանութի̃ էր ը̃ մելիտոս և ը̃ կիւրեղ, որք միանգամ թշնամիքն էին մելիտոսի յուղղափառաց անգամ, ը̃ ակամբ հայեցին և 'ի կիւրեղ. և զերկոցունց ևս սուտ բամբասանս յօդեցին՝ դիւրահաւան լինելով զրպարտութե՟ց և չարախօսութե՟ց բերանոյ արիանոսաց :

Յետ այսորիկ յամի տ՟ն. 363. 'ի գալ միւսանգամ յուլիանոսի յարևելս առ 'ի գնալ 'ի պատերազմ ը՟դդէմ պարսից, իբրև դէպ եղև առնել նմա աւուրս ինչ 'ի պաղեստին, մատեան առ նա գլխաւորք հրէից՝ որ յեղ՟մ. և խնդրեցին դիւրութ՟ի առնել ն՟ց յերեսաց քրիստոնէից. և շինել համարձակ ժողովարան և աղօթատեղի. որով խորհէին խորամանկքն՝ եթէ հնար ինչ իցէ, և զտաճարն գլխովին վերստին կանգնել: Յայնժամ անօրէնն յուլիանոս՝ որ զա՟մ հնարս հնարէր յեղծումն քրիստոնէութե՟, սկսաւ գովել զգիրս և զօրէնս հրէից՝ ո՛չ տեղեակ անձամբ՝ քան զքրիստոնէից. և տուեալ զա՟մ ազատութ՟ի՝ հրամայեաց յայտնապէս զոհ ևս մատուցանել ը՟ս օրինացն մովսեսի: Իսկ հրէայքն ասեն. չէ՛ մարթ մեզ մատուցանել ուրեք զոհ, եթէ ոչ շինեսցի տաճար, յորում ևեթ օրէ՛ն է մեզ զոհել: Եւ նա անդէն վաղվաղակի մտադիւր կամօք զիջաւ ն՟ց առաւել քան զոր խնդրէին. զայն տաճար ասէ՝ զոր տիտոս կործանեաց, ես անդրէն 'ի տեղւոջն կանգնեցից. արդ բուռն հարէք դուք 'ի շինել 'ի հիմանց, և ես ըզծախս լցից յարքունի գանձուց. զի ո՛չ եթէ զտաճարէն ինչ փոյթ էր նմա, այլ ը՟դ ք՟սի կարծէր մարտնչիլ նովաւ :

Ընդ այս բան ն՟ր լցան անասելի խնդութ՟ե ժողովք հրէից . և 'ի տարածիլ համբաւոյ՝ գունդագունդ հեղան զեղան ո՟պ մեղուք հրէայք յա՟մ կողմանց յե՟էմ, և խնդամիտ ձեռն 'ի գործ առնէին արք և կանայք, զի և սոքա զա՟մ զարդս իւրեանց հանէին ժողովէին 'ի պէտս տաճարին . և զա՟մ փափկուն մոռացեալ՝ անձամբ գործակից լինէին գործաւորաց, ո՟պ 'ի բերել անդ զգետինն, և 'ի կրել զհող 'ի գոգս իւրեանց ։ Իսկ ո՞ կարէր տանել յայնմ վայրի մեծաբանութե՟ ազգին հրէից, որով պարծէին ը՟դէմ քրիստոնէից՝ նախատելով զն՟ս, և հայհոյելով զք՟ս . ո՟պ թէ եկեալ հասեալ իցէ նորոգում՟ն թագաւորութե՟ իւրեանց, և ոտնհարութ՟ի ա՟մ ժողովոց հաւատացելոց 'ի յ՟ս իբրև 'ի թագաւոր մեսիայն ։

Իսկ այնչափ մեծ էր ակնկալութ՟ի հրէից և փոյթ պնդութե՟ ն՟ց, մինչև յուսովն այնու՛իկ շինելոյ զնոր տաճար հոյակապ՝ քակեցին և զբազումս 'ի մնացեալ քարանց հիման հնոյ տաճարին ։ Յայնժամ լցաւ մարգարէութի ս՟բյն կիւրղի, զոր ասացեալ էր ն՟ր երբեմն 'ի քարոզութե՟ իւրում, թէ եկեսցէ ժամանակ՝ զի և այդ մնացուածք քարանց քակտեսցին ը՟ս ն՟ն բանի, եթէ յերեսաց արկածից իւրեք, և եթէ պատճառանօք շինուե՟ . և եղև այնպէս . զի հրէայք ինքնին ձեռօք իւրեանց քակեցին և 'ի բաց հանին զքարինս առ արկանել հի՟մն նոր . և զհող տեղւոյն հանեալ կուտեցին բլուրս բլուրս . ո՟պ

և յայլում ետեղ դեղ դեղ պատրաստեցին
զնիւթս շինուածոյն ։

Արդ յորժամ չէր ինչ դրեթէ մնացեալ այնուհետև, բայց 'ի վաղւի՛ անդր հիմնարկել, յայնժամ հաւատացեալքն՝ որք 'ի սուգ համակեալ էին վս̅ այսց բանից, եկին ժողովեցան առ ս̅բ. հայրապետն իւրեանց Կիւրեղ, և հոգային և հեծեծէին կարեկցութ̅ վս̅ չարագուշակ ելից իրացն ։ Իսկ հովուի՛ն քաջ կայր անվրդով և անդորր սրտի՛. և քաջալերեալ յորդորէր զժողովուրդն դիմել անել աղօթիւք առ ա̅ծ, և մի ինչ թերահաւատիլ. և մխիթարեալ զն̅ս տխրական բանի՛, ասէ. դուք ձեզէն տեսանէք 'ի գըլուխ ելեալ զկատարումն բանին տ̅ն, թէ մի մնասցէ այդր քար 'ի քարի վերայ՝ որ ոչ քակտեսցի. ապա մի լիցի ձեզ կարծել, թէ կարողասցին հրեայք դնել անդէն քար 'ի քարի վ̅ր. զայս ասէր, և ինքն վստահ էր 'ի տ̅ր, եթէ հասցէ 'ի տ̅նէ այցելուն 'ի պարծանս անուան իւրոյ փառաւորելոյ. որ և
եղև իսկ ։

Զի ահա 'ի գիշերին յայնմիկ՝ յորոյ 'ի լուսանալն խորհէին հրեայք սկիզբն առնել հիմնարկութե̅ տաճարին, եղև յանկարծակի սասանումն ահագին զտեղեաւն. և յետ շարժման յարեաւ հողմ սաստիկ՝ ուժգին փոթորկեալ. և 'ի կրկին դղրդմանց աստի կործանեցան տունք շրջակայ, յորս ժողովեալ էին բազմութի̅ք հրէից գործաւորաց, մինչև ձմլիլ ն̅ց ը̅ փլատակաւ և կորնչել.

և յայնմ մրրկէ մեծէ հողակոյտն ա՟մ պեղելոյ հիմանն անդրէն լցաւ 'ի փոսն փորեն, և քարինք անգամ մեծամեծք պատրաստեալք վ՟ս հիմանց՝ ձգեցան 'ի վայրս հեռաւորս. իսկ բազմակոյտ ատաղձք շինուածոյ այտր անդր կուտեալք՝ ցիր և ցան եղեն 'ի մէջ քաղաքին եհմի:

Այլ զկնի այսպիսւոյ ա՟ծասաստ յանդիմանութ՟է ոչինչ զգաստացեալ հրէից՝ ո՟պ այն թէ պատահարք ինչ իցեն ը՟ս դիպաց, յանդգնեցան անդրէն ընդ առաւօտն ձեռն արկանել յառաջին իւրեանց գործ. և ոչ գիտացին՝ եթէ ը՟ս եղիական տեսլեանն մնայր նշ՟ յ՟տ շարժման և յ՟տ հողմոյ հուր հրաշանըշան և ահաւոր: Զի իբրև այն ինչ միւսանգամ մաքրել սկսան զտեղի հիմանն, յեղակարծուց իմն 'ի վեր ել հուր 'ի գետնոյ անտի, և ծախեաց զբազումս 'ի հրէից. և 'ի խուճապել յոլովից 'ի փախուստ՝ իբրև դիմեցին խուռն խուժանօք անկանել յեկեղեցի քրիստոնէից, զոր բաց տեսանէին, անդէն ինքնին փակեցան դրունքն աներևոյթ զօրութ՟բ. ն՟ք զի համարէին՝ թէ պաշտօնեայք եկեղեցւոյն կամաւ զդուռն ը՟դէմ փակեալ իցեն, բուռն առնէին և հակառակէին բանալ զմուտս. և ահա ել յ՟տ առաջ նշ՟ նոր հուր 'ի ճակատէ եկեղեցւոյն. զոմանս բոցակիզեաց, և զայլս խանձողեալս և կիսայրեացս դարձոյց 'ի փախուստ: Դարձեալ և յայլում վայրի երևեցաւ հրձգութ՟ի անգիտելի՝ եթէ յերկնից և եթէ յերկրէ, ա̅ծ գիտէ․ զի յորժամ ազգականք արանցն կորուսելոց ը̅ փլատակաւ եկին 'ի խնդիր մարմնոց ն̅ց, տեսին յանկարծակի հուր ցոլացեալ սաստիկ 'ի յարկաց անտի, յորս եդեալ կային երկաթի գործիք շինուածոյն․ և 'ի փախչիլ անդ խուռեանց յերեսաց հրոյն՝ բուռն ձգմամբ յածէր բոցն զկնի ն̅ց ը̅ փողոցս և ը̅ հրապարակս իբրև 'ի խնդիր ձարակելոյ զո՛ ոք և գտանիցէ 'ի հրէից անտի ։ Եւ այս աղէտք տեւեցին զօրն ողջոյն, մերթ զիջանելով, և մերթ զայրանալով․ յորմէ ծախեցան բազմութիք հրէից, և վատնեցաւ ա̅մ կահ կարասի, փայտ և երկաթ պատրաստեալ 'ի պէտս տաճարաշինութե̅ ։

Այլ քանզի տակաւին չառնուին 'ի միտ անհաւան հրէայք, թէ ձեռն ա̅ծ էր 'ի վ̅ր ն̅ց, և զօրութի̅ խաչելոյն տագնապէր զն̅ս, 'ի միւս ևս գիշերի երևեցաւ լոյս մեծ յերկինս խաչանիշ շրջանակաւ, կա̅ լոյս խաչանմանութե̅ իբրև զնկարէն նշան աստեղազարդ և ճաճանչագեղ՝ ոչինչ ը̅ հատ 'ի պայծառութե̅ խաչին երևելոյ ամօք յառաջ առ կոստանդ կայսերաւ․ և այս ևս տարածեալ 'ի գողգոթայէ մինչև 'ի լեառն ձիթենեաց ։ Զայն տեսեալ հաւատացելոց՝ լի եղեն անպատում խնդութե̅․ զի յայտնի եղև նշան յաղթութե̅ փրկչին ը̅դէմ թշնամեաց եկեղեցւոյ սորա ։

Այլ 'ի հաստատութի̅ իրացս յաւելաւ միւս ևս նոր նշան սքանչելի․ քանզի իբրև յարեան և հրէայք 'ի տեսանել զերևոյթ ահաւոր խաչին, դրոշմեցան 'ի զգեստս բազմաց 'ի նց՟է ա՟ծային հրաշիւք խաչք բազմաթիւք՝ իբրև աշխատագործ նկարակերպ կիտուած յօրինեալ ձեռամբ ճարտար ասղնեգործաց, այլ թխատեսակ գունով իբրև զտեղիս խանձողեալս 'ի հրոյ։ Փութային հրէայք թօթափել զայն նշանս խաչին 'ի հանդերձից իւրեանց, բայց գտանէին տարրացեալ և անջրելի. մինչ զի և 'ի վաղիւ անդր բազումս աշխատ եղեալ նց՟ 'ի բաց հանել զնշանն շփելով և լուանալով, ինչ ոչ օգտեցան. զի ա՟ծայրոշմ էր կնիքն 'ի յանդիմանութ՟ի նց՟ և 'ի փառաւորութ՟ի խաչազգեցելոց։

Նաւ 'ի զարմանալ քրիստոնէից ը՟ տեսանել զհրէայս խաչանիշս, երևեցան նոյնօրինակ նշանք խաչի և 'ի վ՟ր բազմաց 'ի հաւատացելոց. ո՟պ և 'ի վ՟ր սպասուց ո՟ք եկեղեցւոյ, 'ի վ՟ր ծածկութից ո՟ք սեղանոյ, 'ի վերայ գրոց, և այլոց զարդուց տաճարաց. և այն ոչ միայն 'ի քաղաքն եդ՟եմ, այլև 'ի մերձակայ սահմանս մինչև յանտիոք։

Այսպիսի և յայսչափ ակներև և յահաւոր հրաշից յաղթահարեալ ա՟մ հրէից հանդերձ յուլիանոսիւ, յահի մեծի եղեն, և ձեռնթափ գտան իսպառ 'ի խորհրդոյ շինութ՟ե տաճարի. և ոչ այսչափ միայն, այլև բազմութ՟իք հրէից և հեթանոսաց դարձան 'ի ք՟նական հաւատս. քանզի ցորչափ տևեցին սքանչելիքն, առ հասարակ իբրև 'ի միոջէ բերանոյ յօգնութ՟ի կարդային ա՟մ ազգք զա՟ծն քրիստոնէից զխաչելեալն ք՟ս ․ և ոչ սակաւք 'ի նոցանէ 'ի նմին իսկ պահու տագնապին ընթացեալ առ քահանայս քրիստոնէից՝ բազում աղաչանօք ժտէին ընդունել զինքեանս յեկեղե՟ցի, մկրտել յանուն տ՟ն, և խառնել 'ի ժողովուրդն ք՟սի ։

Արդ յայս հանդէս հրաշալի՝ պանծալի ցուցաւ պաշտօն հովուապետութե՟ մեծին կիւրղի ․ զի զամենեսեան՝ որք դիմէին 'ի փարախն ք՟նական, սիրով ժողովէր ա՟ռ հայրապետն ․ յանձանձէր քաջալերէր բանիւք մխիթարութե՟ յա՟ծակոյս կողմանէ, և հրահանգէր զն՟ս 'ի ս՟բ հաւատս ․ և կնքեալ ք՟նական կնքով ս՟բ մկրտութե՟ յաւելոյր 'ի հօտ տ՟ն ։ Եւ զի մեծ էին սքանչելիքն՝ որ եղեն, հնչեաց լուր համբաւոյն ը՟ ա՟մ կողմ՟ն ․ վ՟յ և հայրապետք և վ՟դպք անուանիք 'ի նոյն դարս՝ ս՟բ գրիգոր ա՟ծաբան, ոսկեբերան, ամբրոսիոս, և այլք՝ 'ի ճառս և 'ի քարոզս իւրեանց ստէպ յուշ առնէին հաւատացելոց զզօրութի՟ ս՟բյ խաչին՝ օրինակաւ անցից անցելոց յե՟ղմ ․ թո՛ղ և զպատմաբանս դարուցն այնոցիկ ․ զի եթէ ուղղափառք և եթէ այլափառք, մինչև հեթանոսք անգամ 'ի գիր արձանացուցին զայն հրաշս՝ որ ընդդէմ հրէից ։ Այլ յայսր ա՟մի վ՟ր բազումք յանհաւատ հրէից՝ որք 'ի նեղութե՟ անդ իւրեանց զք՟ս յօգնութի՟ կարդային, յանցանել աւուրց հրաշիցն՝ կացին մնացին 'ի խստասրտութե՟ իւրեանց ։

Իսկ ուրացողն յուլիանոս՝ որոյ և զայլ բազում սքանչելիս էր տեսեալ և անգոսնեալ իբրև զմոգու՟իս, նոյնպէս և զայսոսիկ արհամարհեաց ը՟ս նմանու՟ե փարաւոնի. և առ զայրոյթ չարու՟ե ը՟դէմ փառաւորու՟ե անուանն ք՟սի, 'ի մեկնիլ իւրում 'ի կողմանց անտիոքայ և պաղեստինու 'ի պարս կոյս՝ պատուիրեաց շինել ամփիթեատրոն մեծ յե՟ղմ. զի 'ի դարձին իւրում ասէ խաղաղու՟թ 'ի պատերազմէ՝ անդանօր 'ի գազանամարտ մատուցից զեպ՟սունս և զքահանայս և զկրօնաւորս և զա՟մ նազովրեցիս. մինչ զի տաց ասէ ստեղծանել դից իմոց նորատեսիլ գազանս ահագինս, և ն՟ց առաջի արկից զդոսա։ Այլ 'ի նմին իսկ ամի նա ինքն չար գազանն ապստամբեալն յա՟յ, և ամբարձեալն ը՟դէմ ամենազօր աջոյն բարձրելոյ, սատակեցաւ 'ի պարսս աներևոյթ ձեռամբ. և 'ի դերև ել ա՟մ խորհուրդ չարին։

Իսկ ս՟բն կիւրեղ՝ որ ակն ունէր նահատակու՟թ կատարիլ 'ի ձեռաց յուլիանոսի իբրև զմիւս կիւրեղ, ոչ եհաս ուխտի փափաքանաց իւրոց. բայց կրեաց ոչինչ նուազ նահատակու՟ե հանապազորդեան մրցանօք ը՟դէմ արիանոսաց և այլոց հերեսիովտաց ժամանակին։ Զի թէպէտև 'ի թագաւորել յովիանոսի զկնի յուլիանոսի՝ առ փոքր մի խաղաղու՟ե եղև եկեղեցւոյ, և լռեցին արիանոսք, այլ յետ տարւոյ միոյ՝ յորժամ թագաւորեաց վաղէս արիոսեան, անդրէն զօրացան չարափառք։

Յորում ժամանակի իբրև մեռաւ ակակիոս

դրօշակակիրն թաքուն արիանոսաց , փութացաւ կարգեաց ս՟ն կիւրեղ 'ի տեղի ն՟ր յաթոռն կեսարեայ պաղեստինու զփիլումենոս · իսկ թշնամին կիւրղի եւտիքիոս ելեթիւրոպօլսեցի բռնութ՟բ 'ի բաց վանեալ զեդեալն 'ի կիւրղէ՝ կայոյց անդ 'ի կեսարիա զայլ ոմն կիւրեղ անուն , որ ոչն էր ողջամիտ 'ի վ՟դպուն : Ընդ որ չհանդուրժեալ ս՟յն կիւրղի՝ զօրացաւ իւրով գահերէց իշխանութ՟բ , եւ 'ի բաց հանեալ զկիւրեղն զայն կասկածելի 'ի հաւատս՝ եդ զգելասիոս ըզքեռորդի իւր զայր վկայեալ յամենեցունց յուղղափառ վ՟դպուն եւ 'ի բարի վարս · մինչեւ յետ սակաւուց 'ի միւսանգամ տարագրիլ կիւրղի յաթոռոյ՝ տարագրեցաւ եւ գելասիոս · եւ 'ի վերստին դառնալ ն՟ր՝ դարձաւ եւ նա :

Քանզի յամի տ՟ն · 367 · վաղէս կայսրն ընկալեալ զմոլորութ՟ի յեւդոքսիոսէ արիանոսէ՝ որ տիրէր աթոռոյն կոստանդնուպօլսոյ, խորհրդով ն՟ր եւ դրդռու՟բ այլոց եւս արիանոսեան ե՟պսաց՝ եհան հրաման դառնութ՟ն , զի որք միանգամ յառաջնմէ աքսորեալ էին 'ի հրամանէ կոստանդեայ կայսեր , եւ անդրէն դարձեալ յաթոռ իւրեանց առ յուլիանոսիւ՛ , (թ՛ող զորս աքսորեաց յուլիանոս եւ դարձոյց յովլիանոս զխոստովանող հայրապետս) , միւսանգամ 'ի բաց հանցին յաթոռոց , եւ արտաքսահմանեցին 'ի մետաղս՝ վ՟ս չմիաբանելոյ նոցա ը՟ արիանոսս · եւ սովին հրամանաւ դարձեալ տարագրեցաւ ս՟ն ա-

Թանաս յաղեքսանդրիոյ , և ս՟բն կիւրեղ յեղ՟մէ . նոյնպէս և այլ ոչ սակաւ եպ՟սունք ուղղափառաց 'ի վիճակէ իւրեանց :

Արդ 'ի կրկին վտարանդումն ս՟բյն կիւրղի , և 'ի դնել արիանոսաց զայլ ոք յեղ՟մ , լցաւ պաղեստին ա՟մ անկարգութ՟բ . համարձակ մուտ գտին անդր արիոսեանք , ապողինարիտք , մակեդոնեանք հոգեմարտք , և այլ աղանդաւորք , որոց բազմօք ը՟դէմ զինեալ էր ս՟բն կիւրեղ բանիւ և գրով : Եւ այս վտարանդութ՟ի յերկարէր ամս իբր տասն , և ևս աւելի : Իսկ երանելին կիւրեղ թէպէտև բազում նեղութ՟իս և տառապանս կրեաց յարտասահմանութ՟ե անդ , ոչ յուսահատեցաւ , այլ յարաժամ 'ի բերան ունէր զմարգարէական սաղմոսն , համբերելով համբերի տ՟ն . և որոց և հանդիպէր՝ ոչ դադարէր 'ի քարոզելոյ . մինչև այց արար տ՟ծ ժողովրդեանն իւրոյ 'ի բարութ՟ի :

Զի 'ի մեռանիլ վաղեսի չարաչար մահուամբ յամի տ՟ն . 378 . յորում աքսորեալ էր նորա և զմեծն ներսէս հայրապետ հայոց , գրատիանոս բարեսէր առանձին տիրեալ մեծի մասին կայսերութ՟ե՝ դարձոյց զբազում հարս յաքսորանաց . ը՟ որս դնեն ոմանք և զս՟բն կիւրեղ եղ՟մացի . այլ ը՟ այլոց 'ի յաջորդ ամի . 379 . յորժամ դահակից եղև գրատիանոսի մեծն թէոդոս բարեպաշտ , և դարձոյց զմնացեալ հարս յաթոռս իւրեանց , յայնժամ դարձաւ և ս՟բն կիւրեղ յաթոռ իւր յեղ՟մ .

Եւ

Նա գտեալ զհօտ իւր վարատեալ 'ի գայլոց ապականչաց՝ բազում աշխատ եղև 'ի մաքրել զվիճակ իւր յա̄մ վնասակար վ̄դպու̄եց և յանկարգութ̄եց ․ և կրեաց այնուհետև նորանոր վիշտս ո՛չ այնչափ 'ի չարափառաց՝ որք նկուն եղեն յերեսաց անուանն Թէոդոսի, որչափ յուղղափառաց 'ի պատճառս պաւլինոսի անտիոքացւոյ՝ որում Թևակից էին արևմտեայք ընդդէմ մելիտոսի բարեկամին կիւրղի ․ զի ն̄ք որ̄պս խորշէին 'ի մելիտոսէ , նոյնպէս և 'ի կիւրղէ ․ և արդելուին իսկ զոմանս 'ի գնալոյ յուխտ յեղ̄մ ։ Ձեռնտու եղև սբ̄յն կիւրղի սբ̄ն գրիգոր նիւսացի ․ զի 'ի գալ իւրում 'ի ժողովն անտիոքայ՝ իբրև էանց յերուսաղէմ յամի ․ 380 ․ միջնորդ արկ զանձն 'ի մէջ եպ̄սաց՝ որք ոչ կամէին հաղորդիլ ը̄ կիւրղի իբրև 'ի կիսարիոսեանց ձեռնադրելոյ ․ և ետ վկայութ̄ի ուղղափառութ̄ե և անարատ քաղաքավարութ̄ե կիւրղի առ ամենեսին ․ այլ տեսեալ նիւսացւոյն՝ թէ հակառակորդք կիւրղի նաև յիւրմէ խորշին , անյոյս եղև 'ի խաղաղելոյ զերկպառակութ̄ի եպ̄սաց ․ վ̄այ ողջունեալ զսբ̄ն կիւրեղ , և յայց ելեալ տնօրինական տեղեաց՝ դարձաւ ոչ ուրախութ̄բ 'ի տեղի իւր ։ Այլ սբ̄ն կիւրեղ յա̄ծ ապաստան արարեալ զիւրսն , և սէր յա̄մի ցուցեալ առ ատելիս անձին իւրոյ , շահեցաւ զսիրտ ն̄ց ․ և եղև առ սակաւ սակաւ խաղաղութ̂ի մանաւանդ յետ մեծի ժողովոյն կոստանդնուպօլսոյ ։

Քանզի ը̄ այն աւուրս յամի տ̄ն 381 ․ գումարեցաւ ս՟բ ժողովն ճ՟ծ հայրապետաց 'ի կոստանդինուպօլիս ը՟դէմ հոգեմարտից և այլոց հերեսիովտաց ժամանակին, միանգամայն և 'ի գլուխ խաղաղութ՟ե եկեղեցւոյ՝ հաւանութ՟բ մեծին թէոդոսի ա՟ծասէր թագաւորին. և էր մի 'ի հարց անտի սա ինքն ս՟բն կիւրեղ ե՟ղմացի: Եւ 'ի վախճանել անդ ս՟բյն մելիտոսի, և 'ի լինել խնդրոց վ՟ս յաջորդի ն՟ր՝ յետոյ ուրեմն ընտրեցաւ երանելին փլաբիանոս. ո՟պ և յաթոռն կոստանդինուպօլսոյ՝ յորմէ կամակար հրաժարէր ա՟ծաբանն գրիգոր, կարգեցաւ նեքտարիոս. և 'ի լինել բանից նաև վ՟ս աթոռոյն ե՟ղմի՝ ս՟բն կիւրեղ յայտնի եցոյց զզրպարտութ՟իս չարախօսաց իւրոց լինել օտար յ՟ամ ճշմարտութ՟է. վ՟յ և հարք առհասարակ հաստատեցին զնա լինել իրաւացի ժառանգ աթոռոյ իւրոյ:

Յետ այսր ժողովոյ՝ քանզի խռովեալ էին արևմտեայք վ՟ս ընտրութ՟ե փլաբիանոսի, զի ինքեանք զպաւլինոս կամէին, 'ի լինել պէսպէս երկպառակութ՟եց՝ այլևայլ ժողովք սահմանեցան յարևելս և յարևմուտս. նմին իրի միւսանգամ ժողովեցաւ 'ի յաջորդ ամի. 382. 'ի թագաւորեալ քաղաքի. ուր մեծաւ մասամբ նոյն հարք էին՝ որք գտան 'ի ս՟բ ժողովն անցելոյ տարւոյն. և սոքա գրեցին միաբան նամակ առ երանելին դամասոս հռովմայ հայրապետ, և առ ս՟բն ամբրոսիոս ե՟պս միդուլեայ, և առ այլ եպիսկոպոսունս արևմտից, հաստատելով զօրինանաւոր ձեռնադրութ՟ին և զհայրապետութ՟ին Նեքտառիոսի 'ի կոստանդինուպօլիս , փլաբիանոսի յանտիոք , և կիւրղի յեր՟մ ։

Արդ յայնմհետէ յանդորրու վարեալ ս՟բյն կիւրղի զտնտեսութ՟ին հօտին իւրոյ այլ ևս ամս քանի մի՟ հանդերձ խաղաղութ՟բ 'ի ք՟ս յամի տ՟ն իբր 386 , կա՟մ 389 . 'ի մարտի . ժ՟ը . լի արդեամբք , թողեալ 'ի գանձ եկեղեցւոյ զգիրս ողջամիտ վ՟դպութ՟ե իւրոյ ։

Ըստ հաւանական կարծեաց եկաց յեպ՟սութ՟ե ամս լ՟ե . յորոց զամս իբր ժ՟թ նստաւ յաթոռն , և զամս ժ՟զ անցոյց 'ի վտարանդութ՟ե և 'ի հալածանս , երկիցս և երիցս արտաքսեալ յաթոռոյն բռնութ՟բ արիանոսաց . և եղեն ա՟մ ամք կենաց ն՟ր . հ՟ . և ևս աւելի ։ Իսկ զգիրս մեկնութ՟ե ընթերցուա՛ծոց , որ ասի կոչումն ընծայութ՟ե , կարդեալ 'ի հրահանգուի նորատունկ երախայից , ոմանք ը՟ հերոնիմոսի համարեցան յօրինեալ յերիտասարդական հասակի յաւուրս քահանայութ՟ե ն՟ր . իսկ այլք ընդ բոլլանդեանց ստոյգ ևս համարին ասացեալ յաւուրս եպ՟սութ՟ե . այլ ո՟պ յայտ է , բազում ճառս և քարոզս ը՟նմին օրինակի խօսեցաւ երանելին առաքելական հոգւով՝ յառաջ և յետոյ քան զեպ՟սուի իւր . և սակաւք 'ի բազմաց մնացին այսպէս 'ի մի հաւաքեալ ։ Ասի ևս՝ և այն առաւելապէս 'ի գիրս հայոց , թէ սա ինքն կիւրեղ առանձին խորհրդով կարգեաց 'ի մի մատեան զայն ընթերցուա՛ծս քառասնորդաց պահոց՝ ըստ կարգի աւանդութ՟ե ս՟բյն յակոբայ եղբօր տ՟ն առաջին եպ՟սին՝ էջ՟մի․ և թէ՝ կանոնել փակեաց զաւուրս մեծ պահոց պահել ծոմով առանց գրոց ընթերցման․ և որպ՟ հրաման ետ յառաջագոյն զերկու շաբաթսն բարեկենդան առնել, նոյնպէս և սահմանեաց պնդութ՟բ պահել զաւուրս աղուհացից ը՟ս առաքելական աւանդից․ և այնպ՟ ՚ի ս՟բ գաւակին արժանաւորիլ հաղորդութ՟ե մարմնոյ և արեան որդւոյն ա՟յ ։ (6)

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ։

(1) Յամ՟ ձեռագիր օրինակս տօնացուցից (որք աւելի քան զքսան գտանին առ մեզ), այլ՟ և յերիս առաջին տպագրութիս Ջուղայու, մարսիլիոյ, և կոստանդինուպօլսոյ, զնոյն իմն և զձեռագիր Ճաշոցաց առ հասարակ, մի միայն կիւրեղ յիշի՝ հանդերձ մարբն, այսպէս․ * Կիւրղի եէ՟մի (կամ եէ՟մայ) հայրապետին, և ,, մօրն նր՟ աննայի (կամ մօր նր՟ աննային)||։ Իսկ յերկուս նոր ձեռագիրս ևեթ գտանեմք յաւելեալ և ըզմիւս կիւրեղ․ ՚ի միումն այսպէս․ * Կիւրղի եէ՟մայ հայ- ,, րապետի, և մօր նր՟ աննայի, որ ՚ի յուլիանոսէ կա- ,, տարեցան։ Եւ միւս կիւրղի եպ՟սին, որ հաստատեաց ,, զկարգ երախայիցն, և զբազումս ՚ի հրէից մկրտեաց||։ և ՚ի միւսումն այսպէս․ * Կիւրղի եէ՟մայ հայրապե- ,, տին, և մօրն նր՟ աննայի․ կիւրեղս այս զխաչն ք՟ի ,, եգիտ։ Իսկ առաջինն զկարգ երախայիցն հաստա- ,, տեաց, և զբազումս ՚ի հրէից մկրտեաց։ Այս եր- ,, կուց յիշատակ ՚ի միասին կատարեմ||։ Եւ ահա յայսպիսի օրինակէ առեալ՝ դնի ՚ի յետին տպագրութիս կոստանդնուպօլսոյ և այլոց տեղեաց մինչև առ մեզ․ * յիշատակ է ս՟բյն կիւրղի եէ՟մայ հայրապետին, և ,, միւս կիւրղի, և մօրն նր՟ աննայի||․ նոյնպէս եդեալ կայ և ՚ի տպագրեալ Ճաշոցն։ Ապաքէն եթէ լոկ ՚ի վաւերականութի հնութ՟ե ապաստան լիցուք, պա՟րտ էր աւելորդ համարել զյաւելուած երկրորդ կիւրղի,

և զմին միայն պահել 'ի տօնակատարութե՟, ը՟դ նմին և մեզ զմիոյ ևեթ վարս առաջի դնել 'ի կարգի գործոյս· Բայց սակայն քանզի և յաւելուածդ նոր՝ յուսամք և իցէ, երբ և իցէ, հաստատուն տեսանել այնչափ՝ մինչև հարկ երևի ը՟դ ինքեան և զմիակ յիշատակեալ կիւրեղ յերկուս տրոհել, նմին իրի պէտք եղեն և մեզ զհետ երթալ ընթացից նոր ընթերցուածոյն· միայն անաչառ ծանուցանելով աստանօր զանհնարին դժուարութի՟ խնդրոյս զպատմական· զորմէ կախի և տօնականն ։

Վ՟ զի տարակոյս մեծ է առ հնագէտս, արդեօք մի՟ իցէ· եթէ երկու՝ կիւրեղ անուն հայրապետ եր՟մ· կ՟մ թէ երևելին կիւրեղ եր՟մացի, այն՝ որ գրեաց ըղկոչումն ընծայութե՟, և զթուղթն վ՟ երևման խաչի առ կոստանդ. կայսր, նոյն իցէ՝ եթէ ուրիշ յերանելւոյն յուդայէ՝ որ եգիտ զխաչն առ հեղինեաւ, և ապա մկրտեալ կոչեցաւ կիւրեղ կ՟մ կիւրակոս· և զկնի եպիսկոպոս ձեռնադրեալ՝ նահատակեցաւ հանդերձ մարբն իւրով 'ի յուլիանոսէ ։ Ճառընտիրն մեր նոյնացուցանէ զ՟մ իրօք· իսկ յայսմաւուրքն զատանէ զ՟մ սարօք· նոյնպէս և յոյն և լատին յայսմաւուրք, և այլ մատենագիրք հասարակօրէն այլևայլ անձինս համարին· ո՟պ և մեզ հաւանական երևի· ը՟դ որոյ որոշեցաք և զվարս միոյն 'ի վկայաբանութե՟ միւսոյն ։

Բայց ընդդէմ ելանէ այն, զի ամենեքին նոյնացուցանեն զժամանակ երկոցունց· զի ո՟պ կիւրեղ գտօղ խաչի էր առ կոստանդիանոսիւ և հեղինեաւ, և յետ կալոյ նաև յաւուրս կոստանդեայ՝ եհաս մինչև 'ի յուլիանոս· նոյնպէս և տեսօղն երևման խաչի էր առ կոստանդեաւ և առ յուլիանոսիւ, և եհաս մինչև յաւուրս մեծին թէոդոսի· և զիա՞րդ մարթ իցէ երկուցս ս՟բ հայրապետաց լինել 'ի մի և 'ի նոյն ժամանակի եպիսկոպոս եր՟մ· և այն՝ համանուն կիւրեղ անուամբ ։ Եւ այս դժուարութի՟ ետ նախնեաց մերոց մի ևեթ կիւրեղ դնել 'ի տօնացուցի, ո՟պ և մի վարք և վկայաբանութի՟ իբրև զմիոյ 'ի Ճառընտրի ։

Սակայն և այդ դրութի՟ տկարանայ, ուր նոյն կիւրեղ ասի լինել որդի աննայի, և նահատակեալ ը՟ մօր իւրում 'ի յուլիանոսէ· վ՟ զի յայտ է յեկեղեցական պատմութե՟ց, զի երևելին կիւրեղ ոչ նահատակեցաւ և ոչ մեռաւ առ յուլիանոսիւ, այլ եկաց և յաւուրս յաջորդաց ն՟ր յովիանոսի և վաղեսի· և փոխանեցաւ առ մեծն թէոդոսիւ· ո՟պ մեկն գրէ և հերոնիմոս 'ի գիրսն յաղագս եկեղեցական մատենագրաց. զնոյն հաստատէ և խորենացին, որ նախ՝ Գ. 12. 'ի խօսելն զկոստանդեայ որդւոյ կոստանդիանոսի, ասէ. * 'ի սորա աւուրս երևեցաւ խաչ լուսեղէն յերկնից յեհ՟մ՝ ամ՟ ,, քաղաքին, հաւատացելոց և անհաւատից՝ առ երանելեաւն կիւրղիւ ||: և ապա 'ի Գ. 33. գրելով զժողովոյն կոստանդնուպօլսոյ առ մեծն թէոդոսիւ՝ ընդ գլխաւոր հարս ժողովոյն թուէ. * կիւրղոս եհ՟մի ||. ուրեմն այլ է սա 'ի նախահատակելոյ անտի ընդ մօր իւրում աննայի առ յուլիանոսիւ:

Մնայ ապա ասել, թէ թէպէտև ժամակից էին երկոքին կիւրեղ հայրապետք եհ՟մի կ՟մ եհ՟մացիք, բայց մին էր բուն և հարազատ պատրիարգ քաղաքին, և միւսն կամ յաւուրս վտարանդութ՟ե առաջնոյն առ ժ՟մկ մի հովիւ եղև եհ՟մացւոց, և կ՟մ թէ էր լոկ եպ՟ս միոյ 'ի քաղաքաց պաղեստինու, և լայնաբար եւեթ՝ չասացից թէ վրիպակաւ՝ հայրապետ եհ՟մի է գրեալ յոմանց. և յայնմանէ շփոթութ՟ե 'ի վաղուց հետէ՝ անուան միոյն ը՟ միւսոյն, նոյնպէս և բաղադրութ՟ի վարուց միոյն ը՟ վկայաբանութ՟ե միւսոյն: Եւ այժմ շատ լիցի այսչափ ասել. տես և 'ի յետագայ ծանօթութիւնս՝ որ 'ի վր՟ այսր և այնր կիւրղի:

(2) 'Ի դնել անդ զերկու կիւրեղս եհ՟մացիս զանազանեալս ը՟ յայսմաւուրաց մերոց և այլոց ազգաց, հարկ եղև և մեզ ուրոյն ուրոյն խնդրել և գտանել զպատմութ՟ի միոյն և միւսոյն ը՟ կարի, և այլևայլ հանգամանօք կարգել զընթացս բանից, զի մի նոյնասցին և ոչ միով լիցին: Ապա զվարս առաջիկայ զերևելւոյն կիւրղի եհ՟մայ հայրապետի ունիմք նախ գեղեցիկ բովանդակեալ 'ի Հ. քան թէ 'ի Յ. և Ղ. և առ այլ համառօտաբան վկայագիրս: Երկրորդ՝ ընդարձակ և վիճաբանական զննութ՟բ կարգեաց զվարս սորին սբ՟յն կիւրղի 'ի սկիզբն տպագրուե՟ գործոց նր՟. յն. և լտ. մին 'ի բենեդիկտեան ուշիմ միաբանից սբ՟յն մաւրոսի՝ տուտէոս անուն, 'ի մէջ բերելով և զվկայութիւնս եկեղեցական մատենագրաց. և աչա մեք եւս ըստ սոցա յօրինեցաք զնախագրեալ վարս՝ համեմատութ՟բ ծառընտրին, քաղելով զառաւել հարկաւոր թուեցեալ բանս ը՟ մերում նպատակի:

(3) Ուր բազմապատիկ պատ 'ի պատ բանիւք խօսին այլք 'ի հին և 'ի նոր մատենագրաց՝ անհամաձայն իրերաց վ՟ն ձեռնադրուե՟ սբ՟յն կիւրղի գործակցութ՟բ կ՟մ աւաջարկու-

թե՟

թ̅է արիանոսաց, անաչառ խօսելով՝ լաւ ևս ք̅ զամենեսին այսպէս առաջի դնի 'ի Հ. * Ս̅բն Կիւրեղ ա̅ծա,, բան վ̅դպութ̅ն իւրով կարկէր և պապանձեցուցա,, նէր զա̅մ լեզու հերձուածողացն. և իբրև տեսին՝ ,, թէ ոչ կարէին ընդդիմանալ, և կամ տալ պ̅խնի, ,, հնարս իմացան, և ո՛չ 'ի կամաց իւրեանց, այլ 'ի ,, խնամոցն ա̅յ ձեռնադրեցին զնա պատրիարգ ե̅էմի, ,, և եդին յաթոռն տ̅ն եղբօրն յակոբայ, կարծելով ,, թէ այնու հաւանի բանից ն̅ց, և լինիցի իբրև զն̅ս ,, արիոսի և նաւատոսի հերձուածոյն. և յակնկա,, լուէն իւրեանց վրիպեցան. քանզի ս̅բ հայրապետն ,, կիւրեղ առաւել յանդիմանէր և կշտամբէր զնոսա ||։

Եւ յետ պատմելոյ՝ թէ որպէս ակակիոս մախանօք ընկէց զնա յաթոռոյ, այսպէս նշանակէ զդարձն յաքսորանաց առ թէոդոսիւ. * Իսկ ս̅բն կիւրեղ յետ այնքան նեղութ̅եցն և հալածանացն դարձեալ կալաւ ,, զաթոռն ե̅էմի, յոր անարժանքն նստուցին (զնա ,, յաւաջագոյն) ը̅ս արժանեացն ընտրութ̅են ա̅յ||։

Զնոյնն սոյն վկայէ ս̅բն եպիփան զս̅բյն մելիտոսէ անտիոքայ հայրապետէ. զի թէ թէպէտև արիանոսք կարգեցին զնա յաթոռն՝ կարծելով զնա ձայնակից լինել իւրեանց, այլ 'ի դերև ելոյս ն̅ց ։ Այլ զի՛նչ աւելի վկայութ̅ի պէտք եթէ վ̅ս կիւրղի, և եթէ վ̅ս մելիտոսի՝ քան զայն, զի 'ի նոցունց իսկ յարիանոսաց հալածեցան, յայտ է թէ զի ուղղափառք էին և զուղղափառութ̅ի քարոզէին ։ Բայց թէ զառաջինն նոքեանք ևս հաւան գտան ը̅դ ընտրութ̅ի ն̅ց, կ̅մ ձեռն եդին 'ի վ̅ր ն̅ց ը̅դ այլ ուղղափառ եպ̅սունս, այդ չէ՛ 'ի նախատինս ս̅բց, այլ յամօթ չարափառաց. թո՛ղ զի եթէ հրաժարէին ս̅բ հարք յայսպիսի ընտրութ̅է և 'ի ձեռնադրութ̅է, նոքին այնուհետև արիանոսք տ̅ր լինէին ա̅մ հայրապետական աթոռոց ։ Գիտեմք, զի հերոնիմոս դիւրահաւան ցուցանէ զանձն չարախօսութ̅ե թշնամեաց ս̅բյն կիւրղի, որք ասէին՝ թէ արիանոսք ետուն կիւրղի զեպ̅սութ̅ի ե̅էմի յետ մահուն մաքսիմոսի այսու դաշամբ, զի մերժեսցէ զձեռնադրութ̅ի մաքսիմոսի, այլ այդ է համբաւ պաւլինեանց հակառակորդաց ս̅բյն մելիտոսի և ս̅բյն կիւրղի. վ̅յ և ոչ զօրէ յայսմ մասին վկայութ̅ի հերոնիմեան ։

Պարծանք են ս̅բյն կիւրղի և յաջողանք ոմանց 'ի յետնոց նորաղանդից, որոց տեսեալ՝ թէ սքանչելի է ողջամիտ քարոզութ̅ի ս̅բյն 'ի գիրս կոչման ընծայութ̅ե՝

այն

այնպիսի լուսաւոր վ՟պութ՟ք, եթէ ՚ի հաւատոյս և եթէ ՚ի հանգամանս խորհրդոց եկեղեցւոյ և արարողութեանց, մինչև հիմն ՚ի վեր տապալել զհին և զնոր աղանդս առ հասարակ, ոչ կարացին հանդուրժել, այլ սկսան կրկտել պատճառանս ստութե՟՝ թէ գտնէ ինչ ինչ ՚ի ճառից անտի նր՟՝ չիցեն նր՟, այլ՝ յաջորդաց նր՟. բայց ՚ի զուր. զի ո՛չ միայն բնագիրն յունական է հին, այլև թարգմանութի՟ն՝ ո՛ր՟ առ հայս, նոյնպէս և առ այլ ազինս է նոյն հնութե՟ տարացոյց. զնոյն հաստատեն և հին մատենագիրք՝ որք զնոյն մատեան ՚ի վկայութիւն առնուն: Եւ զի ոմանք յովհաննու հայրապետի եէմացւոյ ընծայեցին զքանի մի ՚ի ճառից անտի, բարւոք ձեռնարկեն անաչառ քննիչք, թէ այդու՛իկ ինչ ոչ շահին հակառակորդք նորաձևիչք հնութե՟. զի և յովհաննէս էր անմիջական յաջորդ կիւրղի՝ և նորին վ՟պութե՟ հետևորդ. թո՛ղ և զայլ յովհաննէս փոքր մի զկնի յաւուրս անաստասայ կայսեր. ո՛ր՟ և զերկրորդն յովհաննէս՝ որ մեռաւ յամի տն՟. 575. զի և սք՟ են հին աւանդապահք հնութե՟:

(4) Հ. ասէ, թէ * ՚ի պատճառս երևման խաչին մկր-
,, տեաց սբ՟ն կիւրեղ ճ՟ռ անձինս ||: Զոր թերևս ոք
անհաւատալի առդիցէ. բայց ունի հաւատալ, եթէ
ուղիղ իմասցի զթի՛ւ մկրտելոյն միանգամայն եթէ յա-
ռաջնում երևման խաչի ՚ի ցերեկի, և եթէ յերկրորդ-
անդ երևմանն ՚ի գիշերի՝ հանդերձ տպաւորութ՟բ խա-
չից ՚ի հանդերձս հրէից. զորով զանց առնէ Հ. բայց
յիշատակէ ճառընտիրն է՟ այլ մատենագիրս, և այս-
պիսեաւ վարի ձևով չափազանցութե՟. * Ո՛վ որպէս ըղ-
,, նա քո՟ի. և յումմէ՞ այնչափ բիւրք լուսաւորեալք
,, (այ՟ մկրտեալք). կարծեմ թէ և ո՛չ ՚ի սբ՟յն պօղոսէ,
,, որում նմանեաց առաքելութե՟ն և վ՟պութե՟ն և վկայ-
,, ութե՟ն. քանզի և զկարգս եկեղեցւոյ սքանչելապէս
,, կարգեաց ը՟հանուր եկեղեցւոյ, վ՟րունական տունից,
,, և զյիշատակաց սբ՟ց ||: Եւ յետ այլոց բանից. * Իսկ
,, յաւուր երևման խաչին լուսեղէն լուսով յերկինս՝
,, անթի՛ւ բիւրք հաւատացին ՚ի հրէից և ՚ի հեթանո-
,, սաց, և մկրտեցան ՚ի սբ՟յն կիւրղէ ||: Եւ դարձեալ
դրէ ՚ի խօսելն զերևմանէ խաչին. * ամենեքին յե-
,, կեղեցին դիմեցին առ երանելին կիւրեղ մկրտիլ. որ
,, յոյժ է կիւրղի սրբութե՟ և աղօթից գործ գոլ. ո-
,, րոց ոչ բաւէին աւազանք, և ոչ ջրամբարք կիստե-
,, ռանցն ՚ի մկրտել. մինչև հրամայել երանելոյն կիւր-
,, ղի

,, զի զբաղանիսն մեծ սրբել, զոր դիմոսին կոչէին • և
,, անդ ևս առնել զփրկական մկրտութ՟ին ։ Այս եր-
,, րորդ նշան եղև յե՟մ յաւուրս պենտեկոստէին || •
քանզի առաջին նշան 'ի պենտեկոստէի դնէ զիջանել
հոգւոյն ս՟բյ յառաքեալսն • երկրորդ զայն՝ * զոր յով-
,, սեպոսն պատմէ , թէ յաւուրս պենտակոստեիցն
,, դղրդումն և սարսափումն նախ զքահանայիւքն պա-
,, տեր , և ապա զբազմութ՟բ ժողովելոցն հրէիցն • ապա
,, և բարբառ յանկարծակի անտուաստ 'ի ներքին տաճա-
,, րէն լսելի լինէր զայս օրինակ բանիցն , եթէ գնամք
,, աստի՝ գնամք || • և երրորդ զերևումն խաչին յաւուրս
կիւրղի առ կոստանդեաւ • թող զոր եղեն զկնի և առ
յուլիանոսիւ ։

(5) Վ՟ս վաճառելոյ ս՟բյն կիւրղի զսպաս եկեղեցւոյ
առ հասանելոյ յօգնութ՟ի աղքատաց՝ թէպէտև յաւել-
ուածովք չարախօսեաց ակակիոս չարն , այլ ոչ ոք յող-
ջամտաց ունի մեղադիր լինել , այլ գովել առաւել ։
Զնոյն արար և ս՟բն ամբրոսիոս վ՟ս ազատելոյ զգերիս •
զոր իբրև բամբասեցին արիանոսք նմանօղք ակակայ ,
նա բազմօք արդարացոյց 'ի ձեռն գրոյ զգործ իւր , 'ի
մէջ բերելով և զօրինակ ս՟բյն լաւրենտիոսի • զնոյն ա-
րարին և այլք ոչ սակաւք 'ի ս՟բ եպիսկոպոսաց ։ Թո-
ղեց ասել , թէ ուր եկեղեցիք անփոյթ արարին զաղքա-
տաց , բզ՟մ այն է՝ զի կողոպտեցան 'ի հալածչաց ։

(6) Ծառընտիրն Բ , յերես • հ՟զ • ուր նոյնացուցանէ
զկիւրեղ հայրապետն ը՟ կիւրղի եպ՟սի նահատակելոյ ,
ասէ՝ թէ 'ի նմանէ ծանեաք և զտօն ծննդեանն և ըղ-
մկրտութ՟են 'ի մի օր • և 'ի վ՟ր բերէ • * Եւ զայս ո՛չ
,, եթէ յանձնէ եդ նա , այլ զի այսպէս հաճոյ թուէ-
,, ցաւ հոգւոյն ս՟բյ 'ի միում աւուր լինել ծննդեանն
,, ք՟ն և մկրտութ՟են • և այսմ ականատես լեալ եղբօրն
,, ք՟ն յակոբայ՝ աւանդեաց եէմի և ա՟մ եկեղեցեաց •
,, և երանելին կիւրեղ գրով ետ || ։ Ապա վիճաբանու-
թիւն իմն գրգռելով ը՟ յոյնս՝ կնքէ բանիւս • * և դի-
,, տեն զայս՝ որ կիրթ և վարժ են գրոց || ։ Այս հա-
մարձակախօսութ՟ի անանուն վ՟դպի ուրուք յազգէ մեր-
մէ մուծեալ 'ի վարս անդր ս՟բյն կիւրղի՝ ետ և այլոց
յետնոց նոյնօրինակ ոգւով խօսել , ո՟պ և 'ի տօնապատ-
ճառս և 'ի կարգս յայսմաւուրաց • բայց ստուգութ՟բ
քննելով՝ պա՛րտ է խոստովանել , թէ չէ՛ այդ գիտութ՟ն
կիրթ և վարժ եղելոց 'ի գիրս , այլ ազգային բանա-
կռուութ՟ն 'ի մէջ յունաց և հայոց ։ Քանզի նախ ը՟
հա-

հակառակութ է հիմն բանից առեալ 'ի թղթոյն վահանայ Նիկիոյ եպսի առ զաքարիաս կաթուղիկոս հայոց, որպ թէ թղթակցութն լեալ իցէ վս տօնի ծննդեան և մկրտութե 'ի մէջ կիւրղի եղմայ հայրապետի և յուլիոսի պապին հռովմայ․ որպ և ը անստուգութբ նմայ՝ թէ որ այն կիւրեղ իցէ հեղինակ այսպիսի տօնական խնդրոյ․ և որ այն՝ զոր ըստ գրելոյ սբյն եպիփանու եդին ակակիոսեանք յաթոռն եղմի 'ի մերժել անդ զսբն կիւրեղ․ արդեօք միւս կիւրեղն, եթէ այլ ոք համախոհ իւրեանց։ Երկրորդ՝ եդեալ թէ եղմացիք ցաւուրս կիւրղի 'ի միասին կատարէին զտօն ծննդեան և մկրտութե, և թէ սբն կիւրեղ զնոյն աւանդ հաստատեալ իցէ իբրև առաքելական, ոչ ապաքէն և այլ եկեղեցիք առաքելական աւանդութեց էին պնդապանք․ և զիարդ փոխեցին՝ որպ ենթադրի, և սկսան ուրոյն տօնել զծնունդն, և ուրոյն զմկրտութն․ մինչև և եկեղեցին եղմայ փոխեաց, յտ սկսաւ զատաբար տօնել․ և այս նախ քան զպառակտումն եկեղեցեաց 'ի յետագայ դարս․ զի ահա և ոսկեբերան և այլք 'ի հարց ժամանակին վկայեն, թէ սկսեալ էին առանձին տօնել։ Եւ եթէ ոք կարծէ խարդախեալ զբանս այսր և այնր հին վարդապետի 'ի յունաց, զնոյն ունի կարծել և զայլոց։ Զինչ ապա․ ոչ ոք պարտի՝ և ոչ իսկ կարէ՝ զաւանդութի ազգային արդարացուցանել ը վայր հարկանելով զայլոցն․ այլ իւրաքանչիւր արդարանայ իւրով հնութբ, և՛ս առաւել անհակառակ բարեսիրութբ խորհելոյ զայլմէ որպ զանձնէ․ զոր ոչն տեսանեմք յորս երկուստեք բանակռիւք լինին յոյնք և հայք ը միմեանս վս սոցին իրաց․ թո՛ղ և զայլ ազգս քրիստոնէից։ Առայժմ այսչափ ասել շատ լիցի։

ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Ս՟յն Կիւրղի եպիսկոպոսի, որ և Կիւրղոս կամ Կիւրակոս յուդա, և մօր նորա Աննայի ։ (1)

Հ․ յունիսի․ 6 ։ Յ․ հոկտ․ 28 ։ Լ․ մայիսի․ 4 ։
Ճառընտ․ Ի․ հէ ։ և Գ․ յէ ։ Ի Ոլլանդեանն Բաբեպըրոք․ հատ․ ա․ մայիսի․ երես․ 439 = 451 ։

ԱՅՍ ԵՐԱՆԵԼԻՍ ԿԻՒրեղ՝ ը՟ որում զանազանեն յառաջնոյ Կիւրղէ Եմ՟այ հայրապետէ եղելոյ 'ի նմին ժամանակի, և Կիւրակոս կարդացեալ յայլոց, էր ազգաւ հրէայ, և առաջին անուն ն՟ր յուդա, բնակեալ 'ի պաղեստին հանդերձ մարբ իւրով աննայիւ, առ ինքնակալութ՟ մեծին կոստանդիանոսի ։ Նա էր ինքն ծանուցեալ 'ի մէջ հրէից իբրև այր առաքինի և բարի 'ի կարգի աւանդապահ եբրայեցւոց․ և աւանդութ՟ առանձին ցեղի իւրոյ համարեալ էր յազգականութ՟է տանն ս՟յն ստեփաննոսի նախավկայի․ որպ՟ս և իրագէտ գտանիւր ք՟ զայլ եմ՟ացիս յիշատակու՟է անցիցն անցելոց ը՟ յ՟ս ք՟ի և ը՟ աշակերտս ն՟ր ։

Արդ ո՟պ ճոխագոյն աւանդի 'ի պատմութ՟է

գիւտի սբ՟յ խաչին՝ առ ամ՟ ազգս, յորժամ եկն ա՟ծասէր դշխոյն Հեղինէ մայրն կոստանդիանոսի յե՟ղմ ՚ի խնդիր խաչափայտին ք՟սի, ՚ի հարցանել խոշտանգանօք զխորամանկ հրէայս վ՟ն այսր բանի, նոքա յառաջ մատուցին զյուդա իբրև առաւել տեղեկագոյն հնութե՟. և նա յետ բազում յուզմանց՝ ըսքանչելեօք եգիտ զպատուական փայտ խաչին. որով և հաւատացեալ ՚ի խաչելե՟լ փըրկչին՝ մկրտեցաւ հանդերձ մօրըն. և ը՟ս ակնարկուե՟ Հեղինեայ՝ կոչեցաւ տ՟րունեան անուամբ կիւրեղ, կ՟մ կիւրղոս, ը՟ս այլոց՝ կիւրակոս. (որ է իբր նոյն, զի երկաքանչիւրն ևս թարգմանի ՚ի յոյն բարբառ՝ տիրական, կ՟մ տ՟րունի. յորմէ և ՚ի մեզ գտանին նոյնանիշ յատուկ անուանք, տիրուկ, տիրոց, տիրայր, ևս առաւել տիրատուր. ո՟պ և ՚ի լատինն, տօմինիքուս. որ է տիրական կ՟մ տ՟րունական): Յետ այսորիկ հրամանաւ դշխոյին ձեռնադրեցաւ սա ինքն կիւրեղ յեպ՟սութի միոյ ՚ի քաղաքացն պաղեստինոյ. և որ՟պ կարծի, նստաւ առ ժամանակ մի և յաթոռն ե՟ղմի զկնի մակարայ, կ՟մ ՚ի ժամանակս աքսորանաց մեծին կիւրղի յառաջագոյն Ձաւելոյ. մինչև եղև շփոթել ոմանց զերկոսին համանունն հայրապետս ը՟դ միմեանս: (2)

Իսկ զի էր յոյժ հմուտ հին և նոր կտակարանաց, համարձակ քարոզէր զք՟ս հրէից և հեթանոսաց, և զբազումս լուսաւորէր ք՟նական հաւատովն. կրեաց և նեղութի՟ս և հալածանս յաւուրս բռնութե՟ արիանոսաց առ կոստանդ կայսերաւ՝ ը՟ այլ եպ՟սունս ուղղափառաց. եւ եկաց մինչեւ ցթգ՟րութ՟ի յուլիանոսի ուրացողի. որ 'ի խաղաղ իւրում պատերազմաւ յարեւելս՝ իբրեւ անցանէր ը՟ անտիոք եւ ընդ պաղեստինացւոց ա՟ն, լուեալ զբարեհամբաւութ՟ի՝ որ զկիւրղէ եպիսկոպոսէ դարձելոյ 'ի հրէութ՟է, եւ թէ նոյն սա է՝ որ եգիտ զս՟բ խաչն 'ի գողգոթա առ հեղինեաւ, ոխացաւ ը՟դէմ կիւրղի ըստ ատելութ՟ե՝ զոր ունէր առ կենսատու խաչելեալն. նմին իրի հրամայեաց ածել զս՟բ եպիսկոպոսն առաջի իւր (ո՟պ ասի՝ յեդէմ քաղաքի), տեսանել զնա եւ լսել 'ի նմանէ: Եւ իբրեւ եկն յանդիման եղեւ ատենին, եհարց զնա թագաւորն, թէ զի՞նչ անուն է քո: Ասէ եպ՟սն. 'ի ծնողաց իմոց յուդա կոչեցայ, այս է խոստովանութ՟ի. որ տայ իմաստասիրել զիմ գալուստ 'ի խոստովանութ՟ի ս՟բ հաւատոյ. իսկ այժմ 'ի ձեռն հաւատոյն ք՟ի եւ լուսաւոր մկրտութ՟են կիւրղոս կոչիմ ըստ հրամանի մեծի դշխոյին հեղինեայ: Ասէ թագաւորն. կենդանի՞ են ծնօղքն քո: Եպիսկոպոսն ասէ. մայրն իմ եւեթ հաւատացեալ՝ կայ դեռ կենդանի: Եւ թագաւորն ասէ. կոչեցէ՛ք եւ մայրն: Իբրեւ եկն, ասէ ցնա յուլիանոս. կի՛ն դու զո՞ր պաշտօն պաշտես: Աննա ասէ. որպէս գտաք զողորմութ՟ի 'ի ք՟սէ ա՟յ, զնոյն պաշտեմք: Յուլիանոս ասէ. ո՞ւր է որդին քո: Աննա ասէ. դա ինքն է եպ՟ս կիւրղոս, յոյս եւ գաւազան ծերութ՟ե իմոյ:

Յայն

Յայնժամ ասէ անօրէնն ցերկուսին ցնա̄ · մերձ պատիւ՛ և կեանք ձեզ առաջի՛ կայ · հա՛պա թողէ՛ք զպաշտօնն քրի̄՝ հաւանեցարո՛ւք ինձ՝ պաշտելով զդիսն ։ Նոքա ասեն · մեք Ճշմարտին ա̄յ մատուցանեմք պաշտօն, որ արարիչն է ա̄մ եղելոց · և ո՛չ դիւ՛աց պղծոց և նոցին պատկերացն ։ Իսկ ուրացօղն ասէ · և ես պաշտեցի զխաչելեալն, և ինչ ոչ շահեցայ · զի զնեղութիւն քարոզէ յա̄ս յայս, և յուսով և եթ զկեանս յետ մահուա՛նն ։ Ու այս ես պլինի սք̄ եկման յոգւոց հանելով, և ասէ · ո՛րպէս ոչ յիշես զպատուհա՛կան և զերկնանման սեղան անքիծ և անարատ գառինն ա̄յ, զի ը̄ն հովանեաւ նո̄ր պահեցար 'ի թաքստի, և Ճողոպրեցեր զանձն քո 'ի ժամանակեայ պատուհասէ մահու առ բռնաւորական անմտուե̄ · իսկ զոր ասեսդ զմեր զյոյս և յուսով զկեանս յետ նեղուե̄ մահկանացուայս կենացս, բարիոք ասացեր · զի թէ ոչ աշխատի մշակն, ըստ ժամանակին ո՛չ ժողովէ զարդիւնս շահեկանս · և եթէ ոչ մարտնչի զինուո՛րն ը̄ն թշնամւոյ թագաւորին և յաղթէ, ոչ առնու պսակս և պարգև 'ի թագաւորէն ։ Ո՛ւ մեքո ուսեալ է, և ոչինչ օգտեւ̄ · մ̄ն զի ոչ կամեցար զօրհնութի̄, այլ անձամբ մերժեցեր, զի հեռի եղիցի 'ի քէն · որպէս զի մի՛ ծագեսցի 'ի քեզ լուսաւորու̄թ փառաց որդւոյն ա̄յ 'ի խաւարեալդ ունայնուե̄ միտաց՝ խաբանօք բանսարկուին ։

Յայնժամ լի ցասմամբ սատանայեայ ասէ ուրացօղն · ո՛չ գիտէք, զի բազումք 'ի խաչելեալն

լեալն ք՟ն յուսացեալք դժնդակ նեղութ՟ք և դառն տանջանօք ելին յշ՟խ՟էս, և ոչինչ օգտեցան. վ՟ն հաւանեցարուք ինձ, և զոհեցէք ա՟ծոցն. ապա թէ ոչ՝ անհնարին չարչարանօք կոտտամահ առնեմ զձեզ, մինչև հանից զհոգիս ձեր: Նիպսն ասէ. ո՛չ կարես այնպիսի տանջանս պատրաստել մեզ, ո՞ր և ք՟ն պատրաստեալ է դիւաց և որոց պաշտենն զն՟ս, որ իբրև զքեզդ իցեն: Յուլիանոս ասէ. և դուք այդպիսի յուսով մեռանի՞ք 'ի զուր վ՟ն խաչելոյն: Նիպսն ասէ. ո՛չ է ունայն յոյսն մեր, զոր ունիմք առ խաչելեալն ա՟ծ, որ մեռաւ վ՟ն մեր և յարեաւ, զի զմեզ կենդանացուսցէ յաւուրն յետնում. բայց դու մի՛ 'ի զուր հպարտանար 'ի վ՟ր ծառայից ք՟սի. որ ներելովն ա՟յ պերճացեալ ունիս զթագաւորութի՟դ՝ որ վաղվաղակի եղծանի, և դու ընդ նմին ապականիս. փոխանակ զի ոչ ծանեար զժամանակ այցելութե՟ քո. այլ դարձար յետս, և եղեր չարին անօթ, և տեղի բանսարկուին:

Բարկացեալ թագաւորին ընդ բանս սր՟ցն՝ ետ նախ հատանել զաջ ձեռն նր՟. զի զբազումս դարձոյց ասէ 'ի դիւցն պաշտելութե՟ գրով ձեռինդ այդորիկ, և մկրտեաց: Յայն ժամ սկսաւ գոհանալ ս՟բ՟ եպսն զա՟յ, և ասէ. այս առաջին յանցանաց իմոց քաւութի՟՝ հատումն ձեռինս, որով գրէի 'ի բաց կալ 'ի ք՟սէ՝ մինչդեռ 'ի հրէութե՟ն էի. արդ լաւ է ինձ միաձեռանի 'ի կեանս յաւիտենականս մտանել, քան ողջանդամ 'ի գեհեանն անչէք ։ Իսկ յուլիանոս ասէր · զա՟մ մարմինս քո ապականեցից չարաչար , և տեսից՝ թէ ո՞վ է այն ա՟ծն՝ որ փրկէ զքեզ ՚ի ձեռաց իմոց ։ Սբ՟ն ասէ · ք՟ս փրկիչն՝ որ ՚ի քէն հայհոյի , նա տայ զօրութի՟ յուսացելոց իւրոց , և յամօթ առնէ զքո ամբարհաւաճութիւդ ո՛վ ամենապիղծ և ատելի ա՟յ ։

Յայնժամ հրամայեաց բռնաւորն հալել կապար երկաթի սրուաամբք , և ջերմաջերմ արկանել զմարմինով սբ՟յն , և ՚ի բերան նորա · մինչև անշնչանալ եղև սբ՟յն զերկուս և զերիս ժամս · և որք մերձն կային՝ կարծէին զնա մեռեալ · այլ նա ամբարձ զաչս իւր յերկինս , և ասէ · Տ՟ր լո՛յս ց՟ի տուր ինձ համբերութի՟ չարաչար ցաւոյս , և զօրացո՛ զծառայս քո և զորդի աղախնոյ քո · և արա՛ առ իս նշան բարութե՟ · զի տեսցեն ատելիք իմ և ամաչեսցեն · զի դու տ՟ր օգնեցեր ինձ , և մխիթարեցեր զիս ։

Իսկ խստասիրտ անօրէնն ասէ · չօգտիս ինչ ՚ի քո աղօթիցդ , եթէ ոչ կատարեսցես ըզկամս իմ և պաշտեսցես զդիս ։ Սուրբն ասէ · ես զդևսն ոչ պաշտեմ , այլ զք՟ս ա՟ծ կենդանի · և դու զոր ինչ կամիս , արա՛ վաղվաղակի ։ Ապա ետ բերել բռնաւորն դարգինձ երկաթի , կ՟ր տապակ իբրև մահիճ տարածել , և դնել ՚ի վ՟ր կայծականց հրոյ , մինչև շաղացուցանել զդարգինձն ո՟ղ հուր · և հրամայեաց արկանել ՚ի վ՟ր ն՟ր յորսայս զսբ՟ն երես ՚ի վայր · և միանգամայն դալար բրօք հարկանել զթիկունսն և զմկանունսն · և արա-

րաբարլին այնմ : Արկանէին և ձիւթ 'ի հուրն, և աղաջուր (ըստ այլոց՝ աղ և ճարպ) զանձամբ սրբոյն : Մինչդեռ յայն տանջանս էր երանելին , ամբարձ զձայն իւր եբրայեցերէն՝ ըստ որում յառաջ բերեն վկայագիրք , և ասաց զաղօթս՝ որ թարգմանի հայերէն օրինակ զայս . Տէր Աստուած անչափդ , որ վասն մեր չարչարեալ՝ ետուր կեանս այնոցիկ որ հաւատան 'ի քեզ . որ մարգարէին յովնանու զօրինակ երեքօրեայ յարութեան քո ցուցեր մեզ . որ զընտրեալ մարգարէն քո զեղիաս հրեղէն կառօք յերկինս յափշտակեցեր . Եկ Տէր և յայս դատաստան , և թեթևացո զիս 'ի ցաւոցս յայսցանէ . զի վասն անուան քո կրեմ զայս : (3)

Զանձրացեալ յուլիանոսի յարիական համբերութեան սրբոյն կիւրղի , և ոչ իշխեալ այլ ինչ առնել , ետ տանել զերանելին 'ի բանտ . և զմայրն պահել յընդարձակի . իսկ ծերունին աննա մատուցեալ 'ի բանտն առ որդին՝ ասէր . որդեակ բարիոք նահատակեցար վասն անուանն Քրիստոսի . արդ կայ և մնայ քեզ արդարութեան պսակն . զի պսակակից լիցիս սրբոյն ստեփաննոսի նախավկայի , որ էր 'ի նախնեաց հաւուց քոց . բայց յիշեա՛ որդեակ . զի հայր քո հրեայ մեռաւ , (և չեղև արժանի մասին սրբոյ . որ մեզս վիճակեցաւ 'ի Տեառնէ) . արդ արա՛ աղօթս վասն իմ , զի և զիս ընկալցի Քրիստոս ընդ սիրելիս անուան իւրոյ (4) . և արժանի եղէց տեսանել զհատուցումն քո 'ի Տեառնէ զանսպառ բարիսն և զանթառամ պսակն :

Իբրև զգացուցին յուլիանոսի սպասաւորք մ̅ո բանիցս այսոցիկ, հրամայեաց ածել զԱննա առաջի իւր. և ասէ ցնա. ո՛վ կին դու, որդին քո ընտրեաց զմահ, այլ դու զկեանս քո ընտրեա՛, և կեա՛ց 'ի պաշտաման դիցն ։ Աննա ասէ. Նա զերկրաւորս արհամարհեաց, զի յաւիտենականին է ցանկացեալ. Նոյնպէս և ես. մ̅յ ցորչափ իցեմ կենդանի, զպաշտօնն իմ ք̅սի մատուցանեմ, և ոչ դի՛մաց պղծոց ընդ կռապաշտից ։

Յայնժամ ետ կախել զնա բռնաւորն զհերաց, և քերել զմերկ մարմինն երկաթի քերչօք, և հատուցանել մինչև յոսկերսն ։ Նա 'ի տալ նր̅ գոհութ̅ փառս ա̅յ, ասէ յուլիանոս. զի՞ է քեզ ա՛նձնա, հաճեցա՞ր ը̅ քերանս՝ որք տիրեցին քեզ, և ը̅ արիւնդ՝ որ թանայ զերկիր ։ Նա նա ասէ. ո՛վ ապստամբդ յա̅յ ո՞չ գիտես, զի չզգացի ինչ ես 'ի տանջանացս առ սէրն ք̅սի. եթէ ունիս և այլ չարչարանս մահուչափ, պատրաստ եմ սիրով ընդունել, և յամօթ առնել խմոխ տկարութ̅ զհայր քո զսատանայ 'ի ձեռն փրկչին իմոյ, որ զօրացուցանէն զիս ։ Յետ այսորիկ մատուցին ջահս 'ի կողս նր̅, և այրէին զմ̅րմն. իսկ սր̅ կինն կացեալ յայնպիսի տանջանս կախաղանին իբրև ժամս երիս՝ աղօթէր լռելեայն. և ապա ասէ լսելի ձայնիւ. Տ̅ր ա̅ծ զօրութե̅ց, արարիչ իմ և յոյս, որ փրկեցեր զսիրելիս քո յա̅մ փորձութե̅ց հոգւոյ և մարմնոյ 'ի հին և 'ի նոր օրէնս, լո՛ւր և ինձ աղախնոյ քո, զի կատարեցից զընթացս իմ, և ցնծալով մտից 'ի հարսնարանդ քո ը՟ս ս՟բյն յուդայի որդւոյն իմոյ : Եւ զայս ասացեալ աննայի՝ աւանդեաց զհոգին իւր առ Ա՟ծ :

Իբրև գիտաց զայն որդի նր՟ 'ի բանտի, ուրախ եղև յոյժ 'ի տ՟ր . և գոհացեալ զա՟յ՝ խնդրէր փութով կատարել ը՟ս օրինակի մօր իւրոյ : Եւ կոչեալ զնա յուլիանոս յատեան . և տեսեալ զնա զուարթերես , զարմացաւ , և ասէ . որո՞վ կախարդանօք զմեզ առ՛ հասարակ բթեցեր և ապշեցուցեր՝ առ ոչինչ համարելով զայնքան կարծրագոյն տանջանս : Իսկ ս՟բ եպ՟սն յանդիմանեաց զխըստասրտութ՟ի չարին՝ ասելով . յամօթ լեր ա՟ծամարտ դու , զի զզօրութ՟ին ա՟յ դիւաց համարիս . և զի դու օտարացար 'ի Ճշմարտութ՟է , խորհիս 'ի խաւար ածել և զորդիս լուսոյ . այլ ոչ թողցէ տ՟ր զյուսացեալս իւր . և դու ը՟ս արժանի քում ամպարշտութեդ ընկալցիս զպատուհաս յարդարադատ դատաւորէն կենդանեաց և մեռելոց . քանզի և ոչ ևս դարձցիս կենդանութ՟ 'ի Ճանապարհէդ՝ յոր երթալոցդ ես . փոխանակ զի այդչափ դառնացուցեր զա՟ծ կենդանի :

Հրաման ետ յուլիանոս թովչաց՝ բերել քարբս և օձս թունաւորս . և լցեալ զն՟ս 'ի գուբ մի՝ ընկեցին զս՟բն 'ի մէջ նց՟ : Իսկ երանելին յարուցեալ կայր յաղօթս 'ի մէջ գժնդակ սողնոց թունաւորաց , և ասէր . տ՟ր ա՟ծ իմ՝ լո՛ւր աղաչանաց ծառայի քո . որ զյովսէփ փրկեցեր 'ի գբոյ տառապանաց , և զդանիէլ 'ի բերանոյ առիւծուց . և ետուր հրաման ծառայից քոց գնալ 'ի մ՟ջ իժից և քարբից, և կոխել զզօրութ՟ի թշնամւոյն. և այժմ արա՛ առ իս զգութ մարդասէր շնորհաց քոց, և ապրեցո՛ զիս 'ի թունից գազանացս. զի ծանիցեն ամենեքեան, թէ դու միայն ես Ճշմարիտ ա՟ծ, և կարօղ յամ՟ի: Եւ իբրև ոչ մերձեցան 'ի նա ամենևին սողունքն, լի եղև յուլիանոս դառնութ՟բ, և հրամայեաց հանել զս՟բ եպ՟սն 'ի գբոյն, և զսողունսն հրով այրել:

Յայնմ վայրի թուլեաց աւագն՝ որոյ անունն էր ադոն (կ՟մ ադամոն, ը՟ս այլոց՝ ամմոն կ՟մ աբդոն) լուսաւորեալ առ յ՟ոյ՝ մատեաւ առ բռնաւորն, և ասէ. ո՛վ թագաւոր լի՛ ես յիմարութ՟բ. ո՞չ տեսանես զմեծամեծս ա՟յ, զի ո՛չ այլուստեք են այս սքանչելիք, բայց 'ի ք՟սէ. ո՞չ ճառեն գիրք քրիստոնէից զահաւոր զօրութ՟ի ն՟ր. և ո՛չ կարեն ը՟դդէմ կալ ձեռին ն՟ր կախարդութիք դիւաապաշտից, և ո՛չ բնութիք արարածոց ա՟մ. արդ զի՞ կամք մնամք տակաւին յանհաւատութե՟ մերում. այլ ես այսուհետև Ճշմարտութ՟բ հաւատամ, եթէ մեծ է ա՟ծն քրիստոնէից, և նա միայն է ա՟ծ Ճշմարիտ, և չիք որ այլ բաց 'ի նմանէ. նոյն ինքն ընկալցի և զիս իւր 'ի ծառայ ը՟ս անքաւելի ողորմութե՟ իւրում:

Յայնժամ ել հրաման 'ի բռնաւորէն՝ վաղվաղակի բառնալ զայրն 'ի կենաց սրով. և նա այնպէս բարի հաւատով կատարեցաւ 'ի ք՟ս՝ մկրտեալ արեամբ իւրով: Իսկ բռնաւորն դարձեալ սկսաւ խօսել ընդ եպ՟սին, և ասէ.

ասէ · ապշեցուցեր զամենեսեան, և մաղթութբ̃ քով կորուսեր զմեծն 'ի Թովմիս · բայց դու մի՛ ակնկալցես ապրել 'ի ձեռաց իմոց, մինչև ուրացցես զխաչեալն : Պատանի էր սբ̃ն Կիւրեղ · ո՛վ Թշնամի ճշմարտութե և ատելի ա̃յ, սիրտ ծորեալ, և միտք շրջեալ · զայդչափ բարերարութե զարմանս տեսեալ քո՝ և ո՛չ դադարես 'ի մոլորութէդ · այլ յամառիս յազդմանէ չարին 'ի խորհուրդս չարութե, և զիս կարծես նման քեզ առնել ուրացող :

Ասէ բռնաւորն ցդահիճս · լցէք սան մի մեծ ձիթով, և ջեռուցեալ սաստիկ, ընկեցէք անդր զդա · զի խարշատեալ կիզցի և կորիցէ : Իսկ սբ̃յն կնքեալ զինքն նշանաւ սբ̃յ խաչին՝ եմուտ ինքնին 'ի սանն · և ահա առժամայն շիջաւ հուրն, և զովացաւ եռանդն ձիթոյ · և նա յարուցեալ օրհնէր զա̃ծ 'ի վե̃ անպատում սքանչելեացն : Եւ բռնաւորին մոլեալ ցասմամբ՝ ասաց գեղարդեամբ խոցել զնա · որով աւանդեաց զհոգին՝ կատարեալ յաղթութբ̃ երանելին ե̃պսն Կիւրղոս, զկնի բարեյաղթ մօր իւրոյ աննայի, և բարեխօսիկ Թովչին աղօնի : Իսկ յուլիանոս ք̃նամարտ՝ ոչ դարձաւ 'ի պատերազմէն՝ յոր գնաց, ըստ գուշակութե սբ̃յն Կիւրղի · այլ անդէն սատակեցաւ յանէրևոյթ զօրութէ փրկչին մերոյ և ա̃յ · որում փառք յաւիտեանս · ամէն : (5)

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ:

(1) Խօսեցաք սակաւուք 'ի ծանօթութեանս նախընթաց սրբոյն Կիւրղի Երուսաղէմայ Հայրապետի, թէ ըստ հին տօնացուցի և Ճաշընտրի մերում նոյն աւգնինա ընդ սմին Կիւրղի եպիսկոպոսի նահատակելոյ ընդ մօր իւրում Աննայի. այլ ըստ Հ. և այլ վկայաբանից՝ զատանին յերկուս. որպէս և մեք տօնեմք այժմ զերկոսին ուրոյն ուրոյն 'ի միում աւուր աստ. այժմ հարկ է տեսանել զստուգութիւն կամ զանստուգութիւն իրացս՝ ընդարձակ քննութեամբ: Եթէ ստոյգ գտանիցի վկայաբանութիւն Կիւրղի եպիսկոպոսի, ստուգի և զանազանութիւն նորա յառաջնոյ Կիւրղէ. ապա թէ ոչ՝ հարկ է կամ նոյնացուցանել զերկոսին, և կամ պարտաւոր խոստովանել՝ թէ մնայ իսկութիւն իրացն անգիտելի:

Ստոյգ երևի վկայաբանութեամբս Կիւրղի եպիսկոպոսի ընդ մօր իւրում Աննայի. զի միօրինակ աւանդեն զայն ոչ միայն յայսմաւուրք Հ. Յ. և Լ. ըստ այլևայլ համառօտ ոճոյ իւրեանց, այլև ընդարձակ վկայաբանութիւն գտեալ 'ի հին մատեանս 'ի կարգի պատմութեան գիւտի խաչին, զոր բազդատութեամբ բազում ձեռագրաց տպագրեցին Բոլլանդեանք, զնոյն ունի պատմութիւն. և 'ի նոյն աղբերէ առեալ երևի որ ինչ աւանդի յառանձին պատմագիրս և 'ի վկայագիրս. մինչ զի և Ճաշընտիրն թէպէտ նոյնացուցանէ զերկու Կիւրեղս, այլ չնա է զի ընծայէ Կիւրղի զնահատակութիւն հանդերձ մարբն. որ ոչ է անկ առաջնոյն Կիւրղի, այլ՝ երկրորդին Կիւրակոս կոչեցելոյ:

Եւ այնչափ հանդիպեցեալ է յարևմուտս այս Կիւրեղ Յուդա՝ որ և Կիւրակոս, զի ըստ տեղեաց տեղեաց առանձին յիշատակաւ պատուեալ՝ յաւելուն և զանազան աւանդութիւս, որք թէ և սատեցին ընդ անհամաձայնութեանց, այլ ոչ սակին ընդ միաձայնութեան. զոր և արժան է լսել երկայնմտութեամբ:

Հռաբանոս և Նոտկերոս 'ի վկայագիրս իւրեանց 'ի մայիսի. 1. ունին յայտնապէս այսպէս. * Յերուսաղէմ նա-
,, հատակութիւն սրբոյն Յուդայի կամ Կիւրակոսի եպիսկոպոսի, ո-
,, րում յայտնեցաւ փայտ տէրունական խաչին ||: 'Ի նոյն միտս և յայլ բազում վկայագրութիւնս արևմտեայց, որպէս և յօրինակն Բեդայի դնի. * 'Ի նմին աւուր (մայիսի.
,, 1)

«1) Նահատակութիւն սրբոյն յուդայի երուսաղէմացւոյ՝ կիւրակոս կոչեցելոյ ||: Միայն ոմանք զօրն միով աւուրբ յառաջ դնեն, այսինքն յապրիլի. 30. ուր դնելի էր յիշատակ կուիրինոսի վկային՝ որ 'ի հռոմ, շփոթելով զանունն կիւրակոս ընդ կուիրինոս: Այլ բազումք եւս՝ գուցէ ուղղագոյն եւս՝ եդին ըստ ուսուարդոսի և ադոնի վկայաբանից 'ի մայիսի. 4. (զորմէ և զկնի լիցի բան): Զնոյն չորրորդ օր մայիսի ունին և անգղիացիք վասն տօնի սրբոյն կիւրակոսի եպիսկոպոսի պաշտպանի քաղաքին. նոյնպէս և կարգն խաչակրաց՝ որ կայր յերկրին բելգայ, զնոյն սուրբ ունէր իւր պաշտպան՝ ըստ որում եղև գտօղ սրբոյ խաչի. նոյնպէս և կարգն կարմեղականաց, և ամենեքին՝ որք ունէին ինչ առնչութիւն ընդ սուրբ երկրի և երուսաղէմի:

Այլ թէ 'ի բուն ըստ արձակ վկայաբանութեան առ լատինացիս թուի նշանակիլ համաձայն այլոց՝ որ կատարման սրբոյն կիւրակոսի մայիսի. 1. պատճառ յետոյ փոխադրելոյ 'ի 4 մայիսի՝ ասի լինել այն, որ հաստատէ զմեր խնդրելին. զի որովհետև 'ի մայիսի. 1. է առ լատինս տօն սրբոց առաքելոցն փիլիպպոսի և յակոբայ, և 'ի մայիսի. 3. գիւտ խաչին, լաւագոյն համարեալ են հանել զտօն գտօղի խաչին 'ի սկզբնէ մայիսի՝ ուր կայ տօն առաքելոց, և փոխադրել 'ի յաջորդ օր գիւտի խաչին: Եւ այսմ պատճառ կարծին լինել նախ գաղղիացիք. զի ըստ աւանդութեան նոցա՝ յորժամ գլուխ սրբոյն կիւրակոսի բերաւ յերուսաղէմէ յաւրելիա, կամեցան՝ մասնաւոր տօնախմբութեամբ կատարել զյիշատակ նորա. բայց ասի՝ թէ յամի տեառն. 1562. նոր աղանդաւորք այրեցին զգլուխ սրբոյն ընդ այլ բազում նշխարս սրբոց:

Թող զի և յայլ զանազան տեղիս Ֆրն գաղղիոյ կային երբեմն ոսկերք կամ նշխարք մեծամեծք յանուն սրբոյն կիւրակոսի եպիսկոպոսի և վկայի, համարեալք սորին յուդայի երուսաղէմացւոյ. բայց այլք երկբայեցին՝ թէ գուցէ այլոց համանուանն սրբոյ իցէ: Որպէս և 'ի հռոմ 'ի վանս ինչ կուսանաց գոյր մարմին ուրուեմն սրբոյն կիւրակոսի. զոր ոմանք եպիսկոպոս երուսաղէմացի համարեցան, և այլք հաստատեցին լինել սարկաւագ հռովմայեցի: Կայ և ցարդ յանքոնա քաղաք իտալիոյ մարմին պաշտպանի քաղաքին. զոր բնակիչք տեղւոյն ըստ բազում ժամանակս համարեցան լինել յուդայի եպիսկոպոսի երուսաղէմացւոյ. բայց յետոյ քննութեամբ հաւանելի եղև այլ ոք գոլ 'ի սրբոց:

Այս ամենայն պէսպիսութիւն աւանդից միօրինակ ստուգէ զվկայաբանութիւն մեր, թէ ուրեմն ամենեքին ենթադրէին

գրելն զԿիւրակոս կմ զԿիւրղոս եպս և վկայ եղմայի. այն է գտօղն խաչին առ Հեղինեաւ: Ընկեսցուք այժմ յանստոյգ բանս՝ որ կարծին յանստուգութեն կրթել և զվկայաբանութիւն: Նախ այն է զարմանալին, զի արևմտեայք առ չգիտելոյ՝ թէ որ այն սբ իցէ պաշտպանն անքոնացւոց, 'ի միոյ կողմանէ համարեցան զնա լինել բնիկ ոք անքոնացի, և 'ի միւս կողմանէ չունելով ըղձարս կմ զվկայաբանութի նր՝ նոյնացուցին ըն պատմութե եղմացւոյն, որպ թէ անքոնացին Կիւրակոս յուխտ գնացեալ յեղմ՝ անդ նահատակեալ իցէ 'ի Յուլիանոսէ. և յայս միտ առի եդեալ 'ի Բարոնիոսէ և յայլոց 'ի բուն վկայագիրքն կմ 'ի մարտիրոլոգն Հռովմայ 'ի 4. մայիսի. * Յեղմ (կատարումն կմ յիշատակ) սբյն Կիւրա-
,, կոսի եպսի, որ յորժամ այց առնէր սբ տեղեաց. ըս-
,, պանաւ առ Յուլիանոսիւ ուրացողիւ ||: 'Ի սոյնպիսի բանից՝ որք կամ յայտնի սխալ են, և կմ ոչ իւիք մերձին 'ի խնդիր մեր, առիթ առին ոմանք 'ի համարձակախօս գրչաց՝ որոց գլուխ է ըն յառաջատուե Բաբեպրոք Բոլլանդեան, եղծանել զեղծանել զվկայաբանութի Կիւրղի եղմացւոյ՝ զոյգ ըն պատմութե գիւտի խաչին եղելոյ առ Հեղինեաւ, կուտակելով և կցկցելով զասլօրական պատճառանս սեպհականս կրիտիկաց: Քամ է տեսանել զհանդէս Բաբեպրոքեան՝ թէ որովք հիմամբք ջանայ ժխտել զստուգութի հարազատ կարծեցեալ ընդարձակ լատին վկայաբանութե Կիւրղի եղմացւոյ:

Ընդհանուր ձեռնարկութի Բաբեպրոքի այն է, թէ անըստոյգ է պատմութի գիւտի խաչին. ապա և այս վկայաբանութի հետևորդ նորին: Որպ և մանաւոր ձեռնարկութիւքն ևս չինին 'ի վր նոյն հիման. քն թէ զոր ինչ միանգամ՝ անտեղութիս գտանեն կրիտիկք 'ի պատմութե գիւտի խաչին, նոյնք և 'ի վկայաբանութե աստ ընդ առաջ եկանեն: Եւ որ այն իցեն արդեօք: Առաջին անտեղութի, զի գրի 'ի հին վկայաբանութե անդ կմ 'ի պատմութե գիւտի խաչին, թէ յետ մկրտելոյն Յուդայի Կիւրեղ կմ Կիւրակոս կոչեցելոյ 'ի ձեռն սբյն Մակարայ եղմի հայրապետի ըն հրամանին Հեղինեայ, * Մինչ-
,, դեռ տակաւին յեղմ էր Հեղինէ, հանգեաւ եպսն
,, Մակար 'ի քս. իսկ երանելին Հեղինէ կոչեաց զԵւսե-
,, բիոս եպս քաղաքին Հռովմայ. և նա ձեռնադրեաց
,, զՅուդա եպս յեղմ եկեղեցւոյն քսի. և փոխեաց զա-
,, նուն նր, և կոչեաց Կիւրակոս ||: Որ ասէ Բաբեպրոք, Եւսեբիոս պապ մեռեալ էր յամի տն. 311. քն 15

ամօք յառաջ քան զգնալ Հեղինեայ յեղմ․ և թէև կենդանի լինէր, * ո՞յր ուրուք լուեալ իցէ (ասէ) կմ ,, ընթերցեալ երբէք, թէ յայնմ կողմանէ ծովու կմ ,, թէ 'ի Հռոմայ գլխովին ելեալ եկեալ իցէ քահա,, նայապետ ոք 'ի ձեռնադրել զմ՛ ոք և է եպս||: Քա՛ջ են ըդդիմութիքդ ը առաջին տեսութե․ այլ ունին և զլուծումն կարևոր :

Նախ՝ զի թէպէտ և կայ յայս բան կնճիռն, այլ չէ՛ նորահնար կարծութի․ զի 'ի վաղեմի դարուց են այդ ասացուածք․ մինչ զի և Ճառընտիրն մեր փոքր մի այլայլութբ զնոյն երկրորդէ այսպէս 'ի վարս կիւրղի․ * Իսկ զե,, րանելին կիւրեղ Հեղինէ հրամայէ մկրտել Եւսեբի ,, Հայրապետին Հռոմայ, և կիւրեղ փոխանակ յու,, դայի կոչէ զնա հոգին, որպէս պօղոս փոխանակ սօղոսի․ ,, և կացոյց զնա եպս յեղմ զկնի կատարման մակարայ, ,, որ նախ ունէր զաթոռն եղմի․ զորոյ զկնի երանելին ,, կիւրեղ յաջորդէ : Եւ գտանէ զբևեռսն հարեալսն ,, 'ի ձեռս և յոտսն քսի զհրացեալսն ծծամուխս՝ մաղ,, թանօք յեպսութեն․ քանզի զխաչն 'ի հրէութեն եգիտ, ,, որ հաւատոյ առիթ եղև նմա : Եւ այնչափ շնորհս ,, ետ նմա ած, մինչ զի զբանակս մեղաւոր դիւացն ,, հալածել, և զախտս բժշկել․ որպէս ասէ պատմութին||: 'Ի միւս առ զվերջին հատուածդ՝ որ ակնարկէ 'ի հանդիսացեալ պատմութն գիւտի խաչին․ մինչ զի և 'ի յն․ և 'ի լտ․ օրինակս նոյն պատմութե նոյն ձև բանից պահի այսպէս․ * Եւ այնչափ շնորհաց եհաս սբ եպսն ,, կիւրակոս, մինչ զի զդևս հալածել աղօթիւք, և զա,, մենայն ախտս մարդկան բժշկել||: Արդ այսպիսի հին միաձայնութե աւանդութե ոչ դիւրաւ սուտի :

Ապա երկրորդ՝ յայտ է, թէ սբն սեղբեստրոս՝ որ էր առ Հեղինէաւ, կոչի նաև եւսեբիոս՝ որպէս 'ի հայերէն գիրս, գր առ ագաթանգեղոսի 'ի թուղթն դաշանց․ նոյնպէս և առ այլս, զոր գիտէ և պապեբրոք, այլ դժուարելով 'ի մէջ բերէ՝ յասելն, թէ բերինգոզիոս աբբայ՝ որ ը ոմանց էր 'ի է դարու, և ըստ այլոց 'ի սկիզբն ժբ դարու, * Ջանայ հաւանեցուցանել՝ թէ ,, յունական անուամբ ԵՒՍԵԲԻՈՍ ասացաւ՝ այն, որ լա,, տիներէն ՍԻԼՎԵՍՏԵՐ (կմ ՍԵՂԲԵՍՏՐՈՍ)||․ և յայնմանէ ել վէճն, թէ ո՞ իցէ՝ որ մկրտեաց զկոստանդիանոս : Եւ եթէ չհաւանի պապեբրոք ճարտարամիտ ը մեկնութն աբբային, զիարդ յետոյ հաւանի ը անհաւանելի բանս այլոց յետնագոյն և անանուն աբեղայի․ (որպէս տեսցի 'ի մօտոյ)․

մարոյ). և որ եւս յայտնին է՝ ընդէր ոչ խոստովանի, թէ անուանս յունական Եւսեբիոս՝ ընդ հնչման նշ. Եւսեբէս, նոյն է ընդ լատինականիս Պիոս. և երկաքանչիւրն նշանակէ Բարեպաշտ, և անխտիր ասի զոր և է հայրապետաց և զթագաւորաց անգամ: Զիա՛րդ և զոր 'ի լատին թարգմանիչն մեղադրէ, թէ զՄակարիոսն Բեատոս է իմացեալ՝ որ է Երանելի. փոխանակ պահելոյ զյատուկ անունն, չմերձեցուցանէ և յանունդ եւսեբիոս՝ թէ պարտ էր թարգմանել Պիոս, և ոչ պահել զյատուկ անուն. յորոյ 'ի գնիլն ունէր և զայն նշանակել՝ թէ առ նախնիս Պապ. կոչէին անխտիր որ և է հարք և հայրապետք. վա որոյ չէ ինչ. եթէ վրիպակաւ եւսեբիոս ոմն պապ, իբր բարեպաշտ հայրապետ ձեռնադրող կիւրղի՝ խառնեալ իցէ ընդ անուան սեղբեստրոսի պապի եւսեբիոս կոչեցելոյ:

Այլ թողեալ զայն, և եդեալ թէ հին պատմաբանք համարեցան ընդ հեղինեայ եկեալ յեմ զսեղբեստրոս հայրապետ, մինչ զանկարելին ասացին, կամ թէ մեղս գործեցին. զի ահա և վարդան 'ի ներբող լուս. յիշէ զայս աւանդութի հին. թող նախ դոյց այրդ քննասէր բաբեպրոք զճշմարիտ պատմութի սրբյն սեղբեստրոսի (զի զոր կայ՝ չկարէ ընդունել), և ապա յայլոյ ումն մանգաղ արկցէ:

Երկրորդ սնոտեղուն կամ առարկութի բաբեպրոքայ այն է, թէ անուն կիւրակոսի՝ որ ասի լինել յաջորդ Մակարայ եմի հայրապետի, չիք 'ի գաւազանագիրս պատրիարգաց այնր աթոռոյ: Այլ յայտ է՝ թէ այս ընդդիմութի ոչ ուժէ ընդդէմ մեր. նախ՝ զի 'ի մեզ ո՛չ կոչի կիւրակոս եպս, այլ՝ կիւրղոս կամ կիւրեղ. զոր եթէ գիտէր հկռկորդն, դիւրաւ գտանէր 'ի կարգս պատրիարգաց եմի ձայնակցութբ եկեղեցական պատմութեց և վկայաբանութեց՝ մի և երկու, գուցէ և երիս կիւրեղս 'ի նմին չորրորդ դարու. այլ թէ որ 'ի նոցանէ կոչեցի իցէ կիւրակոս, նմա թողումք ընտրել. և ընդ այնմ առ յօրինել և լեքենի նոր գաւազանագրի զկնի զցանկ. քանզի և սա 'ի հատ. Գ. երես. 154. թէպէտև դնել դնէ երկբայութբ զանուն կիւրակոսի, այլ բոլլանդեանց վկայութե զհետ կրթեալ՝ նոցին պատճառաբանութբ խախտարկէ զկարգ բանից իւրոց: Երկրորդ՝ ո՞ ոչ գիտէ, թէ չիք հաստատուն գաւազանագիրք եպսաց եմի եղելոց 'ի ժամանակի անդ հալածանաց արիանոսաց. և եթէ լինէր եւս, 'ի նոսին ընկղմէր մթութբ և անուն յուդայի

Կիւրակոս կ՟մ Կիւրեղ կոչեցելոյ՝ շփոթելով և ընդ անուան երևելւոյն Կիւրղի : Երրորդ՝ ըստ Հ. ոչ կոչի Կիւրեղն երկրորդ՝ պարզապէս եպ՟ս եւ՟մի, (որ կոչէ զնա լատին վկայաբանն . և Յ. բս . և ԺՄ.) այլ միայն ասէ՝ թէ * հրամանաւ ա՟ծասէր դշխոյին հեղինեայ ձեռնադրեցաւ եպ՟ս ||. որով ունիմք իմանալ եպ՟ս կողմանցն պաղեստինու 'ի սահմանս եւ՟մի, այլ ոչ պարզապէս պատրիարգ եւ՟մի . նմին իրի և պատճառ նահատակու՟ե այսպէս առաջի դնի 'ի Հ. * 'ի գալ՟ն (յուլիանոսի) ,, յե՟ւմ՝ լուաւ զքաջութին Կիւրղի . որ և համբաւն ,, յառաջագոյն հասեալ էր 'ի լսելիս ն՟ր, թէ նա ինքն ,, է գտօղ ն՟ր խաչին 'ի գողգոթայ . և վաղվաղակի հրա- ,, մայեաց ածել զեպ՟սն առաջի իւր ||. և այնպէս իբրև զառանձին եպ՟սէ ճառէ 'ի բովանդակ ընթացս նահատակու՟ե հանդերձ մարբն : Այնպէս է տեսանել և 'ի ճառընտ . Դ : Ոչ այլազգ ցուցանէ և բուն պատմու՟ե վկայաբանու՟ե առ այլս՝ եթէ ոչ կապեցիս ընդ յառաջաբանութիս ն՟ց . թող զճառընտ . Բ . որ նոյնացուցանէ զերկոսին Կիւրեղս 'ի մի . ո՟ր տեսցի և զկնի : Նմին իրի և մեք 'ի տօնելն ոչ կոչեմք եպ՟ս եւ՟մի զերկրորդն Կիւրեղ, այլ միայն զառաջինն . զոր օրինակ և որք Կիւրակոս կոչեցին զերկրորդն, ոչ ամենեքին եդին զնա եպիսկոպոս եւ՟մի :

Երրորդ անտեղութին է ըստ պապեբրոքայ, զի 'ի պատմութ՟ե անդ գիւտի խաչի ըստ լատինացւոց կ՟մ յընդարձակ վկայաբանութ՟ե Կիւրակոսի յուդայի՝ ուր անուն հօրն ն՟ր կոչի շմաւոն կ՟մ սիմոն, և անուն հաւուն զաքէոս, ասի 'ի բերանոյ շմաւոնի առ յուդա, թէ քարկոծեցաւ * ստեփաննոս եղբայր քո ||. և 'ի բերանոյ յուդայի ասի առ ա՟ծ . * կարգեա՛ զիս ընդ եղբօր իմում ստեփաննոսի, զորմէ գրեալ է 'ի գործս երկոտասան առաքելոց քոց ||. և զիարդ մարթ իցէ ասել հակառակորդն և նմանիք իւր, թէ յուդա եղբայրն ս՟բյն ստեփաննոսի գտանիցի իբր երեքհարիւր ամօք զկնի առ կոստանդիանոսիւ և առ յուլիանոսիւ . մինչ զի այսպէս հեգնելով խօսի պապեբրոք զաննայէ զմօրէն Կիւրղի . * Սա եթէ ,, և ս՟բյն ստեփաննոսի մայր եղև, ոչ միայն երեքդա- ,, րեան, այլև իբր չորեքդարեան ամաց լինել հարկա- ,, կեղծելի է ||: Արդ չէ արժան այսպիսի իմաստից կամաւ անիմաստ զանձինս կեղծողաց տալ պատասխանի . ուր և յետին տգէտք զայդպիսի բանս ուղիղ իմանան՝ ըստ ազգակցու՟ե ևեթ, որ և 'ի Հ. հօրեղբայր կ՟մ հաւ-

եղբայր ընթեռնումք մեք․ այլ ոչինչ շուարիմք․ թող
որք կամինն՝ տրխասցին:

Չորրորդ անտեղի անտեղութի գտանէ բաբեպրոք յայն բան ս̄բյն կիւրղի կմ̄ կիւրակոսի առ յուլիանոս, ուր յուշ ածէ ս̄բն ը̄դէմ ուրացողին զազատութի իւր 'ի վտանգէ ձեռամբ եպ̄սաց և քահանայից եկեղեցւոյ՝ պահելով զնա ը̄ ս̄բ սեղանով․ * Ո՛չ երբէք այսպիսի ինչ (ասէ բաբեպրոք) 'ի դէմս ածին յուլիանոսի քրիստո,, նեայք: Գիտեմք, զի նա առանց հրամանի կոստան,, դեայ եկն 'ի կապադովկիոյ յասիա՝ առաւել վ̄ս ու,, ման․ և զի յանցանելն ը̄ կոստանդինուպօլիս՝ խօսա,, կից լեալ ը̄ եղբօր իւրում գաղոսի՝ ես կարծիս հա,, մախոհութե̄ իւիք ընդ նմա․ բայց ո՛չ երբէք ընթեր,, ցեալ է մեր՝ թէ իբրև մահապարտ խնդրեցաւ․ այլ ,, մանաւանդ ինքնակամ չոքաւ 'ի մեդիոլան, և 'ի բաց ,, քերեաց յանձնէ զկարծիս կասկածանաց՝ անձամբ ա,, ռաջիկայ լինելով ||: Հա՛տ է արդ առն գրագիտի յընթեռնուլ զբաղումս՝ մոռանալ զբաղումս յընթերցուածոց իւրոց, ես և 'ի գրելոց․ զի ահա 'ի վարս մարկոսի արեթուսայ եպ̄սի՝ սա ինքն բաբեպրոք, կմ̄ գործակից նորա հենսքենիոս պատմեցին զնոյն դիպուած վկայութե̄ գրիգորի ածաբանի, և ոչ անգիտացան նաև զվկայութի բասիլիոսի քահանայի և վկայի զյառաջ բերեալն 'ի հռուինարտայ: Որ թողեալ զայն, զի երբ վկայէ և ինքն բաբեպրոք աստանօր՝ թէ յուլիանոս ես զկարծիս համախոհութե̄ ը̄դէմ կոստանդեայ, և թէ գնաց 'ի բաց քերեաց յանձնէ զկասկածանս, զիա̄րդ չհաւանի կարծել՝ թէ խնդրեցաւ և 'ի խնդրակաց արքունի: Մի թէ իմաստնագոյն գտաւ յետոյն քննիչդ քան զմերձաւորն ժամանակաւ ածաբանն գրիգոր՝ որ ասէ զյուլիանոսէ, թէ եկեղեցականք * ապրեցուցին զժանտաժուտն զայն 'ի ժամանակին յորում վտանգեցաւ ամ̄ զարմ ն̄ր ||:

Զայս ը̄արձակագոյն նշանակէ և ճառընտիրն մեր Բ․ 'ի խօսելն զս̄բյն կիւրղէ եհմացեւոյ յանդիման եղելոյ յատենի յուլիանոսի․ * Եւ զի ծանօթ էր (ուրացողն) ,, յառաջագոյն բարեպաշտութե̄ առնն, յանծանօթս ,, լինէր՝ զառաջնոյ օձին բերելով օրինակ: Քանզի եր,, բեմն և թափեալ էր երանելին կիւրեղ զպիղծն յու,, լիանոս 'ի ձեռաց մեծին կոստանդիանոսի (կմ̄ կոս,, տանդեայ)․ քանզի զգացեալ թագաւորին կոստան,, դիանոսի զնորա առ կուռսն զմոլութիւն և զատե,, լու

,, լութիւն առ Քն, սպանանել զնա հրամայեաց. և
,, նր փախուցեալ՝ զոէյ սեղանոյն բուռն հարկանէր.
,, և 'ի ձեռն բարեխօսութե երանելոյն կիւրղի փրկել
,, լինէր և ապրել 'ի մեծէն կոստանդիանոսէ. փրկուն
,, անհաւատալի և անարժան. ոչ այ շնորհ ունէր ընդ
,, փրկութեն, և ոչ կիւրղի՝ 'ի ձեռն որոյ ապրեցաւն.
,, այլ երկոցունցն երևեցաւ չար. միում զամպարիշտ
,, ուրացութեն երկնելով, և միւսումն զ'ի վր յառնելն
,, և սպանանելն: Եւ զի համբաւ հաւատոյ հրէից ե-
,, հաս 'ի լսելիս նր, յաւելեալ 'ի չարութեն՝ զոր ունէր
,, առ նա վն (գիւտի) խաչին Քի, և հռչակաւոր ան-
,, ուանն, ստիպէր զնա յայն ինչ, զոր լսել սոսկայր
,, նա. ուրացիր ասէ՝ զԱծ և ես՝ զխաչելեալն. և ար-
,, ձակեմ զքեզ||. և յարէ զկնի զնահատակութեն:

Տեսանես, զի թէպէտև պէսպիսութի հանգամանաց գտանի 'ի վկայաբանութիս ըս այլևայլ աւանդութեց, այլ ստուգուն իրացն կայ և մնայ նոյն. և եթէ դժուարակնճիռ բանք գտանիցին, ոչ են խզելի բացասութե ընդ պապեբրոքայ, այլ լուծանելի իմաստասիրութե: Եւ զո՛ր օրինակ չէ պարտ ը պիտանիս և զանպիտանս ըունել 'ի պատմուեց, սոյնպէս և ոչ զպիտանիս ժխտել և հերքել վասն թեթև պատճառաց իբրև զանպիտանս կմ զանստոյգս. այլ ըս ասելոյ գեղասիոսի պապին յընտրութե ընդունելի և անըունելի գրուածոց՝ (ուր յիշէ և զպատմուն գիւտի խաչին,) զառաքելականն պահել կանոն. * զամ ինչ փորձեցէք, ըզբարին ընկալարուք||:

Այլ ո՛ կարէ հանդուրժել աստանօր մեծաբանութեց պապեբրոքայ, որ կարծէ թէ ինքն է կատարեալ և մի միայն հետևօղ բանից առաքելոյն և աչալրջութե գեղասիոսի. քանզի կարծիս 'ի մտի եդեալ՝ եթէ 'ի ձեռն նախաճառեալ առարկուածոց իւրոց յաղթօղ հանդիսացաւ, (ուր մեք տեսաք զնա 'ի պարտութե մատնեալ,) այսպէս իշխէ վերաչօճել 'ի բանս իւր. * Ո՛չ ամ զամ,
,, և ոչ յամ ժամանակի կարօղ եմք խուզարկել... ամին
,, իրի անմեղադիր առնեմք զնախնի մատենագիրս՝ զորս
,, այլուստ մեծամեծս, զի յայն ժամանակս՝ յորս տա-
,, կաւին նուաղ փոյթ կայր 'ի միջի մն քննելոյ զպատ-
,, մութիւս, յոլովակի բարի հաւատով 'ի վկայութեն կա-
,, չեցին և հետևելի համարեցան զգրուածս, զորս այլք
,, առաւել փորձ գտեալք յայնմանէ իրս՝ կամ մերժե-
,, ցին կանխաւ, և կմ այժմ ամ իրօք մերժելի գտանին:

,, Երանի՛ տամ արդարև այնց դարուց, յորս այնչափ փոյթ ընծայիւր 'ի քննութիւն ս՟րց գրոց, և 'ի մերձեցուցանել զայն յողջմտութիւն հաւատոյ և 'ի բարեկարգութիւն վարուց. մինչ զի 'ի զբաղիլ ամենեցուն գոգցես փութոյ 'ի նոյն, սակաւք գտանէին յոյժ առ 'ի փոյթ յանձին ունել յաղագս պատմական քննութեց, և խուզարկել ճշգիւ, թէ որպիսի հաւատարմութբ իցեն գրեալ իւրաքանչիւր գրուածք կմ որպիսի ճըշմարտանմանութբ. միայն թէ մի երևեսցին հակառակ ելանել ուղղափառ կրօնի: Այլ ոչ է անգոսնելի և մերս դար, յորում բաց 'ի յոքունց անտի վաստակելոց մեծ ևս քրտամբք յայն աշխատութիս (ս՟րց գրոց), մինչև վն խուզարկութե սրբազան ուսմանց այժմ իրաւամբք կարէ պարծիլ եկեղեցի՝ ոչ գուցէ ոչ յայլում ժամանակի երբէք, գտանին նաև բազումք՝ որք մասնաւոր գիտմամբ բուռն հարկանեն 'ի քննութի եկեղեցական և քաղաքական պատմութեց, համեմատելով զժամանակս ը ժմկս, և զմատենագիրս ը մատենագիրս. և այն է փոյթ ջանից նց, զի երկուստեք կշռելով զիրսն՝ մարթ իցէ գտանել ստուգիւ, զինչ ինչ 'ի մէջ այլևայլ պատմութեց ճշմարտագոյն կմ առաւել ճշմարտանման կայցէ, օրինակաւ սբյն գէլասիոսի պապին, որ զայսպիսի աշխատասիրութի ոչ անարժան վարկաւ ծայրագոյն այն բարձրութե հռովմէական քննասիրութե||:

Եթէ նմանօղ լինել կամէաք ծուռմաբանութե առն՝ այլուստ մեծանուն համարելոյ, կարող էաք բանիւք և արդեամբք ցուցանել՝ թէ քանի՛ նենգ և կեղծաւորութի ստութք հանդերձ բովանդակի 'ի պարծանս անձին իւրոյ, զոր յայլոյ դէմս խօսի: Զարմանք են՝ զի քաջն բոլլանդ յովհաննէս, և յաջորդ նր հենսքեննիոս բոլլանդեան, որոց յաջորդեաց սա ինքն բաբեպրոք յաշխատասիրութե վարուց սբց, ոչ զայսպիսի մեծաբանութե սիրեցին, և ոչ զայսպիսի համարձակութի 'ի ջանալ ստել զվկայաբանութիս ը սուտ պատրուակաւ քննիչ երևելոյ իմաստուն և տոտնկեցի. որում և այլք յառաջ քն զմեզ չկարացին տանել: Այլ մեք անմեղադիր առնեմք զբաբեպրոք, զի յայսմ մասին պատրեցաւ 'ի չարաչար համարձակախօսութէ ուրումն արեղայի, ոյ անանուն կրօնաւորի ուրումն աւտխոգորեցւոյ, զորմէ առէ լինել 'ի ժգ դարու. և այն է յաւէտ՝ զոր առէ առաւել փորձ գտեալ յայսպիսի իրս. և բերէ զբանս նր ըդէմ

դիմախօսաց իւրոց 'ի յաւելուածս մայլեան․ Երես․ 836․ թէ ահա այլ ինչ այն ծանօթութիւնս առնելով 'ի մ̅ի պատմութեան գիտունն խաչին և 'ի մ̅ի կիւրակոսի եպսի, որ 'ի սկըզբանն ասէ, * Զարմանամ յոյժ յոյժ․ թէ զիարդ դրուածն
,, այն՝ յորում առաջի դնի պատմութիւն այսր կերպեալ
,, գիտունն, մածեալ իցէ յընթերցուած եկեղեցւոյ․ զի
,, ոչ ուսանք կարէ կալ յակատանի, եթէ կարգ ժա-
,, մանակաց զննեսցի և ճշմարտութիւն խնդրեսցի ||․ Նոյնպէս և 'ի վախճանի ասէ․ * Հերքելի է ուրեմն, զոր
,, այսպէս մերժելի ցուցանէ հեղինակութիւն և բանն․
,, և համարելի է մտացածին կեղծիք լինել, ուր և ոչ
,, մի ինչ հետք փայլէ ճշմարտութեան ։ Ապա եթէ ոք ա-
,, սիցէ, թէ զայդ պարտ է յայն սակս պինդ պահել,
,, զի ընթերցումն նորին յեկեղեցւոջ 'ի վաղեմի սովո-
,, րութենէ է մածեալ, գիտասցէ՝ զի ուր բանն դիմա-
,, մարտի սովորութեան, հարկ է սովորութեան տեղի տալ
,, յերեսաց բանին ||։ Զայս խնդամիտ մերժանեալ բարեպաշտքս՝ զի եգիտ զոք նման իւր, տես զինչ 'ի մ̅ի բերէ խայտալով․ * Արդարև մ̅ծիւ ոսկի, մ̅ծիւ հա-
,, րիւրիցս գովելի 'ի սիրտս Ն̅ց, որոց ամպարշտու-
,, թիւն և անբերելի ինչ երևի, եթէ ինչ ինչ յայտնեցանէ՝
,, որք եղեն 'ի սովորութենէ եկեղեցւոյ, կեղծ գուցէ արդ-
,, եաց են, մածեալք 'ի ներքս առ անգիտութեան ճշմա-
,, րիտ պատմութեան, կշտամբեսցին իբրև առասպել․ միայն
,, թէ չլինիցին այդ յանդգնութ̅ք, այլ նախնական պատ-
,, մական ապացուցութ̅ք, որպիսի գոյ սմա, և հաստա-
,, տակօրէն 'ի գիտնոց ընկալեալ լինի․ և չէ ինչ՝ թէ
,, ը̅դէմ կայցէ խստապարանոցութեան տգէտ ռամկին, և
,, կամ այնոցիկ՝ որք առանձնական օգուտ գիտեն ին-
,, քեանց տածիչ լինել այսպիսի ռամկական սխալանաց ||։
Ահա հսկայ հսկայորդի․ եթէ ում յառաջնոց՝ և այն 'ի յետնագոյն դարս համարձակախօսեաց, բարեպաշտք արձագանգ տայ և'ս ահագին 'ի կործանել զերկինս յաւիտենականս և զբլուրս մշտնջենաւորս․ բայց ինքն զինքն կործանէ բանիւք իւրովք ։ Վ̅ն զի ենթադրէ՝ թէ այն կարծեցեալ անտեղութիք, և առարկութիք զորս լուծաք 'ի վերոյ, իցեն ապացուցական բանք․ և նոյն այն են և պարծանք անանուն առաջնորդի իւրոյ․ իսկ արդ՝ նոքին չեն ապացոյց և բան հաստատուն, այլ հոմաձայն խրթնութիք, և ը̅նդ նմին առաւել հաստատիչ սորայ աւանդութեց․ ապա ընդունայն են այդ ա̅մ յօխորտանք մեծամեծք, և տիրապէս տղայականք՝ անվայել իմաստութե̅ գիտնաւոր արանցս ։

Այսպէս և մեք գիտեմք, թէ բանն և հեղինակութիւն է յաղթօղ սովորութեան. բայց որպիսի բան և որպիսի հեղինակութիւն ընդդէմ որպիսում սովորութեան: Եթէ ընդդէմ սովորութեան մասնելոյ յառանձին եկեղեցի միաբանեցի ամենայն բան, որ ըստ ինքեան բանաւոր պատճառ ապացուցական, և հեղինակութիւն կաթողիկէ եկեղեցւոյ, կամ համօրէն մատենագրաց, յայնժամ ինքնին խոտան գտանի սովորութիւն. այլ եթէ ընդհակառակն՝ սովորութիւն իցէ կաթողիկէ եկեղեցւոյ, որպէս է աստ, զի ամենայն եկեղեցիք միօրինակ ունին զգոյացութիւն պատմութեան գիւտի և գտողի խաչին, և զնոյն հաստատեսցէ հեղինակութիւն վկայաբանից ամենայն ազգաց, նոյն ինքն սովորութիւնն է բան անժխտելի: Բայց դու տես զխարդախանս բաբեպրոքայ, զի զհեղինակ՝ թէպէտև անանուն՝ համաձայն մտաց իւրոց՝ ընդունի. զոչն համաձայն՝ որչափ և անուանի ոք իցէ՝ իրաւունս համարի մերժել. և ուր գտանէ զպատահական սխալանս, զգոյացութիւն գլխովին ուրանայ: Բաց յասացելոցս օրինակ լիցի այն, զի ինքն յառաջ բերէ 'ի մայիսի. 3. Երե. 363. զբան հին հեղինակի գաւազանագրաց քահանայապետացն հռովմայ, որ գրէ վասն Եւսեբիոս պապին (իմա՛ փոխանակ գրելոյ սեղբեստրոս), թէ * Առ ժամանակօք սորա գտաւ սուրբ խաչն ,, տեառն մերոյ յիսուսի քրիստոսի 'ի Է նոննասայ մայիսի: Աստ մկր- ,, տեցաւ յուդաս կիւրակոս ||: Եւ ինքն բաբեպրոք 'ի վերայ բերէ. * Ծաղկեցաւ այս հեղինակ 'ի սկիզբն վեցերորդ- ,, դարու. որում անխիղճ հետևեցան և այլ հաւաքիչք ,, գաւազանագրաց քահանայապետաց. որով և ցուցին, թէ ,, առաւել հաւատարմութեամբ քան ստոյգ քննութեամբ օրինա- ,, կեցին՝ զոր 'ի նախնեաց գրեալ գտին. (գեղեցիկ է հեգնութիւս. այլ մեզ սիրով ընդունելի այս վկայութիւն իւր անժխտելի. որպէս և զոր աստ 'ի կարգիս).... ,, Բաց 'ի հեղինակաց գաւազանագրաց խաբեցան 'ի նոյն- ,, պիսի կարծեաց և այլ արք մեծամեծք. և նախ սուրբն ,, գրիգոր տուրոնեցի՝ հին վիպագիր պատմութեան Փրան- ,, սիոյ ||: Զայսոսիկ մերժելով, և զվկայագիրս ընդունելով՝ անցանէ և յարևելս. և տեսեալ թէ նաև անդրէաս կրետացի հին վարդապետ արևելեան մեծանունն՝ այն որ սնեալ 'ի գոգ եկեղեցւոյն երուսաղէմի, գիտէր զստոյգ աւանդ գիւտի խաչին, հակառակ ելանէ մտաց իւրոց, ասէ. * Արդ ,, որպէս սուրբք ամենեքին զհետ երթալով առասպել պատմու- ,, թեան նախաճառելոյ՝ ոչ շարժեն զմեզ, զի յանձն առ- ,, ցուք խառնել զյուդա կիւրակոս 'ի գիւտ սրբոյ խաչին,

,, սոյնպ͞ս և ոչ առ հաւատալ՝ թէ որ 'ի հրէից ստիպե͞լ
,, լիցէ ('ի հեղինեայ) 'ի յայտնել զխաչն, ստիպիմք այ-
,, նու յունական ճառիւն, զոր Ը̄ անուամբ ս͞բյն անդ-
,, րէի կրետացւոյ 'ի լոյս ընծայեաց գրետսեր, և 'ի
,, կարգս գործոց նորին անդրէի անցոյց կոմբեփիզիոս,
,, և դարձեալ 'ի Ը̄. հատորն մատենադարանի քարոզից
,, տպագրեաց վ͞ս տօնի վերացման խաչին ||:

Արդ զո՞ ածցուք. զի հաւատասցէ թերահաւատս յայսմ
մասին. որ սկսեալ 'ի կիւրակոսէ՝ զգիւտ խաչին եւ կո-
րոյս. իսկ զկիւրակոս իսպառ ուրանայ եկեալ յԾ.
զի 'ի կարգի ջերմ աստուածոց ջերմացեալ զգլխոյն՝ ու-
նի և զայս. * մեք քանզի ստոյգ գիտեմք, զի միակ հիմ͞ն
,, այդոցիկ անուանց (ա͞յ կիւրակոսի կ͞մ կիւրղի, և մօր ն͞ր
աննայի, և ազգին թովլչի 'ի միասին նահատակելոց) ա-
,, ռեալ է 'ի ճառօրէն վկայաբանութ͞ե ասոր, չկամիմք
,, յիշատակել զն͞ս՝ ոչ ասեմ իբրև զս͞ս, այլ ոչ իբ-
,, րև զմարդիկ. որք լեալ իցեն երբէք 'ի բնութ͞ե ի-
,, րաց ||: Երկնչիմ, թէ աստանօր ջերմասցի և զլուխ
հաւատացեալ ընթերցողաց, մինչև չկամիլ ն͞ց յիշատա-
կել և զբարեպաշտք՝ ոչ ասեմ իբրև ս͞բ, (զի զայդ ոչ
ոք ընդունի,) կ͞մ գո՞նէ իբրև գրիչ վարուց ս͞րբց, (թէ-
պէտև համարիցի զանձն քննիչ), այլև ոչ իբրև զմարդ՝
որ լեալ իցէ երբէք 'ի բնութ͞ե իրաց: Այլ ես չասեմ
զայդ. զի է ինձ պիտանի այրն՝ առ 'ի հանել զնա ը͞դդէմ
իւր 'ի ճակատ:

Համայս դիցուք՝ որպ͞ս կամին ոմանք, թէ բարեպաշտք է
ճշմարտախնդիր, և գիտէ ընտրել զճշմարտագոյնն 'ի
ճշմարտանմանից. արդ տեսցուք՝ թէ ինքն, որ կատա-
րէր զտօն ս͞բյն կիւրակոսի կ͞մ կիւրղի եպ͞սի՝ որ և յու-
դա հաւատացեալ, զո՞ ոք իմանայր: Ճշմարտութ͞ե յան-
դիտութ͞ե կայ. այլ 'ի կարծիս իմն անձնական հակամ-
տէ, զոր և ճշմարտանմանագոյն կոչէ *. 'Ի մէջ եպ͞սացն
(ասէ) ե͞էմի հնգետասաներորդն, որ և վերջինն 'ի
,, կարգէ թլփատութ͞ե, գտանի յուդաս. զորմէ կարեմք
,, իշխել ասել, թէ կամ ինքն առեալ իցէ, և կամ 'ի
,, քրիստոնէից ընկալեալ իցէ զանուանակոչութիւս կիւ-
,, րակոս՝ վ͞ս ոչ յօժարութ͞ե վարելոյ ն͞ց զյատուկ անուն
,, ատելութ͞ե պիղծ ազգին: Զամանէ այսպէս գրէ թէո-
,, դորիկոս պօղոսեան 'ի յիշատակարանաց անուն եկե-
,, ղեց յե͞էմ. յորժամ եկեղեցին այն անկաւ զառաջինն
,, 'ի ձեռս լատինացւոց 'ի ժ͞ա դարուն ք͞սի. Յուդաս
,, ս͞բն յաջորդեալ փառաւոր վկային ք͞սի յովսեփայ,

,, ժեերորդ պատրիարգ լեալ եկեղեցւոյն էջմացւոց,
,, և 'ի մեծ նեղութե և 'ի հալածանս եկեղեցւոյ և սբյ
,, քաղաքին՝ որ 'ի հրէից և որ 'ի հեթանոսաց, բարւոք
,, հովուեաց ||: Իսկ թէ որպէս վախճանեալ իցէ այս
յուդա, ոչ յիշի 'ի յիշատակարանս թէոդորիկոսի. այլ
պետրոս ումն կոմեստոր յաւելու ասել, թէ սպանաւ 'ի
հրէից վն հաւատոցն քսի:

Բարւոք է ամն, և ընդունելի մեզ. բայց տեսցուք՝ թէ
բարեպաշտք հաւանին, ընդ որ մեք հաւանեցաք. զի այդ
ոչ հակառակի մեզ, թէ կայցէ և այլ ոք սբ յուդա անուն.
այլ թէ կոչեցեալ իցէ սա կիւրեղ կմ կիւրակոս,
ոչ ոք վկայէ. այլ զնորին հակառակն. զի նոյն յիշատակագիր
զնոյնէ 'ի յուդայէ ասէ զկիւրեղ յուդա, որպ և
զմիւս կիւրեղ մեծն. և այնպէս տիրաբար հաստատէ զնմ
զգրեալսն մեր: Մինն իսկ զայրանալով գրէ զկնի բարեպաշտք,
թէ թէոդորիկոս խառնեալ իցէ յիւրմէ ինչ ինչ
'ի յիշատակարանս էջմի. իսկ զի ասէ՝ բաց 'ի յուդայէ
անտի որ էր յաւուրս ադրիանոսի կայսեր, * և՛ առ ժամանակօք
,, յուլիանոսի արար երկուս կիւրեղս. յորոց
,, միջի միջինն իցէ կիւրակոս. զորոյ զբովանդակ վարս
,, զճառօրէն գրեալն ընդօրինակէ. և ապա 'ի վր բերէ,
,, թէ այս սբ կիւրակոս կոչի նաև մակար յեռամանեայ
,, պատմութե.... (և ոչ այսչափ միայն,) Եւ
,, երկու ևս այլ ձեռագիր օրինակք լատինականք գաւաղանագրոց
,, պատրիարգացն էջմի՝ զկնի մակարայ
,, անմիջապէս կարգեն զկիւրակոս. իմն ըստ հաւատոյ
,, նոյն ճառօրէն վարուց: Այլ զի այն չարժէ ինչ առ
,, մեզ, նոյնպէս չարժեն ինչ և որք անտի առեալ եղեն ||:
Ահա անձամբ անձին յաղթեաց այրն քաջ՝ մերժելով և
զյիշատակագիրս, յորս ապաւինեցաւ. թող և զգաւառանագիրս
և զվկայագիրս. ապա մնայ նմա պաշտել
զիւր կարծիս. զոր և կամի մեզ ընծայեցուցանել՝ ասելով.
* Իսկ մեք հաւատարմագոյն և հնագոյն դասակարգութեց
,, յունաց զհետ երթեալ՝ զմի ևեթ 'ի կարգի
,, անդ ճանաչեմք յուդաս. և զնոյն վարկանիմք լինել
,, այն՝ որում վկայաբանք յաւելին տալ զմակակոչ
,, անուանդ կուրիակոս կմ կիւրակոս. իսկ մարտիրոսութի
,, նր հանդիպեալ իցէ ոչ առ յուլիանոսիւ, այլ
,, առ ադրիանոսիւ ||. և զայն համարի սպանեալ 'ի բարքոքեբայ
հրէէ ապստամբելոյ 'ի հռովմայեցւոց:

Իսկ զո՛ր կարծէ խաբել այրն մեծաբան, ասելով զանձնէ
հետևող հաւատարմագոյն և հնագոյն դասակարգութեց

յունաց . և ոչ ասէ զճշմարիտն՝ թէ ոչ ունէք անգամ արտաքոյ խելացս : Արտաքին առաջին և վերջին վկայ աւանդելիս է ստուգապատում քրոնիկոն Եւսեբի, յոր ապաստան լինի և բարեպրօք . բայց և անտի ունայնաձեւն ելանէ . զի Եւսեբիոս 'ի Է. ամի Ադրիանոսի գրէ այսպէս . * Զեէմի եկեղեցւոյն առաջնորդութեան յետ ,, Փիլիպեայ՝ (Ժ երորդ) յաջորդեաց Սենեկաս . յետ որոյ ,, ԺԱ Յուստոս . յետ որոյ ԺԲ Ղեւի . յետ որոյ ԺԳ Եփրեմ . ,, յետ որոյ ԺԴ Յովսէփ . յետ որոյ ԺԵ Յուդա : Սոքա ,, ամենեքեան 'ի թլփատութենէն եղեալք բաւեցին մինչ ,, 'ի յԱդրիանոսի պաշարումն || : Արդ յայտ է թէ ստուստ ոչինչ ելանէ նպաստաւոր բարեպրօքայ, և ոչ մեզ հակառակ : Գրէ զկնի Եւսեբի և Ղաղէտոս Եէմի առ Ադրիանոսիւ . 'ի ԺԶ ամի նր̃ . * Հրէայք ապստամ,, բեցին, և 'ի պաղեստինացւոց Քն̃ դիմեցին . . . և զօր ,, առաքեաց ինքնակալն || : և 'ի ԺԷ . * Որ հրէից ապս,, տամբութեան առաջնորդ էր քօվքեբաս , զբազումս ,, 'ի քրիստոնէից պէսպէս տանջանօք պատժեաց . քան,, զի չկամէին երթալ ը̃ նմա 'ի ճակատ 'ի վր̃ հռովմայ,, եցւոց || : և 'ի ԺԹ . * Որ 'ի պաղեստինացւոց Քին̃ ,, հրէական պատերազմն էր, վախճանեցաւ, չարալլուկ ,, մազապուր ապրելով հրէից . յայնմ ժամանակէ և ե,, լանել յԵէմ ամենեւին արգելան՝ նախ ըստ կամօքն, և ,, ապա հռոմայեցւոց հրամանաւ || :

Արդ ո՞ տեսանէ յայս բան տեղի ապաստանի բարեպրօքայ, որ ը̃ մտի կամի՝ զի այս յուդա եպս̃ 'ի քօվքեբայ անտի լիցէ նահատակեալ . թո՛ղ այդպէս լիցի . բայց զիարդ կարծէ հետեւիլ այտի, թէ նոյն լիցէ ընդմին յուդայի՝ յուդայն այն կիւրակոս կմ̃ կիւրեղ՝ երկու դարուք զկնի եկեալ յԵ̃ . այսպէս կամիմ ասէ, զի մի հարկեցայց ը̃ունել զպատմութ̃ գիւտի խաչին և ըզվկայաբանութ̃ կիւրակոսի . այլ թէ կամիցի և թէ ոչ, հարկի խոստովանել զճշմարիտն՝ թէ կայ մնայ ինքն չոմարեալ, և մեր պատմութն ոչ ինչ վնասեալ :

Այլ ասիցէ ոք ցիս . եթէ այսչափ հկռ̃կուն է և առլատինս վս̃ միւս կիւրղի և վկայաբանութ̃ նր̃, ուր չէք և 'ի հին տօնացոյցս մեր անուն նր̃, այլ մի միայն երեւելին կիւրեղ, թո՛ղ անդր և դու զերկրորդն զայն . և չատացիր առաջնումն՝ ը̃ որում նոյնացուցանէ և ճառընտիրն զմիւս կիւրեղ : Պինեմ . եթէ կարէի, այդ̃պս առնէի . բայց է անկարելի բացարձակապէս . վս̃ զի եթէ տօնացոյցն և եթէ ճառընտիրն՝ զմին զայն կիւրեղ ասեն հրէայ ազգաւ , և գտօղ խաչի , և նահատակեալ հանդերձ մարբն ՚ի յուլիանոսէ ․ իսկ արդ՝ հկռ՟կութեն է վն՟ այսպիսւոյ կիւրղի , ապա բաղորովին պարտ էր ուրանալ զկիւրեղ հայրապետ , և զկիւրեղ վկայ միանգամայն ․ զոր ոչ ոք կարէ առնել ։ Այլ ը՟ հկռ՟կին՝ ք՟զի կիւրեղ հայրապետ կենդանի է ՚ի միջի մերում գրովք իւրովք , և է մի ՚ի սեանց եկեղեցւոյ , զայն պարտ է պահել հաստատուն ․ զորմէ էր և նախընթաց վարքն գրեալ ՚ի մէնջ ․ և միանգամայն կենդանի է ՚ի միջի մերում միւս ևս կիւրեղ՝ նահատակեալ ը՟ մօր իւրում աննայի ըստ ա՟մ վկայագրաց , և իրօք առնեալ ՚ի մէնջ և յայլոց ․ ապա և զսա պարտ է հարկաւ պահել՝ իբրև զանազանեալ յառաջնոյն ։ Մերս այս է ․ եթէ ոք այլ հնարս գտցէ , պատրաստ եմք ՚ի լսել ։

(2) Ժամէ դնել աստ զքաղուած հին ճառընտրին մերոյ Բ , թէ զիարդ նոյնացուցանէ զերկուս կիւրեղս ՚ի մի ։ Արդ խորագիր եդեալ . * Վարք սբ՟յն կիւրղի Եմ՟ի
,, հայրապետի , և վկայութ՟ն || , սկսանի գրել այսպէս ։
* ՚Ի ժամանակս թագաւորելոյ մեծին կոստանդիանո-
,, սի բարեպաշտի , որ առաջին ՚ի քն՟է ա՟ծակարգ հաս-
,, տատեցաւ թագաւոր , սնեալ լինէր և երանելին կիւ-
,, րեղ յԵ՟ին հրէաստանի , և վարժեալ յոյժ գրովք մար-
,, գարէականօք՝ ըստ օրինացն մովսէսի անարատ վա-
,, րուք ․ զի և ծնօղքն թէպէտև հրէայք էին , արդարք
,, էին և արդարոց զարմք ․ որպ՟ս վկայեցին ՚ի մի բերան
,, հրէայքն առաջի հեղինեայ թագուհւոյ , թէ սա առն
,, արդարոյ և մարգարէի որդի է , որ զօրէնսն քաջ գի-
,, տէ ․ մինչ զի սորա հաւն և նր՟ (սբ՟ ստեփաննոսի նա-
,, խավկային , ՚ի կարգի նախահաւուց՝ յորոց սերեցան)
,, միոյ հօր որդիք (գտանին) ․ որոյ հոգւոյն արժանա-
,, ցաւ ․․․ Զխաչն յայտնեաց զգանձն կենաց , որ ծած-
,, կեցաւ ՚ի հրէիցն տասն կանգնաւ և ևս առաւել խո-
,, րագոյն ՚ի սբ՟ գողգոթայ ․ զոր ա՟ծ ՚ի ձեռն հաւատոցն
,, հեղինեայ և աղօթից սորա մեծաւ սքանչելեօք վեր-
,, ածեալ՝ Ե՟ի շնորհեաց ։ Եւ ինքն այնչափ լցաւ շնոր-
,, հօք հոգւոյն սբ՟յ և հաւատովք և անարատ վարուք
,, իւրովք և ջերմեռանդն սիրոյն որ ՚ի քս՟ , մինչ զի չև
,, ևս մկրտել՟՝ զմեռեալն յարոյց խաչիւն , և ը՟ սատանայի
,, դէմ յանդիման մարտեաւ ․․․ (և ՚ի մկրտելն) Կիւ-
,, րեղ փոխանակ յուդայի կոչէ զնա հոգին՝ ոպ՟ պօղոս
,, փոխանակ սօղոսի , և կացոյց զնա եպս՟ յԵմ՟ զկնի
,, կատարման մակարայ || ։

Յայսմաւուր տեսանես, զի բանն ողջոյն հայի առ Յուդա հաւատացեալ՝ որ ըստ այլոց Կիւրակոս, և ըստ մեզ միւս Կիւրեղ կոչի. բայց Ճառընտիրն իբրև զմիոյ Կիւրղէ մեծէ խօսելով՝ սկսանի ճոխագոյն գրել զնմանէ, զոր ինչ եդաք 'ի Նախընթաց վարս Կիւրղի. ք͞զ զկարգաւորութի͞ն ընթերցուածոց 'ի Կիւրղէ. զերևումն խաչի յաւուրս Ն͞ր առ Կոստանդեաւ, և զդարձ բազմութե հրէից և հեթանոսաց՝ զորս մկրտեաց. նոյնպէս և զկրկին երևումն խաչին առ Յուլիանոսիւ 'ի կամիլ անդ հրէից շինել զտաճարն, և զխաչանիշ նկարս 'ի վ͞ր հանդերձից հրէից. ե͞ն. և աստի վայելչապէս անցանէ 'ի պատճառս Նահատակութե Կիւրղի (որ անկ է միւս Կիւրղի). զի 'ի լինել անդ ահաւոր հրաշից շարժման և հրձգութե, և խաչանկարութե՝ զարհուրեալ հրէից առ հասարակ, * առ„ ս͞րն Կիւրեղ (ասէ) գիմէին. որոյ առեալ մկրտեաց „ զնո͞ յանուն հօր և որդւոյ և հոգւոյն ս͞բյ: Զայս լը„ ւեալ ամպարիշտն Յուլիանոս՝ առաքեալ կալաւ զնա, „ և ածեալ կացոյց յատենի ||. և այնպէս ըստ կարգի գրէ զնահատակութիւնն հանդերձ մարբն իւրով Աննայիւ, և ոչ մի ինչ կնճիռն ունելով 'ի պատմութե ըստ ինքեան. ա͞պ թէ մի և նոյն Յուդա Կիւրեղ էր մեծանունն այն հայրապետ Եէմի՝ հեղինակ գրոց կոչմանն ընծայութե, որոյ հասեալ յաւուրց Կոստանդիանոսի ցաւուրս Յուլիանոսի՝ նահատակեալ իցէ հանդերձ մարբն. և ըստ այսմ եդաւ 'ի նախնեաց մերոց 'ի հին տօնացոյցս մի Կիւրեղ հայրապետ տօնելի մարբն հանդերձ:

Եւ արդարև՝ եթէ կարէաք և մեք դնել այսպէս, գեղեցիկ շաղկապեալ երևէր պատմութիւնն առանց իրիք խրթնութե ժամանակագրութե. և ազատէաք յա͞մ դժուարութեց: Այլ սակայն հարկ լինէր յայնժամ առնել զեկեղեցական պատմութիս, ըստ որոց մեծն Կիւրեղ եկաց կենդանի յաւուրս հալածանաց արիանոսաց առ Կոստանդեաւ, առ Յուլիանոսիւ, առ Վաղեսիւ, և եհաս ցաւուրս մեծին Թէոդոսի, և գտաւ 'ի ժողովն Կոստանդնուպօլսոյ. և խաղաղութ͞բ վախճանեցաւ: Եւ զի ոչ զայս և ոչ զայն պատմութի մա՛րթ է խափանել, հարկաւ երկու Կիւրեղս պարտ է ընդունել զանազանեալս՝ ըստ եղելոցս 'ի մէնջ 'ի կարգի վարուց միոյն, և վկայաբանութե միւսոյն:

Ինչ մի կարէաք առնել, եթէ թողուին մեզ առնել եկեղեցական մատեանք և վկայաբանք. ք͞զ դնել՝ թէ Յուդա Կիւրակոսն՝ իցէ Կիւրեղ առաջինն և երևելին, և այս-

պէս հեղինակն կոչման ընծայութեան իցէ նահատա-
կեալ հանդերձ մարբն 'ի յուլիանոսէ․ իսկ միւս կիւ-
րեղ՝ որ կրեաց զչարչարանս առ վաղեսիւ, և գտաւ 'ի
ժողովն կոստանդնուպօլսի առ թէոդոսիւ, իցէ անծա-
նօթ ոք․ և այսու լինէաք հետևօղ Ճառընտրի ևեթ:

(3) Ճառընտիրն Գ․ որ համաձայն Հ․ Յ․ և Լ․ գրէ
զառանձին վկայաբանութն կիւրղի եպսի, դնէ և զա-
ռաջիկայ աղօթս սբյն եբրայական բառիւք, թէպէտև
յոյժ խրթնացեալ 'ի գրչաց, այսպէս․ * Իսկ նա ամ-
,, բարձ զձայն իւր եբրայեցերէն, և ասէ․ Բարուքա-
,, թաղա լիւամամուէ տարքուսիաղ, նամէղառվ թա-
,, բուլթ կաթթաղ զեղբիղոմալէ նաւաթի աբիամ խով-
,, րամ բէդէլ ադոնաէ եղօթ․ որ է հայերէն․ Ած մեծ
,, անչափդ ||, և որ 'ի կարգին: Նոյն օրինակ աղաւաղ
գրչութք գտանի բանս և 'ի վկայագիրս այլոց ազգաց․
դք 'ի միում 'ի լատին օրինակաց ընթեռնումք այսպս․
* Պարուլթ թալաւ մանուէլ թարքուսիար նէմէտօ
,, աօթի ապախան թազաէլ մէլլիգօ նապաթի զապէլի
,, զօարամ պէթէլի ատօնաէլ աէլօթ ||․ և 'ի վր բե-
րի ըարձակ իմաստն թարգմանեալ 'ի լատին համաձայն
հայումս․ որ ոք կամի՝ ստուգեսցէ զեբրայական հրնչ-
մունս բաղդատութք:

(4) Հարկ համարեցաք յաւելուլ զեդեալն փակագծիւ
'ի մէնջ․ զի այսպէս իմանալ ունիմք զանորոշ զայն բան
Ճառընտրի Գ․ * Բայց յիշեա՛ որդեակ զհայր քո, զի
,, հրէայ մեռաւ: Եւ զիս յիշեա՛ ||: Ուր անհեթեթ է
յաւելուածն այն 'ի Հ․ * Բայց յիշեա՛ որդեակ զհայրն
,, քո՝ որ հրէայ վախճանեցաւ․ թերևս լիցի նմա ողոր-
,, մութի յայյ վր աղօթից քոց, և վր սբյն ստեփաննոսի
,, նախավկային հաւրեղբօր (կմ հաւեղբօր) քո ||: Այլ-
ազգ օրինակաւ զնոյն անհեթեթութի յինքն բերէ և լա-
տին օրինակն, ուր գրեալ է այսպէս․ * Յիշեա՛ զե-
,, րանելի հայր քո, որ 'ի հրէութե մեռաւ․ բա՛րձ որդ-
,, եակ զմեղս հարց քոց, եղեալ ընկեր նախավկային
,, ստեփաննոսի ||․ ուր պա՛րտ էր պապեբրոքիոսի յան-
դիմանել զայսպիսի բառից և բանից մուծանօղս օտա-
րաձայն վպութք․ քանզի զիարդ լինիցի երանելի կո-
չել զմեռեալն 'ի հրէութե․ ո՞չ ապաքէն առ առաւելն
ողորմելի պարտ էր ասել, թէ նէդ և աւաղելի: Բայց
պապեբրոք յայլ ըդիմութ է զբաղեալ լատին ընթերց-
ուածոյն․ զոր և ինքնին լուծանէ այսպէս մեղմով․
գրեալ էր ասէ վերագոյն ընդ հակառակն 'ի բերանոյ
չմա-

շմաւոնի հօրն կիրակոսի, թէ * Ես և հարք իմ հաւա-
,, տացաք 'ի նա ('ի յս̃), զի Ճշմարտապէս որդի ա̃յ է||.
և 'ի վր̃ բերէ իմաստուն քննիչն. * Արդ այս բան ան-
,, դանօր թուի յայն միտս ասացեալ, որ̃ թէ շատացե̃լ
,, ներքին հաւատով՝ չիցէ դաւանեալ և արտաքուստ՝
,, առ ակնածութե̃ յերեսաց այլոց հրէից||: Ըստ այդմ
արդարացոյց այրն կրիտիկս և զբան Հ. զոր մեք իրա-
ւամբք յանդիմանելի դատեցաք:

(5) Ընդարձակ վկայաբանութիւն ը̃ լատ. գրէ զժամա-
նակ կատարմանն՝ լինել * յաւուր շաբաթու՝ յութե-
,, րորդ ժամու, 'ի մուտս մայիս ամսոյ, յերկրորդ ամի
,, Թագաւորութե̃ն յուլիանոսի բռնաւորի||. յորմէ բա-
զումք եդին լինել 'ի մայիսի. ա̃. բայց քանզի յերկրորդ
ամի յուլիանոսի՝ յամի տ̃ն 362. չորրորդ օր մայիսի դի-
պի 'ի շաբաթ օր, վ̃յ այլք լաւ ևս համարեցան դնել՝
'ի գ̃ մայիսի. մանաւանդ զի 'ի գ̃ մայիսի է գիւտ խաչի
առ լատինս, 'ի դէպ վարկան յարել զկնի նշ̃ զգտօղն
խաչի՝ ըստ ասացելոցս: Քաջ ևս հաստատէ զայս Ճա-
ռընտիրն մեր Բ., (թէպէտև միացուցանելով զերկոսին
կիւրեղս.) * Վկայեաց (ասէ) 'ի նմին սբ̃ եպս̃ն և մեծ
,, վրդ̃պն կիւրեղ մարքն հանդերձ, յերիր ամսեանն 'ի
,, մարտի (իմա՛ 'ի գ̃, կմ̃ 'ի է̃ մայիսի, զի 'ի վր̃ բերէ.)
,, յորում զխաչն եգիտ, 'ի նմին ամսեան և կատարե-
,, ցաւ||: Յօրինակս ինչ լատ. գրի յամսեանն արտեմի-
սայ. որ և մինէ մայիսի:

Միայն 'ի Հ. եդեալ է 'ի յունիսի. 6. որ̃ և Յ. դնէ
հոկտ. 28. ուր ասէ բաբեպրոք. թէ կամ յայնմ աւուր
փոխադրութիւն ինչ նշխարաց լեալ իցէ այլուստ 'ի կոս-
տանդինուպօլիս. և կմ̃ թէ այնպէս ընթերցեալ է նշ̃
'ի յունական օրինակի իւրեանց. * որ̃ և բազում ան-
,, գամ գտանեմք (ասէ), զի գրիչք վկայաբանութեց երկա-
,, քանչիւր լեզուաց (յ̃ յն. և լտ.) այր իւրաքանչիւր
,, ը̃ սովորութե̃ ազգին նշանակեն զօր կատարման սբ̃ց.
,, որ ոչ փոքր վրդովումն արկանէ 'ի պատմական Ճշմար-
,, տութի||. ապա ոչ ինչ են զարմանք, եթէ և 'ի հայս
այլազգ նշանակեցի:

Իսկ զգրեալն 'ի Ճ. Բ. մարտ՝ փոխանակ մայիսի, թէ
չիցէ սխալ գրչի, համարեսջիր յառաջադայեալ 'ի միա-
ցուցանելոյ ը̃ կիւրղի եպսի զկիւրեղ հայրապետ, որ
միաբանաբար ը̃ Հ. Յ. և Լ. դնի 'ի մարտի 18. նոյն-
պէս դնեն և ասորիք. իսկ արաբացիք 'ի մարտի 20. որ̃
և առանձին վկայագիրք ինչ լտ. 'ի մարտի. 11.

ՎԱՐՔ

ՎԱՐՔ ՍՐԲՈՅՆ

Յովհաննու Ե՟ղմի հայրապետին :

Հ. Մարտ. 19 : Յ. մարտ. 30 : (Լ. մարտ. 24. առ Բօլլ. :) Ճառընտ. Օ. ՃՁԷ : Մետափր. առ սուր. ՚ի վարս Եպիփանու ՚ի Մայիսի. 12 : Մենոլոգ. հաշ. Գ. Խէ : Անհէբ. Թղթ : Օգոստինոս. Թղթ : Հերոնիմոս. Թղթ. ԼԶ :

ՏՕՆԵԼԻՆ ՅՈՎՀԱՆՆԷՍ հայրապետ Ե՟ղմի՝ հանդիսացեալ յեկեղեցական պատմութիւնս, է այն՝ որ յաջորդեաց մեծին Կիւրղի Ե՟ղմացւոյ յաթոռ նր՟ • Նմին երի խորհրդով արդեօք զկնի տօնին Կիւրղի ՚ի յաջորդ շաբաթուս եդաւ առ մեզ և տօն սորա • քանզի էր նման նմին երևելի, և զօրաւոր գրով և բանիւ՛ • մինչև ոմանք ՚ի յետնոց զճառս ինչ ՚ի գրոց կոչմանն ընծայութե՟ կամեցան սմա ընծայել : Արդ երանելիս յովհան ՚ի սկզբան անդ էր միայնակեաց • և ապա կարգել՟ ը՟ երիցունս եկեղեցւոյ Ե՟ղմի ՚ի սբ՟յն Կիւրղէ՝ վաստակակից եղև նմին ՚ի բազմադիմի մրրկս վտանգի, որ յերեսաց խառնակութե՟ ժամանակին՝ ՚ի պատճառս արիանոսաց, մակեդոնեանց, և այլոց հերեսիովտաց • Եւ առաւել յաւուրս հալածանաց

նաց և աքսորանաց կիւրղի՝ բազում տառապանս կրեաց և յովհաննէս 'ի չարափառաց բռնացելոց 'ի վր աթոռոյն եէմի ․ որպս և ոչ սակաւ նեղութիս և բամբասանս յուղղափառաց ․ զի 'ի զգուշանալ չհաղորդիլ ընդ գաղտամիտ հերետիկոսս՝ որք ուղղափառ ձևանային, լինէր երբեմն խորշիլ կասկածանօք և 'ի ստոյգ ուղղափառաց ․ վյ և ինքն թուէր կասկածելի յաչս նոցա իբրև օտար յուղղափառութէ ․ մանաւանդ յաչս արևմտեան երիցանց և եպսաց ոմանց եկելոց յարևելս ․ զորս կարծէր յովհան 'ի կողմն նաւատիանոսաց լինել, և նք կարծէին զնա 'ի կողմն արիանոսաց ․ թէպէտև երկաքանչիւր կողմանց կասկածն էր սուտ ։

ԱՅԼ յետ լինելոյ սբյ ժողովոյն կոստանդնուպօլսոյ առ մեծն թէոդոսիւ, բարձաւ 'ի միջոյ այսպիսի երկմտութի ․ և այնուհետև անխտիր հաղորդէին ուղղափառք ը ուղղափառս ․ և ինքն յովհաննէս օր քան զօր փայլեալ բանիւ վրդպութե և անարատ վարուք՝ գովելի գտաւ առ ամենեսին ․ վյ յետ փոխման երանելւոյն կիւրղի ընտրեցաւ իբրև արժանաւոր ժառանգ աթոռոյ եկեղեցւոյն եէմի յամի տն իբր 390, կմ 388 ։

Նա էր յովհաննէս հայրապետ պերճ յատենախօսութե, ազդու 'ի քարոզս ․ ահարկու յանցաւորաց, և գորովական առ զղջաւորս ․ սաստիկ առ ստահակս, և հայրագութ առ հլուս ․ քզի և բարուք էր մեծանձն իբրև զառիւծ, և անձամբ փառացի և շքեղ ․ այլ

առա

տուաւել գիտութ՟բ և առաքինութ՟բ զարդարեալ. մինչև բազմաց կոչել զնա այր սքանչելի, և կիսոց կենդանւոյն սր՟ անուանակոչել:

Նու թէպէտև սովին այսուիկ ստացաւ զոչ սակաւս 'ի յաչաղկոտաց իւր թշնամիս, բայց այս չէր ինչ, եթէ ո՟չ բարեսէր բարոյից չըստանայր և բարեկամս 'ի կասկածելի արանց միտելոց զհետ մոլորութեցն որոգինեայ. մինչև յանձն գլխովին ձգել զնոյն կասկած: Ս՟ն զի յայնմ ժամանակի սկսեալ էր յուզիլ խնդիր 'ի մէջ երևելի արանց վ՟ս վ՟դպութեն որոգինեայ, յասել ոմանց՝ թէ բազմապատիկ մոլորութեց սերմանիք արկեալ կան 'ի գիրս նորա, որպէս թէ ընդունարան լինել աղանդոց արիոսի, մակեդոնի, և այլ ևս չար հերեսիովտաց. և այլոց՝ թէ բանք ն՟ր են մթին, և յուղիղ միտս մարթին ձըգիլ. և կ՟մ թէ ինչ ինչ յայտնի վրիպականք յօտար գրչաց են մուծեալ 'ի մատեանս ն՟ր. ապա թէ ոչ՝ զիա՞րդ էր աւելին այնպիսում առն իմաստնոյ, որ իբրև երկրորդ սողոմոն համբաւեալ լինէր, յայնպիսի ծայրական մոլորութիւս անկանիլ: Օ այս օրինակ խօսէր և յովհան հայրապետ եղ՟մացի, հայեցեալ յայն՝ զի բազում գովութ՟բ յիշատակի որոգինէս յերևելի երևելի վ՟դպաց եղելոց յետ ն՟ր: Դէպ եղև ը՟ այն աւուրս գալ մեծին եպիփանու կիպրացւոյ յեղ՟մ. որում արար ը՟ունելութի մեծ յովհաննէս հայրապետ, և հրաման ետ նմա քարոզել առ ժողովուրդն ըզբանն

բանն այ , զի շահեսցին 'ի նմանէ . քանզի և անուն եպիփանու առաւել ևս սքանչելի էր առ ամենեսին . և էր նշանակ մեծի պատուոյ տալ 'ի սեպհական եկեղեցւոջ իշխանութեն քարոզելոյ եպսի հիւրի : Ի լինել բանից սիրոյ և իմաստութե յառանձնութեն ըն յովհաննէս և ըն եպիփան , յորժամ զրոյցք 'ի մէջ անկան և վս գրոց որոգինեայ , խրատեաց եպիփան զյովհաննէս զգուշ կալ 'ի գովելոյ զորոգինէս , որ է ասէ նախահայր և ծնող աղանդոյն արիոսի և այլոց ժանտ հերեսիովտաց . զի մի՛ ասէ հաւան երևեսցիս վդպութեց նր : Դժուարին թուեցաւ բանս 'ի լսելիս յովհաննու . զի ինքն ազատ էր յայնպիսի մոլար մտաց . վյ և ինքն 'ի դէմս էած եպիփանու , թէ ես առաւել 'ի միտս կասկածոտս եղէ զքէն իբրև զհակամիտելոյ 'ի մոլորութի մարդակերպեայց . այլ խօսեցայ և ոչինչ :

Յետ այսորիկ սկսաւ եպիփան համարձակագոյնս խօսել 'ի քարոզի ընդդէմ որոգինի յառաջիկայութե յովհաննու , և ասաց զայնպիսի բանս՝ որովք թուէր արատ դնել և առաջնորդաց ըն յովհաննու , ո՛չ թէ առ պղերգութե նր զօրանայ որոգինեան վդպուի . յայնժամ յովհաննէս յղեաց զսարկաւագապետն ազդ առնել յունկն եպիփանու , զի կշռեսցէ զբանս իւր , և զգուշութբ բարբառեսցի : Իսկ եպիփան անսաց նմա , և մեղմով վճարեաց զքարոզն . և այնպէս ողջունեալ զյովհաննէս՝ մեկնեցաւ 'ի նմանէ . մինչ զի թէպէտև առ ժամն խաղաղութ̃ի էր 'ի մէջ նց̃, այլ արկեալ էր սերմն գժտութե̃ ։

Իսկ եղեւ 'ի շրջելն Եպիփանու 'ի կողմանս Պաղեստինոյ եւ երկրին ասորւոց՝ օթեւանս կալաւ 'ի վանսն կոչեցեալ օտարաց ․ ուր նստէին յայնժամ ոմանք 'ի լատինացւոց եկելոց յարեւմտից ․ յորս երեւելի էր երանելին Հերոնիմոս դաղմատացի 'ի ստրիդոնայ՝ այր հզօր բանիւ եւ գրով, թարգման ս̃ գրոց եւ վ̃դպ մեծանուն ․ սա թէպէտեւ քահանայ էր, այլ առ պարապելոյ յառանձնութ̃ի իւր եւ յընթերցասիրութ̃ի չկարէր պատաղիլ 'ի սպասաւորութ̃ի այնր եկեղեցւոյ ․ որոյ վ̃ս իսկ զուրկ մնային 'ի պաշտամանց խորհրդոց բնակիչք տեղւոյն ։ Զայս իմացեալ Եպիփանու՝ որ ամենեցուն խնամարկել կամէր հայրաբար եւ արտաքոյ վիճակի իւրոյ, կշտամբեաց զհեզգութ̃ի եղելոցն անդ, թէ զիա՞րդ ոչ փոյթ տանիք խնդրել ձեզ յառաջնորդէ քահանայ զոք ․ ապա ն̃ առաջարկելոյ նց̃ ընտրեաց եւ ձեռնադրեաց զպաւլինիանոս զեղբայրն Հերոնիմոսի նախ սարկաւագ, եւ յետ սակաւուց քահանայ ։

Այս գործ Եպիփանու թէպէտեւ բարի էր, այլ վ̃ս լինելոյ ինքնիշխանաբար՝ առիթ եղեւ մեծի խռովութե̃ ․ զի տեղին էր 'ի մասին վիճակի աթոռոյն եմ̃ի ․ եւ չէր օրէն ումեք առնել ձեռնադրութ̃ի յայլոյ թեմի առանց գիտութե̃ օրինաւոր առաջնորդի ։ Մ̃նյ իբրեւ պատմեցաւ բանս այս յականջս յովհաննու հայրապետի, զայրացաւ յանձն իւր ․ եւս առա-

առա

առաւել՝ զի է̅ բանսարկութ̅ե քսու արանց համարեցաւ 'ի նախատինս իւր զգործն զայն. ուր չարախօսք ասէին , թէ Եպիփան յա̃մի է̅ վայր հարկանէ զՅովհաննէս, մինչև մոլորե̅լ կոչել զնա իբրև որոգինեան , և տալ հրապարակաւ յաղօթս կալ վ̅ր դարձի նո̅ր 'ի մոլորութ̅է . և այլ ևս աւելորդ բանք : Ապա գրեաց նամակ մեղադրանաց առ Եպիփան , յայտ առնելով նմա՝ թէ չէ՛ր քեզ օրէն ը̅դէմ կանոնաց եկեղեցւոյ առնել ձեռնադրութի̃ յիմում վիճակի առանց իմոյ գիտութ̅ե . որպէս և չէր արժան քեզ առ չխօսելոյ իմոյ չարիս զորոգինեայ՝ որոգինեան զիս անուանել , և ո̅պ մոլորեալ համբաւել . և եթէ յայս միտս հաստատեալ կայցես , ծանի՛ր յայտնապ̅ս և գիտացից . զի և ես գրեմ առ առաջնորդս ա̅մ եկեղեցեաց մինչև 'ի Հռովմ՝ որք քաջ ճանաչեն զիմ ողջմտութ̅ի , և դատ արասցեն ը̅ իս և ը̅ քեզ :

Յայնժամ գրեաց Եպիփան պ̃խնի հեզութ̅ե և չքմեղութ̅ե՝ թէ ոչ կարծէի ես զայն վանս օտարաց 'ի համարի քում վիճակի . և հաւատարմացոյց՝ թէ ո՛չ առ հակառակելոյ քեզ , այլ 'ի շինութ̅ի եկեղեցւոյ արարի զայն գործ . սուտ եցոյց և զհամբաւս սերմանեա̅ս 'ի բանսարկուաց : Եւ յետ յորդորելոյ 'ի խաղաղութ̅ի՝ երկրորդեաց զիւր առաջարկութ̅ի վ̅ր խորշելոյ իսպառ յորոգինեան շաւղաց . ապաթէ ոչ՝ չկարեմք առէ ը̅ քեզ հաղորդիլ . և 'ի թի̂ արկեալ զութ մոլորութի̅ս որոգինի 'ի վ̅ր այլևայլ խնդրոյ՝ պահանջեաց չեաց 'ի յովհաննէ տալ ինքեան պ̃խնի, ազդառնելով միանգամայն զգոյշ կալ 'ի հռուփինոսէ և 'ի պալլադիոսէ խոտորելոյն ըդհետ որոգինի ։

Այս գիր եպիփանու եթէ 'ի ձեռս յովհաննու հասանէր, լինէր շահաւոր յոյժ. այլ սակայն հերոնիմոս ջերմ բարուք դիմակաց որոգինեանց և խորհրդակից եպիփանու՝ առեալ 'ի նմանէ զօրինակ նր̃ 'ի նմին իսկ ժամանակի գրութ̃ն, ըս̃ յամի տ̃ն իբր 394. թարգմանեաց 'ի յունէ 'ի լատին. և վաղվաղակի տարածեցաւ 'ի մէջ լատինացւոց պանդխտելոց 'ի պաղեստին և յասորիս, թէ այսպիսի զրոյցք և անցք անցանեն ը̃ եպիփան և ը̃ յովհաննէս. և սկսան հերոնիմեանք կի̃ օտարականք զեպիփան գովել, և զյովհաննէս անարգանել. թող զի չէին այնչափ բարեկամուք ը̃ եէ̃մացիս յաւուրց անտի մեծին կիւրղի, որ ընդ ակամբ հայէր 'ի հերոնիմոս 'ի ձեռնադրեալն 'ի պաւլինոսէ եղելոյ հակառակաթոռ ընդդէմ մելիտոսի անտիոքայ հայրապետի բարեկամին կիւրղի. ոմ̃ և հերոնիմեանք ոչ ուղիղ աչօք ակնարկէին 'ի կիւրեղեանս ։

Եւ մ̃նչ յովհաննէս հայրապետ կասկածելի մտօք ընկալաւ զբանս եպիփանու, և առաւել բորբոքեցաւ ը̃դդէմ հերոնիմոսի քան եպիփանու. և զի հաստատէին բանսարկուք, թէ նա ինքն հերոնիմոս է խրատտու եպիփանու գրել առ̃քել թուղթ այնպիսի իբրև առ հետևօղ որոգինի, մերժեաց զհերոնիմոս առ ժամանակ մի 'ի հաղորդութենէ եկեղեցւոյն Եէմի. և գրեաց առ նա յանդիմանութի՟ն. յուշ արար և զայն, թէ դու նախ զանձն քո արդարացո՛. զի թողե՟լ քո զգիրս կարևորս՝ թարգմանեցեր և զորոգինէս 'ի յունականէ 'ի լատին ։

'Ի յուզիլ այսպիսի երկպառակութեանց 'ի մէջ դասուց ուղղափառաց՝ միջնորդ հաշտութե՟ զանձն ընծայեցոյց արքեղայոս ո՟մն կոմս. բայց ոչինչ օգտեաց երկոցունց կողմանց եկեղեցական իրաւամբք մաքառելոց. զի յովհաննէս տիրաբար իբրև պատրիարգ վարէր ը՟ ոսոխս իւր. իսկ եպիփան և հերոնիմոս 'ի դատ կոչէին զնա 'ի քննել զուղղափառութի՟ն ն՟ր ։ Եւ զի մեծ էր յայնմ ժամանակի անուն թէոփիլոսի աղեքսանդրու հայրապետի, կասկածեալ յովհաննու՝ թէ եպիփան և հերոնիմոս, որք բարեկամութ՟ք էին ը՟ նմա, 'ի կողմն իւրեանց ձգեսցեն զնա, փութացաւ ինքնին իրազեկ առնել զնա, թէ որպէս և զիարդ սկիզբն եղև խռովութե՟ 'ի լուծմանէ թեմական իրաւանց, և առ հետախաղաղ ծածկել զայն 'ի մէջ արկան պատճառք որոգինեան խնդրոց ։ Յայնժամ թէոփիլոս գրեաց յորդոր խրատու առ հերոնիմոս, զի սէր և հպատակութի՟ ընծայեսցէ առ հայրապետն յովհաննէս, և բարձցէ 'ի միջոյ զգայթակղութի՟. և առ յովհաննէս արձակեաց զիսիդորոս քահանայ 'ի յորդոր խաղաղութե՟ ։

Այս իսիդորոս աղեքսանդրացի թէպէտև

էր այր սբ՟ , այլ քանզի և ինքն գովելի համարէր զՈրոգինէս , զգուշացոյց զՅովհան՝ զի մի՛ իսպառ մերժեսցէ զնա · այլ առ՚ի շահել զսիրտ Եպիփանու գրեսցէ տարտամ պինի՝ հերքելով վեր՚ի վերոյ զքանի մի մոլար վարդապետութի՟ս յիշատակեալս յանուն Որոգինի ։ Եւ Յովհաննէս ը՟ խորամտու՟նբ գրեաց բանս պնդամտութ՟ե առ Եպիփան և առ Հերոնիմոս · ուր ինքնին ը՟հանուր վ՟դպութ՟բ քարոզելով զճշմարտութի՝ տղայական ինչ համարէր զմոլորութի՟ս Որոգինի առաջարկեալս ինքեան յԵպիփանէ · և զայն ևս ՚ի վ՟ր էած , թէ գրգռու՟ն սոսխաց իւրոց ոչ է վ՟ն խնդրոյ հաւատոյ , այլ վ՟ն յանդիմանելոյ ն՟ց յիւրմէ ՚ի պատճառս ձեռնադրութ՟ե պաւլինիանոսի ։

Զօրինակ մի այսր պնդամտութ՟ե առեալ տարաւ ը՟ իւր իսիդորոս առ Թէոփիլոս , և զայլ ևս պատճէնս յղեաց Յովհաննէս առ գլխաւոր առաջնորդս արևելեայց և արևմտեայց , որոց առաջի գիտէր մեծանուն լինել զՀերոնիմոս ։ Յայնժամ և Հերոնիմոս գրեաց թուղթ առ Թէոփիլոս և առ այլս՝ արդարացուցանել զանձն իւր , և ցուցանել՝ թէ խեռալն Յովհաննու ը՟դէմ իւրեանց է ՚ի պատճառս Որոգինի , և ոչ վ՟ն ձեռնադրու՟ե եղբօր իւրոյ ։ Այսոցիկ այսպ՟ եղելոյ՝ կէսք իրաւունս տային Յովհաննու , և կէսք Եպիփանու ։ Չերկարել շշնջմանս ՚ի մէջ եկեղեցականաց՝ պամմախիոս բարեկամ Հերոնիմոսի յարևմուտս՝ խնդրեաց գրով առ՚ի նմանէ տեղեկութի՟ւն մ՟ն այսր շփոթութե՟ն, որ տարածեալ է աստ և յարևմուտս ․ զի և աստ կէսք 'ի կողմ՟ն են եպ՟սին Ե՟էմի, և կէսք 'ի կողմ՟ն եպ՟սին կիպրոսի ։ Զայս իբրև լուաւ Հերոնիմոս՝ որոյ և նշանն է առիւծ յանապատի, սրեաց զահաւոր գրիչ իւր ա՟մ համարձակութ՟բ ը՟դէմ յովհաննու, և գրեաց զոր և գրեաց առ պամմախիոս՝ ուղղելով դդէմս բանից առ յովհաննէս ․ ուստի և նամակն այն Հերոնիմոսի երկար՝ կոչեցաւ 'ի յետնոց * գիրք ընդդէմ յովհաննու երուսաղէմացւոյ ||։

Այլ այս գրութի՝ որ գտանի ցարդ թերակատար, որչափ երևի ազդու, նոյնչափ և զկծեցուցիչ գոլով՝ իսկ և իսկ խափանեցաւ և յաւուրս Հերոնիմոսի, և ոչ իսկ յանդ հանաւ 'ի գրչէն ։ Զի 'ի նմին իսկ ժամանակի գրուե՟ն եղև խաղաղութ՟ի 'ի միջի՝ ո՟պ կարծի, միջնորդութ՟բ Թէոփիլոսի՝ որում անսային կողմանքն երկոքին ։ Թո՛ղ զյօդեալն պատմուե՟ի յեպիփանեանց 'ի վարս ս՟բյն եպիփանու, ո՟պ թէ և սքանչելեօք կուրացուցեալ իցէ եպիփան զաչս յովհաննու, և անդրէն սքանչելագործեալ 'ի բանալ զմի յաչաց ն՟ր ․ զոր պա՛րտ է իմանալ այլաբանօրէն վ՟ն խռովութե՟ն և հաշտութե՟ն եղելոյ ը՟ մէջ երկուց ն՟ցս ․ ապա թէ ոչ՝ չմիաբանի այն պատմու՟ի ը՟ թղթակցուե՟ց ն՟ց, և ը՟ բանիցս հանելոց 'ի պատմութե՟ ժամանակիս, ո՟պ և ը՟ առաջիկայ ասելեացս ։

Գրեալ էր յովհաննու հայրապետի և նա-

մակ յարգուէ առ երանելին անաստաս Հռովմայ Հայրապետ՝ արժանաւոր գովութե՟ ը՟ կարգի պատուո՛յ նր՟ , խնդրելով 'ի նմանէ տեղեկութի՟ վս՟ Հռուփինոսի ակու՛իղացւոյ , եթէ արդարանա՞յ , եթէ ոչ , վս՟ թարգմանելոյն 'ի յունական բարբառոյ 'ի լեզու Հռովմայեցի զգիրս որոգինի ։ Եւ անաստաս քահանայապետ իմաստութե՟ ետ պատասխանի անորիշ , թէ դիտաւորուի՟ Հռուփինոսի 'ի թարգմանութէ՟ լինի գովելի , եթէ կամեցեալ իցէ նր՟ յանդիման առնել ամենեցուն զմոլար միտս որոգինի ․ ապա եթէ կամէր ծաւալել 'ի լսելիս ընթերցանելեաց զմոլորութի՟ս , յա՛յտ է թէ չար էր արարն ։ Այլ թէ քանի՛ մեծարանօք և գովուե՟ խօսի անաստաս ը՟ յովհաննու , արժա՛ն է լսել զսկիզբն նամակին ․ զի ասէ ․ * Ապաքէն
,, բարեսէր կամաց է գործդ , զի գովութե՟
,, խօսիս քահանայդ զքահանայէ ․ և արդ
,, յաղագս բազմապատիկ գովեստից՝ զոր
,, յօրինեցեր ճոխաբար զիմոց ինչ արդեանց ,
,, ոպ՟ շնորհակալիք լինիցին քումդ
,, սիրոյ , նոյնպէս և ճահողակի յանկեսցի
,, 'ի մերմէ նու՛աստուէ՟ բան մերով մասամբ
,, պանծացուցիչ՝ լուսափայլուե՟ քումդ սրբուե՟ ,
,, և առաքինուե՟ց՝ զորս յանձին բարձեալ
,, բերես 'ի տր՟ ։ ՝Քանզի արդարև ո՛
,, այրդ գերազանց ամենից , այնչափ արտափայլեալ
,, ծագես պայծառութե՟ գովանի
,, մասանց , զի չի՛ք բան բաւական հաւասարել
,, արդեանց ։ Իսկ որ առ 'ի քէն առ իս

„ մեծապատի՛ւ կոչմունք՝ այնչափ շարժեն
„ զիմ սիրտ , իբրև զի և զոր չեմ բաւական
„ արդեամբք կատարել , ոչ հեղգացայց 'ի
„ նոյնս անդր թևակոխել ։ Նա և այդ 'ի
„ քում զովութե մասին է , զի զիս այնչափ
„ գովեցեր երկնաբերձ վսեմութե տարազու ։
„ Այ զի քոյդ եպսութե կարգ պայծառա-
„ փայլ՝ զօդցես իմն ճաճանչեալ ը բազում
„ Ես , (կա՛մ ը այլ օրինակաց , ը ամ Ես ,)
„ և առ մեզ ձգտեցոյց զնշոյլս ճառագայ-
„ թիցն||, այլովքն հանդերձ ։ Այս նամակ
պանծալի գրեալ յամի տն իբր 400 , կամ 401 , գտանի 'ի Գ․ հատորն ժողովոյ․ եջ․ 943․ և նոյն այն է՝ զոր 'ի վկայութի առնու սբն Հերոնիմոս 'ի Գ գիրսն ընդդէմ Հռուփինոսի ։ Ուստի փոքր 'ի շատէ ունելին իմաստասիրել վերծանօղք բանիցս , թէ թէպէտև այնպիսի բանակռուութիւնք անցին 'ի ժմկին , այլ ոչ արատաւորեցաւ իւիք անուն սրբութե յովհաննու , ո՛չ և ոչ եպիփանու կա՛մ հերոնիմոսի ․ այլ եթէ չլինէր այսպիսի գժտութի առ ժամանակ մի , կա՛ր առաւել լուսափայլեր օրինակ վարուց նց առ ամենեսին ։

Այլ դու տես ինձ զդառնութի ժամանակին , զի ընդ լինել հաշտութե ը յովհան և ը եպիփան՝ գործակցութբ թէոփիլոսի աղեքսանդրացւոյ , յորոյ սատանայ նոյնպիսի առթի՛ւ որոգայթեան կռուոյ մեծ ևս խռովութի 'ի մէջ յովհաննու ոսկեբերանի տիեզերալոյս վարդապետի՝ որ մերթ սիրելին էր յովհաննու Երմացւոյ , և 'ի մէջ թէոփիլո-

սի

թի աղեքսանդրացւոյ՝ որ սիրելին էր եպիփանու. մինչ զի և սբ՟ն եպիփան՝ որ հաղիւ զերծ կացոյց զանձն 'ի գժտուէ՟ ը՟ յովհաննու եէմ՟ացւոյ, հաղիւ յելս կենաց իւրոց զերծաւ 'ի գժտութէ՟ ը՟ ոսկեբերանի. և թէոփիլոս՝ որ յառաջն բարեկամութ՟ էր ը՟ յովհաննու եէմ՟ացւոյ՝ թշնամացաւ ը՟ նմա առ թշնամութեն՟ իւրոյ ը՟ ոսկեբերանի: Իսկ պատճառք իրացս այն եղեն, զի իսիդորոս աղեքսանդրացի՝ զոր վերագոյնդ յիշատակեցաք, 'ի դառնալ իւրում յեէմ՟է յաղեքսանդրիա՝ ստէպ գովէր պարզմտութ՟ զորոգինէս և զգովիչս նորա իբրև այր իմաստուն և ողջամիտ. և զի թէոփիլոս ոգւով չափ ընդդէմ էր որոգինի, ոչ խնայեաց և յիսիդորոս՝ որ էր իւր սիրելի, այլ դատապարտեաց զնա յառանձին ժողովի իւրում յամի տն՟ 400. և հալածեաց զբազումս 'ի միայնակեցաց եգիպտոսի՝ որք յարե՟լ էին յիսիդորոս. քանզի և նա էր այր ճգնաւոր և կատարեալ միայնակեաց՝ հանդարտեալ զբազում ժամանակս 'ի լերինն նիտրիոյ և 'ի կողմանս պաղեստինոյ: Յայնժամ փախեաւ իսիդորոս հանդերձ երեսուն միայնակեցօք՝ զորոց ընդհետ մտե՟լ էին թէոփիլեանք եթէ իրաւացի և եթէ անիրաւ հալածանօք, և անկաւ 'ի կոստանդնուպօլիս առ մեծահռչակ պատրիարգ տեղւոյն՝ որ և յովհան ոսկեբերան. և յայտ արար՝ թէ զիարդ 'ի պատճառս սուտ խնդրոց յանուն որոգինեայ հարստահարութ՟ի կրեաց ինքն և իւրքն ամ՟ 'ի թէոփիլլոսէ ։ Եւ յընդունել զնա՟ ոսկեբերանին բազում մարդասիրութբ՟՝ արկաւ հիմն խռովութե՟ մեծի ․ որպ՟ է տեսանել ՚ի վարս ոսկեբերանի ․ մինչև մեռաւ իսիդորոս ՚ի կոստանդինուպօլիս յամի 403 ․ և ոսկեբերան ընկեցաւ յաթոռոյ՝ յամի ․ 404 ․ և աքսորեալ միանգամ և երկիցս՝ վախճանեցաւ յարտասահմանութե՟ ։

Եւ յայս ժմ՟անցս յովհան հայրապետ եջ՟մ հաստատուն պահեաց զբարեկամութ՟ի իւր ը՟ ոսկեբերանին , և զերծ կացոյց զանձն ՚ի համախոհուէ՟ թէոփիլեանց ։ Սոյ և ՚ի վերջին աքսորանս իւր սբ՟ ոսկեբերանն գրեաց թուղթ սիրոյ ՚ի կոկիսոնէ հայոց առ երանելին յովհան հայրապետ եջ՟մացի ․ որոյ ըսկիզբն է ․ * Արտասահմանեալ եղաք ՚ի կո-
,, կիսոն , այլ ոչ տարագիր ՚ի սիրոյ ձերմէ ․
,, զի այն յայլոց ձեռս էր , այլ այս ՚ի մեզ
,, իսկ գլխովին ‖ ․ և յետ գովելոյ զփոյթ նր՟ վն՟ անարատ պահելոյ զանձն ՚ի գործակցութե՟ խռովեցուցչաց եկեղեցւոյ՝ վկայէ զարթուն հսկողուէ՟ նր՟ ՚ի վր՟ հօտին ․ և ՚ի նոյն յորդորել՝ զայսօրինակ կնքէ զբանն ․ * Եւ
,, զմեզ՝ որ մեծապէս սիրեմք զքոյին բարե-
,, պաշտութի՟դ , և կախեալ կամք զքո բա-
,, րեսէր առաջարկութէ՟դ , անմոռաց յիշես-
,, ցես ․ քանզի դիտակ իսկ եմք , թէ որչափ
,, սէր ցուցեալ է ձեր ՚ի վր՟ մեր՝ յարդեանց
,, գործոցն հաւատարմացեալ ‖ ։

՚Ի նմին ամի՝ յորում էառ երանելին յովհան զայս գիր յոսկեբերանէ , առաջիկայ գտաւ հանդիսի Թաղման՝ որբուհւոյն պաւղայի հռովմայեցւոյ, որ վախճանեցաւ յեհէմ : Զայնու ժամանակաւ և յեօթն կաղանդից յունվարի փոխադրեաց զմարմին սբյն ստեփաննոսի նախավկային 'ի սբն սիոն զյայտնեալն սքանչելեօք (զորմէ ունիմք ասել 'ի տօնի նր). արար և զայլ բարեկարգութիս 'ի շինութի եկեղեցւոյ . գրեաց և զանազան Թուղթս լի իմաստութբ յարեւելս և յարեւմուտս . որոց պատճէնք չերևին 'ի միջի , այլ միայն յիշատակութի 'ի բանս այլոց . ոպ և յերանելւոյն իննովկենտիոսէ հռովմայ հայրապետէ ընկալաւ գիր վն խնամ տանելոյ արևմտեայց պանդխտելոց 'ի պաղեստին :

Ունէր երանելին յովհաննէս սերտ ընտանութի և ը մեծին օգոստինոսի ափրիկեցւոյ սբ եպսին հիպպոնայ՝ մտերիմ բարեկամին հերոնիմոսի . նմին իրի և օգոստինոս 'ի գիրսըն ըդէմ պետիղիանոսի աղանդաւորի այսպէս վկայէ . * Բայց արդ՝ եթէ ամենեքին
,, ը ամ ջ այնպիսի լինէին , որպ ընդ վայր
,, զրպարտես , զի արար քեզ աթոռն հռով-
,, մայ , յորում պետրոս նստաւ , և այսօր ա-
,, նաստասիոս նստի . կամ աթոռն եկեղեց-
,, ւոյն եղէմի , յորում յակոբոս նստաւ , և
,, այսօր յովհաննէս նստի . ընդ որս մեք կա-
,, Թողիկէ միութբ շաղկապեալ եմք . և դուք
,, անձամբ զանձինս քակտեալ որոշեցիք չա-
,, րաչար մոլեգնութբ || :

Զայսոսիկ գրէր օգոստինոս յամի տն իբր 400 կմ 401 . այլ յետ ամաց ինչ ևս բ զևս ընտանեցաւ ը՟ յովհաննու 'ի հերքել միաբան զմոլորութիւնս պեղագեանց ։ Քանզի յայն աւուրս 'ի վեր երեւեցաւ ժանտն պեղագիոս բրիտանացի՝ սուտ միայնակեաց , որ սկսաւ քարոզել նորանոր աղանդս ը՟դէմ շնորհացն այ՟ , ընդդէմ սկզբնական մեղաց , եւ այլ բազում իրաց . մինչեւ աշակերտել զբազումս յարեւմտեայց յաղանդ իւր , յորոց միջի առաւել գտաւ կեղեստիոս ոմն՝ չար քան ըզվ՟դպ իւր ։ 'Ի բազմանալ պեղագեանց՝ եւ գնաց պեղագիոս եւ յափրիկէ . եւ անտի դիմեաց 'ի պաղեստին՝ աշակերտել եւ զբնակիչս տեղւոյն սուտ ձեւով միակեցական խստակրօնութե՟՝ քանի մի գործակցօք հանդերձ ։ Եւ մատուցեալ կեղծաւորու՟բ առ հայրապետն յովհաննէս՝ ձեւացոյց զանձն իբրեւ այր մենացեալ եւ մեռեալ յշ՟է , եւ եկեալ 'ի շրջիլ յուխտս եւ 'ի վանորայս . որով բազում պատիւ եւ սէր եգիտ առ ժամն 'ի հայրապետէն ։ Յետ սակաւուց եկն յարեւմտից յե՟ղմ եւ որոգիոս երէց կաղաղոնացի՝ առաքեալ յօգոստինոսէ առ հերոնիմոս . եւ հանդիպեալ նախ յողջոյն հայրապետին յովհաննու՝ հրամանաւ նր՟ գնաց բնակել 'ի վանս հերոնիմոսի 'ի բեթղեհէմ . արդ 'ի լինել բանից 'ի մ՟ջ պեղագիոսի՝ իմացաւ յովհաննէս ստուգութ՟ յորոգիոսէ եւ յայլոց , թէ պեղագիոս նենգանօք եկեալ է անդր 'ի սերմանել զորոմն իւր ։

Յայնժամ արար երանելին յովհաննէս ժողով քանի մի եպ՟սաց յե՟ղմ յամի տն՟ . 415 . յե՟ղ

ամ

ամսեանն յուլիսի ․ և կոչեալ յատեան զպեղագիոս՝ եարկ ը՟ քննութ՟բ զվ՟դպու՟ն և ըզմիտս ն՟ր ․ և ՚ի վ՟ր հասեալ՝ թէ նա համարի կարող լինել մարդոյ կատարեալ լինել ա՟մ առաքինու՟ք ՚ի ձեռն բնատուր անձնիշխանու՟ե ևեթ՝ առանց կարօտելոյ առանձինն օգնականութ՟ե շնորհացն ա՟յ , կշտամբեաց զնա ս՟բ հայրապետն բանիւ՟ առաքելոյն ․ զի որ ասացն (ասէ) , առաւել քան զամենեսին զն՟ս վաստակեցի , ՚ի վ՟ր եած , այլ ո՛չ եթէ ես , այլ՝ շնորհն ա՟յ , որ ը՟ իս ․ յաւել և զայլ բանս ՚ի գրոց ս՟ց և ՚ի հարցն վ՟դպու՟է ․ որովք խայտառ կարկեցաւ պեղագիոս ․ և խիթացեալ՝ թէ յընդդէմ դառնալն՝ վճիռ ընկալցի դատապարտութ՟ե , կեղծաւորեցաւ ը՟ունել զճշմարտութի՟ն ․ և այնպէս զերծոյց զանձն առ ժամանակ մի ։

Այլ քանզի տակաւին դոյր կասկած ՚ի վ՟ր ն՟ր , և օր քան զօր յաճախէին դատախազք ն՟ր , եղև զկնի և այլ ժողով հնդետասան եպ՟սաց հանդերձ ը՟մ երիցամբք ՚ի դիոսպօլիս քաղաքի , այն է լիդիա ․ ուր չոքաւ և յովհան հայրապետ ։ Անդ ՚ի մէջ մատուցին զա՟մ գլուխս մոլորութ՟եց պեղագիոսի և աշակերտի ն՟ր կեղեստիոսի դատախազքն ․ և ՚ի հարցանել եպ՟սաց զպեղագիոս վ՟ս միոյ միոյ ՚ի գլխոց անտի , նա աղուէսաբարոյ խորամանկութ՟բ ցրեաց զա՟մ ․ զի ասէր , թէ չի՛ք իմ ուրացեալ զշնորհս ․ որով իմանայր զձիրս բնութ՟ե , այլ ոչ իշխէր ասել զմիտս իւր յատենի ․ նոյնպէս ժխտեաց և զայլ մոլար

վ՟դպմջպուհիս . և որ ասէ զայդպիսիս՝ նզովեալ լիցի ասէ . մինչև հարկ համարել ժողովոյն արձակել զնա իբրև անպարտ ։ Յայնժամ պատմեաց յովհաննէս հայրապետ և զիւր ժողովական անցս . 'ի յանդիմանել իմում ասէ զայրդ վ՟ այդպիսի մոլորութեց , նա յանձն էառ նզովիւք չափ հերքել զնոսին . և ես յայն սակս թողի զնա անպատիժ ։ Յայս միտս հաստատել և ժողովոյն՝ մերժել մերժեցին զմոլորութիս ընծայեալս պեղագիոսի , և զնա արձակեցին ։

Մինչ այս մինչ այն՝ լուեալ սբյն օգոստինոսի , թէ պեղագիոս կեղծուպատիր հնարիւք սիրելի ընծայէ զանձն յաչս այնոցիկ՝ որ ոչն են գիտակ հանդամանաց անձին և գրոցն իր , գրեաց նամակ սիրոյ և զգուշութե առ երանելին յովհաննէս յամի տն իբր 416 , բականելով օրինակ զայս . * Բազմերանեան
„ տն և արժանապատիւ եղբօր և եպսակցի
„ յովհաննու 'ի տր խնդալ ։ Վ՟ չլինելոյ
„ իմոյ արժանի ընդունել զգիր սրբութե քո ,
„ ինչ ոչ իշխեմ դժկամակ լինել ‖ . և որ 'ի
կարգին ։ Այլ յետ այդ առնելոյ չտալ տեղի նենգամիտ անձին և երկխօս լեզուի պեղագիոսի՝ 'ի վ՟ բերէ . * Յորժամ լսէք (ա-
„ սէ) 'ի նմանէ , զի խոստովան լինի զշնորհս
„ և զօգնականութին այ , համարիք՝ թէ նա
„ զայն ինչ ասէ , զոր և դուքդ ասէք՝ որք եք
„ ուղղափառ կանոնի դաւանիք (այ զգեր-
„ բնական շնորհս՝ որ յարդարեանցն քի) . վ՟
„ զի ոչ գիտէք՝ թէ զինչ ինչ գրեալ կայցէ
„ 'ի

,, ՚ի գիրս նր̃ ։ Սմին իրի զնորին իսկ զգիրս
,, յղեցի առ ձեզ․ ոպ̃ և զիմն՝ որով արարի
,, նմա պատասխանի․ յորմէ յայտնապէս իմասցի
,, յարգուն̆ի ձեր, թէ զօրպիսի շնորհս
,, կի̃ զօգնականուն̆ այ̃ ասիցէ՝ երբ ՚ի դէմս
,, ոք ածէ նմա զհակառակիլն իւր ը̃դէմ շնորհացն
,, այ̃ և օգնականուե̃․ և ևս ցուցջի՛ք
,, նմա ուսուցանելով և խրատելով, և
,, վ̃ս փրկուե̃ նր̃՝ որ քն̃ի՛ ևեթ մարթի լինել՝
,, ազօթս առնելով, զի զայն շնորհս այ̃
,, խոստովանեսցի, զոր գիտեմք դաւանեալ
,, ՚ի սբ̃ցն այ̃ ‖ ․ և այլն ։ Ընդ հասանել այսր
նամակի ՚ի ձեռս յովհաննու, կի̃ մինչև իսկ
էր ժամանեալ, խոյս ետ պեղագիոս ՚ի վիճակէն
յովհաննու, զգացեալ՝ թէ զի՛նչ անցք
անցանելոց էին ը̃նա ։

Իսկ երանելին յովհաննէս յա̃մի անարատ պահեալ զհօտ իւր յայնպիսի և յայլ խոտորաձայն վ̃պուե̃ց, և հասեալ ՚ի բարւոք ծերութե̃ի՝ հանգեաւ սրբութ̃բ և խաղաղութ̃բ ՚ի քս̃ յամի տն̃ 417 ․ ՚ի յունվարի ․ 21 ։ Այն ամ առաջինն էր զոսիմոսի հռովմայ հայրապետի․ որ և պատուո̂վ սրբուե̃ յիշատակէ զայն ինչ մախձանեալն զյովհաննէս ՚ի թուղթն առ ափրիկեցիս վասն պեղագիոսի՝ յասելն․ Եղբ․ Ե̄ ․ ՚է Ե̄ հատ․ ծող ․ էջ․ 353 ․ * Ահա-
,, ւադիկ ընկալարք զթուղթ պրայիլոսի ե-
,, պիսկոպոսին եր̃մի, որ ՚ի տեղի սբ̃յն յով-
,, հաննու երբեմն եպ̃սի ձեռնադրեցաւ ե-
,, պիսկոպոս ‖ ։ Իսկ թէոդորետոս պատմիչ
մերձաւոր ժամանակաւ, որ̃պ յառաջագոյն

գրեալն էր ․ ՚ի Ե ․ գիրս ․ գլ․ 35 ․ թէ, * զերուսաղէմացւոց եկեղեցւոյն զառաջնոր-
,, դութի ունէր յովհաննէս այր սքանչելա-
,, հրաշ յաջորդն կիւրղի ||, նոյնպէս և զկնի
՚ի գլ․ 38 ․ ասէ ․ * Իսկ յեէմ զկնի սքանչել-
,, ւոյն յովհաննու կալաւ զառաջնորդութի
,, այնր եկեղեցւոյ պրայլլիոս ||։

Պանծալի ևս է վկայութի օգոստինոսի , որ յաւուրս փոխմանն յովհաննու հայրապետի կմ քանի մի ամօք յետ վախճանի նր գրեաց զայն ընդարձակ նամակ առ աւրելիոս եպս ափրիկեցւոց , այն է գիրքն յաղագս գործոց պեղագիոսի ․ ուր ասէ ․ * Կարի իրաւամբք՝
,, ո՛չ և գործք ժողովոյն ցուցանեն , սովին
,, վկայութք (առաքելոյն) վարեցաւ և սբն
,, յովհաննէս հայրապետ եկեղեցւոյն եէմ․
,, քանզի իբրև հարցաւ , թէ զի՞նչ ինչ անցք
,, անցեալ իցեն առ նովաւ (յեէմ) յառաջ
,, քան զատեան ժողովոյն (դիոսպօլսոյ) ,
,, պատմեաց նա ինքն եպսաց մերոց նստելոց
,, ըն նմա յատենի անդ ․ Ի՝ քրթմնջել ասէ
,, ոմանց և յասել զպեղագիոսէ , եթէ ասա-
,, ցեալ է նր , կարող է մարդն կատարեալ
,, լինել , այ է՝ որպ յառաջն էր ասացեալ ,
,, կարող է լինել մարդ՝ առանց մեղաց , կըշ-
,, տամբեցի ասէ զնա վն այսր բանի՝ ածել
,, ՚ի վր , թէ՝ և առաքեալն պօղոս բազում
,, վաստակեաց , բայց ո՛չ իւրով զօրութք ,
,, այլ շնորհօքն այ ․ ո՛չ և ասէ , առաւել ք
,, զամենեսին զնո վաստակեցի , այլ ո՛չ եթէ
,, ես , այլ շնորհքն այ որ ըն իս ․ և դարձել՝
,, ո՛չ

,, ո՛չ ե̅թ այնմ ինչ է՝ որ կամիցին , և ոչ ե̅թ այնմ որ ընթանայցէ , այլ ե̅թ ա̅յ՝ որ ողորմի . և զայն թէ՝ եթէ ոչ տ̅ր շինէ զտունն , 'ի նանիր վաստակեն շինօղք ն̅ր . և զայլ ինչ բ̅զ̅մ այսպիսի աստացաք ասէ՝ 'ի ս̅բ գրոց ||:

Նաև զի՞նչ մեծ քան զայս , զի մեծն օգոստինոս՝ որ իսպառ ջաղխեաց զգլուխ պեղագեան աղանդոյն , իբրև առաջնորդ բանից իւրոց ունիցի զյովհաննէս հայրապետ՝ մ̅ծ յաջողակ շարժելոյ ն̅ր ը̅դ̅էմ պեղագիոսի զգէնս ս̅բ գրոց . մինչև կրկին ևս երկրորդել օգոստինոսի 'ի նոյն գիրս զնոյնպիսի բանս , ասելով . * վերագոյնդ 'ի պատմութե̅ ,, ս̅բյն յովհաննու եպ̅սին՝ զայսօրինակ յիշատակեցաւ ||, այլովքն հանդերձ . և Ճոխագոյն ևս յիշեցուցանէ զնոյն 'ի գիրսն յաղագս ներկայութե̅ն ա̅յ , որ է թուղթ . ՃՁԷ . առ պաւլինոս , յո̅րմ գովութե̅բ ե̅թ արժանւոյն մեծարելով զերանելին յովհաննէս :(1)

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ :

(1) Որպէս տեսանես , բովանդակ վարք յովհաննու հայրապետիս յածի զեկեղեցական պատմութե̅ք . վ̅ղ 'ի նոցունց քաղեցաք՝ զոր և գրեցաք , հանդերձ վաւերական վկայութե̅ նամակաց եպ̅սաց ժմ̅կին . ուր և զայն քաջ 'ի միտ առնուս , թէ քանի՞ դժուարին է յալեկոծութե̅ պինդ ունել զղեկ . և թէ չէ ինչ ծփիլ , միայն թէ 'ի նաւահանգիստն խաղաղութե̅ ոք ելանիցէ և հանցէ զորս 'ի նաւին . և ահա զայս լինել տեսաք 'ի վ̅ր սքանչելւոյն յովհաննու :

Մնայ մեզ խաղաղել զվայրապար ծուփս ոմանց 'ի յետին

տին մատենագրաց , մանաւանդ բոլլանդեանց · որոց ակնարկեալ միայն 'ի վկայուն հերոնիմոսի և 'ի գրչի վարուց եպիփանու՝ որ ը՟ ակամբ հայէին երբեմն առ յովհաննէս հայրապետ , օտարանան 'ի սբ՟ եղիսէս , և զայլ ոք փոխանակ նր՟ տօնելի գոլ գուշակեն · այլ 'ի զուր · զի յայսմ մասին ոչ կարէ վկայութն սբ՟յն հերոնիմոսի զօրանալ քան զվկայութիս այլոց հարց սբ՟ց , զորս տեսաք · ոմ՟ և լեքէն նոր մատենագիր խօսելով զսմին յովհաննէ 'ի կարգս պատրիարգաց եճմ՝ ասէ · * Սբ՟ն օգոստինոս , սբ՟ն պաւղինոս նողայեցի , անաստաս և զօսիմոս քահանայապետք հռովմայ , ոսկէբերան , թէոդորետոս , և իդակիոս՝ պատուով մեծարանաց խօսին զնմանէ ||: Իսկ գրիչ վարուց եպիփանու ոչինչ ազդէ մեզ յայսմ մասին · տեսցուք 'ի վարս նր՝ թէ գտնէ ը՟ այլ բանից արժանահաւատ դատիցի առ քննիչս :

Զայսոսիկ եդեալ՝ մեք ոչինչ զարմանամք , թէ 'ի Յ· 'ի մարտի 30 կմ՟ 26· ուր գնի * Յիշատակ սբ՟յ հօրն մերոյ յովհաննու հայրապետին եճմ || , ոչ գրի վարք ինչ կմ՟ պատմուն զնմանէ · բայց միայն 'ի ձեռագիր օրինակս ինչ ասի · * հանգեաւ խաղաղութբ՟ || : Վասն զի չգոյր 'ի միջի այլ պատմական բան՝ բաց 'ի յիշատակարանաց եկեղեցական պատմութեց և 'ի թղթոց եպիսկոպոսաց · զորս անմարթ է 'ի համառօտագրուե յայսմաւուրայ բովանդակել : Եւ ոչ իսկ արժան էր ը՟ Հ· փոխադրել 'ի տեղի վարուց յովհաննու զանստոյգ կմ՟ զսուտ կուրութն և զլուսաւորութն նր՝ հանելով 'ի կեղակարծ վարուց եպիփանու · զի այնու ոչ յայտնի լինի վարք նր , այլ մանաւանդ անյայտանայ · և դուցէ այսպիսի իրօք շփոթեցան և բոլլանդեանք · և հնարեցան գտանել զայլ ոք յովհաննէս հայրապետ եճմ · և արդարև գոյին բազումս նովին անուամբ , այլ ոչ գոյին սբ՟ անուամբ · վն՟ և զուրկ գտան 'ի տօնելի սբ՟յս : Մինչև իշխեցին նորահնար և իբր հաւանական դատմամբ կարծիս առաջի դնել , թէ դուցէ յովհաննէս հայրապետ տօնեալն 'ի յունաց , ոմ՟ և յիշատակեալն 'ի մասնաւոր վկայագիրս լատինացւոց · 'ի մարտի · 24 · կմ՟ 30 · (զի ոչ գիտեն ինչ մի զհայոց) , իցէ քառասուն և իններորդն 'ի կարգս եղիսաց եճմ , զոր 'ի վեցերորդ դարու նստոյց անաստաս կայսր՝ վն՟ խոստանալոյ նր՟ ը՟դէմ կալ չորրորդ ժողովյն · այլ յետոյ յաւուրս յուստինոսի կայսեր հաւան գտաւ նոյն ժողովոյ բանիւ սբյն սաբայի աբբայի և Թէոդոսի արքիմանդրիտայ. ուր յայտ է թէ չիք վկայութի սրբուե̃, այլև կասկած կեղծաւորուե̃ : Իսկ ը̃ հակառակն՝ ըղմերժէ տօնելի հայրապետէն, զսքանչելւոյն ասեմ յովհաննէ նաև հակառակորդ կարծեցեալ գրիչն վարուց եպիփանու՝ այսպէս վկայէ առ սուրիոսի. * Իսկ յով- ,, հաննէս պատուհասեալ և խրատեալ յառնէ արդա- ,, րոյ (յեպիփանէ՝) եղև սբ̃ յո̃մի ||: ՚Ի նոյն աղբերէ առեալ է և գրեալն ՚ի Ճ. Ջ. * Իսկ յովհաննէս խրա- ,, տեալ և յանդիմանեալ յարդարոյն յայնմանէ՝ եղև ,, յայնմհետէ այր սբ̃ և ողորմած յոյժ. և արարեալ ,, բազում ճառս ողորմութե̃, և հանգեաւ բարի վա- ,, րուք ||: որպ̃ և ՚ի Հ. * Եւ այնպէս խրատեալ յով- ,, հաննէս յեպիփանու՝ եղև այր սբ̃ և ընտիր, զգաս- ,, տացեալ ՚ի փառս ա̃յ: Եւ արար բազում ողորմու- ,, Թիս. և հասեալ ՚ի բարիոք ծերութե̃՝ խաղաղուե̃ ,, հանգեաւ ՚ի քս̃. և եդաւ պատուով յեկմ̃ ՚ի կար- ,, գի սբ̃ հայրապետացն ||:

Արդ եթէ և ՚ի գրութե̃ հակառակ կողմանն յովհաննու այսպիսի վկայութի̃ ընծայի վերջին սրբութե̃ նր̃ յո̃մի, զի՞նչ այլ խնդրի. զի վախճանն պսակէ զգործ. Իսկ զայլմէ յովհաննէ ումեքէ եէ̃մայեւոյ չիք և ոչ մի վկայութի : Անտի յայտ է, թէ վայրապար յերկբայս եղեալ և ոմանց ՚ի լեհացւոց՝ անցուցին ՚ի տօնացոյց իւրեանց, որպ̃ տեսանեմք ՚ի նոր ձեռագիրս ինչ, փոխանակ յովհաննու եէ̃մի հայրապետի՝ զայլ ոմն յովհաննէս եպս̃ և զյակոբ քահանայ զյիշատակեալսն ՚ի Լ. նոյեմբ. I. և այլք ՚ի նոյնպիսի գրչաց յետնոց եդին ը̃ յովհաննու եէ̃մի հայրապետի և զանուն աբդիւ կի̃ աբդիշու եպ̃սի, չփոթելով ը̃ գրեալսն ՚ի Հ. նոյեմբ. II. ուր կայ յիշատակ յովհաննու ողորմածին աղեքսանդրացւոյ (որ ասի որդի եպիփանու ուրումն) ընդ աբդիւ մարգարէին : Այլ չէ արժան խօսել ը̃ այսպիսի ինքնաձեռնադրելի անձինս, որք առանց հմտութե̃ ձեռներէց լինին այլայլել զհարազատ աւանդս նախնեաց :

Թող զի և ոմանք յիմաստակաց առ մեօք՝ կամեցան իմանալ յայսմ միջոցի այցից անուամբ յովհաննու զոսկեբերանն որպ̃ կրկին տօնեալ, կի̃ զիմաստասէրն ՚ի կարգէ յիշատակելեաց ՚ի Թիւս տօնելեաց մերածեալ. և այլ ևս մտահաճոյ կարծիք՝ առ չգիտելոյ զատոյգ պատմութի̃ վարուց յովհաննու եէ̃մացւոյ :

ծանիր և զայս ինչ կարևոր , զի 'ի հին և յերկաթագիր ճաշոցի մերում դնի աստանոր 'ի Գ շաբաթուս աղցից · * Մարտի ամսոյ' որ օր ԺԹ , յիշատակ է յովհան-
,, նու երմացւոյ : Սաղմոս · ՃԺԵ · կցուրդ · Պատուական
,, է առաջի տն : Պօղ · առաք · 'ի տիմոթ · Զայս վկայուն
,, դնեմ առաջի այ · · · · որ սիրեցին զյայտնութն նորա :
,, Աւետ · Ժ · յովհ · Ես եմ հովիւն քաջ · · · · և եղիցին մի
,, հօտ և մի հովիւ || : Ոչ և 'ի հին տօնացուցս գրի ·
* Հաք · յովհաննու երմի հայրապետի · հ · գձ · Որ զան-
,, չափ քո : Եւ այլ ծմ կարգ զկիւրղի տամ || : Եւ սակայն յետին օրինակագիրք հայելով 'ի սուտ պատմութ կուրանալոյ յովհաննու ոչ թէ առ արծաթսիրութն' կարի տխմարութն 'ի բաց բարձեալ զհին ընթերցուածս յանկաւորս սբյ հայրապետի' կարգեալ են զայլ նոր ընթերցուածս վս արծաթսիրութն և կուրութն · 'ի գրոցն առակ · ի · 6=22 : բարուք · Գ · 21=24 : Բ · կոր · Գ · 1 11 : և յհ · Թ · 36 · Եւ առէ յն · 'ի դատաստան եկի , ևն · որ է ամենևին անվայել սբյն · վս արժան է փոխել զայսոսիկ նորամուտ հնարս , և պահել զնախնեացն կարգաւորութի :

ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Սր̃ց Քառասնից, որք 'ի սեբաստիա կատարեցան ։

Տ. Յ. Լ. մարտ. 9 ։ Ասսեմանու 'ի Ճառընտ. Ա. չճ̅ը ։ Բ. շխ̅է ։ Գ. ռծ̅էէ ։ Դ. յխ̅է ։ Սր̅ն Բարսեղ 'ի ճառն խ̅ից. հտ. ե̅. եր. 149 ։ Սր̅ն Գրիգոր Նիւսա. ։ Սր̅ն Եփրեմ ։ Բոլլանդեանք Հենսքէն. և Բաբեպր. ե̅. հատ. մարտի. էջ. 12 = 19 ։ Ս̀եպտէր. տա Լեպոմանուն և սուրիուն. ժա̅ ։ (1) ։

ԼՈՒՍԱՊՍԱԿ ՔԱՋնահատակք և յաղթօղ զօրականք երկնաւոր զօրապետին՝ Քառասունն̃ք Ս̀անկունք, ո̃ր ժիրաժիր երիտասարդք (2), էին 'ի ժամանակս թագաւորութե̃ լիկիանոսի կ̃մ լիկինեսի կայսեր, որ քեռայրն էր մեծին կոստանդիանոսի և գահակից նորուն, առ. հասարակ հաւատով քրիստոնեայք, և հայրենեօք յաշխարհէն կապադովկացւոց և փոքուն հայոց, ո̃ր 'ի սահմանաց անտի կեսարիոյ, սեբաստիոյ և եւդոկիոյ, պատանիք և երիտասարդք առոյգահասակք, գեղադիտակք և քաջալանջք, արութ̃բ երևելիք ։ Ս̃ոյ և զօրագլուխք հռովմայեցւոց գրեցին

զն̃ս

զնմա ընտրանաւ 'ի զինուորութիւն արքունի 'ի գունդն գամրաց , դասեալ 'ի կարգ լէգէոնագնդին' որ նստէր 'ի կապադովկիա , և ը՟ գնդաց գնդաց սփռէր 'ի պահպանութիւն արևելակողմանց : Եւ զի էին քառասունքս այս ազատորդիք և ազատաբարոյք , միանգամայն և առաքինի քաջութ՟բ պանծալիք , ևս քան զևս գտան յառաջադէմ քան զայլ զինուորակիցս , պատուեալք յաչս զօրագլխաց , և փառաւորեալք առաջի ինքնակալաց վ՟ս մեծամեծ գործոց իւրեանց յայլ և այլ պատերազմունս . և որ մեծն է' միակամ և միասիրտ էին այր ը՟ եղբօր իւրում' զօդեալ ք՟սական հաւատով և սիրով , նախանձելի երևելով նիզակակցաց իւրեանց' որ 'ի հեթանոսաց անտի :

Պատմէ գրիգոր նիւսացին , թէ 'ի գնալ սոցա երբեմն 'ի պատերազմ ը՟դէմ բարբարոսաց արքունի հրամանաւ ը՟ կայսերական գնդին' եղեն երևելի սքանչելիք . (զոր և յայլում գնդի քրիստոնէից առ առաջին ինքնակալօք աւանդեն լինել այլք .) իբր զի բանակն կայսեր պաշարեցաւ 'ի թշնամեաց յանձուկ վայրի ուրեք . և էին յառաւել նեղութե՟ յերեսաց ծարաւոյ , զի անջրդի էր վայրն , և մերձակայ հեղեղատք ցամաքեալք : Այն ինչ զօրն ամ՟ կայր 'ի վարանս , և քաղէին ոգիք ն՟ց' կթուցեալք և տարժանեալք , յայնժամ քառասունքն փոքր ինչ մեկուսի եղեալ 'ի բանակէ անտի' դիմեցին աղօթիւք առ ա՟ծ' այց առնել նոցա 'ի տառապանս իւրեանց, և ցուցանել զամենահրաշ զօրութիւն տէրութեան իւրոյ ։

Եւ ահա յանկարծակի մթացան երկինք ամպով, և եղեն փայլատակունք և որոտմունք սաստիկ, և տեղաց անձրև յորդառատ, մինչև լնուլ զա՟մ ծործորս և զհեղեղատս. անկան և ահագին շանթք կայծականց 'ի բանակն բարբարոսաց. և այնպէս կրկնակի նպաստ լինէր կայսերական բանակին աղօթիւք քառասնիցն. զի զծարաւն անցուցեալ ջրով՝ զօրացան յանձինս. և զշփոթութիւն թշնամեացն տեսեալ՝ համարձակ 'ի վերայ յարձակեցան և վանեցին զն՟ս ։ Դարձեալ և յայլում նուագի 'ի դիմել անհամար բազմութ՟ե բարբարոսաց խուռն խուժանօք 'ի վ՟ր հռովմայեցւոց, 'ի փախուստ աճապարէին զօրքն ա՟մ. իսկ արիական զօրականքն ք՟նի քառասունք՝ անշարժելի արձանացեալ 'ի տեղի ճակատուն, ոչ 'ի բազուկ իւրեանց յուսացան, այլ ջերմ աղօթիւք առ ա՟ծ ապաւինեալ՝ ասէին. ա՟ծ յանուն քում կեցո՛ զմեզ. և այնպէս միաբան սրտապնդեալ՝ կացին մնացին իբրև ամուր պարիսպ ընդդէմ յարձակման ամբոխին. մինչև ահաբեկ արարեալ զն՟ս՝ զոմանս կոտորեցին, և զայլսն առհասարակ 'ի փախուստ դարձուցին ։

Արդ թէպէտև այսպէս երախտաւորք էին առաքինի քառասունքն առաջի ինքնակալութ՟ե հռովմայեցւոց, և ակնածելի յաչս ա՟մ իշխանաց, այլ վ՟ն զի ճշմարտութ՟ի հաւարոյ նր̃ և անարատ քաղաքավարութին էր 'ի յանդիմանութի̃ անօրէն թագաւորին լիկիանոսի , ոչ խնայեաց 'ի նոսա ։ Քանզի 'ի յարուցանել խուռում հալածանս ընդդէմ քրիստոնէից ը̃ ա̃մ տեղիս՝ ուր հասանէր ձեռն նր̃ , առաքեաց պատուէր և առ լիւսիաս դուքս կեսարիոյ՝ որ հազարապետն էր և վերակացու արքունի գնդին եղելոյ 'ի կապադովկիա , քննել զդասս զինուորաց , և զորս գտցէ 'ի նոսա քրիստոնեայս՝ ստիպել զն̃ս 'ի հեթանոսութի̃ . ապա թէ ո՛չ մահու մատնել ։

Եւ զի յայնմ ժամանակի քառասունքն կային 'ի սեբաստիա քաղաքի առաջին հայոց (այն է սևաստ կ̃մ սըվազ) , հրաման յղեաց լիւսիաս առ ագրիկողայոս դատաւոր սեբաստիոյ , զի կալցի զքառասունն զայն զօրականսն , և հարց փորձ արասցէ . մինչև ասէ և ես ընդ հուպ եկից այդր ։ Իբրև ազդ եղև այս լուր դառնութե̃ առ քաջ զօրականսն քն̃ի , ոչինչ խռովեցան , և ոչ երկմտեցան , այլ միաբան քաջալերէին զմիմեանս համարձակ դաւանել զքն̃ , և կամակար դնել զանձինս 'ի մահ վն̃ սիրոյ փրկչին՝ որ մեռաւ ասեն վն̃ մերոյ փրկութե̃ տ̃րն և թագաւորն բոլորից . և խնդրէին 'ի նմանէ պարգևել նց̃ զկատարեալ նահատակութի̃ վն̃ անուա̃ն իւրոյ փառաւորելոյ ։

Արդ՝ եհաս օր , յորում ատեան կարգեաց արեանարբու դատաւորն ագրիկողայոս , և ետ ունել զքառասունսն միանգամայն , և ածել առաջի իւր․ եհարց ցնո՟ս և ասէ․ ուստի՞ էք դուք ընտի՛ր զօրականքդ, զո՞ր դէն պաշտէք, և զի՞նչ անուա՛նք են ձեր։ Յայնժամ քառասունքն առհասարակ իբրև 'ի միոջէ բերանոյ ասեն մեծաձայն․ քրիստոնեայ եմք, և զՔ՟ս ա՟ծ պաշտեմք զերկնի և երկրի արարիչ․ և հայրենիք մեր անանցական՝ է երկնային քաղաքն ա՟յ։ Դղրդեցաւ ատեանն 'ի ձայնէ բազմութե՟ ն՟ց, և ելից զլսելիս ամենեցուն այս հնչիւն աղաղակի, թէ քրիստոնեայ եմք․ և մի ըստ միոջէ յառաջ մատուցեալ իւրաքանչիւր 'ի նոցանէ՝ զնոյն երկրորդէր խոստովանութի՟․ և ոչ ոք 'ի նոցանէ փոյթ կալաւ յայտնել զանուն իւր կա՟մ զքաղաք, այլ միայն ասէր․ քրիստոնեայ եմ։

Իսկ դատաւորն մեղմով սկսաւ խօսել առ նոսա, և ասել․ յայտնի է մեզ ամենեցուն և ինքնակալաց մերոց գլխովին՝ մտերիմ ծառայութի՟ ձեր 'ի գործ արքունի․ զի յա՟մն երեւելի հանդիսացայք, և ցուցիք զարութի՟ քաջութե՟ ձերոյ միասիրտ ոգւով նիզակակցութե՟, և ստացայք բազմապատիկ յաղթութի՟ ը՟դէմ թշնամեաց․ և մեծաց պարգեւաց արժանի գտեա՟լ յառաջադէմ գտայք քան զա՟մ զօրականս, և անուն քաջ ժառանգեցիք։ Եւ արդ ժամ է ձեզ ցուցանել զնոյն մտերմութի՟ 'ի պաշտօն դից մերոց անմահից, զոհելով ն՟ց անյապաղ՝ ըստ ակնարկութե՟ հրամանաց ինքնակալին Լիկիանոսի։ Եւ հանեալ ցուցանէր ն՟ց զպատկերն ար-

արքունի հրովարտակին, որ ը՟դդէմ քրիստոնէից ։

Պատասխանի ետուն ս՟ր՟քն զուարթ դիմօք, և ասեն. եթէ վ՟ն մահկանացու թագաւորի պատերազմ մղեալ՝ յաղթող գտեալ եմք, և ոչ յաղթեալ, ո՟րպ և դու ինքնին վկայես, որչափ ևս առաւել պատերազմեալ զպատերազմ անմահ արքային՝ յաղթեսցուք հպարտութեան բռնաւորաց, և անարժան խորհրդոց և չարարուեստ կամաց՝ որ 'ի բանսարկուին թելադրութենէ ։ Ասէ ագրիկողայոս. մի այդպէս կամակորիք ո՛վ քաջք. մի յերկուց այտի կայ ձեր առաջի. կամ զոհել դ՟ոց, և փառաց հասանել, և կ՟մ յոչն զոհել՝ անկանիլ 'ի պատուոյ զինուորութեան, և փոխանակ կամարացդ կրել զկապանս թշուառութեան, մինչև զրկիլ և 'ի լուսոյ արևու. և արդ խորհեցարուք յանձինս, և ընտրեցէք ձեզէն՝ զոր լաւն իցէ ։

Ս՟ուն՟ք ասեն. զոր լաւն իցէ մեզ, բարեխնամին ա՟ծ ինքնին հոգայ հանապազ և հադասցի. բայց միայն մեք մի հեռասցուք 'ի սիրոյ ն՟ր ։ Իսկ դատաւորն սաստելով ասէ ցն՟ա. մի բազում բանիւք ժամավաճառ լինիք. այլ երթայք այժմ խորհել զօգուտն ձեր. և 'ի վաղիւն եկայք մատիք զոհել դիցն. և զայս ասացեալ՝ ետ տանել զն՟ա 'ի բանտ ։ Իսկ իբրև արգելան ս՟ր՟քն անդէն, միաբան կրկնեցին ծունր, և յաղօթս կացին՝ ասելով. փրկեա՛ զմեզ տ՟ր ա՟ծ մեր յա՟մ փորձուէ, և 'ի գայթակղութէ այնոցիկ՝ որք գործեն զանօրէնութիւն ։

Եւ իբրև ը̃ երեկս եղև, սկսան սաղմոսել․ Որ բնակեալ է յօգնութիւն բարձրելոյն, ընդ հովանեաւ ա̃յ յերկինս հանգիցէ․ ասասցէ տ̃ն, ընդունելի̃ իմ ես դու․ ապաւէն իմ, ա̃ծ իմ, և ես յուսամ 'ի նա․ նա փրկեսցէ զիս յորոգայթէ որսողին․ և որ 'ի կարգին ։ Եւ այնպէս ջերմեռանդն աղօթիւք՝ սաղմոսերգուե̃ պարապէին ոտնակայուբ̃ մինչև ցմէջ գիշերոյ ։ Եւ էր պարագլուխն նոցա յաղօթս և 'ի բանս հոգևոր մխիթարութե̃ սր̃ն կիւրիոն․ ոպ̃ և պինատու յատենի երանելին կանդիտոս ը̃ դոմնոսի ։

Եւ ահա զհասարակ գիշերաւ երևեցաւ նոցա փրկիչն 'ի բանտի անդ ահաւորափայլ ծագմամբ, և ասէ․ Զօրացարո՛ւք նահատա՛կք իմ․ բարի՛ է սկզբնամարտութի̃ զինուորութե̃ ձերոյ․ այլ որ համբերեսցէ իսպառ, նա կեցցէ, և ընկալցի զպսակն կենաց ։ Եւ նոյնժամայն վերացաւ 'ի նոցանէ, և եղև աներևոյթ ։ Յայն բարբառ առհասարակ լցան ահի̃ և խնդութե̃․ և հատաւ քուն յաչաց նոցա․ և այնպէս հանապազորդեալ կային յաղօթս մինչև 'ի լոյս առաւօտուն ։

Ապա 'ի վաղի́ւ անդր միւսանգամ նստեալ դատաւորն յատեան հանդերձ մեծամեծօք իւրովք՝ կոչեաց զսր̃ն զառաջեաւ․ և եկին կացին քառասունքն 'ի միասին յանդիման բեմին ։ Խօսել սկսաւ անդրէն ագրիկողայոս ը̃ նոսա սպառնալով, և ասէ․ զոր ինչ ունիմս ասել ատել ցձեզ, ո՛չ առ մարդահաճութե՟, այլ ստուգութ՟ ասեմ. և զայն՝ անպատրուա՛կ յերեսս ձեր, և ՚ի լուր բարեկամացս. չի՛ք ոք իբրև զձեզ այդչափ վայելչագիտակ, այդչափ իմաստուն և ընտիր յամ՟ զօրականս զինուորեալս ընդ դրօշակաւ ինքնակալին. Նմին իրի և ոչ ոք այլ այնպէս գովելի, և այնչափ սիրելի մեզ. հա՛պա մի՛ լիցի ձեզ զսէրն յատելութի՟ փոխել՝ իբրև զքաղցրունի մեղու ՚ի դառնութի՟ լեղւոյ. քանզի այդ ՚ի ձեր ձեռս է՝ եթէ՛ զսէր և եթէ զատելութի՟ ողջունել:

Յայնժամ տեսեալ երանելւոյն կանդիտոսի զդիւական հրապոյրս մարդելոյզ իշխանին, և կամելով զգգուա՛նս նր՟ յատելութի՟ դարձուցանել, ազատաբերան համարձակութե՟ ասէ ցնա. կարի՛ ՚ի դէպ է աղուէ՛սաբարոյ շողոքորթութե՟դ. և անուն կոչեցաւ քեզ ագրիկողայոս. այս է՝ վայրենի շողոքորթ: Իմացեալ դատաւորին՝ թէ ՚ի բարկութե՟ կամին գրգռել զնա սր՟քն, զի մի՛ խնայեսցէ ՚ի նս՟, ասէ. ո՞չ ասացի ձեզ, թէ ՚ի ձեռս ձեր է զսէր կմ՟ զատելութի՟ ողջունել. սիրել և սիրիլ, ատել և ատիլ: ՚Ի վր՟ էած սր՟ն կանդիտոս. վս՟ այդորիկ իսկ՝ քանզի ՚ի մեր ձեռս է սիրելն և ատելն, զա՟ծ սիրեմք, և զքեզ ատեմք, զի կամիս օտարացուցանել զմեզ յա՟յ. և արդ քանզի ատելի ես դու յաչս մեր, մի՛ և մի՛ իւիք սիրեսցես զմեզ ո՛վ ա՟ծատեաց և թշնամի ա՟յ, հակառակորդ ճշմարտութե՟ և որդիդ կորստեան:

Զայս

Ով այս լուեալ դատաւորին՝ մռնչեաց իբրեւ զառիւծ, և հրաման ետ դահճաց պնդագոյնս պրկել զնս ոտնակապօք, և կապեալ չուանօք ընդ քարշ տանել 'ի բանտ ։ Յայն ժամ ասէ քաջ նահատակն կիւրիոն ցդատաւորն. չէ՛ քո իշխանութիւն չարչարանօք լլկել զմեզ՝ մանաւանդ զայրընտիր զօրականս արքունի. և ոչ զայդ հրամայեաց քեզ լիւսիաս հազարապետ՝ վերակացու կայսերական գնդին. այլ միայն հարցափորձել զմեզ. և այդ շատ լիցի քեզ, զի 'ի միտ առեր զկամս մեր. արդ ծանի՛ր հազարապետին. և արա՛ զոր կամիս ։ Եւ դատաւորն զահի հարեալ ընդ այն բան՝ ետ թուլացուցանել զոտնակապս նց, և հրամայեաց անվընաս տանել զնս անդրէն 'ի բանտ, պատուէր տուեալ ագդայոսի բանտապետին զգուշութբ պահել զամենեսին մինչև 'ի գալուստ դքսին ։

Իսկ երանելի վկայքն յորդոր բանիւք քաջալերէին զմիմեանս 'ի բանտին. և ս առաւել սբն կիւրիոն զցայգ և զցերեկ ուսուցանէր զնս, և զուարթացուցանէր 'ի բր. Լուարուք ինձ ասէ եղբա՛րք իմ և քա՛ջ նիզակակիցք. այս գործ էր տնտեսութն այ, զի որք ընդ ծի և ընդ մայրենոյ հեռաւորք էաք յիրերաց ազգակցուէ, իբրև հոգւոյ հարազատք կապեցաք ընդ միմեանս յօդիւն քսի, և ընկերք և բարեկամք գտաք միմեանց 'ի ժամանակեայս զինուորութե. մինչև կարծել զմեզ արտաքնոցն՝ եթէ համահայր և համամայր եղբարք իցեմք: Եւ արդ մի՛ լիցի մեզ կենօք և մահուամբ բաժանիլ յիրերաց, և կամ խառնել երկիւղ վատութեան յարուխս քաջութեան. այլ որպէս եղաք 'ի կենցաղումս մի սիրտ և մի հոգի, նոյնպէս և միով շնչով նահատակեսցուք 'ի վկայութիւն ճշմարտութեան. և զո՛ր օրինակ ատէն քաջ հանդիսացաք և գովելի երևեցաք՝ հպատակելով երկրաւոր թագաւորի, սոյնպէս և այժմ կանխեսցուք պարզերես երևիլ առաջի երկնաւոր թագաւորին մերոյ և Աստուծոյ. և 'ի միասին ընկալցուք զպսակն յաղթութեան յաջոյն բարձրելոյ:

Իբրև աւուրք եօթն անցին 'ի վերայ, եկն եհաս դուքսն, այն է լիւսիաս հազարապետ 'ի կեսարիոյ կապադովկացւոց 'ի սեբաստիա. և 'ի վաղիւն անդր յաւուրն ութերորդի նստեալ հանդերձ դատաւորաւ յատեան՝ հրամանն ետ ածել զքառասունսն: Եւ յորժամ ազդ եղև սրբոցն, անդրէն վերստին յորդորէր երանելին կիւրիոն զընկերս՝ և յելանել 'ի տանէ բանտին, և 'ի գնալն զճանապարհայն, ասելով. Ե՛ղբարք զօրացո՛ւք, և զօրավի՛գն լիցուք միմեանց. մարտիցո՛ւք քաջութեամբ, և մի՛ ուստեք զանգիտեսցուք. առ Տէր կարդասցուք, և ոչ մի ինչ երկիւղ խռովեցուսցէ զմեզ: Ոչ ապաքէն յորժամ 'ի պատերազմ գնայաք, զՏէր բարձրեալ 'ի թիկունս մեզ կարդայաք. և նա լսէր և օգնական լինէր մեզ. և նովաւ յաղթէաք: Յիշեցէք, եթէ զի՛արդ 'ի ժամանակին՝ յորում քում մտաք 'ի մեծ պատերազմ, գունդն ամենայն 'ի փախուստ դարձաւ, և մեք միայն կացաք մնացաք 'ի ճակատու թշնամեաց՝ քառասուն եւեթ զօրականօքս քոյին. և յաղաղակել մեր արտասուօք առ Տէր՝ ետ մեզ զօրութիւն. որով արիացեալք՝ էր զոր կոտորեցաք, և էր զոր 'ի փախուստ դարձուցաք. և ոչ միում 'ի մէնջ վնաս ինչ եղև յերեսաց բազմամբոխ գնդին: Իսկ արդ այժմ երեք միայն զինակիցք են մեր՝ որք պատերազմին ընդ մեզ, սատանայ և դուքսն և դատաւորն. մանաւանդ թէ մի միայն հին թշնամին է ոսոխ մեր՝ անզօր բռնաւորն. և զիա՞րդ, միթէ 'ի միոյ կամ յերից սատի 'ի պարտութի՞ւն մատնեսցիմք, որ ոչն դարձուցաք թիկունս 'ի բազմաց. քա՛ւ և մի՛ լիցի եղբարք աղաչեմ. կարդացո՛ւք որպէս միշտն և այժմ զՏէր յօգնականութիւն մեզ. և ո՛չ յաղթահարեսցեն ըզմեզ՝ ո՛չ աներևոյթ յարձակումն չարին, և ո՛չ արտաքին ինչ կապանք, և կամ տանջանք, և ո՛չ մահ գլխովին:

Ո՞չ ապաքէն յամենայն նուագի եկանելոյ մեր 'ի պատերազմ զայն սաղմոսէաք, Աստուած յանո՜ւն քում կեցո՛ զիս, և 'ի զօրութեան քում իրաւարա ինձ. Աստուած լո՛ւր աղօթից իմոց, ո՛ւնկն դիր բանից բերանոյ իմոյ. և այժմ ևս ըզնոյն սաղմոս երկրորդեսցուք, և լո՜ւիցէ մեզ Տէր, և օգնական լիցի մեզ: Եւ այնպէս զսաղմոսն 'ի բերան ունելով անընդհատութեամբ՝ ածեալ եղեն յատեան բռնաւորաց, և միաբան կացին յանդիման դքսին և դատաւորին:

Հայեցեալ ընդ նոսա դքսին իբրեւ ընդ սիրելիս իւր՝ ակնարկէր ինձ ասել ցդաստիարակն. տեսանես զարի զօրականքս, որք փառաւորեալք են յինէն եւ յարքայէ. եւ յօժարամիտք են եւ եւս փառաւորել՝ անսալով բանից բարեաց. այլ թէ յայժմուս պատճառանօք ինչ 'ի վիշտս անկան, այն գուշակ է գտանելոյ նոցա մեծ եւս դիւրաւ: Եւ դարձուցեալ զբանս իւր առ նա՝ ասէ. ապաքէն պատիւ մեծ եւ պարգեւս յոլովս գտեալ է ձեր յինէն առաւել քան զամենայն զինուորական դասս. զի ընդ ձեզ գտի յամենեսին առաւել կատարեալս գեղով հասակի եւ յաջողութեամբ ձեռաց. եւ իմ 'ի մտի եղեալ է դոյնչափ եւս յաւելուլ 'ի փառաւորութիւն ձեր, եթէ ունկնդիր լինիջիք արքունի հրամանաց. քանզի որպէս լուայք՝ զմի յերկուց այտի հարկ է ձեզ 'ի ժամուս ընտրել. այս է՝ կամ զոհել դից, եւ առաւելագոյն պատուոյ եւ ճոխութեան հասանել. եւ կամ յանսաստ լինելն 'ի բաց մերկանալ զկամար պատուոյ զինուորութեան, եւ մատնիլ 'ի տանջանս մահու:

Յայնժամ յակնարկել ընկերաց առ սուրբն Կանդիտոս՝ յառաջ մատեաւ աներկիւղութեամբ, եւ ասէ 'ի բերանոյ ամենեցուն. ահաւասիկ քեզ լիցին կամարք զինուորութեան մերոյ, եւ մարմինք մեր ողջոյն. միայն հոգիք մեր պահեսցին այնմ՝ որ գնեաց զմեզ պատուական արեամբ իւրով. եւ մի լիցի մեզ փոխանակել զանցաւոր զփառս եւ զկեանս մարմնոյ ընդ Քրիստոսի. զի չէք ինչ պատուական յաչս մեր քան զսէր փրկչին մերոյ . և չէ́ մեզ մարթ առաւել յարգել զմարդ մահկանացու քան զա՟ծ կենդանի : Զնոյն և ամենեքեան միաձայն բարբառէին :

Ընդ որ ցասուցեալ դքսին՝ հրամայեաց սպասաւորաց ատենին հարկանել քարամբք ըզբերանս և զդէմս նց՟ : Աանդիտոս ասէ . առաջնորդդ խաւարի և մարդապետ անօրէնութեան՝ առնելով արասցես զկամս քո , այլ փութով տեսցես զ՚ի վերուստ զվրէժխնդրութի և զպատուհաս անձինդ : Եւ մինչդեռ դանդաղանօք շարժէին սպասաւորքն բերել զքարինս ՚ի հարկանել , ասեն ցնա՟ դատաւորն և դուքսն զայրագին . ով վատք և անպիտանք զի՞ հեղգայք փութապէս կատարել զոր ձեզն հրամայեցաւ : Եւ նոցա այր զօրամբ եղեալ անյապաղ ձգել զքարինսն ՚ի վր՟ սր՟ց , շփոթեցան և շուարեցան յանձինս . և առ չգիտելոյ՝ թէ զո՞ հարկանեն , հարին զմիմեանս և չարաչար վիրաւորեցին . և որք առ սր՟ն ջանային ձգել՝ անձանց վնասէին , զի քարինքն ՚ի նս՟ ոչ մերձենային , այլ յետս ՚ի ձգօղսն դառնային :

Զայն տեսեալ երանելի նահատակացն՝ ՚ի միտ առին զսքանչելիսն ա՟յ . և նոր քաջալերութի զգեցան ՚ի հոգիս՝ ապաւինելով ՚ի յոյսն արարչին : Իսկ դուքսն յանհնարինս սրտմտեալ ՚ի վր՟ նոցին եղելոց՝ բուռն եհար ՚ի քար մի , զի քարընկէց լիցի ամենայն ուժգնութ՟ յերեսս միոյն ՚ի սր՟ց անտի . այլ վրիպեալ ՚ի խուճապանաց՝ եհար զդատաւորն ,

ւորն , և խորտակեաց չարաչար զծնօտս նր՟ (կմ՟ ը՟ այլոց՝ զծնօտս իւր) ։ Յայնժամ ասէ սբ՟ն Կիւրիոն . տ՟ր , նեղիչք մեր և թշնամիք մեր ն՟ք տկարացան և անկան . այժմ տ՟ր , քանզի դու հրամայեցեր , սուրք նոցա մտցեն 'ի սիրտս ն՟ց , և աղեղունք ն՟ց փշրեսցին ։ Իսկ իշխանն մոլեգնեալ առ ցաւոյն՝ գոչէր . երդուեալ 'ի դիս , զի մոգութե՟ արուեստ է 'ի դոսա . որով ինչ ոչ զգան 'ի հարուածոց մերոց , այլ 'ի մեզ դարձուցանեն . և յանդուգն բարբառեալ ը՟դէմ տ՟րանց իւրեանց՝ լնուն զերեսս մեր ամօթով ։

Առ այս ետ պատասխանի սբ՟ն Դոմնոս . այլ ես զճշմարիտն ասեմ քեզ , զի ա՟ծ մեր յաղթեաց . և զբերանս ձեր՝ որք բարբառէին ը՟դէմ արդարոց զանիրաւու՟ի , ելից նախատանօք և թշուառութե՟ . և արդ հի՞մ դու ով անօրէն Ագրիկողայէ՝ առաջնորդ գայթակղութե՟ց և յորդորիչ չարեաց , ոչ պատկառես յա՟յ հանդերձ Լիւսիաւ . այլ իբրև գլուխ և ագի սատանայի միաբանեալ էք ը՟դէմ ճշմարտու՟ե . և զչարիք ևս ընդ մեր համարձակու՟ի , և զսքանչելիսն ա՟յ՝ դիւաց համբաւէք ։ Եւ եթէ ոչ նահանջեցայք առաջին մրցանօք , յերկրորդն մատերուք . զի զչափ առնջիք զօրութե՟ ա՟յ մերոյ՝ որ գործէ 'ի մեզ ։

Իսկ սպասաւորքն սաստէին սբ՟ց և ասէին . ով անմիտք և անարժանք ա՟մ մարդասիրութե՟ ա՟ծոց , ընդէ՞ր ոչ զոհէք , զի լինիջիք սիրելիք յաչս իշխանաց և ինքնակալին ։ Եւ

սբ՟ն

ս՟րբն կիւրիոն ասէ ցն՟ս. մեք ընտանիք և սիրելիք ա՟յ շնորհօք փրկչին մերոյ՝ զմի ա՟ծ պաշտեմք, և զյ՟ս ք՟ս զորդի ն՟ր միածին, և զամենաս՟րբ հոգին. և նովաւ ճգնիմք զօրութ՟բ կատարել զընթացս առաքինական նահատակութ՟ե մերոյ. զի տ՟ր ինքնին հզօրիչ է մեր, որ առաջնորդէ մեզ և ուղղէ զբերանս մեր 'ի բանս ճշմարտութ՟ե. զի ընկալցուք զպսակս անապականութ՟ե յինքնազօր և յամենակալ թագաւորէն, յաղթելով չարարուեստ ձերոց հնարից :

Հրամայեաց դուքսն տանել զն՟ս անդրէն 'ի բանտ, մինչև խորհեսցի՝ թէ զի՞նչ պարտ իցէ առնել ն՟ց, կ՟մ որո՞վ օրինակաւ զքառասունսն միանգամայն մարթ իցէ պատուհասել : Իսկ ս՟րցն մտեալ 'ի բանտ՝ սկսան սաղմոսել առաջնորդութ՟բ երանելւոյն կիւրիոնի. Առ քեզ տ՟ր համբարձի զաչս իմ, որ բնակեալդ ես 'ի յերկինս. ո՟պ աչք ծառայի 'ի ձեռն տ՟ն իւրոյ, և որ 'ի կարգին : Եւ ահա 'ի գիշերային տքնու՟ե յանկարծակի եղև ձայն առ ն՟ս, և երևեցաւ ն՟ց միւսանգամ փրկիչն, որ ասէր. Որ հաւատայ յիս, թէպէտև մեռանի՝ կեցցէ. քաջալերեցարո՞ւք և մի՛ երկնչիք 'ի տանջանաց բռնաւորաց. զի առ ժամանակ մի են. համբերեցէք սակաւիկ մի, և ընկալջիք զերկնաւորն պսակ անվախճան : Եւ ն՟ք անկե՟լ երկիր պագանէին տ՟ն, և գոհանալով փառս տային նմա : Եւ 'ի վերանալ փրկչին 'ի նոցանէ՝ լցեալ երանելեացն ա՟մ հոգևոր օրհնութ՟բ՝ զարմանայինն ը՟ մարդասիրութիւն ա՟յ · և այնպէս մխիթարեալ յոյժ՝ անցուցանէին զայն գիշեր ուրախութ՟բ և զուարթութ՟բ մեծաւ ։

Ի վաղիւն անդր կոչեցան անդրէն յատեան · և իբրև յանդիման եղեն բռնաւորաց , աճապարեալ ասեն ցդուքսն · մի՛ ծաղրում բանիւք զմեզ հարցանէր · զի՞ կաս , կ՞մ զի՞ յապաղես · զոր ինչ առնելոց ես , արա՛ ը՟ մեզ · զի մեք զք՟ս ոչ ուրանամք , և կռոց ձերոց ոչ զոհեմք ։ Յայնժամ վայրի տեսանէին սբ՟քն , զի կայր յատենի անդ ինքնին սատանայ՝ սուր ՚ի ձեռին յաջմէ դատաւորին , և վիշապ մի ահագին ՚ի ձախմէ նր՟ · որք ասէին ցունկն ագրիկողայոսի · մեր ես դու , մարտիր արիաբար ։

Յայնժամ հրամայեաց դատաւորն ը՟ միակամ խորհրդոյ դքսին կապել զքառասունսն , և արկանել չուան ՚ի պարանոցս միոյ միոյ ՚ի նոցանէ , և տանել զամենեսին ՚ի լիճն , որ կայր արտաքոյ քաղաքին սեբաստիոյ իբրև զծովակ , և արկանել ՚ի մերկուց ՚ի ջուր անդր · զի կա՛մ հեղձամղձուկ լինիցին ՚ի ջուրն , և կ՟մ կենդանւոյն պաղեալ սառեսցին ՚ի պարզի գիշերոյն · քանզի և աւուրքն էին ցրտագին , և օդն դժնդակ ։ Կարգեաց և ՚ի վերայ նր՟ պահապանս հանդերձ բաղանտապետիւն , զի մի՛ ոք փախիցէ ՚ի լճէն · այլ պատուիրեաց ջեռուցանել և բաղանիս առ լճիւն ՚ի դայթակղութի՟ նր՟ · զի որ կամի ուրանալ զհաւատս իւր և զերծանել , անկցի ՚ի բաղանիս անդր ։

Այս էր ընդ երեկս՝ յորժամ արկան քառասունքն 'ի լիճ՝ անդր մերկ մարմնով. և ահա յառաջնում պահու գիշերոյն շնչեաց հողմ ցրտասառոյց, և սկսաւ պաղիլ ջուր լճին առ հասարակ. և երթալով երթայր և պատէր սառն զնոքօք, և ձարձատէր զմարմինս նոցա. հերձանէր մորթ մարմնոյ նոցին, և բղխէր արիւն յորդ, և խառնէր կարմրութիւն արեան ընդ կապուտակ ծովակն սառուցեալ. և ինքեանք առ սակաւ սակաւ պաղեալ նուաղէին յոգւոյ:

Այս իբրև առհասարակ զաչս 'ի յերկինս համբարձեալ՝ մատուցանէին զանձինս կամաւոր պատարագ կենդանի Աստուծոյ յայն անհնարին տանջանս, մի ումն 'ի նոցանէ տկարացեալ անժուժութեամբ առ հովանալոյ 'ի ջերմութենէ սիրոյն Աստուծոյ, չհանդարտեաց դժնդակութեան առօրեայ տանջանաց, այլ 'ի բաց ոստուցեալ 'ի ցանկալի միաբանութենէ երանելի ընկերացն՝ դիմեաց անկաւ 'ի ջերմ բաղանիս. և ոչ գիտաց հիգացեալն՝ եթէ ընդ յաւիտենականին և զաստի կենցաղս անդէն ունէր կորուսանել. որպէս և եղև իսկ. զի ընդ մտանելն 'ի բաղանիս՝ լուծաւ պաղեալ մարմին նորա 'ի ջերմութենէ անտի. և փտանգեալ 'ի դիմամարտութենէ սաստիկ ցրտոյն և տապոյն՝ շնչարգել եհան փաղփաղակի զոգին:

Այս ո՞ կարէ պատմել ստամնոր զանհնարին մորմոք սրտի երանելի սրբոցն ընդ կորուստ եղբաւր դասակցին իւրեանց, որ պակասեցաւ 'ի թուոյ նոցա, և եղև բաժին որսողին չարեաց ։ Սուգ և թախծութիւն պատեալ պաշարէր զդասս երջանկաց․ առհասարակ յարտասուս ցնդեալ՝ պաղատախառն աղերսանօք առ ամենատէրն կարդային իբրև ընդ մի բերան․ գութ արկանէին առաջի մարդասիրութեան փրկչին՝ քաղցր աչօք ակնարկել 'ի նոսա․ Մի՛ տէ՛ր ասէին, մի՛ 'ի գետս բարկացիս մեզ (ըստ ամբակումայ ձայնին), և մի՛ կաթեսցէ սրտմտութիւն քո 'ի վերայ ծովուս․ քանզի ահա որ որոշեցաւն 'ի մէնջ, հեղաւ իբրև զջուր, և ցրուեցան ամենայն ոսկերք նորա․ այլ մեզ մի՛ լիցի որոշիլ 'ի քէն մարդասէ՛ր տէր կենօք և մահու, մինչև կենդանացուցես զմեզ ։ 'Ի քեզ տէր յուսամք 'ի բոլոր սրտէ, և զանուն քո կարդամք զօրհանապազ․ քանզի զքեզ տէր օրհնեն արարածք ամենայն, վիշապք և ամենայն խորք, հուր և կարկուտ, ձիւն և սառն, հողմ և մրրիկ, որք առնեն զբան հրամանի քո․ որ միայն շրջիս 'ի վերայ թևոց հողմոց․ որ գնաս 'ի վերայ ծովու իբրև 'ի ցամաքի, և զբռնութիւն նորա բռամբ ձեռին քո ցածուցանես ։

Լուր մեզ տէր՝ լուր մեզ, որ լուար յակոբայ յաղաչելն զքեզ 'ի փախչել անդ իւրում 'ի սպառնալեաց եսաւայ եղբօր իւրոյ ցասուցելոյ․ որ եղեր ընդ յովսեփայ 'ի վաճառիլ նորա ընդ քում օրինակի, և փրկեցեր զնա յամենայն փորձութենէ․ որ լուար մովսեսի, յորժամ առնէր նշանս 'ի փարաւոն և յամենայն ժողովուրդ նորա, և հերձեր զծով, և տարեալ անցուցեր զժողովուրդ քո յանապատ հանդարտութեան․ որ

լուար

լո՛ւար աղաղակի աշակերտաց քոց տ՟ր ՚ի պահու նաւակոծելոյ ն՟ց. լո՛ւր և այժմ մեզ տ՟ր, զի մի ընկղմեսցէ զմեզ պտոյտս ջուրց, և մի ընկլցեն զմեզ խորք անդնդոց. օգնեա՛ մեզ ա՟ծ փրկիչ մեր, զի աղքատացաք յոյժ. օգնեա՛ մեզ փրկիչ մեր, զի համարեցաք իբրև զիջեալս ՚ի խորս ծովու. լուծան ջիլք բազկաց մերոց, և ոտք մեր պաղեալ անպիտանացան. և անձինք մեր ներկան յարենէ մերմէ ։ Թեթեւացո՛ տ՟ր զծանրութիւն և զդժնդակութի՟ւ ցրտագին օդոյս. որ՟պ զի ծանրցեն ամենեքին, զի առ քեզ տ՟ր ա՟ծ մեր կարդացաք և փրկեցաք. զի ՚ի քեզ տ՟ր յուսացաք, և ոչ ամաչեցին անձինք մեր ։

Եւ եղև յերրորդում պահու գիշերոյն, (որ և էր երրորդ գիշեր արկանելոյ ս՟ց ՚ի լիճն՝ ՟Է նիւսացւոյն,) յանկարծակի ծագեաց լոյս մեծ ՚ի վ՟ր լճին իբրև զճառագայթս արեգական. և ծաւալեցաւ հետզհետէ ջերմութի իբրև զմիջօրեայ տապոյ արևու յամառայնի. մինչև իսկ և իսկ հալիլ սառին, և լուծանիլ ՚ի ջուր եղկացեալ ։ Այս զօրութի՟ն էր արեգակա՟ն արդարութ՟ե, որ երևեցաւ ն՟ց անճառելի ճառագայթիւք, և ք՟նեան էջք գերափայլ լուսով՝ որ մխիթարեաց զծառայս իւր. ՟Քզի ինքնին սերովբէից թագաւորն իջեալ ՚ի վերուստ տեսանիւր ս՟ցն ։ Եւ նոցա զաչս ՚ի յերկինս ամբարձեալ՝ ձեռամբ մատնացոյց լինէին, և յորդորէին այլ զընկեր ՚ի վեր հայել. փրկիչն մեր տ՟ր յ՟ս ահա ծագեաց առեն զլոյս իւր. տեսցո՛ւք և զո՛ւարճասցուք ․ ժամս ոչ է արեւու , արեգակն է քս̄ լոյսն մեր՝ որ երեւի ․ արդարեւ ծագեաց արեգակն անմոռանելի և լոյսն անհասանելի ․ և այնպէս ցնծալից եղեւ փառս վերառաքէին փրկչին իւրեանց ։

Եւ զայս ոչ ոք իմացաւ 'ի պահապանաց՝ որք ըմբռնեալ էին 'ի քուն , բաց 'ի միոյ անտի՝ որ պահպանն էր կալանաւորաց , և էր կարգեալ 'ի վերակացութ̄ն բաղանեաց (ը̄ այլոց՝ բանալեաց) ․ քանզի սա հսկէր արթնութ̄բ , և ունկն դնէր զարմացմամբ աղօթից երանելեացն ․ և խորհէր 'ի միտս իւր , թէ զիա՞րդ ելեալն 'ի թո՛ւոյ նց̄ և անկեալն 'ի բաղանիս՝ նոյնժամայն մեռաւ 'ի ջերմութ̄է իբրև պատուհասեալ , իսկ երեսունն և ինունքն՝ որք աղօթս առնէին 'ի մէջ սառին , կային տակաւին կենդանի ։ Եւ յորժամ ետես զլոյսն ծագեալ զնոքօք , եւս քան զեւս հիացեալ՝ հայէր ընդ երկինս , թէ ուստի՞ գայ գիշերային ճառագայթ սքանչելի լուսոյն այնորիկ ․ և ահա մինչ այս մինչ այն՝ տեսանէր , զի 'ի միջոյ նշուլից լուսոյն իջանէին պսակք 'ի վերուստ 'ի վր̄ նց̄ ․ և այն՝ թո՛ւով երեսուն և ինն ը̄ թո՛ւոյ մնացելոցն 'ի լճի ։

Եւ սքանչացեալ ը̄ իւրն՝ ասէր ը̄ միտս ․ ո՞չ սոքա ամենեքին քառասուն էին թո՛ւով ․ և զիա՞րդ 'ի պակասիլ միոյն՝ միով պակաս է և պսակացն թի՛ւ ․ յայտ է թէ զի որ արկաւն 'ի բաղանիս՝ անարգեցաւ , և չեղև արժանի 'ի համար գրիլ քառասնից ։ Յայնժամ

՚ի բանալ տ՟ն զաչս հոգւոյ ն՟ր՝ արծարծեցաւ եռանդն ՚ի սիրտ առն, զի ինքն փոխանակեսցէ զտեղի զրկելոյն. և ոչ գիտէր՝ եթէ տ՟ր ընտրեաց զնա իբրև զմատաթիա փոխան յուդայի : Ապա փութացեալ զարթոյց զայլ պահապանսն՝ որք ընդ նմա էին. և մերկացեալ զզգեստսն, և ընկեցեալ ՚ի ն՟ս զզէն և զզարդ իւր, վազեաց ՚ի լիճ անդր՝ աղաղակելով մեծաձայն, և ես քրիստոնեա՛յ եմ :

Եւ խառնեալ զանձն յերախանս ս՟բց՝ ասէր ՚ի ձայն բարձր և ՚ի բոլոր սրտէ. տ՟ր ա՟ծ բարձրեալ և ճշմարիտ՝ հաւատամ ՚ի քեզ, յոր և դոքա հաւատան ճշմարիտ քո ծառայք. և զիս համարեա՛ աղաչեմ ՚ի թի՛ւս սոցա, և արժանի՛ արա զիս հաղորդ լինել նոցին փորձանաց և չարչարանաց, զի և ես ը՟ նոսին գտայց ՚ի քեզ : Եւ եղև անպատմելի ուրախութ՟ի ս՟բց առաւել քան զառաւել. յայնժամ ս՟բն կիւրիոն սկսաւ ասել ձայնակցութ՟բ երջանիկ ընկերացն իւրոց. ո՞վ է ա՟ծ ո՟պ տ՟ր ա՟ծ մեր, կամ ո՞վ է ա՟ծ բաց յա՟յ մերմէ. դու ես ա՟ծ՝ որ առնես սքանչելիս միայն. եղեր զթշնամիս մեր յոչինչ, և զսատանայ յամօթ արարեր, լցեալ զպականութ՟ի թունոյ չորրորդ տասինն քոյով անձառ մարդասիրութ՟բ. զի մի՛ ուրախ լիցի բանսարկուն չարութ՟ե ը՟ անկատարութ՟ի մերումս դասու, այլ յաւիտեան հեծեծեսցէ կործանօք : Եւ յաւել սաղմոսել. ատլեցա՛ զիս ա՟ր, զի նուա՛ղեաց ս՟բ :

Իսկ սատանայ յաղթեալ ամօթով (ե՟ գրե-

լոյ սբ̃յն եփրեմի) կերպարանեցաւ 'ի մարդ, և ձեռն զձեռամբ պատե̃լ փարանօք, և զոտն զոտամբ ածեալ՝ նստէր տխրադէմ յանդիման լճին 'ի շամբս եղեգանց, և գուժէր ասելով. վա՜յ ինձ թշուառականիս, յաղթեցայ 'ի քաջաց աստի և եղէ 'ի ծաղր, զի չունէի պիտանի արքանեակս. քանզի ոչ լինէի յաղթեալ, եթէ պիտանի արքանեակք լինէին իմ. և արդ զի՞նչ արարից. գէթ դարձուցից զսիրտ դատաւորին յառաւել դառնութի̃, զի այրեսցէ զմարմինս դոցա, և 'ի գետ ընկեսցէ յայնպիսի վայրի, զի մի՛ բնաւին և նըշխարք գտցին նոցա: Զայս ասաց, և իբրև
ծուխ ցնդեցաւ յօդս:

Եւ իբրև այդ եղև, եկին բռնաւորքն տեսանել՝ թէ զի՛նչ անցք անցեալ իցեն ը̃ քառասունսն. և տեսեալ զբաղանեպանն՝ զի կայր 'ի մէջ նց̃, հարցանէին զայր 'ի պահապանաց, թէ զի՞ եղև դմա, զի հաւասարեաց զանձն ը̃ պատժաւորս: Եւ նք̃ ասեն. մեք թմբեալ կաք 'ի խորութե̃ գիշերի. իսկ դա զգիշերին ողջոյն յարթնութե̃ կացեալ՝ յանկարծակի զարթոյց զմեզ. և յարուցե̃լ տեսանէաք լոյս սաստիկ իբրև զարևու 'ի վե̃ ծովակիդ. իսկ դորա փղփղակի ընկեցե̃լ զձորձս իւր՝ եմուտ առ նոսա 'ի լիճ̃ այդր՝ ձայն բարձե̃լ, եթէ և ես քրիստոնեայ եմ: Յայնժամ հրաման ետ դատաւորն ագրիկողայոս, զի հանցեն զամենեսեան յափն լճին, և խորտակեսցեն բրօք և տապարօք զբարձս նց̃ և զոլոքս թիկամբքն հն̃դրձ, զի մեռցին:

Յայնմ վայրի եկեալ էր 'ի տեղին մայր միոյ 'ի սրբոցն , որոյ որդի մելիտոն կամ մելիտոս անուն՝ էր մանկագոյն հասակաւ 'ի մէջ քառասնիցն . և հոգայր՝ զի մի՛ արդեօք յերկիւղէ մահուն ահաբեկ լիցի պատանին . Նմին իրի և ստէպ ձգեալ զձեռն առ նա՝ ասէր գորովանօք . քաղցրիկ որդեա՛կ իմ , որդեա՛կ փափկահասակ , սակաւի՛կ մի համբերեա՛ ժուժեա՛, զի այր կատարե̃լ լինիցիս . զօրացի՛ր որդեա՛կ իմ , և մի՛ երկնչիր , զի ահա ք̃ս մերձ կայ քեզ , և օգնական լինի քեզ . փոքր միւս ևս և յերկինս 'ի վեր ընթասցիս , զի քեզ մնայ պսակիչն երկնաւոր :

Եւ յորժամ ջաղխէին և ջարդէին զբարձս երանելեացն մինչև ի սպառ , ն̃ք առհասարակ ասէին յելս հոգւոց իւրեանց . անձինք մեր ո̃պ ճնճղուկ զերծան յորոգայթէ որսողաց . որոգայթն փշրեցաւ , և մեք ապրեցաք . օգնութի̃ է մեր յանուանէ տ̃ն , որ արար զերկինս և զերկիր . և միաբան ասացեալ զամէնն՝ աւանդեցին առաքինիքն ըզհոգիս իւրեանց 'ի ձեռս ա̃յ :

Իսկ երջանիկ պատանին մելիտոն դեռ յոգւոջ էր յետ խորտակման ոսկերացն . վ̃յ իբրև եղև հրաման՝ զի բարձցին մարմինք սրբոցն 'ի սայլս , և ածցին մերձ 'ի գետն , դահիճքն թողին զմելիտոն՝ զի թերևս ապրեսցի և կեցցէ : Իբրև ետես մայր պատանւոյն՝ եթէ թողին զնա միայնակ իբրև զատուցե̃լ 'ի նահատակակից վկայից , 'ի բաց եդ յանձնէ զկանացի տկարութի̃ , և զգեցաւ առնացի բարս արիական առաքինութ՟՝ յաւերժական յիշատակաց արժանի․ քանզի ինքնին յուս իւր բարձեալ զորդին կիսակենդան՝ գրկեալ զպարանոցաւն՝ ընթանայր զկնի սայլիցն հասանել սր՟ցն․ և ասէր ցմեղկոտն․ որդեա՛կ իմ հասցո՛ւք զհետ եղբարց քոց, զի ը՟նոսին պսակեսցիս․ և ես եղէց մայր մարտիրոսի։ Եւ մինչդեռ զայսօրինակ խօսէր ընդ նմա զճանապարհայն, աւանդեաց սր՟ պատանին զհոգին իւր, և խառնեցաւ դառնիկն ՚ի հօտն, և անբիծ աղաւնին յերամս դասակցաց իւրոց՝ պարել ը՟ հրեշտակական դասուց։ Եւ այն եղև անպատմելի խնդութի՟ բարերջանիկ մօրն, որ այն ինչ հասեալ էր զկնի սայլիցն․ վ՟ղ և զուարթագին եդ զմարմին սր՟ զաւակին ՚ի վ՟ր այլոց մարմնոց վկայիցն․ և ինքն երթայր առ նովաւ՝ մինչև յափնկոյս գետոյն՝ ՚ի տեղին, ուր հաւաքէին զդիակունս։ Հիացան ամ՟ տեսօղք ը՟ գործ արութե՟ քաջուե՟ սրտի ծերագլուխ կնոջն․ զորմէ պանծալի բանք են ՚ի ճառս սր՟ց վ՟դպաց՝ որ յաղագս սր՟ց քառասնից, (ո՟պ առ մեծին բարսղի, և եղբօր նորա գրիգորի նիւսացւոյ, աբբայ եփրեմի, սխրանոտի հայոց վ՟դպի, այլովքն հանդերձ)․ քանզի և հրեշտակք ՚ի վերուստ սքանչացան ը՟ կատարեալ առաքինութի՟ն ն՟ր՝ տիրականին ՚ի դէպ եկեալ գովութե՟ առաւել քան ը՟ քանանացւոյն, ո՛վ կին դու՝ մեծ են հաւատք քո․ որ՟պս և առ մագդաղենացին, թէ ը՟ ամ՟ ~ խօսեսցի վ՟ն յիշատակի դորա․

Արդ. իբրեւ հասին յափն գետոյն, (որ սովորաբար ալիս գետ կոչի, ուամկ. դըզըլըրմագ, և յոմանց գանգէս,) հրաման ետուն բռնաւորքն սպասաւորաց բորբոքել խարոյկ մեծ, և այրել զմարմինս սոցա քառասնից միանգամայն, զի մի՛ լիցի քրիստոնէից պատուել զնահատակսն: Եւ ՚ի ծախիլ սոցա մարմնոցն ՚ի հրոյ անտի՝ յորժամ ոսկերքն մնացին բազում մասամբ, խորհուրդ արարին անօրէնքն և ասեն. եթէ թողումք աստ զմնացուած նշխարաց դոցա, կամ եթէ ուրեք տամք թաղել, բառնան զայն քրիստոնեայք, և սփռեն ընդ աշխարհ. հապա եկայք աղասցուք զնոսա ՚ի գետն, զի իսպառ ողողել անհետասցին, և մի՛ անկցին ՚ի ձեռս մարդոյ:

Յայնժամ առեալ սպասաւորաց աւել ՚ի ձեռս՝ վարեցին և աղացին զամենայն նշխարս ոսկերաց նոցա և զմոխիր մարմնոցն ՚ի գետ անդր. և այնուհետեւ իսպառ յանհոգս եղեն զնոցանէ. այլ Տէր ՚ի դերեւ եհան զխորհուրդս չարութեան նոցա: Քանզի աստուածային տնտեսութեամբ նշխարք սոցին առհասարակ ամփոփեալ հաւաքեցան ՚ի խաղ մի գետոյն, և ոչ կորեաւ և ոչ մի յոսկերաց նոցա, ըստ գրեցելումն՝ եթէ բազում նեղութիւնք են արդարոց, յամենայնէ փրկէ զնոսա Տէր, և պահէ զամենայն ոսկերս նոցա, և մի ՚ի նոցանէ ոչ կորիցէ. որպէս և միւս գիր ընցաւ ՚ի վերայ սոցին ՚ի կենդանութեան և ՚ի մահու, անցաք մեք ընդ հուր և ընդ ջուր, և հաներ ըզմեզ ՚ի հանգիստ:

Եւ սքանչելիքն այլ յայտնի եղեն ըստ օրինակիս կես ը̄ այսմիկ․ իբրև երեք աւուրք 'ի վերայ անցեին զկնի կատարման ս̄ց , (ըստ ոմանց՝ աւուրք վեց ,) երևեցան ս̄բ քառասուն մանկունքն 'ի տեսլեան ս̄բյ եպ̄սի քաղաքին սեբաստացւոց , որում անուն էր պետրոս , և ասեն ցնա․ ե՛կ 'ի գետն , և գտցես զնշխարս մեր ամենեցուն յայն նիշ տեղւոջ․ և հա՛ն զմեզ գիշերայն 'ի գետոյ անտի ։

Յարուցեալ եպ̄սն՝ նաւ ը̄ իւր զոմանս յուխտէ եկեղեցւոյն և յարանց երկիւղածաց , և եկն 'ի գիշերի 'ի նշանակեալ տեղին․ և ահա հայեցեալ տեսին , զի ճաճանչէին լուսափայլութ̄բ նշխարք երանելեաց 'ի վ̄ր երեսաց ջուրց գետոյն՝ իբրև զլուսանշոյլ աստեղս ը̄ երեսս երկնից ․ և ուր ուրեք ցրո՛ւեալ կայր մասն 'ի նշխարաց անտի՝ ինքնին երևելի լինէր բոցափայլ նշողիւք ։ Յայնժամ ահի՛ւ և խնդութ̄բ հանեալ 'ի ջրոյ զա̄մ ս̄բ նշխարսն՝ ամփոփեցին 'ի տապանակս․ և տարեալ հանգուցին 'ի Թաքուն եկեղեցի ուրեք պատո՛ւով և զգուշութ̄բ․ մինչև անցցէ հրդեհ հալածանաց՝ 'ի պատրաստել նց̄ վկայարան արժանաւոր․ և կարգեցին անյապաղ կատարել զյիշատակ ս̄բց ամ ը̄ ամէ ։

Այսպէս հանդիսացան ո̄ք և փառաւորեալ վկայքն՝ քառասուն յաղթող զօրականք քն̄ի հրաշալի նահատակութ̄բ 'ի սեբաստիա քաղաքի , յիններորդ աւուր ամսեանն մարտի՝ յամի փրկչին իբր 316 ։ Եւ եղև յետ քանի մի ամաց յաւուրս առանձին ինքնակալուն̄ հաւատացել̄ արքային մեծին կոստանդիանոսի՝

նոսին՝ 'ի փայլել քրիստոնէութ՟ե համարձակութ՟բ ը՟ ա՟մ տեղիս, շինեցաւ 'ի վ՟ր ն՟ր քառասնիցն 'ի սեբաստիա վայելուչ եկեղեցի. ո՟պ և 'ի զանազան քաղաքս բազում եկեղեցիք և խորանք կանգնեցան 'ի պատիւ ս՟րցս և 'ի փառս պսակողին բոլորեցունց. և սքանչելիք բազում եղեն 'ի նշխարաց ս՟րց սփռելոց 'ի զանազան տեղիս (3) ։ Իսկ լիճն կամ ծովակն սեբաստիոյ՝ որ յանցանել ժամանակաց երևի նուաղեալ 'ի ջրոյ, և փոքրկացեալ, կոչի յաւուր յայսմիկ յանուն ս՟րցն՝ Քառասուն մանուկ. և է նշանաւոր ուխտատեղի ։ (4)

Անուանք ս՟րց քառասնիցս՝ զորս միօրինակ աւանդեն ա՟մ վկայագիրք, ը՟ զգուշագոյն խուզարկու՟ե և ուղղագոյն ընթերցուածոյ՝ այս են. Աթանասիոս, ակակիոս, աղեքսանդրոս, այետիոս (կամ աւետիս), անգէաս. բիբիանոս. գայիոս (կամ գայաս), գորգիանոս (կ՟մ գորգոնիոս). դիանիոս, դոմետիանոս, դոմնոս (որ և դոմնիոս, կամ դոմնինոս). եկտիկոս, եղիանոս, եւնիկոս, եւտիկոս, եւտիքիոս. թէոդուլոս, թէոփիլոս. իլիոդէս, իրակղիոս. լիւսիմաքոս. կանդիտոս, կիւրիոն (կ՟մ կիւրիոս), կիւրղոս (կ՟մ կիւրղիոս), կղոդիոս (կ՟մ կադոնիոս, և կ՟մ քուդիոս). հիւսիքոս. ղևոնդիոս. մելիտոս (կ՟մ մելիտոն). յովհաննէս. նիկողայոս. պրիսկոս. սակերդոն (կ՟մ սանկտինոս), սևեռիանոս, սիսիանոս (կ՟մ սիսիննիոս), սմարագդոս (կ՟մ զմրուխտ).

վաղէս , վաղերիս (կմ՛ վեներանդաս) . փելիկտիմն , փլաւիս . քամնթիս :

Որդ սխալանս վարդապետ՝ ո՛չ երևի սեբաստացի , և անուանակից միոյ 'ի քառանիցս , 'ի վ̅ր անուանց նոցա յօրինէ զհատուածս Ճառին իւրոյ՝ սկսեալ 'ի դոմետիանոսէ . և 'ի կարգի բաղմապատիկ խորհրդածուեց ասէ . * Այս և յանուանցն գիր խոր-
,, հուրդ . և կարի զարմանալի . քանզի քա-
,, ռասնիցս անուանցն գիր բովանդակէ միա-
,, համուռ՝ երեքհարիւր տասնևութ , 'ի ըս-
,, տոյգ օրինակաց՝ որ գտանիցին Ճշգրիտ
,, դեսպոտիկոն ը̅ յունաց . յորոց և կոչումն
,, անուանց ն̅ց (առաւել ը̅ յունական վեր-
,, ջաւորու̅ե) : Տեսցես ինձ և ստուգագիւտ
,, 'ի հայոց նոյնպէս երեքհարիւր և տասն-
,, ևութ գիր : Նաև այս՝ մարգարէու̅ե վ̅ն ս̅բ
,, և մեծ ժողովոյն նիկիայ հաւատախնդիր
,, հարցն : Ինձ զարմանալի այսոքիկ , և իբր
,, տեսու̅թի նախագուշակ . քանզի կանխա-
,, գոյն էին սոքա ամօք ինչ (իմա՛ իբր ինն ,
,, կմ՛ տասն ամօք) քան զժողովն ա̅ծազան ,
,, որ գումարեցան 'ի նիկիա՝ կոստանդիանո-
,, սի հրամանաւ . կենաց բանին հետևեալք
,, հաւատոս հաստատեցին՝ խոստովանու̅թի
,, ս̅բ երրորդու̅թե̅ն և մի ա̅ծու̅թե̅ն || :

Նաև ո՛չ բարւոք 'ի վ̅ր բերէ , * Իմացուք և
,, այլ խորհուրդ մեզ օգտակարագոյն և
,, փրկու̅ե հոգւոց մերոց . այսոցիկ ս̅բց տօն
,, յիշատակի հանապազ 'ի ս̅բ քառասներոր-
,, դի պահոցս հանդիպի , որով և առաւել
,, ան-

,, անուանակոչութի սոցա է աւուրցս, հագեւորապէս տօնել եւ պարկեշտութ., ըղձղփութի կերակրոց արտաքոյ աւուրցս եւ տօնիս թողեալ՝ թեթեւութ. ընթանալ 'ի յասպարէս հանդիսի նց || ։ (5)

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ ։

(1) Չեն ինչ պէտք յերկարել զբանս վ̄ հաստահիմն ցուցանելոյ զառաջիկայս վկայաբանութե, որ 'ի սկզբանէ եւ այսր նոյնօրինակ գտանի յամ̄ եկեղեցիս՝ հաւաքեալ եւ 'ի Ճառս հին հարց։ Զբազմապատիկ հին օրինակս այսր պատմութե բերեն կմ̃ յիշեն բոլլանդեանք հենսքեննիս եւ բաբեպրոք՝ գտեալ յայլ եւ այլ գրատունս արեւմտից. յորս երեւելի է վկայաբանութին շարագրեալ յունարէն՝ ոչ սակ՝ յեւոդիոսէ արքեպսէն կեսարու 'ի հին դարս, եւ թարգմանեալ 'ի լատին յիններորդ դարու 'ի յովհաննէս սարկաւագէ հրամանաւ յովհաննու աբբայի վանաց սբ̄յն սեւերիանոսի. թող զմետափրաստեսին՝ որ չերեւի այժմ 'ի միջի, եւ զմիւս այլ օրինակ՝ զոր յանուն նր̄ բերեն լիպոմանոս եւ սուրիոս։ Եւ թէ զիարդ յարեւելից յարեւմուտս ծաւալեցաւ պատմութին սբ̄ցս, այսպէս խոստովանին նոյն բոլլանդեանք, ասելով. * Մ̄ տեղեկութին վկայաբանութեցս ածանցեալ եղեւ (՛ի մեզ) 'ի յոյն մատենագրաց. յորոց սակի խմանամք զհայս, զկապադովկացիս, եւ զայլ եւս արս գիտնաւուրս յասիա։ Եւ նախ զառաջինն համարիմք յեկեղեցւոյն սեբաստիոյ գրեալ զպատմութին վկայուե̄ քառասնից քաջ նահատակացս, եւ է վաղեմի սովորութե ախոյեւոց աւանդեալ յայլ եւս եկեղեցիս իբր 'ի պատմէնս շրջաբերական թղթոյ ||։

Զնոյն պատմութին ճոխագոյն ճառիւք հանդիսացուցին 'ի ներբողեան սբ̄ց քառասնիցս՝ սբ̄ն բարսեղ կեսարացի, եւ սբ̄ն եփրեմ ասորի՝ որ եւ յիշէ զճառն բարսղի եթէ 'ի ներբողեանն քառասնից, եւ եթէ 'ի գովեստ նորին բարսղի. ոչ̃ եւ գրիգոր նիւսացի այլ եւ այլ ներբողեանս խօսեցաւ 'ի վ̄ր վկայիցս 'ի տաճարի անդ. նց

(որ 'ի սեբաստիա կմ՟ 'ի նիկուա). և սա եւ յիշէ զճառն բարսղի : Ասի թէ 'ի սմին աթանասէ եւ յօրինեալ իցէ այլ ճառ : Իսկ յարեւմուտս սորին գաւառնգիոս՝ որ սատարութ՟ք սմին ամբրոսիոսի եղև եպս՟ բրիքսիոյ (ա՟յ պրեշայու մօտ 'ի վենետիկ) յամի 385, արար ճառ 'ի վր՟ սբ՟ց քառասնիցս յաւուր նաւակատեաց տաճարին, զոր կանգնեաց յանուն նց՟. ուր և սա յիշատակէ զճառ բարսղի. յիշէ և զնշխարս ինչ սբ՟ցս՝ զորս ինքն եբեր յարեւելից : Տես և առ սողոմենոսի զպատմութն ինչ նշխարաց սոցա. գիրք. թ. գլ. 2. զոր երկրորդէ և նիկեփորոս. ժդ. 10:

Իսկ 'ի մեզ հաշակաւոր է ներբողեան սխիանոսի վարդապետի (որոյ ժամանակն անյայտ,) ասացեալ 'ի սեբաստիա 'ի վկայարանի սբ՟ցս. որպ՟ և այլ ճառ յայլմէ վարդապետէ 'ի տօնապատճառ գիրս. զորոց չունելով տեղեկութն բոլլանդեանց՝ հաղիւ հազ զպայմանաւորաց հայոց յայսմ մասին առեալ են ծանօթութն ինչ 'ի հռովմ, հանդերձ նոր և կարեւոր յիշատակարանաւ. քանզի գրեն, թէ յորժամ էաք անդ 'ի խնդիր զանազան հնութեց 'ի պէտս վկայաբանութեց, գտաք զյիշատակարան ինչ՝ յորում գրեալ էր այսպէս : * 'Ի իը՟, աւուր ամ_
,, սեանն դեկտեմբերի յամի 1601. յորժամ գերապատիւ
,, յակոբ եպ՟կս երեւանու յազգէ հայոց, այր ուսումն
,, ամաց՝ և եւս աւելի, նստէր 'ի հռովմ 'ի սբ՟ մարիամ
,, եգիպտացի 'ի սովորական բնակութե՟ հայոց, եկն 'ի
,, տեսանել և յարգել զնա պատուական տր՟ գերարդոս
,, վոսսիոս (որ էր մի 'ի գիտնականաց ժամանակին, և
հաւաքօղ վկայաբանութեց). և բաց յայլոց բանից,
,, յառաջիկայութե՟ իմում՝ որ թարգման կայի 'ի միջի
,, նց՟՝ բարթուղիմէոսս աբգարեան, եհարց վն՟ պէսպէս
,, հանդամանաց սեբաստիոյ քաղաքի փոքուն հայոց, և
,, վն՟ լճին կմ՟ ծովակին՝ յորում սբ՟ քառասուն վկայքն
,, ընկալան զփառաւոր նահատակութն :
,, (Եհարց վոսսիոս.) Որպիսի քաղաք է սեբաստիա :
,, Պ՟խնի ետ եպ՟ն. է քաղաք հին և ընդարձակ, յո_
,, րում են յաւուր յայսմիկ իբր հնգետասան հազար
,, տունք. և ունի ը՟ իւրև իբրու երեքհարիւր գիւղս
,, շուրջ բնակեալս. որոց վերակացու է փոխարքայն՝
,, որ կոչի բաշա՝ նստեալ 'ի քաղաքի անդ սեբաստիոյ :
,, (Վոսսիոս.) Սեբաստիա բոլորշի՞ է, եթէ քառա_
,, կուսի : Եպ՟ն ասէ. հին քաղաքն սեբաստիոյ է բո_
,, լորաձև. իսկ նորն՝ որ յարդիս մեծացաւ, յաւուր

յայս_

,, յայսմիկ է քառանկիւնի, չափաւոր մեծութբ՟ հնգե֊
,, տասան հազար տանց : (Վոսսիոս ·) Երթեալ լիցես
,, անձամբ 'ի սեբաստիա, և զլիճն որ անդ՝ տեսեալ
,, լիցես : Պխնի ետ եպսն · բազում անգամ անցեալ է
,, իմ ը՟ սեբաստիա, և աչօք իմովք տեսեալ զլիճն՝
,, յորում չարչարեցան քառասուն վկայքն : Իսկ վասն
,, դրից և մեծութե և ձևոյ լճին ասաց եպսն · Լիճ սբց
,, քառասնից ոչ է 'ի մէջ քաղաքին, այլ արտաքոյ հին
,, քաղաքին, բայց մօտ նմին, որչափ հեռի է եկեղեցի
,, սբ հոգւոյն՝ որ 'ի սաքսիա հռովմայ՝ 'ի տաճարէ սբյն
,, պետրոսի, կմ՟ որչափ է միջոց ը՟ լեառն գողգոթայ
,, և ը՟ հին քաղաքն եղէմ· սոյնպէս և ը՟ լիճն և ը՟ հինն
,, սեբաստիա : Իսկ զձևոյ լճին կամ ծովակին ասաց
,, եպսն՝ թէ է բոլորածիր, բայց տարածի ը՟ իմիք, և
,, գրկաչափ մի բերի յերկայնութի (քան զլայնութե) :
,, (Վոսսիոս ·) Կայցէ՞ ինչ նշան զլճիւն, ուր նահատա֊
,, կեցան վկայքն · և որպիսի նշան տեսանի : Եպսն ա֊
,, սէ · կայ անդ նշան ինչ, այս է վէմ մի մեծ առ լճին՝
,, յորում կացին վկայքն, և ասի՝ թէ 'ի սառոյց ջրոյն
,, կրեցին զմարտիրոսութի · և անդ 'ի ջերմեռանդութե
,, ժողովրդոց ստէպ լուցանին քառասուն մոմեղէնք · և
,, բազմութիք յաճախեն 'ի լիճ անդր վս ուխտի, և ա֊
,, ղաւթին 'ի պէսպէս ախտից և 'ի հիւանդութեց · ոմ՟ և
,, 'ի ներկայութե իմում եղէ տեսօղ : (Վոսսիոս ·) Գտա՞ն
,, արդեօք և այլազգիք 'ի լիճ անդր ուխտի աղագաւ :
,, Պխնի ետ եպսն · բազում անգամ յայց ելանեն անդր
,, և ազգք Թուրքաց վս ախտից և ցաւոց իւրեանց, և
,, բազումք 'ի նոցանէ յոլովակի բժշկին · են և որ յետ
,, ընդունելոյ անդ զառողջութի սքանչելեօք՝ 'ի ծածուկ
,, մկրտին և քրիստոնեայ լինին · և օր յօրէ բազմադի֊
,, մի հրաշք տեսանին առ այն լճիւ 'ի ձեռն սբց քա֊
,, ռասնից :

,, (Վոսսիոս ·) Որչափ հեռի է կեսարիա կապադով֊
,, կացւոց 'ի սեբաստիոյ հայոց : Եպսն ասէ · տիրապէս
,, չորից աւուրց ճանապարհաւ : (Վոսսիոս ·) Եդեսիա
,, հայրենիք սբյն եփրեմի որքան է 'ի բացեայ 'ի սե֊
,, բաստիոյ : Եպսն ասէ · եդեսիա աւուրց հեռի է
,, անտի դրեթէ եօթն կմ ութ աւուրբք :

,, Առ սմ նախակարգեալ հարցուածոց այսպէս տրար
,, պխնի նախասացեալ եպսն հայոց՝ Թարգման ունե֊
,, լով հայաբարբառ զիս զբարթուղիմէոս արգարեան :
,, Այսպէս վկայեմ նոյն ինքն բարթուղիմէոս հայ֊

ԼԲ ,, կաղն՝

„ կաղն՝ ստորագրելով իմով ձեռամբ 'ի Նախայիշատա„ կեալ աւուր և 'ի տարւոջ||։

Զայս եղեալ՝ յաւելուն բոլլանդեանք և զհամառօտ վկայաբանութիւն սրբ՟ց քառասնից՝ թարգմանեալ 'ի հայ բարբառոյ 'ի լատին 'ի ձեռն Նորին բարթուղիմեայ Հայկազեան. այն իսկ է քաղուած յայսմաւուրաց. ուր 'ի վերջէ յաւելեալ է թարգմանիչն կմ՟ գրիչն զայս բան իբրև 'ի շարականացն. * որ պսակիչդ ես սրբ՟ց քոց, սոցին բարեխօսութբ՟ քո՟ ողորմեա մեզ||։

(2) Սբ՟ քառասունքն կոչին սովորաբար 'ի տօնացուցի և 'ի գիրս վարդապետաց, Մանկունք Սեբաստիոյ. ոպ՟ և 'ի շարականի նոցա ասի. * Լուսափայլ ողորմութե՟ քո „ շնորհք ծագեալ 'ի մէջ քառասնիցն՝ զուարճացոյց զսր՟ „ զմանկունսն||. և այս՝ ոպ՟ ասացաք և վասն մանկանցն եփեսոսի, յաղագս գոլոյն յարքունի սպասաւորութե՟ իբրև ժիր պաշտօնեայ. զի և 'ի սբ՟ գիրս և յհմ՟ լեզուս սպասաւորք կոչին Մանուկ. ռամկօրէն՝ Մանչ, և Տղայ. տճկ. Օղլան, կմ՟ Ուշաք. ոպ՟ և յն. Բէս. լտ. Ճուվէնիս. իտալ. Ճիօվինէ. յորմէ ռմկ. Ճիօան։ Ըստ այսմ յաւետարանի պաշտօնեայն հարիւրապետի անխտիր կոչի Մանուկ և Ծառայ։ Եւ ազարիանք յհմ՟ լեզուս կոչին Երեք Մանկունք. ոպ՟ և յոմանց՝ Տղայք Բաբելոնի. ուր նոքա էին երիտասարդք երևելիք 'ի գործ արքունի ը՟ դանիէլի. զորս և յօրինակ քառասուն մանկանց սեբաստիոյ բերեն սբ՟ն եփրեմ և նիւսացին։ Թող զի և 'ի խօսել սբ՟ գրոց ուրեք ուրեք զոմանց իբրև զմանկանց, զո՟ զսահակայ և զիսմայէլէ, զյակոբայ և զեսաւայ և՟ն, չէ պարտ միշտ իմանալ փոքրիկ տղայս. ոպ՟ յայտ է 'ի կարգէ պատմութե՟ն։ Իսկ քառասուն վկայքս արդէն էին զինուորեալ մանկունք երիտասարդացեալք և մտեալք 'ի պատերազմ. վս՟ որոյ և մանկագոյնն 'ի նս՟ սբ՟ն մելիտոս ոչ նուազ երևի լինել քան զքսանամեայ։

(3) Զնշխարաց և զվկայարանաց սրբ՟ց քառասնից է իմանալ զայն բան սբ՟յն բարսղի. * Սոքա են՝ որք զա՟ մեր „ պարունակեալ՝ ոչ 'ի միում ևեթ վայրի պարունակե„ ցան, այլ 'ի բազում տեղիս հիւրընկալեալ՝ զբազում „ ա՟ս շքեղազարդեցին||։ Ոպ՟ և նիւսացին ասէ. * Աւե„ րեցան մարմինքն, և բոց լափեաց զնս՟. այլ մոխիրք „ նց՟ և նշխարք այրեցածին ը՟ ամ՟ տիեզերս սփռեցան. „ զի իւրաքանչիւր ա՟ յօրհնութե՟ անտի վայելեսցէ||։ Գաւդենտիոս վկայէ, թէ * 'ի մեծի քաղաքի անդ „ կեսարու կապադովկացւոյ գոյր հոյակապ վկայա„

,, բան ն՟ց ||. ուր երևի խօսեցեալ ս՟րն բարսեղ զիւր ճառ. նոյնպէս և 'ի նիւսիա՝ (թող թէ 'ի սեբաստիա) որ 'ի կողմանս կապադովկացւոց, այլ եկեղեցի քառասնից, ուր խօսեցաւ նիւսացին զիւր ճառ: Մի յեօթն եկեղեցեաց անկիւրիոյ ևս է ն՟ր քառասունք. սոյնպէս իմս և զայլ տեղեաց: Այլ ժամ է լսել զբանս ս՟րյն գրիգորի նիւսացւոյ՝ որ յաղագս զօրութե՟ն նշխարաց ս՟րց հաւատարմացելոյ յանձին իւրում և այլոց 'ի ծանօթից.

* Ունէի (ասէ) առ իս մասն ինչ 'ի նշխարաց նոցին
,, (ս՟րց քառասնից.) և 'ի վախճանիլ ծնողաց իմոց՝ ըղ-
,, մարմինս ն՟ց ամփոփեցի առընթեր նշխարաց ն՟ր զօ-
,, րականացն. զի 'ի ժամանակի յարութե՟ն ը՟ բարեխօսս
,, իւրեանց յարիցեն լի յուսով և համարձակութ՟բ. քան-
,, զի գիտեմ զկարօղն լինել ն՟ց. և թէ քանի զօրաւոր
,, է համարձակութի և վստահութե՟ն ն՟ց առ ա՟ծ, յայտնի
,, ցուցակութե՟բ տեսի. յորոց զմին յիշատակել արժան
,, է՝ զանշուշտ վկայութի ասեմ զօրութե՟ն ն՟ց:

,, Կայ 'ի վիճակի իմում գիւղ, յորում նշխարք երանե-
,, լի վկայիցն հանգչին. ոչ ինչ հեռի է և փոքրիկ քա-
,, ղաքն իբորա կոչեցեալ. և եղև 'ի լինել 'ի քաղաքի
,, անդ համարոյ զօրաց ը՟ սովորութե՟ հռովմայեցւոց,
,, ոմն 'ի զօրականաց եկն 'ի գիւղ անդր՝ կարգեալ 'ի
,, հազարապետէ 'ի պահպանութի գեղջն, զի սանձեսցէ
,, զզինուորականացն զյարձակմունս և զհարստահարու-
,, թիս, զոր սովոր էին առնել անգթութ՟բ ը՟ շինականս:
,, Արդ՝ ցաւէր մի յոտից սորա և կաղայր. և էր վիշտն
,, հանապազորդեան և անբուժելի. և եղև՝ իբրև դա-
,, դարեաց զբազում աւուրս 'ի վկայարանի և 'ի հանգս-
,, տարանի ս՟րց. և աղերս արկեալ առաջի ա՟ն հայցէր
,, զբարեխօսութի ս՟րց, և ահա 'ի գիշերի երևի նմա այր
,, պատկառելի դիմօք. և յետ այլոց բանից ասէ ցնա.
,, կաղաս ո՛վ զինաւոր, և կարօտիս բժշկութե. այլ տուր
,, ինձ շօշափել զոտդ. և կալեալ յանուրջս զոտանէ
,, ն՟ր՝ քարշէ ուժգին: Յայնժամ վայրի տեսլեան գիշերոյ՝
,, այլք որ արթուն կային, լուան զայնպիսի խշիւն
,, ձայնի՝ զոր օրինակ պատահէ, յորժամ ոսկր խախ-
,, տեալ՝ անդրէն հաստատի բուռն ձգմամբ 'ի տեղի
,, իւր. մինչև զարթնուլ 'ի քնոյ և որոց ննջէին 'ի նոյն
,, յարկի. և ինքն զինուորն իսկ և իսկ թափեալ ըղ-
,, քունն՝ գտաւ ողջանդամ, և ընթանայր համարձակ
,, իբրև զայլսն:

,, Տեսօղ եղէ այսմ սքանչելեաց և ես ինքնին՝ ընտա-
նու.

,, նութեն ունելով ը̅ զօրականին ը̅ այնմիկ, որ ա̅մ ու֊
,, րեք առ ամենեսին քարոզէր զաւ 'ի վկայիցն ընկա֊
,, լեալ զերախտիս, և հռչակ հարկանէր զմարդասի֊
,, րուն զիննոճօրակցաց իւրոց : Այլ եթէ պարտ իցէ
,, և զոր իմում անձին առանձին դէպք եղեն՝ առաջի
,, տանել, ոչինչ դանդաղեցայց :

,, Այն ինչ հանդերձեալ էաք տանել զառաջին օր տօ֊
,, նի նշխարաց, և զտապանն բերել 'ի նր̅ տաճարն,
,, մայրն իմ՝ որոյ կեանքն էր ը̅ ա̅յ, և զա̅մ օր տօնի
,, պանծալի յօրինէր, պատուիրեաց և ինձ գալ կցորդ
,, լինել հանդիսին . և զի հեռագոյն ուրեք էի՝ տակա֊
,, ւին մանկահասակ և յՃական կարգի, ը̅ սովորութե̅
,, բազմազբաղ եղելոց զբօսեալ յայլ իրս՝ դժուարութ̅
,, ընկալայ տխմարս զկոչն զայն, դանդաղելով զմօրէ
,, իմմէ՝ զի զայնպիսի հանդէս չէթող յայլ ժամանակ,
,, այլ 'ի բազմապատիկ պատաղմանց զիս կոչեալ՝ է֊
,, բեր այսր . և այն զի չև էր գումարեալ բազմութե̅
,, հանդիսին : Արդ իբրև եկի 'ի շէնն, 'ի ժամ հսկ֊
,, ման աղօթից և պաշտաման եղելոյ 'ի պարտիզի, ուր
,, նշխարք սրբոյն սաղմոսիւք պատուեալ լինէին, ես
,, ննջէի 'ի մերձակայ տան անդ . և ահա տեսիլ երևե֊
,, ցաւ ինձ այսպիսի 'ի քուն հանգստեան . Թուէր ինձ
,, երթալ մտանել 'ի պարտէզ անդր՝ յորում պաշտա֊
,, մունքն կատարէին սրբութ̅ . և իբրև մատեայ առ
,, դուռն, երևեցան բազմութիւնք զօրականաց՝ որք պա֊
,, հէին զմուտս դրաց . յարեան փողփողակի, և շար֊
,, ժութ̅ և շառաչմամբ գաւազանաց յարձակեալ յիմ
,, վր̅՝ սպառնալեօք հանդերձ, չտային ինձ մուտ . և
,, հարուածս արդեօք 'ի վր̅ իմ ածէին, թէ չէր զիս
,, ազատեալ բարեխօսութե̅ միոյն՝ որ մարդասիրագոյն
,, քան զայլսն երևէր : Իբրև զարթեայ 'ի քնոյ, և յուշ
,, ածի զյանցանս դանդաղութ̅ իմոյ առ կոչն, յայնժամ
,, հասու եղէ խորհրդոյ ահաւոր տեսլեան զօրակա֊
,, նացն . և բազում արտասուօք լացի զանմտութե̅ իմ,
,, և զտապանակն գլխովին սր̅ նշխարաց դառն արտասու֊
,, ւօք թացի . զի քաւիչ լիցի ինձ ա̅ծ, և սր̅ զօրա֊
,, կանքն անյիշաչար լիցին իմոց յանցանաց : Զայսոսիկ
,, յառաջ բերի, զի հաւատասցուք՝ թէ կենդանի են
,, վկայքն, և են իբր առաջակայ պաշտօնեայք ա̅յ՝ որք
,, կան զնովաւ . և յաւուր յայսմիկ են 'ի շինութե̅ և 'ի
,, զարդ եկեղեցւոյ || :

Սբ̅ն գաւդենտիոս 'ի Ճառն նաւակատեաց տաճարի՝

զոր կանգնեաց յանուն սրբ̃ց քառասնից 'ի բրեքսիա ,
ասէ ․ * Զինչ ևս ասացից բան արժանաւոր յաղագս
„ քառասուն վկայից , որք արժանի համարեցան հաւատարիմ
„ ուղեկից զանձինս ընծայել ճանապարհին իմում,
„ յորժամ անցեալ ը̃ քաղաքս աշխ̃ին կապադովկացւոց՝
„ գնայի յեկեղ․ քանզի 'ի նմին իսկ 'ի մեծ քաղաքի
„ կապադովկիոյ՝ որ կեսարիա կոչի , ուր կայ
„ վկայարան նշանաւոր նոցին երանելեաց , գտաք զաղախինս
„ այ̃ ոմանս՝ մենարանի ոբ̃ կուսանաց արժանաւոր
„ մարս , ամ̃ին համանմանեալս մարիամու և
„ մարթայի , զորս իրաւամբք սիրէ յս̃ , հարազատս
„ բնութ̃բ և հաւատով և ճգնութ̃բ և անփորձական մաքրութ̃բ․
„ որոց 'ի քեռւոյ իւրեանց 'ի բարսղէ խոստովանօղ
„ քահանայէ (այն է մեծն բարսեղ կեսարացի
„) պարգևեալ էին երբեմն պատուական նշխարք
„ վկայիցս այսոցիկ ․ և զնոյնս ընծայեցին փափաքանաց
„ մերոց ․․․ Եւ մասն այն՝ որում արժանացաք , բոլոր
„ է ասելի ․ զի անմարթ է քառասուն վկայիցս բաժանիլ
„ յիրերաց , որոց անանջատելի և անորոշելի են
„ նշխարք ․ զի ոչ̃ զհոգիս նց̃ հուրն այն հոգւոյն այ̃
„ փրկական միութ̃բ հաւատոյ զօդեաց , զի էր ամ̃ հաւատացելոց
„ սիրտ մի և անձն մի , սոյնպէս և զանգամս
„ նց̃ այրեցօղ հուրն 'ի մի մարմին մոխրոյ վերածեաց ։
„ Եւ արդ ունիմք և զսոսին զքառասունս , և
„ զայլ ևս տասն վկայս 'ի կողմանց կողմանց համահաւաքեալս ․
„ նմին իրի և զայս վկայարան նուիրել̃ 'ի պատիւ
„ նց̃ պարտ վարկանիմք սահմանել կոչել ԺՈՂՈՎ ՍՐԲ̃Ց ||։
'ի նոյն միտս խօսի և սեւերիանոս առ ժողովուրդս սեբաստիոյ՝
որք էին բնիկ ժառանգք ոսկերաց սրբ̃ վըկայիցս ․
* Արդ վայելչացեալ (ասէ) եկեղեցի այ̃՝
„ տօնէ զյիշատակ սրբ̃ց քառասնիցն այսքան պայծառութ̃բ
„ երկնիւք և երկրաւ ․․․ Զայս , և առաւել
„ քան զայս՝ ուրախուն կրէ քաղաքս սեբաստիա ․ քանզի
„ պարծի քառասուն ունելով յինքեան արեգակունս՝
„ միով լուսով ծագեալ ․ վս̃ որոյ և քան զբազում
„ քաղաքս հռչակաւոր և անուանի , բայց ոչ վերջանան
„ և այլքն ․ զի և շնորհքն այ̃ անզեղջ են ։ Քանզի
„ ուր և գտցի մասն 'ի նոցունց , ՔԱՌԱՍՈՒՆՔ անուանի ․
„ զի միով անուամբ ամենեքեան կոչեցան , և սփռեցան
„ անուանք նց̃ ը̃ բոլոր աշխ̃ս ․ և ամենեցուն եղեն
„ շնորհս բժշկութե̃ , և պսակ հասարակաց հաւատով
„ տօնողացս ||։

'ի վենետիկ քաղաքի՝ (ուրոյն 'ի մերմէ կղզւոյ՝ որ յանուն սրբոյն ղազարու) կայ եկեղեցի սրբոյն ղազարու յանկելանոցն կամ 'ի ժողովարանն մուրացիկ կոչեցեալ· արդ 'ի նմին եկեղեցւոջ պահին վկայութեամբ հին յիշատակարանաց իբր յարևելից բերեալ երևելի նշխարք սրբոց, որք ասին լինել ոսկերք սրբոյն մելիտոսի, և բազում այլոյ ուրուք 'ի քառասուն վկայիցս: Այլ և 'ի տուրինի քաղաք ասի բերեալ 'ի հռովմայ մարմին կամ ոսկերք սրբոյն գորգոնիոսի՝ իբրև 'ի թուոյ սրբոց քառասնից: 'ի հռովմ երկու վկայարանք կանգնեցան յանուն սրբոց քառասնիցս· մինն էր 'ի ձեռս եղբայրութեան ասպաւինելոց առ սուրբ աստուածածինն, նորոգեալ և զարդարեալ նկարուք պատկերաց սրբոց վկայիցս յամի Տեառն 1608· և էր անդ սովորութիւն մինչև ցաւուրս մեր ամ ըստ ամէ 'ի յիշատակի քառասնից (զոր կատարէին միշտ 'ի մարտի 9· և ապա փոխադրեցաւ 'ի 10· և յայլոց 'ի 11·) բաշխել աղքատաց ողորմութիւն՝ հաց և բակլայ· իսկ միւսն էր 'ի ձեռս եղբայրութեան վիրաց սրբոյն փրանկիսկոսի:

Նոյնպէս և 'ի նոր հռովմ որ է 'ի կոստանդնուպօլիս երկու վկայարանք էին յանուն սրբոց քառասնիցս· մին առ կոստանդեական բաղանեօք՝ շինեալ յանաստասայ կայսերէ և յարիադնայ կնոջէ նորա· և միւսն առաւել գլխաւոր՝ էր տուն պռետորական կամ զինուորանոց· զոր մաքրեալ տիբերեայ կայսեր թրակացւոյ հանդերձ կնաւ իւրով անաստասիաւ, նոր հիմն եդ եկեղեցւոյ, և շինեաց զորմունս նորա 'ի բարձրունս չորից կանգնոց· այլ 'ի մեռանել նորա մօրիկ կայսր փեսայ նորուն՝ աւարտեաց զշինուած եկեղեցւոյ, և զանուն եդ առ նմա յութերորդ ամի կայսերութեան իւրոյ:

Գրէ եւստաթիոս քահանայ ժամանակակից 'ի վարս սրբոյն եւտիքիոսի պատրիարգին կոստանդնուպօլսոյ, թէ սա առ երախտագէտ լինելոյ հայրենեաց իւրոց՝ * ըզ-
,, քաղաքագիւղն փռիւգիոյ զկոչեցեալն աստուածաւան՝ պա-
,, տեաց ամուր պարսպաւ, և փոյթ կալաւ շինել 'ի
,, նմա զտաճար սրբոց քառասուն վկայից· որպէս զի տեղին
,, այն իրաւամբք 'ի բազում պատճառաց մարթասցի
,, կոչել աստուածային (գիւղ), և եղիցի քաղաք ապաստա-
,, նի 'ի փրկութիւն հոգւոց բազմաց ||:

(4) Յաղագս լճին, զորմէ տես և 'ի վեր անդր· ծան" (1) ուսանիմք վկայութենէ և 'ի վարուց սրբոյն վլասայ սեբաստացւոյ (որ վկայեաց 'ի նոյն հալածանս), թէ և նա արկաւ 'ի նոյն լիճ 'ի նմին ագրիկողայոսէ դատաւորէ·

այլ ս̅ր̅ եղան գնաց և նստաւ 'ի վ̅ր ջրոց Եբրև 'ի ցամաքի• զորոյ զփորձ առեալ հեթանոսաց՝ ընկղմեցան: Եւ վ̅ս ս̅ր̅ն Իրենարքոսի՝ զոր տօնեն այլք 'ի Նոյեմբ• 28• գրեալ է, թէ արկաւ 'ի նոյն լիճ սեբաստիոյ առ դիոկղետիանոսիւ: Արդ 'ի կարգէ պատմուե̅ ս̅ր̅ց քառասնից ունիմք իմանալ, թէ դատաւորն էարկ զնոսա ոչ այնչափ առ 'ի ընկղմիլ (ապա թէ ոչ՝ վէմ կախէին զպարանոցացն, որ ոչ լինէր), որչափ առ 'ի տագնապիլ 'ի ցրտոյ մինչև 'ի մահ, եթէ մնասցեն հաստատուն 'ի հաւատս• ապա եթէ զղջասցին 'ի բարւոյն և կամիցին ազատիլ ի̅ մարտինոյ, ելցեն արտաքս 'ի բաղանիս• ո̅պ̅ եղև ը̅ կորուսեալն• ուստի յայտ է՝ թէ 'ի ծանծաղ տեղիս մօտ յափնկոյս ծովակին եդին զնոսա• ուր և յետոյ տիրեաց սառն, և որ 'ի կարգին: Այլ տեսանեմք, զի 'ի մթուե̅ բանից ս̅ր̅ն բարսղի ի̅ օրինակաց լինի, ո̅պ̅ և առ նիւսացւոյն, այնպէս երևի՝ թէ յորժամ արկան ս̅ր̅ք 'ի լիճն, արդէն իսկ կայր սառն, և 'ի վ̅ր սառին եդան• և թէ անդ կացին զմի օր կ̅մ զերկս աւուրս• և զայս հաւանական համարեալ ոմանց 'ի յետին վկայագրաց լատինացւոց՝ պարզապէս եդին, թէ 'ի սառն արկան:

Այլ այս կարծիք սուտ 'ի բուն վկայաբանութե̅ց (զորոց զերկու հին օրինակս 'ի յունականէ թարգմանեալ տպագրեն բոլլանդեանք), նոյնպ̅ և 'ի միաբան վկայութե̅ ա̅մ̅ յայսմաւուրաց և մատենագրաց առաջնոց, և յաւանդութե̅ ա̅մ̅ եկեղեցեաց 'ի պաշտամունս իւրեանց• զի առհասարակ գրի և առի յամենեցունց, թէ 'ի ջուր լճին արկան, և ջուրն պաղեալ սառեցաւ 'ի գիշերի: Սմին իրի և գերարդոն վասիլոս՝ որ բազումս աշխատասիրեաց 'ի զննութի̅ վկայաբանուե̅ ս̅ր̅ց քառասնից, բազմապատիկ վկայութի̅ք հաստատէ զայս 'ի ծանօթութիւն՝ որ 'ի վ̅ր ճառի ս̅ր̅ն եփրեմի• և 'ի վ̅ր բերէ•

* Սոյնպէս և 'ի նկարս եթէ արևելեայց և եթէ ա-
,, րևմտեայց այս խ̅ն վկայք տեսանին նկարեալ մերկ 'ի
,, մէջ լճին• ո̅պ̅ է տեսանել և 'ի հռոմ յեկեղեցւոջ
,, խ̅ վկայից 'ի թեմն՝ որ յայնկոյս տիբերեայ• և ևս յե-
,, կեղեցւոջ ս̅ր̅ն սեբաստիանոսի 'ի կեղիոս լերինն, և
,, յեկեղեցւոջ ս̅ր̅ն վիտալիսի: 'Ի լրումն ա̅մ̅ի՝ ցուցա-
,, նի նոյն ճշմարտութի̅ 'ի միաձայն հաւանութե̅ ա̅մ̅
,, ազգաց և ժողովրդոց: Այնպէս ունին զայս վարս
,, և միշտ այսպ̅ կալան ոչ միայն լատինք, այլև յոյնք,
,, ասորիք, քաղդէացիք, մառոնիք, հայք, և որ այլ ևս
,, արևե-

„ արևելեան աղինք: Հաւատարիմ լիցին քեզ վաղեմի
„ պաշտամունք յունաց և եկեղեցական գրեանք նոցա,
„ վկայագիրք, եղանակագիրք, և ժամագիրք: Հաւա-
„ տարիմ լիցին յիշատակարանք ասորւոց և քաղդէաց-
„ ւոց. հաւատարիմ լիցին մարոնիք՝ որք զքաղդէաց-
„ ւոցն ընթեռնուն պաշտամունս, և նոցին են հե-
„ տեւորդք: Հաւատարիմ լիցին ժողովուրդք հայաս-
„ տանեայց՝ ոչ միայն ինքեանք, որք զոյն աւանդութն
„ հաստատութբ ունին ցայսվայր զմեջս, թէ 'ի լինն՝
„ որ առ նն՝ չարչարեցան, այլև հին յայսմաւուրք նց,
„ և շարականոցն՝ յորս նոյնն գլխովին բովանդակի:
„ Մի խօսք բանիւ, հաւատարիմ լիցի ամ իրք հնագոյն
„ աւանդութի եկեղեցւոյ յայսմ մասին, որում չէ մարթ
„ ընդդէմ կքրիլ ||:

(5) Զքառասուն թուոյ սրբոց յարմարութն է քառաս-
նորդական պահոց յիշատակէ և նիւսացին՝ Տանուցանե-
լով և զցրտութի աւուրցն, յաւելանդ 'ի Ճառն երկրորդ.
* Այս ժամանակ էր, և այս աւուրք մրցանաց նոցա.
„ այս նախերգութի պասեքի՝ խորհուրդ ոբ քառասնոր-
„ դաց. քառասուն աւուրք քաւութե են մեզ, և համա-
„ թիւ պահք սրբց: Մի արդեօք աւելախօս և վայրա-
„ բան ձեզ երևեցայց, եթէ զոր 'ի ձերում միջի զպքան-
„ չելիս բացադրել յօժարիցիմ, և ձերովքդ բարեօք
„ զլսելիս ձեր բաւխիցեմ. այլ զի մի թերակատար
„ սահեսցի բանս, ծն եկայք 'ի փախճան նահատակու-
„ թեն է սրբս և մեք ընթասցուք: Ցուրտ էր յաւուր
„ յայնմիկ. և չէն ինչ պէտք ուսուցանելոյ զձեզ. թէ
„ որպիսի էր ցուրտն. զի յօրէ սատի յայսմանէ մարթ
„ է ձեզ զայն իմաստասիրել. ցուրտ՝ որ և զհերս գլխո-
„ վին սառուցանէ. քաջ գիտակ էք սաստկութեն և
„ դժնդակութեն՝ եթէ եկք, և եթէ բնակք ||:

Սա ինքն ոբ գրիգոր նիւսացի 'ի թուղթն առ փլաբիա-
նոս եպս, ուր յիշէ զհանդիպիլն իւր 'ի սեբաստիա քա-
ղաք, երևի ցուցանել՝ թէ սեբաստացիք 'ի տօնի սրբց
քառասնից կատարէին միանգամայն և զյիշատակ սրբյն
պետրոսի եպսին իւրեանց, որ եգիտ զնշխարս սրբց
վկայիցս 'ի խաղի անդ գետոյն:

ՄՈՒՏՆ Ի ՎԻՐԱՊ

Ս̅բյ հօրն մերոյ Գրիգորի լուսաւորչին :

ԾԱՆՈՒՑՈՒՄՆ:

Օ պատմականն հատուածովք բան 'ի սեպհական տեղւոջ 'ի լիակատար վարս երիցս երանեալ հօր մերոյ՝ 'ի տօնի գիւտի նշխարաց նր̅ : Իսկ յայսմ վայրի զպատճառ տօնիս մտիցն 'ի վիրապ նշանակեալ՝ ներբողական ճառիւ պատուաւորել եդաք 'ի մտի զօրս առաջիկայ 'ի պէտս տօնաւորաց :

Եւ արդ՝ որպէս յայտ է, 'ի վերջին կարգաւորութե̅ տօնացուցին մերոյ յաւուրս վկայասիրին գրիգորի կամ ներսեսի շնորհալւոյ՝ առ 'ի յիշատակէ բազմերախտ հօրս հոգւոյ՝ մեծի լուսաւորչի, ոչ զատ համարեցաւ արժ̅ն կատարել զգլխաւոր օր տօնի նր̅՝ որ վս̅ կոչմանն նր̅ յերկինս՝ ընդ անուամբ գիւտի նշխարաց, այլ երկուս առանձին յիշատակս կարգեցին՝ վս̅ մտից նր̅ 'ի վիրապն (որոյ ժամանակն անյայտ), և վս̅ ելիցն 'ի վիրապէն (որ եղև յամսեանն հոկտեմբերի)։ Օ մուտս վերածին արդեօք խորհրդով 'ի մերձոյ քառասնորդական պահոց, ըստ որում և ս̅բ հայրն մեր պկատարեալն պահեաց պահս 'ի վիրապի անդ զամս իբր չորեքտասան կամ հնգետասան՝ յետ բազմաչարչար նահատակութե̅ն : Իսկ զելսն նշանակեցին յետ պենտեկոստէի խորհրդաբար՝ զկնի տօնի հռիփսիմեանց, և հանգստեան նշխարաց յովհաննու կարապետին, 'ի նախընթացն առաւր տօնի եկեղեցւոյն՝ զոր կարգեաց նա ինքն լուսաւորիչն, ըստ որում յետ ելիցն 'ի վիրապէ ամփոփեաց զնշխարս

հանց-

Հռիփսիմեանց, և շինեաց եկեղեցի, այլովքն հանդերձ . Թո՛ղ զի որպէս մուտն 'ի Վիրապ 'ի դէպ գայր աւուրց սգոյ ըստ օրինակի թաղման Տ̅ն, նոյնպէս և ելն 'ի Վիրապէ ուրախական՝ ճահողակէ յետ մեծոյն յարութե̅ վայելչապէս կատարեսցի :

Այս ըստ այժմու կարգի՝ զոր կոչեմք վերջին կարգաւորութե̅ տօնացուցի, ըստ որոյ 'ի սովորական օրինակս ձեռագիր և տպագիր տօնացուցից՝ օրս առաջիկայ նշանակի այսպէս . * Սբ̅յն Գրիգորի Լուսաւորչին (կմ̅ Հայոց լուսաւորչին, կմ̅ մերոյ լուսաւորչին) մուտն 'ի Վիրապն (կմ̅ 'ի Վիրապէն) || : Իսկ ըստ առաջին և հնագոյն կարգաւորութե̅ տեսանեմք 'ի հին երկաթագիր ճաշոցի՝ յայսմ վայրի 'ի Է̅ շաբաթու աղցից եդեալ, * Սահմի ամսոյ՝ որ օր ժէ . Սբ̅յն Գրիգորի ելն 'ի Վիրապէն : Սաղմոս . լ̅թ . կցուրդ . Եհան զիս 'ի գբոյ տառապանաց : Ընթերց . առակ . Յայնժամ կայցէ արդարն .... եթէ մեզ նշաւակաւոր : Առաք . Առ կատարեցին աւուրք ոգոյ քո .... 'ի Վէ̅ գլխոյ նոյա : Պօղ . Եբր . Անսացէք ձերոց առաջնորդաց .... որում փառք յաւիտեանս : Աւետ . Մատթ . Յայնժամ պատասխանի ետ Պետրոս .... և զկեանսն յաւիտենականս ժառանգեսցէ || : Յորմէ երեւի՝ թէ օրս այս յանուն ելիցն 'ի Վիրապէն՝ էր յառաջն տօն մեծ . և թէ որպէս փոխեցաւ զինի 'ի մուտն, կարեմք գուշակել ինչ ստուգիւ . զի 'ի յետագայ դարս տեսանեմք ըստ այլ և այլ գրչաց ճաշոցաց և տօնացուցից շփոթեալ զօր ելիցն 'ի Վիրապէ ընդ մտիցն, և զգիւտ նշխարացն ընդ նոսին . զորոյ և զնշանակն գտանեմք 'ի նորագոյն ձեռագիրս ինչ տօնացուցի վերածեալ յայլ գիւտ նշխարաց . զորօրինակ 'ի մի ձեռ" ատանոյ եդեալ կայ պարզապէս . * Սբ̅յն Գրիգորի գիւտ նշխարացն || .

րայն ‖ . և յօտար գրչէ յաւելեալ 'ի լուսանցս . * Մուտն 'ի վերայ ‖ : Թո՛ղ զքանի մի օրինակս , յորս հանգոյն յետագիր Ճաշոցաց գրեալ է անուղղակի . * ս͞բյն գրիգորի լուսաւորչին ‖ : և 'ի մուտ . * ելն 'ի վերայէ ‖ : Իսկ յայլ քանի մի յետագիրս նորս գտնի այսպէս . * Ս͞բյն գրիգորի հայոց լուսաւորչին մուտն 'ի վերայն , և գիւտ նշխարացն 'ի կոստանդնուպօլիս ‖ . կամ այսպէս , * ս͞բյն գրիգորի հայոց լուսաւորչին գիւտ նշխարացն 'ի կոստանդնուպօլիս , և մուտն 'ի վերայն ‖ : Այս ա͞մ շփոթ գրչութէ յառաջագայ' ա . յանգիտութէ գրչաց , որք յետին և զնոր օրինակս բաղադրեն' առանց ստոյգ հմտութէ հնութեց և նորութեց : Բ . յանբաւական հեղինակութէ , զի անցամք աննշեն հարգաւորել կամին լինել տօնացուցից : Գ . 'ի վրիպակ բաղդատութէ հայերէն և հռոմայեցի ամսոց , որք դարուց 'ի դարս այլօրինակ համեմատեն ըներաց . նմին երի և տօնք աւուրց' որք յառաջին նշանակեալ լինէին ըստ հայերէն ամսոց , ըստ այլ և այլ համեմատութեց դարուց մարթեն յեղափոխել 'ի գրչաց :

Օրայսոսէկ հարկանցի նշանակեցաք , զի մի՛ ոք շփոթեսցի 'ի պէսպէսութէ օրինակաց . զայս է օրինաւոր և հաստատուն ուղղութէ առնէ 'ի բառնալ զա͞մ դժուարութի . արդ քանզի 'ի բազում դարուց հետէ միօրինակ պահի որոշումն զանազանելոյ աւուրց տօնի լուսաւորչին յայս և յայն միջոց , պարտ է և մեզ զնոյն անփոփոխ պահել . և ըստ միոյ միոյ 'ի տօնիցն զարժանաւոր կարգ պատշաճին անխափան կատարել :

Բայց զի մի՛ և պատմութիւն կրկնեսցի 'ի զանազանել տօնս , զմուտս և զելս վերային ճառօրէն գոլութէ մեծարեսցուք , զկատարեալ վարս 'ի տօն գիւտին նշխարացն պահելով :

ՃԱՌ

ՃԱՌ ՆԵՐԲՈՂԵԱՆ

՚Ի խորհուրդ Խոր Վիրապին ։

ՆՈՐ ԱԲՐԱՀԱՄ հայրն հաւատոյ , արթուն դիտապետ և լուսաւորիչ հոգւոց մերոց Տ՟ր գրիգորիոս , ը՟ ա՟ծեղէն խորին տնտեսութե՟ և ամենախնամ առ մեզ տեսչութե՟ , նախ զառաջինն ը՟ օրինակի մեծ նահապետին յերկրէ և յազգէ իւրմէ ելանէր ՚ի պարթեւաց , և այն՝ մինչ չև ծնեալ . և եկեալ բնակ լինէր [illegible] հայաստանեայց՝ ծննդեամբ և սննդեամբ ՚ի սահմանս ն՟ր ։ Յետ այնորիկ ը՟ հանդէս աբրահամու և սահակայ միանգամայն անցեալ՝ զոհէր և ողջակիզէր զմարմինն բազմատեսակ չարչարանօք մահուչափ , այլ պահեալ լինէր աջով հզօրին կենդանի սքանչելա՟պս . զի պատճառք կենդանութե՟ եղիցի հոգւոց բազմաց ։ Եւ այս ո՞րպէս , եթէ ոչ նախ երկնելով ահագին ձգամբք և յերկար աղօթիւք՝ զոր ծնանելոցն էր հոգեպէս զազգմի ողջոյն միանգամայն , մանաւանդ թէ ը՟ յովսեփայ ը՟ փորձ անցանելով մտից և ելից գբոյ՝ զի մարթասցի լինել փոսմիթուփանէ , այս է ազատեցուցիչ սովելոց յերե-

սաց

տաց սովրու ա՟ծայինն բանին . վ՟ս որոյ ո՟չ ըստ միում տեսուն յարուցեալ այսօր իջանէ ը՟ս բենատեսին յակոբայ յօրինակ եգիպտոսի 'ի վերայ , նոյնպէս և ը՟ս այլում՝ հանգոյն աճեցուն և նախանձելի զաւակի նո՟ր յովսեփու՝ արկանի 'ի գուբ անդր , արդարն իբրև մեղապարտ . զի լաւ է բարեգործացն ըստ կամացն ա՟յ չարչարիլ՝ քան չարագործաց :

Ո՟վ սքանչելեաց . 'ի խոնարհն զբարձունս , 'ի փոքրն յաչս իւր զմեծամեծս , և 'ի միում զբազում նկարագրէր գեղեցկապէս ամենարուեստն իմաստութի երկնային . 'ի պանծալի հայրն մեր ասեմ զա՟ծամերձ նահապետս տանն ի՟էլի . զի մեծ էր անտեսութին հաւատացեալ մեծին գրիգորի , և երկնաբերձ առաքինութի նորա՝ տիրապէս բարեկամութի առաքելով առ ա՟ծ 'ի վեր ը՟ս նահապետական ընտանութե . ևս առաւել՝ զի հանդերձեալ ևս էր լինել կանխագէտ և յառաջասաց ը՟ս մարգարէից , ընտրեալ ընդ առաքելոց , դասակից ը՟ս վարդապետս և ը՟ս խոստովանող հայրապետս , և վաստակակից միանձանց ճգնաւորաց , և պարակից սե՟ց վկայից արեամբ նահատակելոց :

Որին աղագաւ և ամենատրն ը՟ս բազմահանդէս պաշտամանն և պատուոյ՝ յոր հրաւիրեաց զհաւատարիմ իւր ծառայ , յետ բազմօրեայ հանդիսի ազգի ազգի և անտանելի տանջանաց վկայուէ յատենին տրդատայ վ՟ս անուան իւրոյ փառաւորելոյ՝ ներբեր երկայնմտութե և թողացուցանէր ճգնաւոր եւ բազմաչարչար նահատակին վիրապընկեց լինել եւ բնակակից օձից եւ սողնոց թունաւորաց բազմամեայ ժամանակօք ։

Օր այս հանդէս է յաղթողական՝ անթարգմանելի սիրոյ գթեղ սիրողին . որով պատուել սիրելեաց առաւել տանջել յատիս բնաւորեալ է , եւ զնախը ընտիրս 'ի զօրականսն՝ 'ի փորձ տալ մեծի պատերազմի յառաջադրաւ շահատակութե̄ . ծանունս գնել աշխատութիս 'ի վր̄ քրտնաջան մշակաց , դժուարինս ցուցանել ճանապարհս քաջընթաց եղելոց , ուղղեակ կարգեալ յալեկոծ ծովու զճարտարագոյնն 'ի ղեկավարաց . զոր կամի բարձրացուցանել՝ նախ խոնարհեցուցանել , եւ այնչափ 'ի խորս իջուցանել խոնարհուե՝ որչափ կամի 'ի վեր յերկինս բարձր առնել յաւիտեան . զի զփառաւորիչս իմ փառաւորեցից՝ ասէ տր̄ ։ Ապա թէ ոչ՝ առիմէ՞ գրիգորի յետ յոքնապատիկ կտտանացն և 'ի վիրապ իջանել անարգական , եթէ ոչ զի փառօք հանցէ զնա տր̄ 'ի լինել լուսածագող Ծին արեւելից . զոր օրինակ մուտ արեւուն՝ ելիցն է գուշակ . եւ թէ ոչ արեւամուտ , ո՞ւր արեւելք երբէք ։

Այլ ինձ եւ այլ խորհուրդ է նշմարել 'ի խորհրդեանս . զի ես տեսանեմ 'ի մուտս անդ նորահրաշ արեւուս՝ արփիականն գրիգորի , եւ մուտ յելս անդ . որ է հրաշափառագոյն ։ Տեսանեմ զնա է̄ 'ի վիրապն մտանել՝ վերելակեն̄ գերաստիճան է̄ յակոբեան սանդուղս մինչեւ յերրորդ երկինս՝ 'ի բարձունս բարձունս խորին խորհրդոց . և յելսն ՚ի վիրապէ՝ խորամուխ խոնարհութ̃ սփռել զլուսափիւռ ճառագայթս ՚ի վ̃ր նստելոցն ՚ի խաւարի խորանիստ հայրենաւանդ ըստուերամած կռապաշտութե ։ Յայտ է , զի եթէ ոչ լուսանայր գլխովին արփիատարա ամենն երանելի ՚ի մթան նորա վիրապին , ոչ կարող լինէր լուսածագել յելս նորա իւրում ոմ̃ զարեգական . արդ ծագեաց , որչափ և ծագեցաւ ՚ի նա անչափութ̃ լոյսն ՚ի վերուստ ՚ի հօրէն լուսոյ . և պարգևեաց՝ զոր պարգևեցաւ նմա յանճառական աջոյն ձիրք շնորհաց ը̃ ազգս ազգս , իբրև զքարուք հազարապետ խորհրդոցն ո̃յ մատակարարելով մեզ լուսաւորութի՝ լուսատուն հոգւոց ։ Այլ երկրորդիս այս ՚ի տօնի նորա ելիցն ՚ի վիրապէ հանդէս . յայժմուս զառաջնոյն զխորութ̃ի տեսանելի է ։

Տեսանեմք զքեզ ս̃ր գրիգորիէ ՚ի խորս եջեալ վիրապին մարմնով , և բլշանօք տկարաբեր աչացս՝ իբր վայրանկեալ և այր մի տառապեալ զոգցես նկատեմք . այլ դու պատմեա́ մեզ զանտեսանելիս՝ զանյայտս և զծածկեալս վերնական իմաստութե քեզ յայտնեալս ՚ի խորութ̃ նորա գբոյդ , և ըղհոգւով վերամբարձութ̃ս ՚ի վայրի նորա խոնարհութե ։ Գիտեմք , զի ո́չ պատիժ պատժաւորի եղև քեզ վիրապդ՝ ո̃մ կարծէին որք արկին զքեզ , այլ դրախտ փափկութե առ սէր սիրելւոյ քո . ո́չ գուբ տառապանաց՝ կաւուտ և տղմուտ՝ խորափիտն այն զեռնոց թունաւորաց , այլ յարկ ցնծութեան և ուրախութեան արդարոյդ ։ Այլ կարի իսկ քաջ · վասն զի հանգիստ քեզ գրեցեր զաշխատութիւն , փառս զկամս Աստուծոյ նեղուէիս , հանդարտութիւն զառանձնութիւնդ , նաւահանգիստ զնոր անապատդ անձաւամուտ և գետնախշտի խղի վիրապիդ · միայնացար սիրողապէս 'ի գբիդ՝ որպէս 'ի մենարանի կատարեալ միայնակեցի · և գտեր զոր խնդրէիրն , կանխագոյն և կատարելագոյն քան զգբեցին Յովհաննէս հայկազուն՝ նորօրինակ ճգնարան , և սիրալի կրթարան և վարժարան ։ Կրթեցար կատարեալդ 'ի կատարելութեան · ուսար զիմանալիս և զանիմանալիս 'ի հոգւոյն վարդապետութեան · խորհրդազգած եղեր վերին իմաստութեան · և 'ի ծայրն հասեալ գիտութեան սրբոց՝ բացաքորքոք վերբերութեամբ սիրոյն Աստուծոյ , ծանեար՝ զի Աստուած սէր է , և ծանուցար աստուածասէր և սիրելի Աստուծոյ իսկագոյն · զորոյ զնշանակս յարդեանց հաւատարմացեալ՝ տեսանեն ականիք ականաւորք 'ի տեսարանի յաճախապատում գրոց վ՟ճպութե՟դ · որ է հրաշատեսիլ նմանութիւն անկեզ մորենւոյ՝ հրավառեալ սրտի կենդանախարուկելոյ յաստուածեղէն սիրոյ ։ Այլ ոչինչ են զարմանք · զի այս արդասիք պտղոյ են բազմամեայ առանձնակեցիկ տքնութեանդ 'ի սենեակ վիրապիդ խորոյ՝ հանապազորդեան ընդ Աստուած խօսակցութեամբ սիրոյ ընտանութեան ։ Ո՞վ այլ ոք էր առ քեզ 'ի խորս անդ ո՛վ երանելիդ՝ բայց 'ի Տեառնէ Աստուծոյ քումմէ , այն՝ որ պահէր զքեզ 'ի խածուածոյ և 'ի թունից սատակչական սողնոց ։ Մն զի ընդ քեզ էջ Տր քո՝ ոմ է յովսեփայ , և ոչ եթող զքեզ 'ի ձեռանէ ։ և զիա՞րդ թողուր , ուր դու ոչ թողեր զնա երբէք՝ արեամբ չափ փորձանօք հանդերձ ։

Ռա՜բէ ։ զի՞ բարի կմ զի՞ վայելուչ՝ նուագէր սաղմոսերգուն , զի բնակեն եղբարք 'ի միասին ։ այլ ես վերադոչեմ աստանօր հիացմամբ և անյագ փափաքմամբ ։ զի՞ բարի կմ զի՞ վայելուչ , զի բնակէ ած ընդ մարդոյ՝ թագաւորն փառաց է ծառայի 'ի հող մահու խոնարհելոյ ; լոյսն անքննին է հօգւոց լուսաւորչի՝ յառանձնուե անդ սրտի նր յօձաբնակ վիրապին ։ Ոչ ևս վիրապ կոչեմ զայն վայր ցանկալի , այլ՝ վեհ հրաբունիցն կայանից՝ երկինք երկնից տն , և աթոռ բարձրուե անմահ արքային ։ զի տր էր ընդ քեզ գրի՛գորիէ և առ քեզ և 'ի քեզ և զքև ։ և զո՛ր օրինակ նովաւ պահեցար կենդանի 'ի վայրն մահու , նոյնպէս և նովաւ և 'ի նոյն էր կեալ քո և շարժիլ և գոլ անպատմելի ։ Զայս այսպէս գիտեմք և հաւատամք աներկբայ , այլ անկարանամք զիսկն ճանաչել , թո՛ղ թէ թարգմանել , նախանձելի վիճակիդ՝ անճաշակքս յիմանալի խորտկաց անուշից հոգւոյն ։

Լուարո՛ւք , զի՞նչ գրիգոր ասէ ։ Զոր ակն ոչ ետես , և ունկն ոչ լուաւ , և 'ի սիրտ մարդոյ ոչ անկաւ , պատրաստեաց ինձ տր , և ես վայելել ըստ տանելոյ մարդոյ մահկանացուի յարգի վիճակի՝ 'ի խորուե աստ վիրապիս, լցեալ 'ի յիս զիւրականն բան անսուտ, եթէ արքայութիւն ա՟յ 'ի ներքս 'ի ձեզ է ։ Ընդ առաւել մատեայ առ տ՟ր, և առի զլոյս ․ անդ ճաշակեցի և տեսի, զի քաղցր է տ՟ր ․ վ՟ն զի անդ նստայ 'ի սեղան հօրն երկնաւորի՝ առնուլ զճաշակն անմահութե՟ն ըստ խոստման բանին առ 'ի պարգևաց մխիթարիչ ս՟բ հոգւոյն ․ կերայ և արբի և արբեցայ 'ի վայելից և յուղխից փափկութե՟ անճառական կենաց ։ Ոչ ոք 'ի թագաւորաց վայելեաց երբէք յայնպիսի անուշաճաշակ բերկրանս և 'ի պարարիչ գրգանս, ո՟պ ես 'ի վիրապին արտաշատու, և միւս ես մարկոս աբբայն առ ինև 'ի դարմանկիա լերին ․ ոչ ոք 'ի նոցանէ այնպէս փափկացաւ 'ի դահոյս արքունի, ո՟պ ես 'ի մէջ օձից, և դանիէլ 'ի գուբն առիւծուց ․ ոչ ոք այնպէս զուարճացաւ 'ի պարտէզս և 'ի բուրաստանս, որպէս ես 'ի մէջ կաւոյ և տղմոյ ը՟ն յովսեփայ և երեմիայի ․ վ՟ն զի ա՟ծ էր ը՟ն իս ։ Ոչ ոք յշ՟ի այնպէս քաղցրացաւ 'ի սէր մտերիմ սիրելւոյ իւրոյ, ո՟պ ես յառանձնութե՟ անդ ը՟ն ա՟յ ․ Ո՟ ոք այնպէս կղկաթեցաւ յընտանի զրոյցս բարեկամի, որպէս ես 'ի համապազորդեան խօսս ը՟ն ա՟յ 'ի խորոց սրտից 'ի խորութե՟ վիրապին ։

Երիցս հինգ ամաց երկարու՟ի յայնպիսում վայրի՝ ոչ համարեցաւ ինձ 'ի թի՛ւ աւուրց անգամ տասանց և հնգից ․ զի այս բնութ՟ի է ա՟ծային քաղցրութե՟՝ յափշտակել զոգին և ընկղմել 'ի խորս անուշութե՟ ․ մինչև անձին լինել մուացող, թող թէ ծի և ժամանակի․ ո՞չ գիտակ են՝ որք զփորձ առին պէսպէս յեղանակօք զմիտս դաւթեան առածին, եթէ հազար ամ յաչս տն՝ ո՞չ օր երէկի, զի եանց, զմայլեալք 'ի դոյզն զգալի նշանակաց իմանալի վայելից՝ ո՞չ 'ի թռչնոյ քաղցրաձայնութե, կմ յանուշակ քնոյ։

Ո՛չ առակաբանէ բազմերջանիկ հայրս հասարակաց՝ ո՛վ եղբարք, այլ զճշմարտութիւն ստուգաբանէ առակօք և օրինակօք․ բայց զայսոսիկ այնոցի՛կ է իմանալ՝ որք մերձաւոր են զուարթուն հոգւոյն գրիգորի․ այնոցիկ՝ որ յանձինս բերեն զկնիք նմանութե հարազատ որդիութե նր ը լուսահետ կերպարանաց հոգւոյ նր․ պարզաբար ասել՝ այնոցիկ, որ են որդիք լուսոյ՝ որք լուսածնունդ զաւակք արփիացելոյն գրիգորի 'ի գբի ներքնումն՝ 'ի խաւարի և 'ի ստուերս մահու․ և ոչ որոց զնմանութի բերեն չարախտավատիցն, որ անուամբ արևորդիք, և արդեամբք խաւարասէրք գտանիցին որդիք ծի ծասէրք․ զի զի՞նչ միաբանութի է լուսոյ ը խաւարի։

Նաւ այդ իսկ են սքանչելիք․ զի լուսաւորիչ հոգւոց մերոց լոյս էր և 'ի խաւարի անդանկոյս վիրապի․ 'ի գբի տառապանաց փայլէր այնպէս, ո՞չ և 'ի չարչարանս պայծառանայր անաղօտ․ զի զչարչարանս կենարարին յանձին կրել փառս անզուգական դաւանէր, և զխաչն պարծանս ըստ պօղոսի․ 'ի տկարութե զօրութի զգենոյր, և 'ի խոնարհութե զբարձրութի տեսանէր․ ո՞չ և քաջ

ա-

աստեղագիտաց է սովորութիւն՝ 'ի խոր 'ի գբոյ անտեսութ՟բ այլոց ա՟մի՝ աստեղաց բարձանց լինել նկատօղ ։ Եւ զի այս այսպէս , հա՛պա աստի յայսմանէ ծանիցէ և 'ի միտ առցէ անվրէպ դիտմամբ իւրաքանչիւր ոք 'ի մէնջ զառ լուսատուն մեր մերձաւորութ՟ի և զհեռաւորութ՟ի ։ Եթէ սիրեմք զնեղութիս և զչարչարանս , եթէ խնդամք ը՟ վիշտս՝ որ վ՟ն ա՟յ , եթէ ուրախ եմք յա՟մ 'ի տառապանս և 'ի ձախողակս՝ որպէս 'ի սփոփանս և 'ի յաջողուածս , հաղորդութ՟ի ունիմք ը՟ լուսաւորչին հոգւոց ․ ապա եթէ 'ի վշտաց փախնումք , 'ի հալածանս գայթակղիմք , ը՟ աղքատութ՟ի դժուարիմք , ը՟ հիւանդութ՟ի գանգատեմք , և հանգոյն ձախակողմեան աւազակին ազատութ՟ի 'ի խաչէ պահանջեմք , չէ՛ք մեր մասն և բաժին ընդ որում հրաւիրեաց զմեզ 'ի մասն ժառանգութ՟ե սրբոցն 'ի լոյս ։

Այլ ես յառաջինսն անդր ձեպիմ գեղեցիկ դարձուածով 'ի փափաքելիսն , 'ի զնին կալ ն՟ք լուսաւորչին 'ի վիրապի հսկողի ․ և եթէ էր հնար , կամէի և ցանկայի և փառս անձին համարէի բնակակից լինել հօրն մերում՝ անդ յօձաբնակ խաւար գբին , յոր լուսատուն էր իմ անձին ։ Կամէի լսել զանդանօր զմշտամռունչ հեծութիս ն՟ր առ ա՟ծ , ո՟ղ անտոն լսօղ եղև սրտառուչ հառաչանաց յաղօթակացու՟ե անդ անապատականին պօղոսի , և զուարձացաւ հոգւով ։ Կամէի լսել զա՟ծահաճոյ աղօթս և զխնդրուածս և ըզպաղատանս ն՟ր կարևորս և օգտամատոյցս վս՟ ամ՟ աշխի՟, ևս առաւել ըստ՟ նմանութե՟ տն՟ և նախասարկաւագի նր՟ զաղօթս ներողութե՟ 'ի վերայ չարչարողաց անձին իւրոյ՝ հայատանեայցս • զի ծագեսցէ 'ի նս՟ ած՟ զլուսաւորութի՟ փառաց իւրոց՝ ելանել 'ի խաւարէ հեթանոսական մոլորութե՟ 'ի լոյս քնական՟ ճշմարտութե՟ • զի այս էին առաւելագոյն մասամբ պաղատախառն և արտասու՛ագին հայցու՛ածք հօրս մերոյ սբյ՟ • որում և լսէր բարեգութն և բարերար տրն՟ , և ոչ անտես առնէր , տալով նմա կանխատես լինել հանդերձելոցն բարեաց՝ զոր ըստ՟ նր՟ ձեռն ունէր առնել հայոց աշխին՟ ։

Աս՟ որոյ կամէի տեսանել զայցելութի՟ հրեշտակի տն՟ առ հրեշտակն 'ի մարմնի գրիգոր 'ի գբի անդ տառապանաց • զի որ 'ի պաշտպանութի՟ պահպանողական կարգեալ 'էր լուսաւորչին՝ 'ի չորրորդ դասէ զու՛արթունն , այս է 'ի կարգէ վերնական իշխանութեց՟ , զօր ամ՟ այց առնէր առն ցանկալւոյ՝ ոգ՟ սիրասուն բարեկամի • և ոգ՟ զպէտս մարմնոյն անպակաս առնէր , ևս առաւել զհոգևորն յաճախէր մխիթարութի՝ խելամուտ առնելով զնա վերնապարգև ածազգեցիկ՟ լուսաւորութեց՟ , զերկնաւոր քաղցրութի՟ առատացուցանելով յարգարն , զբուրապատիկն յիշեցուցանելով նմա զվարձս և զպսակս փոխան ըստ՟ քրտանց և արեան կենդանի մարտիրոսութե՟ նր՟ , և յայտնելով՝ զոր սահմանեաց մարդասէրն ած՟ զ'ի ձեռն նր՟ լուսաւորութի՟ և զվերածնութի՟ յորդիս այ՟ զհամօրէն արատրամեանս ազին . և որ 'ի սոցին սակի ։ Կամէի տեսանել և լսել և զնորուն դարձադարձ պա͞խնիս գոհացողական ցնծութ͞ք , և զդիպող այլ հարցուածս առ հոգեղէն իշխան՝ իւր խնամակալու , իղձ լինելով զկարեւորագոյնս 'ի բանից 'ի պէտս կատարեալ ա͞ծպաշտութ͞ե և ա͞ծսիրութ͞ե տեղեկանալ 'ի նմանէ . որովք բերկրապատար աճեցեալ յոգւոյն՝ փառս վերառաքէր ա͞յ զցայգ և զցերեկ անդադար սաղմոսերգութ͞ք . և որքան զօր առաւելեալ 'ի սէր արարչին իւրոյ՝ լինէր իբրև զվառարան անշիջափառ և լուսակիզն հրոյ սիրոյն ։

Բայց դու տես ինձ և այլ օրինակ մեզ զկարճերոյ մխիթարութ͞են յառաւել մխիթարութ͞ի . զի ահա յաւուր միում պակասեաց երևումն նմա հրեշտակին՝ առանց գիտելոյ Գրիգորի զխորհուրդն . և մինչ ալեկոծ եղև սիրտն այն՝ օթևան ա͞ծահանգիստ . և ոչ երբէք . այլ կատարեալ միաբանութ͞ք ը͞ս կամացն ա͞յ բարեսիրաց՝ 'ի նա ապաստան առնէր զէլս իրաց . և անձամբ անձին գեղեցիկ մխիթար մատուցանէր զերկայնմտութ͞են և զհպատ համբերութ͞ե զպտուղս շահեկանս . համբեր ասէ ա͞ն և քաջալերեա՛ց . զօրասցի՛ սիրտ քո , և համբեր ա͞ն . և թէ՝ համբերելով համբերի ա͞ն , որ գիտէ միւսանգամ զիս մխիթարել , մինչև հանել գլխովին 'ի գբոյ տառապանաց՝ 'ի կաւոյ և 'ի տղմոյ ։

Եւ ահա յերկրորդումն աւուր եկեալ հասանէր զուարթութ͞նն ը͞ս սովորութ͞ե . յայնժամ կրկին զուարթութ̄բ առլցեալ երանելւոյն Գրիգորի՝ զպատճառս հարցանէր զյամելոյն ։ Եւ լսէր 'ի նմանէ բան, որում անմարթ էր ը̄ միոջ անկանիլ ․ աւուրքս են ասէ յաւուրս՝ պատկեր իննօրեայ ժամանակի, որ անց 'ի համբարձմանէ տն̄ յերկինս մինչև ցառաքումն հոգւոյն սր̄յ 'ի դասս առաքելոց ․ որ երիցս երրեակ աւուրբք չափեցաւ 'ի փառս երեքսրբենին՝ կատարել մեզ իննեակ դասուց հրեշտակաց տօն ցնծութե̄ ը̄ միոյ միոյ 'ի հոգեղէն դասակարգութե̄ց՝ վ̄ն վերանալոյ տն̄ յերկինս մարմնովն զոր 'ի ձէնջ էառ, և ուրախ առնելոյ զերկնաւորս և զերկրաւորս առ հասարակ վ̄ն հասարակաց փրկութե̄ ։ Արդ քանզի երէկ օր չորրորդ էր համբարձմանն՝ ողոգոմեան տօնախմբութ̄ի իշխանութ̄եցս դասու՝ չորրորդի 'ի կարգի երկնայնին քահանայապետութ̄եց, և իմ 'ի համարոյ անտի նորին դասու գոլով՝ 'ի նոյն հանդէս կայի ուրախութե̄ ։

Զայս լսէր երանելին, և հոգւով 'ի նոյն երախանս հրեշտակական ամբառնայր դասուց՝ առ խնդութ̄են, որով խելամուտ եղև մեծահրաշ խորհրդոյն վայելչութե̄ ։ Եւ այս մի 'ի բիւրուց այցելութ̄եց, զոր յետոյ պատմեաց այրն ա̄յ հոգևոր որդւոց իւրոց ․ և այնպէս գեղեցիկ աւանդութ̄ի մինչև առ մեզ հասանէր՝ ը̄ վկայութե̄ շարակնոցին ։ Ապա յայտ է, թէ և այլ մեծամեծք և անքննինք հաղորդեցան Գրիգորի խորագոյնք, զորս չէր բաւական պատմելոյ 'ի լսելիս մահկանացուաց առ անճառութե՟ն, ը՟ս պօղոսի՝ որ լուաւ բանս անճառս, զորս ոչ է պարտ (ասէ, իմա՛ անմարթ) խօսել ։ Քանզի և գրիգոր մեզ պօղոս այլ՝ հեթանոսաց առաքե՟լ, առաքելական այր, նման նմին առաւել քան զայլս վաստակեալ յառաքելաջան մշակաց բանին. եթէ չարչարանօք, առաւել. եթէ բանտարգել, տքնութ՟՝ գեր 'ի վեր. զի ոչ օք արդեօք հնդետասան ամ բանտարկեալ 'ի ս՟րց, և այն 'ի բանտ խոր վիրապի 'ի մէջ թունաւորաց, և անդ իբրև 'ի գերեզմանի թաղեալ կենդանւոյն և կենդանի պահե՟լ աջով հզօրին՝ մինչև ցօր ելիցն փառօք 'ի փառս փառաւորելոյն ։

ԳԼԽԱՏՈՒՄՆ

Սբյն Յովհաննու մկրտչի ։ (1)

Ուր և պատմութն գիւտի պատուական գլխոյ նր ։

Հ. օգոստ. 29. և փետր. 24 ։ Յ. օգ. 29 ։ փետր. 24 ։ մայ. 25 ։ Լ. օգ. 29. և փետր. 24 ։ Բոլլանդեանն եաբեղբրոց. հատ. Է. յունիսի. 24. երես. 687 = 806 ։ Յովսեպոս ։ Խորեն ։ Սոզոմենոս ։ Թէոփանէս ։ Թէոդորոս դաֆնոպաս, և ստուդեցի ։ Մարկեղոս, Մարկեղլինոս. Եւն ։

ՄԱՐԳԱՐԷ ԲԱՐՁրելոյն և առաքել ածորդւոյն՝ տռ կարապետն և մկրտիչն յովհաննէս, լցեալ զընթացս կարապետութե բանին՝ իբրև հրեշտակ տն առաջի նր, և եղեալ ողջ կատարումն օրինաց՝ նոյնպէս և նախասկիզբն շնորհաց, արժանի լինէր վկայական կատարման յաղագս ճշմարտութե. զի է այլոց բազմապատիկ պսակաց զոյգ ընդ ճգնողական հանդիսի՝ և ըզմարտիրոսականն կապեսցէ 'ի գլուխ իւր զպսակ, որ զգլուխն բոլորից և զառաջինն վկայն զքս թագաւոր փառաց ձեռնադրեաց 'ի հոսանսն յորդանանու ։

Արդ ոչ ծառայն քան զՏ̃րն, արուսեակն քան զարեգակն՝ յառաջեաց ծննդեամբ յ̃ծ՝ վեցիւք ևեթ ամսօք, և յերեսներորդ ամի կենաց իւրոց դարձ արարեալ յանապատէ՝ սկիզբն արար մկրտութե̃ և քարոզութե̃ ապաշխարութե̃ (2), նոյնպէս և կանխէր ելք նր յ̃ծէ քան զՏ̃րն՝ ը̃ եղանել փրկչին 'ի քարոզութի̃. զի անդէպ էր ճրագի առաջի արևու լուսածագել. և այս էր՝ զոր ինքնին մարգարէանայր Յովհաննէս, եթէ նմա պարտ է աճել, և ինձ մեղմանալ. որպէս և Տ̃րն զնոյն յայտնաբանէր՝ յասել անդ զՅովհաննէ առ հրէայս. նա էր ճրագն՝ որ ծագէր, և դուք կամեցայք առ ժամանակ մի ցնծալ 'ի լոյս նր. որով և զայն տայր իմանալ՝ թէ ոչ ապաշնորհքն ինքնին չիջուցին զանաղօտ լապտերն, զոր գովէին և սիրէին, նոյնպէս և զարեգակն գլխովին մոաքերին չիջուցանել զկենսատուն Տ̃ի :

Այլ այս նախընթացութի̃ կարապետին նաև ը̃ մահու փրկչին՝ կարգեցաւ և 'ի լնուլ ըզպաշտօն հրեշտակութե̃ իւրոյ առ երամն նահապետաց և մարգարէից և ա̃մ արդարոց յաբելէ և այսր, որք սպասեալ մնային ազատեցուցիչ յուսոյ գալստեան ա̃ծորդւոյն երևելոյ 'ի մարմնի. վ̃ոյ և փութայր զնոյն աւետարանել նց ս̃բ կարապետն՝ 'ի ձեռն կատարման իւրոյ գլխատմամբ 'ի հերովդէ. զորմէ ժամ է ասել :

Հերովդէս չորրորդապետ՝ արքայ անուանեալ միոյ 'ի չորից մասանց պաղեստինու 'ի կողմանս գալիլեացւոց ը̃ ձեռամբ հռովմայ կայսեր , առեալ էր կին օրինաւոր զդուստր արետայ արքային պետրայ , ո̃ր ապառաժ կոչեցեալ արաբիոյ . այլ յետոյ բանս եդեալ ը̃ հերովդիադայ կնոջ փիլիպպոսի եղբօր իւրոյ՝ առ չար ցանկութե̃ յայտնի շնութե̃ կորզեաց զնա ՚ի ստանէ առն նր̃ ՚ի կենդանութե̃ նր̃ , և անուանեաց իւր կին զհոմանին . մինչև փախչիլ յերեսաց նր̃ հարազատ լծակցին դստեր արետայ , և գալ պատմել մեծին յովհաննու , զոր ճանաչէր այր ա̃յ և մարգարէ . և գիտէր՝ թէ նոյնպէս ակնածէ ՚ի նմանէ և այրն իւր հերովդէս արքայ . զի բազում անգամ կոչէր զնա ՚ի պալատն , և լուեալ զբանս քարոզութե̃ ՚ի սբ̃յն՝ քաղցրութե̃ ունկնդիր լինէր ։ Զայս լուեալ սբ̃յ մկրտչին՝ չոքաւ յանդիմանեաց զհերովդէս , յայտնապէս քարոզելով զճշմարտութի̃ օրինացն ա̃յ , եթէ չէ՛ արժան քեզ ունել զկին եղբօր քո կենդանւոյ ։

Ընդ որ զչարեալ հերովդի՝ ը̃ սադրելոյ չարագրգռն հերովդիադայ , ոխացաւ ը̃ սբ̃յն . և յետ աւուրց առաքեաց՝ կալաւ զնա և եդ ՚ի բանտի , ըստ յովսեպոսի ՚ի մաքերոնտայ ամրոցի՝ որ յայնկոյս յորդանանու մօտ ՚ի բերան գետոյն առ մեռեալ ծովու ։ Իսկ արետայ դուստրն խոյս ետ և գնաց առ հայր իւր . որում առաւել համարձակութի̃ գտեալ հերովդիադայ՝ տիրաբար վարէր յա̃մի , մինչև իշխել և կնաբարոյ առն , և բազում վնասուց լինել նմա պատճառ մինչև ՚ի մահ

գըդգրգռելով զնա 'ի վ̃ր ազգականաց ն̃ր և եղբարց , որ և իւր իսկ մերձաւորքն էին . զի Հերովդիադայն' որ և Հերովդիաս կոչի , էր դուստր արիստաբուղեայ որդւոյ մեծին Հերովդի ասկաղոնացւոյ 'ի մարիամնեայ կնոջէն . այլ գլուխ ա̃մ չարեացն Հերովդի և Հերովդիադայ եղև անպարտ արիւն յովհաննու ։

Քանզի եղև օր' յորում Հերովդէս արար կոչունս մեծամեծաց իւրոց իբրև 'ի յիշատակ ծննդոց իւրոց . և այս ո՛չ ը̃ սովորութե̃ Հրէից , այլ ըստ հեթանոսաց ժամանակին , ո̃պ է տեսանել 'ի պատմութ̃իս հռովմայեցւոց յայնմ դարու . վ̃յ և 'ի կատարիլ կոչնոցն հեթանոսաբար' կաքաւեաց և լիրբ դուստրն Հերովդիադայ լրբենւոյ' սողոմէ կամ շաղոմէ անուն' 'ի հանդէսի կոչնականաց ։ Եւ անմիտն Հերովդէս զուարթացեալ 'ի գինւոյ , և տեսեալ թէ հաճոյ թո՛ւի իւքեան և հրաւիրելոցն կաքաւումն աղջկանն , արար նմա խոստումն անմտութե̃ , թէ խնդրեա՛ յինէն զոր ի՛նչ և կամիս , և տաց քեզ' մինչև ցկէս թագաւորութե̃ իմոյ ։

Եւ աղջիկն ը̃ անօրէն խրատու մօր իւրոյ' ասէ . տո՛ւր ինձ այժմ 'ի վ̃ր այսր սկտեղ ըզգլուխն յովհաննու մկրտչի ։ Ստրջացաւ 'ի խորհուրդս իւր խորհրդակորոյս թագաւորն . զի զոր ոչն կարծէր' լո՛ւաւ . այլ 'ի պահել զպատիւ անձինն , զի մի՛ երևեսցի ծանծաղամիտ և երդմնազանց առաջի բազմականացն , յանձն էառ զգործն անարժանութե̃ .

ա-

առաքեաց դահճին, ետ գլխատել զայրն ա՟յ. և բերաւ պատուական գլուխն արիւնաշաղախ, և տուաւ աղջկանն. և նա առեալ տարաւ առ մայր իւր։ Որպէս կատարեցաւ գլուխն մարգարէից գլխատմամբ յառաջին կնոջ յերկրորդ զատկի քարոզութեան փրկչին. այսպէս հանդիսացաւ արդարն 'ի վերակայութի՟ ճշմարտութե՟. մինչև յայտնի լինել և ա՟մ հրէից, թէ չար էր արարն հերովդի. վ՟յ և յ՟յ համարեցան պատուհաս զչարիսն՝ որք եկին զկնի 'ի վ՟ր թագաւորին և զօրաց ն՟ր. ո՟պ տասցաք այլուր բանիւ յովսեպոսի. այլ աստ ը՟ կարգի նշանակեսցուք։

Լուաւ արետաս արքայ անէր հերովդի՝ զոր ինչ արար նա անզգամութի՟ ը՟ դուստրն իւր յառնուլ անդ զհերովդիադա. և յետ սակաւուց եհաս յականջս նորա և գլխատութի՟ մեծի մկրտչին 'ի պատճառս նոցին իրաց. վ՟յ առիթ առեալ զայլ կռիւ վ՟ս սահմանաց ինչ ո՟րուէ ը՟ մէջ իւր և 'ի փեսայէն իւրոյ, զօրաժողով եղև և ել 'ի պատերազմ 'ի վ՟ր հերովդի. և հերովդէս արձակեաց ը՟դէմ նորա գունդ բազում. այլ արետաս եհար և խորտակեաց չարաչար զզօրս ն՟ր նիզակակցօ՟ք քաջացն հայոց։

Օւ ո՟պ գրէ խորենացին (Է. 28), աբգար արքայ հայոց՝ զկնի դարձի իւրոյ յ՟ծէն պարսից եկեալ 'ի քաղաքն իւր յեդեսիա՝ միաբանեաց ը՟ արետայ արքայի պատրիացւոց՝ սատարս տալով նմա 'ի ձեռն խոսրանայ (կամ խո-

խորենայ) ուրումն արծրունւոյ՝ մարտնչել ը̅ հերովդէի ․ քանզի նախ զդուստր արետայ կին առեալ հերովդէի , և անարգեալ 'ի բաց եթող ․ և զհերովդիադա մեկնեալ յառնէ իւրմէ եհան կենդանւոյն ․ յաղագս որոյ սպան և զյովհաննէս մկրտիչ ։ Եւ եղև պատերազմ ը̅ նա և ը̅ արետ վ̅ն անարգանաց դստերն ․ յորում սաստկապէս հարեալ սատակեցան զօրքն հերովդէի՝ յօգնականութե̅ քաջացն հայոց , որպ̅ս յա̅ծային տեսչութե̅՝ վրէժս հատուցանել ը̅ մահուանն մկրտչին ․ ը̅ որում և հրէայքն առ հասարակ վկայէին՝

ասէ յովսեպոս ։

Արդ հերովդէս կորագլուխ ամաչեցեալ վ̅ն պարտութե̅՝ ապաւինեցաւ առ տիբեր կայսր , զի մի̅ իսպառ վատթարեալ մնասցէ ։ Եւ թէպէտև առ ժամն եգիտ նպաստաւորութի̅ 'ի հռովմայեցւոց , այլ կասկածելի էր նա և յաչս նց̅՝ առ թշնամութե̅ն ը̅ պիղատոսի դատաւորին հրէաստանի ․ ը̅ որում արար բարեկամութի̅ 'ի ժամանակի չարչարանաց տ̅ն ․ բայց և ոչ այնու օգտեցաւ ․ մինչև յետ բազում անցից՝ յաւուրս կայսերութե̅ կայիոսի կալիգուղայ մերժեցին հռովմայեցիք զհերովդէս յիմ̅իշխանութե̅ չորրորդապետութե̅ ․ և իբրև չոքաւ 'ի հռովմ առ արդարացուցանել զանձն՝ աքսորեցաւ 'ի վիեննա կմ̅ բեննա գաղղիոյ , և անտի 'ի սպանիա ․ կամէր կայսրն արձակել զկարծեցեալ կին նր̅ զհերովդիադա յազատութի̅ ․ բայց յոչն առնուլ նր̅ յանձն բաժանել 'ի հերովդէ՝ աքսորեցաւ և զնա ընդ նմա · և այնպէս սատակեցան յօտարութեան ։

Այլ չարաչար ևս եղև կորուստ դստերն հերովդիադայ՝ շաղոմէի կաքաւողի · որ յետ լինելոյ կին այլում՝ տուեալ էր ՚ի կնութիւն արիստաբուղեայ ումեմն ՚ի նմին ազգականութենէ՝ իշխան եղելոյ ՚ի կողմանս պաղեստինացւոց կամ երկրին ասորւոց ։ Եւ եղև շաղոմէի գնալ ուրեք ՚ի ձմերանի՝ անցանելով հետիոտս ընդ գետ սառուցեալ, ընդ որ ամենեքին գնային անվնաս · և ահա պատառեցաւ սառն ընդ ոտիւք նորա, և ընկղմեցաւ իսկ և իսկ ՚ի գետն մինչև ՚ի պարանոցն · անդ ՚ի տագնապիլ նորա և ՚ի շարժիլ առ ՚ի կարող լինելոյ ոտնուլ ՚ի ջրոյ անտի ՚ի վեր՝ նորատեսիլ կաքաւմամբ ՚ի մէջ ջուրց կորնչէր · զի գլուխ նորա հատաւ ՚ի պարանոցէն ՚ի սայրասուր բերան սառին · և եղև ահ մեծ ՚ի վերայ ամենայն տեսողաց և լսողաց, որք գիտէին՝ թէ սա այն է, յորոյ ՚ի պատճառս հատաւ պատուական գլուխ սրբոյ մարգարէին յովհաննու ։

Իսկ վասն նշխարաց և գլխոյ նորին յովհաննու մկրտչի բազում են բանք առ մատենագիրս և առ վկայագիրս (3) · յորս ստուգագոյնն աւանդութիւն ընտրեալ ՚ի բազմաց այսպէս ունի ։ Մարմին սրբոյն առանց գլխոյ ամփոփեցաւ յաշակերտաց նորին՝ թաղեցաւ յառանձին գերեզմանի յարուարձանս սեբաստէ քաղաքին պաղեստինու, որ և սեբաստուպօլիս քաղաք սամարիոյ (կոչեցեալ և սամարիա) ·

ուր մնաց և 'ի յետոյն ժամանակս յիշատակ պալատանն Հերովդի իբրև քան փարախ հեռի 'ի մաքերոնայ ։ միայն չէր յայտ, թէ յանուն Հերովդի՞ չորրորդապետի կոչէր պալատն այն, եթէ ասկաղոնացւոյն Հերովդի, որ եդ անեն զանուն քաղաքին 'ի պատիւ կայսերն օգոստոսի՝ որ ը՟ յունաց է սեբաստոս ։ Եւ մնաց անդ մարմին ս՟բյն մինչև ցաւուրս հեղինեայ դշխոյի, որ իբրև եկն յե՟մ՝ շինեաց եկեղեցի 'ի վ՟ր տապանի ն՟ր, և համգոյց զայն 'ի մէջ երկուց մարգարէից, յ՟ր ընդ մէջ գերեզմանաց ս՟բյն եղիսէի և ս՟բյն աբդիու ։ և զայս դնեն ոմանք լինել յարուարձանս անդ սեբաստուպօլսոյ ։ այլ ը՟ այլոց ստոյգ ևս թուի, թէ եկեղեցին շինեցաւ 'ի մէջ քաղաքին, և անդ փոխադրեցաւ մարմին ս՟բյն ։ ուր լինէին բազում սքանչելիք, ո՟պ գրէ հերոնիմոս ականատես ։ Որ թէպէտև կայր նաև վկայարան փոքրիկ արտաքոյ 'ի վ՟ր գերեզմանին ։ այլ իբրև թագաւորեաց ուրացողն յուլիանոս, արբանեակք ն՟ր աւերեցին զարտաքին վկայարանն ։ իսկ 'ի ներքին եկեղեցւոյն կամեցան ևեթ հանել զմարմին ս՟բյն և այրել ը՟ հրամանի ուրացողին ։ և արդարև համբաւեցաւ իսկ, թէ այրեցին զո՟մ ոսկերս ս՟բյն ընդ այլ նշխարս ս՟բց ։ բայց ը՟ այլ աւանդութ՟ե անտիոքացւոց՝ ապրեցուցին զայն հաւատացեալք ։ և թէ զիա՛րդ, այսպէս գրէ վ՟կպ ոմն յունաց թէոդորոս դափնոպաս կոչեցեալ 'ի սկիզբն տասներորդ դարու ։

Նախ զառաջինն յայտ առնէ, թէ յառաջ քան զաւուրս յուլիանոսի եւս չէին մնացեալ անդ ամբողջ ոսկերք ս̃րբյն · այլ ը̃ս այլեւայլ մասանց հանեալ էին անտի 'ի ձեռն քրիստոնէից · և այս 'ի դէպ գայ և այլ առանձին պատմութեանց նշխարաց ս̃րբյն գտելոց 'ի հայս և յայլ տեղիս յառաջին ժամանակաց հետէ։

Այլ ինքն զայն պատմէ, թէ զնախկին երեւելի մասն, ը̃ս զաջ ս̃րբյ մկրտչին էառ 'ի տապանէ անտի ն̃ր 'ի կողմանց սեբաստուպօլսոյ ս̃բ ղուկաս աւետարանիչ, և եբեր 'ի քաղաք իւր յանտիոք · և թէ 'ի հալածանս յուլիանոսի պահեցին զայն յաշտարակին կոչեցեալ զոնիա ը̃ս անկիւն · որ և յետ ժամանակաց առ յուստինիանոսիւ բերաւ 'ի կոստանդինուպօլիս, և անդրէն դարձուցաւ · և դարձեալ յաւուրս կոստանդեայ և ռոմանոսի կայսերաց փոխադրեցաւ 'ի կոստանդինուպօլիս · և զայսմանէ է ճառ թօմանդակ նորին մատենագրի ժմկակցի ։

Արդ սոյն այս այր գրէ, թէ յորժամ և 'ի պաղեստին առաքեաց յուլիանոս առս յանտիոքայ՝ զի այրեսցեն զնշխարս կարապետին զգտեալս 'ի տապանի ն̃ր, հայրապետն եղ̃մի (որ էր յայնժամ ս̃բն կիւրեղ) իրազեկ լեալ այսմ՝ փութացաւ եհան անտի զոսկերս ս̃րբյն և առաքեաց յաղեքսանդրիա · իսկ 'ի տապանի ն̃ր եդ զայլ ոսկերս · և այնպ̃ս այրեցան ամ̃ ոսկերք օտարք, և պահեցան նշխարք ս̃րբյն ։

Սկեսցուք այժմ 'ի գիւտ պատուական գլխոյն ·

խոյն․ որ մնաց զառաջինն ՚ի տան Հերովդի, և անդ ծածկեցաւ ը՟ հողով ՚ի մէջ կաւեղէն անօթոյ․ (ո՞չ և սովորութի՟ էր հռովմայեցւոց և այլոց բազմաց յաման խեցեղէն պահել զոսկերս և զմոխիրս մեռելոց)․ և եղև յետ ժամանակաց իբր յերրորդ դարու՝ գալ երկուց ուխտաւորաց կմ՟ կրօնաւորաց յարևելից ՚ի կողմանցն կիլիկիոյ յեղ՟էմ, և իջևանիլ յաւերակս տանն Հերովդի։ Եւ ահա երևեցաւ նմ՟ սբ՟ն յովհաննէս մկրտիչ յանուրջս միանգամ և երկիցս, և յայտնե՟ նմ՟ զանձն իւր՝ ուսոյց զտեղի գլխոյն, և պատուիրեաց առնուլ տանել զայն ը՟ իւրեանս։ Եւ իբրև զարթեան և պատմեցին իրերաց զտեսիլն՝ յարեան և բրեցին զտեղին նշանակեալ ՚ի սբ՟յն․ ուր գտեալ զաման խեցեղէն կնքեալ՝ ուրախ եղեն յոյժ․ և ընդ բանալն՝ առին զբուրումն անուշահոտութե՟․ ապա եդին զայն ՚ի մախաղ իւրեանց, և բերին ՚ի կիլիկիա․ ուր եդեալ ՚ի բնակութե՟ իւրեանց ՚ի խորշ մի պատուհանին (ո՟ր ՚ի տօլապն) պահէին պատուով, կախեալ կանթեղ առաջի։

Յետ մահու նմ՟ մնաց պատուական գլուխն ՚ի ձեռս սբ՟ կնոջ միոյ ՚ի նոյն տանէ՝ աթաղիա անուն․ և այսպէս ձեռաց ՚ի ձեռս անցանելով մինչև ՚ի ժամանակս կոստանդիանոսի և որդւոց նր՟՝ անկաւ ՚ի ձեռս արիանոսաց և մակեդոնեանց․ որք համբաւեցին իբր նորոգ բերեալ յեղ՟էմ․ զի էր ցայնվայր իբր յանծանօթս․ և ը՟ այսմ գրի ՚ի հին մատեանս ուրեք արաբացւոց՝ ուր կայ այս պատ-

մութի , թէ * տեղին սբ. գլխոյն մնայ յան-
,, ծանօթս մինչև 'ի ժմկս կիւրղի եէմացւոյ||.
և սողոմենոս գրէ. 'ի է. 24. * գլուխ յովհաննու
,, մկրտչի . . . ասի գտեալ առ կրօնաւորս ո-
,, մանս յաղանդոյն մակեդոնեանց , որք զա-
,, ռաջինն բնակեցան յեէմ, և ապա փոխե-
,, ցան 'ի կիլիկիա ||: Թող զայլսն՝ որք անյե-
շատակ տեսեալ զայսպիսի անցս հին դա-
րուց , համարին թէ ոչ 'ի վեր ել և յաւուրս
կիւրղի , այլ յետ միւս ևս դարու . որ է չփո-
թել զերկրորդ գիւտն ը առաջնոյն , զորմէ
մեր բանքս են :

Արդ՝ ոչ յայտնի գրէ սողոմենոս ոչինչ հե-ռի ժամանակաւ , 'ի թագաւորութե վաղեսի արիանոսի յայտնեցաւ առաջին գիւտն պատուական գլխոյս 'ի կիլիկիա . և եղև առաջին փոխադրութի 'ի կոստանդինուպօլիս 'ի ձեռն բարեպաշտ արքային թէոդոսի մեծի : Քանզի ասէ՝ լուեալ մարդոնիոսի ներքինապետի արքունի պալատան՝ թէ գլուխ յովհաննու մկրտչի է 'ի կիլիկիա 'ի ձեռս մակեդոնեան կրօնաւորաց , պատմեաց կայսերն վաղեսի . և նա հրաման ետ բերել զայն 'ի կոստանդինուպօլիս : Իսկ որք առաքեցանն , եդեալ զպատուական գլուխն յերևելի կառս՝ բերին մինչև 'ի բիւթանիա . այլ իբրև հասին 'ի պանտիք (որ և բէնտիք) 'ի սահմանս քաղկեդոնի , ջորիք՝ որք ձգէին զայն , ոչ կամէին յառաջ խաղալ . և թէպէտև սպառնային յոյժ դրաստուց ջորեպանքն , և կառավարն չարաչար մտրակէր , բայց անհնար եղև շարժել զնա՟ 'ի տեղւոջէն . ուստի 'ի միտ առեալ` եթէ յո՟յ են լիքն , հաւանութբ՟ կայսեր առեալ եդին զսբ՟ գլուխն 'ի մօտակայ գիւղն կոսիղայ` որ էր կալուած մարդոնիոսի :

Յետ քանի մի տարւոյ` այն է յամի տն՟ 390 . Թէոդոս կայսր` եթէ յազդմանէ տն՟ և եթէ սբ՟յ կարապետին` եկեալ 'ի տեղի անդր , ուր էր գլուխ սբ՟յն , կամեցաւ բառնալ զայն անտի , և տանել անձամբ 'ի թագաւորեալ քաղաքն : Յայնժամ բազմօք ը՟դէմ եկաց կոյս մի` մատրոնա կոչեցեալ` յաղանդոյ անտի մակեդոնեանց , որ եկեալ էր ը՟ բեկենտի քահանայի իւրումն աղանդակցի իբրև սպասաւոր և պահապան սբ՟ գլխոյն . իսկ բարեպաշտ կայսրն` որ ոչ կամէր բռնութբ՟ հանել զսբ՟ գանձն 'ի ձեռաց նր՟ , հեզաբար աղաչելով յորդորէր շնորհել զայն ինքեան . մինչև հաճեցաւ և զիջաւ կոյսն այն` եդեալ 'ի միտ , թէ ոչ՟ առ վաղեսիւ եղև , նոյնպս՟ և այժմ ոչ կամեսցի շարժիլ սբ՟ն 'ի տեղւոջէ անտի :

Յայս միտս էր և քահանայն բեկենտի . որ և եդ անձին իւրում ուխտ , զի թէ շարժեսցի գլուխ սբ՟յն , դարձցի ինքն յուղղափառ հաւատս` զոր քարոզէր ծ՟առայն Թէոդոս . և եղև այնպէս . ուր առանց իրիք դժուարութե՟ գնաց սբ՟ մկրտիչն ը՟ Թէոդոսի . որոյ պատեալ արքունի ծիրանեաւ զտապանակն` յորում էր պատուական գլուխն , առ տարաւ ը՟ իւր 'ի կոստանդինուպօլիս . և յար-

ուար

ուարձանս նր̃ 'ի տեղին կոչեցեալ Էվտոմոն, յո̃ եօթներորդ (զի եօթն մղոնաւ հեռի էր 'ի քաղաքէն), շինեաց վկայարան յանուն սբ̃յ կարապետին, և անդ հանգոյց պատուով : Նաև այս փոխադրութի̃ եղև ը̃ս աղեքսանդրեան ժամանակագրութե̃ 'ի ժե̃ կաղանդից մարտի · այն է փետր · 18 : Նաև թէ որպէս ջերմ յարգանօք պաշտէր և բարեխօս ունէր երանելին թէոդոս զսբ̃ կարապետն, յայտ է 'ի վարուց նր̃, ուր տեսանես զյաղթութի̃ն եղեալ ընդդէմ եւգինէոսի բռնաւորի յամի տե̃ն 394 · օգնականութե̃բ սբ̃յն յովհաննու մկրտչի ընդ յովհաննու աւետարանչի և փիլիպպոսի առաքելոյ :

Արդ մնաց սբ̃ գլուխն 'ի կոստանդնուպօլիս առ ժամանակ մի · և ապա յաւուրս արկադեայ որդւոյ թէոդոսի, ոմ̃ երևի՝ 'ի յոյզս աղմկաց որ վս̃ աքսորանաց ոսկեբերանին, գողացան զայն ոմանք · և տարան յեմեսա քաղաք ասորւոց (որ և համս կոչի) · մինչ զի անխտիր յայս և յայն քաղաք մարթի ակնարկել բանն սեբերիանոսի գաբաղացւոյ՝ եմեսացի անուանելոյ, յասելն 'ի ճառն խաչի · * Արդ եկեսցուք 'ի բժիշկն հոգւոց մերոց, 'ի դաստիարակօղն զմեզ ած̃ային բանիւ, և 'ի պարսպօղն զքաղաքն մեր նշխարօք իւրովք · զյովհաննէս ասեմ զկարապետն և զմկրտիչն քսի̃, զլուսացօղն զմեզ այսօր բանիւն ապաշխարութե̃ ‖ : Օի սեբերիանոս՝ որ էր քարոզասաց երբեմն 'ի կոստանդինուպօլիս, և երբեմն յեմեսա կամ 'ի գաբաղս և կ՟մ յանտիոք սարուց՝ 'ի ժամանակս ոսկեբերանի, անխտիր քաղաք մեր կարեր կոչել զայս և զայն տեղի · բայց որպէս և գիցի, յետ ամաց քանից մնայ իբրև թաքուն և անյայտ՝ նոր և յայտնի սքանչելեօք յայտնեցաւ յեմեսա · որ լինի երկրորդ երևելի գլխու և փոխադրութ՟ի :

Բանգլի գրէ աբբայն մարկեղոս (ուստի առնուն և յայսմաւուրք յունաց և հայոց) արշիմանտրիտ վանացն սպէլեայ, յ՟ր քարանձաւի յերկրին սարուց առ եմեսաւ, թէ յաւուրս առաջնորդութ՟ե իւրոյ 'ի վանս անդ, և յեպ՟սութ՟ե եմեսացւոց ուրանիոսի ս՟բ եպիսկոպոսի, և 'ի կայսերութ՟ե վաղենտիանոսի և մարկիանոսի յաջորդաց թէոդոսի փոքու, յամի անտիոքացւոց կ՟մ սելևկիացւոց՝ որ և ասորւոց է՟ մակեդոնացւոց 763 · այն է ա՟մ տ՟ն 452 · յաւուրս աղուհացից յայտնեցաւ յեմեսա պատուական գլուխ յովհաննու մկրտչի ըստ օրինակիս ըստ այսմիկ :

Տեսանէի ասէ 'ի տեսլեան գիշերոյ, զի ա՟մ դրունք վանացս բացան · և ես յահի լեալ ընթացայ փակել զնոսին · և տեսի՝ զի գետ յորդեալ գայր ը՟ն այն դրունս, և խուռն ը՟ն ջուրս բազմութ՟ի յոյժ բազմաձայն լեզուաւ սաղմոսերգողաց · և 'ի զարմանալ իմում՝ լուայ ձայն յարևելից կողմանէ · ահա ս՟բ յովհաննէս մկրտիչ փրկչին մերոյ յ՟ի ք՟ի ցուցեալ լինի : Եւ 'ի գալ մտանել նոցա 'ի վանս՝ տեսի եկեղեցի նոր, յորում դարձեալ գոչէին · ահաւասիկ ս՟բն յովհաննէս · և ահա եկն եկաց ս՟բ կարապետն ’ի մէջ տաճարին ․ և ամենեքին մատեան և օրհնեցան ’ի նմանէ ։ Յայնժամ և ես համարձակեալ մատեայ առ նա՝ առնուլ զօրհնութիւն ն՟ր ․ և իբրև անկայ յերկիր , և բուռն հարի զոտից ն՟ր , կալաւ զիս և ետ ինձ համբոյր սրբութե՟ ․ և ես զարթեայ յուրախութե՟ս ։ Յետ աւուրց դարձե՟ տեսի զս՟բ կարապետն , զի հանեալ ’ի ծոցոյ իւրմէ անօթ մեղրալից՝ ասէ ցիս ․ ա՛ռ զօրհնութիւս զայս ։ Ասեմ ցնա ․ ուստի՞ գաս ․ և նա ասէ , ’ի սեբաստուպօլսոյ ․ և եղև աներևոյթ ։

Իսկ ’ի յանձնել իմում վանականաց աղօթս , զի ո՟ր յայտնեցէ մեզ զխորհուրդ իրացս , յաւուր միում ’ի ժամ սաղմոսերգութե՟ ոմն յեղբարց իսահակ անուն ամբարձ զաչս իւր , և ետես հուր վառեալ ’ի տախտակս դրան այրին՝ որ կից էր վանաց մերոց ․ և յաղաղակել ն՟ր և ’ի շփոթիլ ա՟մ եղբարց՝ ասեմ ․ մի՛ երկնչիք ․ զի ո՟ր յաջողեաց մեզ ․ և ինչ ոչ վնասեաց հուրն ։ Իսկ եղև յետ աւուրց հնգից ետ մեզ եպ՟սն եմեսու զայն տեղի այրին՝ որ էր մենաստան հնացե՟ և աւերեալ ․ և բացեալ զփակեալ դուռն՝ յանձն արար մաքրել և շինել և միացուցանել ը՟ մեր վանս ։ Իսկ յայնժամ տեսի դարձե՟ ’ի նմին գիշերի , զի ասէր ցիս ոմն ’ի տեսլեան ․ աւասիկ բացաւ դուռն ․ արդ ծանի՛ր զայն՝ որ եբաց քեզ ըզմուտս , և մի՛ հեղգար ․ ընդ նմին տեսի և աստղ բոցափայլ՝ որ եմուտ եկաց ’ի մէջ այրին ․ և ես մտի զկնի ն՟ր ․ և իբրև զարթեայ ,

դոգոհացայ զմ̃յ յերկար ժամս : Ապա 'ի վաղիւ̂ անդր առեալ զբուրվառ խնկոց՝ մտի յայրն , և յաղօթս կացի՝ զի ցուցցէ ինձ տ̃ր զտեղի երկնաւոր գանձուն . և առեալ բահ՝ բրեցի խորագոյն , և գտի անօթ խեցեղէն կմ̃ սափոր , և լցայ ուրախութ̃ : Յայնժամ գնացեալ պատմեցի եպ̃սին այլովքն հանդերձ՝ որոց այլ և այլ տեսիլս էր տեսեալ վ̃ս սոցին իրաց , և ասեմ . սբ̃ յովհաննէս մկրտիչն յայտնեցաւ : Զարմացաւ եպ̃սն . եկն 'ի վաղիւ̂ անդր քահանայիւք և սարկաւագօք յայրն . և անկեալ երկիր եպագ 'ի վ̃ր երեսաց իւրոց . իսկ մի ոմն յերիցանց անտի մաղքոս անուն՝ ասէր . ուստի՞ այդ յայտ իցէ , եթէ գլուխ կարապետին իցէ դա . և 'ի ձգել զձեռն իւր յանօթ անդր՝ զննել զսբ̃ նշխարս , առ ժամայն գօսացաւ ձեռն նորա , և մնաց կցեալ ը̃ շրթունս անօթոյն , և ոչ կարէր յինքն ամփոփել զաջն : Յայնմ վայրի ահիւ̂ մեծաւ յաղօթս ապաւինեցաք ա̃մ բազմութ̃ , մինչև կարող եղև նա ժողովել զձեռն իւր . բայց մնայր այնպէս տկար և անպիտանացեալ :

Իսկ եպ̃սն բարձեալ զպատուական գլուխ սբ̃յն՝ տարաւ եդ պատուով 'ի սարկաւագանոցի եկեղեցւոյն . մինչև շինեսցի վկայարան յանուն մկրտչին : Եւ 'ի կատարել շինուածոյն՝ երևեցաւ սբ̃ն յովհաննէս երիցուն այնմիկ գօսացելոյ՝ որ կայր 'ի սուգ , և ասէ ցնա . յաւուր հանդիսի փոխադրութ̃ե դի̃ր զձեռն քո 'ի վ̃ր անօթոյ գլխոյս , և բժշկեսցիս .

ցիս . և եղև այնպէս ։ Օ այս երևելի գիւտ գլխոյ մկրտչին յիշեն և՛ աղեքսանդրեան ժամանակագրութի̄ և մարկեղինոս կոմս , որք եղեալ յամի տն̄ 452 , կա̄մ 453 . վս̄ զի յայտնութիւն համարի եղեալ յամի 452 . 'ի փետր . 18 . և գրութի̄ 'ի սարկաւագանոցի` 'ի փետր . 24 . որ և յժմ̄ եկեղեցիս հանդիսացաւ իբրև օր տօնի գիւտի պատուական գլխոյն յովհաննու . իսկ փոխադրութիւն 'ի նոր վկայարան եղև 'ի յաջորդ ամի . 453 . 'ի 27 . հոկտ ։

Օ այս ժմ̄ լուեալ բնակչաց կոստանդնուպօլսոյ` ոչինչ իշխեցին ասել . զի պակասեալ էր յիւրեանց պատուական գանձն այն . և եմեսացիք համարեցան` թէ անդստին առ իւրեանս թաքուցեալ կայր այն յանծանօթս ։ Իսկ եղև 'ի յաջորդ դարու` յորժամ յուստինիանոս կայսր նորոգեաց և հոյակապ ևս կառոյց զտաճար յովհաննու կարապետին` որ յեվդոմն կոստանդնուպօլսոյ , 'ի խնդիր եղև նշխարաց սր̄յն . եւ բերել յանտիոքայ զաջ մկրտչին , և յեմեսայ զգլուխն . այլ յետ կատարման նաւակատեաց տաճարին` հարկեցաւ յետս դարձուցանել ։ Բայց եմեսացիք յետ անկելոյ զպատուական գանձն` և յերկար պահելոյ , ոչ գիտեմ զիարդ կորուսին զնա յաւուրս խառնակութե̄ երկրին . զի հուսկ յետոյ գտաւ 'ի կոմանս , և դարձեալ բերաւ 'ի կոստանդինուպօլիս . որ է երրորդ գիւտ և փոխադրութի̄ . իսկ պատմութի̄ նր̄ այսպէս քաղի 'ի բանից յոյն մատենագրաց ։

'Ի.

Ի ժամանակս ելիցն հագարացւոց՝ յորժամ տիրեցին սարակինոսք 'ի վր՟ բազում տեղեաց, հեռանալ կայր՝ որ էր յարևելս, ոչ կարացեալ զդէմ ունել բազմութե՟ն նց՟, յետս եկաց 'ի կողմանց անտի՝ յետ դարձուցանելոյ զքր՟ խաչն 'ի պարսից յամի 633. Թողեալ զվահան քաջ զօրավար յեմեսա քաղաք ասորւոց 'ի պահպանութ՟ի ։ Նա վահանայ ամրացուցեալ զեմեսա՝ ը՟դդէմ եկաց յարձակմանց այլազգեաց զամ մի. մինչ զի և զօրօք ելեալ 'ի քաղաքէն՝ վանեաց և վարեաց զնս՟ մինչև 'ի դամասկոս. այլ 'ի միւս տարւոջ զօրացան Թշնամիք, և հալածական արարին զվահան իւրովքն հանդերձ, և տիրեցին հետզհետէ ամ՟ երկրին ասորւոց և միջագետաց և պաղեստինացւոց. ընդ որս առաւ և եմեսա ։

Արդ քանզի ոտնակոխ լինէր ստէպ յոտարաց և վանքն սպէլեայ՝ ուր էր գլուխ սբ՟յն յովհաննու, և առաւել աներկեան էր քաղաքն՝ Թէպէտև ը՟ տրութե՟ այլազգեաց, սմին իրի ը՟ գրելոյ Թէոփանեայ 'ի քսաներորդ ամի կոստանդիանոսի կայսեր, այ՟ս յամի տն՟ 760, կմ՟ 761, * փոխադրեցաւ գլուխ սբ՟յն
,, յովհաննու կարապետի և մկրտչի 'ի վանաց
,, սպէլեայ 'ի տաճարն նր՟, որ յեմեսացւոց
,, քաղաքի. և շինեցաւ էջք (այ՟ս խորանիստ
,, տեղի մատրանաձև). յորում մինչև ցայսօր
,, երկրպագե՟՝ մարմնաւոր և հոգևոր անուշահոտութ՟ին
,, պատուի, բղխելով ամենեցուն՝
,, որք հաւատով առ նա ընթանան՝

ըղզբժշկութիւս ||։

Բայց որպէս իմանամք յայլոց մատենագրաց ժամանակին, 'ի նոյն իսկ աւուրս կոպրոնիմոսի կամ նմանեաց նր՟ պատկերամարտ կայսերաց՝ որք թշնամիք էին և նշխարաց սր՟ց, միանգամայն և 'ի հարստահարել այլազգեաց զեկեղեցիս և զքահանայս և զկրօնաւորս յերկրին ասորւոց, ոմանք 'ի կրօնաւորաց պաշտօնէից եկեղեցւոյն եմեսացւոց բարձին զգլուխ սր՟յ կարապետին, և փախեան 'ի կոմանս հայոց կամ պոնտոսի. (զի չէ յայտ՝ թէ ո՞ր կոմանս իցէ այս յերկուց անտի, յորոց մին ասի լինել 'ի մասին փոքուն հայոց առ սարոս գետով՝ անուանեալ կոմանս կապադովկիոյ. և միւսն կոմանս պոնտոսի առ իրիս գետով մօտ 'ի կողքիս). և մնաց անդ թաքուն զամս իբր երեսուն, կամ քառասուն, մինչև ածաւ 'ի կոստանդնուպօլիս՝ ը՟ գրելոյ անանուն յոյն վ՟րդպի ժամանակակցի, որ յոմանց թէոդորոս ստուդեցի կոչի ։

Յետ առնլոյ ասէ բարբարոսաց զեմեսա՝ պատուական գլուխ մկրտչին 'ի ձեռն հաւատարիմ և ժիր առն բարձեալ բերի 'ի կոմանա քաղաք փոքր և աննշան, որ սովիմբ նշանաւոր եղև և պայծառագոյն քան զայլս ։ Անօթն զանձուս էր արծաթի պատե՟լ ոսկւով. բայց անգիտելի էր բազմաց, և մանաւանդ բնակչաց թագաւորեալ քաղաքին՝ թէ ո՞ւր իցէ այն. զի ոչ միայն զաղտ փոխադրեցաւ, այլև ոչ ոք յայտնապէս գիտաց՝ որպէս մեքս հասու եղաք, թէ երբ եղև փոխել զայն յեմեսեայ 'ի կոմանա. և կոմանացիք անգամ չէին գիտակ տիրապէս. թող զի հալածումն պատկերամարտից 'ի վր̃ կայր, որք 'ի հուր այրէին և զսր̃ նշխարս՝ զորս գտանէին: Այլ յետ այնր հալածանաց՝ յորժամ զօրացան ուղղափառք, հաճոյ թուեցաւ և սր̃յ կարապետին յայտնել զգլուխ իւր, և պարգևել կոստանդնուպօլսեցւոց 'ի թագաւորուե̃ միքայելի և թէոդորայ, և 'ի պատրիարգութե̃ իգնատիոսի առն սր̃յ յաջորդին մեթոդիոսի (յամի տն̃ իբր. 850.) օրինակ զայս, որ է ասէ վերջին գիւտ երրորդ: Ազդումն ընկալաւ սր̃ պատրիարգն իգնատիոս 'ի տեսլեան, թէ գլուխ սր̃յ կարապետին է 'ի կոմանա. արդ տո՛ւր բերել զայն 'ի կոստանդինուպօլիս: Եւ 'ի յայտնել պատրիարգին զայն յունկն թագաւորին և մօր նր̃՝ առաքեցան արք 'ի կոմանա, որք յուզե̃լ գտին զայն գանձ՝ ը̃ նշանակելոյ տեսլեանն զտեղւոյն և զանօթոյն: Եւ եղև 'ի մերձենալ սր̃յն 'ի թագաւորական քաղաքն՝ ը̃ առաջ ելին թափորով թագաւորն և պատրիարգն հանդերձ ուխտիւ եկեղեցւոյն և ա̃մ բազմութբ̃, և մուծին փառօք 'ի քաղաքն: Յայնժամ պատրիարգն առե̃լ ինքնին հանդոյց զայն 'ի տաճարն արքունի պաղատանն 'ի իե̃ աւուր ամսեանն մայիսի. ուստի կարգեցաւ առ յոյնս 'ի նմին աւուր տօն՝ երրորդ գիւտի կամ փոխադրութե̃ գլխոյ սր̃յն. զի անխտիր գիւտ և փոխադրութի կոչի՝ ասէ

գրիչն,

ցրիչն, և Է̃ կրկին կոչմամբ մի և նոյն հանդէս կատարի · և յաւելու հանել զբազմօրինակ խորհուրդս երրորդական Թուոյ · և 'ի մաղթանս գործուցեալ զբանն առ սբ̃ն յովհաննէս մկրտիչ՝ վախճան առնէ պատմութեն ։

Այս և առանձին Ճառ ներբողական 'ի վ̃ր սբ̃յն յումեմնէ 'ի վ̃պայ ժամանակին ասացեալ 'ի կոստանդինուպօլիս 'ի խորհուրդ տօնիս, սկիզբն գնելով այսպէս ։ * Օ երրորդ-
„ հրաւէր կարապետիս յիշատակի՝ առաջի-
„ կայս օր բերէ, 'ի միասին կոչէ զմեզ ով
„ ք̃սասէրք || ։ Իսկ 'ի կարգի բանիցն ասէ ·
* Ովսքանչելեացս · ոչ հանդուրժեաց եր-
„ կիր բազմօք Թաքուն պահել յինքեան ըզ-
„ գանձս զայս և տխրեցուցանել զմեզ, այլ
„ 'ի դէպ ժամանակի իւրում՝ ող̃ նորանշան
„ և հասունացե̃լ պտուղ՝ ետ մեզ զպտուղ
„ իւր · արդ տեսին զնա երկինք, և ցնծա-
„ ցան · հայեցան ազգք մարդկան, և հրա-
„ չակ հարին · զգացին դեւք, և խորտակե-
„ ցան ։ Զ՛այն զարեգակն ծագեաց պայծա-
„ ռագոյն՝ լուսովն ճշմարտութե̃ · քան զլու-
„ սին՝ լուսափայլ, նշողիւք բարեպաշտութե̃ ·
„ քան զաստեղս պէսպիսաձաձանչ՝ բազմու-
„ թբ̃ սքանչելեաց · զի որպիսի և որքան
„ բղխեաց առժամայն յորդութի̃ բժշկութեց՝
„ քան զծ̃մ աղբիւր յստակագոյն և առատա-
„ գոյն . . . էարբ 'ի նմանէ ծ̃մ ոք, և ընկա-
„ լաւ զոր միանգամ՝ խնդրէր, և որչափ ինչ
„ ցանկայր || ։ Ապա Է̃ սբ̃ գլխոյն խօսելով յի-

յիշէ պատուով և զհերս գլխոյն և զմօրուաց սրբոյն , որպէս և զաչս , զականջս , զծնօտս , և զատամունս . որպէս թէև այնպէս ամբողջ և անապական կայր ցայնվայր . այլ զի մի պակասեսցի ինչ առ 'ի գողունէց , բեր գողեցուք և զնմ անդամս սրբոյ Մկրտչին . որ ոչն հայիմ առ նշխարս առաջիկայ , այլ յանձն սրբոյն ըստ ինքեան :

Արդ մնաց պատուական գլուխ մեծին յովհաննու 'ի կոստանդնուպօլիս և յաւուրս յաջորդ կայսերաց յունաց , այլ որպէս երբեմն 'ի զանազան եկեղեցիս և 'ի վանորայս փոխաբերեն . ըստ որում գրեն զոնարաս և գլիկաս յոյն պատմաբանք՝ թէ յաւուրս վասլի և կոստանդեայ էր գլուխ սրբոյն յեկեղեցւոջ վանաց ստուդիոյ՝ որ յանուն նորին յովհաննու մկրտչի . զի 'ի խօթանալ ասեն վասլի՝ ալեքսիոս հայր վանաց ստուդիոյ եբեր առ նա զգլուխ մկրտչին . վասնորոյ և կայսրն օգտեալ 'ի սրբոյն՝ կացոյց զալեքսիոս պատրիարգ թագաւորական քաղաքին յամի տեառն . 1025 :

Յայնմհետէ չէք յիշատակ առ յոյն մատենագիրս , թէ զինչ եղև գլուխ սրբոյն . այլ արևմտեայք՝ որք ժառանգ եղեն այնմ յառնուլ իւրեանց զկոստանդնուպօլիս յետ երկուց դարուց՝ յամի . 1204 , յառաջ բերեն աւանդութիւն այսպիսի :

Յորժամ տիրեցին լատինք մեծի քաղաքին կոստանդնուպօլսոյ , և կողոպտեցին զերեւելի երևելի նշխարս սրբոց զանձեալս անդանօր , ո՛չ ամբողջ գտին զգլուխ սրբոյն , այլ ’ի մասունս մասունս բաժանեն. եւ այն՝ թերեւս յաւուրց անտի Մոնոմախի կայսեր, որ շինեաց նոր եկեղեցի յանուն սբ՟յ կարապետին. եւ ’ի կամիլն գնել անդ մասն ինչ ’ի գլխոյն՝ զայլ մասն երեւի թողեալ ասեն ’ի բնիկ տեղւոջ։ Իսկ ըստ այսմ պատմի, թէ առաջակողմն գլխոյն՝ ո՟ր երես սբ՟ Մկրտչին պահեալ կայր արծաթի ամանով ’ի վանսն կոչեցեալ Մանկանոն. ուր էր երբեմն պալատ արքունի շինեալ ’ի վասիլ կայսերէ արշակունւոյ. եւ անդ եղեւ վախճան կոստանդեայ Մոնոմախի, եւ աղեքսի կոմնենոսի. անդ եկաց առ ժամանակ մի եւ կոստանդին տուկիծ. այլ յետոյ աւերեաց զայն պալատ անդրոնիկոս կոմնենոս՝ իբր քսան ամօք յառաջ քան զգալուստ լատինացւոց։ Իսկ ահա ’ի պահարանս այնր կիսաւեր արքունի վկայարանի եգիտ զնախասացեալ մասն գլխոյ կարապետին, ո՟ր զերես նր՟, ը՟ս գլխոյ սբ՟յն դետեղեալ՝ յայլեայլ արծաթի անօթս՝ որս ’ի կղերիկոսաց լատինացւոց, եւ անուն նր՟ վալոն սարտոնացի՝ կանոնիկոս ամբիացի՝ ազգաւ գաղղիացի. եւ նաւեալ ’ի վենետիկ, եւ անտի անցեալ ’ի գաղղիա՝ եդ ’ի թեմն ամբիա կոչեցեալ, յամի 1206. դեկտ. 17. որոյ ընդարձակ պատմութ՟ին գրեալ ’ի նմին ժամանակի՝ գտանի մինչեւ ցայսօր. որ՟պս եւ այլ պատմական յիշատակք իւրացս յղկնի ժամանակս՝ հանդերձ բազմապատիկ նշանօք սքանչելեաց բարեխօսութ՟ սբ՟յ կարապետին մինչեւ ցաւուրս մեր։

Իսկ զսկաւառակ գլխոյ սբ՟յն, կմ՟ զոսկր գագաթանն, որ անկեալ էր 'ի ձեռս Թագաւորաց լատինացւոց՝ որք տիրեցին յայնժամ Բիւզանդիոյ, կայսրն Բաղդուինոս երկրորդ առաքեաց ընդ այլ նշխարս սբ՟ց 'ի պարգեւի մասին առ սբ՟ն Լուդովիկոս արքայ գաղղիացւոց յամի ․ 1247 ․ և նա եդ զայն պատուով 'ի փարէզ քաղաքի յարքունի մատրան կառուցելոյ յանուն սբ՟յ մկրտչին ։ Օ այլ մասն գլխոյ սբ՟յն մեք առաք ասեն վենետիկեցիք, և եդաք 'ի գանձս սբ՟յն մարկոսի, որ է մայր եկեղեցի 'ի վենետիկ ։ Բայց յիշատակին և այլ մանր մասունք 'ի բազում այլ տեղիս, և ցուցեալ լինին մինչև 'ի մեր ժամանակս ․ զորս եթէ 'ի մի հաւաքեսցէ ոք, անցանեն զչափու միոյ և երկուց գանկից ․ յորմէ յայտ է՝ թէ ոչ ամ՟ն ունի զնոյն ստուգութի ․ զի զանուն յովհաննու ուրուք սբ՟յ ընթերցեալ 'ի յիշատակս՝ իւրաքանչիւրն պնդէ լինել յովհաննու մկրտչի ։

Բաւական և 'ի ստուգագոյն կարծեցեալ պատմութե անդ նախանշանակեալ վարոնի սարտոնացւոյ գրի, թէ յորժամ եգիտ զմասն գլխոյ սբ՟յն յարծաթի ամանի՝ զառաջինն 'ի յունական յիշատակարանէն այսչափ միայն իմացաւ, թէ է նշխարք սբ՟յն յովհաննու ․ Ք՟զի գրեալ էր՝ այիօս իօաննէս ․ բայց կայր 'ի վարանս տարակուսի՝ թէ ո՞ր յովհաննէս իցէ ․ զի ոչ իմանայր (ասէ պատմիչն) զյունականն ձայն նշանակեալ զկնի (համառօտագրութ՟) բռօտրօմոս, որ թարգմանի կա-

րա

րապետ կ̃մ յաւաջընթաց • մինչև հայելով զկնի և յայլ պատկերս մկրտչին՝ յորս նոյն նշանակ գտանիւր , հաստատեցաւ՝ թէ նոյն սբ̃ն է ։ Եւ ահա յայսպիսի համաձայնութեց լինի բազմութ̃ նշխարաց յանուն միոյ 'ի սբ̃ց • իբր զի են նշխարք համանուն սբ̃ց ։

Սորին վ̃ս թէպէտև յերկար խուզողութ̃բ ձգնին բոլլանդեանք որոշել զստոյգ և զանստոյգ նշխարս գլխոյ կարապետին , բայց տակաւին ինչ ինչ յորոց ստոյգ դատին՝ մարթին լինել անստոյգ , և յորոց անստոյգ կարծեն՝ մարթին ստուգագոյն լինել ։ Մ՛ինչ զի չէ՛ մեզ վճիռ հատանել ստուգութ̃ե կ̃մ անստուգութ̃ե նաև զամբողջ գանկէ կամ զգլխոյ սբ̃յն յովհաննու մկրտչի , որ պահի ցարդ 'ի հռոմ 'ի վանս սբ̃յն սեղբեստրոսի 'ի մարտեան կ̃մ յարէս դաշտի , որ և ասի սեղբեստրոս գլխոյ , զոյգ ը̃ անձեռագործ դաստաւակի կ̃մ պատկերի գլխոյ փրկչին առ աբգար յղելոյ • զորս և արժանի եղաք համբուրելոյ 'ի մօտոյ՝ յամի 1810 • 'ի մայիսի , ընդ անցանելն մեր ը̃ հռոմ • զի զի՛նչ և ասասցէ ոք , ոչ ոք կարէ ժխտել , թէ՝ և ժառանգք այս գլխոյս ունին զհին յիշատակարանս 'ի հաստատութ̃ի աւանդութ̃ե իւրեանց՝ զոյգ ը̃ բանից բարոնիոսի , որ ասէ • * Մ՝եք քարոզեմք զոր գիտեմք , և ստոյգ աւանդութ̃բ ուսաք || ։ Այս տեղի վանաց սեղբեստրոսի երբեմն էր վանք յունաց • և ապա եղև մենաստան կուսանաց բենեդիկտեանց ։ Արդ եթէ յայս կամ յայլ նշխարս կայցէ վրիպակ ըստ անուան սր՟յն , չէ՛ ինչ ․ զի սո՟ք ոչ նախանձին ը՟ պատուին տուեալ այլում 'ի սր՟ց յանուն իւրեանց ․ զի և ինքեանց է այն պատիւ ․ և ն՟մն 'ի փառս սր՟յն սր՟ց ։ Գոյր 'ի նէապօլիս՝ ը՟ անցանելն մեր ը՟ այն 'ի նմին ամի՝ և անգիւտ մասն 'ի չորացեալ արենէ սր՟յն յովհաննու մկրտչի ։ Արդ և 'ի մալթա տեսաք զզանազան մասունս նշխարաց ն՟ր՝ 'ի հոյակապ տաճարի ն՟ր , որ է մին յերևելի և 'ի հրաշակերտ եկեղեցեաց ն՟ի , պահեալ ը՟ մասին 'ի սարկաւագանոցի , և ըստ այլ երևելի մասին՝ (որ առի յղեալ 'ի գանձարանէ կոստանդնուպօլսոյ՝ յաւուրս օսմանցւոց տ՟րութեան յընծայ մալթացւոց , մինչդեռ էին ն՟ք 'ի հռոդոս կղզի ,) պահի՟ 'ի մեծ վկայարանի ն՟ր՝ որ է ը՟ հովանեաւ նոյն մեծի տաճարի մկրտչին 'ի մալթա ։ Իսկ զհնագոյն և զառաւել վաւերական նշխարաց սր՟յ կարապետիս , զոր եբեր լուսաւորիչն մեր 'ի կեսարիոյ 'ի հայս՝ ը՟ մարմնոյ աթանագինեայ եպ՟սի , ունիմք ասել յառանձին տօնի այնր փոխադրու՟ե , որ սեպհական է ազգիս ։

Յայժմուս կնքեսցուք զպատմութ՟ի գիւտի պատուական գլխոյն մկրտչի՝ բանիւ՛ ուրումն 'ի գրչաց ․ * Յետ ն՟ր՝ որ գեղեցիկ էր տեսա-
„ նելով առաւել քան զա՟մ որդիս մարդ-
„ կան , և զկնի անհամեմատ կուսին՝ որ յղա-
„ ցաւ զնա յանարատ արգանդի իւրում , ո՞
„ ոչ գիտէ՝ թէ այլքն ա՟մ 'ի վայր քան զմկր-
„ տիչն են ։ Եւ եթէ տ՟րն՝ ոմ՟ք քաջայայտ է ,

,, և եթէ տիրուհին՝ ոչ հաւատամք բարե-
,, պաշտութե̃ , մարմնով վերացան յերկինս ,
,, զի՞նչ այլ պատճառականագոյն խնդրեմք ՚ի
,, մէջ նշխարաց սր̃բց քան զնշխարս կարա-
,, պետին. մանաւանդ քան զայնպիսի մասն՝
,, որ պատճառական է ՚ի բոլոր մարմնի ‖. այ̃ է
գլուխն ։ (4)

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ ։

(1) Րու ՚ի մէ՞ արդեօք յայս միջոցս յետ զատկի՝ յառաջին շաբաթու յինանց եղաւ ՚ի տօնացուցի ազգիս յիշատակ գլխատման յովհաննու , որ ՚ի Հ. Յ. և Լ. դնի ՚ի 29. օգոստ. կրկին մեզ բանաւոր պատճառք ե̃-առաջ ելանեն. (Թող զայլևայլ խորհրդածութիս տօնապատճառուց) ։ Առաջինն է գեղեցիկ կարգաւորութե̃ ընթերցուածոց չորից աւետարանաց՝ ՚ի նշանակ քարոզութե̃ աւետարանի յետ յարութե̃ ը̃ ամ̃ ՚ի ձեռն առաքելոց. և զի սկիզբն աւետարանական պատմութե̃, և քարոզութե̃ փրկչին՝ զոր սկսանիմք ՚ի նոր կիրակէէ , եղև յետ մահուն յովհաննու՝ և առաւել յայտնեցաւ յետ գլխատմաննր , վ̃ն միով աւուրբ յառաջ քան զնոր կիրակէն՝ առնեմք զյիշատակ գլխատման յովհաննու , ՚ի պատմութէ նր̃ սկսանելով զընթերցուած աւետարանաց. զի զկնի յառաջընթաց կարապետին յայտնի լինիցի և ընթացք քարոզութե̃ տն̃ ։

Երկրորդն է հաւանական աւանդութե̃ ոմանց , թէ մօտ յաւուրս զատկի առաջնոյ կմ̃ երկրորդի առ քնիմ եղև մկրտչին գլխատումն. և այսմ չէք այլ ը̃դդիմութե̃, բայց զի ը̃ յովսեպոսի բանտն յովհաննու ոչ էր յեհէմ, այլ ՚ի մաքերոնտա ամրին. իսկ հերովդէս գայր յեհէմ ՚ի պատճառս տօնի զատկին հրէից. և դժուարին երևի ոմանց՝ թէ զբանտարկեալն զյովհաննէս ը̃ իւր բերեալ իցէ յեհէմ. այլ այս ոչինչ դժպատեհ մեզ երևի. զի և ՚ի բանտարկութե̃ անհանծելի էր հերովդի յովհաննէս , գուցէ և ոչ բաժանէր յիւրմէ իբրև զմարգարէ՝

յոր

յորմէ հարցցէ ինչ 'ի կարեւոր պահու . մինչ զի և յետ գլխատելոյն կամէր լին̃ կէ̃ կատարածէր , թէ յարուցեալ իցէ 'ի մեռելոց : Այլ թէ ոչ՝ չէ որոշակի յայտնի տեղի և ժամանակ կատարման յովհաննու . եթէ կամիս լսել զայլեւայլ կարծիս ոմանց , տես զինչ գրէ բաբեպրոք բոլլանդեան : Գլխատումն մկրտչին ասէ կարծի լինել յամի տն̃ . 32 . (ը̃ այլոց՝ 31 .) իսկ վն̃ ամսոյն և աւուր գրէ բեդա 'ի ճառն̃ . Հ̃ . 26 . յորմէ և ադոն 'ի փետր . 24 . այսպէս . * 'ի գրել յովհաննու աւե-
,, տարանջելի զսքանչելեացն հացի՝ ասէ կանխաւ , թէ
,, մերձ էր զատիկն հրէից . իսկ մատթէոս և մարկոս՝
,, յետ սպանման յովհաննու մկրտչի իսկ և իսկ լեալ
,, պատմեն զայդ . ուստի ունիմք իմաստասիրել , թէ
,, յովհաննէս գլխատեցաւ 'ի մերձն լինել աւուրց զատ-
,, կի . և 'ի միւս ամի 'ի գալ միւսանգամ զատկի կա-
,, տարեցաւ խորհուրդ չարչարանաց տն̃ || : Ըստ այսմ
և ուսուարդ ասէ 'ի դ̃ . կաղանդեցն սեպտ . * գլխա-
,, տումն (յովհ . մկր) առ աւուրբք զատկի լինել ցու-
,, ցանի 'ի պատմութ̃ է աւետարանի || :

Բայց ինքն բաբեպրոք կամի ը̃ այլոց վերածել 'ի փետրվարն յաջորդ ամի . այլ առանց բաւական հիման՝ հանդերձ այսպիսի չփոթաբանութ̃ . * Որովհետև (ասէ)
,, 'ի 24 . ամսեանն փետրվարի հանդիսապէս կատարի
,, յամ̃ արևելեան եկեղեցւոջ տօնն գիւտ գլխոյն ,
,, ոչինչ անտեղի է զմտաւ ածել՝ թէ այնպէս տնօ-
,, րինեալ իցէ յայյ , զի գլուխն այն յայնմ աւուր յայտնես-
,, ցի , յորում գլխատեալ էր յովհաննէս , թերևս և
,, ծնեալ , քան թէ 'ի նմին աւուր յղացեալ՝ և մահա-
,, ւխթ սրով հերովդի գլխատեալ , ոպ̃ գրի 'ի թուղթն՝
,, որ յանուն օգոստինոսի առ բիբիանոս || :

Իսկ թէ առ ի՞նչ յամ̃ ազգաց յայսմաւուրս գտնի գլխատումն յովհ . 'ի 29 . օգոստ . դարձեալ տարտամ բանիւք խօսի այրն քննասէր՝ ասելով . * Իսկ եկեղեցին
,, եթէ արևելեան և եթէ արևմտեան զինչ իրաւունս
,, 'ի կիր արկեալ , զտօն գլխատման՝ զորոյ զսեպհա-
,, կան օր չունէր հաւաստի 'ի ստոյգ վկայութ̃ կամ
,, յաւանդութ̃ , ընտրեաց մեծարել 'ի 29 . օգոստո-
,, սի : Եւ ոչ յայն սակս , ոպ̃ թէ յայնմ աւուր՝ ը̃ գրե-
,, լոյ ուսուարդայ 'ի բեդայէ , և ը̃ նշանակելոյ այժ-
,, մու վկայագրոց հռովմայ , գլուխն երկրորդ անգամ
,, գտաւ յեմեսա քաղաքի և ամփոփեցաւ յեկեղեցի . զի
,, բազմօք յառաջ օրդ այդ այնպիսի անուամբ սբ̃ պա-

,, հիւր

,, հիւր . . . Նմին իրի պարտ է գտանել պատճառ հնա_
,, գոյն . և չէք այլ առաւել ճշմարտանման, բայց զի ե_
,, կեղեցին սբյն յովհաննու մկրտչի, որ 'ի սեբաստա_
,, պօլիս, կանգնեալ՝ որոյ երևի՝ 'ի կոստանդիանոսէ,
,, կմ հոգաբարձութբ և մօր նր հեղինեայ, յայնմ ա_
,, ւուր տնագրեցաւ . և անդր ածաւ սբ մարմինն յար_
,, ուարձանէ, ուր թաղեալ էր յաշակերտաց իւրոց 'ի
,, գերեզմանի . և եդաւ 'ի մէջ մարմնոց սբյն եղիսէի
,, և աբդիու մարգարէից || : Մեզ երկաքանչիւր կար_ծիքն անզօր թուի . թող այլք ընտրեսցեն :

(2) Քանզի ըստ աւետարանին՝ յս էր ամաց իբրև երեսնից 'ի մկրտելն 'ի յովհաննէ, որ վեց ամսօք յառաջ էր ծնեալ քան զծնունդն քսի, յայտ է թէ և յովհաննէս՝ 'ի գալն յանապատէ, ուր սնաւ 'ի տղայութենէ հետէ, էր իբր երեսուն ամաց և վեց ամսոց . և զի ոչ ապրեցաւ յայնմ հետէ աւելի քան զմի կմ զերկու ամ, վսյ և ամք կենաց նր եղեն նուազ քան զքն մերոյ . կմ որ նոյն է՝ ոչ ելից զամս երեսուն և երիս, գուցէ և ոչ զերեսուն և զերկուս : Ապա ոչ կարէ ոք (ոպ հաճոյ էր այլոց մասամբ բաբեպրոքայ) հանել սխալ իմացուած 'ի սխալ գրչութէ, զոր տեսանեմք 'ի սովորական օրինակս թղթոյ մագիստրոսին մերոյ առ աբրեհիմ . զի գրի անդ այսպէս . * Յովհաննէս որդի զաքա_
,, րիայ քահանայի և մկրտիչ, այն՝ որ 'ի վերն էր քան
,, զամ ծնունդս կանանց . քանզի Է ամեայ յանապատ
,, վարեցաւ 'ի հրեշտակէն . և Լ. ամ պահօք և կուսութբ
,, ընկալեալ զհոգին այ, զայս յս ասէ գառն այ ըստ
,, մարմնոյ, իսկ ըստ ածութե որդի այ բարձող մեղաց
,, աշի || : Որով լինէին ամք յովհաննու Լէ 'ի սկզբան քարոզութե . զոր ոչ ոք ընդունի . ապա յայտնի վրիպակաւ գրչաց գրել է Է ամեայ, կմ եօթամեայ, փոխանակ գրելոյ Է ամեայ . զի որովհետև վեց ամսով յառաջ ծնաւ քան զյս, յառաջնում ամեանն յսի և յեօթներորդում ամեան յովհաննու եղև գալուստ մոգուց և կոտորած մանկանց բեթղեհեմի, և վարիլն յովհաննու 'ի հրեշտակէ յանապատ . և այնպէս դարձաւ յանապատէ իբր երեսնամեայ և վեցամսեայ :

(3) Վս զանազան գիւտի նշխարաց գլխոյ մկրտչին ոչ յաւելումք աստ զայլ ծանօթութիւնս ըստ բազմադիմի քննութեց բոլանդեանց . զի 'ի նոյն քննութիւս անտարկեալ նոյնպիսի ծանօթաբանութբ դրեցաք զոր դրեցաքն 'ի կարգի պատմութե : Միայն ծանիր, զի որովհետև ա_

ռա_

ռաջին գիւտն է մթագին 'ի հին աւանդութիս. եւ մեսացիք՝ որք ստուգութ՟ գիտելին զերկրորդ գիւտն առ խուրեանս, յօդեցին և երկար պատմութիս գուշակականս՝ թէ անը՟միջապէս 'ի տանէ հերովդի յեմեսա բերեալ իցեն զայն երկու կրօնաւորք. և խառնելով զանօթն բրտի ը՟ բրտի՝ ասացին թէ 'ի կրօնաւորաց գտզացաւ նախ զայն բրուտ ոմն. և օրհնեցաւ տուն նր՟. ևն. (ը՟ այսմ եղեալ է և 'ի Հ. ը՟ մասին): Սոյնպէս և հռոմայեցիք այլ պատմութի հնարեցին վ՟ առաջնոյ գիւտի գլխոյն, զոր համարէին լինել առ խուրեանս. ոպ՟ թէ նախ 'ի ջրհոր ինչ արկեալ իցէ. և ապա սքանչելի լուսով յայտնեալ. ևն: Եւ վ՟ սոյսպիսի անհաւատալի բանից գելասիոս պապ ը՟ երկբայական պատմութիս նշանակեաց զաւանդութի առաջնոյ գիւտի. այլ ոպ՟ տեսանես 'ի գրեալս մեր, մեք զայն ինչ ևեթ նշանակեցաք՝ որ ամենեցուն է ը՟ունելի:

(4) 'Ի վախճան հատորոյս ծանիր, զի ը՟ կարգաւորութե՟ տօնից ազգիս՝ 'ի միջոցի յինանց ամ՟ օր է տ՟րունական յիշատակ յարութե՟. բայց 'ի տօնէ գլխատման յովհաննու, սակայն և այն հանդերձ պահմամբ ամ՟ կարգի յարութե՟: Միայն 'ի հին ճաշոցս տեսանեմք, զի և այլ քանի մի տօնք ը՟ այսմ օրինակի եղե՟լ էին յառաջն 'ի կարգի յինանց. ոպ՟ զկնի Ծամատրան կիրակէի գրի 'ի հնագոյն օրինակս այսպէս, * Մայիս ամսոյ, որ օր ,, ա՟. Երեմիայի մարգարէի յանաթովթ || : ոպ՟ և զկնի, * Մայիս ամսոյ՝ որ է է, Ժողովին առաջի սբ՟յն գող- ,, գոթայ (կատարել) զօր երևելոյ սբ՟ նշանի խաչին ,, յերկինից ||: ապա * Մայիս ամսոյ՝ որ օր թ. 'ի սբ՟ ,, բեթղեհէմ մանկանցն սպանելոց 'ի հերովդէէ թա- ,, գաւորէ ||. ապա * Մայիս ամսոյ՝ որ օր իէ. կոս- ,, տանդիանոսի թագաւորի ||. ապա կարգ պենտեկոստէի: Այլ յետոյ 'ի կարգադրութե՟ տօնացուցի պահեցաւ 'ի սմին կարգի յինանց միայն տօն երևման խաչի վերածեալ 'ի հինգերորդ կիրակէ. իսկ այլ սբ՟ց յիշատակք զկնի պենտեկոստէի. և մեք ը՟ նմին յառաջեմք, ը՟ որում և տօնացոյցն ունի յամ՟ օրինակս:

Թողից ասել և զութերորդ օրէ հոգեգալստեան. ուր ճաշու գիրք և աւետարան է զվերանալոյն եղիայի հրեղէն կառօք յերկինս. յորմէ և օրն այն համարի իբր յիշատակ նր՟. և ը՟ նմին գտանի 'ի Հ. տպ. 'ի մայիսի. 2. ոպ՟ և առ տ՟ր իէլի. և 'ի Յ. և Լ. 'ի յուլիսի. 20:

Այլ բարւոք գրէ տօնապատճառն (Թէպէտև ռամկա-

կան ոճով), թէ եղեւ առաջինն ոչ այլազգ տօնելի լինի՝ բայց ը̄ անուամբ երկրորդ եղելոյ. ըստ մկրտչի յաւելն 'ի պատճառ նոր կիրակէի և աւետարանաց կարգացման. * Յերեկի օրն յիշատակ է յովհաննու կա-
,, րապետին. ով̃ և ասաց. պատրաստ արարէք զճա-
,, նապարհս տն̃: Կարապետն այն է, որ յառաջ եր-
,, թայ 'ի քաղաքն, և ասէ, թէ թագաւորն գալոց է.
,, դարպասս արարէք, պատրաստութի̃ հոգացէք. և
,, ը̄ կարապետն և ը̄ թագաւորն ոչինչ միջոց չկայ.
,, նոյնպէս ը̄ շաբաթն և ը̄ կիրակէն: Եւ զի երկու
,, են գալուստ, և երկու են կարապետք. առաջնոյն
,, յովհաննէս, և երկրորդին եղիայ: Եւ աստ պատեհ
,, էր եղիայի տօնել. բայց զի կենդանի է մարմնով, և
,, նոյնպէս և ենովք.... և զմահ ոչ են ճաշակեալք.
,, ոչ տօնէ նր̃ եկեղեցի. զի դեռ 'ի պատերազմ են
,, մահուանեց, և մեւխաւորայ կայ նր̃ առաջի ||:

Եւ թէպէտև մարթ էր 'ի դէմս ածել, թէ զիարդ ապա ենովք յիշի 'ի կարգի տօնի նախահարց, բայց յայտնի է և պինին, թէ բանն է աստանօր զառանձին տօնակատարութէ̃. իսկ անդանօր վս̃ համախումբ տօնելոյ զնահապետս՝ ը̄ պատշաճի ևեթ յիշատակի անուն ենովքայ. զի 'ի տօնի համօրէն մարգարէից՝ զօրութբ̃ է իմանալ և զեղիա. զի թէ 'ի խմբէ 'ի դուրս հանցես, յայնժամ արհամարհութի̃ թուի. որպէս և եթէ ուրոյն տօնեսցես, կարծի ոչինչ ը̄հատ 'ի բուն տօնելեացն, զորոց են բանք մեր:

Բայց թէ զիարդ առ յոյնս և առ լատինս տեսանի յիշատակ կմ̃ տօն եղիայի 'ի յուլիսի. 20. չկամիմք յերկար հետազօտել ոռ̃ զայլսն. զի զինչ և ասասցեն՝ յիշատակ լինի և առ նր̃ ճգնութէ̃ և առաքինութէ̃ նր̃ և վերացմանն, քան թէ որպէս տօն՝ որը̃ զկատարելոցն և հասելոց յերկինս: Վր̃յ և ոռ̃ լիէլ զպատմութէ̃ վերանալոյ ևեթ եղիայի առաջի դնէ. ուր Հ. և Յ. խօսին և զծննդենէ նորա. և Լ. զլեառն կարմեղոս 'ի մէջ բերէ:

ՍՏՈՒԳՎԱԾ Է 1971 Թ.

ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ

ՅՐ. ԵԱ

ՑԱՆԿ
ՎԱՐՈՒՑ ՍՐԲՈՑ
որ ՚ի հատորն Բ.

Երես.
ա. Սարգսի զօրավարի. և որոց ը̄ նմա 3
բ. Ատոմեանց զօրավարաց. ևս և զօրականաց 66
գ. Սուքիասանց 90
դ. Ոսկեանց 121
ե. Սահակայ պարթևի՝ հայոց հայրապետի 131
զ. Պիոնի քահանայի, և որոց ընդ նմա վկայիցն զմիւռնիոյ . . 163
է. Մարկոսի արեթուսայ եպիսկոպոսի. և 189
ը. Կիւրղի սարկաւագի, և որոց ը̄ նոսա 198
թ. Աբդայի եպսի, և որմզդանայ, և սայենի, և բենիամենի սարկաւագի 211
ժ. Ղևոնդեանց քահանայից . . 225
ժա. Վարդանանց զօրավարաց . . 278
ժբ. Հայրապետաց կոստանդնուպօլսոյ ՚ընդ ժողովոյն . . . 339

ժգ.

ժգ. Թէոդորոսի զինաւորին՝ տիւռոն կոչեցելոյ 352
ժդ. Կիւրղի երմ̃այ հայրապետի. և 392
ժե. Միւս Կիւրղի կամ Կիւրակոսի եպ̃սի, և մօր ն̃ր Աննայի . . 429
ժզ. Յովհաննու եր̃մի հայրապետի. 458
ժէ. Քառասուն մանկանցն սեբաստիոյ 482
ժը. Գրիգորի լուսաւորչին մերոյ մուտն 'ի վիրապ 520
ժթ. Յովհաննու Մկրտչի գլխատումն. 536
Եւս և գիւտ պատուական գլխոյ ն̃ր 545

ՎԱԽՃԱՆ

հատորիս։

Որ գտնեն՝ (որպէս և 'ի վախճանի այլ եւս հատորոց) պատահեր զանազան վրիպայից, զի ընդ ընթերցուածոյն և տեսել հատարման նոյա շարթաւայք շուգետ տծասերաց։

590

Нарк